






ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ



Сасна Црер

ЗАПИСЬ ВАРИАНТОВ и ПОДГОТОВКА ТЕКСТА
САРКИСА АРУТЮНЯНА
и АРУСЯК САКЯН

ЕРЕВАН 1979

891.99
Ա-22





ԱՍՆԱ ԾՈՒԵՐ

ՊԱՏՄՈՒՄՆԵՐԻ
ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ և ԲՆԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ
ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
և ԱՐՄՈՒՅԱԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ 1979

Аеф
U 22

«Մանանա ժողովրդական վեպի Գ հատորն ամփոփում է հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական նպատակային արշավախմբի կողմից 1971—1973 թթ. գրառած վեպի մնացած և մշտ տարբերակներից 14 նորահայտ պատում։ Հատորն ունի նախաբան, ինչպես նաև վիպասացների մասին կենսագրական տվյալներ։

67291-Կ. Հ.

հ ա մ ր ա գ ի ր
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս
Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-Արм.ССР
Մատենադարան

U 70700 32—75
703(02)—79
1715-79

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979

«Սասնա ծռեր» ժողովրդական վեպի պատումների ներկա հրատարակությունը, որ ձեռնարկում է ՀՍՍՀ ԳԱ. ֆնագիտության և ազգագրության ինստիտուտը, բնդգրկում է ինստիտուտի բանահյուսական նպատակային արշավախմբի 1971—1973 pp. գրանցած վեպի նոր պատումների մի սովար մասը:

Վեպի պատումների հայտնաբերումն ու գրառումը մեր օրերում համարելով հայ վիպաճավամման ավանդների բնական շարունակություն և հաշվի առնելով «Սասնա ծռեր» գիտական նախորդ հրատարակության (1936, 1944, 1951 pp.) հիմնավոր սկզբունքները, նպատակահարմար համարվեց ներկա հրատարակությունը դարձնել նախորդի շարունակություն:

Կիրառելով պատումների դասակարգման նախորդ սկզբունքները, պատումները համախմբվել են նույնպես ըստ *ազգագրական-բարբառային* հատկանշի, որը միաժամանակ բացահայտում է վեպի պատումների տիպարաճական երկու հիմնական խմբերը՝ *Մոկաց և Մշու*:

«Սասնա ծռերի» գ հատորն ամփոփում է Մոկսի (այդ թվում՝ Նատախի) և Մշո (այդ թվում՝ Ալաշկերտի և Բայազետի) պատումները: Սասնո պատումներն ամփոփվելու են առաջին՝ հաջորդ դ հատորում:

Վեպի պատումների ներկա հրատարակության մեջ պահպանելով բնդհանրապես նախորդ հրատարակության բնագրագիտական սկզբունքները, չի պահպանված, սակայն, Ա և Բ հատորներում կիրառված վիպական մեծ և փոքր միջադեպերի վերնագրման սկզբունքը, նկատի ունենալով, որ այն մասնատում է պատումի բնդհանուր նկարագիրը և, ինչ-որ չափով, խախտում նրա միասնական ոիթմը: Փոխարենը միջադեպերը միմյանցից աջատվել են պարբերույթներով և համարակալվել ըստ կարգի:

Քանի որ վեպի ճարտյուա պատումներն իրենց լեզվով պատկանում են արևմտահայ նույն բարբառներին ու խոսվածքներին, ինչ «Սասնա ծռերի» գիտական հրատարակության նախորդ հատորներում զետեղված պատումները, ուստի ներկա հատորում հրատարակվող տարբերակների բարբառային հատկանիշների մասին ընդհանուր գաղափար կազմելու համար կարելի է դիմել «Սասնա ծռերի» Ա և Բ հատորների սկզբում տեղադրված Մ. Աբեղյանի և Ս. Մելիք-Օհանջանյանի կազմած «Բարբառային-բնութագրական գիտելիքներ» ուղեցույցին[1]:

Բացի այդ, ի տարբերություն «Սասնա ծռերի» նախորդ հատորներում կիրառված 1922 թվականի նոր ուղղագրության, ներկա հրատարակությունը կատարված է 1940 թ. բարեփոխված և մեզանում այժմ գործող ուղղագրությամբ:

Պատումների վերնագրերը, չնչին բացառությամբ, բանահավաքներինն են:

Հատորում զետեղված աշխարհագրական-վիպական տեղանունների պատկերող լուսանկարները կատարել և սիրահոժար մեզ է տրամադրել ադյուտանտ լուսանկարիչ Հովհաննես Շիրազը, որին մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում:

---

[1] Տե՛ս «Սասնա ծռեր», հ. Ա, էջ ՍԲ—ՀՀ, հ. Բ, Ա մաս, էջ է—ԻԱ:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1

«Մասնա Ծուրբ» ժողովրդական վեպի հայտնաբերման և հրատարակության 100-ամյակի կապակցությամբ, 1971 թ. հոկտեմբեր, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը, վեպի նոր պատումներ հայտնաբերելու նպատակով, կազմակերպեց հատուկ արշավախումբ, բանագնացներ Ս. Հարությունյանի ղեկավարությամբ և Ա. Մահտեսյանի գործուն մասնակցությամբ[1]։

Արշավախումբը գործեց 1971 թ. հուլիս-օգոստոս, 1972 թ. հուլիս-օգոստոս-ապրիլ և 1973 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին։

Վերապահվածքների փորձը, վեպի տպագիր պատումներն ու գիտական ուսումնասիրությունը պարզել էին, որ «Մասնա Ծուրբ» կենցաղավարում է հիմնականում արևմտահայության միջավայրում։ Ուստի արշավախումբը հենց սկզբից որոշեց իր գործունեության ծրագիրը. ա) այցելել այն շրջաններ, որոնք վերաբնակեցված են արևմտահայ նախկին գաղթականներով, բ) գնալ վեպի նախորդ պատումների հեղինակ և պարզել, թե արդյոք հին վիպասացների սերունդները շարունակո՞ւմ են տակավին պահպանել վեպը։

Հետազոտության ոլորտի մեջ ընդգրկվեցին Աշտարակի, Թալինի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Աբովյանի և Սպիտակի շրջանները (առաջին տարի), Արտաշատի, Ուրցաձոր, Մասիս, Արտավանի, Հրազդանի, Ապարանի շրջանները (երկրորդ տարի), Ապարանի, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի շրջանները (երրորդ տարի)։

Թվում շրջանների հայ ազգաբնակչության ազգագրական կազմը մոտավորապես հետևյալ պատկերն է ներկայացնում. ա) տեղացիներ կամ բնիկներ, բ) նկվորներ կամ վերաբնակիչներ, որոնք տարբեր ժամանակներում, սկսած 1820-ական թվականներից մինչև 1920-ական թվականները, գաղթի երեք հիմնական հոսանքով, եկել են Արևմտահայաստանից, Պարսկահայքից և վերաբնակվել հիշյալ շրջաններում։ Այս երկրորդ ազգագրական խմբում են ընդգրկվում տասնյակ

---

[1] *Արշավախմբի հետ սեփական նախաձեռնությամբ միացել են նաև գրող Զ. Խալափյանը, պարապետ Ժ. Խաչատրյանը, Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտական աշխատակից Հ. Ամալյանը և դոցենտ Լ. Մելիք-Օհանջանյանը։*

ներ, մշեցիներ, խութեցիներ, ալաշկերտցիներ, խնուցիներ, մանազկերտցիներ, խլաթցիներ, վանեցիներ, ողմեցիներ, շատախցիներ, գավաշցիներ, մոկացիներ, ազարկերտցիներ, կարկառցիներ, բիթլիսցիներ, արձնցիներ, այլևազգիներ, բազեցիներ, բասենցիներ, պարսկահայեր և այլք:

Բանահավաքչական հետախուզումները կատարվում էին հիմնականում արևմտահայ վերաբնակիչների շրջանում, առանձին դեպքերում նաև անդորյանների և պարսկահայերի միջավայրում:

Շուրջ վեց ու կես ամսվա ընթացքում արշավախումբն այցելեց 203 գյուղ ու բանավոր, օրանցից արդյունավետ եղան միայն 65-ը: 65 բնակավայրերից գրանցվեցին ԷՍաունա ծռեր՝ վեպի 81 նոր տարբերակ, տարբեր ծավալով ու կառուցվածքով, բանահյուսական արժեքով: Գաուռմների քանակն ըստ գրանցման վայրերի հետևյալ պատկերն է ներկայացնում.

1971 թվականին		1972 թվականին		1973 թվականին	
1. Աշատրակ	— 9	1. Աչտարակ	—2	1. Կաժո	—4
2. Թալին	—17	2. Արտաշատ	—2	2. Մարտունի	—7
3. Ախի	— 4	3. Արովյան	—2		
4. Էջմիածին	— 6	4. Էջմիածին	—1	3. Վարդենիս	—1
5. Հոկտեմբերյան	— 4	5. Մասիս	—3	4. Ապարան	—8
6. Արարատ	— 1	6. Արթաշատ	—7		
7. Եղևարդ	— 1	7. Ապարան	—3		
8. Թեքլիսի	— 1	8. Հրազդան	—1		
Ընդամենը՝ 43 պատում		21 պատում		17 պատում	

Արշավախմբի հետաքրքրության ազգագրական միավորները բնական բազմազան էին, սակայն գրանցված պատումները պատկանում են սահմանափակ թվով ազգագրական-անազգրական շրջաններին: Պատումներն ըստ ծագման ազգագրական անդավայրերի հետևյալ պատկերն են ներկայացնում.

1. Մասուն	—21	8. Մոկս	—6
2. Մուշ, Բալանբէ, Խութ	—12	9. Շատախ	—3
3. Աչաշկերտ	—20	10. Գավաշ	—1
4. Մանազկերտ	— 2	11. Ապարկերտ	—2
5. Խնուս	— 2	12. Հայոց ձոր	—1
6. Բիթլիս	— 2	13. Բաշկալա	—1
7. Բայազետ	— 7	14. Վան	—1
		Ընդամենը՝ 81 պատում	

Գրանցված պատումների վիպասացները տարբեր սեռի, տարիքի, զբաղմունքի և կրթական աստիճանի անձինք են: 81 վիպասացից 80-ը հայ են, մեկը՝ թուրք: 60-ից ցած տարիք ունեցող վիպասացներ խիստ բացակայում են: Վիպասացները համախմբվում են տարիքային հետևյալ խմբերի մեջ.

1. 60—69 տարեկան—12 տղամարդ, 2 կին
2. 70—79 տարեկան—28 տղամարդ, 3 կին
3. 80—89 տարեկան—23 տղամարդ, 3 կին

4. 90—99 տարեկան— 7 տղամարդ
5. 100—109 տարեկան— 2 տղամարդ, 1 կին

Ընդամենը՝ 72 տղամարդ, 9 կին

Թվերը խոսուն հաշվանշական են և խոսուն Պարզվում է, որ վեպը պատմողներն ու պահոդները 60—110 տարեկան ծերունիներ ու պառավներ են։ Ընդ որում, պատումները ճնշող մեծամասնությունը բաժին է ընկնում 70—100 տարեկան վիպասացներին, հանգամանք, որ վկայում է վեպը պահոդների տարիքային հիմնական հատկանշի մասին։

Վիպասացներն ըստ զբաղմունքի և զբաղիատության՝ հետևյալ պատկերն են ներկայացնում.

Հողագործ արհեստավոր—	7, որից գրագետ՝ 2, կիսագր.՝ 1, անգր.՝ 4	
Հողագործ գյուղացի	— 57, որից գրագետ՝ 8, կիսագր.՝ 13, անգր.՝ 36	
Բանվոր	— 4, որից գրագետ՝ 1, կիսագր.՝ 1, անգր.՝ 2	
Ուսուցող	— 6, որից գրագետ՝ 4, կիսագր.՝ 2, անգր.՝ չիք	
Տնային տնտեսուհի	— 7, որից գրագետ՝ 2, կիսագր.՝ չիք, անգր.՝ 5	
Ընդամենը՝	—81, որից գրագետ՝ 17, կիսագր. 17, անգր.՝ 47	

Այսպես ասենք, 1971—73 թթ. հավաքված վեպի պատումների տեղագրական-աղդագրական, վիպասացների սեռատարբերային ու սոցիոլոգիական ամբողջները գալիս են վերստին ապացուցելու այն ճշմարտությունը, որ՝

ա. «Սասնա ծռերը» պատմական հանդամանքների բերումով ինչպես պատմըվում է Արևելյան, այնպես էլ Սովետական Հայաստանի շրջաններում, այն ժամումով սերում է Արևմտյան Հայաստանից։ Գրանցված 81 պատումների աղբյուրներից 57-ը 1914—16 թթ. Արևմտյան Հայաստանի վերոհիշյալ շրջաններից տեղահանված և Արևելյան Հայաստանում բնակություն հաստատած արևմտահայ գաղթականության ներկայացուցիչներ են։ 24 պատումի աղբյուրներ ծնունդով Արևելյան Հայաստանից են, սակայն նրանց նախնիները, որոնցից լսել և սովորել են վեպը, 1828—29 կամ 1877—78 թթ. գաղթել սկսել են դարձյալ Արևմտահայաստանից՝ Ալաշկերտից, Բուլանըխից և Բայազետից։

բ. Վեպը գիտեն արդեն ծերունյան տարիքն ապրող տղամարդիկ և կանայք, որոնք այն լսել են և մտապահել կամ դեռ «երկրում» իրենց բուն հայրենիքում (70-ից ավելի տարիք ունեցողները) կամ էլ ազատից՝ համապատասխան վիպասացներից և իրենց մեծերից (մեծ մասը՝ 70-ից ցածր տարիք ունեցողները)։

գ. Վեպը իմացողները ճնշող մեծամասնությամբ անգրագետ, մասամբ և կիսագրագետ դյուղացիներ են կամ դյուղացիական միջավայրից եկած բանվորներ, արհեստավորներ, տնտեսուհիներ։

դ. Վեպն իմացողները մեծ մասամբ պատահական պատմողներ են և ոչ վարպետ վիպասացներ։ Նրանցից 55-ը միայն լսել և մտապահել են և երբեք չեն պատմել։ Մնացած 26-ը պատմել են առաջներում միայն, մոտ 30—40 տարի առաջ. Քեպետ նրանց մեջ կան վարպետ վիպասացներ, բայց նրանք էլ չպատմելով՝ առարձանապես մոռացության են տալիս վեպը։ Եթե Մանուկ Արեգյանը տանվածին ընծայողի գործակիցներին էլ հավասարում վիպասացների պատահական պատմողներ լինելը և վեպի քայքայման, առարձանապես մոռացման փաստը, ապա 70 տարի անց այդ իրողությունն ավելի է խորացել։

Ասացողներից լավագույնները, անկախ իրենց զառամող տարիքից, օժտված են բացառիկ հիշողությամբ, պատմելու բնատուր ձիրքով, վիպական ավանդապահությամբ և, ինչու չէ, վեպը երկար ժամանակ չէին պատմել, կարողանում էին կատարելապես վերապրել և վերարտադրել վիպասացության նեղլուշ ավանդները։

2

Բանահավաքչական ասպարեզում դրվին մշտապես կիրառվող ասացողը «ո՞ւմ է լսել, ումի՞ց է առնրել» հարցը վեպի զեկուցում ունի բանագիտական առանձին և առաչնակարգ արժեք։ Վիպասացը երբեք չի մոռանում կամ զանց առնում իր ազբյուրը, առաչին հերթին հիշում է նրան, ումից առնրել է վեպը։ Նախորդող վիպասաց սերնդի մասին վկայությունների այն հատերն են, որոնցով հնարավոր է դառնում վերականգնել վիպասացության ու վիպափոխանցման ավանդական կարգը։ Նախապես հաշվի առնելով վեպի փոխանցման ավանդական այս կարգի ուժն ու կայունությունը, աշխատանքները նպատակադրվեց դնել որպես հաչվի վիպասանական անունների, դարձվածների ու կենսաբանների հետքերով։

Աշխատանքի ընթացքում որոնն հաչվի վիպասանական դպրոցները համալրվեցին նոր ներկայացուցիչներով, բացահայտվեցին նոր կենտրոններ, վարպետ նոր վիպասաններ, որոնք հետաքրքրական են եղել և՛ բուն հայրենիքում, և՛ այսպես՝ գաղթից հետո, իրենց հայրենակիցների չրջանում։ Բոլորովին նոր պայմաններում և աչխատանքային այլ տարածքում նրանք ոչ միայն մնացել են հին ավանդների կրողներ, այլև շարունակել են վեպի փոխանցումը հետզրգ սերնդին։

Թալինի չրջանում վերաբնակված, Սասնո տարբեր գյուղերից 1915-ին գաղթած տարեց ու միջին սերնդի վիպասանները, որոնք միաբերան, նչում էին Երկու ազբյուր՝ Սասնո Ճախրիան գյուղից Քամո Դավթյանին[2] և Սասնո Արծվիկի գյուղից՝ Օհանին։ Օհանից պատում չկա պահպանված, թեպետ ժամանակակիցները վկայում են, որ նրանից կատարվել է գրառումը 20-ական թվականների սկզբներին. պատմում են, որ հավաքել են մի քանի վիպասացների և գրառման համար ընտրել միայն Օհանի պատումը։ Օհանին լսողները հավատում են, որ նա ավելի ամբողջական ու կատարյալ գիտեր վեպը, քան հանրահայտ Քամոն Օհանն ու Քամոն հաճախ են հյուր եղել միմյանց և քաչտատեղյակ՝ մեկը մյուսի վիպելու սրվեսին։

1971-ին գրանցվից երեք պատում, որոնց ասացողները՝ նախկին սասունցիներ, գարձյալ Սասնո Արծվիկ գյուղից, վեպը սովորել էին Օհանից։ Այդ երեք տարբեր պատումների համադրումից կարելի է ժամանակ պատկերացում կազմել Օհանի պատմած տարբերակի մասին։ Սասնո Արծվիկ գյուղն իր վիպասաց Օհանով, նրան նախորդած ու հաջորդած ասացողներով, դառնում է վիպասացության մի նորահայտ օջախ։

Նման ավանդական օջախներ հայտնաբերվեցին Մուշում, Մանազկերտում, Մոկսում, Շատախում, բացահայտվեցին վեպի անցման նոր ուղիներ, նոր կապեր վիպասանական տարբեր գոտիների միչև։

Ալաչկերտի հատատուր գյուղի նախկին բնակիչներից գրառված էր երկու պա-

---

[2] *Տե՛ս «Սասնա ծռեր», հ. Բ, Ա մաս, Երևան, 1944, էջ 159—197։*

տում 30-ական թվականներին։ Վիպասաց երեք սերնդի մասին վկայություններն արդեն տեղեկում էին որոշակի պատկերացում հատուկ վիպասանական ավանդների մասին։ 1971-ի արձանագրություններն ամբողջացրին, մասամբ էլ հաղթահարեցին այդ պատկերացումները։ Վիպասաց մի սերունդ էլ ավելացավ արդեն հայտնի և լավ ուսումնասիրված կողքին։ Ամենավաղ վկայությունը տանում է դեպի Դրմիճ՝ մի արտասովոր վիպասաց ու հեքիաթասաց։ Դրանից վեր անցել է Ռես Գասպրին և Քոչե Վարդանին. այս երկուսից սովորել են Մանուկ Բորոյանը և Կարապետ Քամոյանը, որի հոր պապն է եղել Դրմիճ։ Հատուկ ուշադրության Սեդրակ Արաքսյանը (ծնված 1889 թ., 1915-ին զոհվել է հատուկից և հատուկցիկ Շերբակում) ունեց մի այլ, ոչ պակաս հայտնի վիպասաց՝ Փրո Աբրահի անունը, որ նախորդում է Մանուկ Բորոյանի և Կարապետ Քամոյանի սերնդին։ Այս Փրո Աբրահից էլ սովորել է վեպը Սեդրակ Արաքսյանը, որը նրան, իրավամբ, իր վարպետն է համարում, չնայած շատ լավ հանդիպել և լսել է նաև Մանուկին ու Կարապետին։ Սեդրակ Արաքսյանը մեր օրերի եղակի վիպասացներից է, իր վարպետի արժանավոր ժառանգորդը, այժմ ինքն արդեն վարպետացած, բայց այլևս առանց աշակերտ-հետևորդի։

Գրառվեց մի պատում Փրո Աբրահի որդուց՝ Սմբատ Գևորգյանից (ծնված 1893 թ., ապրում է Հոկտեմբերյանի շրջանում)։ Վերջինս իրեն վիպասաց չի համարում, բայց բավական տեղեկատվություն հիշում էր հոր պատմածը։ Մանուկ Բորոյանի, Կարապետ Քամոյանի, Սեդրակ Արաքսյանի և Սմբատ Գևորգյանի պատումների համադրությունը, դրանց զրնդի տողերի նույնությունը, կայուն ավանդականությունը, խիստ վիպական կառուցվածքն ու պատմելաձևը իրավամբ են տալիս հատուկին կրելու վիպասանական մի ուրույն ու ինքնատիպ դպրոցի պատիվը։ Սեդրակ Արաքսյանն ու Սմբատ Գևորգյանն այդ դպրոցի վերջին վիպասացներն են։ Արաքսյ Սեթոն հայտնեց նաև հատուկցի մեկ այլ վիպասացի՝ Հակոբ Բենոյանի մասին, որը նույնպես 1915-ին զաղթել եկել է Արևելահայաստան, ապրել Անիի շրջանի նախկին Զորթ գյուղում և մահացել 40-ական թվականներին։

Հայտնաբերվեցին դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին նշանավոր ասացողների վիպարվեստի անմիջական ժառանգորդներ. մոկացի Նահո Քեռուց[3] վեպն անցել է Տիգրան Մուրադյանին (նույն մոկաի Գինենկանց գյուղից, ծնված 1886 թ., ապրում է Էջմիածնում), մոկացի Վարդան Մոմիկ-Բազիկյանից[4] Մանուկ Հայրապետյանին (նույն մոկաի Դաշտ քաղից, Վարդանի եղբորորդին, ծնված 1896 թ., ապրում է Աշտարակում), այրեկիրացի Բարսեղ Մանուկյանից[5] ին-

---

[3] Տե՛ս «Սասնա ծռեր», հ. Բ, Ա մաս, Մանուկ Բորոյանի պատումը՝ էջ 247—353 և Կարապետ Քամոյանի պատումը՝ էջ 355—404, գրառող՝ Կարապետ Մելիք-Օհանջանյան։

[4] Տե՛ս «Սասնա ծռեր», հ. Ա, Երևան, 1936, էջ 3—54, գրառող՝ Մանուկ Աբեղյան։

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 473—600, գրառողներ՝ Հարություն Գիլանյան և Սեններիմ Տեր-Հակոբյան (կատարված է երկու գրառում)։

[6] «Սասնա ծռեր», հ. Բ, Բ մաս, Երևան, 1951, էջ 483—531, գրառող՝ Երվանդ Լալայան։

վանդ Հունանյանին (նախընթացը նույնպես ալաշկերտցի, ծնված 1898 թ., ապրում է Ալպարանում)։

Ալպարանի երկու գյուղերը՝ Ափնա և Ղաղանճար (այժմ՝ Արագած), ուր վերի գրառումներ է կատարել Դարեգին Հովանիսյանը 1890-ական թվականներին, ավելին նոր վիպապատներ, իբրև ապացույց նույն տեղում վերի վերջին մեկդարյա ավանդության պահպանման ու փոխանցման իրողության։

Վիպասանական ավանդների փոխանցման մեջ արդեն բանիցս հաստատված օրինաչափություն է այն, որ լավագույն վիպապատների առաջին ժառանգորդները լինում են նրանց որդիները։ Մեր ասացողների մեծ մասին ուղղված բոլոր հարցումները տանում էին դեպի մոտավոր ազգականները—հայրն է արտակարգ լավ իմացել վեպը, հորեղբայրը, քեռին, եղբայրը, պապը, տատը։ Այսպես արդեն ժառանգաբար անցնում է ոչ միայն վեպը, այլև ասացողի ամենօժտորոշական ունակությունն ու տաղանդը։

Բոլոր վկայությունները, անգամ իրարից, բացառում են վեպի պատահական անցման բնույթը. չկա մի ասացող, որ չիմանա, թե ումից է սովորել վեպը, ո՛վ է ինչպիսին էր իր նախորդ վիպասաց սերունդը կամ ո՛ր ավանդների կրողն է ինքը։ Վկայություններն իրենց հիմքում մի կայուն օրինաչափություն ունեն՝ հնամյա ավանդ նախ կայուն է նաև ասացողների վերաբերմունքն այդ ավանդի նկատմամբ. նախորդ վիպասաց սերունդն ավելի լավ գիտեր, ավելի վարպետ էր, քան ներկա սերունդը։ Սա վարպետի նկատմամբ ունեցած յուրօրինակ հարգանքի տուրք լինելուց բացի, և ամենից առաջ՝ խոսում է վեպի նախկին վիճակի մասին, որը ժամանակի մեջ անխուսափելիորեն ենթակա է որոշակի փոփոխությունների։

3

Նախ անանձնիք, թե ինչ պատկեր ունեն նորահայտ պատումների ըստ նրանց գյուղերի բանակական հատկանիշների։

Ինչպես հայտնի է, «Սասնա ծռեր» վեպն ունի չորս գյուղ. Սանասար—Բաղդասար, Մեծ Մհեր, Դավիթ, Փոքր Մհեր։ Դրանցից յուրաքանչյուրն ինքնին առանձին վեպ է հերոսների յուրաքանչյուր սերնդի մասին. գյուղերը միմյանց հարակցվում են ըստ հոր և որդու հաջորդականության։ Սա վեպի այն դասական կառուցվածքն է, որ վկայված է մեկ հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ պատումներով և ապացուցված գիտական հետազոտություններով։ Հայտնի է միաժամանակ, որ ոչ բոլոր պատումներն են պահպանել վեպի բոլոր չորս գյուղերը, այն էլ միասնական ամբողջականությամբ։ Պատումներից շատերում վեպի գյուղերի քանակը տատանվում է մեկից չորսի միջև՝ գյուղերն ամբողջականությամբ։ Այս ընդհանուր օրինաչափություններից, բնականաբար, դուրս չեն կարող մնալ մեր արշավախմբի գրանցած 81 պատումները։

Դրանք, ըստ գյուղերի քանակի, ամբողջականության և ազգագրական շրջաններին, հետևյալ պատկերն են ներկայացնում (տե՛ս աղյուսակը)։

Աղյուսակից երևում է, որ գյուղերի ներքին համախականության աստիճանով նույնպես (Դավիթ գյուղն առանց բացառության առկա է բոլոր պատումներում, մյուսներն ունեն տարբեր համախականություն) նորահայտ գրանցումներն էական

| ՀՀ | Գործարանների անունները | Ընդհանուր թիվը | Ներառյալ | | |

գծերով համապատասխանում են հրատարակված պատումներին՝ իրենց մեջ արտացոլելով վիպի իրական-ավանդական հատկանիշները։

Եթե Հյուգերի բանակի և դրանց հայերազգականության խնդասով պրատած նոր պատումները հատատում են վիպի արդեն եզած ավանդական անաքը, ապա մեկնական ազգագրական գնում տարբեր պատումների Հյուգային ընդգրկման պատկերի մեջ որոշակի փոփոխություններ են մտնում։

Մինչև այժմ Հայոնի Շատախի հինգ պատումները Սանասար-Բագդասարի Հյուգը բնավ չունեն, մեկը նամանակ է, իսկ չորսը՝ երկհյուղ. Մհեր-Դավիթ. 1971-ին և 1972-ին գրառած Շատախի երեք պատումներն ունեն տասներկու Սանասար-Բագդասար Հյուգեր. Ըստ արտի, շատախցի Սուրո Մուրադյանը՝ 1933 թ. պատմել է միայն երկու Հյուգ՝ Մհեր-Դավիթ, իսկ 1972-ին՝ կրկնակի գրառման ժամանակ, պատմեց չորս Հյուգն էլ։ Ժամանակով այս երևույթին բացատրության մեջ, նշենք, որ այս նոր գրառումները ամբողջապես փոխում են Շատախի պատումների բնութագրված պատկերը։

Մակայ նորագրառ պատումները նույնպես ամբողջական են՝ քառամյուղ։ Այսանգ ևս մի գրառ համեմատության և հետազոտության եզր է բացում։ Սոկացի Տիգրան Մուրադյանը վկայել է Նախո Քեռուց. Նախո Քեռին միայն երկու Հյուգ է պատմել՝ Դավիթ-Մհեր Տիգրան Մուրադյանի պատումը քառամյուղ է, մի վկայությամբ հանգերձ, որ Նախոն ևս իմացել է չորս Հյուգը։

Այժմ անանենք գրանցված պատումների որակական հատկանիշները։

Գրառած 81 պատումներն ունեն բանահյուսական տարբեր որակ՝ կախված ասացողի վիպելու շնորհքից, հիշողության ատիճանից, բանավոր սկզբնաղբյուրի որակից, վեպի նկատմամբ ունեցած ավանդական վերաբերմունքի աստիճանից, մասամբ և գրքային աղբյուրների ազդեցությունից։

Պատումների որակը տարբերակելու և արժեքավորելու նպատակով էրանք համախմբել ենք հետևյալ ոճաբանական ցուցանիշներով հատկանշվող տիպերի տակ.

1. Ավանդական-պատմողական. առձակ և չափածո ճառավածներով։

Այստեղ համախմբել ենք այն պատումները, որոնք աչքի են ընկել վիպական բացառիկ ավանդականությամբ, այսինքն՝ վիպական ավանդական ոճով, բանաձևված հանկերգ պատկերավոր խոսքով, վեպին բնորոշ ազատ ոտանավորի տարաչափական հատկանշով, չափածո-երգային հատվածների առկայության և հաճախականության բարձր աստիճանով։

2. Ազատ-պատմողական. առձակ և չափածո ճառավածներով։

Սրա տակ մտնում են այն պատումները, որոնք արդեն կորցրել են ավանդական շատ հատկանիշներ (ավանդական ոճ, բանաձևված պատկերավոր խոսք, տարաչափություն) և վերածվել են ազատ պատմելու, բայց դեռևս շարունակում են պահպանել ավանդական ոգեշնորհչի գիծը, չափածո որոշ հատվածներ, վիպական դարձվածքներ և այլն։

3. Ազատ-պատմողական. առձակով։

Այս տիպի տակ ենք դրել այն պատումները, որոնք կորցնելով ավանդական-վիպական գծերը, չափածո հատվածներն ու բանաձևերը, դարձել են սովորական սրձակ պատումներ։

---

[1] Տե՛ս «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 753—784, գրառող՝ Կ. Մհեր-Օհանջանյան։

81 պատումներից առաջին տիպին են պատկանում 43, երկրորդին՝ 19, երրորդին՝ 19 պատում։ Այսպիսով, գրանցած պատումների մեծամասնությունը՝ մոտ 53 տոկոսը, պատկանում է ավանդական-պատմողական տիպին, իսկ 47 տոկոսը, գրեթե հավասար համամասնությամբ՝ ազատ-պատմողական տիպերին։

Անկախ այս դասակարգումից, բոլոր պատումները գրառումները, վեպի բանասեր ավանդման անհետացման ներկա պայմաններում, ժողովրդագիտական կարևոր արժեք են ներկայացնում։

Գիշատանիով հետևերն վեպի ամենօրյա գործունեության կատարվածքը, նոր գրառումները բերում են հավելյալ միջադեպեր, մոտիվներ, հին միջադեպերի նոր հարաբաշխներ և պարզորեն հարստացնում վեպի բովանդակությունը։

4

Բանագիտական առանձին և ուշադրության արժանի հարց է նաև այն, թե ինչ վերաբերմունք ունեն այսօր վիպասացները իրենց պատմած ժողովրդական վեպի նկատմամբ։ Հարցի արժեքը ոչ միայն վեպի ժանրային ըմբռնման պարզաբանման մեջ է, այլ նաև ժողովրդի հոգևոր կյանքի, նրա ազգային խառնվածքի, նրա կենցաղի գնահատականի, որով, վերջին հաշվով, պայմանավորված է վեպի գոյատևումը։

Եթե Մանուկ Աբեղյանը դեռ 70 տարի առաջ էր հավատում, թե ասացողները վեպին վերաբերվում են իբրև իրական պատմության, իբրև ճշմարիտ եղելության, որի մեջ, հետևաբար, նրանք չեն խառնում որևէ ինքնահնար բան, ապա այդ վերաբերմունքը հիմնականում կենդանի է մնում առայսօր։

Վիպասացներին ուղղած այն հարցին, թե իրենք վեպ ասել ինչ են հասկանում, մեծամասնությունը պատասխանում էր՝ իբրև իրական պատմություն, նշանակարժան բան։ Ավելի շրջահայաց մտածողները ճշգրտում էին իրենց հավատամքները, ընդգծելով, թե շատ բան ճիշտ է, որոշ բան էլ ավելացրած է, հնխացրած։

Սասունցի ոչ մի ասացող վեպը չէր համարում հերքելի կամ անհրեական բան։ Ընդհակառակը, նրանցից շատերը, ովքեր լավ էին հիշում Սասնո ուղևորը, այն վայրերը, շենքերն ու առարկաները, որոնք կապված են վեպի հերոսների անունների հետ, միաբերան պնդում էին վեպի լիովին պատմական ճշմարտություն լինելը։ Սասնո ճախրկանի գյուղացիները կամ վերջիններիս ազատների սերունդներն ու հարևանները համառորեն ապացուցում էին, թե Սասունցի Դավիթ տունը շարունակում է գոյատևել մինչև մեր օրերը։ Ճախրկանցի Դավիթյանների գերդաստանը, որից և վեպի երբեմնի հայտնի ասացող, այժմ հանգուցյալ Բաման Դավիթյանը, սերում է Դավիթ տունից, նրանց պապենական ցրտագոր ճախրկանում, որի ցրտագոյանն է եղել Բաման, բան համաչափ ցուցադրիչների, պատկանելիս է եղել Սասունցի Դավիթին և սերնդից-սերունդ ժառանգաբար անցել է իր տեմպերիցներին։ Համոզված էին, թե Դավիթ ցրտագոյքարը եղել է հատուկ քար, որ սկսած Սասունցի Դավիթ օրերից երբեք չի կռանվել և ինքն իրեն ծռել է, այսինքն՝ կռանվել, նորոգումների ժամանակ։

Ասացողներից ամենը Սասնո Գրիու և Սղունգ գյուղերի տրաճում տեսել են Դավիթ Ալ Բուգի քարը, այն մեծ տալաքարը, որի վրա, բան ավանդության, պարզ նկատվում են Քուսիկի Ջալալու ամբոխների հետքերը (ասացող Սարգիս Ավագյան, Սասնո Սղունգ գյուղից, ծնված 1897 թ.)։ Ավագյանը վկայում է նաև, որ Սասնո

դաշտում տեսել է այն հորը, որի մեջ Մարթա Մելիքը գցել էր Դավիթին։ Մեկ այլ ասացող՝ Խաչատուր Հովհաննիսյանը (ծնված 1884 թ., Սասնո Սպղանք գյուղից) պատմում է, որ ինքը Մարութա վանքի կողքին տեսել է Մեծ Մհերի զեթզմանը՝ խիտ երկաթ, ապհական մարմարե տապանաքարով և տապանագրով, որը կարդալ ի կարողացել իր անգրագիտության պատճառով։

«Սասնա Ծռեր» վեպի հերոսների անունների ու ազգանունների հետքերը ցույց են տվել նաև մշո դաշտում։ Մշո էրիշաներ գյուղացի Արտաշ Ղազարյանի տեղով, էրիշաների կողքին եղել է Դեղձմեր անունով քրդաբնակ մի գյուղ, որ տեղացիներն ավանդությամբ ծագած են համարել վեպի Դեղձուն և Մհեր անուններից (Դեղձմեր=Դեղձուն—Մհեր)։ Մշո Ջիլուրա Ղաբռ գյուղից գաղթած 91-ամյա Ենգո Մխիթարյանի վկայությամբ, Մշո Ալվառիճ գյուղի մոտ նա տեսել է քարացած այն շեպերը, որ քան վեպի, Դավիթը՝ քաշելով գութանը, վարել է և շուռ տվել։ Դրանք կոչվում են «Դավիթի շեպեր»։ Նույն Ալվառիճից գաղթած Դասյար Ղազարյանի տեղով, Ալվառիճի նեղ տարի տեղ ընկած է մի քար։ Ասում են, երբ Դավիթը հոգնել է եղել, այդ քարը տարից գլորվել է ցած։ Դավիթը ձեռքը և ծունկը դիմահար է պահել գլորվող քարին։ «Հոգ խմվեր է, գացի քարի մեջ, մատներս լի ծունկը է քար։ Հարի մկա էդ քար կա՝ Դավիթի հոգի ու մատների տեղ լի վրեն։ Ես իմ աչքը իմ տեսեր»։

Ավելին, Սասնո հերոսների հետքերը ցույց են տվել նաև Հայաստանի տարածաշրջանների դուրս՝ Հայկական և Դիարբեքիրում։ Վիպասացներից ոմանք բանիցս վկայում էին, որ իրենք կամ իրենց համագյուղացիները այդ քաղաքներում տեսել են Դավիթի շենած շորս զարդահով բերդերը. «Հանգր, գուրզ, լըշադին գախաւ», կամ Դավիթի պատկերը՝ ձիու վրա քանդակած, բերդի կենտրոնական մուտքի հակատին։ Կամ՝ Հալեպի կամուրջի մոտ կա մի վիմիկար վեմ քար, որ ասացողների վկայությամբ՝ Դավիթի պարապատիկի քարն է եղել։

Այլևս շենք խոսում Սասնո բերդի, Բալմանա կամրջի, Մենդուգանի, Մարութա տարի, Մարութա վանքի և բազմաթիվ այլ տեղավայրերի մասին, որոնք հայտնի ու հարազատ են եղել Սասնո և Մշո նախկին բնակիչներին՝ կապված վեպի հերոսների անունների ու արարքների հետ։

Բանագիտական առանձնահատուկ արժեք ունի այն բազմաթիվ զրույցների շարքը, որը մինչև այժմ հայտնի գրառումներում հանդիպում է առաջին անգամ։ Այդ զրույցները մի կողմից խոշ հրապանչական են ու համաշնչուն վեպի գաղափարաբանությանը և վեպի ու վիպական հերոսների նկատմամբ ունեցած ժողովրդի ճշմարտացի պատմական հայացքին։ Մյուս կողմից, դրանք ազգագրից են վեպի ժանրային այն հատկանշի, քն ինչպես հարակից նորանոր զրույցներ պատմում են վեպի շուրջը և նրա շեն էլ մտնում վեպի ավանդական կառուցվածքի մեջ, ապա կապվում են վիպական կերպարների հետ, իրենց հետ բերելով կերպարի ու գաղափարի նոր լուսաբանություններ։

Այդ բոլորը գալիս են հաստատելու վիպասացների (և ոչ միայն վիպասացների) այն խոր համոզումները, որ «Սասնա Ծռեր» վեպն իրենց նախնիների ճշմարիտ ու իրական պատմությունն է՝ որոշ հավելումներով ու չափազանցություններով։

Ու քանի որ ասացողները վեպին մոտենում էին իբրև իրենց նախնիների ճշմարիտ պատմության, հետևաբար, շատերը մեզ էին համարում տեսլը, հորինելը կամ ավելացնելը։ Ով նրա միջադեպերից տեղ-տեղ չէին հիշում, խոսքն

ավելացնում էին. «Ա՛մայ էվելցում, էլ չըմ գինա, սուտ չըմ կըլնա ըսիս կամ ա՛խ ոիցանն, ախպեր, էդ է, ինչ որ լսեր իմ, ես էհի կըսիմ, ես չըմ կըլնա էվելցուս»։ Վեպի նկատմամբ ունեցած այս ամենազգայուն վերաբերմունքն է, ասես, վիպասացների հիշողության մեջ պահել ու պահպանել վեպն իբրև հնօրյա մասունք։

Եվ որքան էլ, վիպասացների համոզմամբ, վեպն իրենք պատմում են անաղարտ ու անխառն քան լսածի, բայց ճշմարտությունն այն է, որ վեպը սերնդից-սերունդ, դարից-դար ավանդվելով, յուրաքանչյուր սատարողից անկախաբար, յուրաքանչյուրի կողմից ակամա, ինչպես ոչ արմատական, այնուամենայնիվ փոփոխվել է, իսկ վերջին հինգհարյակում այլևս չդադարվելով, մասնցվելով՝ քայքայվել ու կիսել չի կորել գնալ, ապա միմիայն շնորհիվ հիշյալ արևմտահայ գաղթական սերնդի իր երկրի ու պատմության նկատմամբ ունեցած չխամրող սիրո և անմար կարոտի։

3

«Սասնա ծռեր» վեպի նորահայտ պատումներն ու բազմաթիվ վկայությունները դպրոցական փոփոխ են վեպի այնաշարադրական ատաձևման նախին սահմանները և այդ սահմաններում պատմվող վեպի պատումների քանակն ու օրակը։

Առ այսօր հայ վիպագիտությանը հայտնի չէին պատումներ վեպի հայրենիքին մերձակից այնպիսի գավառներից, որպիսիք Բալանեքեը, Բիթլիսը, Խնուսն ու Մանազկերտն էին։ Հիշյալ գավառների նախկին բնակիչներից գրանցվեցին ինը պատում. երեք պատում Բալանեքից, երկուսը՝ Բիթլիսից, երկուսը՝ Խնուսից և երկուսը՝ Մանազկերտից։

Վեպի ավանդման մասին նոր ու կենդանի վկայություններ տանում են Արևմտահայաստանի բազմաթիվ այնպիսի գյուղեր, որոնք մինչև այժմ բաց էին մնացել վեպի տարածման քարտեզի վրա։ Դռնցից են Արձեշ, Վասպուրականի՝ Ավերակ, Հեզք, Դայիրման, Բաշկալայի՝ Ջուլամերկ, Սպարկերտի՝ Բազրանաց, Նորադուզի՝ Շամանաս, Արաղայի՝ Նալան, Խլաթի՝ Կամուրջ, Բալանեքի՝ Ղարալըղ, Փիրան, Մանազկերտի՝ Նարատի և այլ գյուղեր ու բնակավայրեր։ Վեպը նախկինում պատմվելու մասին նոր վկայություններ գրանցվեցին նաև Արևելյան Հայաստանի արևմտահայ հին վերաբնակիչներով բնակեցված՝ Ախպարանի, Կամոյի, Մարտունու շրջանների շատ գյուղերում։

Այդ կարգի վկայություններով ոչ միայն բնորոշվում են վեպի տարածման ազգագրական-աշխարհագրական սահմանները, այլև գրանք առավել մանրամասնում են ու որոշակիացնում։

Վեպի բուն հայրենիքից՝ Սասունից, մինչև այժմ հրատարակված և հայտնի էին բնագրանքի երկու պատում, գրանցված 1930-ական թթ. Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից։ Սասնո 21 նահապետ պատումներով և բազմաթիվ կենդանի վկայություններով պարզվեց, որ վեպը լայն տարածում է ունեցել Սասունում, ուր եղել են շատ վարպետ վիպասացներ, որոնցից մի քանիսը 1916-ին գաղթել են Արևելյան Հայաստան և տարել մինչև վերջին տասնամյակները։ Այդպիսով փոխվում է Սասնո և սասունցիների վիպատեղծման ու վիպասիրահանման մասին եղած նախկին պատկերացումը, և Սասունն ու սասունցիները վերագտնում են իրենց իսկական տեղը վեպի կերտման ու ավանդման մեջ։

Վեպի շատ նոր տարբերակներով հարստացան նախկինում արդեն հայտնի այնպիսի ազգագրական շրջաններ, որոնցից են՝ Աշակերտը, Բալաթաղը, Մակաղ, Շատախը, Մուշը, իրենց հետ բերելով անդավաքելի ու վիպատաց սերունդ-

ՀԱՊԿ-Ա.թմ.CC

ների նոր անուններ[8]։ Հայ վիպագիտության մեջ վաղուց ի վեր վկայված է սրեմբրատհայ մի քանի դյուցազներում «Սասնա ծռերը» երդերի միջավայրում պատմվելու մասին։ Երդացու Հ. Չեղին գրառել և հրատարակել էր վեպի երգերեն մի փորրիկ պատում։ Հ. Չեղու ցուցումով արշավախումբը Ապարանի Ղռնդազաղ գյուղում 75-ամյա Ալի Յաթիրի Համեյանից գրանցեց «Սասնա ծռերի» երգերեն մի նոր պատում, բազկացած չորս ճյուղից։ Ա. Համեյանը վեպը լսել է հորից՝ Յաթիր Կասոյանից. վերջինս էլ իր հորից՝ Համեյից, որը գաղթել է Ալաչկերտից և մահացել Ղռնդազաղում։ Յաթիրը վեպն անվանել է «Բալ Գավիթ» կամ «Մհերի հարյուր»։ Ային վկայե. ի էր, որ իր պապը վեպն Ալաչկերտում լսել է երգերից։

6

Վեպի նորահայտ պատումների մի շարք հաղորդումներ լինելով վերջին վիպասացները, երկար ժամանակ պատմելով վեպը, դերազանց յուրացրել են վեպչինիս ավանդական բոլոր մանրամասնները։

Վեպի նախորդ գրառումները լինելով ավելի ավանդական, բնականաբար, ավելի հարուստ էին չափածո-երգային հատվածներով (հատկապես Մհակց տաբրնրակներդը) և վիպական կայուն բանաձևերով։ Նորագույն գրառումներում, չշոշված առանձին բացառություններդ, չափածո-երգային հատվածներն ու վիպական կայուն բանաձևերդ, մոռացման պատճառով, համեմատաբար պակասում են. չափածո-երգային հատվածներից հաճախ առանձին կտորներ են միայն հիշատակվում։

Նորագույն գրառումներում, առհասարակ բացառությամբ վերջին վիպասացների պատումների, աստիճանաբար դերիչնող է դարձել ազատ-պատմողական տիպը. վեպին բնորոշ ազատ առանձնավորի առաջաչափական կառուցվածքն ու ոիթմը նորագույն գրառումներում աստիճանաբար բարդացվել են, և պատումները դարձի չափով մոտեցել են սովորական արձակ պատմություն։

---

[8] Մի նոր վկայությամբ պարզվեց, որ վեպը բնիացիկ հարցաքրմանքի սկզբունքներին հասել է անգամ Լենհամանու Վարդենիսի շրջանի Կարճաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցի ուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Դանիելա Նիկոլաևնա Ալբինայի վկայությամբ, իր հայուհի մայրական տատը՝ Սրբուհի Գասպարնի Ազատյանը, 1915 թ. կատրաճնեցիից փրկվելով, ամուսնուց ու զրույց գրկված, Վանից անցել է Լոռի և երկրորդ անգամ ամուսնացել լևհի հետ։ Սրբուհին մահացել է Լոռում, 1971 թ., 85 տարեկան հասակում։ Սրբուհին շատ լավ է իմացել «Սասնա ծռերը», հաճախ պատմել է Յոհաննեին Վանի բարբառով և երգային շատ հատվածներով։ Նա վեպն սկսել է «Պողոսիա»-ը երդերով և վկայել, որ այն բազկացած է յոթ ճյուղից։ Դ. Ալբինան հավատում էր, որ ինքը լավ հիշում էր տատի պատմած տարբերակը, բայց հետագայում, երբ գալիս է Սովետական Միությունն և կարդում գրքում, մոռանում է տատի պատմածը։ Վկայում էր, որ տատի պատմածի և գրքի միջև մեծ տարբերություն կար։ Սրբուհու պատմածում չի եղել Քեռի Բորոս, այլ միայն Ձենով Հովսեն։ Սրբուհին եղել է խիստ ավանդապահ, լռելով անգամ ազգուհիք Յոհիր է շինել ամեն, լավաշ քիսել և եփել հայկական ճաշեր։

[9] Տե՛ս *Ա. Ջհոնի*, Курдский фольклор, Ереван, 1957, стр. 157—160.

Այս երեւույթը, որ առկա էր դեռևս նախորդ դարաշրջանում, արժանանալով անգամ դարակից հետազոտողների ուշադրությանը, այժմ նորագույն գրառումներում ավելի է ծավալվել ու խորացել։

Վեպի նորագույն գրառումները տարբերվում են նախորդներից նաև գրանցման նոր տեխնիկական միջոցների կիրառությամբ։ Եթե վեպի պատումների նախորդ գրառումները կատարվում էին ձեռքով և մեծ մասամբ մեկ անհատ բանահավաքի կողմից, ապա նորագույն գրառումները կատարվել են գիտական սրշտավախմբերի կողմից՝ բացառապես ձայնագրիչ ապարատով։

Վիպասացից պատումը ձեռքով գրառելիս, որքան էլ այդ կատարվեր խնամքով ու հշդրտությամբ, գործյալ շատ բան (պատմելաոճ, լեզվաբարբառային նրբերանգներ) անհնարին էր նույնությամբ պահպանել ու գրանցել, քանզի վիպասացը ոչ թե թելադրում է պատումը, այլ ազատ վիպում, հաճախ արագ և ոգեորությամբ։ Մինչդեռ ձայնագրիչ ապարատով ձայնագրելիս՝ ոչինչ չի կորչում, անգամ որևէ հնչյուն, և պատումն իր ամբողջ, բարբառային բոլոր նրբերանգներով պահպանվում է ու գրանցվում։

Այս տեսակետից վեպի նորահայտ պատումներն իրենց գրառման որակով անհամեմատ բարձր են նախորդ գրառումներից։

Գալով նորահայտ պատումների լեզվա-բարբառային հատկանիշներին, պետք է նկատել հետևյալը.

Վեպի պատումների նորագույն գրանցումների լեզուն պատկանում է արեւմտահայ տարբեր բարբառային խմբերի։ Սակայն վիպասացները երկար ժամանակ ապրած լինելով արեւելահայ միջավայրում, մասամբ լինելով նաև գրագետ, զգալապես ազդվել են ուղղական բարբառներից ու խոսվածքներից, ինչպես նաև գրական հայերենից։ Ուստի նրանց պատումների լեզուն, հայրենի բուն բարբառից բացի, ներառել է նաև տարբեր բարբառների ու գրական լեզվի հնչերանգներ, բառային ու քերականական ձևեր։ Միևնույն վիպասացի պատումում հաճախ զուգահեռ են թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ բարբառային և թե գրական լեզվի տարբեր ձևեր, հարկավ վիպասացի բուն հայրենի բարբառի բառապաշարի ու քերականական ձևերի գերակշռությամբ։ Ուստի բնավ գործանալի և պատահական չպետք է թվա միևնույն վիպասացի պատումում լեզվա-բարբառային, հնչյունական, բառային ու քերականական տարբեր ձևերի առկայությունը։ Այդ երեւույթը նկատելի էր տասկավին վեպի պատումների նախորդ գրառումներում, որ այժմ ավելի է առաջ գնացել ու խորացել։

Վերջում նկատենք նաև հետևյալը.

Վեպի նոր պատումներն գրառումներն առհասարակ ունեն բանավոր-գիտական ու պատմական կարևոր արժեք։ Դեռևս դարակազմին, երբ «Սասնա ծռերը» դիտական հետազոտությունը նոր էր սրվում բուն հունի մեջ, երբ գրառված էր վեպի բնագիրը մեկուկես տասնյակ պատում, Մ. Աբեղյանն առաջադրում էր նորանոր պատումների գրառման անհրաժեշտությունը։

«Ժողովրդական պատմվածքի, առանձնապես վեպի վերաբերյալ ոչ մի բան անուշադիր չպետի թողնել,—գրում էր նա։—Ինչքան էլ նման պատմվածքներ տրված լինեն, նոր պատմվածքը միշտ մի որևէ նորություն, կյանքի մի կիծ, տոհմության կամ հավատալիք, ժողովրդական մի նոր աշխարհայեցողություն և այլն մեջ կբերեր էլ չենք ասում, թե նոր պատմվածքի մեջ կարող են այդ կամ այն օրինավոր փորր ինչ տրիշ անանկ պատմված լինել՝ որով մի պատմական հիշողության

կամ առասպել ավելի կարող են պարզվել։ Որքան էլ ազնաւոված և անհնչան երևան և նույնիսկ անիմաստ թվին վկաի պատմվածքները,—ինչպես և ամեն ժողովրդական բանահյուսության արդյունք,—դարձյալ ունեն իրենց արժեքը։ Մի բառ, մի խոսք, մի հատուկ անուն լոկ կարող է երբեմն բանալ ուսումնասիրողի առաջ մի ամբողջ պատմական դիպված, մի հնացած պատմական երևույթ և ավելի ևս հասկանալի դարձնել վկաը։ Կատարյալ ուսումնասիրության համար ոչ մի պատմվածք անուշադիր չպիտի թողնել, ուստի և անհրաժեշտ է, որ շատ տեղերի և բազմաթիվ պատմվածքներ ունենանք[10]։

Դիտականի այս պահանջը մեր օրերում ոչ մեկին չի կորցրել իր իրավացիությունը, այլև արդի պայմաններում հնչում է նոր ուժով և իմաստությամբ։

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

[10] Մ. Աբեղյան. *Հայ ժողովրդական վէպը*. Թիֆլիս, 1908, էջ 16։

Սուրեն Տավթի Հերիաթը

Սանոս Տավթի Խեքաթ

ՍԱՍՆԱ ԾՌԵՐ

Սանոս Դավիթ

Բողդասար և Սանդասար

Աշխատ Դավթի Հեքիաթ



Աշխատաւոր ծոռեր

պատմեց

Մոկոյի Մարտիրոս Մուրադեան

Արտաշատ – Փոքր Վեդիի գիւղը

գրառուած է 1972թ.



Մատթէոս Մկրտիչ Մուրադեան ծնած է 1876 թ., Մոկսի Սոփանց գիւղում։ Մանկավարժում և այտեղ պրպտել է շատ պատմութեամբ և հնագրութեամբ։ Աշխատի բերումով Մարտիրոսը շատ է շրջել Արեմտահայաստանում, եղել է նաև Բագդադում ու Սամսատում։

1915-ին, տեղահանման ու կատարածի ժամանակ, մանկակոչ է թուրքերի դեմ մղվող կռիվներին և Պարսկաստանով անցել Բագդադ։

Մարտիրոսը 1921-ին գալիս է Սովետական Հայաստան. սկզբում բնակվում է Ղամարլուի շրջանի Դարգուս գյուղում (այժմ՝ Անտառաւան), ապա, մեկ տարի անց, տեղափոխվում է Ջիմանբյանց գյուղը (այժմ՝ Ջիման), որտեղից էլ գալիս, վերջնականապես հաստատվում է Փարր Վեդիում, ուր հնագրութեամբ զբաղվելուց, մինչև վերջերս էլ պրպտվել է շատ պատմութեամբ (Հատկապես Ամռանը)։ Ճամպրուժութեամբ սովորել է Մեծագործում հրից՝ Մեկերից։ Այժմ թոշակառու է, անպարագա, ունի երեք աղա, երկու աղջիկ։

Վեպը լսել է Հայրենի Պատանց գյուղում՝ Ամիկի Գրիգորից, որը եղել է վարպետ վիպասաց և Մարտիրոսին ճշակերանել իրրև շնորհալի։

Մ. Մուրադյանը «երիկրից» ի վեր վեպը գրեթե չի պատմել, ուստի, փորձենք դժվարութեամբ էր հիշում։ Լավ հիշած մէջտեղերը պատմում էր ոգևորութեամբ և մանրամասնորեն։ Իսկ այն մէջտեղերը, որ լավ չէր հիշում, խուսափում էր մանրամասներից։ Որքան պատմում էր, այնքան բացվում էր, բնկնում հունի մեջ ու ոգևորվում։

Նա լավ հերթականաց էր. պատմեց մի բանի աստ ու հերթով և հաճախակոս «Ետուստ Չալ» վեպը՝ ավելի ոգևորված ու վարժ, քան «Սասնա Ծռերը»։ Մարտիրոսը պատմեց նաև ասացվածքների և Դավիթ մասին մի քանի ավանդական պատմություններ, որոնք առդասված դրվում են պատումի վերջում, իրրև վիպին սերտորեն ազերվող հարակից դրույցներ։

Ա

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

Ցավիթ ան ժամանակ չկար.
Գնդիկ Թաքնվուրն էր։
Գնդիկ Թաքնվուրն մի լավ ախճիկ ուներ.
Էդ ախճըդան անուն կնայ մինչև Բաղդադ։
Բաղդադու խալիֆեն գնրբ էրավ,
Էդավ Գնդիկ Թաքնվուրի վրեն։
Ասաց.—Կա՛մ էն ախճիկ կուտա,
Կա՛մ բնի քաղաք ատղ կուտորիմ։
Իրենք օր ժամանակ ատից, ժողով էրավ.
— Ի՞նչ արինք, ախճիկ չեմ իտալ,
Պետք է կռվինք, քեն կուտորվիր ինք։
Ախճիկ գինք համաձայնավ, ասաց.
— Հայրի՛գ, չէ՛, էն օր տի քաղաք կուտորին...
Ոչինչ, ես կէրթամ։
Ընձի խիտ մե տեբտեր տի կամ՝ վարտնպետ,
Ես ըմ կրոն չմոռնամ։
Ասին՝ լավ։

Տարար տվին Տալիֆին, իև կատմ։
Էտու. Տալիֆին տվին, տուիլ տարավ։
Ասաց.—Քնռասուն օր ես սպի քնռասնիք պահիմ,
Առանձին տուն տիր։
Տալիֆեն ծասց.
— Քնռասուն օր ես չեմ տիմանա՝ թնդ չտենամ։
Ասաց.—Քնռասուն օր ժամանակ տիր,
Արանք կտրի սենյակին, էրի ճաղին,
Տոն էն կնդ կաց, ես էս կնդ կենամ,
Ընձր տեսի, տնըլցի կնամ։
Էդպեսով էլ հատաճալնամ։
Մրնչև քնռասուն օր լըմացավ, տխճիկ ծասց.
— *Ընձր տոնս խան, հնչա ժամանակ կա։*

2. Էլավ կնաց ծովու պերան, ման էգավ։
Ախճրկախիք կրանեն խիտ քնկերքեր,
Կէրթան ման կյա, ուր շունչ խանի,
Իր ուր շատ ժամանակ պռնված լըիր սենյակի մեջ։
Կէրթան ման կյալուն,
Կէրթա ծովու պերան լվացվի.
Մե հախպոնիր կրպացվի։
Ծես կտա էն հախպերի տեմ,
Մե կուց լիր խմի,
Էն մյուս կուցրն կիստա էկա՞վ։
Մնաց. էկավ ապրավ,
Էտավ հղացավ, էգ ճրով հղացավ։
Քնռասուն օր լմացավ, տխճիկ ծասց.
— *Ես քեզնից հրզացիր իմ.*
Տոն ուժեղ մարդ էր, կրգեր, էն կնդ կրկայներ՝
Ես քեզնից հրզացիր եմ։
Քանի օր ծանդրած իմ, էլ ընձի մոտ չըգաս։

3. Մնաց, Տալիֆեն ուր տեսավ՝ ոտ ծանդրր ի,
Մատաղ տեր կացավ, ծասց.
— *Ըմ տղան էլնի՝ տ'էնիմ մատաղ։*
Մնաց. ժամանակ լմացավ,

չափկ ազատավալ, էրդու տղա խպի.
Մևկ Սանասարն էր,
Մևկ Բաղդասարն էր։
Է՛, Սանասար ուժեղ էր,
Ըն կուց, ինչ լիբն էր, էն Սանասարն էր,
Էն կիսատըն՝ Բաղդասարն էր,
Բաղդասարին մը բիչ պակաս էր, ուժ պակաս էր։
Ապրան մե ժամանակ,
Ուզից զՍանասար պիբի մատղի։
Տբին կնեին, օր պտի էնին մատաղ,
Խալիֆեն իրիբ, ծասց.
— Կտպի՛ք, տրեք կնեին, վիղ կտրի՛ք,
Ես խոստացիր իմ մատաղ։
Էտի խալիֆին մե բրդից, կնաց ընդյալ,
Էլ վուչ մե մարդ չմատացա՛վ։
Էդպեսով բառնը շատ ուժեղ ըլան,
Էլ չկրցան վեր էն։

Ա. Մնացին. ժամանակըմ իրարու խնա ապրան,
Տեսավ չըլնի, խալիֆի խնա յուլա չէրթան,
Ըտի քողին, ուրինց մեր ասին, ապուս էյան։
Էկան մե կիսը խիա կէրթեն,
Էն կիսը խիա շատ կնացին, բիչ կնացին,
Վերջապես մե տեղ տեսան՝
Մե պարակ ճոր վերուց կըկյա,
Կըկյա կիտ կըկարի, մըտնչե կես կէրթա։
Ուր էն պարակ ճոր կըկարի,
Մըտնչե կես կէրթա՝ նուր կրխասվի։
Ասին.—Հալրաթ էս պարակ ճրի մեջ մե հնար կա,
Մըտը բն ճոր խիա էրթանը։
Ըն ճրու խիա կնացին, մըտնչե էյան Սասուն։
Էյան Սասուն, է՛, ուրինք կարիբ մարդ, խամ մարդ,
Ըսին.—Էտեղ հենց ամենալավ տեղն ի,
Վուր էն ճոր բն դենա կըկյա,
Էն ճոր ուժեղ ի, մենք տի էնանք,
Անդի ավազալա շինինը, նստինը։
Կնացին. հավաքին, պերին,

Է՛, Սանասար ուժեղ էր,
Էտ մեծ, հսկա քարիր կըպկերիր,
Բաղդասար կըշարեր։
Կնացին մարդեր պերին, իրենց համար շինին,
Մէ մեծ ամարաթ շինին։
Շինին պըծան, չեն կիտե՝ անուն ինչ տենին։
Կնացին, մե ծերունի մարդ ճամպխով էկավ, կէրթեր,
Կնացին հառաջ, առին, պերին.
— Հայրի՛ դ, կյաս մեր շենքը անուն տենիս։
Առին տարան։
Կնայ ընդա, տեսավ ի՛նչ, նայից՝
Քարիր չատ մեծ, հսկա քարիր են,
Ասաց.—Էս տասուն քարիր վե՞ր ի պիրի։
Ասին.—Պապի՛, հենց անուն որ մենա Սասուն։
Անուն անվանին Սասո՛ւն։

Տ. Էնտեն ինչ տարան, Բաղդասար չկայնավ,
Ասաց.—Պտի էրթամ Բաղդադ։
Սանասար ծնաց.—Ախպե՛ր.
Ընդե ըր խեր չի կյա, մ՛էրթա, բտեն մնանք։
Ինչխ էրավ, ըսաց.—Չէ՛, սի յամ։
Էն կնաց Բաղդադ։
Էլան ընդհանուր ժողովուրդ հավարին,
Ավար մրնք խոստացեր ենք մատաղ, էրթանք տար։
ՉԲաղդասար խաբին, տարան տարբեն.
Խմըրցին, կիրցուցին, վերջապես, ինչ արին...
Է՛, Սանասար տեսավ, որ Բաղդասար կնաց,
Անպահման տ՛կորցնին։
Էնտեղից Սանասար հօդուտիյան կնաց.
Մինչև կնաց՝ Բաղդասար չկա՛...
Տու մըսը՝ փուսըն փուրած ին,
Համըցած ին, տարած ին թալած ըն փուս վե,
Խեղ տված վերեն, ուր ըսպանին,
Ջրն կըրը ըսպանի, էտենց խեղ կտան վերեն։
Սանասար էրթալուն.—Բաղդասար հո՞ւր ի։
Դե՛, ասղ էլ կըլնի.—Տարած, խուրած։
Շատիր կոտորելով, շատիր փախան,

Մինչև Բաղդասար ըդիղ առնալ,
Քանդից էխան, ասաց.
— Էսոնդ օդուտ չի տալ քեզ։
Ի՞նչ էրալ, Բաղդասար չհամաձանվալ։
Ուր չհամաձանալ, ասաց.
— Տոն կիդիս ու խալիֆեն, չիս Բաղնիմ էրթամ։
Սանասար բնտեդից տասցալ, կնաց Սասուն,
Մնացին Սասուն, ապրա՜ն։

Բ

Մ Ե Ծ Մ Հ Ե Ր

6. *Սանասարից Մհեր էլավ։*
Էն ժամանակ Մհեր շատ ուժեղ մարդ էլավ։
Շատ ժամանակ ապրավ,
Բայց զավակ չունեցավ, պան չունեցավ։
Մարա Մելիքի կին Մհերին կանչեց Մալբր։
Էն ժամանակ Մհերի կին ասաց.
— Մ'էրթա, էն ալյազդ ի...
Ասաց.— Ա՛յ կին, խոզ էն մարթի կլխան ըլնի.
Ինչ կին կանչի, մարդ չէրթա,
Որ կանչիր՝ կէրթամ։
— Տը՛,— ասաց,— կնա՛։
Ուխտ էրավ կին, ասաց.—
— Մինչև քնատան տարի տոն էլ քա մոտ չկինա.
Էն ալյազդ ի, մի՛ կնա խասնվի խետ ինդր։
Մհեր երդում արավ, ասավ.
— Կէրթամ, պայց իմ ոտ ծիտ պանդուխդ չմ խանի։
Էդ էլավ կնաց։

7. *Կնաց. խափին, լըհալով պերին տակ,*
Կործ ունեցավ, մնաց մոտ շատ ժամանակ...
Մե տասցավ էկավ, մեկ էլ կնա՜ց,
Մնաց, մինչև տղան ըլավ։
Էնի երեխան ըլավ, էնի երեխեն ըլնելուն,
Մհեր կէրթեր որսի, հըրգյուն կրտասներ կիդյեր։

Մսրա Մելիքի կինը տղան կրկեր էր, կրխաղցներ, կասեր.
— Ելի՛, մեծացի, կնա՛ Սասուն, կռուվրի,
Ոտնբատակ էրա, տուրքը տակի էրա.
Ելի՛, պագմացի, կնա՛, հրմեն կռուվրի
Մհեր զինք լսավ.
Մհեր հաշան էր, լսավ, էկավ, ասաց.
— Ա՛յ կին, տու ի՞նչ գրենին կսովրացցիս
Ասաց.—Դե՛, պան չէ, քրանա ի, պան ի, կրսիմ։
Ասաց.—Չէ՛, հիմավև կնըրավա՝ տու պան կսովրացիս
էրենին։
Հա՛յ, հա՛յ,—ասաց.—Մսրա ճրագ կրվառիս,
Սասնուն կրնցուս, հանդիցցիս։
Տառնամ էրթամ։

8. *Էնտեղից էլավ, տատցավ կնացի*
Կնաց, կին չէքող տուն մտներ,
Կին չէքող տուն մտներ,
Կնաց վարդապետքերուն, տերտերքերուն խնարվավ,
Ասաց.—Արե՛ք, ճար էրեք,
Իմ կին չի քողնի՝ տուն մտնիմ։
էկան հավաքվան, իրարը խետ քրանա էնկով, խոսկով։
Մև ծաղրաբրնա ասրաներըմ կրլնի,
էդ կրլնի կայնի, կասի.
— Ջանը՛մ,—կասի,—օրևնք տրդ մինք ինք,
Օրևնք քիթվացող էլ մինք ինք։
Արե՛ք, էն քնոսուն տարին էնիք քնոսուն ամիս,
Քառասուն ամիս էնիք քնոսուն շաբաթ,
Քնոսուն շաբաթ էնիք քնոսուն օր,
Քառասուն օր էնիք քնոսուն ժամ,
Քնոսուն ժամին էլ էնիք քնոսուն րոպե,
էն հրդոյուն իրավունք կա, էրթա ուր սիրկա։
էն ժամանագ ասաց.—Մեկ ի,
Հերքվցիր ինք, հերքվմնակուսուր կրլնինք.
Ախշա ի, ժառանգ ա՛ունենանք,
Բայց վարովհետև ուխտ ընք էրի, մի ուխտ կնրանք։
Դե՛, էն ժամանակվա մարդիր խոսք տվեն,
Խոսքին տեր կրդառնանն։

9. *Մհեր մեկ օր շատ մտածից.*
— Է՛, հա՛յ, ես Սասուն ապրամ, Սասնա վերեն խուշ չէր քաոր,
Օց ուր պորտով, հավք ուր թիվով վրր Սասնա մեն չէր իկյա,
Պայց ժառանգ չունեցամ։
Էնտեղ շատ ժպրացավ, խնդրվավ, թև.
— Ես էլ ժառանգ ունանեի։
Տրան հայտնըվավ, ասին.
— Ժառանգ ու՞նեննաս, պայց խեր չես տեննա,
Վուրովհետև ժամանակ անցեր է,
Քեզ երեխա տ՛ըլնի.
Պայց էն երեխից խեր չես տեննա։
Ասաց.— Թող ըլնի, ես լսիմ,
Իմ ականջ լսի՝ պավական բ։
Մնաց. էգավ տուն, կնգան ասաց։
Կին ասաց.— Ը՛յ, ժամանակ բնցիր ի,
Նուր տղա կունեննա՞նք։
Ասաց.— Ոչինչ, մենք հյուսահատավիր ինք, պայց կըլրնի։
էն ժամանակ, ինչ երեխա ըլավ,
Մհեր բյացեր էր որսի, որսից էկավ,
Կնիկ ազատվիլուն, հինք էկավ մահացավ,
Կին էլ ազատվիլուց մահացավ։
Ասաց.— Ոչ մե մարդ չի կառող մեր էրեխեն պահի.
Կորոխե՛ք Մսրա Մելիքի մոտ,
Մսրա Մելիքի կին ուժեղ ը,
Կարող է իմ երեխան պախի,
Թե չէ՝ ոչ մե մարդ չըկերև պախի։
Տնվիք ինչ էլավ, երեխա էր.
Պայց ծեռ քաղեր ուրիշին,
Մտախր կմաներ ծծիրու մեջ։


Գ

Դ Ա վ Ի թ

10. *Կըմնաս Պահին, շախին։*
Տավիթ ուրմե քիչ հա՛, հառաչի էլավ.
Տևսան՝ չըն կըրի պախի,

Էլան կապին ծիու քամակ, մարդիք տրին առաջ,
Մեղր ու կարագ շատ ուվին.
— Տարե՛ք Մսրա Մելիքի մոր,
Էնու խուրթ մերն ի, էն քաղ պահի՝
Տարան՝ Մսրա Մելիքի մեր լավ պահից,
Շատ լավ կըպահեր, ուշատության կըտարցրներ,
Միան Մսրա Մելիք, ինչ ազան կըտեսներ,
Ինչպես մե օղ իրան կծի,
Էդպես իրա աչքը ատելիքն էր։
Կասեր.—Էսիկ օղու ծնիք ի,
Ախտ մեծանա՝ կրկծի։
Բա՛ղ վնասինք։
Ինչա էրամ՝ մեր շատ կըսիրեր։

11. Մնաց։ էն մեկ օր գինք տ՚էրթեր Հելուց խաղեր։
Տանվիին էլ հետըվեն կէրթեր,
Չէր քաղնի.— Ասա՛, քաղ չըկա՝
Մեր ասաց.— Բալա՛, ինչ կըլնի, էն էլ քըխ էրթա։
Տանվիի կնաց, Հելի մէջտեղ նստավ։
Մսրա Մելիք էնքան ուժեղացեր էր,
Ընդան ինչ Հել զաներ,
Հըմեն ուրինց անգջներ պամբակ կըզանեն,
Ուր էնու շըրըխկալուց էնքան ուժեղ ծեն կըլներ։
Հըմեն զարդին՝ Տանվիի պան չէրավ,
Ինչ Մսրա Մելիք կըզաներ, բաաց.
— էն Հեվմուն խանե՛ք, դյո անդեն ա։
Կնացին, ինչա էրեն, Տանվիի չէլավ,
Իշրան զոռին՝ Տանվիի չէլավ։
— Բաղե՛ք,—ասաց,—զանիմ, քաղ կլնի ցվրի։
Տանվիի ծեռ էտու, Հելի իրից պանից,
Դե՛, քալ կնանց։
— Վա՛յ,—ասաց,—ես Մսրա Մելիք բլնիմ,
Իմ Հելի առաջ մարդ դիմանա՞։
Էլավ լցվավ, փետ առից, բնկնավ քամակ։
Տանվիի փախավ։
Մերն էլ շալի մեջ կըզոզաներ,
Փախավ կնանց, էդիկ խաստավ, զլար խոի՝ անեզի լար,



Մարտրա ասր

Էթալ վզին, քաշից, որ խեղդեր։
Մեր ճամբ էթալ վրեն, վազից.
— *Արա՛, ի՞նչ ի կանիս, ուրիշի տղան ի,*
Ասո՛ քյում չի՝ կըսպանիս։
Էնտեղ ծեռքիրեն խլից, ձասց.
— *Թո՛ղ,—ձասց,—էսիկ օցու ծաք ի, կըկծի։*
Ըսօր մըչ հետուն չիս տեսա.
Ըմ հետ զարգած՝ ամբողջ ուրինց ականջքիր կըպանեն,
Էնի ծեռ էզար, հետ պանից, դե՛, քալ կնանց,
Ըսկի պան չիմացավ։
Ասաց.—Երեխա չի, դե՛, Բրանա չի էբի, պան չէնի։
— *Թե որ երեխա չի,—ձասց,—*
Պիրինք ոսկին լցինք մի տալիրք,
Կրակ լցինք մե տալիրք.
Թը ծեռ զարգից ոսկուն՝ երեխա չի,
Թը ծեռ զարգից կրակին՝ հա՛յ, երեխա չի։
Պերին մե տալիրք ոսկի լցին,
Մե՝ կրակ լցին։
Դե՛, կրակներ քրց ոսկին կրպապղա։
Էն ժամանակ Տեվիք ուզեցավ ծեռ Քալեր վուսկին,
Պայց նրա ծեռ տարան Քրե կրակ.
Ինչ ծեռ էտու կրակին՝ կրակ կպավ ծեռին,
Մեռ էտու լեզվին՝ լեզուն էլ վառվավ.
Էն ժամանակ լեզուն Քլոր էլավ,
Էն ժամանակ էլ կըսեն՝ Քլոր Տեվիք։

12. *Տեսավ՝ խոտ յոլա չի էրթա, տ՛վնասի բաան,*
Էլավ խրկից, կնաց։
Խրկից կնաց, ձասց.
— *Ուրինց էրեխեն Քրե պահին, բատա կըվնասին։*
Տարողքիրը կրխղճեն, կրխղճեն, կըսեն.
— *Հուրիշի ի, մինք ինչի՞ սիսի վնասինք։*
Տեվիք տարան ապրսպըրին ուր խրոխպեր։

13. *Պայց իրանք տուրքը տակ ին։*
Մարա Մելիք ձասց.—Մի տուրք կրտան,
Քրե էրթան, մի տուրք հավաքին։

Ինք կնայ, ասաց.
— Սասուն պտի ամփոխջ կան, իմ Քրի տակին ընցընին։
էն ժամանակ, ինչ կանչին՝ կյան, էնու Քրի տակին ընցընին,
Տավիթ փախավ։
էս կողմ փախավ, դեն փախավ,
Ինչ էրավ, Քրի տակեն չէր անցնի։
Շատ կապին, շատ պռնին չարչարին,
Ճղայնացավ, ծեռ էգար. ուր ծեռ էգար,
Ինչ ճկուք առից քարին,
Կրակ մոտեն կնայ։
— Հա՜,—ըսաց,—ես կիտի,
Ընի, յիփ ըլիր ի՝ օցու ծաք ի,
Տեսնի՞ք, չի ննջարկվի։

14. Տավիթ էրի հովիվ, էրի նախրուրթ, էրի կյառնապատ,
Ըմեն պահին փորցին՝ զատ տեղ չառավ։
Է՜, կյառներ կրտաներ, կարածեր,
Իշքան լապտրակ, աղվես, թեթև ճանավար կէր,
Կրխառներ, կրպերեր, կնշեր.—Ելե՜ք, ելե՜ք,
Վիր մեկն ի՝ էրկու իմ պիրի,
Վիր էրկու ի՝ չորս իմ պիրի, ելե՜ք։
— Ա՜յ, կրող քեզ տանի, Տավի՜թ,
Ընչի՞ էս ճանավարքիր պիրուս խառնիս մեր ուլիր,
Կրհավաքիս պիրիս. Ի՜ղ, Քրխ էրթան։
— Դե՜, ուր չեք ուզի՝
Խարամքիր կնացե՜ք, խալալքիր մնացե՜ք։
Մե տրեխ կըշինեն, կրխաբըցեն էնու ոտին,
Հիրգուն կիգեր՝ կրտրուտեր էր, պիպիկ,
Էնքան հիտըվ լրպըստրակներուն վազիր էր։
— Ա՜յ չանըմ,—կասեր,—էս ուլիր շատ օխնած են,
Էն բալարող ուլիր կրփախանեն.
Էնքան կինիմ քամակ,—կրսե,—տրեխքիր կտրտիր ի,
Ոտը կաշին էլ խիտ կնացիր ի։
Էլ չեմ էրթամ։

Մյուս օր խովիվ էրին,
Էլի կնայ ճանավարքիր իպի, խառնից։

Ասին.—Օգուտ չիտա, Քող ըլնի նախրուքի։
Նախիր տվին, էլի կնաց ընկավ սարիր, ծուրիր,
Էլ վերու ճանապարքիր իպի խառնից, իպի։
Ջուապ տարան խորոխպոր, ապա.
— Տավիք ճանապարքիր հավքիր է,
Պիրի լցի կեղի մեջ։
Մարդ խրգից, կնաց առաջ.
— Տավի՛ք, խարամքիր Քող տ՚իյան,
Խալալքիր պի՛, էտենց մի արա։
Նուրեն կրծողնի կյա, կասի.
— Ես կասիմ՝ որ մեկ ի, երկու իմ պիրի,
Որ երկու ի, չորս իմ պիրի,
Օր չեք զոհանա, չեք խավնի,
Թուլ տամ, քըխ էրթան։
Է՛, թուլ կտա, կէրթան։

15. *Կէրթա, նիտ-անեղ կառնի,*
Կէրթա Պառավու կորկը մեջ, ուր խամա որս կէնը։
Մե ժամանակ որս կէնի,
Կրկյան, ուր տուրբ-տալիք առնին,
Ուսկիր չափին, տանին։
Պառավ կէրթա, կրսե.
— Ա՛յ կրող քեզ տանի՛, Տավի՛ք, Թլոր Տավի՛ք,
Իմ կուրեգն էր, ըմեն բանդիր,
Իմ շյաղկամ լափիր,
Աբի՛ կնա, քու իոր վուսկիր կըշափին, կրտանին։
— Ա՛յ Պառավ, ի՞նչ ես ասում, ականջքիրս ծանր ի, չըմ լսի,
Մոտ էրի՛, հմա, ի՞նչ ես ասում։
Պառավ կրսե.—Կրող քեզ տանի՛,
Պոլ ի իմ շյաղկամ լափիս,
Իմ կուրիկ հրմեն վուտը տակ տաս,
Կնա՛, քու իոր վուսկիք կըշափին, կրտանին։
Նուրեն լավ կըլսի, կէրթա։

Կէրթա, դյո նատած ը, ընուր չափ տրած ը,
Վուսկիք կըշափին։
Ըսաց.—Իրրոխպե՛ր, ան՚ չըս կիտի չափի,
Նիզացիր իս, վե՛ր կաց, ես չափիմ։

Նստավ, զկոտ շրչից,
Էրկու խատ վուսկի էթալ վըր էնու ոտու վրեն,
Փետ էգար՝ ան էլ կենա՝
— Էս՝ մեկ։
Մեկ էլ կոռծից, մեկ էլ էգար.
— Էս՝ էրկու։
— Ի՞նչ ի, երեխա չիս, ի՛նչ իս, իկիր իս խաղ կէնիս.
Վե՛ր կաց, քրես չափին։
— Տո՛,—ըսաց,—վեր չեմ կենա,
Ես կըշափիմ, սոն էլ մի թողնի։
Մե խոսք նըսանից, մեկ՝ նըսանից,
Ջկոտ էգար մեկի կլիսու մեջ, կլոխ ճարտից, ձսաց.
— Ես վուսկի չեմ խատ, տուրք չեմ խատ,
Կնացե՛ք, ծեր տիրուչ ձանք, թող կեն, ինձ ըսպանի։
Կոսպատին, Ջարխատին՝ բառունք խոսք են տվի.
— Մինք կէրթանք Սասուն, ըմեն կողոպտինք, պիրինք։
Տնվիի ընտերնուց մե թյանխին կոտորից,
Էնունք հետ ճամպխից, կենցին։

16. Մհեր, Սասնա Մաորըա Ասլաբածին,
Որ առյուծ ի, ի՛նչ ի, տրիր ը առաջ, ընու պահակ որպես։
Կէրթան, ինչես կէնին՝ չթողնի նևրս մանին։
Կրսին.—Քու տեր ըսպանիր ինք,
Տո՛ ի՞նչ ի նստիր իս ըդա։
Հդան կըբյանդին, կրպռնին սարկավաքտիր, տերտերըիր կոտորին,
Հըմեն ինչ կէնին, կրտառնան կէրթան։
Տնվիի հըլը ըտրվնե խատպար չի։

17. Կրմնա։ ժամանակին Տնվիի, խրրոխպեր կէրթան կան կրկյանն։
Խրրոխպեր մե տեղ կըթնի, Տնվիի հեշար կրմնա։
Կրտիանի, էս վանքի տեղ լուս ի կաթի.
Ջինք կէրթա էն լուս կաթած տեղը,
Խրրոխպեր կըթողնի քնուկ, կէրթա։
Ջէնի չուրս պուլուր կընշանի ու կըթողնի կրկյա։



Խրոխպեր կըզարթնացի, կ՚ասի.
— Խրոխպե՛ր, ես մե պան տեսա,
Պայց էս տեղ լուս էր կաթի,
Էս տեղ նըշանիր իմ, էդտեղ ի՞նչ կէր։
— Ը՜յ, էնի թու խոր վանքն էր,
Մարա էկան, քալին վեր էն վանքին,
Ըմեն կոտորին, ըմեն ինչ արին։
Ասաց.—Էն վանք տի նորոգիմ։
Ասաց.—Մենք Մարա Մելիքի տուրք կտանք,
Էն չի թողնի նորոգինք, չի թողնի շինինք։
Ըդտից վա՛ղ կաց։
Ինչխ կէնի՝ վազ չի կյա։

18. Էտի՝ Զարխատին ու Ղուզպատին հերթըվեր են.
«Մենք կէրթանք, էսքան ախճիղ պիրինք,
Քանսուն կուս ախճիղ ալ պիրինք՝ գնվինք պատնան,
Քանսուն պիրինք, օր մաղ մաղին,
Քանսուն պիրինք, էսպես անին...»։
Հըմեն կանվանին։
Կէրթան, մե գաս էլ չեն պիրի,
Ջորքն էլ կըկոտորվի, կըկյանա։

19. Իտունք տարցան կնացին,
Ինչ էկիր ին տուրք-տալիք առնիլու։
Կըչիթ կնացին հախպուր,
Տեսան՝ Կուզբատին ու Զարխատին կըկյան լերան-լերան,
Հեռի լսողաց, կտուրըմ բյոր պունիր պերան։
— Պը՛ տյու էկար, մի մարթիր հո՞ւր ին։
Կասի.—Մեր մարթիր,—կասի,—
Տու հալա Սասունա ծոխր չեք տիսի,
Մեր մարթիր կըմնա, անձրև կյա, սելավ կյա,
Հեռի լսողաց, անունց ճուճ-պլոր կպիրի,
Մե խամար եղ ու չորթան։
Կէրթա, չէրթա Մարա Մելիքի մոտ։
Ջուար կըտան, Մարա Մելիք կորոխկի, կասի.
— Է՜յ, տու հայլա չես տիսի Սասնա ծոխր։—
Կասի.—Ընանեղ Տալվիթ էլիր ի,

Էլ չի թողնը Սասնա վերևվ խուշ թառի,
Մի վուսկի կոտը շրչից, էսպես արավ, էսպես արավ,
Կոտ մեր գնվըրքերու կլխուն խուռ,
Մինք անջախ փախիր ինք խապարի խամար,
Մի չրսպանից, ասաց՝ խապար տարեք ձեր տիրուչ։
— Ը՛ լավ,—ըսաց,—ը՛ ըսպասի։

Կըլնի ասբյար կէնի, կ՝ավաքին,
Ինչքա՜ն իր հրամանի տակ կա՝ կ՝ավաքին,
Լսիլով, կասին, Պաթմանա կիտը, տիսիր իմ,
Անու գոռք էկիր է վրը Պաթմանա ճըռնն,
Որ ծարավ ին, ըդ սաղ խմիլուն, էտ կնա կտրավ,
Իրիք կնա քան գնարաղն ի,
Էլ խովիվ-նախրնրդ չըկիցավ, մնացին ծարավ։

20. Կնանցին վրը Սասնա։
Սասնա ճուսպ ովին էնու խրրոխպոր,
Ճուսպ ովին Հնվանին։
Հնվան էլավ հնվաքից էտ աղ ու հաց, կնանց տիմավըրելու։
Ասաց.—Իկիր իմ, պտի Սասուն քանդիմ։
Աղաչիլով, խնդրիլով, ինչ էնին՝ չեն ննթարկվի՜։
Էտ էլ էկիր էր Սասուն, ուր քննդեր։
Ուրինք ամե՜ն ինչ հնվաքին, լցըն անիր,
Ուր տան Մսրա Մելիքին։
Էն Պառավ էլի կնանց.
Էն Պառավ Մհերի սիրածն էր,
Էտ ժամանակ Հայոնից Տնվիքին, ասաց.
— Տնվի՛ք, էկած ին, Սասուն պտի քանդին,
Քնռսուն կոլոտ սխեմիզ հավաքած,
Քառսուն բոյով, քառսուն էդպես...
Հըմեն հավաքած, լցած անիր,
Պտի Սասուն հըմեն կոտորին, քալնին տանին։
— Ի՞նչ ես ասում, նանի՛, ի՞նչ ես ասում։
Նանին կէրթա, կրխասկացըցի։
Կըլնի մե շամփուր կառնի, ուր էրթա կռվի։
— Է՛յ, կրնդ քեզ տանի, Թլիր Տնվի՛ք,
Ըտով կէրթաս կռվի՜...
— Բա ի՞նչ անիմ, նանի՛։

Կասի.—Կնա՛, Քուռիդ Ջալալին պահանջի,
Ըմեն Հեվանի մոտն ի.
Թուր կեծակին պահանջի,
Կուտին կլխին պահանջի,
Քյամար Մեջքին պահանջի,
Էդպես մանրամաս պահանջի,
Մոտեն ա՛ռ, ընով կնա՛ կռիվ։
Տու պռներ իս շամփուրդ կառնիս,
Կէրթաս Մարա Մելիքի կռի՞վ...

21. Էս էկավ կնաց մոտ Հեվան.—Խըրոխպե՛ր։
Ասաց.—Ի՞նչ ի էղի։

— Ա՛յ խուտ-խըրոխպիր, խնտրում իմ.
Կըտաս Քուռիդ Ջալալին,
Կըտաս Քյամարն ի Մեջքին,
Կըտաս Կյուտին ի Կլխին,
Կըտաս Թուրն ի Կեծակին,—հըմեն ուզից,—
Կըտա՞ս խաթրով, թե չէ՝ կառնիմ զոռով։

«Խաթրով կըտաս, թե չէ զոռով կառնիմ՝»
Էնտեղ խըղճացա՛վ, էլավ ամեն էլ ետու,
Դառցավ խաղով ծասաց, ըսեց.

— Ափսո՛ւս, հազար ափսուս Քուռիդ Ջալալին,
Կնաց Սասնա,
Ափսո՛ւս, հազար ափսուս Կյուտին ի Կլխին,
Կնաց Սասունին,
Ափսո՛ւս, հազար ափսուս Թուրն ի Կեծակին...*

Ամեն ինչ հըտա ծննով ծասաց,
Տանվիթ պատրաստվավ, ծասաց.
— Ափսո՛ւս, հազար ափսո՛ւս, կնաց Սասունա երիտասարտ Տանվիթ։
Ասաց.—Վո՛ւյս, խըրոխպե՛ր, ընդայնացեր ի, Թուր պատրաստեր ի,
Պայց ուր տու էտ մեկն ասիր, ըմեն տվի էն մեկը խաթեր։
Ետև հըմեն ափսուսաց, Տանվիթ պատրաստվավ,

* երդ էր

Զանգ զարկին, ուր Տավիթ պատի կռիվու էրթար
Ընթանուր կանչից.
— *Ախճըկաե՛ք, կնկտե՛յ, մերե՛ր, քուրե՛ր,*
Մնացիք պատրե, ես կէրթամ.
Ընձը խալալ էրնք, ընձը պատրե կամըցնք
Ըմեննանց կու պարեվե, խաթըր կուզե, ուր էրթա կռվե։

— *Ա՛յ քուրիկներ, մնացե՛ք պարով, յիս խալալ էրնք,*
Կենացիմ կռվու.
Ա՛յ խըրոխպեր, ա՛յ խուտ-խըրոխպեր, մնացե՛ր պարով,
Ես ա՛էրթամ լալով։

Ըտեղ ամպողչին կըխնտրվի, ամպողչին կաց-պարի կէնի,
Ուր պատի էրթա։
Էն ժամանակ կըպիրին զանգ կըզանին.
Ուր զանգ կըզանին, էնու պասըր մեր տըռ ասղ ի,
Տրած պամպակու մեջ՝ կատրացըցին.
Էտի զանգի ծեն օր լսավ, կլեխ տարավ ակըշկի ահմ.
Տավիթ Քուռիգ Զալալին խեծեր էր,
Պատրաստեր էր ամեն ինչ, պատի անցներ ակըշկի ահմեն։
Էտի կանչից վերեն,
Կանչից ծիու վերեն, ծին կայնավ։
Ասաց.—Կէրթաս, Տավիթ կըտանիս,
Կաթնեկի հաղպըրին կայնացըցիս,
Ընտեղ կիչըցիս, քոնն կառնի, պրծնիլուն,
Վըր Պողպրան սյան կրփուրցիս,
Եթե կրկարե՝ կըտանիս,
Եթե չի կարե՝ ետ կըտաբցնիս։
Էնտեղ պատրե կամեցավ, հաշդութիյուն կամեցավ։
Տավիթ ուր լսավ ասու ծեն.
— *Էտ ո՞վ էր,—խաբրցնիվով նուր խմացավ։*

22. *Սին քշից, կենց։*
Կէրթա պանդրանա Սասնա Պանցր Ատավարածնի մոտ,
Էնտեղ, ինչ էդ Պառավ ասաց,
Քուռիգ Զալալին էդտեղ կայնա՞վ։
Իճավ, իճավ՝ պամպակ լցիր կլխիկու մեջ

* Ըրգ է։

Էլ կլուխ չէր ուծարի.
Քյամար էրկու-իրեք փաթ իպեր մեջքի վրեն,
Չէր կուճկըվի.
Ոտիր պամպակ լցիր էր,
Սապոգներր ում չէր ուծարի, ըսկու լեն էր,
Ամեն ինչ ըսկու իր վրա չէր։
Մենակ էն կյախ, ինչ Քուռիդ Ջալալին իպի, որ Թամբիր,
Մեռ էթալ ինու խայիշ, որ կրնր,
Քուռիդ Ջալալու ոտիր կեռնեն կորից։
Անդան Հնդան ասաց. «Չէ՛, պան կա Տավրի մեջ»,
Որպես զծին ոտիր կեռնեն կորից, նուր կրից։
Էնտեղ կըբյնի, վըր կաթնի հաղպըրին,
Կըբյնի, էդ ճնար կրխմի, կըբյնի։
Շատ կըբյնի, ինչ կակախի՝ ի՛նչ.
Սապոգ ոտրիրեն կնացիր ի,
Կլունխ-կուտին կլեեն կնացիր ի,
Քյամար գյախ է, մեջր կորի,
Կարցկի, ինչ կհնի, անջախ կրկիյա իրար։
Էտենց կուժեղանա ամեն ինչով,
Կրնի, ծին կրպոնի, կրնատի, կհրթա։
Անդան, ինչ կրկայնի, ետր կրզանի,
Պողպրան սուն կրկորի,
Կալամ վրր կալամեն կրկայնի,
Ուր ծեորին կանրծի, կասի.
— Ա՛յ կուտուր կհներ, ծեորի՛ր,
Չրկորիդ գՊողպրան ալան։
Խարաֆ բյամին կրգնրկի,
Պողպրան սուն կրշրուշի,
Նուրեն կօխնի, կասի.
— Կանաչ կհներ քեերր,
Ուր Պողպրան սուն կորից*։

23. Կրնի, կհրթա կրնի Մարութա Պանցր Աստվարածին,
Կրշկի, ի՛նչ կիշկի...
— Հե՛յ, տեր աստվա՛ծ,—կասի,—
Ես ըլնեմ անձրև, էտենք ըլին կրակ,
Չըմ խանդյացցն,

* Երգ է։

Էսոնք ըլնին պայմպակ. ես ըլնիմ կրակ,
Հրմեն չեմ վառվի,
Է՛, ի՞նչ ա՛նիմ ես ըսոնց խնու
Շա՜տ վըրը ուր կըզարմանաս
Ի՞նչ անի, իկիր ի.
Էնքա՜ն չադրը զարկած՝ էլ տեղ ու դադար չկա
Էդ Քուրդ Ջալալին, ինչ կար-չկար, սաղից, կրից
Ու Թուր Կեծակին առից, բշից մեջ.
Էս կլխեն կըբլըշի, էլ չի տառնա,
Մինչև էն կլխեն նո կըտառնա։

24. Խելոք մարդիկ կան մեջ, կասին.
— Է՛յ, Տանվի՛ք, կուռդ կանա՜չ մնա,
Կայնի՛, մե պարի խրատ տանք։
Հե՛յ,—կասի,—Տանվիք փոշա, Տանվիք փոշա...
Կասի.—Ի՞նչ փոշտուքին իմ էրի, չես էրեզվա տղան իմ,
Յըս նա՛ լավ կիմանամ, նա՛ վատ։
Ասավ.—Կուռդ կանա՜չ կննա,
Կայնի՛, քեզ մե լավ խրատ տանք.
Էսոնք էկած ի կռիվ՝
Տասըն մարն մեկ ին,
Տասըն նուր պատկված ին,
Սիրածը մոտ չըկնացած ին,
Ոմանք, ի՛, չեմ կիտի, դնուրեն ի զորով ի պերած.
Էսու տերըն, է՛, շադրվի տակ,
Խենդ խատ ախճիդ էնու չուրս պուլուր ճանճիր կըբշին,
Էն մուծականիր չրիծի։
Նը կոլորշին, ինչ կըլնի, նրա պերնեն ի։
Էս ժողովուրդ ընչի՞ կոտորիս,
Մեխկ ին, խնդճ, կնա՛ բյու ինամու դյեխ։
Կրցար էնու կոտորե՛լ,
Չխո մինք հրմեն ենթակա ինք,
Թե չկրցա՜ր, էլ մինք ի՞նչ ինք էրի,
Տու էս խնդճ ժողովրդին կրկոտորիս։
Էս օր կըլանի, էլ չի կոտորի։

25. Կէրթա, Մսրա Մելիքի չադրի հիռչիվ կայնի։
Մսրա Մելիք իրիք օր քնիր ի.

Հըլա չուրս էլ ուի քնած մնա։
Ասաց.—Խանե՛ք վեր։
— Հա՛յ, քու առուն չավրի՛,—ասաց,—
Ո՞նց խանինք վեր, քնիր ի, չըլնի։
Ասաց.—Իկիր իմ, պրծի քնացցիմ մինչև հավիտյան,
էլ վեր չըկենա, շո՛տ խանեք վեր։
Ասին.—Մինք ընչո՞վ խանինք վեր, չենք կըրի։
— Ընչով կուզ կըլնի, բառով խանե՛ք։
Ասին.—Կյուվենի խոփ թալին կրակ,
Կարմըրա, սիրին տրին ուաց տակ,
Էն ժամանակ զարթըննի,
Թե չէ՝ քնի ծեռով, ծենով չի զարթըննի։
— Դը՛,—ասաց,—արե՛ք, ի՛նչ պետք է, արե՛ք,
Զարթնացըցնք, ես քնած տեղ չեմ ըսպանի։
Տատրավ, մինչև բառս խոփ կարմըրցին,
Տվին ոտքերու տակ։
— է՛յ,—ասաց,—չերփի՛ր, փուշտի՛ր,—ասաց,—
Մուծակներիր կըկծին, ինչի՞ չենք քշի։
Կանչից Տավիթ, ասաց.
— Վե՛ր կաց, վե՛ր կաց,—ասաց,—մուծակ չի քեզ կծի,
վե՛ր կաց, կավինք,
Իկիր իմ քեզ քնացցիմ մինչև հավիտյան։
Էտիկ էլավ նստավ, էտպես նայից.
Տավիթ ծիու վրեն, ինչպես մխրճած ի,
Շունչ ետ բյուշից, մե պինտըմ փչից.
Անդան ուր փչից,
Տավիթ ծիու վրեն իրար չըկտավ։
Անդան, կասին, յոթ կյամշու ուժ մոտեն պակասավ,
Ինչի, ուր էնի քամու ինչից չըթռավ։
— Հա՛, հա՛, հա՛, հա՛—ասաց,—Տավի՛թ, հոգնած ես,
Արի՛, արի՛ իչի, նստինք,
Ուտինք, խմինք, նուր հետո կավինք։
Ասաց.—Չէ՛, ուռի, մուխանաթ մարդ ես,
Ելի՛, կավինք։
— Հոգնած ես,—ասաց,—արի՛ նստինք։
Տավիթ կիչնի, կուզի, ուր ոտ զանգուց խանի,
Ուին զանգի չի տա։
Մեկ կրտոթուրկի, էչրթա ֆոտա, կըկյա, ուր իչնի,

Սին զննկյու չի թողնի, ուրան ոտ հանի։
Մե քիշըմ կընեղանա,
Սիուն էլ կղմրդի, կիշնի, կէրթա։
Էն էլ կիմանա՝ մե խալիչա փռած ի,
Քնոստն կյազանոց խուր փուրած ի,
Շղթանէր մեջն ի, հըմէնն դրած ի,
«Ուր կյա՝ խափինք, պիրինք նէրքև, սա նըստացցինք,
Թըզ ինի խուր վև, ինի շղթանէրի մեջ,
Էն կնա՞ց մինչ Հավիտյան»։
Կրտանին, կըհրամայինն.
— Աբի՛, էսան նստի, աբի՛, մե էտեն նստի,
Խոտանք, ուտենք, խմինք, հետո կովինք։
Էտ էլ կէրթա, ուր մեջտեղ նստի,
Էտու չուրս կնդմ նո կրթաշվին,
Կէրթա, կըշնի խուրը տակ։
— Հե՛յ,—ացաց,—կնա՞ց մընչև Հավիտյան,
Նա՞ էր, էկեր էր մեզ ըսպաննե։

26. *Կրմնա։ Խրոխպեր կիշիր էրաղ կրտենա։*
Էտ կրմնա խուր վև,
Քստիզ Ջալալին կրփախի, կէ՛րթա կրշնի սարիր,
Ըլ չեն կրրի պռենն։
Խրոխպեր կիշիր էրաղ կրտենա.
Կրշնի վև, կասի.
— Ա՛յ կին, վի՛ր կաց, վի՛ր կաց, Տնվիթ Նեղ տեղ ընկի,
Յրս էրազով տեսամ.
Մանանա աստրղ խավար էր,
Մարին՝ լոյս էր,
Կրթողներ խոեվ ըն Սանանա աստղին։
— է՛, հըրգուն խաչ չես խաներր, աղոթ չես էրեր,
Էկեր ես, քներ ես։
Տնվիթ մկա ախճըդուրու խիտ քեֆ կէնի,
Տնե բատեղ ընկեր ես Տնվիթ դնդր։
Աբի՛, աղոթ էրա, քնի՛, պան չկա։
Էլավ աղոթ էրավ, կլնես էտու պարցին, բշնավ.
Մեկ էլ էրաղ էկավ, էլի վեր կացավ.
*— Ա՛յ կնիկ, ելի՛, ճրաղ կպու,—ացաց,—



Էմ շուրթր պիր՛, Տանվիթ նեղ տեղ ի։
Ես տեսա՝ Մարտ ասաղ պուծատ էր,
Սասնցին՝ խավար էր.
Տանվիթ նեղ տեղ ի։
— Հե՛յ,—ըսաց,—տնամի՛ր,
Քյուն քե խամար կրքնես,
Էրազ խալխի խամար կրտեսնաս։
Արի՛, աղոթ էրա, Հանդիստ քնի։
Էլի խափից, էլի մարդին քնացցուց։
Էլի քնավ, էլի տեսավ էրազ։
Ուր էլի տեսավ, կնդյան չըլսավ,
Վեր կացավ, մե քանասուն կաշի էտի ճյուր,
Կակղանա, հինք բյանշի վըր ուր,
Կնանց, ծեռ էտու վըր Սըվտակ ծիու բյամկին,
Ասաց.—Ե՞ր կըխասցես Տանվիթ կռվուն։
Մեռ էգար վըր բյամկին՝ փուր էտու կեսկին։
Կնանց Կաղմիր ծիուն, ծեռ էղար բյամկին,
Ասաց.—Ե՞ր կըխասցուս Տանվիթ կռվուն։
Ասաց՝ չգիտեմ, բյանի ժամով։
— Հը՛,—ասաց,—տվածս քե խաբա՛մ ըլնի,
Էսքան կիրցցիմ, չէլավ։
Կնանց Սիվ ծիուն, ծեռ էղար բյամկին,
Մին բյամակ պանցրացցուց.
Ասաց.—Ե՞ր խասուս Տանվիթ կռվուն։
Ասաց.—Եր ու տրիս ըսպանտակին, մյուս ու շոչխլուն,
Քեզ կըխասում Տանվիթ կռվին։
Ընտեղ կօտշնի ծիուն, կըբյաշի թամբի, պատրաստի,
Կաշիք կը պիրի, կըխաքնի, կընատի, կէրթա։
Կէրթա կըլնի Սասնա սար,
Իշքա՞ն ուր ուժ կա, ընդհից կըրդավի, կանչի.
— Հե՛յ, Տանվի՛թ, քեզ ժամ տո՛ւ։
Տանվիթ կըլսնի դրմդրմբուն, կասի.
— Մե ծեն առից ականջիս, չըլնի՞ խորոխպերն է։
Մեկ էլ լավ ականջ էրավ, մեկ էլ կանչից.
— Հե՛յ, Տանվի՛թ, քեզ ժամ տո՛ւ։
Էն կիտանա, քե ուր Տանվիթ տաղած, բսու տեղ մտուցած։
Տանվիթ լավ կըլսի։
Մյուս կանչիլուն, մեկ էլ ուր կանչից,

Տնվիթ լավ կըլսի, ծևռըվնեք թափ կտա,
Ուր թափ կտա, շղթանիր ըմեն կրկտրվի,
Կըլնի տուս՝ Քուռիդ Ջալալին չկա՜...
Կէրթա, Քուռիդ Ջալալին էլ ծեռ չի տա,
Էս կող, էն կող կրտխախ, ինչ ի՝ ընչի՞ իշար։
Կէրթա կրպռնի, կրպիրի, կրխեծնի։

27. Կէրթա էլի կայնի տռան.
Էլի բնած ի, էլի կրզարթնացցին,
Կասի.—Վե՛ր կաց, կավռնք։
— Հե՛յ, Տնվի՛թ, հուքնած ես,
Արի՛, արի՛ նատի, արի՛ նատի, գյալաչա անինք։
— Է՛,—ասավ,—սուքատան ես, չեմ իշնի,
Վե՛ր կաց, կովինք։
— Դե՛,—ասաց,—կովինք՝ կովինք, ժամանակ տո՛։
Կըլնի կրպատրաստվի, կասի.
— Տնվի՛թ, ես քեզնից կրվախանամ, հա՛,
Առաջ դաշրը ես կրգանիմ։
Կասի.—Վնաս չունի, գա՛րդ։
Էտի կէրթա, կրկայնի մեյդնի մեջ,
Մտա Մելիք ծին կրնատի, կրբշի ու կէրթա։
Մին բշի կէրթա, շատ կէրթա, էն կողեն կրկյա,
Ըշքան ուժ ունի, կրգաբդի։
Ըն գաբդիւռն՝ Տնվիթ գծին կրխաղցրցի, կրփոթորկի,
Կէրթա հուրիշ տեղ։
— Է՛յ,—կասի,—բշկի՛, էլավ մե փուշի, կնաց։
Տնվիթ տարցավ էկավ, ասաց.
— Դաբդ ունես, գա՛ր,—ասաց,—կենթանի իմ։
Մյուսին՝ ասաց.—Մոտաս տեղաց էկա,
Էս անգամ տ՛էրթամ մինչև Հալաբ։
Կրբյշի կէրթա մրնչև Հալաբ, կրկյա, էլի կրգաբդի։
Էն կիտից, թե Տնվիթ էլավ մե փուշի, կնաց։
Տնվիթ էլի կանչի, կասի.
— Կենթանի իմ, կա՝ մեկ էլ գա՛ր։
Ըդի կէրթա, էլի կէրթա, շատ հեռու կէրթա,
Կրկյա, կասի.—Մոտիկ տեղաց էկամ։
Էլ հավըլի հեռու կէրթա, կրկյա, կրգաբդի.

Տնվիք.—Կենքանի իմ։
— Էս անգամ քու նորաքն ի.—
Կասի,—Տնվիք, ես կըվախանամ,
Ես բնասուն կյազանոց խուրի մեջ իչնիմ,
Յոթ կաշի թալիմ ընձը վրեն,
Ճաղցըքար քյնշիմ վրեն, ես տակ մնամ,
Էն ժամանակ տեր զնըգիս,
Ես շատ կըվախանամ։
Կասի.—Ինչ կանիս, էրա՛։
Ըդ կէրթա, կըմտնա էտա խուր վե,
Տնվիք ծեն կըփոթորկե, ուր պտի զնըգի,
Մեր կանչի.—Տնվի՛ք, մեռնի՛մ քեզի, կուդ կանա՛չ կենա,
Քեզ շատ ըմ ծիծ տվի, էդ տու ըմ ծըծը խաքըր։
Կասի.—Էս մեկ՝ քու ծըծը խաքըր։
Մեկ էլ կըփոթորկի կէրթա, կըֆռա,
Կրկյա, ուր պտի զնըգի, քիր կըկյա տեմ,
Կասի.—Տնվի՛ք, քիզ շատ իմ շըլկի, ման ըմ տվի,
Էս մեկն էլ իմ խաքըր տո՛։
Կասի.—Վնաս չկա, էս էլ քու խաքըր։
Պայց մյուսին մարդ չըկյա տեմ։
Կէրթա մեկ էլ փոթորկի, կրկյա, ուր տ՝զնի,
Քեռին կըկանչի.—Տնվի՛ք, կանգ ա՛ռ։
Տնվիք կայնեց։
Կասի.—Ըշկի՛, կշեռք կըտնիմ, տ՝կշռիմ,
Եթե ոյուզ չըխփիս, էն ժամանակ տեր կիտիս։
Կէրթա, մեկ էլ փոթորկի, կըկյա,
Էտ ուր կըզնի՝ էտ ճաղցըքարիրն էլ կտրի,
Կաշիքն էլ կտրի, ամբողջ կտրի,
Էտ Մելիք էդպես կրկտրի։
Կասի.—Տնվի՛ք, դներր կա՝ զնի՛ր։
Կասի.—Քե ժաժ տո՛։
Օր կասի՝ քե ժաժ տու, Մելիք զինք հնարներ կըտա,
Կըլնի էրկու տատակ։
Կըխանկին, Քեռի Թորոս կըպիրի, կշեռք կըտանին։
Ըն ժամանակ, ինչ կշեռք կըտնին, կըկշռին.
Մե կրաղ ծանդր կըլնի.
Ասաց.—Տնվի՛ք, ճիշտ չես խփի,
Էս մե կող ծանդր ի վրը մյուսին։

Տավիթ զարմացա՜վ, ասավ.—Ճիշտ եմ խոխո՞
Կնացին քնքնին իրան, քնքնին՝
Մե խատ ծյու ուներ, էն մե ծյու ուներ,
էտ ծյուն կիսին, թալին վերեն՝ ճիշտ էկավ։
— Ա՛յ կուդ կանա՜չ կենա, ճիշտ ես խոխոր,
էն մե ծյուն էր պատճառ։
Նայե՛, ինչքան մեծ ըլիր։
Ըտենց ասքյարն էլ փոդմիշ ըլավ։
Դեր ընթանուր Սասուն կնացին Տավրթին ախմավրթիս։
— Կուդ կանա՜չ կենա, Տավի՛թ, բարի ժառա՜նգ ըլնիս,
Մե ազատիր տուրըր տակին, էսպես պանևրին։
Դեր ընթանուր ախճըդտիր, կնկտիր, մարդիր,
Կրկյան ախմավրթիս Տավթին,
Վերցին տանին, նուր կրհարբին, պատվին։

28. Տավիթ մե ժամանակ էդպես ապրելով, ասաց.
— Տի՛ ամուսնանամ, էդպես մնալով՝ ժառանգ չիմ ունենա։
Խորըննելով, շատ խորըննելով, ասին.
— Վա՛ՀՀա, էրթաս Կապուտկող, մե ախճիդ կա,
Քնռսուն խատ փալըվան մկա դյո էնու մուշքարի ին,
Թե էրթաս, էն պիրիս, քե չէ՝ էնու պես կին չկա աշխարհ,
Դեղձան Ծամ։
Տավիթ կըպատրաստվի էրթա՜...
Տյու մի ասա, ճամբեն մե հաբրիշ ախճիդ,
Կըտիմըվըր Տավթին, քե՝ ես իմ։
Է՛, Տավիթ կըխատվի, կիշիր ընու մոտ կրմնա.
Առավոտ կիմանա, օր էն չի՜...
— Ձես իկիր իմ կիյամ Կապուտկող։
Էտ ախճիդ մնաց, Տավիթ կնա՜ց։
Ասաց.—Ուխտ էրա՛,
Էն կողմից էս տեղով կյամ,—էտ ախճիդ ասաց։
Տավիթ էնու խոսք էտու, որ էն տեղով կեր։
Կնաց։

29. Կնաց Կապուտկող, հասավ տեսավ, որ չէ՛,
Ըլ ըդ ճամպով չկըր կյա։

Ըդ քնառաուն խաա փալըվան դյո ընդի ին,
էնուց կըկիրցցի, խմցցի, կըպահի։
Տնվիթ իշավ, տարան կապին, ծիապահներ եմ տվին,
էկին, ախճգան խապար պերին, ասին.
— Սինը զծիաստարու եմ հրմին խլից,
Էտու ծին մյուսքիրու ծիաստարու եմիր հրմին խլից, կերավ։
Մնաց Տնվիթ։
Ախճիգ վերևվին մեկ անցք Թողեր էր,
Էնդեն, մընչ էնի կրնատեն ճաշի, կրնալու։
Տնվիթ կնաց, էնունց մեչ նստավ.
Հրմին էլ ուրինց սրեր չըլտին, մտըցուն սեղնու տակ վե,
Ուր ըն կալող կյողամիտ բապանին։
Տնվիթ կնանց նստավ, ընունց կինը* խրկին։
Մե մեծ խազան կինը լցին, խրկին կնաց,
Հաց տարան, սեղան տրին, ուր հրմինով ճաշակվին։
Տնվիթ կնանց, ծեռ էտու,
Էտեն խազան վըրցուց, էտուր կլխաև,
Թա՞միզ էն կինըն խմավ, աման էվալ դնեն։
Դե՛, խմող մարդ, ուր փշու մը ավել կբամի,
Էն քնեն կբտանի, կուշ կբտանի։
Ախճիգ վերևվին նայից՝ Տնվիթ կբտանվի։
Էն ժամանակ, Տնվիթ կբտանվի,
Նրանք սուրիր կբքնշին, ուր զնին։
Ախճիգ պոպոքտիր պիրի, տրի ուր կոխքին,
Ըմեն տանվիլուն՝ մե պոպոք կըզնի Տնվիթ կլխաև։
Տնվիթ կըզարթընի, էտունը Քրիր կըպախին։
Էդպեսով, շատ կըսկուշացցի,
Տեսան, չէ՞, չըն կերի էտուր վնասի։
Տնվիթ կըզարթընի, կիմանա, էտուց Քրիր կբտա,
Կըպռնի կրհավաքի, կբտա իրար,
Կրծա՞լի, քալի դեն, օր՝ չեյա՞վ։
Մնաց. ախճիգ տեսավ, ուր ամեկա կրհավաթի, խոսք տվավ։
Էտ էլ էն քնառաուն փահլեվանին խոսք էտու, ասաց.
— Ես քո նպաստակին խոսանելուց, եա տ'կյամ,
Ծեզի հրմին կարքիմ։
Նրանք էլ էտու ճամպխու, գինք գկին տախը.

* կինը—գինի։

էն ճամպռով չըկնաց, ուրիշ ճամպռով իրե։

30. Կնաց, մե վանք կոնախ էլավ։
Դե՛, ուր չուզողբիր, էնու ինշամիք,
Ըն վանքի տիրուչ տղան պռնիր են, ասին.
— Ըշկի՛, եթե տու՝ Թողնիս էն ալամաթ ընցնի,
Մե* չայտնիա՝ մենք քու տղան տ՝ապանինք։
Դոր էտի զՏնվիթ կոնախ էրավ,
Կնաց, նրանց խապար էտու, նասց, թը՝ նսօր իկիր իմ կոնախ։
Ըտունր զորք առին, կնացին վերևն։
Կնացին վերևն, էթան կուվին, զար ըսպանին։
Տնվիթ ակըխավ, տեսավ՝ ի՛նչ.
Չուրս պուլուր չատրրբիր զնված ի,
Չուրք պաշարիր վանքի՛ն։
Կնացած ի, էնու խորոխպոր Ցռան Վերգոչին մե տղա կա, անուն Աստղիկ.
էնու տղան օթը մեջ կրկուվի, կեռին չի կուվի,
Պերած ի, վարձկած պերած ի,
Ուր Տնվթի խետ կուվի, ըսպանի։
էն ժամանակ Տնվթիթ հելավ տեսավ.
Չուրս կողմ պաշարած ի,
էտ ընկավ մեջ կոտորիլով՝ էլ չի խլսընի։
էն Ցռան Վերգոչի տղան պռնից Տնվթի յախան.
Տնվթիթ ինչքան կրզնների՝ օթը մեչն էր,
էտի կըզնի՝ Տնվթիթ շատ նեղ ի։
Ճար կտրավ վերևն, ընկավ վըր բյամկուն,
Տնվթիթ ընկավ բյամկու վերևն,
Մե նետ-անեղ ներքուց էզներ.
Նետ-անեղ ինչ էզներ, իտու ծիու փորու տակ,
Խորոխպոր տղան վերից իսը տակ։
էն ժամանակ, ինչ ղէն վերուց իսը տակ,
Կոխվ բնթըլավ։

31. Մինչև էտ ժամանակ էնումց քրևրու պռցնեն լոս էլի,
Թուր Կեծակին ինչ կպանցըրցներ՝ լոս էր,

* Մե—մեզ։

Ախճիկ կընայիր։
Էդ ժամանակ, ինչ գվերդո տղան ըսպանից,
Էլ կոխվ դադրավ, էլ կոխվ չէլավ։
Ախճիկ ասաց.—Չէ՛, Տանվիթ ըսպանվավ։
Էլավ կնանց։ Էլավ կնանց. կինի ջանդաքներու մեջ,
Ջանդաքներր գըսա կըթալի, գընա կըթալի,
Տանվիթ էն կողմեն կըկյա առաջ.
— Ի՞նչ է փնտռիս։
Կասի.—Իմ սիրած կըփնտռիմ։
— է՛, սիրած ըսպանիր, կնացիր իմ։
Էն ժամանակ ախճիկ կէրթա, Տանվիթ խետ կուվի։
Խետ կուվին, կըմրցվին, գՏանվիթ նեղը կիցկի։
Հա՛յ-հա՛յ։ Կրխաբցնի, է՛, Տանվիթ գինքն ի խետ կուվի։
Ըտեղեն կըսատանան կըկյան, կէրթան վանք, կասին.
— Մընչև հիմա էդ վանքա անուն Փշավանք էր,
Մկա անուն տնին՝ Մատնավանք։
Մեռ կուա կերան, կըվըրցի,
Գրն վանքի պետը կընիխ կընցուցի,
Կերան կրտնի վերան, կասի.
— Բատն կա՛ց նշանակ,
Ուր էլ ուրիշի կընիս էդպես օչին չըխաղաս։
Էլ ասնու խամար չըկարցան էն ճամպռով էրթեն։

32. Ըր կին տուից տարավ, կնաց տո՛ւն։
Խետ ապրավ։ Ապրա՛վ, ասավ.
— Ցըս ուխտ իմ էրի,
Էն քնասուն երիտասարդքիրուն տ՛էրթամ ամուսնացցիմ։
Կին ուս-ծանդր էր, ան էվոդ, կնաց։
Կէրթա, մինչև ան քնասունին կամուսնացցի,
Շատ տարինևրով կանցընի.
Էն ժամանակ իրան մե ախճիկ նվեր կըտան։
Տանվիթին մե ախճիկ նվեր կըտան,
Ախճիկ կըթալի ուր բյնմակ, կըկյա։
Տու մի ասա, բնու տղան ըլիր ի,
Տղան ըլիր ի, մնծացիր ի, ուր խոր կըպահանջի.
— Բա՛, ըմ խեր դո՞ր ի։
Մեր կասի.—Ջանը՛մ,

Քու խեր ընձի պիրիր, Թողիր գնա, կնացիր ի,
Հյուրիշ երկիր ի կնացիր ի։
Կասի.—Ես էլ տ՚էրթամ խոլվենն,
Ուրիշ երկիր դեր կնացի, տ՚էրթամ, ըմ խոր տեննամ։
Ինչքան կաղաչի, ինչ կանի, չիկրնա տղայի հրուչիվ առնե։

33. Տղեն կըպատրաստվի էրթա խոլվ խոր։
Կէրթա, խերն էլ էն կողմից կրկյա,
Կէրթան, իրարու կըպատաչին,
Իրարու կըպատաչին, կասի.
— Է՛յ, բիձա՛,—հար կասի,—
Ա՛յ բիձա, էդ երիտասարդ ախճիզ քեզ չի պատկանի,
Տո՛ւր ինձ, ընցի կնա՛։
Տնվիթ կասի.—Ջանը՛մ,
Ես կիտիր անցիր իմ, իմ ոտիր չի քաշվիր,
Էտ պարակ առուն ըմ ոտիր ու քուչի։
Մերն էլ հետվից կըկյա,
Կրատնանի՝ ետևի տ՚կովին, կանչի.
— Է՛յ, սարի՛ր, իշե՛ր, ցածրացե՛ք,
Խորն ը տղային պաժանեք։
Էտի էնտեղ կաղաչի, էնուր էրկուս կըպովին կովու։
Ըտի կանչի.—Տնվի՛թ, մի՛ զարգ, Տնվիթ, մի՛ զնրգ, տղատ ի։
Է՛, կովու ծննից, ճղայնությունից չեն լսի։
Տնվիթ ինչքան կըզարկի, նրան քար չէնի,
Էնու զարկածքեր Տնվիթին քար կէնի։
Տնվիթ շատ զարմացավ.
Ախճիզ տարավ, հետու էտեր, իրի, խիտ կովավ։
Տղայի մեր հա՛ կանչից.
— Սարի՛ր, իշե՛ր, ցածրացե՛ր,
Խորն ը ժառանգից պաժանեք։
Էտեղ հա՛ կաղաչի, հա՛ կանչի.
— Տնվի՛թ, մի՛ զնրգ, Տնվի՛թ մի՛ զնրգ։
Տնվիթ շատ կըցավցնի.
Տնվիթ էնտեղ կրկյնի,
Ուր մեր կըմոտանա, կրխաչակացցի.
— Քու տղան ի՛, էտ Մհերն ի,
Քու տղան ի, քու ժառանգն ի։

Անդև կանչծի, կասի.
— Մահ չունենաս վըր երկրին, մահանաս,
Մեծ անեն պայ չունենաս,
Ժառանգ էլ չունենաս, վրեն ուրախանաս։
Էգ իրեր անհծը կաս ազային։
Օր կըճանչընա՝ իր տղան ի, էլ չեն կովի,
Կըտառնան կըկյան։

34. Կըկյան տուն,
Կին կըպերի, ճար կըտնի, տ՝լողացնի։
Էնդան, ինչ տ՝լողացնի,
Է՛, Տնվիք իշըան կոխվ էրթեր, ինչ աներ,
Ընչաս տ՝ալներ, էնու յարնը կըլավաներ,
Վեր էնոր չէր մնա։
Անոր կին ասաց.
— Տնվի՛ք, քու չան հրմեն կապըտիր ի։
Ասաց.—Քու պերա՛ն կոտրեր, էգպես չասեր։
Հերիըվցիր իմ, հերիըմակուտուր իմ ըլի,—
Ասաց,—խուսք ըմ ավի, չեմ կատարի,
Ես պոի էրթամ։
Էնտեղ, վերչապես, կըլողացներ։
Առավոտ կըլնի, կիյնի ճամպախ.
— Տի էրթամ, էն ախճդան խիտ կովիմ։

35. Ուր կնացիր ի, տոն մի ասա,
Էն ախճդան ախճիդ ըլիր ի,
Մեծացիր ի, է՛, ինք պատավիր ի, ա՛խր,
Կասի.—Տնվիք իկիր ի, տ՝էրթամ Տնվիքի կոխվ։
Ախճիդ կասի.—Չէ՛ մամա՛, տոն պատավիր խա,
էլ չըս կերի կովի, ես տ՝էրթամ Տնվիքի կոխվ։
Կնա՛, ժամանակ ուզի, ժամանակ տա,
Մինք պատրաստվինք։
Տնվիքից ժամանակ կըխնիրվին, վուր պատրաստվին։
Տնվիքն էլ, շուք ժամանակ ի, կասի.
— էրթամ, մերմ կիտ, լողնամ,
Մընչև րնի կըպատրաստվի։

Ըդ կէրթա, կըմանի կիտ լողննալու,
Էդ ախճիդն էլ կըպատրաստվի, կէրթա,
Սիտի՝ պինք չըկերի Տալիքին ախտի,
Կէրթա, կըմանի մե խամըշնուց, էն կիտու տեմաց.
Անդնն մընչ Տալիք մըչ Տրնուն կըլողննա,
Ընդենա մե նիտ-աննզ կըգնըդի՝
Տալիք մե ծեն կրխանի, կըրդաչի,
Ախճիդ ախու էնտեղ լեդին կըպատռի,
Էն կըմահանա՝
Հերթըմակուտուր էլավ, ա՛խր...

36. Տալիքի մահանալուց Տեղծու Ըամ, է՛,
Պալատի տանիս կըլի, դինք վերևից ֆյալկնին,
Էնու ծամիր կասկննա փիտերուն,
Էն ծամիր կըմնա էնտեղ նշանակ.
Կըմնա չուր ժամանակին։

Գ

ՓՈՒՔՐ ՄՀԵՐ

37. Էս ժամանակ անցավ, Մհեր էկավ ճուչ տուն,
Ինչրխա էրավ՝ չտեղավըրին, ասին.
— Քու խեր քե բահրար ի խանի տննն,
Էլ տուն չես կյա՝
Էս տուն էթող, կնա՝
Որտեղ կնա՝ անխեղճ կործի պատահավ,
Էն էլ չէր տանի։
Էնպես ժամանակ խատավ, խող մեղավորցավ,
Վերևն չըկարցավ կան էկեր,
Ուր կէրթեր՝ կըխրվեր։
Տարցավ կնաց վըր մոր կերեզմընին, կանչից.

— Մերի՛կ, մերի՛կ, վե՛ր կաց, ի՞նչ անիմ,
Վունչ ճուչ աննն փայ ունիմ,
Վունչ ժառանգ ունիմ, ուրախանամ.

Վունչ էլ մահ ունիմ, մահանամ*։

Ասաց.—Կնա՛, խորդդ կերնդմընին,
Խորդդ ասա, խերդդ կիմանա։
Տաղցավ կնանց վըր խոր կերնդմընին.

— Ա՛յ հայրիկ, հայրի՛կ, խերդ՛ս, խերդ՛ս,
Վե՛ր կաց, ի՞նչ անիմ.
Վուչ ժառանգ ունիմ, ուրախանամ,
Վուչ մահ ունիմ, մահանամ,
Վուչ ձուչ աննն փայ ունիմ,
Ի՞նչ անիմ*։

Ասաց.—Իմ անեծքն ի քնզ պոնի։
Տնի ուն չես ապրի,
Պաի էրթաս Վան, Կրպահու քնր կա,
Ընտե մե զաղա կա, մանըս էն զաղնն,
Մնաս էնտեղ, ապրիս։
Տարին վըր քե՝ լուսն կանցնի, պաի անցնի,
Էնտեղ էնքան ուի մնաս,
Մըննչև ցորնու խաթ ըլնի քրն մաուրըմ,
Կյարու խաթ ըլնի քրն Հընդաս կյուղըմ,
Էն ժամանակ կըլնիս, վըր խողին կան կյաս,
Թե չէ՝ չըս կերի կան կյաս։

Հըլա հիմա էլ կյս էնտե ի,
Դըռ սաղ ի։

38. Մե ախճիղ խթման օր կըլնը տունս,
Էրթա, կրակ պիրի։
Կըլնը, կիշկի՝ ըն զաղնն կրակ կնրավա,
Կըլնի կէրթա, կըմտնի զաղնն,
Ուր կրակ առնի, տնտնա.
Կըմնա, ախճիղ չի կյաս։
Տան տերըր՝ էս կող ախճիղ, էն կող ախճիղ,
Չկա, կան էկան՝ չկաս։
Ասին.—Մնհացիր ի, կուրըսի,
Մա ընդի ձնիր, ձնիր ը տարի, մա ինչ ըլի։
Կըպիրին նրա ժամ կըտան,

*Երգ ևն։

Էտ ախճդան սուբ կըբյուշին։
Կրմնա, մյուս տարի,
Էլի Պրսաը պատկի եթման ուբր,
Մրկ էլ տրսնան՝ ախճիդ կրակ ծնաբ,
Իրի, մտավ ներս։
— Ախճի՛, տյորե՞ն կյաս։
— Կնացիմ, կրակ պերիմ։
— Ե՞ր իս կնացիր։
— Հա՛ն նուբ կնացիմ։
— Ա՛ տնավեր, խերու իս կնացիր, տարին լմացավ։
— Ա՛ ջանըմ, չէ՛, նուբ կնացի,
Մե քիչ կրակ պերիմ, էկամ։
Ի՞նչ ի, էնտեղ տարին բոպն կանցնի։
Ախճիդ Մհերին տեսավ, անու մտան կրակ խնտրվավ։
Պատմելով, կասին՝ ամեն ուրբաթ օր,
Ան տեղն ան՛նու ծիու շեռ կըկյաս։

ՀԱՐԱԿԻՑ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Ա

Կրմնա չուր ժամանակին,
Մենկ Սասընա կէրթա Բաղդնդ տուն կըշինի։
Սասընա մե վարպետ կասի.
—Սասընա մարդ ի՞նչ իրավմունք ունի՝
Էրթա ուրիշ տեղ, տուն շինի.
Ես տ՛էրթամ, նրա տուն քանդիմ։
— Ա՛յ մարդ, ո՞նց տ՛էրթաս, քանդիս։
Կասի.—Էս չնքյուշով էն էլ մրնչև խիմ պտի քանդիմ։
Կէրթա այո Բաղդնդ,
Խարցնիլով կէրթա, էդ մարդու տուն կրտեսնա։
Կըպռնի խըմեն կըքանդի։
Կըկյան կասին.
— Ի՞նչ իրավմունք ունիս մեր տուն քանդիս։
Էսի կասի.—Ես իրավմունք ունիմ մինչև խիմն էլ քանդիմ։
Սասընա մարդ ի՞նչ իրավմունք ունի,
Էրթա հնդուշ տեղ պտագվի։

Կըթյանդի, կըθողնի կըկյա։
Կէրθան առաջ.—Ուստա՛, էն տուն քանդիր,
Տու կասիր՝ մինչև խիմն էլ քանդիմ.—
Կասին,—Ուստա՛, ախբր, էն խոզ մնացիր ի բյու չունչուլի վրևն։
Տա՛ւր, տանինք լվանք, էն խողնն չըլցվի Սասուն։
էդ չունչուլ կըտանին, կըլվան.
Կըտան թնի, կրխարցընին, քև օր.
— Տու էն տուն լըխվ քանդի՞ր։
Կասի.—Խիմն էլ քանդիմ.
Սասընա մարդ իրավունք չունի էրθա, ուրիշ տնդ տուն շինի։

Բ

էդի կէրθա։ Մե խուդավերդի կըլի,
Կէրθան ընու խնր ու մեր կըլին բրտու ծառա.
Քրտու տուն կրծառային։
Էսի կըմնա ոտ ծանդըր, կէրθա ուշաթ կըկիի,
Հննց ճամպխու մեջ կին կադաւվի։
Անուն կրտնին խուդավերդի։
էդ խուդավերդին կըմնա, կըմեծանա, կասի.
— Ես լսիր իմ՝ քնցած Բաղդոդ,
Սասընա մարդու տուն քանդած ին,
Տը կյան մեր տուն էլ քանդին։
Ես էլ ա՝էրթամ մեր Սասուն, էլ չըմ մնա Էսանդ։
Կէրθա։ Կէրθա Սասուն, կը պատռայի խովըվնիրուն։
Կը պատռայի խովըվնիրուն, կը խարցընին.
— Տու ո՞վ իս։
Կասի.—Ես խուդավերդին իմ. էս ինչ անդ կապրի,
Լսիր իմ՝ վարպետ կնացեր ի, Տուրիշ մարդու տուն քանդիր ի,
Ես էլ Բողիր իմ, իսիր իմ,
Ջրդար, իմ տուն էլ քանդիր։
— Կյո՛,— կասի,—ոխշարբ մուրθնք, պատրաստություն տիսնք,
Խուդավերդուն բսօր կռնաղ էնինք։
Կըպռնին խուդավերդու խամար ոխշար կըմորθին,
Խորաման կը շինին։
էն խորաման շինողն մեկըն կը լսիի։
Մեկըն կը լսիի. կըմնա, կըպատրաստին,

Կըպևրին, կըտնին սևդան.
Էտի վռազ մեզ էլ կուտի։
Ուտելուն՝ էդ խուդավևրդին, մե սիլա տրան կը զանի։
Կասի.— Էրդու խաա լափիր, բա՛ ընկերքերըտ հըլա չի
կևրած ին։
Էս կըռըբի, էլ չուտի, կըբյայշվի կրաղ։
Կըմնա, խաց կուտին, կըպրծնին,
Կրակ կէնին, հիռչիվ կըբնին.
Կիշքի՝ էտի պագվիր ը, էս, ինչ հրռըբավ։
Խուդավևրդին կէրթա, ինու կըծածկի։
— Հա՛,—կասի,—մե խորավածի խամար մե սիլա ավիր,
Մկա էլ իկիր իս, շուր քաշիս ընծի վրա։
Կասի.—Ես քի կարըի պիրիմ.
Ընչի՞ առանց հրնկիրքերուն էրդու խաա լափիր։
Իրան հովիվըն կասի.
— Էր՛, նա խուդավևրդի ի, նա կարը-կանուն կիմանա,
Հուրիշ կնախն ի, վուր տղէ կնա մրնև կը լափևր՝
Զըր Քողնի շուր մինը իկևնը, խաց ուտևնը։
Էն խուդավևրդին կրխարցնի, կասի.
— Էտ ի՞նչ ի. էկա ինա ճրու պևրան, էն ծովու պևրան էկևնը,
Էնտի ոխչեր կէր. ոմօր փախան կնացին, ոմօր՝ չրփախան։
— Վա՛յ,—ասաց,—էն չրփախնողնի, էնի Տնվրքի
մատաղնիրն ին,
Ինչ կէրթան սար, ժողովուրդ ինչ կէրթևր սար,
Սարիդ տնռնալնէն, մի ոխչար կէնեն որպես մատաղ Տնվրքին.
Կէնա, ճամպխորտրիր էրթան-կյան, էտ կքին, ուտին։
Էսոնը հրմեն Տնվրքի մատաղնին ին, մինչև մրկա։
Էրթևնը ճաղնց, ճաղացպան շատ սալըխ կտա,
Ընի Տնվրքի ժամանակ սաղ բլիր ի։
Կէրթան ճաղնց, ճաղըցպանին կասին.
— Տնի շուտո՞ւց կը ճաղցիր շինի։
— Է՛,—կասի,—էս ճաղցը Քողիր չեմ ավլիր,
Տնվրքի խարանըսը Քողիր, ինչ նստիր ը վրը նը ճաղցը
պատիրուն,
Չեմ ավլիր, տն նշանակ Քողիր իմ։
Յըս ըն ժամանակ ճաղացպան եր,
Տնվրքը խարանըսը աղուն աղցիր իմ.
Էնու Քողիր՝ դյո վրը նն պատիրուն, չըմ ավլիր իմ։

Հրլր թև չեք համատամ՝ ես նա տլուս կայներ ը,
էս երկու ծառիր կը տեսնե՞ք...
Կրսե.—Եա՛։
Կասի.—Անձնեղ իրիր, էնտեղ պապոր խորից,
Նայից ամպիրուն, ամպիր նշանակ էրավ, էքող կենայ։
Ժամանակ մնաց, իրեք, ուր պապոր խաներ,
Ամպիր քացեր են։
Էլ ինչքա՞ն ամպիրուն նայի՝ ամպիր ընվըրեն քացեր են։
Տեղ չիմացավ,
էն պապոր մնաց էնդեղ, կանաչավ։
էն ժամանակվից հրենչու նը ճաղցին իմ,
էդ պապորի ծառիր կը տեսնա՞ս, մե հատակի էպես էղիր։
— Բը՛,—կասի,—է՞ն շենքն ըրբեր կոխ ին,
Ի՞նչ են, ըն նշան՝ ըն մարդ, ի՞նչ մարդ ի։
Կասի.—Ըն Գևղձա Տամի մարդին ի.
Օր բսավ՝ «Տանվիք վնասվիր ի»,
էս էնտեղն գինը էքալ.
Թալիլուն՝ ծամիր ակրոքեր էր անդեղն։
Հրյա հիմա էլ քողած անդեղ որպես նշանակ։
Տանվիքի նշանակտիր շատ կա։
Ջրն Տանվիք որպես սուրբ հիշյալի էր։
էս մատաղներր, ինչ մրկու կը քողնին նը սարիր՝
Հրմեն Տանվիքի մատաղներրն են։
Ըստու խամար կրպատմին,
էտ խուդավերդին շատ հնատրրբիր կրլնի։
Ճաղացպան էնու խամար կրպատմի։



Սասնա Ծռեր

պատմեց
Մոկացի Թոռվմաս Սարգսյան
Մասխ ավան
գրառված է 1972 թ.



Վիպասաց Թովմաս Ավետիսի Սարգսյանը ծնվել է Մոկսի Տմբո (Տմբո) գյուղում, 1890 թ.։

18 տարեկան հասակից զբաղվել է գրաբարությամբ ու բազիքագործությամբ։ Արհեստի բերումով հասել է մինչև Տիգրանակերտ, Ջզիրե, Հազո։

1915-ին ընտանիքով Մոկսից գաղթել է Վան, ապա անցել Բերկրի Կոտրածների պատճառով, երկար թափառումներից հետո, հասել է Էջմիածին, այստեղից էլ՝ վերաբնակվել Մարտունու Դյոզալզարա գյուղում (այժմ՝ Վարդենիկ)։ Երկու տարի ապրում է այստեղ, ընտանիքից շատերը մահանում են, մնացածները բնակության են հաստատում Վեդու Շազակ գյուղում։ 1928-ին տեղափոխվում են Կոտայքի Քյուլիջա գյուղը, ուր ապրում են մինչև 1950 թ.։ 1950 թվականից մինչև այժմ բնակվում են Ջանգիբաստարում (Մասխ ավան)։

Թովմասը բուն զբաղմունքով հողագործ է, բայց իր շատ հայրենակիցների նման նաև արհեստավոր է՝ գրաբար ու բազիքագործ։ Աբևելյան Հայաստանում ևս մոտ 10 տարի զբաղվել է բազիքագործությամբ։

Ունի երկու տղա և մեկ աղջիկ. տղաներն ապրում են Երևանում։ Անդրպատ է, լավ տիրապետում է երգերինին։ Մասին ավանում հայտնի է իբրև հմուտ բանասաց։ Գիտե և պատմում է զանազան հեքիաթներ ու առակներ, քրդական վիպերգեր, երգում է երգերնեն երգեր։

Նա վկայը լսել է հայրենի Տմբոում և այստեղ՝ Կոտայքի Քաղագյուղում (այժմ՝ Նոր-գյուղ), Մոկացի Նախոյից (Գինեկանց գյուղից), որը, բան Թովմասի վկայության, մահացել է 1923 թ., 50—55 տարեկան հասակում*։

Թովմասը վկայ բնավ չէր պատմել, պատմեց առաջին անգամ՝ մեր խնդրանքով։

---

* Սա, իհարկե, Մ. Աբեղյանի գրառած պատումի Նախո Քեհոն չէ։ Վերջինս, բան գինեկանցի մեկ այլ վիպասաց Տիգրան Մուրադյանի վկայության, մահացել է մինչև 1915 թ. կատորածը, Հայրենի Գինեկանցում։

Ը.

ՄԱՆԱՍԱՐ ԵՎ. ԲԱՂԴԱՍԱՐ

Կռապաշտի քաղաք՝ կռապաշտի թաքավորն է։
Կռապաշտի թաքավորը կալիս ա Սասունի վրեն կռիվ.
Իսկ Սասունը՝ տրանք աստվածապաշտ են,
Կալիս են քարա վրեն կռիվ։
Մովինար ակուշկեն նստած կըլնի, շատ տխրուն է.
Եփ օր ակուշկան նստած ա լինում,
Էդ թաքավորի աշք ընկնում ա էդ ախճկան,
Ասում ա.—Եթե էտ ախճիկ տաք ընձի,
Ես ծեր երկրից կըյաշվնի կէրթամ
Եվ չնի կալի ծեր խնու։
Ախճկան հարց են տալի, ախճիկ ասում ա.
— Եթե ինձի կրոնափոխ չանի, ես իմ կրոնի վրա մնամ,
Նա էլ թող իր կրոնի վրա մնա.
Պոլոր ժողովուրդ Քրիս չհետարևն իմ պատճառով,
Ես տրան կառնիմ։
Էտ պայմանն,—ասում ա,—ասա թաքավորին,
Համաձայնվի, ես կառնիմ։
Եփ օր թաքավորին ասում են, թաքավորը համաձանվում ա,

Ասում ա.—Շատ լավ,—ասում ա,—
Թո՛ նա իրան օրհնքին ըլի,
Ես իմ օրհնքին ըլնեմ,
Պայց ընձի կին տանես։
— Պայց,—ասում ա,—ես ժամով և պատարագով,
Տերտերով, վարդապետով պտի պսակվիմ,
Տեսե՛ք, նա կուզի՞։
Ասում ա.—Հա՛, ի՞նչպես որ ուզենաս,
Ես քեզ հետ բնենց կրպսակվիմ։
Եվ էնպես էլ պսակվում ա,
Էս Կատպաշան Թաթավնրի խետ ամուսնանում ա։

2. Մովինարը որ էթում ա ծովի մոտը,
Երկու խատ հախպուր ա փխում ծովից.
Մեկ փոքր հախպուր ա ըլնում,
Մեկ՝ ճոշ ա ըլնում։
Էս հախպըրնն էլ ա Հուր խմում
Եվ էն փոքրից էլ ա խմում։
Էնդեղ հղիանում ա։
Էնդեղ որ հղիանում, ասում ա Թաթավնրին.
— Քառասուն օր պտի մենք իրարու մոտ չպատկենք։
Թաթավնր քառասուն օր ժամանակ տալի,
Տեսնում ա, որ Մովինար արդեն երեխով ա՛...
Նրա փոր օրեօր մեծանում ա՛.
Տա գինքն էլ զարմանում ա, թե էտ ի՞նչ պան ի։
Թաթավնր իրեն ասում ա.
— Ես քեզ խետ չեմ պսակվիր,
Պա՛ տուն էտ որտո՞ւց ես պիրե,
Ուրեմ, տուն պիճ ես։
Պա՛ պիճ ես կրնթունե՞մ,—ասում ա,—
Ես պիճ չեմ ընթունի։
Տրան պանտարկում ա։
Ըտրան եփ օր պանտարկում ա,
Երկու խատ տղա յա ըլնում.
Մեկի անուն անում Մանասար,
Մեկի անուն անում Պազատսար։
Էն փոքր հախպրից, որ Հուր խմում ա,

Էտ Պաղտասար բլնում, նրա ուժ քիչ ա լինում,
Իսկ էն ճիշ ախպերին՝ Սանասարն ա,
Ծորա ուժը հավելի ուժեղ ա բլնում։
Էտ կնիջ պանտարկում ա,
Դե՛, երախաներ մեծանում են, էլի։

3. Երախաներ մեծանում են.
Նրանք էլ իմաստուն երախա են բլնում։
Թաքավոր մտածում ա, ասում ա.
— Էտ երախաներ, որ էդպես մեծանում են,
Վերջ-վերջո իմ կլուխ կուտեն,
Կանի՛, ես բտրանց բտպանեմ։
Վերցնում տանում ա մի հատ սենական մնչր,
Մե հատ գուրք տնում կեսին, ասում ա.
— Էտ գուրքին չոքի՛ք և համփուրեք,
Որ հանցըմնվեք ընձի։
Բայց բտրանք հիմաստուն են բլնում,
Մտածում են, ասում են.
— Մենք չենք կիտի չոքել, թե ի՛նչ տեսակ կչոքես,
Դե՛, տուր չոքի, հիմացի, նոր մենք էլ։
Էտ թաքավոր չոքում ա,
Նրանք թաքավորի կլուխ կտրում են,
Թաքավորի կլուխ կտրում են,
Տովինար իրա երախաների վրա ուրախանում ա։

4. Էտ Սանասար, Պաղտասար մեծանում են,
Բլնում են հսկա՛.
Ուզում են էտ երկրին տեր կայնեն,
Պայց չեն կիտի, թե էտ երկրի անուն ի՛նչ անեն։
Պաղտասար ասում ա.
— Սանասա՛ր, տուր հսկա ես ինձանից,
Կնա՛, էտեղրանք ման արի, մե հատ մեծ մարդ պի՛,
Թող անուն անի, մենք չենք կիտի, ինչ անենք։
Էթում, տեսնում ա, մե մեծ մարդ էնտեղ նստեր ա.
Մարդ կրնի հարուր տարեկան,
Էն վախտ շատ են ապրած,
Էտ տալիս ա իրա խոլթուղ ու առնում տանում։
— Ա՛յ բալամ, ընձի որտե՞ղ ես տանում։

— Հայրի՛կ, քեզի ո՞չ մի տեղ չեմ տանում.
Ես քեզի տանիմ մեր երկիրը՝,
Քեզ էլ լավ պահեմ, պաշտպանեմ,
Մենակ մեր երկրի անուն անես։
Մենք չենք խաչկրնա, երիտասարդ ենք,
Նոր ենք պնակավել էառնդ։
Տանում ա երկիրը, ասում ա.
— Դե՛, նայի՛, էս երկիր նայի՛,
Նայի՛, տեսնամ էս երկրի անուն ի՞նչ տենա։
Էտ մարդ նայում, նայում, ասում ա.
— Էս սասուն երկիր ի՞նչ անուն տենամ։
Ասում ա.— Սասո՞ւն։
Ասում ա.— Հա՛, իսկականը սասուն, էս դիր սասուն։
Նորից տալի դոլիուղը, նորից տնում իրա թևի վրա
Ու առնում, տանում իրան տեղ.
Բիձային տնում էնտեղ, բիձային ասում.
— Բիձա՛, տոն կնա քու տեղ, մեր անուն մենք սատցանը։
Ա՛յ, բոլոր մնում Սասուն՝ անունը։
Մեռած-մահանակ մնում ա, որանք մահանում են.
Տրանից ծնվում ա Մհերը։

Մհերն էլ մեռած-մահանակ էնտեղ ապրում ա,
Նրանից ծնվում ա Տնվիթ։
Ծնվում ա Տնվիթ, Տնվիթի խեր մահանում ա,
Մհեր մահանում ա։
Նրան մի քեռի կա բլնում, անուն Թորոս,
Հորիսպեր՝ անուն Ծննով Հովան։
Էտ Թորոս նրան պահում ա։

Բ

Դ Ա վ ի թ

5. Թորոս Տնվիթին պահում ա.
Ըլնում ա խինդ-վնց տարեկան,
Էթում ա, երեխեքի հետ խաղում ա։
Երեխեք՝ որ մեկի թևլ պռնում, քաշում խանում,

Պալոր կալիս են բարա վրա պողոք են անում,
Ասում.—Ա՛յ մարդ, էտ ի՞նչ կրակ էր,
էտ ի՞նչ տղա էր, էտ ի՞նչ երախա էր,
Մեր երեխեքին սաղ սախաթեց,
Սրան տարեք, մե իլլաջ արեք,
Մե հար արեք, պայեք։
Տնվիքի մեր էթում ա, Մելիքին ա առնում՝
Մարա Մելիքին ա առնում։
Տնվիքին ուղարկում են էնտեղ, ասում են.
— Թո՛ էթա իրա մոր մոտ, էլ մենք չենք կարող պահե։
Մենով Հովան ու Թորոսը նրան ուղարկում են մոր կուշտը։

6. էթում ա մոր մոտը։
Տնվիքը մեծանում ա, ավելի ա ուժեղանում։
Մարա Մելիքը մտածում ա.
— Տա, եվ ըլի, իմ փորցանը տրանից կգա,
Ես տրան կըսպանեմ,—միտը փոխվում ա։
Մեր խնդրում ա, ասում ա.
— Մելի՛ք,—ասում ա,—
Էդքան ժամանակ մենք մարդ-կնիկ ենք էլի,
Տուն ընձի խետ ապրում էր,
Ես քեզ խետ, լա՛վ էր,
Պա՛, տուն իմ տղան եթե բսպանես,
Իմ ջիգյար ի՞նչ տեսակ ջիգյար է,
Որ ես քեզի խետ նորից կլուս մեկ անեմ։
Խրդի՛, թո էթա իրա երկիր։
Խրդում ա, նորից էթում ա Մենով Հովանի մոտը։

7. էթում Թորոսի մոտ,
Ընտե նորից տալում են նրան կյառնարած։
Ըլնում ա տաս-տասվերկու տարեկան,
Արագաշարժ մարդ ըլնում։
էն ժամանակ էլ, որ ժողովուրդ քիչ ա ըլնում,
Վայրենի անասուններ շատ են ըլնում սարեր,
Ընտեղ մեշա ի, անտառ ի, շատ ի։
Տնվիք լապատրակ ա պռնում,

Կել ա պռնում, առչ ա պռնում,
Խառնում ա կյառներին ու քշում, հայդե՜...
Մե հատ չի կարա նրանից փախնի,
Փախնում ա՝ հրոպական փնտով զարկում, քցում,
Էդպես էլ պիրում, լցում քաղաքի մեջ։
Պիրում, լցում քաղաքի մեջը,
Որ տեսնում են՝ ջուն-ջանավար սաղ էկան քաղաքի մեջը,
Ժողովուրդ վախենում են, տոներ փակում են,
Մտնում են ներս. մտնում են ներս,
Էն էլ փետ դալար տալի բերին, կայնում ա,
Պահակ ա կայնում, որ էտ անասուններ չրփախին։
— Ա՛յ ծեր տուն ավիրի,— ասում ա,—
Ա՛յ քաղաքացիք, ելե՛ք,
Վաՙր, ինչ մեկ ի՝ երկուս իմ պիրե,
Վաՙր, ինչ երկուս ի՝ չորան իմ պիրե,
Վաՙր ինչ չորան ի՝ ութն իմ պիրե,
Ինչի՞ եք փախե, մտե տներ։
Պողոքում են Թորոսին ու խրտրտպորը.
— Ախպե՛ր, էտ խեղճին, ասու խաթըր էղնի՛,
Մեր կեղից տարե՛ք, մեզի հարկավոր չի,
Ոչ նրա պահել ենք ուզում, ոչ պան ենք ուզում։
Քեհին և Հովան նրան վերցնում տանում են։

8. Տեվիք օրեօր մեծանում ա, սկսում ա ոբա անել։
Էրթում ա սարեր, նետ-աղեղով զարկում ա,
Կել ա ըսպանում, կարավ ա ըսպանում։

Ընտեղ էն ժամանակ կորեկ են ցանում,
Մտնում էտ կորեկների մեջ, ոբսի մեն կլալի,
Ջարթում ա, փշրում ա։
Պառավ կալիս ա.—Ա՛յ կրող քեզի տանի՛,
Քեզի որտեղ տարան՝ ճար չէղավ։
Մկա տեղ իկեր ես, քու բմեն պան թողեր ես,
Քու խոր կար-կարողություն թողեր ես,
Մսրա Մելիք իկեր, կրտանի,
Տեղ իկեր ես իմ կորեկ կրճարտես,
Ա՛յ կրող քեզի տանի, Տեվի՛ք։



Ասում ա.—Մալրի՛կ, ո՞նց։
— Պա՛ ինչ,—ասում ա,—
Քու խոր կար-կարողություն, ասկին,
Մարա Մելիք իկն, թալնի, կըտանի։
Էտ ըսենց զապչանակ անում թևին ու յա՛լլա..

9. Վազում էթում, խասնում տուն,
Տնանում ա՝ չափում են, ոսկի են չափում,
Կողպատին, Զալխատին ոսկի են չափում։
Ասում ա.—Իմ խոր ոսկի՛ն...
Թողի՛ք, ո՛ւմ չափեմ, տուն ինչի՞ նը չափում։
Լա՛վ, մենք պարտք են ծեզի,
Թողի՛ք, իմ խոր ոսկին ևս չափեմ։
Ասում ա.—Ի՞նչ տաբեփություն,
Կատ ա, լցնում ենք, փետ ենք տալի։
— Չէ՛,—ասում ա,—ևս կլցնեմ, փետ կտամ։
Ասում ա.—Արի՛, տուն լից։
Ջոքում ա տեմ, կոռծում ա կատ,
Լցում ա տակի վրա, փետ տալի,
Ետ՛ուռ՝ կնտին, ոչ մի հատ էլ չի մնում։
Ասում ա.—Ա՛յ տղա, քու չափ էտենց ա՞։
Ասում ա.—Բա ի՞նչ ա։
Ասում ա.—Ելի կայնի՛, մենք չափենք,
Մեր ոսկին վերցնենք։
Թև չէ,—ասում ա,—Մարա Մելիքին կասենք,
Կդյա, բյո պատառ քու ականջ կըթողնի։
Էն ժամանակ՝ նա կոտով զարկում,
Էն մեկի պերան ա ծռլում,
Էն մեկին էլ ճակատ ա կոտրվում։
Ու տեսնում են, որ հսկա մարդ ա,
Որ շարժվում ա, կնտին դնդվում ա,
Իրա ծեռ որ կպնում ա քարին,
Կրակ կէթա մոտեն։
— Օհո՛,—ասում ա—էտ հսկա մարդ ա,
Մենք սրան ի՞նչ պտի անենք։
Ըլնում են, փախնում են։
Փախնում են.—Դե՛, լավ,—ասում են,—
Մենք կէրթանք Մարա Մելիքի մոտ։

10. Էրթում են Մսրա Մելիքի մոտ։
Նի օր էրթում են, խասնում են մոտիկ,
Կնիկներ, ախճիկներ.

— Ջա՜ն, Կոզպատին, ջա՜ն, Կոզպատին,
Կնացիր Սասուն, պիրիր քառասուն-քառասուն,
Քառասուն կնիկ պիրիր՝ երկանք ազան,
Քառասուն հերկեն կնիկ պիրիր՝ դավա պառնան,
Ղարավաշ տառնան Մսրա Մելիքին։
Ա՛յ, տո՛ւ պարով էկա՜ք։

Կալիս, տեսնում են՝ մեկի պռուկն ի ծուռ,
Մեկի պերան ի ծուռ, մեկին էլ՝ կլուխ։
— Ա՛յ Կոզպատին,— ասում ա,— կնացիր չընց շուն վազան,
Էկար չընց ճիչ կնգոն,
Էտ ի՞նչ պատահավ բնկի։

Ասում ա.— Ա՛յ լիրբեր,
Հըլա տո՛ւ չնը տեսել Սասունա ծուռ.
Մուր ունեն լերան-լերան,
Նետեր ունեն՝ մե-մե կերան,
Պա՛, մարդ կտիմանա նրանց տե՞մ։

Մսրա Մելիքին կասե՞ն։
Մսրա Մելիք ասում ա.
— Էլ հո՛ւրիշ հնարավորություն չկա,
Ջորք հավաքի՛ր, էրթանք, Սասուն թա՛ր-թամուզ կոտորենք.
Վերջ տանք, բողեննք կնանք։

11. Տո՛ւվիթ մնում ա իր երկիր,
Էրթում ա իրա խըմար ոբա անելու։
Էնտեղ վանք ա լըում՝ Մարաթա սարի վրա։
Հոխպերն ու Թորոսը մտածում են.
— Հա՛, հա՛,— ասում են,— կրող տանի Տո՛ւվիթին,
Մկա Մելիքն էլ գո զոռք հավաքեր ի,
Էկեր ի, մեր վրանում տրեր ի,
Մեր ամբողջ երկիր պտի բար-բնդ անի,

Սաղ վերցի, առնի, տանի։
Էլ մեզի ի՞նչ ուժ ունենք,
Մեզի ի՞նչ խուվաթ ունենք,
Էրթանք Մարա Մելիքի տեմ կռիվ։
Ա՛յ,—ասում ա,—կրո՛ղ քեզի տանի,
Երանի չէ, տեղ մնաած ըլեր,
Քու խոր քամակ չընկներ,
Որ տեղ վայիս տաղցար էա ամբողջ ժողովուրդի՛ն։
Մարա Մելիք իկեր է,
Ամբողջ ժողովուրդին պտի կոտորի,
Ոսկին էլ կրտանի, քալան էլ կրտանի՛,
Ամեն պետն էլ կրտանի։
— Լա՛վ,—ասում ա,—մի՛ վախեցիք,
Ես կէրթամ, նրանց պատասխան կտամ։
Մենակ,—ասում ա,—իմ հորս
Չենքը-գրահ տվեք ընձի,
Տեղ խրտող կայնենք, կռիւ չունենք։
Դե՛, տրանք էլ իրան հոր զենք-գրահ պախած ի,
Քուռիդ Ջալադին էլ մե հատ կոմի մեջ պախած, սվաղած,
Ոչ մե ճար-ճանապարհ չէրթա ինի,
Քանի տարիներ մնացիր է ընտեղ։
Թորոս ասում ա.—Մե՛նով Հովան,
Պե՛, նրա խոր զենքըն, գրահն տանք, ետ էրթա,
Ընդեղ կրսպանեն՝ ետ բսպանեն,
Կռնեն երկիր կազատվի.
Էդ էլ նրա արածներն ի, մենք ցավ կըքաշենք։
Տալիս են.—Տե՛,—ասում են,—կնա՛,
Էտ քանի տարի Քուռիդ Ջալադին էնտեղն ի.
Մենք չենք կարա մոտանա, պայց տեղ կնա՛,
Եթե կարողացար նրան նետար,
Կարող ա՝ մի պատ կատարես,
Եթե չկարողացար ծեռ տալ նրան,
Ուրեմն, չես կարա պատ անի։
Տավիթ կանչում ա Մայրամ Աստվածածին.
— Ա՛յ Մարաթա Մայրամ Աստվածածին։

Էրթում, ծեռ գարկում ա Քուռիդ Ջալադինի քամկի վրա։
Նա մի թափուկ որ գարկում ա,

Ըսենց մի հատ տունը լցում ա ամբո՝
Քուռիկ Ջալադինը խանում ա,
Քանի տարի ախշըրքի իրես չի տեսնի ի,
Ախև չի տեսնի ի, մնացելո ի նեղսը, հե՛յ...
Քուռիկ Ջալադինը նի օր խանում տուրսը,
Տա շատ ուրախանում, ասում ա.
— Իմ խոր Քուռ Կնձակին ավե՛ր,
Իմ խոր Բագրանդ ավե՛ր։
Դրանք էլ տալիս են Տնվրիին,
Ու Տնվրիի մե լավ բիմար տալիս ա ծիո՛նը,
Սին նստում ա ու ուզում ա իշնել կովու դաշտ։

12. Սենով Հովան ասում ա.
— Ա՛յ անկաղափար չահել երիտասա՛րդ,
Նի օր էտ ծին խանևը նս, մե փորձի, տեսնանք,
Էտ ծին կարո՞ղ է բնկի ապտակ կովից։
— Բա,—ասում ա,—ի՞նչ անեմ։
Ասում ա.—Գուբանի խերկը,
Յոթ կիլոմետր խերկը ճոր կապի,
Բաղ տզկի, էտ ծին քալ, քշի։
Նի օր տակին չոր խոզ խանևց, շպրտևց տունս,
Հիմացի՝ նա բնկի քշնամու մոտևն կազատի,
Նրև չխանևց,—ասում ա,—տոն կրմնաս քշնամու ծեռը։
Ել էդպես է անում ու նստում Քուռիկ Ջալադինը,
Կանչում Մարաթա Պանոր Ասոլաճածինը
Ու բշում ա էտ ցեխի մեջ։
Նի օր բշում ա էտ ցեխի մեջ, յոթ կիլոմետր ի,
Էտ շպրտում ա ետի ոտերը,
Չոր խոզ խանում, շպրտում ա։
Նի օր տոնս ի կյալի,
Յոթ անգամ ղրադևր տոնս կրդյա,
Նոր Քորնս ու խորոխակրը ասում են.
— Կնա՛, տոն քու մուրազին խասի։

Նրանք էրթում են, Մարաթա սարի կլխին կացնում են,
Նրա ծեն էլ շատ մեծ ծեն ա րլնում՝
Սենով Հովան կասեն.

Նրա ծեն, որ բռռում ա, ըսահզից մինչև, է՛,
Քանի կիլոմնար կնում ա...

13. *Ու Տավիթի հիշնում ա, տեսնում ա, է՛յ,*
Վրաններ զարկած, զորք կայներ ի՝
Քշում ա զորքի մեջ,
Մի մաս գինք ա ճարթում,
Մի մաս Քուրդ Ջալադին ա ճարթում,
Իր ռանչ տեմ, իրան պերնի տեմ։

Տեսնում են, որ էդքան կոտորում,
Նոր բիձա մարթը կըկյա, կասի.
— Տավի՛թ,— կասի,— բախշի՛ իմ ծերուիյան,
Ախր, էս երիտասարդներ ի՞նչ մեզը ունեն,
Որ տու էդպես կոտորում ես.
Չէ՞, հըմեն մեկ՝ մորեն մեկ ի,
Մեկ՝ պատկված ի, հրլա իրան տուն չի մնացե,
Մեկ՝ նշանլու ի, հրլա ժամից չի էկեր ի,
Ախր, մեզը են, խեղճ են։
Քու կռիվ Մարա Մելիքի խեռն է,
Եթե տու տղամարդ ես, նամուս ունես,— ասում ա,—
Կնա՛, Մարա Մելիքի հետ կռվի,
Քու հաշիվ պարզի։
Տավիթի մտածում ա, ասում ա.
— Իսկապես,— ասում ա,— բիձան շատ լավ ասում ա,
Բա՛,— ասում ա,— Մարա Մելիք ո՞րտեղն ա։
— Է՞ն վրանի մեջն ի,
Գո՛ զոլորշին դուրս ա կալիս նրա պերնից։
Բայց մուղյաթ ե՛լ,— ասում ա,—
էն զոլորշին բեզի կբաշի նեռս։
— Մի՞թե,— ասում ա,— էտ զոլորշին ընձի պտի բաշի նեռս.
Ինչքան հակա պտի ըլնի մարդ,— ասում ա,—
Որ զոլորշինով ընձի ախտե.
Բա՛ ես ո՞նց նրան պտի ախտեմ։
Ասում ա.— է՛յ Մարաթա Պանկրիկ Աստվարածին,
Խնդրում եմ բեզի՝ տաս ընձի խուսաթը, ուժը,
Ես Աստուձա երկիր ազատեմ Մարա Մելիքի ծեռնեն։

14. Ու ծին քշում ա, էրթում ա՝
էրթում ա, ծնն ա տալի.—Մելի՛ք, Մելի՛ք՝
Մելիք՝ ո՛ւր, ըսենց ա անում՝
Որ, ո՛ւր, ըսենց ա անում,
Տ՚ավիթ Երբեք չի շարժվում իրան տեղեն՝
Երբեք չի շարժվում,
Յոթ կոմշի ուժ Մելիքից պակասում ա՝
— Հե՛յ վախ,—ասում ա,—
Բա՛ ես էտ քաշել, որ նրան քաշիմ,
Պտի գար, խասներ իմ մոթի մոտ,
Նա չըշարժըվավ,—ասում ա,—նա շատ հսկա է՝
Ասում ա.—Մելի՛ք, ելի՛, ել կայնի.
Քեզի մահ չունեք, ես քեզի մահ եմ պիրել,
Քեզի մեռնել չկար՝ ես քեզի մահ եմ պիրել՝
Ե՛լ, կայնի, ես, տո՛ւ կովենք՝
Էտ խեղճ ժողովուրդ,—ասում ա,—
Ինչի՞ ես պիրել Թափել էս գար ու գաշտ.
Մաղ կոտորիմ,—ասում ա,—իմ ծիու ոտնով,
Իմ ծիու պերնով և իմ Թրով ու վըհատվի՝
Մելիք ասում ա.—Տ՚ավի՛թ,—ասում ա,—
Շատ լավ ես ասում,
Պայց ընձի չեքս ժամ ժամանակ կըտաս,
Ես իմ պատըրաստութուն անանամ,
Տո՛ւ էլ կնա, քեզի խատար Հանգստացի ու տրի,
Ես, տո՛ւ կովենք, բախտով կովենք՝
Ասում ա.—Քեզի վեց ժամ ժամանակ եմ տալիս՝
Քառասուն մետր խոր ա փորում իր սենյակի մեջը,
Խալիչան յալա՛շ փռում ա պերնի վրա,
Բար-Թամամ մարո՛ւր,
Որ պտի բնտեղ իկա՝ Մսրա Մելիքի մոտ, խոսա՝
Վեց ժամ եփ օր Թըմմում ա, Տ՚ավիթ կալիս, ասում ա.
— Մսրա՛ Մելիք,—ասում ա,—պատըրաստութուն ունե՞ս՝
Ասում ա.—Պատըրաստ եմ, արի մի քիչ խոսանք քո խետ
Ու նոր էլենենք կովենք՝
Տ՚ավիթ եփ օր իկյալի, հայդե՛, էրթում ա խորի տակ.
Օր էթում ա խորի տակ, ասում ա.
— Հա՛յ, Սասունա ծռեր, Սասունա ծռեր,

Գնա՜ց,— ասում ա,— գնա՜ց, .յանդուգնը* Սասմա ծռեր,
Երկիր, մալ մնաց մեղի,— ասում ա,—
Իկո՛ր ա Սասունա մի հատ լակոտը,
Իկնր է, խասեր է Մսրա Մելիքի մոտ,
Մսրա Մելիքի խնամ պտի կռվի։
Տե՛, կնա,— ասում ա,— պատմի հուն-հավհանականն,
Ընձի մահ չկար՝ ուռի մահ էիր պկրե,
Ես քեզ ըտենց մահ կըպկրեմ։

15. Մենով Հովանը երազ ա տեսնում.
Մարաթա սարի կլոխը, Սասունա սարի վրա
Մի հատ սև ամպ էկավ,
Իսկ Մսրա երկիր լուս ի պայվնր։
— Հը՛յ վախ,— ասում ա,— կնաց տղա Տավիթը՛,
Կնաց Քուռկ Ջալադինը՛,
Կնաց Մհերի Պաղրանդը՛,
Ափսո՜ս, հազար ափսո՜ս,— ասում ա,— կնա՜ց։
Բռռում ա, բռռում ա.— Տավի՛թ,
Որ բռռում ա, էն հորի մեջ Տավիթ լսում ա.
Որ լսում ա, ասում ա.
— Կանչի՛ Պանցր Ասատարածին, Խաչըն՝ հուսին,
Կանչի՛, կազատվես էտ տեղից։
Եփ օր կանչում ա, ասում հրամանքով Քանում, ըլնում.
Որ ըլնում ուռս, Մելիքը, սարսափ նրան կոխում ա,
Քրտինք տալիս ա վրան։
— Հը՛յ վախ,— ասում ա,— կնա՜ց...

16. — Տե՛,— ասում ա,— էլ հուրիշ փորց ունե՞ս, Մելի՛ք։—
Ասում ա.— Ե՛լ, էս անգամ ես, ուռի կռվենք։
Ասում ա.— Կռվե՛նք,— ասում ա,—
Ե՞ս հառաջ պտի քեզի զարկեմ, թե՞ ուռի։
Ասում ա.— Տու զա՛րկ,— ասում ա,—
Տու հառաջ ընձի զա՛րկ, վնաս չկա.
Հըմեն մեկ իրեք դյուրը կզարկենք, ոչ հավել։

* Այսուհետև «յ(.3)» տառով նշանակում ենք հայագային «հ» բաղաձայնի բարբառային ձայնով արտասանություններ։ Խոս. բանասեղծների։

Հառաչի դիմբը որ զարկում Տավթիին,
Տավթի խոզ-քարի մեջ կորում ա,
Փոթորիկ պատրաստում ա։
— Հե՛յ,— ասում ա,— Տավթի, հո՞ւր ես տուն։
Տավթի ասում ա.— Մե դիմբը էլ զա՛րկ,
Կենթանի եմ,— ասում ա,— կենթանի եմ։
Մեկն էլ զարկում ա,
Տավթի էլի՝ խո՛զ-քար նրան կորուսում ա։
Իրեք խաո զարկում ա,
Իրեքին էլ Տավթիին ոչ մի պան չի լինում։
Տավթի զարկում ա, նրա գյուրզի պռնում ա,
Ջնայած խոզ-դուման ա ըլնում,
Զարկում, գյուրզը պռնում ա։
Ասում ա.— Մելի՛ք,— ասում ա,—
Հիմի նոսպաի էկա՞վ ընծի։
Ասում ա.— Նոսպաի էկավ բնվի, ախպե՛ր,
Նոսպաի էկավ բնվի։
— Դը՛,— ասավ,— կայնի՛, ես կըզարկեմ բնվի։
Քուռիդ Ջալադին խնծնում ա.
Մեր կալիս ա, ասում ա.
— Տավթի՛ք,— ասում ա,— պահշի՛ էս մեկ դիմբը,
Պահշի՛ իմ ծծերին, որ բնվի կաթ եմ տվել։
Ասում ա.— Էս մեկ դիմբը պահշիմ քու ծծերի կաթին,
Որ տուն բնվի կաթ ես տվել։
Մնում ա էրկու դիմբը։
Էն մեկ դիմբն էլ, գյուրզ պտի զարկի,
Քարն ի կալի. բար ի կալի, ասում ա.
— Տավթի՛ք, պահշի՛ էս իմ մագերին,
Խնթրում եմ, պահշես մագերիս։
Ասում ա.— Էս մեկն էլ պահշում եմ քնվի։
Դե՛,— ասում ա,— կայնի՛, էս անգամ էս մեկըն զարկեմ։
Էրթում ա մընչև Հալեպ, տառնում կալիս ա.
Մելիք իրան պահեր ի,
Քառասուն ճաղացի քար թալեր իրա վրեն,
Քառասուն կամեշի կաշի թալեր իրա վրեն, ծածկեր ի։
Հրեղեն թուր որ զարկում ա, ամբողջ կտրում ա,
Մելիքի կեսը մտեն կտրում ա,
Պայց տաբ ի, չի զգում։



— Է՛յ,—ասում ա,—Տավի՛թ, մեկն էլ գա՛ր,
Որ ըլնենք,—ասում ա,—նոր մենք կռիվ անենք։
Տա ասում ա.—Վա՛յ,—ասում ա,—
Անիծյալ լինի իմ ծուրը,
Անիծյալ լինի իմ ծինը,
Էտ ինչպե՞ս է,—ասում ա,—էտ մեկ դըրբին Մելիք չըկնաց։
Ասում ա.—Մելի՛ք, մե պանդրրացիք։
Մելիք պանդրրանում ա,
Մե կտոր էտեղ է ընկնում,
Մե կտոր՝ էնտեղ, խառնում ա՛,
Էնտեղ կռիվը մնում ա Տավիթի ծեռը՛...
Տավրթից ծնվում ա մե հատ աղա՛,
Անուն Մհեր ա ըլնում,
Նա էլ նորից Մհեր ա ըլնում։ Ի՞նչպես...

17. Տավիթ ևի օր կալիս ա առներ,
Ախր, Տավրթի ամուսնալու ժամանակն է.
Ամուսնալու ժամանակն է, Քեռուն ասում ա.
— Կնա՛, Խանդութ Խանումին ուպի ընձի։
Խանդութ Խանումին նա երազում տեսեր է։
Որ երազում տեսել է, իրարու վրա սիրահարված է,
Ասում ա.—Կնա՛, Խանդութ Խանումին ուպի։
Խանդութ Խանումին ուղում են,
Խանդութ Խանում ասում ա.
— Ի՛նչ Տավիթ կա՛, տեսնում, քի ինչպես մարդ է,
Մենք իրարու խեթ կըխամաճանվենք։
Տավիթ ևի օր էրթում, Խանդութ տեսնում ա,
Չի համվենըվ, էրթում ա, ճակատ պագնում։
Ճակատ որ պագնում ա, ոտն էլ ա պագնում,
Խանդութ մե հատ էսենց պռնցքի զնրկում,
Էդ էլ շատ ուժեղ ա ըլնում,
Պռնցքի զնրկում, Տավրթի բերից արուն թափում ա,
Ասում ա.—Խանդո՛ւթ, մը՛ զնրկի, Խանդո՛ւթ, մը՛ զնրկի։
— Ախար, ման,—ասում ա,—ման կիտե՞ս,
Տո՛ւ անկարըութուն արիր,
Տո՛ւ իմ ճակատ պագիր, իմ հերես պագիր,
Իմ ծծերի արանք ընչի՞ պագիր։

Տեւ անկաթքութիւն արիր, նրա համար էլ զարկի քեզի։
Տրա խեւտ կամուանանա։

Նրա խեւտ ամուանանում ա,
Նրանից կրկնի Մհե՛ր։

Գ

ՓՈՓՐ ՄՀԵՐ

Մի ժամանակ էլ երկիր մնում ա Մհերի ծեռ,
Տասվիր մահանո՛ւմ ա.
Թե ինչ կնով մահանում ա՝ էտ էլ չկիտեմ, ախպե՛ր,
Էդքան պան ես կիտեմ։
Մհերը շատ հսկա ա ըլնում, շա՛տ,
Տասըվիից ուժեղ ա ըլնում։
Հրեշտակը կալիս ա, նրան ասում ա.
— *Տեւ ամբողջ դևերին պտի կոտորես,*
Երկիր պտի մնա քո ծեռը,
Երկիր պտի մնա քո ծեռը, Մհե՛ր։
Տա կռվում ա դևերի խեւտ,
Հաստչման ժամանակ դևեր շատ են ըլնում։
Մնում ա մե խատ Բաղբանդ դև.
էտ Բաղբանդ դեը շատ հսկա ա ըլնում,
Իրան տունը մե հատ սարի կլուխ ա շինում,
Իրան մեր ա ըլնում։
Մհեր էրթում ա, ըտրա խեւտ կռվում ա.
էրթում, ըտրա խեւտ կռվում ա,
Իրեք կիշեր, իրեք ցերեկ կռվում են։
Ըտրա պատռավ մերը ըլնում ա,
Իրա տղայի ոտնց տակ փոշի յա թափում՝ մոխիր,
Իսկ Մհերի ոտնց տակ՝ ատպռնով ճոր ա լցնում։
Իրեք օր որ քիմում ա,
Բաղբանդ դևին կռնում ա կևտին, վիզ կտրում ա։
Որ վիզ կտրում ա,
Արդեն ախշարքը էլ Մհերի տեմ մրցող չի ըլնի,
Շատ հսկա մարդ է ըլնում։

19. Էն ժամանակ սատանեն կալիս ա, Մհերին ասում ա.
— Մհե՛ր,— ասում ա,— տո՛ւ էտ երկիր ամբողջ ախտիր,
Պայց կարող է ասում խնամ էլ մրցես,
Երկինքն էլ մնա քեզի։
Սատանեն խափում ա տրան։
Եփ օր նրան խափում ա. տրա միտք փոխվում ա։
Ըտրա միտք փոխվում ա, բարա ամբողջ ուժը կորվում ա.
Կորվում ա, և ասում ա.
— Ես պի՛տ ասում խնամ կռվիմ։
Տեսնում ա, որ հրեշտակ իշնում ա տեմ,
Ասում ա.—Ահա՛, արի՛, ես, տո՛ւ կռվինք։
Հրեշտակի խնամ կռվում,
Հրեշտակ պռնում, տնում կեսին Մհերին,
Տնում կեսին, մե տեղին զնճիլով բարա ետ կապում.
Կախում ա ժառիցը։
Կախում ա ժառիցը, կարքատրում ա, որ.
— Քեզի մահ չըլնի,
Պայց ակռավ քու պլոճիկ ուտի,
Ու կռիկն էլ՝ անծեղն էլ, քու թռքեր ուտի,
Քեզի մահ չըլինի,
Տո՛ւ ասում խնամ մրցար։
Հենց էդպես կախում ա քարից,
Էդպես էլ մնում ա։

Սասնա Ծռեր

պատմեց
Շատախցի Մարթա Փիրումյան
Արտաշատ-Խաղբրաշեն գյուղ
գրառված է 1972 թ.

6—518

Մարթա Մալխասի Փիրումյաներ ծնվել է 1892 թ. Շատախի Հառատի գյուղում։ Ամուսնացել է 1908 թ. և հետո գնացել Շատախի Քրմենց գյուղը։ 1914 թ. զինվել է ամուսնուց։ 1915-ին գաղթել սկսել է էջմիածին՝ հոլերայից խուսափելու նպատակով, ուսական զորքերի առաջխաղացման հետ, գնացել է Վան, ուր ապրել է երեք տարի։ 1918-ին Վանից գաղթել, Պարսկաստանով անցել է Բաղդադ։ 1922 թ. վերադարձել Արևելյան Հայաստան, բնակություն հաստատել Վերին Արտաշատում։ Ութ տարի ետտեղ ապրելուց հետո, 1930 թ. մշտական բնակություն է հաստատել Ղամարլուի Քյահրեզ (այժմ՝ Քաղցրաշեն) գյուղում։

Անգրագետ է, ունեցել է երկու զավակ, որոնք վաղուց են մահացել. այժմ ապրում է տատրոջ հետ և որդեգրել է նրա զավակին։

1929—1962 թթ. աշխատել է կոլտնտեսությունում։ 1962-ից թոշակառու է։

Փիրումյանը «Վասնա ծոների» լսել է հայրենիքում, հորից՝ Մալխասից և համագյուղացի ու ազգական՝ իրենց «խրոխտպերանց» «արվտասորուս» Հովհաննեսից, որին «պապի» են կոչել։ Ամբողջ Շատախում Մալխասը ճանաչված է եղել, զինավարել է քառասուն գյուղ, ունեցել է շատ բշնամիներ, որոնք 1915-ին ննջեցյալ հորը սպանել են նրանց։

Մարթան բանիմաց, խոհուն, հաբաթ կին է, կրթվել, ներշնչող դիմագծերով. համագյուղացիների մեջ վայելում է մեծ սեր ու հարգանք։ Անձնական կյանքում դժբախտ, բարի ու բարյացակամ, իմաստուն ու խորհրդատու։

Մարթայի պատումն աչքի է ընկնում վիպական կայուն բանաձևերի, ավանդական շափածո հատվածների, երգային նմուշների առատությամբ (Հովհաննի և Դավթի հրաժեշտը, Գողպատան սյան կոտրելու միջոցները), բնորոշված հանգամանքների երբեմն իմպրովիզացիայի հանդես բառային ու տաղաչափական հորինումներով։ Վիպում է ներշնչված, եռանդով, անկաշկանդ, վիպի իրադարձություններին մեջտեղում։ Տեղ-տեղ պատումում է հուզական շեշտերով, հատկապես Սովինարի անձնազոհության, Դավթի որբության, Արտաշեր Պատվի անեծքի և նման միջադեպերը, ուր նա ներդնում է իր անձնական կյանքի փորձը, իմաստությունը, որոշ կերպ մոր տվայտանքները։ Պատումն աչքի է ընկնում ավանդապահությամբ, վիպական մանրամասներով, բայց և խնամի կենցաղի ապրումներով։

Մարթան վեպը լսել է նաև այլտեղ՝ Արևելյան Հայաստանում, բայց ոչ վարպետ վիպասացներից. վկայեց, որ վեպն սկսել են «Ողորմիսով». վկայեց, բայց չպատմեց, որ Մանասարն ու Բաղդասարը գնում են Նորից Բաղդադ, ազատում Սովինարին, բերում, ապտում խալիֆին, չարդում կուրերը և այլն։ Նշեց նաև Սոդրադին անհաջող հարկահանության ժամանակ Մարթա կանանց ծարերի միջադեպի գոյությունը պատումում, բայց այն չկարողացավ վերհիշել։

Ա

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

Խալիֆեն՝ Բաղդադա խալիֆեն էր,
Մեր Հայաստանի թակավոր՝ Գագիկ թակավոր։
Խալիֆի կուռքերը մեկ օր խալիֆին ասըցին.
— Խալիֆ՛, տուն պիտի կնաս Հայաստան,
Հայաստանի թակավորի ախճկան առնես՝ Տավինարին։
Խալիֆեն զարմացավ, կուռքերուն պատասխանեց, ըսաց.
— Առանց կռվի ես չեմ կարող էս ախճիկ պիրել։
Նրա մեծ կուռքը ըսաց.
— Խալիֆ՛,—ըսաց,—տուն չկնաք է էդքան վախկոտ
կրտնվես,
Հայաստանի թակավորի տեմ թեզ ատորացրցնու։
Խալիֆան ըսաց.—Ես պիտի կնամ,
Հառաչուտ էնպես համեքուշխ, ուրախությամբ ախճիկ ուզեմ.
Եթե տվե՞ց, մարդկություն արավ տվե՞ց՝
Ընդունում եմ ամենաքաղցրությամբ,
Եթե չտվեց՝ պիտի կռվեմ,
Անպահման ես պիտի Հայաստանի թակավորի խետ կռվեմ։

Աֆլիֆեն Բաղդադուց կելոս վերցուց,
Իր լավաբուն մարդերով նկավ Հայաստան,
Տիմավորից Գնգիկ Թակավորին։
Գնգիկ Թակավոր պատասխանեց.
— Ո՛վ Աֆլիֆա՛, — ըսաց, — ռնի ալլազդ, ես ալլազդ,
Ո՞նց կըլնի՝ ես իմ ախճիկ տամ քեզի.
Այդպիսի պա՞ն կըլնի աշխարքի մեջ։
Աֆլիֆան ըսաց.— Թակավո՛ր, — ըսաց, —
Քաղցրութունով էլ տաս՝ ես քու ախճիկ պոի տանիմ,
Կռվով էլ իլնի՝ պիտի տանիմ։
Ես քեզ տիմավորից՝ որպես քաղցրութունով տու քու ախճիկ տաս ինձի,
Թի չէ՝ կռվի ուժով կըտանիմ։
Գնգիկ Թակավոր ըսաց, — Աֆլիֆա՛, — ըսաց, —
Իմ հոժար կամքով, իմ էտ հայ կրոնի խաթար,
Ո՞նց կըլնի՝ ես ախճիկ տամ քեզի։
Էտ անկարելի պան ի,
Էտ պան իմ սրտի մեջ չի տոլի,
Եվ չեմ կարող անել։
Վերջ, Աֆլիֆան Թողից կնա՞ց։
Թողից կնաց Բաղդա՛դ, գուռքիրուն ըսաց.
— Գուռքի՛ր, — ըսաց, — ես ձեզ ասեցի՝
Հայաստանի Թակավոր մինչև կռիվ-կայմակայով չիլնի,
Ձուռի ուժով չիլնի,
Մի չենք կարող էտ ախճկան պիրենք։

2. Նրանք Թող կնան Բաղդադ, մենք կանք Տովինարի խոսքին։
Տովինար իրկուն մոտծից, ըսաց.
— Հայրի՛կ, իմ Թակավոր հայրի՛կ, — ըսաց, —
Ես մի հանճ եմ, իմ մեկ հանճ.
Տու էտ սաղ քու քաղաք, քու Հայաստան
Կուրբան մի՛ արա ինձի,
Ի՛նձ կուրբան արա պղորին։—
Տովինար խելոք ախճիկ էր, —
Ինձի տուր, ես կնամ, — ըսաց, —
Թող կռիվ չըկա էտ քաղքի վերեն,
Չըկոտորես էդքան ժողովուրդ։

Հայր մտածեց։ Հայր մտածեց, ըսաց.
— Իմ սիրե՛կ, քուն ինձանից լավ խելք պատկերացուց.—
Ըսաց,—որ կավեն, որ կոտրվեն,
Չեմ կարող հաղթել ես սաղ արաբ ազգին։
Տը կավեմ, որ կոտրվեմ.
Թող էս մե սիրեկի իրան բլնի։
Հայաստանի թակավոր լուր խուռ Բաղդադա Խալիֆին, ըսաց.
— Ես խելքի իկիր եմ,
Ամենահոժար կամքովս, իմ բաղդը արտավս,
Ե՛կ, իմ սիրեկի կտամ քեզ։
Ջրկովենք, նամարդություն չաննենք իրարու խետ։
Սիրեկի ըսաց.—Հայրի՛կ, կըգնամ։
Ու Խալիֆեն վերատարցավ ուրախությամբ,
Որ լավաքուն մարդիկ իսկ Հայաստան,
Մովինարին տարա՜վ։
Մովինար ըսաց.
— Հայրի՛կ,—ըսաց,—պան բրնե չեմ պահանջի՝
Կրտաս ինձի մեր քրհաննեն,
Մենայ իմ քրհաննեն կրտաս ինձի,
Մենկ էլ մեր խոհարար,
Էլ ոչ մե պան բրնե չեմ ուզի։
Թակավոր ըսաց.—Խալիֆա՛,—ըսաց,—
Կիտե՞ս ինչ կա,—ըսաց,—
Քաղցր արտով իրարու խե խոսենք։
Ասաց.—Իմ սիրեկի պահանջում ի՝
Իմ խոհարար, մեր քրհաննեն ես իմ սիրեկան խետ աննեմ։
Խալիֆան ընդունեց, ըսաց.
— Ընդունում եմ, Թող պերի խետ։

3. Խալիֆան վերցուց Մովինարին տարավ։
Մովինարին տարավ. Մովինար ըսաց.
— Խալիֆա՛,—ըսաց,—ես շատ ժամանակ եմ քենե ուզում,
Մինչև քեզ խետ ապրեմ, ամուսնանամ։
Խնդրում եմ, իմ տեղ առանցին կանես,
Քո տեղ առանցին կաննես.
Մինչև իմ ժամկետ կըգայ, իմ օր-բուսին կըգայ,
Որ ես իրա քի պատկ բլեմ, ամուսնանամ։

Խալիֆան ընթունեց՝ խալիֆան ընթունեց,
Ծովինար չոկ խոտ ուր օթաղ,
Ուր խոհարար չոր խնա, ուր քրհաննն չոր խնա.
Ուրնց ժամ, բոպեն պիտեն,
Թի Ծովինար ինչպես կըշարժվի։

4. *Անցավ առժամանակ. Քև ամիսներ ընցավ, Քև տարիք ընցավ,*
Ծովինար մեկ օր մտածեց, մտածեց, ըսաց.
— Ասե՛ր խալիֆային,—խոհարարին ըսաց,—
Ասե՛ր խալիֆային՝ էսքան ժամանակ փանտարիված եմ իրա շնորհում,
Վուչ մե տեղ չեմ տիսեր,
Վուչ մե ուրախության բոպե չեմ տիսեր,
Ինչ կըլնի, Քող Քուլ տա՝
Ես մե իլնեմ արևու տեմ, մի կնամ մահ կալ,
Կոնե մի քանի խատ հարս, ախճիկ ձի Համիտու տենն,
Ես կնամ մի մահ կալ, մի արևվիրևս տիսնամ,
Մի աշխարքի վերևն արև տիպնի իմ սրտին,
Իմ բնկերքիրու խե կոնե ուրախ սրտով
Իրկուն տուն վերատառնամ։
Այդպես կնացին, խալիֆային պատմեցին,
Թի Ծովինար էդպես պահանջ ի տնում։
Ասաց.—Շա՛տ լավ ի, չի խանգարի,—խալիֆան ասաց,—
Չի՛ խանգարի, շատ լավ պահանջ ի տրեր։
Առավոտուն կանչեց, կանչեց ֆայթոններ իսի՛,
Մի քանի ուր Քայտաշ ընկերներ՝ հարս ու ախճիկ,
Հավաքեց իտի Ծովինարի խնա,
Ծովինարին օրոխկեց մահ կալու։

5. *Կնացին։ Կնացին մի լա՛վ տեղ, հեռու տեղ նատան։*
Ինչ ասեմ, էնպես տեղ ի, որ ծովու հափ ի։
Էս ծովու հափին նստան ընկերներով,
Ասին, խոսին, ուրախացան։

---

* «Էտ ժամանակ, իմ լսածով, պոլսո ֆայթոններ ըլեր իր։ Նահ. վիպասացի։

Սովինար խոր մտածում է,
Ուր սիրած սեր մարդ չի, սեր՛ չի,
Իմ մեկավան սրտիցն է։
Սովինար ըսաց.—Ախճկի՛ք, տուք ծեր կերըխում տրնք,
Ես մեկ էլամ մի քիչ ման կամ էս ծովու հափին։
Սովինար կնաց. շատ կնաց ծովու հափին,
Ըսեմ՝ ըսահղնն մեր կեղի կենտրոն,
Կնաց ծովու հափին,
Հանկարծ, Սովինար ծարավ է։
— Ի՞նչ պիտի անեմ, աստվա՛ծ։
Կնաց, ծովուն մոտացավ,
Ծովու մեջ աստու շնորհիվ մե բարվազ պացվավ,
Սովինար էտ բարից պնվ իտու՝ էն բար անցավ։
Աչքից՝ էն բարի տակին մի կեղնցիկ հախպուր.
Էտ կեղնցիկ հախպորու պուրըմ ճոր խմավ.
Մի պուռ լիք խմավ,
Մի պուռ էլ կիսատ խմավ։
Ու նո տատից, փտոք իտու աստուն, ըսաց.
— Փա՛ռք քեզ, տեր աստվա՛ծ,
Մարդուր ճոր ինչպե՞ս տուս էկավ էտ ծովու մեջ,
Ես էտ ճոր խմեցի, հըլյացա ուրըն,
Սիրտս մխիթարվեց, շատ հանգստացա։
Այդպես իր խոսը խոսելով՝ էկավ խոտավ ընկերներուն։
Էկավ խոտավ ընկերներուն, մտածում է, ինք.
«Տե՛ր իմ, իմ սիրտ ի՛նչքան հանգստացավ,
Իմ խիղճ ինչքա՞ն հանգստացավ իմ սրտում»։
Է՛, յիրես ավին էկան։
Սովինար կնաց իր պալատ.
Սովինար կնաց իր պալատ, այդ բոլծ էդպես մնաց։
Շատ ժամանակ անցավ,
Սովինար կամա՛ց-կամա՛ց ուր վերևն զարթնում է.
Սովինար հըղիացավ՝ էտ պուռըմ կիսատ ճրով,
Պուռըմ լիք ճրով։
Սովինար մտածում է, ուր կտի մեջ տանջվում է, ինք.
«Աստվա՛ծ, էտ ի՞նչ էր էկավ իմ կլխին,
Չէ՞ որ ես կուս իմ մորից ծնվիր եմ,
Կուս ախճիկ եմ աշխարք իկեր,
Էտ ի՞նչ էկավ իմ կլխին»։

6. Անցան ժամանակներ։ Մի օր տեսավ՝ արհան...
Խնլիֆեն լուր առնց ունի մի մարդուց՝ Մովինար հղիացեր։
Մովինար հղիացեր... Գուռբին ասաց.
— Ի՞նչ անեմ։ Այդպիսի պա՞ն կբլիներ,
Չէ՞ որ ես անուր ժամկնա եմ ավեր,
Այլևս տրա ծոց չեմ մտեր...
Թի նա հայ ազգ էր, Քշնամի էր ընձի,
Նա որտեղո՞ն հղիացավ, ես չկիտեմ։
Ջուչ գուռբին հարց իտու, Ջուչ գուռբ ասաց.
— Նրա տեղ էն է՝ վիզ կտրնա, մորքի՛.
Աասվատան կանչի՛, մորքի՛։
Նա ապրող չի, նա չբսիտաբ է ապրի քու անվան տակ,
Որ նա քու անուն խորտակեց.
Թի նա ինչո՞ւ էտ խոլ մեր կլխին։
Կրնշանակի՝ հայ ազգ էր,
Ուր սիրտ խնն մի բաղդր չելավ,
Չմիացավ խնն քե էսբան ժամանակ,
Հիմա էլ էտ փորցանքը՞...
Տրա վիզ կտրի՛։
Էն աասվատան Խնլիֆան միտք արավ, չալադին կանչեց,
Որ տանի Մովինարի վիզ կտրի։
Տարավ չալադին կայնրացնց, որ Մովինարի վիզ կտրի,
Մովինար ըսաց.—Ասի՛ք Խնլիֆին՝
Էրիսհոդով մե տեղ կարելի՞ ի վիզ կտրել.
Ոսղ համփերի, մինչև ես կազատվիմ, էն ժամանակ ներ։
Էն մանկուկ քո՛ ազատվի, չլմ վիզ կտրի։
Այդ էլ Մովինարի խելբ։
Գնացին, էտ լուր տվին Խնլիֆին.
— Խնլիֆ՛,—ասին,—Մովինար այսպես է խնդրում։
Ուրեմ, կնշանակի՝ լուս ի տրա սիրտ, միամիտ բլիր։
Համբերութուն տո՛ւ, մինչև ին ամիս կբլրանա։
Խնլիֆան համբերութուն իտու։

7. Ին ամիս ընցավ։ Ին ամիս ընցավ, տհաճիկ ազատվավ.
Աասված իտու՝ ճուխտըմ լաճ տղա։
Ճուխտըմ լաճ տղա ունեցավ Մովինար.
Է՛, լուր տարան Խնլիֆային.

— Խաչիֆա՛, — ըսին, — աշքդ լո՛ւս,
Ճուխա տղա ես ունեցեր, առանց մխանալու
Խաչիֆան ըսաց Մեծ գուրքին,
Ըսաց. — Ի՞նչ անեմ այստեղ
Ըսաց. — Ի՞նչ անես, հարկավոր է վիզ կտրել,
Այլևս պահել չի լինի
Քոթծ ընկավ քրհանային.
Բա քրհանան ինչի՞ համար ի տարեր,
Չէ՞ որ ինք այդպէս պատուղ էր.
Քոթծ ընկավ քրհանային, քրհանան ըսաց.
— Խաչիֆա՛, — ըսաց, — Լեն տեղ բու մարդկութուն արիր ես,
Լավութիւն արիր ես, ին ամիս պահեր ես,
Ին ամիսից հետո ծծից կտրվեն,
Ձոմ փշու մը էտ երեխաներ ծծից կրկտրվեն,
Կոնն ին ամիս իրանց մայրական ծիծ ուտեն,
Ին ամսից հետո ծծից կտրվեն,
Քու ետր բոլ,
Մի որ օր գյո՛ւ բու խնամքի տակն ի։
Խաչիֆան լսավ քրհանային, ժամանակ ավից Սովինարին։
Ժամանակ ավից՝ էտ տղաներ տերտերը կնքից.
Մեկ անուն խոր Սանասար, մեկ՝ Բաղդասար։

Տ. Սանասար, Բաղդասար օր ը՛օր կըմեծանան,
Օրեն կըլնեն տարեկան տղա։
Որ էկավ նուն տարին լցվավ,
Անցավ էրկու տարվա մեչ, ին էրկու տարի կիսկան,
Էդբան համբերութուն Խաչիֆեն ունեցավ,
Տա էլ տատուժմեն էր,
Նորից Ջոչ գուրքին հարց խոսե, ըսաց.
— Մեծ գո՛ւռ, — ըսաց, — ի՞նչ անեմ։
Ըսաց. — Ի՞նչ անես. արդեն տղաներ հասունացած են,
Իրըթի վիզն էլ մեանկ կտրի՛, — ըսաց, —
Վերջըվերջո նրանք ինձ Քշնամի կըտառանան,
Վիզ կտրի՛։
Էդտեղ Սովինար լսավ, լուր հասավ Սովինարին.
Սովինար էն առավոտն էլավ մտածեց, ըսաց.
— Որդինե՛րս, — էլած են ըսենց քնիվրնեկ տղա երկուսն էլ, —

Որդինե՛րս,—ըսաց,—խալիֆան որոշեր է՝
Ըսօր մեր երբքի վիճն էլ տը կտրի։
Կոնն առաք փախնք էրկու ախպերով,
Նրա քաղքից առաս էկնք,
Իմ վիզ կրկտրի, թո՛ կտրի։

Ց. Երեխաներուն փախցուց։ Երեխաներուն փախցուց,
Երեխաներ ընկան սար-բար, էստեղ-էնդեղ, էստեղ-էնդեղ,
Վերջապես, երեխաներ գնացին էնպիսի մի թակավորի ծեռ ընկյան՝
Է՛լ անսահմանելի, բսեմ, մի մեր Օսմանլըվի թակավորին հասնելնուն։
Սահասար Բաղդասարից խելոք էր.
Սահասար բսաց.—Բաղդասա՛ր,—ըսաց,—
Կնանք էտ թակավորին ասիամավորնանք,
Կոնն մեզ բրնս առնե ուր ժողովրդի մեջ,
Կարողանանք մե տեղ ապրել, մեր կլուխ պահել։
Կնացին ասիամավորին էտ թակավորին,
Թակավոր վերցոց էտ էրկու տղային,
Վերցոց ուր քաղքի մեջ, իտու մե մարդու խնամքի տակ։
Վերջապես, էտ տղաներ ուրանց խամար քանի օրով ապրան.
Հանկարծ կոխվ էկավ էտ թակավորի քաղքի վերևն։
Կոխվ էկավ էտ թակավորի քաղքի վերևն.
Թակավոր լուր օղարկից, բսաց.
— Արե՛ր,—բսաց,—մեր խետ միացե՛ր,
Մենք կնանք էտ մյուս թակավորի տեմ կոխվ։
Սահասար ի՞նչ ասրավ էդտեղ։
Թակավոր բսաց.—Սահասա՛ր, տուր՝ մեկ ինձ խե միացե՛ր,
Իմ էն հզոր ոզիրի խետ միացե՛ր։
Սահասար.—Չէ՛,—բսաց,—թակավո՛ր,
Մենք էրկբսով միևակ միանանք,
Տուր էրկբսով ծեզ խամար առանձին կնացեք.
Հախթանակ ինչպես կբտարվի՝ կբտարվի։
Թե զոհ կնանք՝ մենք կնանք,
Հառաչի տեմ մենք զոհ կնանք,—
Էդպես խնթրբվավ էն թակավորին։
Ու կնացին կռի՛վ։

Կնացին կռիվ էրկու ախպերով միասին,
Ու հախթանակ տարավ Սանասար, Բաղդասար։
Դրանք ուրանց կռիվ հախթնցին, վերադարձան էկան։
Էկան միասին նսաան։ էտ թակավերի ոգիը ասաց.
— Թակավեր ապրած կենա՛ք,—ըսաց,—
Նթե էտ մարդիկ տո՛ւն պահես մեր քաղաքի մեջ,
Քու հովանության տակ,
Վերջ էտ մարտկանցից քեզ շատ վտանգ կըպատահի։
Էնպես իմացի, որ էտ մարդիկ քեզանից հզոր ուժս կըկյան,
Հախթանակ ուրընց տըլնի,
Տո՛ւն էնոնց դեմ կանգնեքանաս։
Յիսի օր էտ ոգիը էտ պան ասաց,
Թակավեր կանչեց Սանասար, Բաղդասարին,
էտ առավատն չէթող հըրտպի վերեն բնցըներ.
«Հո՛, ուրեմն էդքան հզոր են, էտ հախթանակ տարան,
Պարդ պան է, իմ կլխուն հուրիշ պան կըպտրենն»։
Վախեցան էտ մարտկանցից,
Յեկան ուրընց քաղքից ուսա վռնդին, ասին.
— Կնացո՛ր մեր քաղքից, տո՛ւն մեզ պետք չեր։
էտ մարդիկ կնացի՛ն, կնացի՛ն,
Կարիր ուղա են, քուջուխ են հա՛լալ,
Չեն կիսի ապռեղ են, որռեղ ընոնց տեղըմ ըլնի։

10. Կնացին մե հո՛ւրիշ թակավերի հոդի մեջ։
էտ թակավերն էլ էլի անպետք քուրդական թակավեր ի.
Տեմըցին էտ քուրդու թակավերին, թի.
— Մենք էսպիսի անտեր զավակներ ենք,
Մենք իկիր ենք քեզ տիմավորելու,
Մեզ վըրցի՛ քու հովանության տակ,
Մեր խամա աշխատենք, ապրենք։
էտ էլ ընդունեց, որդի՛ս,
էտ էլ վերցուց ուր հովանության տակ։
Մնացին էտու հովանության տակ,
Թի մի տարի, թի կես տարի.
Էդքան չեն կըրնա համփըրում էտտեղ,
Որովհետև ուրանց սիրտ անհանկիստ ի։
էտ մարդիկ էլան, էլի թշնամըթեն ասին.
Պայց ուրիշներ ուրենց պան խրտր արին,

Որ հարց տվնցին, Թակավոր ըսաց.
— Որտեղացի՞ եք։
Ասին,—Մի Բաղդադա Խալիֆի տղաներն ինք։
— Օ՜հ, որ Բաղդադա Խալիֆի տղաներն են,
Անպահման տրանցից վտանգ կա։
Էտոնք էլ վնխեցան,
Էտոնք էլ ուրանց խոսքից են կայնան։
Էտ էրկու տղան նորից կնացին։

11. Կնացին, կնացին մեր Մուշ։
Մշու կողմ մի տեսակ կեղի անուն կա,
Պռնակի՞ն կըսե՞ն, ինչ կըսեն... Դռաշի՞ն...
Էզպես մե կոպիտ անուն.
Կնացին էն կեղ, էն կեղ օտըվանան*։
Էն կեղ օտըվանան էրկու ախպրով,
Էյան էտ սա՞րը, քար ֆռալով,
Էտ կեղ հայ Թակավոր ի,
Հայ Թակավորին տիմավորին,
Հայ Թակավոր ընթունեց ուր աչքի վերևն,
Ըսաց,—Իմ Ժողովրդի մեջ ապրեք.
Թե տու լավ մարդ եք, լավ մարդու տղա եք,
Մեզ կտեր եք իմ խող-ճրու մեջ,
Իրավունք ունեք աս իմ խող-ճրու մեջ ապրիլ։

12. Էտ էրկու ախպերով էզտեղ ի՞նչ տը աննե։
Առավոտն էյան ընկան սարը, քար,
Ֆռալավ կնացին, պատահան ծովուն։
Կնացին, պատահան ծովուն,
Էտ Բաղդասար Քոզ մնա ծովի էս կողը,
Մանասար ոտեր չըտեց, իտու ծովի մեջ։
Մի բանի քայլ կնաց, տեսավ՝ մի քարվազ պացվավ.
Մի քարվազին կնաց, մոտացավ,
Ըսենց կզվավ, ծնո իտու քարվազին, ըսաց.
— Էսա մեծական պան ևն,—խելոք տղա էր,—
Ըսա մեծական պան ևն, տրանամ՝ մե էյություն չկա՞։
Քարը շուշնց, տեսավ՝ մի խատ պյամ, ձիու պյամ.

* Օտըվանան—օթևանցին։

Գյամբ քաշեց, խըտ քաշելուն՝
Քուռիկ-Ջալալին տո՞ւս էկա՞վ։
Քուռիկ-Ջալալին տո՞ւս էկավ,
Սանասար Քոռավ, կլխին պաքեց,
Պայց Բաղդասարի վերեն կորա՞վ.
Բաղդասար մնաց մեննակ էս կիշերն էլ։
Էս խեղճ տղեն տեսավ՝ ինք մնաց մեննակ
Էս սար-բարի մեջ, վայրենի տեղ,
Կիշեր կըոխտա, ցերեկ կըոխտա։
Սանասար ի՞շ ար անի՝ Քուռիկ-Ջալալին նստավ,
Տավու էն եզր կա,
Է՛, էն եզրք չըկիտի՝ ծո՞վ ի, Քի՞ տուրան տեղ ի,
Թե տաշտ* ի, թե ինչ ի.
Տավ անու խամա էդն մի տաշտ,
Քուռիկ-Ջալալին գյո՛ տակն ի,
Քուռիկ-Ջալալին իմաստուն ձի ի.
Տրան էխան ծովուց, էխան տո՛ւս։
Տավուց էխան տո՛ւս, նա կնաց,
Կնաց տեսավ՝ իր ախպեր էնքան ի ոխպացիր,
Ամեն աշք էղեր էդքան։
Պարև խոու ախպոր, ախպեր չի ճանաչի, որ Սանասարն ի։
Ըսաց.—Պարե՛ քեզ, Բա՛ղդասար ախպեր,
Չէ՞ որ մենք ախպեր ենք, ընչի՞ մոռացար ինձի։
Ըսաց.—Չեմ հիշիր, ախպերս կուրցրիր եմ,—ոխպաց,—
Կուրցրիր եմ, ծովու մեջն եմ կուրցրցիր։
Ըսաց.—Քու ախպերն եմ, լա՛, օյաղացիր, քու ախպերն եմ։
Ախպորն էլ օյաղացրցուց,
.Յելան ուրանց Քուռիկ-Ջալալին նստան,
.Յելան սար վեր։

13. .Յելան սար վեր, հա՛ տեսնում՝ էտենց մի պանցր սար,
Մի պանցր ծո՛ր, էննենց տյուր կրկյա նրանց,
Քանի կըպանցրընան՝ սար, քար իրանց թաղցր կըտա։
Կնացին, էլան էտ սարի կլոխ,
Կիշեր քնան էրկուս միասին։

* Տաշտ—դաշտ։

Սանասար ըսաց.—Բաղդասա՛ր,—ըսաց,—
Ես ըսօր մտածիր եմ, մեղ խրմա մի տուն շիններ էառեղ,
էառեղ աններ մի օտըվան, էառեղ ապրիներ։
Ըսաց.—Ինչպէ՞ս կըլնի։
Ըսաց.—Շատ լավ կըլնի.
էառեղ աններ մեր շենութուն, մեր խանմա ապրիներ։
էլան էդտեղ որոշեցին իրանց շենութուն,
Պայց չեն կիտի հըլա՝ ինչ պիտի անեն։

14. *էդտեղից նորից էկան էն կեղ,*
Որ ես դյո անուն մոռացիր եմ,
*Իշան էն Սասունա կավառն**,
Իշան էն կավառի մեջ, մե պարեխիղճ մարդու պատահան,
էտ կեղի տանուտիրոջ պատահան։
Կեղի տանըտերի խետ ապրան առժամանակըմ.
Կեղի տանըտեր տեսավ՝
էտոնք զույքով էլ լավ ապիզ տղա են։
Կեղի տանըտեր նրանց հրավիրեց ուր խնամքին.
Մի տարի էլ անու խետ ապրան։
Արդեն տղեյներ ուրենց հասակ տուին,
Ուրանց խելրի չափ խասան։
Մի տարի էլ էտու խետ ապրան,
Տարուս վրա Սանասար խնդրվավ էն տանըտերին, ասաց.
— Ննդրում եմ,—ըսաց,—մեղի մի օտըվանատեղ տու,
Մենք տեղ կաիր ենք, պայց չենք կարող մենակ ապրել։
էտ կեղի տանըտեր պարեխիղճ էր,
Ըսաց.—Ո՞ւմ տամ քեզ խետ։
Ըսաց.—Ով եառամնա յի, ով բյասիր ի, ավուր խաց տուն չկա՝
էն կուզեմ իմ խնամքի տակ։
Մի տաս տուն տաս ինձի, բոլ ի, տաս տուն, ավել չեմ ուզի։
էտ պարեխիղճ մարդ չելավ տուն իտու, ժողովուրդ իտու։
էտ ուր տուն արդեն կիտի, որտեղ տի շինի։
Կնաց էնտեղ, ուր Սասուն կառուցեց։
Ըսաց.—Բաղդասար ախպե՛ր, հառաջ մեր տուն սկսե՞նք,
Թե՞ մեր ժողովրդին։

---

* *Կավառ—գավառ։*

Բաղդասար ըսաց.—Սանասա՛ր, տո՛ւ կիտես, քու խելքո՛վ արա՛ւ
Ըսաց.—Իմ խելքո՛վ՝ մենք հառաջ մեր ժողովրդի տուն շինենք,
Որ տրանց սիրտ քաղցր ըլնի մեր վերեն,
Օտեվանենք, իրար խետ ապրենք։
Մեր ժողովուրդ կարեւոր ի,
Մեր տուն եփ էղնի, մենք կարող ենք շինել։
Էլան ուրանց ժողովրդին տուն շինըցին,
Ժողովուրդ միացըցին, հայի տեր արին,
Աստված ուրանց շնորք խաու, խելոք մարդիկ են,
էս ժողովուրդ իրանց խետ տուն շինըցին, ապրին։
— Մենք պիտի մեզի մե վանք կառուցինք, ժողովրդից հետու։
Յելան կնացին, Սասմա վանք կառուցին, ժողովրդից հետու,
Նոր էկան ուրանց օտրվան շինըցին։

15. *Մի օր մտածում ի Սանասար, ասում ի.*
— Ի՞նչ անենք, մեր շենքն էլ կառուցինք,
Մեր վանքն էլ կառուցինք,
Պայց ըստեղ ո՞նց անենք, որ մեր անուն առեղծենք,
Ինչպե՞ս անենք, մեր անուն առեղծենք։
Եվ Սանասար նստավ Քուռիկ-Ջալալին, կնաց։
Հիրես խաու մե հետո՞ կեղի,
Տեսավ, պանվորուհուն ըստեղ կաշխատի.
էս պանվորուհուն տեսավ մե ծիրունի պապիկ,
Ուրանց պահակ ի։
Սիրունի պապին խնդրվան.—Սիրունի պապի՛կ։
Ըսաց.—Հա՛մեն։
Ըսաց.—Սիրունի պապի՛կ, մենք իկիր ենք հետև քի,
Տո՛ւ մեծահասակ մարդ ես, ծերացիր ես,
Աշխարքի կարգ-կանոնից շատ պան կիտես,
Խնդրում ենք, որի մեր խետ,
Մենք քեզ տանենք մեր տուն, հուրսախրենք,
Էնտեղ մե մուրազ ունենք,
Մեր մրրազ կարող է տո՛ւ կատարես, մեծ մարդ ես։
Սիրունին վերցրեց ուր խետ, իսի էկավ Սասուն։
Իսի էկավ Սասուն, ասաց.—Սա եկեղեցին ի,
Պայց իմ տան, մեր կեղի անուն տո՛ւ պիտի առեղծես։

Սիրունին ման էկավ իրա շէնքի պուլոր,
Իրան վանքի մեջ մտավ, իրան ժողովրդի մեջ ման էկավ։
Սիրունին մտածեց, մտածեց, ըսաց.
— Որդինե՛րս, ի՞նչ կարող եմ ասել,
Ըստեղ անուն ասեմ Սասուն,
Որ բանենց սասում կերծ եր արել.
Մեր անուն կնքում եմ Սասուն,
Սասմա վանք, Սասմա ժամ, Սասմա կյուղ,
Մեր կյուղի անուն՝ Սասում։
Էդտեղնեն Սասուն կասուցվա՛վ։

Բ

ՄՀԵՐ

16. *Մենք էտ պատմութիւններ պուլոր ծողնենք,*
Գանք ճիշ Մհերի մասին, որ Տավրոսի պաղն ի.
Ճիշ Մհեր Տավրոսի պաղն ի։
Սանասար, Բաղդասար ճիշ Մհերի ծնող իլեր։
ճիշ Մհերն էլ անցավ,
Էկանք խասանք Պատի Մհերին.
Պատի Մհեր ճիշ Մհերի որդին է։
Ճիշ Մհեր ունեցեր մեկ՝ Մհենով Հովան,
Մեկ՝ Տաւրոսի խեր՝ Մհեր.
Տրանք էրկուս ախպեր են։
Ճիշ Մհեր կրկնա, կրպատահի,
Շատախ ուզում է կնա, կրպատահի մի վայրի տեղ,
Կոխվ կրկյա իր վերեն,
Ճիշ Մհեր էնտեղ կրսպանվի,
էտ պատի տղայի անուն նորից կրկնքյեն Մհեր։
Կանք Պատի Մհերի պատմութուն։
Պատի Մհեր ինչքան խաղաղություն սիրեց,
Մարդկություն սիրեց այլ ասկիրու խետ,
Որ մինչև ուր Սասուն, ուր մուրազով կասուցեց,
Արավ Սասուն, Սասմա անուն։
Վանք կասուցեց՝ էն Պատի Մհերի գործություն է,
Քուռիկ-Ջալալին մնաց ուր ծեռ.

Քուռիկ-Ջալալին Սանասար, Բաղդասարին ի,
Պայց խասավ Ճոշ Մհերին,
Ճոշ Մհերի ծռանեն խասավ Պասի Մհերին։
Պասի Մհեր պասկվավ, կնաց հուրիշ ասիից ախճիկ իպի,
Բայց ինչ կռվով, ինչ ծեռվ՝
էս երկար պատմութիուն չեմ կարող անել,
Շատ չարչչար տանջանքով Մհեր պատակվավ։
Մհեր իպի Խանդութ խաթունին.
Խանդութ խաթուն Մհերի կնիկն ի։
Հայա չկա Տանվիթ։

17. *Մհեր սերվավ Մարա Մելիքի մոր խետ։*
Մհեր կնաց Մարը, յոթ տարի մնաց Մարը,
Սերվավ Աամի խանումի վերեն,
Աամի խանումից չի ուղի հեռանա։
Յոթ տարին լրացավ։
Յոթ տարին լրացավ, Աամա վանք էկավ միտք, ըսաց.
— Հե՛յ,—ըսաց,—կուրիր եմ իմ ասկությունը,
Կուրիր եմ իմ կարողությունը,
Կուրիր եմ իմ սերմ-սերունդը,—դժարացավ։
Մհեր վերադարձավ Աաուն։
Խանդութ խաթուն խարամեր ի Մհերի տեսքը, տեսակը։
— Որ նա խասվավ ալլաակի, ես նրա կինը չեմ,
Քանի որ սաղ եմ, որդեր մարմնով պտի վերեզման
մանեմ,—
էս Խանդութ խաթուն է ասում,—
Ես է՛լ Մհերի խետ ալլես վուշ մի հարաբերութուն,
Վուշ մի մարդ-կնոդութուն։
Այդ տեղեն Մհեր որ վերադարձավ,
Խանդութ խաթուն ըսաց.
— Ես քեզ խետ ապրող չեմ։
Յոթ տարի տոն քո կրոնը կոխրցիր,*
Տոն քո արքար մարմին ուրացար,
Տոն ինձ էսպես աշքիատվից թողըցիր,
Իմ վանքից, իմ եկեղեցուց, իմ մեռոնից, սրբութենից զրկեցիր,

* Քո—Խ.

Էլ որտե՞ղ ես խը քի մխանամ։
Շատ վեճ ընկավ մարդ-կնդյան մեջ։
Շատ վեճ ընկավ մարդ-կնդյան մեջ,
Վերջ-վերջո, Մհեր, պատմութուն էդպես է ասում,
Ուր արքայական կիրք*, օրնեքա կիրք խոր հիուշն,
Կարթաց ամրողջ կիշեր...
Յոթ օր անվերջ կարթաց.
Յոթ տարին արավ յոթ ամիս,
Յոթ ամիս խի արավ յոթ շարաթ,
Յոթ շարաթ խի կայներցրնց յոթ օր,
Յոթ օր խի՝ յոթ րոպե,
Էն կիշեր միացավ հանդուպ խաթըմի խետ։
Միացավ հանդուպ խաթըմի խետ ուր արքայր գրքով,
Ուր արքայր օրենքով.
Էն կիշեր ստեղծվավ նրանց Տավիթ։

Դ

ԴԱՎԻԹ

18. Երբ որ ստեղծվավ մեր Տավիթ,
Մահացավ հանդուպ խաթո՞ւն։
Մահացավ հանդուպ խաթուն, Մհեր մտածից.
«Մե՞վ իմ մանկուկի պահող ըլնի,
Ոչ ոք չունեմ, բացի Աամի խաթուն,
Ես կըլնեմ իմ երեխեն խաստամ անու ծեռ,
Թող իմ երեխեն պահի, խնամքի, մեծացի,
Ես իմ հարստության կես նրա ըլնի»։
Յելավ, ուր երեխեն մեղրով,
Յոթ ըխտու պես մեղր ի պատցեր,
Յոթ ըխտու պես կարաք ի պատցեր,
Ինչքան սնունդավներ իրեր ի տարեր,
Ուր հարստութուններու կիան ի տարեր,
Տարավ, դնաց Մարա քաղաք,
Ուր երեխեն հանձնեց Աամի խաթունին, ասաց.

* կիրք—գիրք։

— Ոչ որ չունեմ, բացի քեզ,
Իմ երեխի խնամքող տուր ես.
Մեր դիմեր իրարուց ճոկ,
Պայց քանի որ ես խա՛ք քի ապրիր եմ յոթ տարի,
Պիտի էտ երեխուիրը չկոխես,
Իր որդի Տանվիրը վերցես քու խնամքին, պախես։
Ասմի խաթուն բասց.
—Մի խատ տղա ունեմ՝ Մելիք անունով,
Քու տղեն էլ՝ Տանվիրն էլ, Մելիքի ախպեր իլնի,
Քանի որ ես սաղ եմ։

19. Ասմի խաթուն խնամքեց Տանվրիո՛ն,
Խնամքեց Տանվրիին, Տանվի՛ր,
Ասուած զորութուն է տվեր, օրըօր կը մեծանաս։
Տվեց Մհերն էլ մըհացավ։
Ասմի խաթուն բասց.
— Մելի՛ք, որդի՛ս, քանի որ Մհեր
Էտ մարդկութուն մեր խես արեր,
Ուր տղեն տարըրնեմ տասներուք տարեկան երիտասարդ,
Մհերը ուտելիքը, հագնելիքը, ապրուստը ուր տղին մեզ
ավեր ի,
Մեզ հասցրցեր ի։
Ես պարտավոր եմ իրան տղեն պահեմ, մեծացրցեմ։
Մելիք բասց.
— Մե՛ր,—բասց,—այդ քու գործն ի,
Ես չեմ կարող էտ տեղեն խոսել, ես քու որդին եմ։
Մելիք խասուկ տղա ի։
Վերջ, էտ կինը պահեց էտ տղային,
Խնամքեց, ինչպես ուր սրտի պահանջն էր,
Խնամքեց, մեծացրո՛ւց։

20. Ամեն օր Մարտ Մելիք կառնի օրեն,
Տասվերկու խատ ուր ֆեհրիդ-փահլեվան կա,
Կրտանի ուր ֆուտբոլի տաշտ, ուր ֆուտբոլ կրխաղաս։
Դրանց ֆուտբոլ մեր տեսակ չի ըլեր,
Դրանց քնդակ երկաթից իլեր։

Դրանց խրամ ի զարկած, խրամով կրկովեն,
Խրամ մը էս կլոխ, խրամ մը էն կլոխ։
Էս տասվերկու ֆեհրիզ-փահլևան կրկովեն,
Մելիք անջատ կընստի, ուր խամար քամաշա կանի ուր քնֆին։
Շատ էդպես, քիչ էդպես.
Մեկ օր Տավիթ ուր խելք իսի ուր վերեն, ասաց.
«Էսա մե տեղ կէրթա, ես պիտի հետևիմ էսոր»։
Մեկ օր էկավ կպավ Աստի խաթունի յախեն, բսաց.
— Ա՛յ մեր,—բսաց,—քի նա քու որդին,
ես էլ եմ քու որդին.
Նա ամեն օր կէրթա, կիշեր կրկյա տուն,
Ի՞շ կըլի, մեկ օր էլ քըլա ես հետը էրթամ,
Տիանամ՝ նա դի՞ր կէրթա, ի՞նչ կանի։
Ես իսի փանդավէր չեմ, ես է հասունացած տղա եմ,
Ես կուզեմ էտ մարդու խետ կնամ,
Կոնե մի պան էլ ես սովորեմ։
Մեր բսաց.—Ա՛յ որդի, հնայա քու ժամանակ չի՜,
Տնի հըլը փոքր երեխա ես,
Ի՞նչ գործ ունես էտոր խետ, էտոր հաշըվներու խետ։
Բսաց.—Ի՞նչ կըլնի, քամաշա ի,
ես էլ կնամ, քամաշա անեմ։
Մաղ օր ես փանդավէր, մենակ մանեմ էտ տուն վե,
Ի՞նչ կը խասկընամ,
ես էլ խան եմ, մարդ եմ, էլի՜։
Իրկուն Մելիք սարից էկավ ուր ֆեհրիզ-փահլևաններով,
Ուրախ-ուրախ նեռս մտավ, մերը տխուր ի՜։
Մերը տխուր ի, բսաց.
— Մե՛ր,—բսաց,—ինչի՞ ես տխուր։
Բսաց,—Ա՛յ որդի, էս օրաբուն տուն կնացել ես,
Էդ երեխեն կը լացի առավըտեն մինչև հիմա,
Ոչ կիրեր, ոչ խմե։
Բա.—Ինչո՞։
Բսաց.—Կրսե՝ ես էլ իմ մախտոր խետ էրթամ,
Հա՛մ ման գալ, հա՛մ պան տեսնամ,
Հա՛մ ուրախանամ իրանց խետ։
Բսաց.—Ա՛յ մե՛ր,—բսաց,—
Տավիթն էլ վեր տրեր քնուկ, հուշք կնացև,—

Ըսաց.—Ա՛յ մե՛ր,—ըսաց,—նրանք օյու ծնք են,
Խեղ տաքացավ՝ մեղ ալ կծնեն։
Ըսաց.—Թուլ տո՛ւ էտ պանիր,—ըսաց,—
Մի սովըրցըցի,—ըսաց։
Մոր համոզնց, մոր խելքի խպի։

Մնաց, էն առավտուն
Մելիք Քող առնե ուր ֆերիզ-փահլևվանքաեր,
Կնա ուր ֆուտբոլի տաշտ, ուրանց քևֆ-ուրախութուն,
Էտ տղեն մնա տխո՛ւր, մալո՛ւլ,
Մոր իրնս վե կըտխպա մինչև իրկուն։
Իրկուն նորից Մելիք կըկյա սարից,
Մեր կըսե.—Ա՛յ որդի,—կըսե,—
Ի՞նչ կըլնի, մկա էտ քեզի ի՞նչ արող ի։
Էտ մանկուկը տար խե՛ր բի,
Քող իրան տարր անցուցի մինչև իրկուն,
Քեզ խեղ կը պիրնս, չես շըլկի, պան չես անի,
Նա ուր ուտվ ալ վազի, քեզանից կուշտ կըկյա։
Ըսաց.—Ա՛յ մեր,—ըսաց,—կը փուշընվիս,—ըսաց,—
Վա՛յլա,—ըսաց,—նրանք օյու պես մեղ ալ կծնեն։
Թուլ մի՛ տա, ես,—ասեց,—կիտեմ՝ նրանք ինչ ասկ են։
Էն առավտուն Քող էլի Ամեր խաթուն, տղին կանչի,
Կըհամոզի, կասի.
— Ա՛յ որդի, ի՞նչ կերծ ունես անունց խես,
Տու մանկուկ տղա ես, անոյ մնծ մարդ են,
Հնրիշ խաղ կէրթան։
Ըսաց.—Ի՞նչ էրթան։

Տրայ ի՛նչ էրթան, Տնվիթը ըսենց աշք խփեց,
Ընկյավ ճամփի էն յան,
Տրանք որ սարով տ՝էրթան, որ ճամփով տ՝էրթան,
Տնվիթ ընկյավ հետըվնեն։ Տնվիթ ընկյավ հետըվնե՛ր,
Կնաց մինչև էտուչն, որտեղ ուրենց ֆուտբոլի տաշտն է,
Տնվիթ կնաց իրենց խաասավ, տեսնում է՝ խաղում են,
Շա՛տ ուրախ խաղում են։
Վեց ֆերիզ-փահլևվան էս կլոխն են,
Վեց ֆերիզ-փահլևվան էն կլոխն են,
Ուրախթյամբ իրենց խամար խաղում են,

Մելիքն էլ նստեր ուր խամար քամաշա կանի։
Տեսավ, Տավիթ նստավ ախպոր կոխքին, ըսաց.
— Ի՞շ կըլնի, մի հերթ տո՛ւ, ես էլ խաղամ։
Ասաց.—Լա՛կոտի մեկ,—ըսաց,—
էտ քյո կոթծ չի, պան չի,—ըսաց,—
Տու ի՞նչ կարող ես էն խաղեր խաղաս, ու՞ր ի՞նչ կիմանաս։
Ասաց.—Ի՞նչ կըլնի, առնեմ ծեռքս, էսենց խփեմ, էրթաս։
Ասաց.—Չես կարող, էտ քու պան չի,—ըսաց,—
Երկաթ ի, չես կարող վերցնի։
Վերջ, ինչքան խնդրվավ, Մելիք քուլ չիտու։
Մելիք քուլ չիտու,
Երփ որ հելը բցին, կնաց էն մյուս խրամը,
Տավիթի հիլ ոտենց էն մյուս խրամի մեջ։
Հիլ ոտենց էն խրամի մեջ,
Ի՞շ տեսակ խնդրվան էտ փահլևանքեր,
Տավիթը ոյուս չէլավ։ Ասաց.
— Կա՛մ մի հերթ կըտաք ես խաղամ,
Կա՛մ՝ չէ, անկարելի պան է, բատեղ կըմնամ։
Որ բսաց՝ բատեղ կըմնամ, Մելիք բսաց.
— Ջարկե՛կ,—բսաց,—իրան ասկի պկրան...
Ջարկե՛կ,—բսաց,—ու՞ղ տատկի մնա էնտեղ.—
Բսաց,—եփ ըլի, էն իմ կլխուն խաթա ի,
Թո՛ղ էզպես ըլնի, հավելի լավ։
Մելիք հրամայից՝ ֆերիզ-փահլևանքեր հել զարկըցին.
Հել էկավ, խեա կյանուն՝ Տավիթ էզար, պռնից։
էզար, պռնից հել, ի խփից էն մյուսին.
Էրկու ֆերիզ-փահլևան մտած խրամի մեջ,
Յա՛լա, հել չփից անտեղ,
Հել չփից կլխին, խաղ կանչելով կնաց, ըսաց.
— Ես կնացի, Մելի՛ք, տու կիտես՝ քու խաղ։
Մելիք տրաբվում ի, Մելիքի տուն ավե՛ր,
Էրկու ֆերիզ-փահլևան մնանեղ ըսպանից։

Թողից կնաց։
Թողից կնաց, մինչև իրկուն հազիվ խասավ տուն,
Ջուղն, ճամպաս չուզն քելի։
Իրկուն հազիվ խասավ տո՛ւն։

Նա ուրա՛խ, քեֆո՛վ կնաց, մոր խնամ ուրախացա՛վ,
խնդացա՛վ։
Է՛հ, Աամի խաթուն ի՞նչ կիտի,
Թի Տա՛վիթ, տո՛ւ ինչ ես կատարե՛ր։
Տա՛վիթ կնաց ուր տեղ, նստավ
Ու մե քիչ ուր խըմա խաղ արավ,
Կլո՛ւխ էթալ քնավ, միթնեմ քնուկ ի։

Է՛, Մելիք էկավ. Մելիք էկավ,
Խնամ խաստավ տուան մեջ, մոր կանչեց, ասաց.
— Էն շան լակոտ տուն իկե՞ր։
Ըսաց.—Էկավ, քնա՛վ, հոկներ ի։
Ըսաց.—Մե հոկնել հոբնի բու արիվու վերե՛ն,
Ես քեզ ասի՝ նա մի՛ օղորկի,
Նա գո՛ւշման ի քնձի,
Անոնք ազգ մեր ազգին գո՛ւշման են, մի՛ ուզարկի։
— Ի՞նչ իլեր, ա՛յ որդի, ի՞նչ իլեր,
Դե՛, պան չկա,—մեր էր։
Ասաց.—Չէ՛,—ասաց,—պիտի սատկացըցնեմ,
Նա խոբին իմ ծեռնեն չազատի։
Ըսաց.—Ա՛յ որդի,—ըսաց,—
Էսքան տարի նրա խոր խաց ու ճրով ենք տալե,—ըսաց,—
Տո՛ւ նրան սատկացըցես, ըսկի խեր չես տեսնա։
Պան չկա,—ըսաց,—Ների՛, Ների՛,—ըսաց,—
Տո՛ւ իմ ծծի կաթի խաթըր,—ըսաց,—
Ների՛ ինձ,—ըսաց,—ի՞նչ անեմ, խելը էնքան ի խասեր,
Ո՞վ կիտի ուր խելը։
Էս էլ քնցավ.
Մելիք կուրբան արավ ուր մոր ամեն ինչ,
Ախշար տան՝ ուր մեր չի տա։
Եփ օր Մելիք կուրբան արավ ուր մոր,
— Էս կիշեր քնտունե,—ըսաց,—որդի՛,
Առավտուն մե իլլաջ կանեմ,
Մե ճամպախ անու խամա կրորուշեմ։

21. Էս առավտուն քող մնան,
Մելիք էլի առնց ուր ֆերիդ-փահլևանքեր կնաց ուր խաղին։

էտ տղեն Քողից կնաց քաղքի մեջ.
Մարթա քաղաքն իւ
Կնաց, մի քանի-եռեսուն երեխա համոզից, ուր Թայդաշ տղաներ,
Ըսաց.—էկե՛ք քյանք, խաղանք,
Ես մի խաղի ծեվ կիտեմ, կնանք խաղանք։
Պտ.—Տեվի՛ք, ի՞նչ խաղ իւ
— Մի քանի տըբընդոզալ տանք,
Կնա՛նք,—ըսից-—ծեզի չանք կտամ։
էտ քառասուն երեխեն խարեց, տարավ։
Իր նետ-աննդ իւ, քի մեր երկրի կող իւ,
էքյալ բարդի ծառի կլոխ,
Կռռնց ու պռնից բարդի ծառին,
է՛, ինք ուժ ունի,
Պռնից բարդի ծառին, կռռնց, խոփ,
էտ երեխաներ քամուղ բռաց.
— էկե՛ք, ինծե՛ք, որ միչ խաղանք։
Երեխաներուն խնծըցուց, էտ քառասուն երեխեք,
Մե էրկու անդամ երեխաներուն խաղըցուց,
Ստե էվոզ՝ ամեն երեխա քող մե տեղ մահանա։
Մեկիք էլավ կիրծ էտու կառավության։
Ըսաց.—էտ շան լակոտ հնռասցնե՛ք,—ըսաց,—
Պռնեք սատկացըցնե՛ք, բաղքի կես վնաս իտու,
էսբան երեխա մեկ օր փչացրուց,
էսբան ձի վնաս իտու։

22. էլան, օրենք ի, տատ ի, կանոն ի,
Կանչին երեխին, տաբան։
Օրեխան կըտխանա՞ն, տատը* չի պռնի,
Օրենք չի պռնի՝ երեխին պռնել, նա՛** ուվ մի պռնի։
էդտեղ օրոշեցին, ըսին.
— Մի տալերք կրտակ տրե՛ք բտար, շըլշըլու կրտակ,
Մի տալերք էլ՝ չամիշ-կիռուն տրե՛ք,
Թե էն ֆահմ արավ չամիշ-կըռռնին,

* Տատ—պառ։
** Նա—ոչ։

Արդեն կըսրսշենք, անու փանա կըսանք.
Թի ուր ծեռ էդար էս քեզնցիկ կրակին,
Արդեն օրենք չի պռնեցըցի, նրան պռնել չկա,
Խելք չի հասնի անու։
Վերջ, շատ վիճեին, շատ տես-տանն,
Պիրին էս տալերք կրակ տրին,
Ջամիշ-կիռուն էլ տրին։
Տնվիթ հառաչ ուր ծեռ էիալ ջամիշ-կիռունին,
Հրնշտակ ծեռ հրլուրնց Տնվիթին,
Մեռ տաբալ, էդար կրակին։
Կրակ էիալ վերցուց, խրի, մտուց ուր պերան,
Էն ժամանակ էլավ Թլիր Տնվիթ։
Էլ չեն ասի՝ մաքուր Տնվիթ, Թլիր Տնվիթ։
Տնվիթին ազատին էս փռնտից էլ,
Տնվիթին ազատին, վերատարցավ տուն։
Էս հրրկուն մեր խնիրջավ, բաց.
— Որդի՛, ծեն մի՛ խան,
Առավտուն կանչի էրկու հզոր ազամարդ, տեղը խտա,
Օզորկենք խնչ Մեհով Հովանին,
Ուր խորխոպեր կա, օզորկենք էհա Սասուն,
Բրխ էհա էնտեղ, ծուռ կըլնի, ինչ կըլնի՝ բոլ է,
Բրխ էրթա ուր ասկության մեջ տպրի։
Լա՛վ էզպես էլ արոշեցին։
Մեկիքն էլ մար կըհամոզվի,
Ինչ մեր խրատ տա՝ Մեկիք կըհամոզվի։

23. *Էլան առավտուն, դե, Տնվիթին.*
— Տնվի՛թ, խաց կե, ազի՛զ ջան,
Էսօր քի տանեմ քու խրրոխպոր մոտ՝ Սասուն,
Մե վանք կա, ծե հարատութուն կա, ծե խրրոխպեր կա...
Համոզան տղին.
Պայց տղեն հիմասուն է, համեն ինչ կիտի։
Տղեն էլան համոզելով,
Մի քիքա հաց կրրըսին, չը կրրըսին,
Էրկու հզոր մարդ տրին խտա, էս մարդկանց ասին.
— Տնվիթին կրտանեք, Բաթմանից կարմունչ կա՝ Բաթմանց.
Բաթմանից կարմընչի վերեն նրան կրըցնք կետ,

Վերատառնի՛ք,—Մելիքն է հրամայում։
Իսկ մեր ասում ի, Ասմի խանըմ ասում ի.
— Կըտառնք, էն կարմունջ կընցուցնք,
էն արդեն ուր խերառնական վաթան կըճանաչի,
Թող կնա խաանի ուր խըրոխպոր,
Ինչ կըլնի, կըլնի։
Էտ էրկու մարդ սրին Տավիթի խե՞ա,
Տավիթի ծեռին տվին մեկ երկաթե կո՞ւռ.
Մի պռավան սոլ խաթըցին Տավիթին,
Տրին ճամպախ էտ էրկու հզորի խետ,
Տավիթ կէրթա։
Տավիթ կնաց, Տավիթ խոր տուն շեն կենա՛,
Նապաստակ տեսնա՝ կըլնի հիտե,
Կել տեսնա՝ կըլնի հիտե,
Առյ տեսնա՝ կըլնի հիտե,
Վերջ, ամեն ինչի հետե կիլնի։
Էտ մարդիկ կըթկլեն, կընտանեն, կըխանքեն, որ Տավիթ...
Մինչև կըխաանեն Բաթմանից կարմունջ,
Էտ մարդկանց խելքն էլ կլխից կէրթա։
Վերջ, կանչեն.—Տավի՛թ, ապի՛ղ բալա՛,
Արի՛, թող էս կարմունջ ընցուցնք, տոն կնա՛,
Էս անգամ քու խերառնական երկիրն ի,
Մութ խաու, մինք էլ վերատառնանք մեր երկիր։
Տավիթ վազելով կըկյա, հա՛, խասավ արդեն կարմունջ։
Տավիթ վազելով կըկյա, դի՛, կանչեն՝
Տավիթի կոռ մաշե, մնացեր էն կանթ,
Ինչ անու զանդից կախուկ է.
Պռվըտե սոլերն էլ փրթե, տկեր, պոպիկ ի։
Սարսափ կըպռնե էտ էրկու մարդուն։
— Տավի՛թ,—կըսեն,—ապի՛ղ բալա,
Տոն անցի մեր հիշելվ,
Որ միք էրկուս մնանք քու հիտելվ,
Մեկը մնանք հիտելվ, մի՝ հիշելվ,
Որ տոն մնաս մեր էրկրսի միշտեղ.
Էտ կնա, խա տոն աչքես կիտու վերեն,
Սարսափ ի, էտ կնա թեզ կրտանի,
Քու խելք կէրթա ձրու խետ, կընկնես կետ։
Կըսե.—Չէ՛, ես էդպես չեմ ուզի։

Եթե ան՝ իմ թևիններն ևը, ընձի պիրևը ևը,
Մեկ կայնեք էմ էս կողմ, մե՝ էս կողմ,
Որ ես չվախենամ կարմունջ ընդրնեմ։
Տնվիթի կիտի՝ իշ ոը անի։
Էտ էրկու հզոր մարդ, մեկ կայնան Տնվրթի էս կողմ,
Մեկ՝ էն կողմ. կը տան կարմրնջին։
Տնվիթի էս ծեռ էսենց կը թալի, էս ծեռ՝ էսենց,
Էտ էտ կողեն ջցնց, էս՝ էտ կողեն։
Տնվիթի, յալլա՛, թողնց կնաց խեր-խերաներն։

24. *Թողնց կնաց խեր-խերաներն*
Ու կնաց դո՞ւզ անրնավ Մեննով Հովանի տուն,
Որ ուր խրրոխպերն ի։
Կնաց Մեննով Հովանի տուն.
— *Պարո՛վ, խրրոխպե՛ր։*
Ըսաց.—Պարո՛վ, խաղար պարով էկա՛ր։
Պայց խրրոխպոր կնիկ կրոզին կուգի, Տնվրթին չի ուզի.
Կրսի.—Նա խաթա էր, խաթա էր, էկավ կպավ մեզ։
Տնվիթի էրկօր, իրեք օր խրրոխպոր խնամին ապրավ,
Տևսավ, չէ՛, տիանում ի, հաշիվ ինչա ի։
Մեկ օր հիրկուն նստավ, ըսաց.—Խրոխպե՛ր։
Ըսաց.—Իՙնչ ի։
Ըսաց.—Խրրոխպե՛ր, ևս թևնև խնիրում եմ,
Առավտուն իլի էտ կնդր մեջ՝ Սատմա կնդր մեջ,
Պահանջե՛, բսա՝ մի չոպանիհեն ավե՛ր,
Իմ ախպոր տղեն Քրիս իլնի չոպան,
Ուր կլուխ պախե։
Է՛, խրրոխպեր կիտի՝ ինչ հունար կա մեջ,
Չի պիխշի էտ պան ոնե։
Պայց խրրոխպոր կնիկ ուրախանում ի,
Խրրոխպոր կնիկ չի խատկրնա, ևն ախշար ինչ կա։
Առավտուն Մեննով Հովան էլավ,
Կնաց ուր մեծավորքերու, իշխան մարդիրու մոտ, բսաց.
— *Իՙնչ կիլնե, իմ ախպոր տղեն իկեր ի,*
Հորփրնեկ տղա ի, պահանջում ի չոպանութչուն։
Հրմեն ուրախալու բսին.
— *Հե՛, Մհերի տղան ի, իշրան չրլնի, ափսես ի,*

Մհերի խնամ մտանն կըկյա,
Տանք մեր մալ, քրխ տանի, տպրվի,
Հեթիմ տղա ի, յուր խամա տպրի։

25. *Մալ տվին Տնվըթին։*

Տնվիթ ըսաց.—Խըրոխպե՛ր,—ըսաց,—
Ինձի շինի, էլի՛, մե պռվըտան կոտ, մե պռվըտան սալ,
Որ ես կարողանամ էս սար ու քար ֆռամ։
Է՛, խըրոխպեր ի՞նչ պերան,
Որ Տնվիթ մե պան տսի, չըկտատրվի։
Խըրոխպեր կատարից.
Պռվըտան կոտ բռու ծես,
Պռվըտան սալ խայըրից տոխն։
Ըսաց.—Խըրոխպե՛ր, իմ խաց կըպիրես սարի մեջ,
Ես խաց չեմ տանի ինձ խնամ,
Իմ խաց կըպիրես սարի մեջ։
Ըսաց.—Լա՛վ, ապի՛ղ ջան, տու կնա՛։
Տնվիթ ետ տանն էտ Սասմա կեղի ամբողջ մալը,
Հավաքի, կնա սար, կնա Սասմա սարեր ֆռա։
Առավոտմն մինչև էկավ կնաօրին,
Խըրոխպեր խաց տարավ կնաց։
Խըրոխպեր խաց տարավ կնաց, հետավոր նայում ի.
Տնվիթի տուն ավե՛ր, Տնվի՛թ,
Վիր տաս ոխշար կա՝ արեր ի բառատուն,
Վիր բառատուն կա՝ արեր ի հայրուր,
Էտ ինչբան ջուն-ջանավար՝
Կել, առջ, խոզ, ադվիս, նապաստակ,
Իշ որ ջուն-ջանավար կա, տիսեր,
Հավաքեր, լցեր անասուններու մեջ,
Միասին կէրեծան։
Մենով Հովան կնաց.
Ճամփի կեսին, եփ օր աշք առեց էդ անասուններիր,
Մենով Հովան վախիցավ,
Ուր կաշու մեջ մեղ անցավ, ըսաց.
— Ես ո՞նց անեմ, կնամ էս ճանավարիրու մեջ,
Ես ո՞նց խաց տանեմ։

Խրոխտիկը կանչեց.—Տալի՛ք, խրոխտիկ կուրա՛ն,
Նեղացիր եմ,—չի դրխշի, բայ՝ վախենում եմ,—
Նեղացիր եմ, արի՛, քու խաց տար, կնա՛։
Տալիք ուրախ-ուրախ վազելով ասիից իջավ,
Կիտի՝ խրոխտիկը կըվախենա,
Էկավ, խրոխտիկը մոտեն խաց վերցրեց,
Խրոխտիկը աշկեց՝ պովրատ կոտրն էլ մաշվեր,
Պովրատ սուն էլ փրթվեր,
Պոպիկ ու կրկլա։
— Աստվա՛ծ իմ, ի՞նչ անեմ էլ էս ճանապարի խեռ,
Էլ ի՞նչ անեմ։
Իր խաց խոռ, Աենով Հովան տատցավ, յա՛լլա,
Ուրմ կա, սա՛մ էլ կատավ, որ փախավ տնպի կեղ։
Փախավ տնպի կեղ, էկավ, ժողովրդին ասաց.
— Ձեր տուն շեն մնա՛,—ըսաց,—
Տալիք իշքան ախշըրրի իրես ջուն-ջանավար կա,
Հավաքե, լցեր անասան մեջ,
Մխասին էրևծում են կելն ու մարթ։
Ժողովուրդ ի՞նչ անի։
Մնաց հիրկուն։ Հիրկուն Տալիք էտ մալ հավաքի,
Պերի լցրի Սասմա կեղի մեջ, կանչի.
— Հե՛յ, ժողովո՛ւրդ, հելի՛ք,
Վեր խինդ է՝ արիր եմ տաս,
Վեր տաս է՝ արիր եմ քան,
Վեր քան է՝ նեռուն։
Էտ որ բառաց, կանչեց, ժողովուրդ էլան տունա,
Որ աչք կրնկնի ջուն-ջանավարին,
Ժողովրդի սորտանք կրտորա,
Ժողովուրդ պոլոր կրփախեն,
Մի չրգիշխ ուրմնց մալի մեջ մտնի։
Տալիք որ տեսավ տրուխուն էդպես ի,
Ըսաց.—Է՛յ, անբծուկնե՛ր, տուք կնացի՛ք,
Օխնուկնե՛ր, տուք մնացի՛ք։
Անբծուկներ քեպի սար կնացին,
Օխնուկներ մնացին։
Ըսաց.—Հե՛յ, ժողովո՛ւրդ, հելի՛ք,
Ձեր արքար մալին տեր էլեր։
Ժողովուրդ էլան,

Ամեն մեկ ուրանց արթար մալ տիրապրտին, պիրին, էկան։
Էտ օրն էլ ընցավ, մնաց մյուս օր,
Էտ կիշեր Տավիթ մտածից, ըսաց. «Ի՞նչ անեմ»։
Ըսաց.—Խըրոխպե՛ր։
Ըսաց.—Համմե՛։
Ըսաց.—Խըրոխպե՛ր, առավտուն կելի նախիր կըպահանջես
տնծի։
Ասաց.—Լա՛վ, որդի՛։

26. Մեկով Հովան Քող հախու իլնի կելի մեջ ման կա՛ն,
Որ նախիր տան տանի։
Էն օրն էլ նախիր տվին, խղճացին Տավիթին,
Մեկուճար Տավիթ, Մհերի ծիլ-ծաղիկ Տավիթ,
Խղճացին մանուկ Տավիթին, տվին ուրանց անասուններ,
Տավիթ վերցնց Սասման, կնաց Սասմա սարին։
Նույն էլի պռվըտեն սոլ խաչըն,
Պռվըտեն կոռ պռնե ուր ծեռ,
Կնաց Սասմա սարին։
Անասուններ տարավ, նուն ատեղծնց էտ վիճակ,
Ինչ որ էրեկ ատեղծեր էր։
Խըրոխպեր էլի խաց տարավ։
Խաց տարավ, տեսավ ի՛նչ.
Իշքան աստըվորի վերեն ջուն-ջանավար կա,
Կուռ-դուշից հավաքե, լցեր է էտ մալի մեջ։
Խըրոխպեր էլի հետու կանչից, ըսաց.
— Հըո՛ւ, Տավի՛թ,—ըսաց,—իմ մանուկ Տավի՛թ,
Խըրոխպեր կուրբա՛ն, ետ տատի՛, խացդ տա՛ր,
Ես նեղացեր եմ, ծեր մարդ եմ, չեմ կարող քի խասնեմ։
Ասաց.—Խըրոխպե՛ր, էկամ, հէս հըրտպեկեն։
Տավիթ ի, ոտըմ կա, տատ էլ կրճաբի։
Տավիթ իչավ խըրոխպեր մոտ, խորոխպեր խաց վերցուց։
Խըրոխպեր Քող իլնի քեսի կելի կա,
Տավիթ կնաց սար։
Մինչև հիրկուն խոտ, Տավիթ մալ հավաքից,
Իպի կելի մեջ, նուն կանչից,
Ինչպես նուն պատմութուն ախսարին, նուն էլ տավարին։
Ամեն մարդ հելան, ուրանց արթար մալին տեր կացնան։

Տ՚ավիթ որ մի անդամ ըսաց.
— Անիծուկնե՛ր, տո՛ւն կնացե՛ք ծեր տեղ,
Օխնուկնե՛ր, մնացե՛ք։
Անիծուկներ կնացին, օխնուկներ մնացին։
Ամեն մի մալի տեր՝ էլավ ուր մալատեր,
Ուր մալ տարավ։

Լուսը պացվավ։ Տ՚ավիթ մտածից էս կիշեր.
«Էսօր ի՞նչ անեմ»։
Ըսաց.—Խըրոխպե՛ր,—ըսաց,—գաբՌո՞ւն էս։
Ըսաց.—Հա՛, ապե՛ր։
Քանի որ մե խոսք նա կանչի խըրոխպոր,
Խըրոխպոր կնիկ անեծք կանի.
— Ի՛, կրողը քի տանի՛, Թլիր Տ՚ավի՛թ,
Էն ինչ խաթա էր, էկար ընդյար մեր կլխին,
Էն ինչ կաթաբալա էր, կախվար մեր թևկերեն,
Քեզնից ազատվող չե՞նք։
Ըսաց.—Խըրոխպե՛ր, առավոտուն կուգեմ թեզ մոտեն կիտե՞ս ինչ։
Ըսաց.—Ի՞նչ։
Ըսաց.—Մե խատ նետ-անեղ շինես ընձի։
Էն ժամանակ զներ նետ-անեղ իլեր։
Ասաց.—Կանեմ, որդի՛, էս էլ կանեմ։
Խըրոխպեր կնաց մի նետ-անեղ էն հըրաշեին առնց,
Իտի Թլիր Տ՚ավըթի ծեռ։

27. *Թլիր Տ՚ավիթ ի՞նչ անում։*
Գրննաց ընկավ ցանքիրու մեջ,
Գրննաց, իմ նման մե պառավի մե կտոր կորեկ արտ կա,
Էն կիրկի մեջ ընկնեմ լուբերու հետեվ,
Դեն կըխփի, դեն կըխփի։
Պառավ հեկավ բանց ուր դրովեչը կացնավ, ըսաց.
— Թլիր Տ՚ավի՛թ,—ըսաց,—
Մախը թեզ տանի՛, կրնդր թեզ տանի,
Տո՛ւ իզիր ես աշխարքի մեջ իմ պառվու ուռուզան կը կտրես,
Մախը թեզ տանի՛, ի՞նչ ես անում,—ըսաց,—
Ափսո՛ս, տո՛ւն Մհերի տղան ըլնես,

Ափսո՜ս, Մհերի անուն քու վերեն ըլներ,
Տո՛ւ Մհերի տղան ըլներ։
Պառավն էր, կավալ խնա տղին, կավա՜լ.
— Իկիր ես իմ ուռուզն կըտրըցցնես։
Էս օր էլ Մսրա Մելիք օղորկեր ի,
Պեռներով ոսկի տը տանի Մենով Հովանի տունն.
Մաղազին տը պանան, պեռներով ոսկի տը տանի.
Քառասուն գավալի պես։
Պառավ բաց.—Կրողը քեզ տանի՛,—բաց,—
Կնա՛, Մսրա Մելիք օղորկեր ի, խաբչեր կուզի,
Քառասուն գավալի պես ոսկի տը տանի։
Մի կնա՛, կուչախ ես, կնա՛, կուչախին ասու խնա սրա,
Որ Մսրա Մելիքն ի, աշխարքի տեր-տնօրեն ի,
Ընչի՞ ես էկիր իմ բոուզն կըկտրես։
Ըսաց.—Պառա՛վ,—բսաց,—հիմա որտե՞ղ է։
Ըսաց.—Կրողը քեզ տանի՛, կնա՛, տիս.
Մղազի տուռ պանա, քու խոր ոսկիներ խանա,
Տա, Մսրա Մելիք տանի։
— Ո՞վ իկեր, ո՞վ չիկեր։
Ըսաց.—Կողրատին իկեր ի։

28. *Տնվիթ իրես խոու քնպի տուն։*
Տնվիթ իրես խոու քնպի տուն, կնաց,
Տեսնում է ի՛նչ.
Մենով Հովան ծնկեր գանե կնտին,
Մի փալաս բանց փսեր կնտին,
Ու պեռներ պռնում են Կողրատին, մեկ էլ խնա,
Պեռան պերան պռնում են,
Մենով Հովան ոսկիներ կրչափի,
Կոտով կրլցնի պեռներ։
Տնվիթ էսենց հեռու կայնավ,
Տոան մեջեն թամաշեց, սրա՜ց, սրա՜ց,
Հո՛ւ, Տնվիթ սիրտ չամփևրեց, բսաց.
— Խըրոխպե՛ր։
Ըսաց.—Ի՞նչ ի։
Ըսաց.—Տու նեղացար, տո՛ւ, մե խատ էլ ես չափ անեմ։
Խըրոխպեր էլավ կայնավ.

Խըրոխպեր կիտի՝ անու հրնար* ինչ իւ
Խըրոխպեր էլավ կայնավ, կոտ իտու Տավրթի ծեռ։
Կոտ կռածնց, ոսկիներ էլից կոտի շըռշուկ տանսի վերեն.
Փետ իտու. ոսկիներ, խը՛ռ, տարավ էլից կնտին։
Կոզրատին ըսաց.—Վա՛յ վավելեր,—ըսաց,—
Հովա՛ն, էտ ի՞նչ ի կանի, մե խաղալիք կա՞նի։
Տավրթը կայնավ, կոտ իտու Կոզրատինի կլուխ.
Կոզրատինի պերան ճղնց բսանղեն,
Ըսանղեն տարավ ակընջներ, ըսաց.
— Կնա՛,—ըսաց,—լուր տար Մսրա Մելիքին,
Մարթ կա, Քո՛ղ մարթ օղորկի,—ըսաց,—
Իմ խետ Քո կովի, ի՞նչ ի,—ըսաց,—
Իկն ժողովրդի վիզ կըզարկի,
Ժողովրդի խարջը, հարկ կրհավաքի, կրտանի։
Պոլոր Մսրա Մելիքի զորքին ետ իտու,
Կոզրատին էլ կնաց,
Էդպես տխուր, մալուլ վերատարցավ Մսր՛ը։
Կուվելով, կոտորվելով, էտ մարդիկ ետ իտո՛ւ։

29. Տրանք վերատարցան Մսըր,
Է՛, Կոզրատին շըդիխշի Մելիքին իմացնել,
Էնպես կլոխ կախուկ, պերան ճղուկ,
Կնաց մտավ ուր տուն։
Կնաց մտավ ուր տուն, դե՛, Մելիքը էյուքեն իմացավ,
Էյուքեն իմացավ, ասաց.—Հիմա ինչպե՞ս եր։
Առավտուն,—ըսաց,—ես կուզարկեմ,—ուր էդիք մարդկանց,—
Ես կուզարկեմ Տեննով Հովանի մոտ,—Քուղի գրնց, իտու,—
Տեննով Հովանից կը պահանջնք.
Քառսուն բխտապեռ ակնունք ու ջավահըր՝ քառսուն,
Քառսուն հերկեն կնիկ, որ բխտեր պատռան.
Քառսուն կարճ կնիկ, որ իսց քխեն,
Քառսուն ազատ ախճիկ՝ ուլնեք շարեն։
Վերջ, ըտենց քառսուն-քառսուն իսկ տեմեր.

* Հրնար—հունար—շնորհք։

— Ասե՛ք, Մսրա Մելիք ասեր է,
Էառնք պոլոր պատրաստ ինձ դիմավորի։

30. Մյուս օր հերթ էկավ Տավթին։
Էլի Տավիթ կնաց Պաուլու կորկի մեջ, ըսաց.
«Ի՛նչ զորություն առնեմ, էս Պաուլուց կառնեմ,
Ոչ ոք դի պան չի ասի,
Պոլոր կասեն՝ Բլոր Տավիթ, Բլոր Տավիթ»։
Կնաց էլի էս կորկի մեջ, էլի կռվավ լորիրու խետ,
Դեն խփի, դեն կըջարթի։
Պառավ էլի .յելավ խետ կռվավ, ըսաց.
— Տո՛ մախ քի տանի, կրող քի տանի, Բլոր Տավի՛թ,
Մեռնե՛ս, էլ տու խռով Մհերին ժառանգ չէլներ,
Ափսոս չէ՞ր, տու Մհերի ժառանգ ըլներ,—ըսաց,—
Քեզ պես փչացած, կնտին մանես,
Կնա՛,—ըսաց,—կռիվ արա տրանց խետ,
Հա՛ն, Մսրա Մելիքը մարդիկ է ուղարկեր,
Քառասուն մարդ է օղորկեր՝
Էսքան մարդ, էդքան կին, էդքան ախճիկ,
Էդքան կով կթող,
Էդքան ուչնեք շարող,
Հաց թխող,
Տախտ ավլող,
Ուղտեր պարցող,
Ամեն մի քյորժին՝ քառասուն խատ ախճիկ,
Ջահել ախճիկ ու կնիկ՝ մեծահասակ կնիկ, կուզե։
Կնա՛, պատասխանեն,—ըսաց,—
Մախ քի տանեն խա քու կռիվ անելուն։
Տավիթ ըսաց.—Պառա՛վ, հիմա դյո՞ր են։
Ըսաց.—Հիմա մտեր են քու խոր հանդը-վարի մեջ,
Պահանջում են. Մենով Հովան կանչիր են, կրատանչեն,
Որ չը տա՝ կրսպանեն Մենով Հովան։
Ըսաց.—Լա՛վ, Պառա՛վ, կնացի, շո՛ւտ մնաս։

Ու Պառավ թող մնա ուր տեղ, Տավիթ կնաց։
Տավիթ կնաց, էտ քառասուն մարդ,
Իշ օղորկեր ի, պահանջներ տրեր ի,

էտ քառասուն մարդին էլ ակնջները կտրեց,
Քրքրքեր կտրեց, պերըններ ճղեց,
Օրինակ խակեց, քողեց կնաց։
Ըսաց.—Կնացե՛ք, Մարթա Մելիքին ասեք,
Ուժ ունի, թըխ էտ ուժ պիրի, կյա,
Մարդ ի, թըխ կյա, Սասուն թալանի, տանի։

31. *Պահո՛։ էտոնք քուչ վերատառնան կնան Մարթ,*
Տեվիի էտ կիշեր մտածում է ուր խամար։
Ի՞նչ կա՝ երազով ի տեսնում, երազով ի մտածում։
Տեվիի էտ կիշեր մտածեց, ըսաց.
«Հե՛յ,—ըսաց,—անպահման Մարթա Մելիք կըկյա,
Սասմա վանքի կարողութուն թալանի տանի,—ըսաց.—
Ես խաբար չիմ»։
Էս կիշեր կանչեց, ըսաց.—Խըրոխպե՛ր։
Ըսաց.—Համմե՛։
Ըսաց.—Խըրոխպե՛ր,—ըսաց,—զարթո՞ւն Ես։
Ըսաց.—Հա՛։
Ասաց.—Անպահման,—ըսաց,—ես էտ տրարմունք, ինչ արի...
Ու խըրոխպոր կնիկ տեղաց մեջեն վեր կացավ, ըսաց.
— Մա՛խ քի տանի, կրո՛ղ քի տանի՝ տեր չըգիր.
Տեր ի՞նչ աչքատես էր, էկար իմ աչքի տեմ,
Տեր ի՞նչ վզնակեր, տեր մեզ խայտառակեցիր,
Տեր մեր խաց կոըրցիր,
Մեր էն կտոր կարե խացն էլ մեզանից կտրըցիր,
Ինչի՞ էկար, ընկար մեր ծեռ-ոտ,
Մեզ էտ օրի քցիր։
Ըսաց.—Խըրոխպոր կնի՛ջ, տեր հանկիստ կա՛ց,
Տեր կնա՛, ընի,—ըսաց,—էտ քու քերծ չի։
— Մա՛խ քի տանի,—ըսաց,—
Քո՞ւն ես քողեր որ, քո՞ւն կըգա մարդու աչքին,
Մենավ Հովանին կը քողնե՞ս ընի։
Մենավ Հովան կիտի՝ իշ կա մեջտեղ։
Ասաց.—Տեվիի՛ք, ընի՛, խըրոխպեր կուըրան,
Առավտուն մե պան կըլնի, ընի՛։
Է՛, Տեվիի քուն չունի, համպերութուն չունի։

32. Առավոտուն նորից վեր կացավ, ըսաց.
«Էլի կնամ, Պառվուն մեկ վնաս տամ,
Ինչ խասկանամ՝ Պառվու մոտենա։
Էլի կնաց Պառվու կորկի մեջ չալավանդեց,
Դեն կնաց, դեն իրի։
Էտ օր Մսրա Մելիք զորքավ կըկյա,
Սասմա վանք կողոպտի, տանի,
Ինչքան հարստութիւն կա՝ կողոպտի, տանի։
Պայց Պառավ կիտի։
Պառավ կիտի, Պառավ ըսաց.
— Տնվի՛ք, մա՛խ քի տանի,—ըսաց,—
Էկած քու խոր Սասմա ժամ, վանքը տը կողոպտեն, տանեն։
Մսրա Մելիք իր զորք-զորապետով իկեր ի,
Կալո՞ղ ես՝ կնա՛, ձնու տեմ կուվի,
Կնա՛, քնէ խոր Սասմա վանքը ազատի,
Կնա, քնէ խոր կարողութիւն ազատի։
Էկիր ես խեղճ պառվուն՝ ի՞նչ էդքան ձի վնաս կըտաս,
Էդքան ձիկ հոգիս կը տանջե՛ս,
Պավական է,—ըսաց,—կրո՛ղ, մա՛խ քի տանի։
Տղեն էլի զորութիւն ստացավ.
Զորութիւն ստացավ, ըսաց.
— Պառա՛վ, էս անկամ ի՞նչ անեմ։
Ըսաց.—Կրո՛ղ քի տանի, կնա՛, պահանջի.
Քը խոր Թուրն ը Կնծակին,
Քուռիկն ի Ջալալին.
Նը յոթ տարի կա, քը խեր մահացեր,
Քուռիկ Ջալալին մարի վերեն կապված ի,
Ոչ ոք իրավունք չունի՝ տնուն պահա,
Նրա խոտ ու ճնիր հըրթըսեն կըթափեն իռչելվ։
Քուռիկ Ջալալին,—ըսաց,—պահանջի՛,
Կնա՛, պահանջի,—ըսաց,—քը խոր Ոսկի Կուպին,
Որ կլխին կըտնին.
Կնա՛, պահանջի քը խոր Թուրն ը Կնծակին,
Կնա՛, պահանջի քը խոր Քամարն ը Մեջքին,
Կնա՛, պահանջի քը խոր Կապեն ը Խամբուկին։
Ըսաց.—Իկիր ես Պառվուն վնաս կըտաս,
Պառավ կարո՞ղ է քեզ...
Ի՞նչ անի, էտ փշուր կորեկն էլ կորսըցիր։

Մա՞րդ ես, կնա՛, բր մարդկութուն ընտեղ ցույց տուր,
Թլիր Տավի՛թ, կրո՛ղը բի տանի։
Ըսաց.—Պատա՛վ,—ըսաց,—մամե՛ ջան։
Պավարարվավ, Թողեց կնաց։

Թողեց կնաց տուն, կանչեց խըրոխպեր, ըսաց.
— Արի՛ ըստեղ,—ըսաց,—խըրոխպե՛ր,
Ըսօր քննեն կուզեմ Քուռիկը Ջալալին,
Յոթ տարի կա՝ կապած է մսրին.
Քննեն կուզեմ՝ տո՛ւր իմ խոր Քուռիկ Ջալալին,
Ես Մհերի տղան եմ,—
Մինչև ան օր չէր կիտի՝ ինք Մհերի տղան էր,
Որովհետև ուր խոր անուն չէր լսե.
Պայց էտ օր ըսաց,—Իմ խոր անուն Մհերը ի։
Խըրոխպե՛ր,—ըսաց,—իմ խնր ունի Քուռիկ Ջալալին,
Յոթ տարի կա, խելս մահացեր ի,
Քուռիկ Ջալալին կապած է մսրին,
Ոչ խոտ, ոչ ճիր։
Տո՛ւր ըմ խոր Քուռիկ Ջալալին,
Տո՛ւր ըմ խոր Ոսկի Կուպին,
Տո՛ւր ըմ խոր Կապեն ը Խամբուկին,
Տո՛ւր ըմ խոր Թուրն ը Կնճակին,
Տո՛ւր ըմ խոր Քյամարն ը Մեջքին,
Ես կնամ, Մարա Մելիքի խև կովեմ։

Խըրոխպեր շիվարավ, ասաց.
— Էտ ասողի լեզուն պատռանծվե՛ր, մանուկ Տավի՛թ,—
ըսաց,—
Էտ քու պան չէր, որդի՛, բնչ ասող իլեր։
Խըրոխպեր ժժարացավ, Խըրոխպեր մտածեց, ըսաց.
«Իր պահանջ պտի տեղ իկյա, ինք՝ ուր բախտ»։
Ասաց.—Որդի՛ս, էս՝ Քուռիկ Ջալալու պալանիք։
Կնաց, խոր յաշիկ էպաց,
Թուրն ը Կնճակին,
Ոսկի Կուպին,
Կապեն ը Խամբուկին,
Քյամարն ը Մեջքին,
Էտ պոլոր իսի, յաշիկ իսի հրռնեվ, ըսաց.
— Է՛ս քու խոր զարտարանք։

Տավիթի հառաչ մտավ Քուռիկ Ջալալու մոտ։
Քուռիկ Ջալալին, ես Մհերի խոտ չիլնի,
Անկարելի պան ի, քային ար գարկն,
Տավիթի կտորքեր, ամեն մե կտոր մեկ պատ տանի։
Տավիթի տուր պացեց, մտավ Քուռիկ Ջալալին,
Քուռիկ Ջալալին խրխնջաց, կայնավ ետի ոտիրուն, ըսաց.
— Ո՞վ ես, խողածի՛ն, հետու կնա՛,—ըսաց,—
Կանեմ՝ խող էրեվա, տուր չերեվաս։
Տավիթի չըխոսեց։
Մեյն էլ կանչեց, Տավիթի չըխոսեց.
Մեյն էլ կանչեց, Տավիթի մոտացավ,
Ծեռ բռնեց Քուռուկ Ջալալու մեջքին,
Քուռիկ Ջալալին կլոխ տարավ ուր մեջքին, ըսաց.
— Օ՛ֆ, Մհերի խոտ քեսն կըկյա։
Խողածի՛ն, տու՞վ ես, Մհերի խոտ քեսն կըկյա։
Տավիթի մեկ էլ ծեռ բռնեց Քուռիկ Ջալալու մեջքին,
Ուրախացուց Քուռիկ Ջալալին,
Արձրկից կապը մտրին,
Տուրս խանեց Քուռիկ Ջալալին։
Ուսցուց երեք պղինձ ճոր,
Վայ Քուռիկ Ջալալու մեջքին, ոտին, կլխին,
Լողըսցուց, փայլըսցուց.
Խանեց էն ոսկի ջամբ, որ յոթ տարի կա, բրնըսցած են,
Խոր Քուռիկ Ջալալու մեջքին,
Քուռիկ Ջալալին ուրախացուց,
Գետցավ, որ Մհերի որդին ի, ասաց.
— Ա՛խ,—ըսաց,—Մհերի խոտ բեսն ատացա։

33. *Խակավ, խոր զննըր, գրախ վերցնց իր վերեն,*
Իտի կլխին Ոսկի Կյուտին,
Մե փուճ պամպակ իտի մեջ, հըլա չէլավ ուր կլխով.
Խակյավ ուր խոր Կապեն ը Խամբուկին,
Մե մետր էլ կետին վե կէրթա, չի ըլնի ուր բոյով.
Վերցրուց Թուրն ը Կեծակին,
Որ առնց ուր վերեն, կետին վե կնաց.
Կապնց Քյամարն ը Մեշկին,
Յոթ անցք էլ անցկըցուց, ներ էլավ ուր մեջբով։

Խեժավ Քուռիկ Ջալալին,
Մենով Հովան Լրդեց ան տեղ, ըսաց.

— Խազար ափսո՜ս Ոսկին Կյուտի՜ն,
Տո՜ խազար ափսո՜ս Թուրն ը Կեծակի՜ն,
Խազար ափսես Կապեն Խամբուկի՜ն,
Տո՜ խազար ափսո՜ս Քյամարն ը Մեջքի՜ն,
Խազար ափսո՜ս Քուռիկն ը Ջալալի՜ն[*]։

Տեվիթ ասաց.—Խըրոխպե՛ր,
Եթե ափսոսաս ինձի, կազատեմ էտ հոկին,
Եթե չափսոսաս ինձի,—ըսաց,—յառաջ խըրոխպեր վիզ կըզարկեմ,
Ներ կը կնամ կռիվ՝ Սասմա կռիվ։
Նորից խըրոխպեր խղճաց, ըսաց.
— Խազար ափսո՜ս մանուկն ը Մհերի՜ն։
Տեվի՛թ, խըրոխպեր կուըրան, կնաս Սասմա կռիվ,
Կրկնաս Լորան տաշտ՝ կաթնով յախպուր,
Պովրան սունը զարկած էն կաթնով յախպըրի ղերին,
Թուրն ը Կեծակին կը բյայնես Պովրան սընին.
Եթե Պովրան սուն կաբըցիր՝ կրկնաս Սասմա կռիվ,
Եթե չըկտրվավ, ետ կաանես։
Կանաչ Թուր էղնի՛,—ըսաց,—Մհերի մեկնիկ մանուկ որդին ես։
Էտ խրատըներ խոտ, տարցավ ըսաց.
— Տեվի՛թ, խըրոխպեր կուըրա՜ն,
Երփ օր կինես էտ յախպըրին՝ կաթնով յախպըրին,
Խանըխատեղն ի քու խոր, քու խոր խանըխատեղն ի,
Քուռիկն ի Ջալալին անտեղ կայնըսցնես,
Տու կըվըլացվես,
Քուռիկ Ջալալին, անտեղ ձիր կըթափես, աշը-իրես կըվլաս,
Աշը-իրես կըվլաս, ըզհանդատանաս։
Էտտեղ կընայես Պովրան սուն՝ յախպըրի կողքին ի,
Քո Թուրը կըբյայնես,
Եթե Պովրան սուն կաբրեց՝ կրկնաս կռիվ,
Կարող ես կռվել Մսրա Մելիքին,

[*] Երգ ես։

Եթե թուրը չըկտրեց էտ սանը,
Անկարելի պան ի, որդի՛,—ըսաց,—կըվհատառնաս,
Տու չես կարա Մսրա Մելիքի կռիվը անես։
Էտ խրատքեր խոս, տարցավ ըսաց.
— Տավի՛թ, խըրոխպեր կուրբա՛ն, նորամանուկ Տավի՛թ,
Խըրոխպեր կուրբան ըլնի էտ բոյին, էտ կլխին,
Միան կանչես Մարութա Պանցր Մայր Աստվածածի՛ն,
Խաչ-Պատրաստ վըր աչ թիվի՛ն,
Տո՛ւր մանուկ Տավթին ուժեղ զորութուն
Էն ժամանակ տու կարող ես կռվել,
Մինչև Սասմա ժամին չըկանչես,
Քու հօրնութուն անկարելի պան ի.
Սասմա վանքն ի քի պահում,
Էն ևկեղեցին ի կայներ ի աստու տեմ, քի կըպահի.
Առանց ի Մարութա Պանցր Աստվածածին,
Չէրթաս կռիվ Մսրա Մելիքին։
Էտքան խրատ խըրոխպեր խոս,
Տավիթ շնորկալութուն հայտնեց խըրոխպոր, ըսաց.
— Խըրոխպի՛ր, մնաք բարի,
Դնաց մանուկ Տավթին,
Դնաց խառնի Սասմա ժամին,
Կռվի անիրավ Մսրա Մելիքին։
Էտ Տավիթ խոսեց ու քշեց,
Քուռիկ Ջալալին քշեց, էլ տեղ չըկայնավ։

34. Քշեց, մինչև գնաց խոր Կաթնախպուր,
Ու Քուռիկ Ջալալին ետեղ ոտներ էզար կետին.
— Չե՛մ գնա, որ չեմ գնա։
Տավիթ չի խասկընա, մանուկ Տավիթ,
Թե էտ ուր խոր խանքելատեղն ի,
Մհերի խանքելատեղն ի, Մհերի .յախպուրն ի։
Անտեղ զանգին էզար Քուռիկ Ջալալու վորին,
Զանգին էզար՝ Քուռիկ Ջալալին կանգ առավ.
Նոր խասկըցավ։ խասկըցավ, էշավ։
Մանուկ Տավիթ էշավ Քուռիկ Ջալալու մեշքից,
Կզվավ Կաթնախպուրին, խոսավ պուտ մի ձոր, ըսաց.
— Ո՛վ Մարութա Պանցր Մայր Աստվածածին,
Տու տաս մանուկ Տավթին հօրնութուն՝ Սասմա ևկեղեցին։

Տ՚ավիթ ստացավ ուր Հօքնութուն,
Քաշնց ուր Թուր, կնաց Պովրատ սուն։
Կնաց Պովրատ սուն, Պովրատ սուն որ էղար,
Սունը կտրնց, էսննց կայնավ, չըշարժվավ։
Չը շարժվավ, Տ՚ավիթ էկավ ոխտաց, ըսաց.

— Ովոքերո՛, տուր կոտրի՛ք,
Ոտքերո՛, տո՛ւն թողնի՛ք,
Աչքերո՛, տո՛ւն կիրննի՛ք*։

Կորցավ, թողցավ։
Մանուկ Տ՚ավիթ ոտքերուց թողցավ,
Ովոքերուց թողցավ, աչքերից բռատցա՛վ։
Անտեղ Քուռիկ Ջալալին օխննց մանուկ Տ՚ավըթին, ասաց.
— Տ՚ավի՛թ, կանչի՛ Մարութա Պանցր Աստվածածին,
Օխնի՛ր ըզգի, տո՛ւն ինչպե՞ս ըզգ անեցքիր, բար տատցար,—
Էս Քուռիկ Ջալալին է,—օխնի՛ ըզգի,—ըսաց,—
Տո՛ւ կրատանաս ըլ զորութուն,
Կէրթաս Մսրա Մելիքի կովին,
Կազատնս Սասմա ևկեղեցին։
Երփ որ էդպես էկավ մեչտեղ Քուռիկ Ջալալին,
Էնտեղ Տ՚ավիթ նորից ըսաց.

— Ովոքերո՛, տո՛ւն կանաչի՛ք,
Ոտքերո՛, տո՛ւն սապանի՛ք,
Աչքերո՛, տո՛ւն լինննի՛ք*։
Կանչեմ Մարութա Պանցր Աստվածածին,
Խաչ-Պատրաստ վըր աչ Թիվին,
Տաս մանուկ Տ՚ավիթին մեծ զորութուն,
Թո՛ղ շարժի խարաֆ քամին,
Սան կտորներ որտեղ տանին։

Խեա կանչեց՝ խարաֆ քամին կայնավ,
Սան կտորներ տարավ, ամեն կտոր մե խըմ տարավ։
Տ՚ավիթ կտրեր ի։
Տ՚ավիթ ստացավ ուր զորութուն, ուրախացավ,
Գնաց Սասմա կովու։

* Երգ ևն։

35. Սասունցավ մեծ զորութուն, գնաց Սասմա կռվուն.
Է՛, տեսավ՝ Սասմա վանքըն կողոպտիր են,
Ինչ կա՝ Մսրա Մելիք պատչն դավաներ, ծխանքներ,
Սասմա ժամ թալանել, պղոր տուս խանել,
Ու ուր չադրը մե առանցին տեղ զարկել,
Որպեզի կռվող իլնի, Տավիթ կյա, իրան ևն կռվի։
Էդքան զորք զորութընով որ ես կնացի,
Տավիթ ո՞վ ի, որ ըմ տեմ կանդ առնի»—
Տա էլ ուր խամար կլուխ կը կյռվեր։
Կռիվ էդպես ի, որդի՛։
Էդտեղ կռվան։
Տավիթ կնաց Մսրա Մելիքին հետու սիմավորելու.
Մսրա Մելիք հե՛ռու տեղ ուր չադրը զարկեն,
Ու ասաց.—Մելի՛ք։
Ըսաց.—Համմե՛։
Ըսաց.—Մելի՛ք, սխալեր մարդ ենք,
Ա՛յ դուր, խեղճ ժողովրդին, խեղճ անճարեղներուն,
Խեղճ չքավորներուն պիրիր ես տու,
Տավիթի տեմ կռիվ կանես։
Ես, տու՝ սխալեր մարդ ենք, մե մոր ծիծ ենք կիրեն,—
Ըսաց,—սրի՛, օրհնքով կռվենք.
Ով վիր հախիմից, քաղ հախիմ, միմիան օրհնքով։
Մելիք նստեր ուր չադրի տակ,
Էն ժամանակ չկարեն* էստեղեն էնքան երկար ի,
Չկարեն պահեր ուր պերնին, կըբյայշի։
Կըբյայշի, ըսաց.—Տավի՛թ,—ըսաց,—
Ունե՞ս էդքան զորութուն։
Ըսաց.—Օրհնքով ունեմ զորութուն,
Օրհնքով ես, տու՝ կռվենք։
Էս խեղճ-խուղճ ժողովրդին, անմեղ չքավորին,
Անճարեղ մարդկանց, որ կորեկ խաց ծեռ չիչնի,
Հավաքիր ես, պիրիր ես Թլոր Տավիթին կռիվ։
Չես կարող,—ըսաց,—էնպես խելքով կռվենք.
Ով իր հաղթանակ տարավ՝
Հալալ ըլնի ուր կաթ իրան,
Ես, տու՝ մե մոր կաթ ենք ծծեր։

---

* Չկարա—չդարա—սիգար, ծխախոտ։

Ամմի խաթուն էլ պիրներ ուր խնտ,
Քորն էլ պիրներ ուր խնտ։

Մարա Մելիք էնտեղ ի՞նչ ուր անի.
Մարա Մելիք խոր փորից,
Մի խալի բլաշից խորի պերան, ասաց.
— Տանի՛ք, էթեն տոնի բու ծին էտ խալու էն եզրից Քոսուկի էտ եզր,
Ես, տոնի ախպեր ենք, օրննորով կուվենք,
Իրավունք ունես իմ շաղրը կյաս.
Էթեն չէ՝ տոնի հետու, ես հետու։
Է՛, Տանվիք ի՞նչ կիտես, թեն խոր ի փորեր, խալով ի ծածկեր։
Տանվիք ըսաց.—Ընտունեցի՛,—Տանվիք ըսաց,—բնտունեցի՛,
Մելի՛ք,—ըսաց.—ախպեր ենք, էրկուս մե մոր կաթ ենք ծծեր։
Տանվիք բնտունեց Մելիքի հրամանե։
Տանվիքը ծին բշից, խնտ բշիլուն՝
Ինքն էլ, ծին էլ հնացին խորի տակ։
Քառասուն մետր խոր ի փորեր,
Հնացին խորի տակ։

Տրանը քող կենան ուրանց նեղության մեջ,
Մենք լուր տանենչ Սենով Հովանին։
Սենով Հովան էտ կիշեր երազ ի տեսնում։
Երազ ի տեսնում՝ մանուկ Տանվիք չըկա,
Սատմա ճրաք անցուկ ի,
Մարա ճրաչ կը վառվի, լուս ի, փայլ կրտաս։
Սենով Հովան զարթընեց, էզար հնկան կողքին, ըսաց.
— Կնի՛չ, վե՛ր կաց,—ըսաց,—իմ աշքեր քոռացեր,
Սատմա ճրաք անցեր ի,
Մարա ճրաք լոսցեր ի,
Ձիմ մանուկ Տանվիք,—ըսաց,—կուրսեր ի։
Ասաց.—Դե՛, ջահնամ քու մանուկ Տանվիք,—ըսաց,—
Կետին մոնի, քող հա՛ կուրսի.
Ի՞նչ հօքուտ ի տվեր քի, փացի վնասից։
Քոնն քեզ համա կըքնես,
Էրազը հուրիշի կրտիանաս։
Աբի՛, տեղդ մրդրմի՛, քնի՛—կնիկ ա։

Սննով Հովան նորից սախսխավ,
Անագամ կնիկ էր, ուր ծնն առնց՝ սախսխավ։
Էլի քուն տարավ, քուն տարավ,
Էլի նուն երազ տեսավ։
Իրեք անգամ քնավ, իրեք անգամ զարթնավ,
Նուն երազ տեսավ.
Սասմա ճրաք մարեր ի,
Մարա ճրաք լուս կը տա, փայլում ի։

37. .Յելավ շորեր խաբյնավ, իտու Սասմա ճամպախ։
Շորեր խաբյնավ, իտու Սասմա ճամպախ,
Սասմա էլ էխան սարի կլոխ,
Է՛, ի՞նչ անի. ըսաց.
«Ինչպե՞ս անեմ, որ իմ նորամանուկ որտեղ ըլնի,
Որ իմ ծնն լսի»։
Յոթ պյամշու կաշի պատրոցրցնց Սննով Հովան,
Մինչև ծնն խոսեց Թնվիին.—
Պատմութուն էս ծնվին ի։
Կանչնց.—Տնվի՛ք, խրրոխտեր կուրբա՛ն,
Որտե՞ղ ե՞ս, որտե՞ղ ե՞ս,
Կանչի՛ Մարութա Պանցր Աստվածածին,
Խաչ-Պատրաստի իմ աչ թխվին,
Տա՛ս զորութուն մանուկ Տնվիին,
Էտնղնն տնես կըլնես։
Էլ չըկիտի, կիտի՝ կորցընցած, պայց ի՞նչ կիտի։

Սասմա ժամի զորութուն, Մարութա Պանցր Աստվածածին
Իտու զորութուն մանուկ Տնվիին,
Մանուկ մե անկամից շարժ իտ ուրուն, կանչնց.
— Ո՛վ Մարութա Պանցր Աստվածածին,
Խաչ-Պատրաստված իմ աչ թխվին,
Տա՛ս մանուկին մեծ զորութուն,
Ազատես էն նեղ խորից։
Նետ Տնվիի էտ աղաչանք արավ,
Աստվածբնեն զորութուն իտու,
Ինք, Քուռուկ Ջալալին մեանկամից
Խորից տուրս քոան վիրնվ խորի։

Ադաւավավ Տէվիթը, էն քառասուն մետրանոց խորից տուէ-
էկավ։

38. *Քառասուն մետրանոց խորից տուէս էկավ, կանչեց.*
— Հէ՛յ, Մարա Մելի՛ք, ինչպիսի՞ մարդ ես.
Հերթ ի՞մն ի, քե՞ քոն ի։
Արի՛,—բաց,—բուրըմ քը ծեռ, մե՛մ իմ ծեռն ի,
Արի՛,—բաց,—իրարու խեսո կովենք։
Մարա Մելիք բաց.
— Առաջու հերթ ընձի տո՛ւր։
Ըսաց.—Կրատ՛մ։
Ըսաց.—Քանի՞ դէրբից։
Ըսաց.—Իրեք դէրբ քեզի, իրեք՝ ընձի։
Հառաջ Մելիք ուր իրեք դէրբ բշեց։
Քշեց, Թլոր Տէվիթ վերացավ,
Երկնքից քառասուն մետր պտնցր վերացավ՝
Քուռիկ Ջալալու զորութունով։
Եվ իրեյ դէրբ իրի,
Իրեյ դէրբն էլ Տէվրթին չըպռնեց։
Տէվիթ կանչեց,—Մելի՛ք, ախպեր ենք,
Հերթ ի՞մն ի։
Ըսաց.—Այո՛, հերթ քոն ի։
Տէվիթ մի թուր վըրցուց,
Մի թափ ուր Քուռիկ Ջալալին բշեց,
Քշեց, որ պիտի զարկի Մելիքի վգին, թուցի,
Աամի խաթուն կայնավ մեշանդ, բսաց.
— Տէվիթ, էս ծծի կաթ շատ ես կիրեր, որդի՛ս,—բսաց,—
Տո՛ւր էս ծծի կաթի խաթըր էտ մե դէրբր։
Ըսաց.—էտ մե դէրբր՝ քու ծծի կաթի խաթըր, մա՛յր.—
Ըսաց,—ունեմ էրկու դրրբ էլ։
Մեկ էլ կնաց, իրի, Աամի խաթուն կայնավ, բսաց.
— Տէվի՛թ,—բսաց,—մեր մատա՛ղ ըլի քու արիվուն,
էտ մեկն էլ տո՛ւ քու քուրդ խաթըր,
Քու քուր քե էնքա՛ն շըլկեր, կետին ման ի տվե՛ր,
էտ մե դրրբն էլ՝ քուրդ խաթըր։
Տէվիթ բսաց.—էտ էլ քուրդ խաթը՛ր։
Մնաց վերչի դրրբ։

Վերջի դըրբ՝ Տավիթ կնաց, իր ուր ուժել թափով.
— Մարութա Պանցր Աստվածածին,
Տա՛ զորութուն Թլոր Տավթին։
Իր անուն էլ Թլոր կասի։
Է՛յ, Թլոր Տավիթ ուր Քուր քաշից,
Վերցրից Թուրն ը կնծակին,
Քաշից Մսրա Մելիքի վրին,
Թող կնա։

Էսքան պան ես Տավրթից կիտեմ,
Էլ Հայրիշ պան չըկիտեմ։

Սանահնի Տավթի
խեբաթը

պատմեց
Հարությունի Ռուշո Զալոյանը
Արարատ — Հողմի գյուղը
գրառված է 1972 թ.

Վիպասաց Ռաշո Մուրադի Չալեյանը (Հայտնի է Ռաշո Մուրադյան անունապատճառով) ծնվել է Շատախի Կաճևա գյուղում, մոտավորապես 1872—73 թթ.։ 1914-ին բնաջնջրով գաղթում է էջմիածին, հետո անցնում Կատաղի Թևքարակ և մոտակա գյուղերը, ապա կրկին վերադառնում Հայքենիք։ Զինվորագրվում է, կռվում Բուրքերի դեմ, անցնում Պարսկաստան, աշնանգից էլ, 1921-ին՝ Բաղդադ։ 1922-ին Բաղդադից գալիս է Սովետական Հայաստան, սկզբում Հատաստվում Ղամարլուում (Արտաշատ), որտեղից վերաբնակվում է Վեդու Շահապետ (այժմ Շահափ) գյուղում։

Ռաշոն գրաղմանքով հողագործ է, անգրագետ։ Վեպը լսել է ծննդավայրում՝ հնուկ գյուղացի Բազկա Շահինից, որը նույնպես գաղթել էր Արևելյան Հայաստան և 1923-ին, մոտ 80 տարեկան հասակում՝ մահացել Վեդում։

Ռաշոն, բացի «Մանանա ծոերից», գիտե նաև «Ռուստամ Զալը», որը պատմում է քրդերեն, նույնը հայերեն էլ գիտե։ «Ռուստամ Զալը» վիպում է բիվ տարով (ռեչիտատիվ), Ջիրդուստ «Շահ-Նամեհի» չափով։

Ռաշոն ծանր է լսում, արտասանությունը դժվարըմբռնելի է, բառերն արտաբերում է փորր-ինչ քավալելով։ Պատմում է Կաճևի խոսվածքով, ետյի և արտահայտության բարբառների խառնուրդով։

Վկայում է, որ վեպի պատումն սկսել են «Ողորմիսով»։ Առաջին Հյուրը պատմել Համատատ, «Ողորմիսը» երգել երկրորդ Հյուրի սկզբում։ Պատումը հատկանշվում է երգային հատվածներով, ավանդական հակիրճ պատկերավորությամբ ու բանաձևերով։ Նա վեպը հաճախ է պատմել ընտանիքում, համագյուղացիներին։

Ռաշոն բարեհամբույր, համեստ, փոքրամարմին, վախտ ծերունի է, սիրով հանձն առավ պատմել վեպը և պատմեց մեծ վարպետությամբ ու ոգեշունչությամբ։

Պատումն առաջին անգամ 1933 թ. գրանցել է Կարապետ Մելիք-Օհանջանյանը, տպագրել «Մանանա Ծառը» ժողովածուի Ա հատորում։ Ներկա պատումը հետաքրքիր է իրրև միևնույն վիպասացից երկրորդ գրանցում, ուր էլ 50-ամյա ընդմիջումից հետո։

Պատումն ուշագրավ է հատկապես նրանով, որ առաջին գրանցումը ընդգրկում է միայն երկրորդ (Մեծ Մհլը) և երրորդ (Դավիթ) Հյուղերը, իսկ երկրորդ գրանցումը նույնի գրեթե բառացի վերարտադրությունն է, հավելյալ առաջին և չորրորդ Հյուղերը։ Փաստորեն երկրորդ գրանցումը մի կողմից ապացուցում է պատումի ավանդականությունը և, մյուս կողմից, փոխում Ռաշոյի պատումի ծավալային տեսքի մասին մեզնե այժմ եղած պատկերացումը։

Ասացողը վկայեց, որ Մանանաթի և Բաղդասարի պատմությունը Շահինը չի պատմել, ինքը ուրիշից է լսել, որի անունը չի հիշում։ Վերնագիրը վիպասացինն է։

Ա

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

Կակիկ թաքավոր արաբներու իրավունքի տակ էր։
Ամուր մեկին Մովինար փիլաքաններու վրեն նատեր էր,
Արաբներու ոստիկաններ կըկյան։
Կըկյան, շատ կեղեցիկ ըլնում.
Միանկամից Մովինար որ կըտիսին,
Ըսկի ոնչ մե խոսք չըն իտա,
Հիմը ծիանք կըտացըցին, կէրթան Բաղդադ։
Կըսին.—Կակիկ թաքավորին ընենց ախճիկըմ կա,
Որ աշխարհ կան կին՝ չկա։
Ընտեղ արաբներ էկան, Կակիկ թաքավորին ասին.
— Մովինար Թր տան մեզի,—ուղըցին։
Ըսաց.—Ես հայ-քրիստոնյա իմ, տունք բուրթ-անօրա իր,
Ինչը՞ես իմ ախճիկ տամ քիր։
Արաբներ էն ժամանակ ուժեղ էն, էկան, կովեցին.
Կակիկ թաքավոր փախավ կնաց Կապոտ՝ Կապոտ պերթ,
Կապոտ պերթը Գյավաշ իր։
Անդեղ արաբներ ուժեղ է՞ն.
Մովինար կնաց, ըսաց.—Հայրի՛կ, զուր պան ի,
Մեր երիտասարդություն բոլոր տըտաս կոտորել զուր տեղ,
Ես էկերթամ։

Ես իմ օրընի վիրեն, էն ուր օրընի վերեն՝
Ես տրան կառնիմ։
Հըլավ տերտեր, օրհնե՛ց, կնացին։

2. Շատ կնացին, քիչ կնացին,
Ըրեն ամառն էր, ծարավացան։
Մարտվացան, Մովինար ասաց.
— Ես կէրթամ, էս ճոր կրխմիմ,
Թը մեռնիմ, թը ապրիմ՝ բա ծովու ճրեն։
Կէքա ծովու պերան,
Ասաու հրամանովը մե կապուտ քար տուս կրյնի,
Էն կապուտ քարից էրկու .յախպուր տուս կրյնի,
Մովինար կրխմի,
Որ կրխմի՝ կըհղանա։

Ջուր մինչև կէրթան Բաղդադ,
Ապա Բաղդադ ո՛ւր, Բաղդադ տիրոջ տուն ավրի՛,
Փեր կըճոչանա՛, խալիֆեն քիմանա՛...
Ջալաբներ ք'ավաքին, որ Մովինարի վիզ կտրին։
Ըսաց.—Հա՛յ, անաստավա՛ծ, քու տունը չըբանդվե՛ր,
Վեր աստվածծ կա, խեղճն էլ լավ պան ի.
Անաստուն,—ասաց,—ինչ անաստուն ի,
Եթե որ հղի իլնի, իրավունք չկա վիզ կտրին։
Կեցի՛, ինչ երեխեն պիրիմ, վիզ կտրիս,
Չըկտրիս՝ էս էլ քու կործն ի։

Կըմնա, ին ամառ վերեն, ին ավուր վերեն
Մովինար կրծնվի։
Մովինար կրծնվի, տերտեր անուն երեխային կրկնքի,
Մեկի անուն կըտրի* Սանասար,
Մեկ կըտրի Բաղդասար,
Էրկուս տղա կիյնին, հա՛։
Տիր մ'էլ խալիֆեն չալաթ կօրոխկի,
Թը՝ տրանց վիզ կտրեք։
Մովինար ֆանդով էր.

* Կըտրի—կըդնի։

— Ը՛, քու տուն չըքանդվի՛,
Վեր աստվածն ի, ցածն էլ տուն իս,
Շատ էլ տուն քաղավոր իս.
Տը կայնի, ըս երեխեք քը մեծացիմ,
Նոր վիզ կտրիս,
Չըկտրիս, էտ էլ քու կամքն ի՝
Կըմնա, Սանասար, Բաղդասար,
Ապա մեր երեխեք, ինչ մեն տարի կրճնչանան,
Անունք մեն օր կրճնչանան.
Տա՛ էլ աստուծմեն ի՝

Ավուր մեկին Սանասար, Բաղդասար տուն կրխաղեն.
Ըն տեսան՝ էլի ջալաբներ օրոխկեց.
— Կնացե՛ք, անու վիզբեր կտրե՛ր՝
Էլավ ինչ կալմակալ, Սանասար բսաց.
—Բաղդասա՛ր,—բսաց,—ի՞նչ մարդ էր,
Մտավ իմ մոր սենյակ։
Ձևլան կնացին, բսավ.—Մա՛, էտ ի՞նչ ին՝
Ըսաց.—Ջալաբներ էկի, մեր վիզ տը՛տանին՝
Սանասար տարավ-իպի, ապտակ մ՛էգար,
Էրկսի վիզն էլ թռավ կնաց էնտեղ։
Հա՛, էլ խալիֆեն չդիխշըցավ, որ վիզ կտրի՛ր,
Ուժեղացա՛ն։

3. Ավուր մեկին կէրթան ծովու պերան։
Սանասար կըսի.—Տղա՛,
Մենք ծովուց ինք ծնվի, հրուց ինք ծնվի,—ասեց.—
Ես կրմտանիմ ծովու մեջ,
Նայիմ՝ ինչ կա, ինչ չկա։
Կրմտի ծովու մեջ, մե քիչ կէրթա,
Մե շենք էտ ծովու մեջ կա.
Տուն կըպտնա՝ Կյուտի՛ն, Քամա՛ր, Ջըմի՛ն,
Քուռիկ Ջալադին, Թուր Կեծակին,
Հա՛, պոլոր պատրաստ, էտ գինք ու գրեն,
Պատրաստ կապուկ ա ծիան։
Էլավ, ծին քաշեց տուս, խեծավ, էկավ,
Որ ախպեր կըլա, կըսե.—Իմ ախպեր կնաց, խեխտրվավ...

4. Էլ անոր խալիֆեն չիխշա՞վ...
Ավուր մեկին խալիֆի վիճն էլ կտրե՞ց։
Կնաց, Մարութա Պանցր Ասավարածին էլ շինըցի՞ն։
Քարըքամբախ իլեր է մկա վանք։
Առժամանակ մ'էլ անոնք ախշար անցուցին,
Հետեվ անև ընկե Մհերին։
Մհերն էլ ախշար ժամանակ մը անցուց,
Ընկյավ Տավթին։

Բ

Դ Ա վ Ի թ

5. Էն օղորմի՞ն, ընչ օղորմաս,
Էն օղորմին մեզ էլ օղորմա՞ս.
Էն օղորմի՞ն, ընչ օղորմաս,
Էն օղորմին մեզ էլ օղորմա՞ս*։

6. Մարր կե՛ր Մելիք, Սասուն կե՛ր Մհեր։
Մհեր կնաց, Մարա Մելըքի հրեիր բանն կոդոպրատց,
Մարա Մելըքի մեր առեց, իպի, առեց։
Առեց, Մհեր մեռավ։
Մհեր մեռավ, պայց Մելըքի մեր ողով էր,
Էն էնտեղեն կնաց Մարը։
Էն կնաց Մարը,
Ին ամառս վերեն, ին ավուր վերեն՝ Տավթի էլավ։
Էթալ ուր ծրծվեր՝ չրպանեց։
Մելիք բաց.—Մարե՝,—բաց,—
Անի խայ ի անօրա, տոն բուրա իս անօրա,
Հորոխկե մոտ Մենով Հովան,
Քառասուն տիկ մեղր, քառասուն տիկ կարաբ ա՛ռ, պիր,
Հըրուր գնդրկ, տո՛ւր, Քրիս ուտի։
.Յելավ Հորոխկեց մե Մենով Հովան.
Հովան քառասուն տիկ մեղր, քառասուն տիկ կարաբ առավ իպի։
Մեր երեխեք ինչ մե տարի կրճնչանան,

* Երգ է։

Անի մե՛կ օր կըճնչանար։
Յոթ տարին որ լըմացա՛վ,
Մհեր, ողրմած, մեռավ։

7. *Մսրա Մելիքի օրենք էլ էն ի,*
Յոթ տարին մեկ անգամ Թարխան սաղ կըտան զարկել,
Փահլևանքառները պոլոր կըհավաքին,
Կէրթան մըջ տաշտին, հոլ կըթալին։
Տնվիթ էլավ, ըսաց.—Ես էլ կըկյամ։
— Ա՛յ տղա,—ըսաց,—տնն հըլա յոթ տարեկան ես,
Տու կյաս՝ ի՞նչ։
— Չէ՛, ես էլ տրկյամ։
Մեր ըսաց.—Դե՛, շըկի,
Տա՛ր, տիր էտ պանցը պլրի վրեն,
Կացե՛ք, հոլ թալեք։
Վերջ, շըկեց, տարավ, իսի պանցը պլրի վրեն,
Հոլեր թալըցին։
Ասյա, մի տր գնր Մսրա Մելիքի հոլ,
Տնվիթ կնաց, առեց Մսրա Մելիքի հոլ, էթալ.
Քառասուն մեատ փահլևանքառիրու Մսրա Մելիքի հոլ ընցուց։
Մելիք ըսաց.—Տ՛րնիմ, նրա վիզ կտրիմ։
Տղեյներ ըսըցին՝ փահլևանքառներ ըսըցին.
— Ախր, ըսիկ յոթ տարեկան ի,—ըսաց,—
Անիկ պան չի իմանա։

Ըսաց.—Որ չի իմանա, պիրե՛ք,
Տալիրըմ չամիշ տրինք ուր տեմ, տալիրըմ՝ կրակ,
Ըր ծեռ իտուց կրա՞կ, վո՛ւյա, պան չի իմանա,
Ըր ծեռ իտու զչամիշ, վո՛ւյա, տանինք, վիզ կտրինք, իտոք չկա։
Էլավ, ծեռ տվեց չամիշ, ուր ծեռ՝ Տնվիթ,
Խրիշտաներ զարկեցին վերեն, տրին վըր կրակին,
Կրակ կպավ մատի վերեն,
Մատ տարավ, իտու լեզուն,
Ըլավ Ըլոր Տնվիթ։

8. Մնաց՝ Մնաց յոթ տարի, դիր մ՝ էլ լըմացավ,
Դիր մ՝ էլ Մսրա Մելիք թարխան սազ էզար,
Պիրնց փահլևվանքահր պոլոր հավաքեց,
Կացին մըջ տաշտին, հալ կըթալեն։
Տնվիթ ընկավ հետևվ, տիր մ՝ էլ կնաց։
Վերըցին փահլևվանքահր հալեր, թալեցին։
Էկավ Մսրա Մելիքի հալի դոր.
Տնվիթ կնաց, ան հալ առեց,
Քառասուն մետր չէ, հարուր մետր Մսրա Մելըքի հալ ընցուց,
Բա՜, փահլևվան է, հա՜։
Մսրա Մելիքն էր՝ ա՛ըսպաներ։
Էվարին էկավ տուն, ըսաց.
— Մե՛ր,—ըսաց,—ինչ ժամանակ որ իլնի,
Տնվիթ ըմ թաբավորթուն ծնեն կառնի,
Ես սրան ա՛ըսպանիմ։
Ըսաց.—Տղա՜,—ըսաց,—տո՛ւ էրկու փահլևվանի ծոռ,
Թըխ տանին յոթ սարու խոսվ, ըսպանին,
Անու ծեն չառնի իմ ականջ։
Էտու էրկու ֆերիզ փահլևվանի ծոռ, ըսաց.
— Տարե՛ր, ըսպանեք։

9. Թև որ էն ժամանակ էրկու փահլևվանքահր հեռևվեն էր,
Տնվիթ անոնց հետևվեն էր։
Կնացին վըր Բաթմանա կարմընջին.
Մեկ ընցավ հետևվ, մեկ ընցավ հետևվ,
Որ պոնեն թիվթերից, թալեն կետ։
Տնվիթ ծոռ մ՝ էթալ ան՛ու մեջր,
Մեկ էթալ ան՛ու մեջք,
Մեկ էն կողմեն կեխեց,
Մեկ էն կողմեն կեխեց։
Ըսաց.—Տնվի՛թ, ի՞նչ կաննս,
Խաթըր տու աստծուն,
Մըզի մը թալի մեննակ թե էտ կետ,
Մինր, ինչ որ կա, առուգիվ քի կըսխինք։
Յեևան էկան, դրբան վերեն նատա՜ն, ըսաց.
— Տնվի՛թ, նըհա բու խոր խանբևլատեղն ի,
Նըհա բու խոր ջարբաբարն ի,

Նրհա քու խոր Մարութա Պանպրիկ Աստվարածին ի։
Ուրանց նշանակներ ցույց տվին։
— Պայց,—բսաց,—կբնեքրիմ՝ քյո առախ տաս,
Տանինք, մե լրպըստրակըմ, պանըմ բսպանինք,
Մեր նշանապան տանինք,
Մսրա Մելքի ծեռքից ազատինք։
Անոնք տարցան կնացի՜ն,
Տավիթ բլավ, կնաց Սասնա բաղաք։

10. Կնաց Սասնա բաղաք.
Երեխեք պարակ պարզըն կոտած ի,
Վերեն խարանգյոզալ կբխազան։
Տավիթ մե հատ պարզի կոռե՜ց, իսի կեսին. բսաց.
— Մեր տուն ակոլ չբլնի՜, էտ պարակ ի՞նչ ի,
Էկե՜ք, տրա վրա խարանգյոզալ խազանք։
Տղեկներ ղրմեն խեծան վերեն,
Տիր մ՝ էթող, հա՜մեզ մե տեղըմ ցրվըբվան։
Տիր մ՝ էլ, ասուծմե էր, ասուված կանչեց,—
Էն ժամանակվա մարդեր արդար են,—
Տիր մ՝ էլ ժիրվան։
Ամեն օր կէրթան, կեսին կըզարկի, Քնվ կտարի,
Կեսին՝ ետ կրկոտրի։
Մեծ իշխաններ .յըմեն կնացին մե Սենով Հովա՜ն,
Ըսավ.—Անի մեր բաղաք, մեր էրեխեք
Ջըմեն կրկոտու...
Պերնք անինք ուլերած ա, էծարած ա։

11. .Յելան էծեր պոլոր կըթըցին,
Քցին Տավրթի հիռչվի։
Տավիթ .յելավ առնց, տարավ.
Ընկավ էտ սա՜ր, բար, էնչբան ճանավար կէր,
Պոլո՜ր հավաթեց, իսի, իլից մեջ։
Սենով Հովան .յելավ միամիտ կնաց, ի՞նչ իրիշկի.
Էնքա՜ն ի ճանավար լցի՜, անհաշիվ։
Էկավ տուն՝ բաղթի մեջ, բսաց.
— .Յիլե՜ք վեր, տոներ կոցե՜ք, տարգյաստան կոցե՜ք,

Գախ էնքան ճանապար խոի՛,
Որ լցի մեր թաղաք, զրմեն ա՛ուտին։
Էվարին Տ՚ավիթ պոլոր խաու հրուշով ուր,
Պնդում ա կնդ։ Ըսաց.
— Հե՛յ, վիր մեկ ի՝ արիր իմ էրկու,
Վիր էրկու՝ ինչ արիր իմ չորս,
Վիր չորս՝ արիր իմ տաս,
Վիր տաս՝ արիր իմ քսան
.Յելե՛ք, տարե՛ք ծեր էծեր, կքե՛ր։
Լուսցա՛վ, մեկ չըտանի։
Մենով Հովան ըսաց.—Տավի՛թ,
Ըսա՝ խարամ կացե՛ք, խալալ մացե՛ք,
Խարամ կացե՛ք, խալալ մացե՛ք։
Ըսաց.—Խարամ կացե՛ք, խալալ մացե՛ք։
Ինչ ճանապար էր՝ կնացին, ուվեր մնացին։
Ուվեր տարան, քրդին մերեր։

12. Մյուս օր, տիր մ՚ էլ նախիր խաու հրուշով.
Տիր մ՚ էլ լըման տրեց։
Ավուր մեկին, .յրկուն էր, ըսաց.
— Էն տար մրկա էնքան ի տավ շատացի,
Որ փեսով էլ կըպատվվի։
Տ՚ավիթ ըսաց.—Վոյա՛, ես էլ կըկյամ։
Ըսաց.—Տղա՛,—ըսաց,—տո՛ւ տպա ես, ի՞նչ քիմանաս։
— Չէ՛, ես էլ կըկյամ։
.Յելան, կնացին։
Զուրի հըրկուն ոխշար ըսպանըցին,
Պիրին հեփրցին, կերան։
Տեսավ՝ Մարութա Պանցրիկ Աստվարածին,
Մարմար քար պացվավ, լոս կամար կապից վերեն։
Ասաց.—Խորոխպե՛ր, էնա տարի կլոխ ի՞նչ լոս ի կելնի։
Ասաց.—Միրանից կավըրավանքատերն ին,
Գյո կնվըրում դենած ի, կիսին, կուտին։
«Չըլնի,—ըսած,—շան որդին ըլնի կիշկերով էրթա»։
.Յելավ առից չոխու փեշ, խոի ուր տակ,
Շո՛ւշ մարդ էր, քոն տարավ։
.Յելավ տանակ էթալ, չոխու փեշ կարեց,

Ու, Տանվիթ դյութա ի՞նչ կա, .չկալավ պրննաց։
.Ձկալավ Մարութա Պանցր Աստվարածին.
Դյո մարմար քար պացվիր ի, լյա կամար կաթիր ի։
Երևր տիր համբուրե՞ց, նըռ-անիղ խազ քաշեց պուլի՞ր,
Էկավ, տըռ խոխպեր բնուկ։ Ըսաց.

— Խրրոխպե՛ր, տան և՛լ կայնի՛, տան և՛լ կայնի՛,
Էն մարմա՞ր քար պացվիր ի՛, լյա կամար վերևն կաթիր ի՛,
Ես էլ իրևր տիր համպուրևր իմ,
Նըռ-անիղ խազ քաշեր իմ պուլի՞ր*։

Էն մյուս օրը սհաչար մ՝ էրկու բսպանրցին,
Տանվիթ էթալ ուր Քևվ, .չկան Էկան Սանանա բաղաբ։

13. Ամեն օր, Տանվիթ սորվիր ի,
Ուր նևռ-անիղ կառնի, էկրիա Պառվու կորկին,
Լոր կրսպանի։
Պառավ բսաց.—Տի՛բամոր բալաբվոր,
Սանանա շաղկրմկերող Բլեր Տանվի՛թ,
Ի՞նչ իկիր իս, Պառվու որխս կրկորցիս։
Ըսաց.—Պառա՛վ, բա ի՞նչ անիմ։
Ըսաց.—Կնա՛, բու խրրոխպոր մոտեն ուպ.
էրկու խարիր խատ վարպետ,
էրկու խարիր խատ բնր տվող,
էրկու խարիր խատ բնր տաշող,
Կնա՛, Մարութա Պանցր Աստվարածին չինի։

.Ձկալավ էկավ մա՛ խրրոխպեր, բսաց.
— Խրրոխպե՛ր, խերախատ, որ խեր չունի՛մ,
անես ձի խերութենն,
Որ սեր չունի՛մ, ան՞խս ձի սերութե՛ն*։

Ըսաց.—Խրրոխպեր մեռնի՛ քը թերեն, ի՞նչ կուզիս։

Ըսաց.—Քենե կուզիմ, որ կուզի՛մ խարիր վարպե՛տ,

* Երդ են։

Քննե կուզի՜մ, որ կուզի՜մ՝ խարիր խատ քար տաշո՜ղ,
Քննե կուզի՜մ, որ կուզի՜մ՝ խարիր խատ կավ արող...[*]

Մե խարիր-խարիր առեց, խպի՜...
Տնվիից ընցավ հիռնիվ, տարավ.
Էրկուշաբթի սկսեց, շինեց,
Շաբաթ օր նորոքե՜ց,
Հաչ էզար կլո՜խ, էկավ։
Էկավ, Բաթմանա Բուղին տրեց վըր տըռան,
Ըսաց Բաթմանա Բուղին.—Ջուր ես չըգամ,
Որ տնե բատղին հիրար առնիս,
Քո խոբին կառնիմ։

14. Տիր մ՝ էլ էկավ, ուր նեռ-անեղ առեց,
Ընկավ Պառավու կորկին, լեր ըսպանեց։
Պառավ ըսաց.—Տի՜ բամոր պալաթվոր,
Սանամ շաղկըմկերող Բլեր Տնվի՜ի,
Ի՞նչ իկիր իս,—ըսաց,—Պառվու որխս կըտրցիր։
Ըսաց.—Պառա՜վ, բա ի՞նչ անեմ։
— Գնա՜,—ըսաց,—դյո՜ Կոզբադին լերան-լերա՜ն,
Դյո՜ էկիր ի, յոթ տարու խարչ կուզի։
Ըսաց.—Պառա՜վ, հո՞ւր ի։
Կնաց, խաու վրեն.
Կնաց, տեսավ՝ կոտով փող կըշափին,
Ըսաց.—Խըրոխպե՜ր, խըրոխպե՜ր, ելի՜ վեր,
Տնի նեզացար, հիմի ես կըշափիմ։
Ցելավ։ Տնվիի կոտ կոռծեց,
Ախր, կոտ էսպես շեղ կըտնին,
Ոսկիք կըլցի վերեն, փետ կըտա ինի՝ խը՜ռռ...
Ոսկին կըմնա վիրե՞ն։
Գո՜ Կոզբատին ըսաց.—Էտ չէ՜վ, Տնվի՜ի։
— Չէ՜վ։
Տնվիիը կոտ շըպըրտեց,
Դար կոտի կտորքեր չուր մըկա էլ կէրթա, հա՜,
Կլոխ կոտրեց։
— Գնա՜, ըսա Մելիքին՝ որ տնե չըկաս վըր ձիկ,

[*] Երգ է։

Մըր ձիու կ...ը ծնու կնկա ֆլան-բլեֆանը ըլնի։
Գո՛ Կողբատին .յելավ փողըընդծ,
Իտու վերևն կնաց Մարա քաղաք։

15. *Քնաց հախպուրի վերևն, ի՛նչ.*
Գո՛ ախճըկտեր, կընկտեր, էտոնք հանտեղ էիած ճրի։

Ասաց.—Գո՛ Կողբատին լեբա՛ն-լեբա՛ն,
Բևրնեն կըթափեր սըպըլկի քա՛ն,
Քնոտուն ապապ ախճիկ կըպիրես շարմատան,
Քնոտուն կոլոտ կնիկ կըպիրես՝ նրկանը ապան,
Քնոտուն հերկեն կնիկ կըպիրես՝ ուղտ պառնան,
Քնոտուն էշ կըպիրես զրա՛ն,
Քնոտուն աշան կըպիրես լծկան,
Տո՛ւ Սասո՛ւն կըպիրես քալա՛ն։

Ըսաց.—Հի՛, ես կրտեր՝ բար ու կապան էր,
Մըհա՝ տաշտ ու մալտան էր,
Մարդ կար ինի կազակն,
Անոր քրեր խուր-կեծակն,
Վաղ կարնան կիտեր տը կայնի,
Ձեր մարդու կ..ներ պիրի,
Շինիր ծև նղ ու չորքան։

16. *Ըդտեղեն կնաց, կնաց մա Մարա Մելիբին,*
Ըսաց.—Վա՛լլա,—բսաց,—դո՛ Տավլիթ իլիր է,
Էլ ծնու խարջ, ոչ մե պան չի տա։

Ըսաց.—Մա՛ա մ՝ էլ տը կտրի՛մ, էբենի՛մ,
տ՝օրոխկիմ արեվե՛լը,
Թը կեն խարիր խազար նոր մանո՛ւկ,
Մա՛ա մ՝ էլ տը կտրի՛մ, էբենի՛մ,
Թուղթ մ՝ էլ տը կրի՛մ էրընե՛,
տ՝օրոխկիմ արևմուտք,
Թը կեն խարիր խազար թուխ մորո՛ւս,
Մա՛ա մ՝ էլ կը կտրիմ, էբենիմ,
Թուղթ մ՝ էլ տը կրիմ էրընե՛,
տ՝օրոխկիմ հուսխա՛ն,

*Թը կայն խարիր խազար սըվակամորո՜ւա...**

Վհրշ, խարիր խազար զորք Մսրա Մելիք մեկանկամից
հավաքեց։

Անու մեր բսաց.
— Ես կիշեր էրազ եմ տեսեր.
Սասմա կիտեր բսատակ էր,
Մսրա կիտեր կրկեր քեմ այրուն։
Քե ես կասեմ՝ ամեն մ'էրթա վըր էն կորըճին.—
Ըսաց.—Ես կիշեր էրազ եմ տեսեր.
Սասմա ճրակ կպուկ էր,
Մսրա ճրակն էլ ընցուկ էր։
Քե ես կասեմ՝ մ'էրթա վըր էն կորըճին՞։

Ըսաց.—Մարե՛,—բսաց,—զուր պան ի,
Եթե զորք չհավաքե՛ր, վա՛յլա, չ'էրթեր ի,
Տր՛, ամեն զորք հավաքեր իմ, տ'էրթամ։
Ասբար առնց, էկավ, Լոռա տաշտ խոր՝
Հըտ աստղ էրկնուց...

17. Տիր մ'էլ Տավթի կնա՜ց,
Պառվու կորկի մեջ լեր կըսպաններ։
Ըսաց.—Տիրամոր պալաթվո՛ր,
Սասմա շախկըմկերող Թլեր Տավթե՛ր, ի՞նչ եկեր խա,
Խնդձ Պառվու կորկի մեջ լեր կըսպանես.
Գյո՛, Մսրա Մելիք եկև,
Լոռա տաշտի մեջ տրեր ի,
Տր Սասնա երկեր, խաղ ու բար պոլոր տանի կերի։
Մեռ տվեց, պարդի մ' քնշեց, կնաց։
— Խոզ վըր կոտին, ըտով տ'ե՞ս կռիվ անի։
Ըսաց.—Բա՛, ընչո՞վ կէրթան կռիվ։
Ըսաց.—Կնա՛, քո խըրոխպոր մոտեն ուզի.
Կյուտեն ի Մհերին,
Ջրզմեն ի Մհերին,
Քյամարն ի Մհերին,

* Երգ են։

Թուր Կեծակին,
Քուռիկ Չալագին,
Անով կնա՛, կռիվ արա՝
.Յելավ էկավ՝

18. Էկավ մեն խրրոխպեր, բաց.
— Խրրոխպե՛ր, խեբախատ, որ խեր չունիմ,
անես ձի խեբուքուն,
Որ տե՛ր չունի՛մ, անես տերութի՞ն՝։

Բաց.—Խրրոխպեր մեռնի՛ քու ջևրեն,
Ասա՛, նայիմ՝ ի՞նչ կուզիս։

Բաց.—Քենե կուզիմ, որ կուզի՛մ՝ Կուտեն ի Մհերին,
Քենե՛ կուզիմ, որ կուզի՛մ՝ Քամարն ի Մհերի՞ն,
Քենե կուզիմ, որ կուզի՛մ՝ Թուրն ի Կեծակին,
Քուռիկն ի Չալագի՞ն՝։

Բաց.—Ան պերան կուտե՛ր, ինչ քի բաեր,
Ես քեզ չըմ ափսոսամ,
Վա՛յլա, ես ապրանք կափսոսամ։
Բաց.—Ուխտ ըլնի, իմ կռվու մեջ
Իմ առաջի Թուր մըջ կլխուն իտամ։
.Յելավ պռոր առեց, իպի.
Յոթ կիտր պամպակ,—
Բա՛, ադա էր, տանձորս տարեկան էր,—
Յոթ կիտր պամպակ իտի Ջրգմեն,
Նոր դաղարան անու ոտքեր.
Յոթ կիտր պամպակ իտի Կյուտե՛ն,
Նոր դաղարավ կլոխ.
Յոթ փութ Քամար էկավ անու, իջավ փոր.
Թուր Կեծակին կապեց վըր ուր,
Մետրըմ կետին վե ավլեց,
Մետրըմ էլ կլխու վերեն իչավ։
Անու Մամիկ, Մհեր մեռեր էր,

* Երգ ևս։

Ան արևու իրես չէր տեսե, ըսաց.
— Թարխան սազ ավելք զարկնել,
Իմ նորամանուկ քերխ էրթա կռիվ։
Թարխան սազ ավին զարկել, ծիուն ըսաց.
— Բե՛ ուր խոր խանթելատեղ,—ըսաց,—
Բե՛ ուր խոր ջարբաքար,
Ջրլնի, տանիս կռիվ։
.Յելավ, ծին խնծավ, կնաց։

19. Կնաց Կաթնով հախպրրի վերևն.
Սին բառադա էթող, արածե՛ց,
Ինք կող էրավ, քնավ։
Էրավ, քնա՛վ, ակախավ՝ էննց լցվիր ի՛.
Յոթ կիտր պամպակ էխան ուռ՛ւս,
Նոր կնաց կլնախ.
Յոթ փաթ իկիր էր՝ մե փաթ իսի,
Յոթ կիտր պամպակ Ջրմից էխան,
Կնաց Ջրմին, կնաց անու ոտքեր,
Լցվա՛վ, հա՛։
.Յելավ, ծիու խայիշներ Թուլցրցո՛ւց,
Սին խնծավ, կնաց Պոլսե սան վերևն։
Սին ըսաց.—Տա՛վիր Թ, Տա՛վիր Թ,
Ահա թու խոր ջարբաքարն ի.
Թև նիե զրկըցիր,
Կալա՛մ վըր կալամին կըտրսցիր,—
Ըսաց,—քե կըտանեմ կռիվ.
Թև նիե չըզարկըցիր,
Կալա՛մ վըր կալամին չըտատարցիր,
Քի կըտաուըցեմ, կըտանեմ տուն։

Ըսաց.—Յա՛ Տեր Կենդանի՛ն,
Որդին Միածի՛ն,
Մարութա Պանցրի՛կ Աստվածածին,
Հա՛չ Պատրաստ Տա՛վրի աչ Թիվի՛ն։—

Քա՛շե՛ց Թուր կնծակին, էզար՝
Կալամ վըր կալամին տատարսցուց։
Պալց աներ ընկավ վըր իրար, չըշրուշրվավ.

Ըսաց.—Կտարե՞ր էն ծևո, թուլներ էն ծևո,
Ինչ էգա՞ր խոր ջարբաքար,
*Կալամ վըր կալամին չըտատրացո՞ւց**։

Աստծու խրամանեն քամին էգար,
Պովըտե սուն շըռչըվավ։

Ըսաց.—Կանաչներ էն ծև՞ո, ծաղկեր էն ծև՞ո,
Ինչ էգար խոր ջարբաքար,
*Կալամ վըր կալամին տատրացո՞ւց**։

Ծին խեծավ, անուն աստծուն արավ, քշից կնա՞ց։

20. *Կնա՞ց, սարի կլոխ կայնա՞վ,*
Քննց աստրխ էրկնուց ի, ապա՞,
Ինքն էլ տաս-տասնըշորս տարեկան տղա՞.

Ըսաց.—Նա իլնի արտըմ կորընկա՞ն,
Ես ըլնիմ սարա՞կ,
Ես չըմ կրնի գնա վե քաղի՞.
Որն էլ ես քաղեցի,
Ես ըլնիմ սարակ,
Ես չըմ կրնիմ գնա հավաբի.
Որն էլ ես հավաբեցի,
Ես չըմ կրնիմ գնա տիզի.
Որն էլ ես տիզեցի՞,
Ես ըլնիմ կրակ,
Ես չըմ կրնիմ գնա վառիմ.
Որն էլ ես վառեցի՞,
Ես ըլնիմ անձրևվ,
Ես չըմ կրնիմ գնա ընցուցի՞մ.
Որն էլ ես ընցուցի,
Ես ըլնիմ խարաֆ քամի՞,
*Ես չըմ կրնիմ գնա մոխիր տանի՞մ**։

* Տրդ. նն։

Միհ ըսաց.—Տավի՛թ, տո՛ւ մի՛ վախե՛, տո՛ւ մի՛ վախե՛,
Էնքան, ինչ քու Թուր Կեծակով ըսպանե՛ս,
Էնքան ես իմ ոտքերով կըսպանի՛մ.
Տո՛ւ մի՛ վախե՛, տո՛ւ մի՛ վախե՛,
Էնքան, ինչ տո՛ւ քու կուրզով ըսպանի՛ս,
Էնքան ես առամներով կըսպանի՛մ[*]։

Ըսաց.—Յա՛, Տեր Կենդանի՛ն,
Որդի՛ն Միածին,
Մարութա Պանցրիկ Աստվածածի՛ն,
Ես՛չ Պատրաստի վրը Տավթի ալ Թիվին.
Հիշյա՛ զՏեր Որդին։

Քնշնց Թուր Կեծակին,
Էրբնե կիտեր կայնիացուց։

21. *Անտեղ ճիչ մարթեր կենե.*
Ճրաքներ կպուցին՝ կիշեր էղավ.
Ըսին.—Տավի՛թ, քու տո՛ւն ակով չրնի,
Էնքան նորմանուկ ըսպանըցիր,
Մեր ասուց կրակ Թափավ վրը քի։
Տավիթ կայնավ։
Տավիթ կայնավ, քնին տարավ,
Քնին տարավ՝ զրնճըլթիներ Թալըցին, Տավիթ կապրցին։

22. *Մենով Հովան էլավ առու, տեսավ.*
Տավթի ասորդը նժդավ ի։
Կնաց, ըսաց.—Կնի՛կ,—բսաց,—վո՛ւյա,—բսաց,—
Մեր նորմանուկի ասորդը նժդավ ի,—բսաց։
Կնաց, ծին նստավ, բշնց, էլավ սարի կլո՛խ՝
Կո՛ Տավիթ զրնճըլթիով կապակ՝ քնիր ի։

Ըսաց.—Տավի՛թ, Տավի՛թ,
Թափի քը միս, հալի քը օսկոռ,—բսաց,—

---

[*] *Նրգ է։*

Յա՛, Տէր կենդանին,
Որդի՛ն Միածին,
Մարութիա Պանցրիկ Աստվարածին,
Հիշյա՛ զՏէր Որդին։

Չինք քաւի իտու, խըտ քաւի խոլուն,
Էղավ խազար խատ կտոր,
Ամմէն կտոր մե մարդ ըսպանից։
Քշից մըջ զորքին,
Էրբնե կիտեր կայնացըրուց։

23. *Անոնց մեջ խելոք մարդ կէր.*
— Ա՛յ մարդ, մենք նրա ճար չընք տանի,
Ըրխ էրթա, խովիվ ըսպանի,
Ոխշար զոր վի ա ըրխ էրթա։—
Ըսաց,—Տանվի՞ք,—ըսաց,—կնա՛, խովիվ ըսպանի,
Ոխշար,—ըսավ,—ըրխշո տառնան քին։
Ըսաց.—Ա՛հ, ձըր տուն ակոլ չըլնի,
Ինչո՞ւ շուտ չատացիք։

24. *Յելավ իտու վերեն կնաց։*
Կո՛ Մարա Մելիք քնիր ի,
Քնատուն ախճիկ ննու ոտքիր կըմաժին,
Որ ուր քուն տանի։
Քնատուն կիտր արճիճ կախե ուր չադրրից,
Անդան, ինչ ուր բեհն կըխանի՛,
Ա՛յ, արճիճ կրկպնի չադրի կլոխ.
Ինչ ուր բեհն քաշի,
Կիջնի վըր անու պերնին։
Ըսաց.—Ի՞նչ անիմ, որ Մարա Մելիք ակախի։
Կնաց, կուբնի խնի կարմըրցուց, իտու ոտաց տակ։
Ըսաց.—Ախճիկ՛ըք,—ըսաց,—
Ընչի՞ ձի խորոտ չըք քորի, ըմ քուն տանի։
Ըսաց.—Իլի՛ վեր,—ըսաց,—քու տո՛ւն ակոլ չինի,
Ո՞ւր ը քու զուրք, ո՞ւր ը քու նիզակ։
Յելավ կանավ, ըսաց.
— Հը՛յ, ուտիմ քիզ սըրտեշա՝ ճաշ չըմնա,

Ուտիմ ճաշ՝ խրամից չըմնա,
Ուտիմ խրամից՝ ընթրիք չըմնա։
Ասաց.—Իլի՛ վեր,—ըսաց,—քի ամեն էլ կամ։
Ասաց.—Տո՛ւ ըմ ճիչ ախպերն իս,
Քու իրեք դըրը գա՛րկ,
Ես ըմ աստված, իշկը՝ սաղ մնացի՛,
Ես էլ իմ դիմրեր կըզարկիմ,
Թե սաղ չըմնացի՛...

25. Մելիք Յելավ իտու վերեն կնաց մրնչել Դարալագյազ,
Էկավ, գՏանվիթ խրրիշտրկներ վերցըցին, գյորդ կպավ կետին.
Թո՛զ, դիմման էլավ երկնուց էրես։
Ասաց.—Վա՛յ, վա՛յ, շախրցինք, պախրցինր,
Մեր Թաղա՛ն Տանվիթ ըսպանըցինք։
Ասաց.—Էկո՛, գաբրիմ՝ էլ կամ։
Ասաց.—Իմ ծիու մանդիլ կորա էր,—ըսաց,—
Մայդան բիչ էր պոներ։
Կնա՛ց չում մինչև Զանգյազուր, էկավ, էգար,
Խրիշանկներ գՏանվիթ վերցըցին, գյորդ կպավ կետին,
Թո՛զ, դիմման էլավ երկնուց իրես.
Իրեք օր նոր թոզ, դիմման վըրցըվավ։
Ասաց.—Վա՛յ, վա՛յ, շախրցի՛նք, պախրցի՛նք,
Մեր Թաղան Տանվիթ գարկըցինք ըսպանըցինք։
Ասաց.—Դիրբ մ՝ էլ կամ։
Տիր մ՝ էլ կնաց, էկավ, էգար,
Տիր մ՝ էլ Տանվիթին պան չըլավ։
Թոզ, դիմման վերցըվավ, ըսաց.
— Զէ՞, իմ դորն ի։
Ասաց.—Հա՛։
Մեր էն կողից էկավ, ըսաց.
— Տանվի՛թ,—ըսաց,—շատ ըմ բի շախեր իմ,
Մեկ դիրբ տո՛ւ իմ խաթրրին։
Ասաց.—Հա՛յդը,—ըսաց,—դիրբրմ տվիմ քու խաթրր,
Մեկ էլ տվիմ աստծու խաթրր։
(Ամմեն պան, որ ախշրրքի մեջ կա,
Որ մրկա կըծիծղան, կապված է աստծուց)։
Ասաց.—Տանվի՛թ, վո՛ւյա, քու աչքերուց կըվախենամ։

Ըսաց.—Կնա՛,—ըսաց,—քնոստան գյաղ կետին տու փոթել,
Քնոստան ճաղցի բար տի՛ վըր քի,
Քնոստան կումշու կաշի տի՛ վերեն,
Ես՝ ըմ մե գնըր։
Քնոստան գյաղ կետին խոտ խորել,
Քնոստան կումշու կաշի էթալ վըր ուր,
Քնոստան ճաղցի բար էթալ վըր ուր։
Է՞ն Տնվիթ քնշից Թուր Կնծակին, ըսաց.

— Յա՛, Տեր Կենդանի՛ն,
Որդին Միածի՛ն,
Մարութա Պանցրիկ Աստվարածին։

Քնշից և Թուր Կնծակին,
Ճաղցի քնրքեր պոլոր կտրեց,
Կնաց, կումշու կաշիք կտրեց,
Կնաց, կլխուց կտրեց, ոտաց սգեղ տնուս էլավ։
Կանչեց.—Մսրա Մելի՛ք, քեզանից պոնա՞վ, ան չէ։
Ըսաց.—Ինչ լու մ՝ իմ կլխու մեջ կծի։
Մսրա Մելիք ինչ Քասի խոտ, իրար խոտ,
Ըլավ էրկու կտոր։

26. Տնվիթ Սանդուտ խանումի անուն լսեր ի՞։
Յելավ Քուռիկ Ջալալդին խնծավ,
Կնաց, անու բախշի մեջ ուր ծին բառադա արավ
Ու կող ըլավ, քնավ՝ Տնվիթ։
Տնվիթ ի՞նչ, Տնվիթ երկուղ ախշըրդում չունի։
Լոսըցավ, Սանդուտ խանում էլավ վեր, ըսաց.
— Է՛յ, խավք ուր Քնվով, օց ուր պորտով,—ըսաց,—
Ըստեղ չըկըրցիր է կնացի,
Տնի ի՞նչ մարդ իս։
Ըսաց.—Ես ականջուց ծանոթ իմ, մե քիչ մոտացի՛։
— Հա՛,—ըսաց,—գո՛ էս ծուռն ի, իկի՞ր ի, հա՞։
Ասաց.—Տնվի՛թ,—ըսաց,—իմ խոր քնոստան փաշլավան կա,
Մըկա կիդան, բու անկճքիր կտրին։

* Այստեղից մինչև վերջ պատմեց մեր խնդրանքով ու հիշեցումով։ Հրաժարվում էր պատմել, պատճառաբանելով, թե դա երգով չէ, «պատմութքն էս» Տանգ. բանահավաքների։

Ըսաց.—Հո՞ւր ին։
— Գյո՛ էնա հանտեղն ին։
Տ՚ավիթ հըլավ վե, կնաց,
Քառասնի Քրեր պոլոր ծեռքից առնց, ըսաց.
— Տանիմ,—ըսաց,—Սանդուտ խանո՛ւմ, տանիմ Սասուն,
Ախճըկաներ անին շնխպիկ, տանին պանջրի։

27. Մե հուրիշ Քաքավէրն էլ իկիր ի,
Որ գոռոմա Սանդուտ խանում տանի։
Տ՚ավիթ ասաց.—Սանդուտ խանո՛ւմ,
Ես գյո կէրթամ կռիվ.
Իրեք ավուր վերեն նէվն ես էկա՚՝ էկա,
Թի նէվ չեկա՝ կըկյաս, իմ Քիսի** կըպախա։
.Ձըլավ կնաց, պոլոր զորք կոտորեց,
Սանդուտ խանում իլավ իտու վրեն կնաց.
Ճանդակներ հա՛ կըշրշի տեն,
Կըշրշի տեն, կըշրշի տեն, կըշրշի տեն,
Տեսավ՝ մե ծիավոր մ՚ էն կողմից կըկյա։
— Հե՛յ, տո՛ւ ի՞նչ իկիր իս,
Ճանդակներ կըփըրփրրիս։
.Ձեյան էրկուս խրտրաց էկան։

28. Կնացին Սանդուտ խանումի շենը.
Նա խասավ Սանդուտ խանումի հիրես պաքնեց,
Կնաց էն մի հիրեսն էլ պաքնեց,
Ծեռ էքավ փողպատ,
Օր ծծվեր խանեց, վերեն պաքնեց, ըսաց.
— Հո՛յ, կարբով ա,—Սանդուտ խանում ըսաց,
Ըսա՛ց,—ըս մի հիրես՝ նեղութուն քաշիր իս, իկիր իս,
Ըս մի հիրեսն էլ՝ կացիր իս կռիվ,
Ընքան կոտորում ավիր իս՝ անու խաթրին,—
Ըսաց,—Պայց սիրտ ի՞նչ ի։
Տ՚ավիթ ծուռ մարդ էր,
Համա իշավ, ծին խնծավ, յա՛լլա։
Սանդուտ խանում ըսաց.—

** Թիսկ—դիսկ։

— Նա ծուռ ավարեն, ապա ձի էիծող կնայ։
Սանդուտ խանում ընկավ հիասվ,
Սոլեր կըտրտավա՜վ, քաթեր կըտրտավա՜վ,
Ոտքեր ղըմեն էլավ էրընքըթա՜խ։
Ըսաց.—Տնվի՜թ, Տնվի՜թ, քու տո՜ւնը չըքանդվի,
Վեր,—ըսաց,—աստված կա՜,
Մե հատ հըլը ըշկե՜, տես, ի՜նչ օրին իմ ընկի։
Նոր ծին կայնավ, խեծրցուց,
Եըտրաց իլան կնացին Սասուն։
Յոթ օր խարկ, խարսնիք,
Ջարիըցին, խաղացին, քափըցին,
Սանդուտ խանում առեց։

29. Սանդուտ խանում տղով էր.
Ասաց.—Սանդուտ խանո՜ւմ, ես դյո կէրթա՜մ,
Նրեն տղա էլա՜վ, իմ բաղբանդ կապիս անու թիվին,
Նրեն ախճիկ էլավ, կըծախիր, կուտիր, չուր ես պիկնամ։
Չկտիմ, Տնվիթ կնաց, քանի տարի չէկավ,
Քսան տարի, քանի...
Էկավ, դյո երեխեք քնդրի մոտ կրխաղան.
Երեխեք պուլը փախան, դյո հսկա մարդ մի,—
Հակիր, մրկա կըսին Մհեր,
Ինն դրբերով Հակիր ի,—
Տնվիթ ծին բշեց վերեն,
Հըմա ծեռ խու՝ ծիուց իպի տակ
Ու ոտքեր՝ ծնկի վերևվով կնաց ածու սրտի վերեն...
Տնվիթ բաղբանդ ճանաչեց, ըսաց.
— Տու վի՞ր տղեն իս։
Ըսաց.—Տնվիթ տղեն իմ։
Ըսաց.—Աշխարքիս մեջ քի մահ չըլնի,
Քեր պացվի, էրթաս քեռի մեջ,
Չուրի մինչևվ ցորեն էղնի քըց նուան խատ,
Ամբողջ ախշար ըլնի քեր,
Նոր էտ քեռուց դաս տուն։

30. Տնվիթ հառաջ Սբփըլկի Սոլթիկն էր նշանվի։
Սբփըլկն Սոլթիկ հօրոխկեց, ըսաց.

— Տավիթ կյաւ։
Մեկ ախճիկ էլեր էր Սրփրկի Սալթկին։
Յելավ խոս վերեն, կնաց Մուրատ կետ, լողացավ,
Էնտեղից էն ախճիկ գուրզ էգաբ,
ՋՏավիթ բսպանեց։
Մասունցիք կնացին Կլաթ, գրմեն կոտորըցին,
Ներ ասու ճանդակ տոքն պերին։
Օղորմի,—բսաց,—Տավիթին, Սանդուտ խանումին,
Որ մե աղատեց Մելիքի ծեռքից...

Գ

ՀԱԿՈՐ

31. *Մնաց Հակոր։*
Հակոր կնիկ մը առավ, կնիկ մեռա՜վ։
Էկավ, գո անեծկուկ էր,
Տողի վըրեն չըր կացնեւ։
Էկավ մեր վանա կուշտ, քոր պացվավ,
Ակրոպու քոր կասին*, պացվավ, կնաց մեջ։
Մրկա պուտ-պուտ ճոր կրկյա,
Կասին՝ անու աչից արտրսունքն ի։

Էսա ի Տավրթի պատմութիւն։

---

* Ուշտն «Ակրոպու բարբ» առուգրաբառում է «Ակոպի բարբ», որի մէջ մտել է Հակորը։ Ստե. բանահավաքներ։

Սանան Խակթի Հեքիաթ

պատմեց
Մշեյի Մարտիրոս Գրիգորյանը
Հավաքեց և գրի առավ Զեյվա գյուղում
գրառված է 1971 թ.

Մարտիրոս Ավետիսի Կրիգորյանը (Սղակցի Մարտո) ծնվել է 1896 թ. Մշո Սղակ գյուղում։ 1914 թ. ընտանիքով գաղթում է Արևելյան Հայաստան։ Երկար թափառումներից հետո 1919 թ. անցնում է Կարս և մի քանի ամիս բնակվում Բաշքադիկլար գյուղում։ Կարսի անկումից հետո գալիս է Վերին Զեյվա և այդտեղ էլ մշտական բնակություն հաստատում։

Մարտոն զրաղմունքով հողագործ է, միաժամանակ եղել է հայոնի երաժիշտ-նվագող (դուդուկչի)։ Երևան տարի անընդմեջ նվագել է, այժմ հիվանդության պատճառով չի նվագում, արհեստ ու գիտելիքները ավանդել է թոռանամյա որդուն՝ Վանդին (Վանիկ)։ Նրա փեսան Մուշում և այստեղ ճանաչված դհոլչի Մամբրեն է, որը նվագել է Մշո Վարդենիս գյուղացի, հռչակավոր դուդուկի Մարտիրոսի (բոշա Մարտիրոս*) և Արտանըշի դուդուկչի Ավիկի հետ։ Մարտոն պարեզանականները սովորել է Բոշա Մարտիրոսից, իսկ նվագել նրան սովորեցրել է Արտանըշի Ավիկը։

Մ. Գրիգորյանը գրամանաշ է, լավ գիտե «Սասնա Դավթի հեքիաթը», որը բազմիցս պատմել է Վերին Զեյվայում, իր համագյուղացիների միջավայրում։ Վազը լսել է հորեղբորորդուց՝ հռչակված բանասաց Գաբրիել (Գաբրիել Սաֆարյան) Մուշում և այստեղ՝ Թալինի Ներքին Աղչաղալա գյուղում (այժմ՝ Ներքին Բազմաբերդ)։ Գաբոն մահացել է 1940-ական թվականներին։ Նա, բացի Մարտոյի, իմացել է 360 հեքիաթ։ Մարտոն վկայում է, որ «Սասնա Դավթի հեքիաթը» յոթ ձյուղ է ունեցել, սակայն ոչ մի ասացող յոթ ձյուղը չի իմացել։ Գաբոն գիտեր միայն 2—3 ձյուղ։ Վիպասացը ձյուղ ասելով հասկանում էր վիպական գլխավոր հերոսները. այսպես՝ 1. Մանասար, 2. Բաղդասար, 3. Մհեր, 4. Զննով Հովան, 5. Յոան Վսբի, 6. Դավիթ, 7. Փոքր Մհերս Նա պատմեց մի փոքր հատված էլ Փոքր Մհերից։

Մ. Գրիգորյանը բարձրահասակ, կանոնավոր դիմագծերով և համակրելի արտաքինով առույգ ծերունի է, պատմում է հանգիստ, հաճելի ձայնով։ Առաջին իսկ հարցմանը՝ վեպն իմանալու մասին, պատասխանեց գրական և հասասաանեց, որ ինքը լավ գիտե այն։ Պատմեց բանիմաց ասացողի նման, տեղ-տեղ միայն, ժամացույցի պատճառով, շփոթում էր միշտգնկերը, բայց շուտով վերագտնում էր դեպքերի վիպական հաջորդականությունը և անցնում առաջ։

Վերնագիրը վիպասացինն է։

---

* Բառ Մարտո Գրիգորյանի, «երկրում» ով դուռնա կամ գհոլ է նվագել, կոչել են «բոշա»։

Ա.

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

Սանասարի մեր ու Բաղդասարի՝ շահըն գերի է վերցե՛.
Տարե իրա համար։
Հետս նա հա՛ շալին խատե,
Հա՛ խատե, հա՛ խատե, հա՛ խատե, հա՛ խատե,
Էդ Ծովինարն է էդե.
Քառասուն օրով, քառասուն տարով շալին խատեր է,
Թե.—Անպայման ես քզի գդի առնիմ։
Շալին խատեր է, էդեր է ծովի բերան,
Էդե, հասե ծովի բերան, մդեր է ծովի մեջ,
Քարից ջուր է թափե ծովի մեջ,
Գնացեր է, էրդու շաք ջուր է խմե Ծովինար էդ ջրից.

---

* Սանասարի և Բաղդասարի հատվածը Մարտոն պատմեց վերջում, մեր հարցումներից հետո։ Այն հարցին, թե ինչը գիտե՞ Սանասարի ու Բաղդասարի մասին, Մարտոն պատասխանեց. «Սանասարի ու Բաղդասարի պատմությունն ես էլ-քան գիտեմ, օր...» ու այստեղից սկսեց պատմել վերոբերյալ հատվածը մինչև Մեն Մհեր Սաե. բանաճավաճներէ։

Սանասար ու Բաղդասար էդած են էդ էրգու շաք ջրից,
Դրա համար լը ասում են՝ Ծովինար։
Ծովինար էդպես հղացեր է, մնացեր է շայի մոդ։

2. *Շահն ուզեցեր է զգուխ կդրել,*
Թև.—Ես իր մոդ չըմ գնացեր ի,
էդ որտեղի՞ց դա հղացավ։
Իր խելոք մարդիկ հավաքվաձ, էդած, շային համոդաձ,
Թև.—Հղի կինը՝ իրավունք չունինք սուր վրեն բարձրացնենք։
Թո՛ղ մնա, ազատվի,
Ազատվելուց հետո իրա գլուխ լը կդրինք, վերնխանց լը։
Թե մեզ էդավ՝ մեզ, էրգուս էդավ՝ էրգուս։
Ծովինար կըմնա էդպես, առանցի ոևէ մի վտանգի, մինչի կաղատվի։
Ազատվելուց հետո էլ արդեն
Նորից խելոք մարդիկ էլի շային պրհամոդին,
Թև.—Քոլփա ին, թո՛ղ մնան, մե քիչ մեձանան,
Նոր նրանց գլուխ...
Ո՞ւր, քու ձեռքից ո՞ւր կազապրվին, կէրտան։
Հա՜ էդպեսով, էդպեսով, էդպեսո՜վ,
Տղեկներ համարե թե յոթ-ութ տարեկան էդած,
Արդեն Ծովինարը մի կերսով շայի ձեռքից թռեր է,
Թե ինչ տեսակով էդե՝ էդ չգիտեմ։
Թռեր է, ազատվեր, էդե։

3. *էդեր է ելե մինչ ի Սասնու ախպրի ջրի վրեն։*
Տեսեր է, օր մի բարագ ջուր գիկա վերևից,
Առու է, փոքր առու է,
Գիկա ու գնդրգե մի մե՜ձ, հսկա գետի,
Կը կդրե ըսենց գեղ, գնդրգե պադին
Ու ներ բաժա գառնա, խառնվի ջրին։
Սանասար ու Բաղդասար խելոք կէղնին,
Կըսին.—Էս ջրի վրա ապրողը,
Նա անհախտ մարդ գուրս գուկա։
Տեսեք, էս փոքր ջրի ուժն ինչ է,
Օր հսկա գետ, հրմը՜ իգալու բաշտան,

Ծող խաւվի հեղ, ինչի՞ գըկդրե ընցնի,
Փուլ գըգնդրգն՝ նոր գըխաւվի հեղ.
Նշանակում է՝ սրա խմողը անհախտ մարդ դուրս գըկա։
Էդանախից բռնին էդ ախպրի հե՞ղ,
Գելնին Սասուն,
Գելնին էդ ախպրի ադան վրեն։
Գելնին ախպրի վրեն, էրգու փոքր էրեխա ին,
Իրանց մեր միննադ իրարու հեղ,
Գելնին էդ ախպրի վրեն։
Հակա մարդ էղած Սանասար ու Բաղդասար.
Կըսե՝ ամեն մի բար կըվերցնեն,
Կըդրկեն, բերեն դրեն, իրանց տուն չինեն,
Որպես հեմը բցեն՝ մի տուն կըմնդ չըր բաշե։
Կըսե՝ ընենց մեծ տուն չինեցին,
Օր էլ ոչ չափ կար, ոչ սահման.
Կըսե՝ մե՞ծ սալեր, բերեցին, բցեցին,
Սալով ծածկին, բսին.
— Ըրը ո՞վ գդնինք, մեր տան անուն դնե։
Էդ մեծ, հակա տուն օր չինեցին,
Իրանց տան անուն գրող չկա,
Մարդ չկար ուրանց բոլոր։

4. Գելնի Սանասար ձին գ՚հեծնի,
Գիջնի հանդի մեջ, կըսե.
— Էրտամ, գյուղրանքներից մի մարդ գդնամ, բերիմ,
Մեր տան անուն ըո դնի։
Գիջնի հանդի մեջ, կըտեսնա.
Մի ծերունի մարդ չուր է անում։
— Հայրի՛կ,—կըսե,—ի՞նչ կէդնի,
Քու էդներ հարցըդնե, ըո բտեն պրաձան,
Մի կես ժամով էրտանք մեր տուն ու դաս.
Էլի ես գդի ձիով բերիմ, չիգամ բտեղ։
Կըսե.—Բալա՛ ջան, ես ծեր մարդ իմ,
Ջըմ կըռնա քեզի էրտա։
Կըսե.—Ես բզդի էդ ձիով կըտանիմ,
Ձիով կըբերիմ բտեղ։
Կըթալե բտաղ, կըտանե։

Կէրտա հասնի տուն,
Մինչի մի փաթ ուրանց տան բոլոր բիձեն շուռ գըկա,
էրկու ժամ կըտևվև։
Կըմդնի նևքանվ, բիձեն էապես չի՛ րա կողմ կընայե։
Կըսե.—Հայրի՛կ,—կըսե,—իմա՞լ է մեր տուն,
Մեր տան անուն դի՛ր։
Կըսե.—Ա՛յ բալամ, մեր տուն ի՞նչ տուն է,
Ձեր տուն սասում է։
Օր կըսե՝ սասում է, կըսե.
— Ա՛ն, բո՛լ է, բո՛լ է, բո՛լ է։
Տան անուն մնաց Սասուն.
էդ բիձի գրած անունն է։
Սանասար ու Բաղդասար կաբրին բդտեղ,
Գրանցից յատաջ գրկան Մհեր,
Ջինով Յովան, Յոան վևբևն.
էդ իրեք լը ախպեր ին,
Թև վիր տղերն ին՝ չըմ դինա։

Բ

ՄԵՒ ՄՀԵՐ

5. Մսրա Մելիք նե օր գըմրհանա,
Դավիթի հեր Մհերը Մսրըը գըտիրե։
Նե օր գըտիրե, Մելիքի մեըր կրկանչե տանե ուր մոդ,
Մի տարի չորս-հինդ ամիս բդրան գըպայե,
Որպես թև իրանից մի գավակ ելնի,
էղնի նորից Մսրա տեր։
Եվ իրար, նորից մի հատ Մելիք գըծնվի նրանից,
Հարբեցողութեյան մեջ գըպայե էդքան ժամանակ,
Որ ինչ է՝ Մհերը չիմանա,
Թև գյուղից է դնացե, թև որտեղն է էղե։

6. էդ ժամանակ բրիստոնեութեյուն շատ թունդ է էղե։
Մհերի կինը, նե օր Մհերն էգեր է,

Էլ չի Քողի՝ էգն տուն
Եվ իր անդողինն էլ չի Քողն դնացեւ
Ըսեր է.—Մինչ ի քա՞ռասուն տարի չըլրանա,
Դու իմ անդողին չես դա։
Բոլոր ժողովուրդ էգած է, քաւած,
Էդ կնգան համոզած, ուղարկած, Քև.
— Քառասուն տարի՝ արդեն Մհերի կիանը կէրտա,
Էլ ինչ րդի մեզի գավազ էղնի,
Օր ևնի, Սասնու տեր գառնա։
Հլա Դավիթ չկա։
Էդքանից հետո, գիլնին խնդրին, կաղաչին,
Իրանց բնդհանուր խելոք մարդիկ դիկան, դ՚հավաքվին,
Քառասուն տարին գրորոշին քառասուն ամիս,
Քառասուն ամիս գրորոշին քառասուն շաբաթ,
Քառասուն շաբաթ գրորոշին քառասուն օր,
Մհերի քառասուն լրանա, կին բնդունի իր անդողին։

Եվ էդպեսով էլ, ասում հրամանով
Հրիշտակն դիկա, էդ Մհերի կնգան կըսե.
— Որ էգավ քու մոդ,
Քեզանից մի հագ տղա կէղնի,
Եվ դու էլ, քու մարդն էլ գըմբրհանաք,
Էրգուսդ էլ ձրր էրեխի ձեն չնք լսի։
Եվ էդպեսով քառասուն գըլրանա, դիկա ուր մոդ։
Ինն ամիս, ինն օր, ինն րոբեն գըլրանա՝
Դավիթ կէղնի։
Դավիթ էղնելուց հետո էրգուսն էլ գըմբրհանան։

Գ

Դ Ա Վ Ի Թ

7. Յովան Քուռիդ Ջալալին գրբերե,
Դավիթ գրկաբե բամդի վրեն,
Յա՛լլա, գրճամպցու Մսրը՝ Խամիմ խանըմի մոդ։
Խամիմ խանըմ Մելիքի մերն է,
Գրճամպցու ուր մոդ, կըսե,

— Դավիթ բդի պաչիս՝ Մհերի խաթրի համար։
Էն էլ էնրես գըպայե օր՝ սրտի նման գըպայի։
Կըմեճանա, կէդնի էս էրեխաների չափ*,
Կըմեճանա, կէդնի յոթ-ութ տարեկան,
Իր հասակակից ընկերների հետ կէրտա, գրխադա.
Որ մեզի Քեվ գըրտնե, քաշն էն յան,
Քեվ գըտոգվի իրանից։
Գիկան բոզոք Իամիմ խանըմի մոդ, ասում ա.
— Ձէզ Սասնու էթում բերեր իս, գըպայիս,
Ինչի՞ համար,— ասում ա.—
Դի՛ր ձիու վրեն, նորից տար, Քալ իրանց յան,
Մըր էրեխեք,— ասում ա,—
Էն օր գըգնըդե՝ գլուխ ջարդե,
Էն օր գըբռնե՝ Քեվ գըհանե տեխեն,— ասում ա,—
Բավական ա,— ասում ա,—չենք կըրնա տանե։
Ասում է.—Էրեխա է, չըֆահմի։
Ասում է.—Ի՛նչ էրեխա, ի՛նչ բան,
Թշնամություն ա անում,— ասում ա,—
Թե ինչ է՝ նա ասունցի է, մենք մարեցի ենք,
Ձմդի, որտեղ հասնի, ընդեղ գըգնըդե,
Ջարդուփշուր կէնե։
Գըբերին Դավիթին գրփորձին.
Գըբերին կրագ կըդնին, բան կըդնին,
Դավիթ ձեռ, ասում է, ասում հրամանով,
Որ գըտանե դնպի նորում կամ մի լավ բան վերցնի,
Հրիշտագ գձեռ կըգնըդե, տանի կրագի վրեն,
Ձկրագ վերու, գրե վըր լիզվին,
Ուր լեզուն վառի՝
Ասում են Թլոր Դավիթ բգրան։

8. Նորից գնէնին Դավիթին կուղարդին, .յիգա։
Կուղարդին .յիգա, որպես, ընդեղ Լոխտոա ջուր կա,
Ըդեղ մեծ կարմունջ է,
Կիգան էրդու ձիավորի, կրտին.

* Վերաստաջը ցույց տվեց իր յոթ-ութ տարեկան թոռներին, որոնք ուշադիր լսում էին պապին։ Ծան բանահավաքների։

— Տարե՛ք, էնենց բդի մորտիք ըդրան,
Ուր շորեր քանիխիք արյան մեջ, բերիք .յիզաք,
Օր սաղ չէրտա Սասուն։
Օր էսի գնաց Սասուն,— ասում ա,—
էլի նորից կէդնի աժդահար մարդ,
Գիկա, մեր Մսրը էլի քարուքանդ կէնե։
էրդու ձիավոր կըդրին* հետ, կըբերին։
Գիկա էդ ջրի վրեն,
Դավիթ էն ժամանակ բավականին բան է էդի.
Մե մարդ զրնգնի .յառաջ, մեդ՝ ետ,
Դավիթ ասում է.— Չէ՛, չէ՛,
Դուք էրդուսդ լի գնացե՛ք,— ասում ա,—
Դուք էրդուսդ լի գնացե՛ք,
Ես չըմ վախենա.
Դուք գնացեք, ես զրնգրնիմ զկարմունջ։
Ի՞նչ կէնեին՝ Դավիթ .յառաջ չընգնի,
Ոչ .յառաջ զրնգնի, ոչ էլ էրդուսի մեջտեղ զրնգնի։
Կրտեսնա, օր էրդու ձիավորի սերտ խարտ, վատ ա,
Ասում ա,— Արե՛ք, տրե՛ք,— ասում ա,—
Ես գիտեմ, դուք էրդուս էգեր իք,
Ընձի բատեղ բդի սպանիք։
Գելնի գրվագն գես-գեն,
Մի հատ լարբատրագ բանե,
Բանե մորտե, զուր շարիդ զրհանե,
Ըդ լարբատրդու արյան մեջ կոդողե,
Կիգա իրանց, կըսե.
— Գացե՛ք, տարե՛ք տվեք ձեր Մսրա Մելիքին,
Ըսեք՝ վոլա զԴավիթ սպաներ ինք,
Որ արխային էդնի Սասունիցե։
Դավիթ գիկա, գիկա .յելնի Սասուն։

9. Գիկա հասնի Սասուն,
Գիկա ուր հորոխպեր մոդ, հորոխպեր կըսե.
— Դավի՛թ, մեռնի՛մ քրգի,— կըսե,— դու էդա՞ր...
Կըսե.— Հորոխպե՛ր, ես էգա,— ասում ա,—

* Կըդրին—կըդնեն։

Ընձի մի գէրձ տուր, ես աշխատիմ։
Կըսե.—Ի՞նչ գէրձ տամ քըզ, բալա՛մ,
Հըլը դու էրեխա ես,—կըսե,—
Մ՛ա քու ճոկան, քըզ համար լէր-մէր գնդմ,
Քըզ համար ֆըռա, հըլա դու պստիկ ես։
Էդպես ասելով, մի առժամանակ դյուղի մեջ կըֆըռա.
Մի Պառավ կա, Պառավու կորեգի մեջ լէր գըգնդըմն։
Պառավ կըսե.—Տա՛, գրու պագանք կարի՛մ,—կըսե,—
Ինչի՞,—ասում ա,—դու գիմ կորեգ փչացրեցիր,
Գնա՛,—ասում ա,—էլի՛ Մարութիա սար,
Քու հար վանըն ընդեղն ա,—ասում ա,—
Մարա Մէլիք ավրեր է։
Գնա՛, էլի՛ ընդեղ, տես, աղչկիներ կան,
Քու հար ամբողջ սարի որսի տեղեր կան,—
Կըսե,—էդեր ես, իմ կորեգի մեջ ի՞նչ կաս
Գիկա, գըբռնե հորոխպէր յախեն, կըսե.
— Հորոխպե՛ր, .յըսօր անպայման ընձի տանիս սար,
պըդրցնես։

10. Կըտանե սար պդրցու,
Հորոխպեր չըտանե՝ վանքի ավիրագներ տեսնա,
Օր խեղճ տղեն նեղություն քաշե, լա, օղպա։
Կըտանե, ուրիշ տեղ կըպդրցու,
Գիշեր կըմնան սար։
Կըմնան սար, որս-մորս իրանց կէնեն,
Կենիեն, կուդեն, կըպատրեն, քնեն։
Դավիթ չի քնե.
Կըտեսնա, օր երդնըից մի լուս,
Ըսենց գիշեր Մարութիա վրեն,
Վանքի վրե՞ն ու կըբարձրանա։
Ըդի, հորոխպեր քնուդ կէղնի, կէրտա կիշի օր՝ ի՞նչ...
Ըդեղ վանք կա՛, ըդեղ աշակին խաչքարեր կա՞, բան կա՞...
Տղեն կըդառնա, գիկա .Յովանի մոդ, աղոթրան կըբացվի.
Գիկա .Յովանի մոդ, աղոթրան կըբացվի, կըսե.
— Հորոխպե՛ր,—կըսե,—
Ես գիշեր բանենց բան իմ տեսի,—կըսե,—
Էդի էղնի՞-չէղնի՞,—կըսե,—ընդեղ մըդի սուրբ կա,

Դու ինչո՞ւ ընձի չըս ասիր
Կըսե.—Բալա՛մ, իմ ա՛չք քոռնա,
Չէ՞ քու հոր մըհանալուց հետո,—ասում ա,—
Մսրա Մելիք էդամ, գնըգնց, քա՛ր ու քանդ էրնց,
Մըր էդած-չէդած .յըմմեն տարավ, գնաց,—ասում ա,—
Մնացեր ինք որր, անառնր, անտիրապա՛հ։
Կըսե.—Հորոխպա՛ր,
Քեզնից գուգիմ՝ իմ հոր վանքը շինես,
Իրևք ամսվան մեջ շինես՝ շինես,
Չըշինես՝ քու գլուխ գըզնըգիմ։
Կըսե.—Իմ հոր գանձ է էդե, իմ հոր ոսկի է էդե,
Իմ հոր ամեն ինչ էդե,—ասում ա,—
Մի վարպետ հինգ մանեթ կաշխատի,
Դու տաս մանեթ տուր, ամեն ինչ ա՛ռ, բե՛ր,
Իրևք ամսվան վրեն շինինք։
Գըբերին էդպես, վանքի ամբողջ գործը գըկատարվի,
Վանքը գըշինեն, գըպրծնեն,
Վարդապետ կըդնե մեջ, ամեն ինչ կըդնե մեջ։
Վանքի ամեն մի բան օր պագասեր,
Գիկեր, .Յովանի մոդից գուգեր։

11. Էն մի օր Մսրա Մելիք գիկա,
Չվանք գըզնըգե, քարուքանդ կէնե,
Վարդապետներ կըպպանե,
Ամեն ինչեր գըթալնե, տանե, կէրտա,
Ըսկի .Յովան խաբար լե չէղնե։
Լալ, ողբալ, աշագերդներ գիկան,
Թե էսպես-էսպես էդավ.
— Մսրա Մելիք էդավ, քա՛ր ու քանդ էրնց գվանքն,—
ասում ա,—
Չէղած-չէղած էլի տարավ, գնաց։
Գիկան, Դավիթ գըլսե. Դավիթ գըլսե,
Է՛, Դավիթ մինչ ի կէրտա,
Մսրա Մելիք Թողեր է գացի։
Թողեր է գացե, էլի կիդա պագրաստել.
էլի կիդա պագրաստել, կըսե.
— Սրանից հետո ի՛նչ կէղնե,

Գիկաք, ընձի կըսի՛ք, իմ հորոխպոր չըսի՛ք։
Մսրա Մելիք էլ չի գա,
Դավիթ էլ բավագանի գըմեձանա։

12. Հորոխպոր կնիգը Դավթի հետ
Շատ անպետքութուն է ուզեցի անել,
Նա չի էրե։
Դե՛, ուզեցել է սիրահարվել Դավթի վրեն,
Դավիթ իրան թույլ չի տվե էդ բանը.
Եվ հորոխպոր կին էլ չելեր է նրան պախարագեր է,
Ըսեր է.—Քու ախպոր տղեն բերեր խա,
Ձեռ թալեր է ընձի։
Մի աշխատանք կիդաս իրան, Քրխ էրտա էնե,
Քրխ մեր տուն չըկայնի։

13. Գելնի կէնե նա հորթերած, գառներած։
Գառներ կիդա .յառնջ,
.Յառավոդ գառներ գըհանե, գըտանե սար։
Ամեն գառ մի յան գըփախնին.
Գրնգնի՝ ինչքան լարըսարագ ու ազվես,
ԳելՈւ արջ սարեր կա,
Ամենքին ձեռք մի գոպալ գըզարգե,
Ջըմեն գըբերե, խառնե գառներ,
Բերե, գըլնա գեղ։
Կըսին.—Ա՛յ մարդ, էս ի՞նչ է,
Գազան չըթողեր է սար ու ձոր՝ բերե,
Ջմեր ամբողջ ժողովուրդ կուգին։
Գիկան Դավթի մոդ, ասում են.
— Ախպե՛ր, գառներածուքյուն պետք չի մեզի.
Գոնե մի էննենց գործ տվեք իրան,
Որ էապես բան չէնե։

14. Գելնին գտավար կգան, զնախիր։
Նախիր կգան, նախիր կըտանե, կաբտացնե։
Գելնի քաղքից դուրս, ընդեխ Բնդրխներ կա,

Էդ Բնդբխներու նախրին դիկա, Դավիթին գըհասնի։
Դիկա գըհասնի, Դավիթ կէբուա, գըդրա տավար լը կըջոգի,
Բևրև ուր տավրի մեջ, կըսե.
— Չէ՛, Դավի՛թ, հոգուդ մեռնի՛մ,—կըսե,—
Էս էլ մեր գյուղի տավարն է,
Ես էլ մեր գյուղի նախրին իմ։
Արի՛, ամեն օր դու գրու նախիր բիր ըսուհդ,
Ես գըպահիմ .յառավոդ մինչ ի .յիրիկուն,
Դու պաոդի քեզ համար, քնի,—ասում է,—
.Յիրկուն կըջոգիմ բու տավար, կիդամ բու .յառիջ,
Իմ տավար լև ևս կըտանիմ, կէբուամ մեր գեղ։
Մի՞նչ ի աշուն բու տավար էդենց կըպայիմ,
Թաթիլար մեր տավար չըտանիս։
Կըհամաձայնվին, կըսե.
— Օր հըմալ բան մը էնիս՝ չըմ տանի։

15. Մի օր, հանգարձագի, Դավիթ մինչ .յառավոդ կէբուա.
Էդ Բնդբխներու նախրորդի .յառիջը գըզնըդին,
Քառասուն հազ խամ էրինջ կըտանին.
Մի հազ տավար լը՝ մի կոս կորնգ է։
Գըտանին, էդ նախրորդ սկսում ա լալ, օխպալ,
Կիշե, օր Դավիթ նոր գնախիր բևրևց։
Կըսե.—Էդ ինչի՞ գիլաս, ի՞նչ է էդե։
Կըսե.—Քու տո՛ւն քանդվի,—կըսե,—
Մինչ ի դու էգար, գողեր էգան,—ասում է,—
Քառասուն հազ խամ էրինջ ընձի տարան, գնացին.
Էգուց,—ասում է,—ընձի քառասուն կոս կորնգ էլ չըն իդա,
Էլ ևս ո՞նց բդի ապրիմ։
Կըսե.—Դո՞ր տարան։
Կըսե.—Էս ճանապարհով տարան։
Գընգնի բամակ. գընգնի բամակ,
Մինչ ի գ'հասնի էդ գողերու տեխ,
Կըտեսնա, օր քառասուն հատ էրընջի փոսա լը փոուգ է դուրս.
Քոթած, գիսոսներ թալած է դուրս։
Գրկալնի դռան վրևն, մեզ-մեզ կըբռուա,
Մեզ-մեզ դուրս գևլնին, մեզ-մեզ ճոգան գըզնըդե,
Ջուրանց վիզ կրկդրե, թալե դևն, ջանդակ թալե դևն.
Ջքառասունի գլուխ լև կըկդրե։

Մդնի էդիենց բնագարան, գըտնանա, օր՝ ի՜նչ...
Աշխըրքի օսկին ու արծաթի, ինչ հարստություն կա,
Էդ ավազագներ բերած, լցած ըդեղ։
Քառասուն կաշին կըթալև ճոգնի վրեն,
Բերե, գըկա նախրորդի մոտ, կըսե.
— Դու կայնի՛ ըստե, ես գըտանիմ գնդ.
Մեգ-մնգի թամբի կէնիմ,
Քու մեզ կոդ կորեզ օր կորեր է,
Արի՛, դու ընձի ասա, քու գնրձ չէ։
Ըդեղից կէրտա Բնդրխներ,
Քառասուն կաշին գ'անձնեն տևերուն,
Գառնա գըկա, կըսե.—Հե՛չ չըվախեննաս,
Քու հախն հախ ա, ջայնամ քեն տարած չեն։

16. *Կրմնա էդպես։*
Մի օր Դավիթ կէրտա ասր, կիշն, օր ընդեր չկա։
Դու մի ասա՝ էդ օր, իրանց գնդ
Սաաման ժամ է էրած, հըրխսա է գրած։
Ախեզ տղեն կանի հըրխսա ուդե՝ կուշանա,
Ջրկանի՞՝ չէղնի։
Կուշանա, Դավիթ կըսե.—Ինչի՞ էսօր ուշացար։
Կըսե.—Դավի՛թ ջան,
Քու յախտն չիշխըցա կայնա հաց էլ կերա,—ասում ա,—
Մըր գնդ սասման ժամ են գրած,—ասում ա,
Մինչ ի տերտեր ժամից չելներ,
Մարդ իրավունք չուներ՝ ուտեր,—ասում ա,—
Ես էլ սոված էգա։
— Դե՛,—կըսե,—դու տավար պայի՛,
Ես կէրտամ մըգա, քըդի ճաշ բերիմ։
Դավիթ ըդեղից թողնե,
Ջճոգան գրե թևվին, վազե կէրտա։
Գընայե, օր քաժա տերտեր ժամից էգեր է,
Էդ է, զճաշն է գընան, օր տանեն սեղնի վրեն։
Հըմա՛ էրգու կանտրն էսենց գրբանա,
Ջճոգան գըմդու կանտների մեջ,
Գրվերու զճաշ խազնով, գրե ուր փնջին
Ու, յա՛ լա, կէրտա դեպի ասր։
Կէրտա դեպի ասր,

Տղեն կըտեսնա, օր Դավիթին էգալ,
Մի խազան ճաշ է բերի։
Ըդտեխ էլի տղեն գիլա, կըսե.
— Տղա՛, ինչի՞ ես լալում։
Ըբա կըսե.—Ներ էլի ավազագ էգալ,
Բդի ընձի ըսպաններ,
Հազիվ-հազիվ ազատվա իրա ձեռքից։
Ըբա կըսե.—Դե՞ր գնաց։
Ասում ա.—Դես գնաց։
Վազե, գավազագ բռնե,
Ջավազագի գլուխ չե կդըսե, թալե գնե,
Էլի կըդառնա, գըկա նախրըդի մոդ, կըսե.
— Կե՛,—կըսե,—ես գիտեմ,—կըսե,—
Դու գիլաս՝ գրա համար չէ,
Մի մարդ քըդի ի՞նչ բդի էնես,
Ինչ է, եղ չըմ բերե, գրա համար գիլաս։
Ասում է.—Հիմա կե՛ր գճաշ,
Ձիրգուն գնա տուն, կի՛ եղ, համ՛ վրեն,
Քու տո՛ւն ավրի,—ասում է,—ի՞նչ կէղնի։
Ըզենցով, մինչ ի վերչն տղեն էդրա հեղ յոլա կըտանե.

17. Կըմնա մեսրոժամանակ։
Դե՛, Սասնու օր տեր չկա,
Յոթ տարվան խարջ մացեր է առանց հավաբել.
Մսրա Մելիք արդեն ազամարդ է էղե,
Էղեր է Դավիթից ավելի հսկա մարդ,
Էնի մեծ է Դավիթից, չէ՞...
Սուրն, Կողբադին, խադին, Զարխադին,
Ըզգեցավ ինչ շուն ու շնդալ,
Մի չորս-հինդ հոգի կըճամփե, կըսե.
— Գնացե՛ք, յոթ տարվան խարջ բերեք Սասունա,—
Յոթ տարի չի գա խարջ հավաբե, կըսա,—
Աղբատացած է,—զվանք թալնած է, տարած, կըսե,—
Գնա՛, յոթ տարվա խարջ հավաբե, բի՛։
Նի օր գիկա,
Աղո՛վ-հացո՛վ Ձինով .Յովան կէրտա Մսրա Մելիքի .յառնջ.
Բերե գոսկու խրդինեն կըբանա,
Ձկող կըդնե ոտին, չափե։

Դավիթ Հանդեն պատվու կորգու մեջ,
Լեր իրա համար կրզնրգեն։
Պատառ դիկա, կըսեն.
— Տո՛, զրու պատա՛նք կարիմ,—կըսեն,—
Հըլա՛ դնա,—ասում է,—ա՛ռ,
Քու հորոխպեր ինչ ա անում.
Հէ՛ն ա, դկոդ դրե զոսկու ոտին, կըշափե։
Մարա Մհլիք ճամփեցեր է
Սուղին, Կողբադին, Ջարխադին,—ասում է,—
Էգած է, յոթ տարվա խաբջն է դրատնին.
Քու հորոխպերն, էն ա, կոտ դրե ոսկու ոտին, դրշափե,
Դու էդեր իս, լեր է դրզնրգիս։
Կըսե.—Մարե՛, ինչի՞ դրնեղնեսա,
Ոչ տեր ունիմ՝ տիրութիւն էնե,
Ոչ հեր ունիմ՝ հորութիւն անե,—ասում ա,—
Ես ի՞նչ խաբար իմ՝ զոսկին է դրշափե, քե ինչ է կէնե,
.Յո՞ւր է, .յո՞ւր է։
Կըսե.—.Յուր է՝ դրող քու բերա՛ն,—ասում ա,—
Հէն ա, ձեր տուն է, .յո՛ւր է,—ասում ա,—
Գնա՛ տուն, ա՛ռ։

18. Գիկա, կըտենա, օր հորոխպեր էն ա, կըշափե,
Կողբադին լե մեշոկն է բռնե. կըսե.
— Հորոխպե՛ր, կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց,—
Կըսե,—դու չգիտես չափիս,
Տո՛ւր, ես գիմ հոր ոսկին դրշափիմ։
Շուշե գկոտ բերնի վրեն,
.Յոտ դրզնրգե ոսկու մեջ ու բաննց կըշուշե,
Հինդ հատ կրկայնի վրեն,
Էն լե գփնտ կրզնրգե,
Ջէն հինդ հատ լե վրավից կրթափե, կըսե.
— Էսի մե՛կ...
Էրկու-իրեք կոտ էդպես օր կրթալե,
Կողբադին գ՛հերսոդի.—Վո՛յ վավրլե՛ր,—ասում ա,—
Դու մըզի կատակի ես անո՞ւմ։
.Յովա՛ն,—ասում է,—կտաս՝ տո՛ւ,
Ջրս իդա՞՝ կէրտամ Մարա Մհլիքին կըսիմ,
Գիկա, զամբողջ Սասուն բարութանդ կէնե։

Դավիթ օր կիմանա զէդի,
Էդ խոսքն օր իրան կասեն,
Հրմէ՛ զրվերու զկոտ ու զձրդն Կոսպազրնի ճակատ,
Քիթ ու մռութ բոմբն ջարդուփշուր կէնե,
Ձիրնք լե կըջրխաճե, դրե ճանապարհին, կըսե.
— Գնացե՛ք, ձեր Մսրա Մելիքին ասեք, թո՛ղ գա,
Սասուն անտեր չի, ես տերն իմ,— ասում ա։
Ղոնեք կըթողնին կէրտան։
Ընդեղից Մսրա Մելիք ճամպեկր է գկողբադին, ըղոնք,
Որ անպայման քառասուն ախճիկ բդի բերիք արմաղան,
որ երկանք աղան,
Քառասուն կնիկ բերիք, որ ուղեր բառնան,
Քառասուն կնիկ բերիք, որ խարտավաշ դառնան Մսրա Մելիքի
կնգան,
Վերջ՝ Սասուն բարուրանդ կէներ, .յիգար։
Ոչ մի բան Դավիթ չըթողն,
Օր ոչ մի սասունցի էրեխա կամ կնիկ էրտա Մսրո։
Քո՜ռ-փուշման կըճամբրնու կէրտա զէդ իրեք։

19. Կէրտան Հասնին Մսրա քաղաքի էս չան,
Կնգդիք կըտենան, որ Կողբադին, Սուդին ու Զարխադին էգան,
Իրեքի գլխըներ լե ջարդուդ, ատրմներ ջարդուդ...

Կըսե.—Գացիք ըրց գել-գազան,
Դարձար ըրց շուն-վազան,
Կողբադին լերան-լերան,
Գնաց Սասուն, յուղ, պանիր կըբերե,
Որ չինինք չորթան...
Ոչ մի բան,—ասում ա,—դու Սասունից չըբերեցիք։

20. Ղոնք կրնեղանան, կըմդնին Մսրա Մելիքի մոդ, թե.
— Ահավասի՛կ, էսպես-էսպես,
Մի գազան էրեխա է առեղծվե Սասուն,
Անուն Դավիթ է,—ըսում է,—
Հավքն ուր թևով, օձն ուր պորտով
Սասունից չի .յիշխընա էրտա։
Ահավասի՛կ, էսենց դրության մեջ մդանք, .յելանք էգանք։
Էլ ըղնդ, ասում ա, Մսրա Մելիք գ'ելնի,

Հրաման բաց Քողեց՝ ինչքան դինվոր որ կա.
— Հազար-հազար,— ըսաց,— նորելուկ մանուկ,
Հազար-հազար նոր բուսած մազ ու մորուք,
Հազար-հազար հատ բնդոմ երիտասարդ,
Հազար-հազար հատ հիսուն տարեկան,
Հազար՝ վացուն ... ոտ չդիտես,
Մի միլլոն ժողովուրդ հավաքից զորք,
Էգան Սասնու վրեն։

Էգավ, Սասնու ամբողջ դաշտը դրից,
Չաղբրներ գնդրեց՝ սիմսրիակ Սասնու դաշտը,
Էղավ՝ ինչպես օր ձուն գրե Սասնու սարերու վրեն։
Էգան, խաբար տվեցին .Յովանին։
.Յովան .յելավ սար, տեսավ չաղբրնե՛ր,
Լեզուն բերան պաբանձվավ։
Էգավ.— Հավա՛ր, հա՛յ հավա՛ր,— ըսաց,—
Մենք հողով-ջրով կորանք։
.Յելավ. էգան, օր բոլ ամբողջ Սասունը
Ոտո՛վ-ձեռո՛վ, հողո՛վ-ջրո՛վ էրաս,
Խոնարվի նրանց։

Դավիթն, հանդի՛, Պասվու շաղկըմի մնջ,
Իրա համար լեր է գըզնդրե։
— Տո՛,— ըսաց,— քու պատա՛նը կարիմ,— ըսաց,—
Հէ՛ն ա, Մսրա Մելիք էգեր ա,— ասաց,—
Մի միլլոն զորք է բերի Սասնու վրեն,— ըսաց,—
Դու հրլա չըս էրաս բո հորսխպոր մոդ,
Ըսի, Քե՝ .յո՞ւր է իմ հար ննքեր,
.Յո՞ւր է իմ հար Ձեն,
.Յո՞ւր է իմ հար Քուր,
.Յո՞ւր է իմ հար Խաչ-Պարաղին։
Գնա՛, դիր քու հորսխպոր վրեն,
Ջամբողջ պահանջե՛, հնձի՛, գնա՛,
Տղամարդ իս՝ հաղթե,
Որ չիկան Սասուն քարուքանդ էնեին։

Գնեին գիկա հորսխպոր մոդ, կրսե.
— Հորսխպե՛ր,— կրսե,— արի՛ դուրն ասա,
Իմ հերն օր մեռեր է,

.Յո՞ւր է իմ հոր Քուռիկ Ջալալին,
.Յո՞ւր է իմ հոր Թուր Կայծակին,
.Յո՞ւր է իմ հոր Ոսկե Գոդին,
.Յո՞ւր է իմ հոր Խաչ-Պարագին,
Բոլոր կգաս՝ տուր, քե չէ,
Հիմա ձողան է գըլխըդիմ քու վրի .յեղել,
Քեզի գըսատկըցում։
Հոխպերը ախու գելնի.
Էդ տասնըհինգ տարի, օր Մհեր մեռեր է,
Ամբողջ գեղընփոր թավլի մեջ պահուզ էր,
Ջուրը, դարի վերևից է աված Քուռիկ Ջալալին.
.Յըմեն դրսուց է աված.
Պիդա գնաչ-Պարագին,
Հոր թուրը Դավիթ կախե վրեն՝
Իրեր թիզ կըդուա գնդին.
Ուր Գոդին կըբերե, կըկարե՝
Յոթ փաթ դիկա ուր գոդու վրեն,
Նոր կէզնի ուր վրավով.
Էնքան օր, հըլա հոր ո՞ր տեղն է, որ հասնի հորը.
Իր թաղրն՝ յոթ կիլո բամբակ կըդնե մեջ, ուր պիտարկ,
Նոր կէզնի ուր պիտով.
Խաչ-Պարագին օր կատա աչ թևվ,
Յոթ փաթ դիկա, նոր կէզնի ուր թևվով,
Վերջ, .յըմեն կըդա։
— Դե՛,—կըսե,—Քուռիկ Ջալալին,—ասում ա,—
Քու հեր օր մեռե ու էս յան, բալա՛մ,—կըսե,—
Դուրս չըմ հաներ ի։
Կարա՞ս՝ գնա՛, դուրս հանի՛, հեձի՛.
Բայց վա՛յ քե զբըդի հանե արեգակի .յառեջ, վառե,
.Յընգնես տագ, մեռնես։

Քաշե հանե դուրս, յա՛վ թիմարըմ կըտա,
Գեղեցիկ թամբե, ոսկե թամբ կըբերե, դրե վրեն,
Հեձնի, զաստված կըկանչե, քոնի։
Կըթռնի, Քուռիկ Ջալալին ըղրան կըհանե օդ.
Կըհանե, էլ էնքան կըհանե, .յիջու,
.Յինը կիդա փորտակ,
Քուռիկ Ջալալին կըխելոքնա, գիջնի գնդին։

23. Գիշեր գետին. Յովան կըսե.
— Քշե՛ գնա, կաքնով ախպուր կա,
Քու հոր փորձված տեղն է,—ասում ա,—
Գնա՛, էնդեղ երկաթից սուն կա,
Քու ասպված կանչե, գնա դրու քուր էդ սուն.
Թե կարենց քու քուր .յընցավ սո՛ւն,
Արդեն քու բախտ կտուր է, գ'ախտես քու քշնամուն.
Եթե չըկարենց, անպայման դու կըսպանվիս։

Կէրտա ընտեղ, կըլոզանա, գըբնի,
Ասու հրամանքով գըլցվի,
Կէղնի ինչպես իր հեր՝ ածգահա մարդ.
Յոթ փութ ուր խայիշ կըբանդե,
Անջախ կէղնի ուր միջկով,
Քուր՝ անջախ կէղնի ուր վրավով,
Ամեն ինչ խակական կէղնի ուր վրավով,
Ասու ասված է, էլի։

Ըդեղ գելնի, կըսե.
— Է՛յ երդնավոր ասպվա՛ծ,—կըսե,—
Դու ընձի ուժ ու կարողություն տաս,
Տենանը հըլա՝ իմ գործ աջող ա, թե չէ։
Քուր օր գըզնդրդե էդ էրկըթե անին,
Էննենց գընցընի, սուն կայնի տեղ, չի .յընդնի,
Ընենց չըի նման գընցընի։
— վա՛յ,—կըսե,—աչքե՛ր, օր դու բռնաս,
Թևե՛ր, օր դու քուլնաս,
Էս ի՞նչ բան էր էդավ,—կըսե,—
Իմ հոր քուր ու էս սուն չըկդրե՞...
Ուրեմն, ես մեռած իմ։
Աչքեր բռնա, թևեր քուլնա.
Զեռ ափըրփելով կըդա սուն՝ սուն գընգնի։
— վա՛խ, ասպվա՛ծ,—կըսե,—ես մեղա՛ գըզի,—
Կըսե,—ընձի իմ ուժ ու կարողություն տո՛ւր,
Իմ աչքեր սաղացրե,
Ես Մսրա Մելիքի հախից դամ։
Ասածու հրամանքով էլի գըսաղնա մարդը։

24. Գելնի, գիշնի զորքի մեջ։
Գիշնի զորքի մեջ, օր էգ է, բդի էրտա զորքի մեջ,

Կըսե.—Ով քնած իք՝ արթուն մացե՛ք,
Ով պատրաստ չիք՝ ձըր շորեր հագե՛ք,
Ով ձըր ձիան թամքուդ չին՝ ձըր ձիաններ թամքե՛ք,
Չէղնի ասիք, որ Դավիթ գողդուդ էդավ իր բշնամու վրեն։

Գիշնի կըկովի.
Համարե քե գիկս կըսըրփա, քե ինք, քե Քուռդիդ Ջալալին,
Շնորք Քուռդիդ Ջալալուն է էդեն, խո՛,
Կըսե, մինչ ի մի հազ ինք կըսպաներ,
Տաս հազ էնի ուր ոդներով կըսպաներ։
Էդանեխից ուր Քեռի Թորոս կիմանա,
Օր Դավիթ մինազ գնացեր է կռիվ։
Գելնի մի ծառըմ բարից կըբաշե,
Ու, յա՛լա, վազե։
Կէրտա, մինչ ի յինք լե գ'հասնի Դավիթին,
Մի բան էլ էն կըսրփե։

25. Մի ծերունի, իմ պես մի մարդ,
Գիկա Դավիթի յառնջ, խնդրե, կաղաչե, կըսե.
— Դավի՛թ,—կըսե,—ոտների՛դ մեռնիմ,—կըսե,—
Ի՞նչ է էրած էս խեղճ մարդիկ բրդի,—կըսե,—
էն օր,—կըսե,—նորհարս թագա բերի, տուն է թողե,
Տուն է թողե, յաչք ճանապարհն է.
էն օր միեուճար է, յաչք ճանապարհն է,
Ի՞նչ է էրած էս ժողովուրդ բեզ,—ասում է,—
Է՛յ, էն ա, հա՛ն, էն պալատկեն կըտեսնի՞ս,
Կանաչ պալատկեն, օր մուխ միջից դուրս գելնի,
էնի, Մարա Մելիք էնդեխ քնուդ է,
Յոթ գիշեր ու ցերեկ գըքնի։
Քնուդ է, էդոր բերնի մութն է, գ'ելնի։
Գնա՛, բշնամիդ էդ է, խո՛ մեք չինք,
Գնա՝, նրան յախտե, նրան բսպանե,—կըսե,—
էս ժողովուրդ բրդ ի՞նչ է էրած։
Ըբա կըսե.—Դե՛ ասեք, քե նա ո՞րտեզ է, ես էրտամ,
Ժողովրդին ոչ մի բան էլ չեմ ասե։

26. Քշե, դիկա կայնի Մսրա Մելիքի պալադիի դուռ։
Կըսե.—Շո՛ւտ հանեք ըզրան քնուց, թո՛ղ .յիդա,
Տևնամ՝ ըզի իմ հեղ կռիվ կանի՞,
Որ էգեր է իմ վրա պաղերա՞զմ,
Ըքե .յիդա, իմ հեղ կովի։
Ըբը.—Իրեք օր է քնե,
Հըլը չորս օր լև ըզի քնի։
Կարմըրցըրին գուբեի խոփ, ըրին ըզրա ոտներու տակ,
Էգի գըմըռմըռա, շըռչըվի էն յան, էն յան, կըսե.
— Դուք զիմ տեղ .յըսօր լավ ըլը պատրաստե,
Լվեր ընձի կերան։
Վերջ ըզրան մի կերպով գըղարթնացնին։
Էգի բառսուն պաղկան հոր փորեր է իր պալադիի մեջ,
Որ Դավիթին խարելով տանե, .յընդցընի էգ հորի մեջ։
Գիմնա, գիլնի կըտեսնա, օր Դավիթն է.
Որ կըտեսնա՝ բառսուն զրմշու ուժ Մելիքից զրպակսի։
Հը՛, զրտեսնի, օր ուր դեմ մարդ կա կանուդ,
Վախենալուն, բառսուն զրմշու ուժ կըպակսի։
Ըդեղից կըսե.—Դավի՛թ, հազուդ մեռնի՛մ,
Արի՛, կռիվ՝ կռիվ է, ես, դու սխտեր ինք,
Արի՛, նետինք, ուղինք, խմինք,
Էլի նորից .յիլնինք, կովինք։
Դավիթ գ'ամաձայնվի, կըսե.
— Դեմ չեմ, նետինք, ուղինք, խմինք,
.Յիլնինք կովինք։
Դավիթ կէրտա, խալին փռուդ է հորի բերնի վրեն,
Դավիթ, խեղճ, օր ըրբիլն խալու վրավով կէրտա,
Ըրմրդրմրալեն կէրտա բառսուն պաղկան հորի մեջ։
Կըսե.—Ըր՛ գնա, քու տեխեն էգ է,
Էգեր է, իմ հեղ կռիվ է անում։

27. Դավիթ էգենե կըմնա էգ գիշեր,
.Յավան իր տան մեջ էրազ կըտեսնա.
Կըտեսնա, օր Մսրա աստըղ պայծառ է,
Սասնու աստըղ սկսեր է դեպի խավարել։
Գ'իմցու զգնեզ, կըսե.
— Կնի՛գ, քու տո՛ւն քանդվի,—կըսե,—
Դավիթ,—կըսե,—նեղ վիճակի մեջ է,

Երազում,—կըսե,—տեսա,
Մարա աստղը էնքա՜ն պոյծառ է,
Բայց Սասնու աստղը մերելու վրեն է։
— Հա՛,—կըսա,—դու էլ քնիս քեզի,
Էրազ տեսնաս ուրիշի։
Ջըվոզի՝ յելնի, էրտա գոնե հավարին։
Մենք էլ քնի.
Մենք էլ քնի՝ մենք էլ կըտեսնա...
Իրեք անգամ էրազ կըտեսնա,
Նոր է՛լ կնդան անգաջ չէնե։

Գելնի կէրտա իրեք հատ ձիու վրեն.
Իրեք հատ ձի, կըսե, կարուգ ին Քավլեն՝
Սեվ, սիվտակ, կարմիր։
Յառաջ ձեռ ըրղնըրդե Կարմիրի վրեն, ասում է.
— Քանի՞ րոպեին ընձի կըհասցնես Քելի սան մոդ,
Սիվտակ յախտուր՝ Կաթնախտըրի մոդ։
Կըսե.—Կես ժամ քըզի գ՝ասում։
Կըսե.—Ինչ օր կէրևը իս, անուշ չէղնի, ասում է,—
Կես ժամ ես Հասնիմ նաշին, քի՞ լաշին։
Սիվտըդու վրեն կըզնըրդե, Սիվտակ կըսե.
— Եթե կարողանաս հեծնիս ընձի,
Հեծնիս, մինչ ի հեծնիս ընձի,
Ես քեզի գ՝ասում։
Էլի կըսե.—Հարա՜մ էղնի քու կերած։
Սևվու վրեն կըզնըրդե ձևոք, Սևվ կըսե.
— Ջքու ոտ դնիս ասպանդակ, մինչ ի շրչվիս իմ վրեն,
Ես, հանդե՛, ընդեղ իմ։
Սևվ ձին կըքաշե դուրս, գ՝եձնի։

Գ՝եձնի, կըհասնի Սիբդագ յախտուր.
Գ՝իշնի, օր սուն կդրուգ է, հոն Քալուգ։
Ըդեղից կըբոռա, կըբոռա, կըսե.
— Դավի՞թ, որտե՞ղն իս,—կըսե,—
Կանչե՛ քու Աստվածածին, խաչ Պարապին,
Որ հանդե կարուգ քու աչ Քելի վրեն,
Ինչքան նեղ տեխ էղնիս՝ գելնիս դուրս։

28. Ձեն դրմբդրմբալով կերաա, մդնի հորի մեջ։
Դավիթ կրսե.—էսի իմ հորոխպոր ձեն է։
Դառնա կրաենա, օր իսկապես,
Խալ Պարազին հանդե կաբուդ է ուր աջ քևի վրեն։
— Հե՛յ,—կրսե,—մեռնի՛մ բրդի, Մարաթդու սուրբ Խալ Պարազի՛ն,
Դու ինձ էս նեղ վիճակից դուրս հանիս։
Գրգռրդե, ջաղցի քար լե դրուդ կէդնի վրեն,
Ջաղցի քար կրթռնի նէնի, կէրտա մի յան,
.Յինք գ'նէնի, կայնի Մարա Մելիքի դռան .յառաջ,
Կրսե.—Դե՛, .յելի՛,—կրսե,—
Խապեպաութենով դու բնդի .յընգրրեցիր հորը,
.Յելի՛,—ասում է,—ես, դու կովինք։
Կրսե.—Դավի՛թ ջան,—կրսե,—ես քեզի փորձեցի,
Տեսամ հրյա՝ ուժե՞դ իս, քե չէ։
Կրսե.—Արի՛, հաց ուդինք։
— Չէ՛,—կրսե,—ես նամարդի հաց է՛լ չեմ ուդում։
Պատրաստվի, .յելի պատերազմի։

29. Գելնի պատերազմի, կրսե.
— .Յառաջի հերթ իմն է։
Կրսե.—Քուդն ու Իմ սահմանի մեջն է,—ասում ա,—
Առաջի հերթ ես կիգամ բրդի։
Հնձնի զուր ձին, կէրտա մինչ ի Խարբերդ,
Խարբերդու գրկա, մե զրրը գրզնրդե,
Թո՛զ ու դուման ուր գուրգից գելնի,
Ջամբողջ ամպի .յերես կրբռնե։
Կրսե.—Ափսո՛ս, օր մե քիրա չըմնաց,
Ես տենայի, սիրաս հովեր։
Մե հինգ րոպե չըմնա՝ Դավիթ կրսե.
— Մե՛զ էլ արի։
— Վա՛խ,—կրսե,—էսի չըմեռա՞վ,—կրսե,—
Գալդաս, հրմը մոդիզ տեղից իմ էգե։
Հրլը մի հարուր կիլոմետր լե Խարբերդու դեն կէրտա.
Կրդառնա գիկա, էլի գրգնրդե,
Էլի նրանից .յավելի մեծ փոշի բարձրանում է,
Ամբողջ ամպի .յերես կրբռնե։
Էլի կրսե.—Դավիթ մեռա՛վ,

Մի կտոր չըմնաց, ես տենեի։
Էլի Դավիթ ձեն կըտար։
Վերջին կէրտա գելնի Մսըր, Մսրա գիկա.
Գիկա, կըգնըգե՝ էլի Դավիթին բան չէղնի.
Դավիթ էլի կըբռտա ամպի միջից։
— Դե,—կըսե,—որ էդպես է,—կըսե,—
ես կըմդնիմ էս քառսուն գազգան Հորի մեջ,
Դու բնձի վերևից գա՛ր։
Իրևք գըրբ գա՛ր բնձի.
Թե մնաս՛, մնաս,
Թե չըմնաս՝ գըթի էլի ես սազ իմ։
Գիջու գմնելիք Հորի մեջ։
Մե անգամ օր կանչե գուր աստված, ուր Թուր քաշե գիկա
Մեր կէրտա .յառաջ՝ Իսլիմ խանըմ,
Կըսե.—Դավի՛թ, Հոգուդ մեռնի՛մ,—կըսե,—
ես քըզի ծիծ շատ իմ տվե,
ես եմ գքեզի պաշե,
Տո՛ւր էն կաթի խաթրին, որ ես տվեր եմ քեզի։
Կըսե.—էս մեզ տվեցի քու խաթըր, մայրի՛գ։
էն մե .յառաջի զարգըն կըբաշխե մսրը։
Կէրտա, մեզ էլ կըգառնա գիկա,
Քուր գիկա .յառաջ, կըսե.
— Դավի՛թ, Հոգուդ մեռնի՛մ,—կըսե,—
Քեզի էնբան եմ գրկե, ման իմ բերի,
Գուրգուրեր իմ, հագցրեր իմ, լվացեր իմ,—կըսե,—
էս էլ տո՛ւր իմ խաթըր։
Կըսե.—էս էլ՝ քու խաթըր։
Կըմնա մի հագ։
Կէրտա, գրկա՝ խարտվաշ կէրտա էս անգամ,
Մսրա Մելիքի խարտվաշ կէրտա .յառջ, կըսե.
— Ես քեզի շատ իմ գուրգուրե, պայե։
Կըսե.—Չէ՛, էս մեզ իմ ասսուն էլ չեմ տա։
էս մե զարգն է մացե, էս մե զարգ բդի գնըդիմ։
Բևբին քառսուն գըմշու կաշի գըդնին վրևն,
Քառսուն ջաղցի քար գըդնին վրևն.
Կըգնըգե, գքառսուն ջաղցի քար կտրե,
Զքառսուն գըմշու կաշին կտրե,
Գիջնի Հորի մեջ, գլխից կըբռնե,

Մնջառիից կէղնի էրդու կաներ։
Չիմանա, թե թուր առավ իրան, թե չէ,
Հորի միջին կըբռաա, կըսե.
— Դավի՛թ, մեզ էլ դո՛ւր։
Կըսե.—Մելի՛ք, մե զքըզի թափ տո՛ւր։
Թափ կըտա՝ Մելիք կէղնի էրդու կաներ,
Մեզ շուչի էն յան, մեզ՝ էն յան։
Նոր իդեղից Դավիթ հաղթություն կըտանի,
Ամբողջ գինվորության հրաման կըտա, կըսե.
— Գնացե՛ք ձեր տներ։
Իդուխից մարդըն գելնի կէրտաս։
Գելնի կէրտաս, զուր երդիր կալտաս,
Նոր սկսըմ է խանդութ խանըմին բերել։

30. Խանդութ խանըմին նի օր կըբերե,
Խանդութ խանըմ ուր կինն էր,
Էս լոռեցի է էղե։
Խանդութ խանըմ աշուխին ճամբցեր է Սասուն։
.Յինք Բըլանբխա ախճըգան բդի ուղեր.
Մեր Բըլանբխա մե ախճիգ է էղե,
Աղի ախճիգ է էղե, մախուլ մարդու ախճիգ է էղե,
Լավ էլ ուժեղ է էղե,
Դավիթի նման ուժեղ ախճիգ է էղե,
Վերջ էն է Դավիթին ըսպանե.
Էդ ախճըգա անուն չգիտեմ ինչ է։
Երբ օր գիկա Խանդութ խանըմին,
.Յառաջ էդ ախճգան կուգե.
Երբ օր աշուխ Խանդութ խանում կուգարկի Դավիթի մոտ,
Դավիթ էլ ախճգան բանի տեղ չի գնե, կըսե.
— Էրտամ իշիմ, էն Լոռվա ախճիգ ավելի լավ է՝
Չէնի բերիմ։
Գիկա Բըլանբխով, օր գընցնի,
Ախճիգ գելնի .յառաջ, կըսե.
— Կամ ինձ հետ գուլաշ կբնես, նոր էրտաս բերիս.
Թե ինձի հախտացիր, նոր կէրտաս բերիս,
Չէ՛, զըթի ես բըզի .յախտի,
Դու բնձի բդի առնիս։
Կըսե.—Ներողություն,—կըսե,—Թույլ տո՛ւր,

Ես,—ըսում է,—մուրացի տէր եմ,
Էրտամ, դառնամ գամ,
.Յիգամ, քեզ հետ գուլաշ կրիմ։
— Դէ՛,—կըսէ,—գնա՛, գնա՛, վնաս չունի,
Քու .յաչք էն Հանապարհն է,
Քեզ Հանապարհից չեմ զրկի,
Գնա՛, Խանդութ խանումին բեր, Նէր արի։

31. Կընդնի գիկա։
Գիկա Խանդութ Խանըմին կըգտնի,
Խանդութ խանըմի հետ ամեն ինչ կըվերջացնի։
Գելնին յիրարու հետ կէրտան ման գալու.
Կէրտան ման գալու, մի պագ .յառաջ կառնի՝ չըխոսա,
Մեզ էլ մյուս .յերեսից կառնի՝ էլի չըխոսա,
Մեզ էլ օր Հազդից զըպակն,
Մև սիլլա կըտա Դավիթի .յերսին,
Դավիթ ուշաթափ կէղնի, շուշի գնդին։
Գ'աննե զյայլուզ, ջուր բերե թալե վրեն,
Ուշքի կըբերե, կըսե.
— Էդ ինչի՞ բնձի զնըրգեցիր։
Կըսե.— Անառակուություն էրիր.
.Յառաջին օր պագեցի՞ր՝ ըսի ջայել է,
Թըխ ուր խաթըր չըմնա ինձնից.
Երգրորդ՝ ըսի էս էլ ասում խաթըր Թըխ էղնի.
Ըրը էդ վերջին ինչի՞ պակեցիր։
Էն վերջին,—ասում ա,—անառակուություն էրեցիր,
Դրա համար լև զնըրդի։

32. Համգա փայլևան իր բառուն փայլևնով
Յոթ տարի ըղնդ էգած է,
Փայլևնների հետ կռիվ կէնին,
Ով որ հաղթանակ տանե,
Էն ըդի գնանդութ խանըմ տանե։
Երբ որ Դավիթ կէրտա ըղնդ,
Չհամգա փայլևան լև, դուբ բառուն փայլևներ զրմեն,
Ոնց որ ճնճղուգի, զրմեն կըբերե ուր Թրի տակ,
Բոլոր գըհախտե։
Խանդութ խանում որ կառնե,

Էդ Համզա փայլևան կըսե.
— Դավի՛թ,—կըսե,—մեզի տա՛ր քու հետ,
Որպես քու զինակիցներ տա՛ր քու յերգիր։
Ըդեղից գըվերցու զքառասուն փայլևան,
Չհամզա փայլևան լե ուր հետ,
Յիներ գիկա յերգիր։
Գիկա յերգիր,
Գիկա խանդութ խանրմի մոդ էրգու գիշեր կըմնա։
Գնչի կառնե զհամզա փայլևան ուր քառասուն փայլևներով,
կէրտա Մսըր։
Կէրտա, օր զՄսրա յերգիր բաժանե էդ քառասնի վրեն,
Բոլոր էնե զնկատար էդ յերգրին ու դառնա գա։
Մինչ ի կէրտա, մինչ ի գըլոր կարգադրություններ կանի,
կըտեղավորցնի՝
Էրգու-իրենք տարի գըտնվե,
Յոթ-ութ տարի գըտնվե, մինչ ի դառնա գա։

33. Դառնա գիկա՝ Մհեր էղեր է խոջա տղա.
Մհեր ծնվեր է՝ Պղդիդ Մհեր,
Էղեր է խոջա տղա, յիներ է սա՛ր-ձիր,
Հավքն ուր ինվով, օձն ուր պորտով,
Ջրիոզն ժամ գա։
Ով օր հրմա տեսնա, օտար մարդ է,
Անպայման կոիվ կէնե հետ։
Դավիթ օր կէրտա, գ՝ասնի իր սահման,
Կիշե, օր մի հատ ածգահա ձիավոր
Հանդի՛ կանուդ էդ ճանապարհի վրեն։
Ըդ էրգուս գիկան, կըհանդրըրին իրար, գրկավին.
Ծանոթուբյուն չեն սա յիրարու,
Էն զօրգա նրան, էն զօրգա նրան,
Ի՛նչ ճար ու իլլաջ կէնեին,
Մեգ-մյուսին չըկոնա յախտա։
Մհեր գըվերու գԴավիթ, գօրգե,
Մինչ ի մեջք գիջնի գնդին, հողի մեջ.
Դավիթ գրիոնի գելնի։
Վերջ Դավիթ ըդրան չըկոնա յախտա.
Գրկավին։
Մհեր գըզարգե Դավիթին, մինչ ի ծրձեր գիջնի հողի մեջ,

Թանի, լանդև մը գըզմըրդև ֆևվերուն,
Գրհամասարցըն հողին, ֆուր քաշի, կըսե.
— Կամաց, քու գլուխ կտրիմ,
Մեր սևլեր չէնի ասըռի քու գլուխ.
Մըր սևլի ճանապարհն է,
Մըր սևլեր գիկան, չէղնի ասըռին քու գլուխ։
Էզաեխ հերն է կըսե.
— Կտրի՛ճ,—կըսե,—գիմ գլուխ մի՛ կարի,
Իմ կտրիճ գէնի, գրու գլուխ գրկարի։
Կըսե.—Քու կտրիճն ո՞վ է։
Կըսե.—Իմ կտրիճն էն է,
Օր հանդև Խաչ Պարապին ուր աջ ֆևվին։
Ջէ՞, ևրբ օր տարև գշամգա փայչևվան,
Ջխաչ Պարապին հաներ է, տվև խանդութին.
— Թև տղա կէղնի՝ գխաչ Պարապին կապիմ,
Թև ախճիկ կէղնի՝ գրիլազուդ կապիմ ուր ֆևվին,
Օր ես ճանաչիմ։
Կըսե.—Ո՞վ է քու կտրիճ։
Կըսե.—Իմ կտրիճ էն է,
Օր հանդև Խաչ Պարապին ուր աջ ֆևվի վրևն։
Մհեր գըտևնա, օր հանդև ուր ֆևվի վրևն։
— Վա՜յ,—կըսե,—հայրի՛գ, ես ևերդություն։
Բանե գներ, հողի միջևն քաշե հանե,
Ըղեխ կանիծե Մհերին, կըսե.
— Բան չեմ ասի՝ ոչ քեզի մայ էղնի,
Ոչ էլ քու ծնունդ աշխարհ ընդնի։
Եվ էզպեսով էլ անմահ է,
Հանդև, որպես, մեր Վանա կոդմեր[*]։

34. Հա՛, էդ կովի ժամանակ
Դավիթի յայլուղ քամին գրվերցնի, բերև,
Խանդութի դռան յառնչ գրնդնի։
Խանդութ գէնի դուրս, կըտեսնա,
Օր Դավիթի յայլուղն է։
— Է՜յ,—կըսե,—երկնավոր աստվա՛ծ,—կըսե,—
Դու գհերն ու տղեն յիրարուց բաժանես,—կըսե,—

* «Պատմություն կա. ասում են՝ մի ձորի մեջ է. ինչ օր հովիվ գնացել է տեսնել Աստ. վիպասացի։

Էս էրգուս,—ասում է,—.յիրարու հետ կռիվ են անում։
Ըդեղից վերջացնեն պատաերազմը,
Երբ օր տղեն ճանաչում է հորը,
Հերն էլ կանիծե նրան,
Գելնին, գիկան տուն։

35. Գիկան տուն.

.Յինք յոթ-ութ տարի է, տուն չէկե։
Խանդութ ջուր է գնում, լողացնում է,
Տեսնում է, օր մի սեվ խաչ Դավիթի բամպի վրեն կա։
— Դավի՛թ,—ասում ա,—տո՛ւնդ քանդվի,
Էս ի՞նչ պայման ես էրի,
Որ պայմանադանց ես էրի,
Որ սեվ խաչ քու բամպի վրեն կա։
Ըդեղ նոր Բրլանբրես ախճիդ գընդնի ուր միտք։
— Վա՛յ,—կըսե,—կնի՛դ, քու բերելու ժամանակ
Բրլանբրես ախճըդան սիրեր էի, չառա,—ասում ա,—
.Յելավ իմ .յառեջ։
Որ ես էգա, քեզ կըբերեի,—ասում ա,—
Ասաց. «Բդի իմ հետ դուլաշ կրնես, Նոր էրտաս»։
Ասում է,—ես իրան խաբեր իմ, ըսեր իմ.
«Էրտամ գնանդութ խանըմ բերիմ,
Նոր գիկամ, քու հետ դուլաշ կրնիմ»։
Էս էգավ քանի տարի է, չեմ գնացե։
Էն է, էդ է սեվ խաչ։
Բան չկա,—ըսում ա,—.յառավոդ կէրտամ։
Պարգին քնին, .յառավոդ գելնի մարդըն կէրտա։

36. Կէրտա, օր բդի էրտա էդ Բրլանբրես ախճդա հետ.

Ախճըդա անուն էլ իմ միտք էր,
Հա՛, հա՛՝ Զմշկիկ Սուլթան։
Կէրտա. էդ ախճիդը քանի տարի է,
Գիշե՛ր-ցերեկ մղաճում է, թե ինչի՞ Դավիթ չէկավ.
Ճանապարհն է նայում։
Մեզ լեռ տեսնում է, օր Դավիթ էգավ։
Էգավ, .յիջավ Լոխորա ջրի վրեն,
Օր բդի լողանա, մաքրվի,
Նոր էրտա, էն ախճըդա հետ դուլաշ կրնի։

Չէ՞, պիշեր մացեր է տուն, խանդութի խանըմի մոդ։
Կիջնի ջրի վրեն, ակլոզնա, օր բդի մդնի ջուր,
Դութենի խաժի էդ ախճիդ կըկարմրցընի,
Դրի ուր նետ ու ազեղի մեջ,
Կըզնըրգն ջրի մեջ.
Թիկունքից կըի, սրտի գդալ դեն կըտա դուրս.
Դավիթ տեխնուտեխ կըմնա։

Դավիթ ըդեղից գըրուա,
Սասուն Զհնով .Յովան գըլուխ, կըսե.
— Վա՛խ,—կըսե,—Դավիթ ըսպանվավ, էսի Դավիթի ձեն է։
Գելնին ընդեղից գըկան։
Գըկան, գըկա՜ն, գըկան Լոխոտա ջրի վրեն,
Դավիթին տկլոզ ջրի մեջ մեսուզ գըտնան։

Մհեր ըդեղից ուխտ ու պայման կէնե.
Ասում ա.—Ուխտ ու պայման էնիմ .յուռաջի ասում,
Որտեղ մե ծուխ էլավ,
Բդի Մհեր գէն ծուխ կգըե աշխարքից,
Որ իմ հեր ապանվավ, իմ հոր սպանող էդավ։
Գիկան Դավիթին կըվերցնեն, տանին, կէրտան։

Փ Ո Ք Ր Մ Հ Ե Ր

37. Կըիադին, Մհեր գընդնի .յէրդրի մեջ,
Որտեղ գըհանի՝ ջարդուփշուր կէնե,
Կոտորե, կըվաե, գըփշրե,
Բըլանուխով, Ալաշկերտով, Խնուսով մաքրելով,
Գիկա մըր Մշու գաշտեն,
Գիկա .յէնի Ալվառինջ գյուղ։
Էդ Ալվառինջ գյուղ մի ծուխ կեսնվա,
Կէրտա, կէրտա, կէրտա ծխի հետ, կիշե օր՝
Ուխտանաուն տարեգան մի պառավ է մանցի առանց սպանել,
Էդ պառավն է, ծուխ է գըհանե,
Թե ինչի՞ համար...
Կէրտա կայնի, կըսե.
— Մայրի՛գ,—կըսե,—էդ ի՞նչ ծուխ է։

Կրսե.—Է՛յ, լա՛ւ,—կրսե,—չգիդե՞ս, ինչ ծուխ է...—
Կրսե.—Գավուրօղլին աշխարք գրմեն վառեց,—
(Գավուրօղլին ինքն է, Մհերն է),—
Առում է,—էս ծուխ դրա համար է կէնում,
Կրսիմ՝ բլլի որտեղ էնի տեսնա դէս ծուխ,
Տրաքվի, քրքռտի, մեռնի։
Կրսե.—Բան չկա, մարե՛,—կրսե,—
Ջրու վիզ լե կամաց կտրիմ,
Քու խաթըր լե չըմնա։
Կրզնրգե, պռատու վիզ էլ կըկտրե,
Նոր դրնցնի դիկա Սասուն։

38. Դիկա Սասուն. պատմություն կա դրա մասին,
Առում են, էնքան ծանդրանում է,
Էնքան ժոդահա է լինում,
Էլ հողը իրան չի վերցնում։
Աստու հրամանրով կէրտա մդնի էդ ձորի մեջ,
Էդ ձորի քարտի կրբացվի, նա գրմդնի մեջ։

39. Առում են, որպես, մի հովիվ
Հանգարծադի գնացեր է էդ ձորի բերան,
Էդ ձորի դուռ՝ Մհերի դուռ, բաց է էդե,
Մդե տեսե, օր Մհեր պառգուզ իր տեխ,
Իր ձին, ասրմ ա, էն ոտնամնի տգու քարփքարի,
Մի մեշոկ լիք, դրուզ մի յան,
Առում ա, Մհերն ասաց.
— Ի՞նչ կրլնի,—ասաց,—ձին սոված է,
Վերցրա՛ րի, դի՛ր իմ ձիու .յառեջ։
Է՛, մի մարդ մի մեշոկ քափրաի կրռնա՞ դեղնից վերցնի...
Կէրտա, զձին կրհարձրգե, բերե դլուխ կէցկե մեշոկի մեջ,
Ձին դրվերու, կէրտա մարրքի տեղ, կուգե։
— Ուրեմը,—կրսե,—աշխարհը հրլը խելոքություն շատ կա,
Իրավունք չունիմ .յելնիմ դուս*։

* «Է՛, քու տուն քանդվի՛, աշխարհ քանի կէրտա կրխելոքանա, խո՛ աշխարհ քանի կէրտա նոպիմություն չի ունենա։
Ով էդպեսով էլ վերջանում է»—ավելացրեց ասացողը։
Բանահավաքի այն հարցին, թե. «Հանգուրն ինչ եղավ», ասացողը պատասխանեց. (—Հանգուրի՞ն էդավ... Հանգուրի էլ դինք վերնից բցեց տակ, մեռավ)։

Սասնա Ծռեր

պատմեց

Ալաշկերտցի Սեդրակ Աբաջյան

Անի – Լանջիկ գյուղ

գրառված է 1971 թ.

Սեդրակ Քեոսրի Աբաչյանը ծնվել է Ալաշկերտի Խաստուր գյուղում, 1889 թ.։ Հրաժարվելով եկել է հողագործ և հացթուխ. այժմ պարապում է մեղվապահությամբ։ 1914 թ. նրա ընտանիքը, չաստի հետ, Ալաշկերտից գաղթում է Արևելահայաստան, հաստատվում Աշտարակում, բայց շուտով վերադառնում է Ալաշկերտ։ Այստեղ երկար չեն մնում, երկին ևս են գաղթում և այս անգամ բնակություն հաստատում Շիրակի Քամքաուլի (այժմ Փանիկ) գյուղում։ Սեդրակը երկու անգամ զորձյալ (1915-ին և 1917-ին) գնում է Ալաշկերտ, բայց պատերազմի ու տեղահանությունների պատճառով ևս է գալիս և Փամբակում վերի ընկնում Բուրքերի ձեռքը։ 1919-ին ազատվում է գերությունից, Շիրակի Մուսուղի գյուղում (այժմ՝ Լանջիկ) գնում ծնողներին և այդտեղ էլ հաստատվում մշտական բնակության։ 1931—35 թթ., անտեսական պայմաններից դրդված, գնում է Մարգարաշտ (այժմ՝ Հակոբջանյան), Թիֆլիս, Դմանիս, ամենուրեք զբաղվելով հացթուխությամբ և հողագործությամբ։ 1936—55 թթ., որոշ ընդմիջումներով, աշխատում է Մարտիկում իբրև հացթուխ, այնուհետև Մուսուղի գյուղում՝ դաշտավարական բրիգադիր։ 1956 թվականից թոշակառու է։ 1961 թվականից ապրում է Քանաքեռում՝ զավակների մոտ, իսկ ամառը գնում է Լանջիկ և զբաղվում մեղվապահությամբ։ Ս. Աբաչյանը զրուցել է չափազանց ընթերցասեր իր տանիքով, Բոֆիս երկերի տասը հատորը կարդացել է չորս անգամ։ Երբեք, կարդալ սովորել է հայրենի Խաստուր գյուղում։

Սեդրակ Աբաչյանը խոսքասեր մարդ է, նշանավոր հեքիաթասաց. հաճախ է հրավիրվել գյուղի օջախներր հեքիաթ պատմելու։ Համագյուղացիների միջավայրում վայելում է մեծ հարգանք։ «Աբաչու Սեդոն հին մարդ է»,—այդպես են որակում նրան համագյուղացիները։

Վեպը լսել է պատանի ժամանակ հայրենի Խաստուրում, Փրո Աբրենց (Աբրահամ Գևորգի Տոնոյան), որը շատ լավ է իմացել ու պատմել վեպը։ Փրո Աբրենն Խաստուրում ճանաչված է եղել որպես նշանավոր բանասաց, խոսքաշնն մարդու երբ խաստուրցիները իմացել են, թե Փրո Աբրենն մի օջախում հեքիաթ է պատմում, լցվել են այնտեղ և մեծ հաճույքով ու հետաքրքրությամբ ունկնդրել նրանս Սեդրակը վկայում է, որ վեպը «շատ նուրբ է սովորած եղել Փրո Աբրենց։ Ինքը եղել է երեսաստար, շատ ուշիմ և լավ հիշել ու հշգրիտ վերապատմել է վեպը։ Նա վկայում է նաև, որ Շուրպալում վեպն իմացել են երկուսը. ինքը՝ Սեդրակը և Ղահեցի Հակոն (Հակոբ Բենոյան, դարձյալ Խաստուրցի). Հակոն մահացել է Հայրենական պատերազմից առաջ*։

---

* Այս պատումն առաջին անգամ տպագրվել է 1973 թ. «Էջմիածին» (ՀՍՍՀ գիտությունների), ամսագրում (№№ 7, 8) փոքրիկ առաջաբանով, որից այստեղ տեղադրում ենք միայն վիպասացի կենսագրության հատվածը։

Ա

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԱՊԱՆԱՄԵԼԻՔ

Ժամանակից հայոց Խաչիկ Բակավոր կապրեր Զորու Խարաբլիսան.

Բայց Մարա Մելիքին հարգալու էր։
Մեծ տղամ՝ անունը՝ անուն Թորոս էր,
Ավագա անուն Արմաղան էր։
Արմաղանը շատ խորամ կէղնի։
Մարա Մելիքի մարդիկ էգան ուրանց տուրք առնելու.
էգան ուրանց խարջ առնելու, էգան,
էգան բոլոր ախճկան տեսան։
Յետո գնացին Մարա Մելիքին պատմեցին, թե՝
Հայոց Խաչիկ Բակավորին մե Արմաղան անվոր ախճիկ մի կա՝

Շա՜տ սիրուն, շա՜տ պեղեցիկ։

Գելնի էգ մարդ յուղընկան կըխրդի, թե.
— Գնացե՛ք, էգ ախճիկ յուղնք, բերե՛ք բնձի.
եթե չտվեցին...—խոսք չէ, զորով բրի քաշին տանին։
էգան, բոլոր յուղընկներ էգան հասան Խարաբլիսա,
Գնացին Խաչիկ Բակավորի տուն։
Վերջ, նստան, խոսացին էտիբ-էնտիբ. հարցուց՝ ըբբ.

— Մենք էգևր ինք, օր ըու ախճիդ .յուղինք մեր թակավորին։
Ըսավ.—Մենք բրիստոնա, դուք կուպպաշտ,
Մեր ախճիդ ձեր թակավորին մենք չենք տա։
— Է՛, չիդաք,—ըսավ,—զոռով կըտանինք։
.Յեկան գնացին, Մսրա Մելիքին .յայտնեցին, թե.
— Էդ մարդ չըտվավ, թե՝ դու կուպպաշտ իք, մենք բրիստոնա,
Մեր օրենք թուլ չիդա՝ մենք ախճիդ տանք բըզի։

.Յեկավ մարդ խրգեց.—Գնացե՛ք,—ըսեց,—եթե կըտա,
Կամով թող տա, եթե չըտվեց՝ զոռով զիկամ,
Հայաստան քարուբանդ կէնեմ, կըտանիմ։
Նորից զուտան էգան, ըսին.
— Բզի տա՛ս։ Եաթրով էլ չիդաս՝ զոռով կըտանինք։
Տեսավ, օր զոռի բան է մեջ,
.Յինք էլ չէր կըռնա Մսրա թակավորի դեմ կովիր,
Կանչեց ուր սինոա. էգան ժողով բրնցին։
— Ի՞նչ էնինք։ Արե՛ք,—բսավ,—էդ մարդիկ էգած է զուտան.
Կովի՛նք՝ չենք կըռնա, մըզի կըսպանին,
Ըրկավինք էլ՝ զոռով կըտանին։
Որոշեցին, թե.
— Ախպե՛ր, մե ախճիկըմ կորի՝ լավ է,
Քան թե մի նրդիր մի քարըբանդ էղնի։
Բևրին որոշեցին, օր ախճիդ տան Մսրա Մելիքին։
.Յեկան .յուղենգներ գացին,
Թակավորին խաբար ավեցին, թե՝ էդ մարդիկ .յոժար ին։
Էգան .յուղեցին, ինչ որ աշխըրքի կարդն էր,
Արմաղանին տարան Մսրա Մելիքին կնության։

2. Մնաց մի ժամանակ։ Դե՛, հեքիաթ է, էլի՛,
Էրգու տղա էղավ։
.Յառաջին տղի անուն դրեց Սանասար,
.Յերգրորդին դրեց Ադնամելիք։
Տղեղներ մեծրցան, էգան տաս-տասերգու տարեգան։

3. Սեներբերիմ՝ Ասրեստանցու թակավոր,
Կռիվ հայդարարեց Մսրա թակավորի հեդ։
.Յեկան գացին կռիվ։ Կովելու ժամանադ
Ասրաց թակավորը .յաղթեց Մսրա թակավորին։

Էդի հեծավ ուր դնվեն, փախավ։
Օր փախավ, չկռնվեն չբռնելու ժամանակ տեսավ,
Օր բդի իրան բռնին,
Ուր կոբերուն մադաղ կանչեց էրգու ոդին.
Ըսավ.—Եթե դուք ընձի ազադիք էս փորձանքիչ,
Ես իմ էրգու ոդին ձրդի մատաղ կէնիմ։
Սադանեն մդավ դնվի մեջ, փախցուց Մարա Մելիքին բերեց։

4. *Բերեց. ժամանակ մը չբնցավ։*
Էն մեկ օր Արմազանին ըսավ.
— Արմազա՛ն,—ըսավ,—կնի՛գ,—ըսավ,—
Ես իմ ոդիք մադաղ իմ կանչի,—ըսավ,—մերուսի կոբերուն։
Տղեք էգած է աստ-տասերդու տաբևկան։
Արմազանը էրևևսատանուն դաղտնի բրիստոնեություն էր սովրըցըրի։
Յիրգուն տղեք էգան, ըսավ.
— Մանասա՛ր,—ըսավ,—ձեր հեր ձրդի մադաղ ը կանչի կոբերուն։
Ըսավ,—Ի՞նչ էնինք։
Ըսավ,—Ի՞նչ բդի էնինք։
Ըսավ,—Փախնինք բդի։ Ձեր հերն օր ձրդի կըսե.
«Աբե՛ր երդըպահութուն էրեք կոբերին»,
Դու ըսեք օր. «Մենք չընք գինա,
Մեր մեր մրդի չըսովրըցուցեր ը,
Դու երդըպահութուն էրր՛, մենք կը սովրինք»։
Էն ժամանակ կրպարդիր, կրպանիր,
Ես ձիան կառնիմ այսինչ տեղ կրկայնիմ,
Դուք գիկար, գ՝եձնինք, փախնինք կէրտանք հաչիկ Թակավոբի մոտ։
Մերը էդ խրատ ավեց տղեկներուն։
Ու անցավ մի բանի օր։ Հերը կանչեց։
Կանչեց.—Տղե՛ր,—ըսավ,—ես ձեզի
Կավու ժամանակ մադաղ իմ խոստացի կոբերուն,—
Ըսավ,—բդի տանիմ մադդիմ։
Էգան տղեր մոր բով, ըսավ.
— Արդեն մրդի կանչեր է,
Բդի չէգուց մրդի տանա մադդելու.

Ի՞նչ էնինք։
Ըսավ.—Ես մեկ-մեկ խոխուզ պըշինիմ, ձրդի կիդամ,
Գրպայիք ձևրունի շորևրու տագ ու կէրտաք։
Կէրտաք էնդեղ. եվի օր ձրդի ըսավ.
«Աբե՛ր, երգրպակութուն տվե՛ք»,
Դու ըսնք օր. «Մենք չընք գինա,
Դու երգրպակութուն տո՛ւ, մենք էլ տովրինք»։
Մ՛ր ժամանագ օր երգրպակութուն կիդա,
Գրդարդիք, կըսպանիք։
Ես իրևք հագ ձի կառնիմ,
Կէրտամ պայմանավորած տեխ կրկայնիմ.
Դիկաբ, կրհնձնինք,
Ձեր պատ էլ թակավեր է,
Կը փախնինք կէրտանք իմ հար տուն։

5. *Կանչից Մսրա թակավեր տղեկներուն, տարավ։*
Երգրպակութուն օր էրևց՝ տղեկներ խոխուզով զարդեցին,
Կառատան մեջ պատուցին, սըրանեցին,
Փախան էդան, էդան հասան մոր։
Հնձան ձիան. ո՛չ ճար գինան, ո՛չ ճամբաս գինան։
Ասավածութեյունից հրիշտակ լուսնից, կրապից
Առաջնորդում էր տղից,
Ջօր էլ լույս էր առաջնորդ բդից։
Էդպես փախնելով՝ խաբարն ընգավ, թե՝
Տղեկներ թակավորին սրբանած, փախած է։
.Ձևլավ զորք .յընգավ .յեդեվ ուրանց։
Էդան մինչ ի Խարաբիլիսու ձորեր.
Ուրանք մղարի մեջ տապուղ էնն։
Տեսան՝ ուրանց պաշարած ը.
Ասավածութունից հրաշք էղավ, խաուխան .յիրար գիշեր,
Սկսեցին .յիրար ջարդել.
Ուրանք մղարի մեջ տապուղ,
Մսրա զորք .յիրար ջարդեցին,
Սպանին .յիրար, ջարդեցին,
Դարձան, փախան գնացին։
Ըզնք .յելան էդան, գնացին Խարաբիլիսա, իրանց հար բով։

6. Գնացին հոր քով, հերը ուրախացավ՝
Թոռներն է էգի, տաս-տասնութ տարեգան տղեղներ,
Ախճիկն ի էգի։
Տարան ուրանց, խոսացին, չիմացավ,
Օր զարգած է, սպանած է հոր, փախած է։
Ըսավ.—Իմ տանն չելեք գնացե՛ք, դու ընձի հարգավոր չի՛ր,
Ընձի աճխիդ էլ հարգավոր չէ, Քոո էլ հարգավոր չէ։
Յէգուց Մսրա թակավոր լսեց՝
Գիկա, հայություն էլ գըկգրե։
Քեսի Թորոս մդաձեց.
— Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,—ըսավ,—
է՛, պարբ,—ըսավ,—դու քու ախճդաց ու Թոռներուց գընդնիս.
Ես,—ըսավ,—իմ քուրռճից, իմ խարդեսաններուց չըմ
չըննըրնի։
Քաշեց ուր վեցօղնեն լազդին, հեձավ ուր ձին,
Յընգավ բդոց յառեջն ու դերի...
Չգիդա յինըն էլ՝ յուր կէրսա։

7. Էգավ էգավ, էգավ չելավ Մշու դաշտ։
Էգավ Մշու դաշտ, հասավ Մեղրագեղին։
Յիջան Մեղրագեղի քով,
Ուրանց համար հաց կերան, ջուր խմեցին, լվացվան.
Քեռին տեսավ, օր էն դիուց, սարից
Մե բարակ ջուր մի գիկեր.
Գիկեր, զրզարգեր Մեղրագեղի հակառակ կողմից, լենրից,
Գիկեր, զրզարգեր էսահե խային,
Խային օր դեմ չառներ,
Գրզարգեր գեղին, կէրտեր։
— Աբմադա՛ն։
Ըսավ,—Ո՞նչ է, Թորո՛ս։
Ըսավ,—Մենք չելինք,—ըսավ,—
Իդա ջրի յակունք մրգի համար տուն շինինք։
Էս ջուր խմող մարդը՝
Մեզ հազարին բադալ է,—ըսավ։
Յելան յընցան Մուրադ գեղ,
Գացին էդ ջրի վերեվ, բդոր ախպուրը գդան,
Բերեցին ուրանց հոլլրկ մը շինեցին
Ու բդոր մեջ արբան։

8. Աբրան մէ ժամանակ Գէրձ ուրանց իՙնչ էՙ
Քեռին ու եղբայններ կէրտեն, փորեն,
Կոթող յանեն, զըլզըլ զրցանեն,
Ըզրով կաբրեն։

Աբգեն Սանասար հասավ։
Սանասար հասավ, .յիրգուն նատան.
— Աբմաղաՙն,—բսավ,—մեր տղեն հասեր է,
Մենք բզի կարդինք։
Մենք բյասիր, բան չունինք, ազբաՙտ, իՙնչ էնինք։
— Ես իՙնչ գինամ, գոՙւ գինամ։
Քեռին որոշեցին. էդգեն հայՙ Բիբլիս, Բազեշ կարբեն,
Հայոց նորից թակավէր էրՙ Գագիկ թակավէր,
էն ժամանակ հայէրուն թակավէր շատ կար,
.Յելավ գնաց էգաբեխ, տզան տարավ հեղ։
Տղին օր տեսանՙ
Ազբաստություն էլ մոռացան, ամեն բան էլ մոռցան.
Տղին օր տեսանՙ ամենատուրախության, խնդալով բերեցին,
Ուրանց ախճիգ ավեցին Սանասարին։
Առան էգան։ Ուրանց տան մեջ կաբրին,
էդ կոթողով ու զրլզրլով, ուրիշ բան չունին,
Մե էրգու հադ էլ էձ ին պալե։
Ժամանակ .յրնցավ։ Մե տղեմՙ էգավ Սանասարին.
Տղեմՙ էգավ, բերեցին անուն դրեցին Մհեր։

Բ

ՄԵԾ ՄՀԵՐ

9. Հերթաթ բ, տղեն մեծրցավ,
էգավ տաս-տասնհինգ տարեգան։
Կէրտեր նեձրություն կէներ։
էն մեգ օր էգավ մարդ, դադրեր էր.
— Օՙֆ,—բսավ,—դադրեր իմ,—մամուն։
Քեռին բսավ,—իՙնչ էնեմ,—բսավ,—
Աՙմՙթ էղնի բու պաբուն,—բսավ,—
Օր .յինք թակավէր մը, չըկանա բզի ձի մի տա,

Օր դու էրտաս, նեձրութիյուն էնիս։
— Իմա՞լ,—ըսավ,—իմ պար Թակավո՞ր է։
— Ըրը՛,—ըսավ,—քու պար Բազնշ Թակավոր է։

.Յելավ յառավոդ, էրդու հադ կորեգի հաց դրեց ուր հըբան
Ու դիքեց դերի Բադնշ։
Գնաց։ Գնաց, Բիլլիսին օր մոդեցավ,
Տեսան օր՝ էդ մարդն օր էդավ,
Սովորագան ուրանց մարդոստանուց չէր,
Իրեք, չոր մարդու բոյ է։
— Հա՛յ, հա՛յ, հա՛յ,—ըսավ,—Սասման ծո՛ւռ,
Իմկնի Սասման ծուռ .յո՞ւրդից էգավ։
Խոռվան .յիրար հոդըներ.
— Հե՛յ, իմկընի լագոդնե՛ր,—ըսավ,—
Ես Գագիկ Թակավորի,—ըսավ,—Յոհն իմ,—ըսավ։
Էն մեգ ժուլիգ էր, վերցուց ուր քոլոզ ու քյաչալ,
Վազավ դնաց Գագիկ Թակավորին մուժդա տալեց, Թե.
— .Յա՛ճկդ լուս էդնի,—ըսավ,—քու Յոհն էգեր է։
Էդան վերցին տղին, տարան։

Տարան, մի էրդօր մի մնաց, վրա իրեքի.
— Պա՛ր,—ըսավ,—ըսկի չե՞ս հարցու, Թե .յորի՞ ես էդի։
— Ա՛յ տղա,—ըսավ,—դու իմ Յոհն, էգեր ես իմ տուն, ի՞նչ հարց։
— Չէ՛,—ըսավ,—խո ես չէգեր իմ,—ըսավ,—
Հացատի՞ր քու տունը մնամ։
Վերջ օր շադ սոխակեց, ըլավ.—Ի՞նչ է։
Ըսավ.—Էգեր իմ, օր դու ընձի մի տաս,
Օր ես էրտամ ձիով նեձրութիյուն էնիմ,
Ես չըմ կռնա թելևով նեձրութիյուն էնի։
— Է՛,—ըսավ,—լա՛վ, Մհե՛ր ջան,
.Յառավոդ կէրտաս,—ըսավ,—Յամրի կէնիմ մշկուն,
Թող ձիանուն բոլոր ցուց տա,
Որ ձին օր հավնար՝ էն էլ տանիս։

Գնաց տեսավ, օր բոլոց Յավլեն մե՛ձ Յավլե մի,
Ամեք դեն քառասուն ձի է կարուղ։
Գնաց, որի վրեն ձեռ դրեց՝

Փոր .յիշամ գետին։
Տեսայ, օր իրան ձի պրդըցող չկա,
Էգայ, դռնեն բդի .յելներ, ասացի՝
Թառի տագ մը ծղոնդ քուռագ մի կա։
Բսաւ,—Կանի՛, գոմիմի՛ էլ գարդիմ, իգա քուռագ սադդի,
Էս էլ էղնի անո՛ւն։
Ուժ հավաքնց, քաշնց, գոմիմի՛ օր գարգնց,
Քուռագ գարձավ, ջուխտ չուխտեն գարգնց սրդին,
Թառավ, Բավլի վերի գլուխ կայնավ,
Կայնավ, գառավ աշնց, խրխնջաց։
Աշո՛ց, աշո՛ց, բսավ.
— Իմ պար բնձի տա՝ էս քուռադն է,
Ջիդա՝ էս քուռադն է։
Տվից՝ կրտանիմ, չըտվից էլ՝ գնդիմ կէրտամ։

.Յեղավ գնաց գիվան։
Կանչեցին մշկուն, կանչին Մհերին։
— Ի՞նչ էգավ, մշա՛կ։
Բսավ.—Ես չըգինա՛մ,—բսավ,—
Որի վրեն ձեռ գրնց՝ փորձնց,—բսավ,—
Մեզ էլ էգավ, զարգնց գոմիմի՛ն,
Էն քուռագ բդի սադգըցուցեր,
Էն էլ Թողնց էգավ։
Ես չըմ գինա,—բսավ,—բան մը չըմ հասկընա։
Կանչին Մհերին, բսավ.
— Գա՛ր չան,—բսավ,—քու ձիան բոլոր լավ ձի ին,
Բայց ես օր տարա,
.Յէգուց չըն բսի՞՝ էդ իմալ նամարդ մարդ էր,
Էգավ, ուր պարու ձիանու մեզ փոգից մե ձիմ՝ առավ գնաց։
Ընձի կիդաս՝ էն քուռագ տո՛ւ,
Ջիդաս էլ,—բսավ,—քու ձիանն բնձի հարդավոր չէ։
Էդ մարդուն շա՛տ խոսացին,
Էդ շադից քի՛չ լսնց,
Քշից էլ բսկի բա՛ն չհասկըցավ,
Թե՝ մինագ էդ քուռագն է։
Ուրանր չըն գինա, օր քուռագ էդ շնորը ունի։
Տեսան, օր հնար չկա, մյուս օր վերցին քուռագ,
Յուլար դրեցին գլուխ, մե մշկում՝ էլ ավեցին հեդ,

Քաշեցին տարան, քաղքից հանեցին։
Հետևցավ, մշտազ դառավ։

Մգա կըքաշե յուլար՝ քուռազ չի գա,
Է՛, յառնջ կէբուա՝ կըփախնի։
Շատ օր չարչըրվավ, իլլաջ կդրավ,
Բևրնց քուռազ պառդըցուց,
Յուլըրով յօդևնր կարնց,
Վերուց փեդն էգզնց յօդևներու մեջն
Ու դրնց փիջին ու դևրի Քևռի Թորոսին գնաց։

Օր գնաց մոդևցավ Սասնա,
Էն ժամանագ էլ գուլբին կար խո՛,
Քևռի Թորնս գուլբին դրնց յաճկերուն,
Տեսավ օր՝ փիջի վրեն փեդով բանըմ կա։
— Ախմադա՛ն,—բսավ,—
Էդ բոպազօղլին խապեր է տղին,—բսավ,—
Զո՛ւլ ու փալաս է ավի բևրև էդ անամոթ,—բսավ,—
Քաշե՛ ձիսի, էրտամ,—բսավ,—
Թախթ-բաջ վևրանա կըդառում գլխուն։
Էգավ տեսավ օր՝ ինչ տեսնի՝ քուռազ մի։
— Ա՛յ տղա,—բսավ,—էս ի՞նչ խա էրի։
— Քևռի՛ ջան,—բսավ,—ի՞նչ էնիմ,—բսավ,—
Քաշիմ՝ չիգա,—բսավ,—Բողիմ՝ կըփախնի։
Իլլաջսի կդրավ, ես էլ կարնցի,
Դրի փիջիս, առա էգա։
Քևռին հարձրդնց քուռազ, էսոին-էնոին աշնց՝
Խաձնց մոուր. յինք չանըզ էր։
— Քաշե՛, լաո՛,—բսավ,—էսի հրնդևն ձի է,
Էդ յուրդից է բնգի էգաելս, էդ էլ չգիտեմ,—բսավ,—
Քաշե՛ էս քուռազ, տանինք։
Քուռազ քաշեցին տարան, պահեցին, մեձցին, էրեցին ձի,
Անուն դրին Քուռդի Ջալազ
Ու սկսեցին արբել ուրնց համար։

10. Սկսնց ուր նեճրութլուն էնել։
Քևռին տեսավ, օր արդևն Մհեր ձևնձրնվավ աշխրքի մեջ,
Բևրնց ըղրան ղրբիմ՝ ու Թաամ՝ ու Թուր մի շինեց։

Աբրան իրենց համար։
Շաղըցան, էզան յոթ, ութ, տաս հոգի,
վերջապես, ուրանց համար կաբրեն՝
Կորնգով, գըլգըլով, իրեք հատ իձով։
Մհերն արդեն հասավ։ Քեռին ըսավ.
— Արմատա՛ն, բիր մեր տղեն կարկինը։
— *Է՛, կարկի՛,— ըսավ։*
Մհերին կարկինցին էսպես։
Մհերին էզավ էրդու հատ տղա՝
Մեձի անուն դրեցին Մանուկ,
Փոքրի անուն դրեցին Դավիթ։

11. *Մարթա Մելիք լսեց, օր ուր հոգի մեջ,*
Ըսին, դյավուր է էգի, տուն է շինի, կաբրի։
.Յելավ բոմեց ուրունի սինսատավ, ըսավ.
— էրտանք պղըդինք մեր աշխարք,
Տեսնինք, մեր աշխարք ի՞նչ դրուտյան է,
Ու էդ գյավուրին էլ,—ըսավ,—
էրտանք, մեր տասչերս տարվա խարջն առնինք, .յիգանք։
.Յելան էգան։ էգան պղըդելով,
Օր էգան հասան Սասմա սալման,
Քեռի Թորնս լսեց, .յելավ բոմեց ուր քանի հոգին,
Ձիով գնացին ըդոց .յառնջ։
Ջրինդ խաղալով էզավ Մհեր։
Որի փիջին ձեռք դներ՝
Կըքաքեր Թումբան ուրանց։
Մարթա Մելիքի հետ էլ ձեռ բարև էնելուն,
Մինչի էգավ .յելավ,
Ձեռ ըդոր փիջին էլ՝ որպես ախպեր,
Մուռդըռեր էր։
Տարան մաքրեցին, էգան նստան խոսացին,
Սարսափն առեր է, ըսավ.
— Քեռի՛,—ըսավ,—դու Թոզի՞ս,
Խնտրիմ, օր դու Թո՛ւլ տաս, ես ու...
Ըսավ.—Դու մի խնտրի,—ըսավ,—դու կարկատրե՛։
Ըսավ.—Չէ՛, կըխնտրիմ։
Ըսավ.—ի՞նչ է։
— *Թոզի՞ս, ես ու Մհեր էղնինք ախպեր։*

Ըսավ.—Խնարի՛մ, էղևք, ի՞նչ կա, ես ուրախ չի՞մ.
Ես խնդանամ, օր,—ըսավ,—իմ աղեն
Էղնի թակավորի հետ ախպեր։
Բերեցին էդան ախպեր։
Տասնուչորս տարվա խարջն էլ բաշխեցին։
Պայման կնքեցին՝
Որն օր շուտ մեռնի, էն մեզել էրտա,
Ընդեր տան, էրեխաստանուն տիրություն էնու։
Կերան, խմեցին, յաոավոդ օր յելան գացին,
Ըսավ.—Մհե՛ր, ես քու կին ու էրեխեք ձանչըցա.
Դու էլ սրի՛ էրտանք,—ըսավ,—իմ տուն,
Իմ էրեխեք, իմ ընտանիք ձանչըցի,
Որ ես օր մեռա՝ դու յիդաս տեր էղնիս։

12. *Յելան հեծան ձիան, դնացին,*
Մհերն էլ հետ ուրանց։
Գացին ըղեխ, մի քանի օր մանցին։
Գնաց Մսրա Մելիք ուր տան դեն՝ կնգան.
— Կնի՛գ,—ըսավ,—կըկանչիս Մհերին քու քով,
Գիշեր կըպայիս քու քով, չես ըողնի յիդաս։
Մշկուն էլ թամբի էրեց,
Օր Մհերի ձին ըողա ուր խարըխտ վրեն։
Էգան յիրգուն կանչեցին Մհերին, տարան։
Դե՛, ախպըրկին էր, խոսացին,
Օր յելավ, ըդի յիգեր.
— Չէ՛,—ըսավ,—ախպե՛ր,
Մեր օրենք էնբես է, օր գիշեր...
— Ա՛խր մենք ախպեր ինք...
— Չէ՛,—ըսավ,—մեր օրենք էդպես է.
Գիշեր դու ըդի մնաս իմ քով։

Գիշեր Մհեր մնաց քո՛վ։
Մհեր յաոավոդ յելավ ու մնաս բարով էզավ,
Էգավ Սասուն։
Մենք խաբար տանք Մսրա Մելիքից։
Կինը տարի մի եղ պաոզավ, բերեց աղե մի,
Նվ ձին էլ ծնավ, քուռակըմ բերեց։

Գ

Դ Ա Վ Ի Թ

13. *Մհեր էդավ Սասուն։*
Էդավ Սասուն, .յընցավ մե բանիմ՝ վախտ,
Հիվանդացավ Մհեր, մեռավ։
Ասթար գնաց Մսրա Մելիքին, թե՝
Աբդեն քու ախպեր մեռեր է։
.Յելավ էդավ, Քեռուն բասվ.
— Մեր պայման՝ պայման է։ Ես էգեր իմ,
Օր իմ ախպոր էրեխեքն ու կնիկ տանիմ, պայիմ։
Տեսան, օր չէղնի, բասվ.
— Մսրա Մելի՛ք,—բասվ,—կրխընտրիմ,—բասվ,—
Եթե կին ու էրեխեք տանիս՝ մենք կըմեռնինք,
Գոնե կնիգ մնա մեր մոդ, մենք կնգով մխիթարվինք,
Տղեք էլ դու տար պայիս։
.Յելավ .յօժարացավ, առավ տղեք, առավ գնաց։

14. *Գնաց պայեց։ .Յընցավ մե բանիմ՝ ամիս։*
Էրեխեքն օր կըխաղցուցեր,
Մանուկին օր կըդներ չոքի վրեն՝ բան չըր էնե.
Դավիթին օր կըդներ չոքի վրեն՝
Չեռ կըթալեր մուրուք,
Օր ձեռք չըրռներ,
Քաշեր մուրուք տեխեն կըհաններ։

15. *.Յընցավ մե վախտ մի։*
Կանչեց ուրումի խորհրդատուներին, բասվ.
— Աբե՛ք, ա՛յ մարդ,—բասվ,—էս գյավուրի տղեն,—բասվ,—
Օր մի չէ՝ օր մի իմ մուրուք քաշի,
Օր մի գնի,—բասվ,—էդի փորձանք կէղնի իմ գլխուն։
Ես բդեր գլուխ բդի մգավուց կորսիմ։
— Ա՛յ մարդ, էրեխա՛ է։
— Չէ՛ օր չէ՛,—բասվ,—էդեր միտք խա՛լր է.
Էդի խա՛լր է, էդի իմ գլուխ բան մի բդի հանե։
Տեսան, օր չէղնի, էն մեգ.
— Ա՛յ մարդ,—բասվ,—էրեխա ին, բերեք փեռձ կատարինք։

— Ի՞նչ։
Բևեռին տարան դիվնի՛ն ներքև
Մև սինի մի փալուտ փետի քող դրնցին
Ու մեզ էլ՝ օսկի դրնցին։
Ըսավ.—Քո՛ր, Քրխ էրտան,—ըսավ,—
Նթև գացին դեպի կրա՞գ, ղբինն էրնխա ին,
Թև դեպի օսկին գացին՝
Գիցի, օր միտք ուրանց խալը է։
Մանուկին Թողնցին։
Մանուկ դիմնց դեպի կրագ գնաց,
Ձևո զարդնց կրագին,
Օր կրագ կրավ ձևոին՝ վառավ,
Վերուց զարդնց բերան՝ մուխ լե վառավ։
Ճա՛ո Մանուկ ըսնցին։
Թողնցին Դավիթին։
Դավիթ գնաց՝ դեպի օսկին դիմնը է ու կէրտաս։
Հրիշտագ առաուն դառուց, ըսավ.
— Ա՛յ մարդ, .յո՞ւր կէրտաս, դառի՛։
Դառավ դնբի կրագ գնաց։
Մարդիկ, բարի մարդիկ շատ կան.
— Ա՛յ մարդ,—ըսավ,—գնաց, էդ էլ այիբլու կէդնի,
Մև տղեն այիբլու էրնցիր,
Մնգել լև այիբլու կէդնիս։
Վերցին, վերցին բերնցին։

16. Քնի Թորոս որմ աշնց, Թալնց որմ,
Թուր քաշնց՝ Թրի բերան ժանդոդեր էր։
— Արմադա՛ն,—ըսավ,—իմ վնցոդնեն լազգին քաշե՛ր,
Ես էրտամ,—ըսավ,—էրեխեր նեղության մեջն ին.
Յա՛ հասնիմ, յա՛ չ'հասնիմ։
Քաշնցին ձին, հեձավ էգավ։
Էգավ Մսրը .յիջավ։
Դավիթն էգավ, ըսավ.
— Մնգել տղեն .յո՞ւր է։
Ըսին.—Մնգել հիվանդ է։
Գնաց տեսավ, օր բերան վառեր է։
Դե՛, ամեն տեղ էլ բարի մարդ կա, ամեն ազգու մեջ էլ կա,
Հաղորդնցին, օր գործըն էստնսակ կէդնի։

Էդավ, խնդրեց Մսրա Մելիքին,
Առավ տղեգներ էդավ։
Արդեն Մսրա Մելիք էլ զվռացեր է, ճիշտ բասե։

17. Բերեց տղեգներ։ Տղեգներ մեծըցան.
Ուրանք շաղըցած էր։
Գարուն էր։
Տեսավ, օր բուլուդ մի, յիներ բդի էրտա փսրե,
Կորեզ ցանե, օր բերե բդից պայե։
Էդավ.—Աստվա՛ծ վերու ձբդի,—բասվ,—
Էղեր իր քառասուն ջան,
Ե՞ս բդի ձբդի համար աշխատիմ։
Դավիթին էլ աս-տասնյոթ տարեկան ասղա էր։
Էդավ տեսավ, օր Դավիթ խոր մի քարեր է տաղ,
Ջըմբիլա՛ էլ դրեր է գլխու տաղ
Ու քնուդ է։
— Է՛,—բասվ,—ջոջ յիներ Դավիթ,—բասվ,—
Դու էրթաս էղնես նախրջի՛,
Քու հաս տանես կորե՞դ,
Տանես ջաղաչ ազա՛ս, բերի՛ս,
Ախմաղան մա՛ղե, շաղե՛, քխե՛,
Էս ձևորով դնիմ էս բերան՝
Ջեմ հավատա՛։
Դավիթ.—Քեռի՛,—բասվ,—ի՞նչ էնենք։
— Ի՞նչ բդի էնես, աստվա՛ծ վերու ձբդի,
Գացե՛ք Մշու դաշտ,—բասվ,—նախրջու վախտ է,
Գացե՛ք էղեք նախրջի, հորթարած,—բասվ,—
Հախ ձբդի առեք բերեք, էստեղ աբրիներ։
— Վոլա՛,—բասվ,—քեռի՛, ես կէրտամ։
Մարե՛, իմ յոդ ու գլուխ աարբը՛, կարգրդնը՛,
Ես կէրտամ կէղնիմ նախրջի։
Բերեցին կդա՛ր մի կարգրդնեցին,
Փեդ մի դրեց փիջին, դնաց։

18. Գնաց, դնաց Մշու դաշտ,
Գանձակ անվա՛ր գյուղ կա, էղնեղ գնաց։
Գարուն է. նախրջի բդի բռնին,
Գեղ էղեր է էրդու բա՛ղրի,

Մե բարը մե մարդու դուզն,
Մե բարը մե մարդու դուզն,
Բայց չըն համաձայնվի
Գնաց, օր հարցրին.—Ո՞նչ մարդ իս
Ըսավ.—Էգեր իմ, նախրնրդ կէղնիմ
— Է՛լ,—ըսավ,—մըզի նախրնրդ հարգավոր չէ՛,
Էս տղեն կէնինք մըզի նախրնրդ.
Ո՛չ ձեզնից է, ո՛չ էլ մեզնից է, խարիր մարդ է,
Թը՛ռ էղնի մըզի նախրնրդ
Բերեցին Դավիթին էրեցին նախրնրդ
.Յելավ .յառավոդ, Յողեց ուր մալ, կէրաս
Գարուն է, գարնան մալ, մալեր գարուն է,
Կրաբլվին, գրնգնին չամբոներ
.Յիրգուն, որի կովն է, Հերթ, մալ՝ գրնգնի չամուս,
Գրվեբու, կրբեբե, տանե, Հանձնե տիրոջ
— Վա՛յ Դավիթ ջա՛ն,—կըսին,—
Ք՛ո աշխադիս, շա՛դ ուդիս, դու .յո՞ւրդից էգար
Հարի դիկեն կրանե, Հարի խաբար գրբերեն,
Լաննք սել, կէրտանք, բերենք, արդեն կրսադգեր.
Էլ ո՛չ սելի ինք մենք մոխտաջ էղնի, ո՛չ էլ մալի
Պայեց, մինչի էգավ մայիս, .յրնցավ Հունիսի մեջ
Մալ արուն առեր է, մոզ կեներ,
Ամեզ ուրեն դիյով մի գրփախնի,
.Յինք մենձ մարդ, էսդին գրվազնի, էնդին գրվալնի,
Քրդնի, Հնար չէղնի

19. Էնտեխ էլ Քեռին տեսավ, օր Դավիթ չկա.
Իրեք-չորս ամիս .յրնցավ
— Արմաղա՛ն,—ըսավ,—
.Յելի՛, կդնր մի կարգրդան, Թել բան տուր,—ըսավ,—
Էրտամ, էդ ծուռ գդնիմ,—ըսավ,—.յո՞ւր է,
Ըդնր վրեք-գլուխ,—ըսավ,—կարգրդնիմ, .յիկամ
.Յելավ առավ Թել, կարգդան, գիկա
Էգավ էնտեխ, էգավ էդ գեղ
Ըսին, օր՝ Հոս է նախրջի
.Յելավ գնաց, տեսավ, օր՝

Մալ գարգեր է մեր Օմո գեղի՝ պես մե դաշտըմ,
Էնդուց գըփախնին՝ էն դեն գըվազնե,
Էնդուն գըփախնին՝ էն դեն գըվազնե։
Տեսավ, օր չէղնի, մե կով մի շատ հոգին հանեց,
Կզավ գեղնին, կզավ գեղին, օր քար վերուց,
Տվեց կողքից, մեզել կողքից քար վզալով դուրս էգավ,
Գնաց .յընգավ։
Քեռին տեսավ՝ գնաց .յիշավ բարի վրեն։
Աշեց, օր Քեռին էգեր է։
— Քեռի՛,—բաավ,—էդ ի՞նչ է կէնիս։
— Ասավա՛ձ վերու բրդի,—բաավ,—
Մորթը՛, մարդու կով չը մըսդրլի։
— Չէ՛, Քեռի՛ ջան, էդ ի՞նչ է։
— Տո՛,—բաավ,—կնձդի քար է,
Ասավա՛ձ արեվդի բաշանն,
Բրդի կէնիմ ֆուր,
Օր քու ֆուր ապառաժ բարեր ճղը։
— Վա՛յ,—բաավ,—մեռնի՛մ Քեռուս պխուն,—
Ու կովու գլուխ կդրեց։
Կով մորթեց, կըտանե, բա հաղ կանիծեն.
— Դավի՛թ, շա՛դ աշխատիս, քի՛չ ուդիս,
Բիբադի մորթեցիր, բևրեցիր։
— Ա՛յ մարդ, էն ժամանագ, օր չամռնե, ալվեն,
Ձրն .յիգե, գաբուն, չուդվեր.
Մդա, ասո՛ւն փառք, խլա՛վ, շա՛դ՝
Միան էլ կուդվի, նդ էլ ձրդի սաբեն կէնիր,
Էլ ի՞նչ կուդիք ընձեն։
Քեռին էր, բևրեց բդեր վրա-գլուխ կարեց, կարգըդնեց,
.Յելավ, գնաց։

20. *Նախրջի է ուրին համար։*
Էն մեզ օր նախիր ֆողեց, գնաց,
Տեսավ, օր սինոդի գլուխ մե հինդ-վեց նախրջի կա.
Էգան, էդան յոթ գեղի նախրջի։
— Ա՛յ մարդ, էս ի՞նչ է։

---

* Վիլասացի Հայրենի եռասար գյուղի մոտ գտնվող տեղամայր Այաչկերասա։ Ասե. բանահավաքների։

Ըբը ըսին.—Այսինչ գեղ հոգու հաց է պրաձ,
Երդինք, էրթա, գոնր մի հոգու հաց բերէն,
Մենք էլ ուդինք։
Էգան, բերեցին սրուշեցին Դավիթին, ըսին.
— Դու գնա՛, մենք քու նախիր կըպայինք։
Ըսավ.—Լա՛վ, իմ նախիր պայնք, ես կէրթամ։
Գնաց։ Գնաց տուն, տեսավ, օր մե չայել հարս մ'է,
Մարդ չկա տուն։
— Քուրի՛ ջան,—ըսավ,—ձեր տենցիք .յո՞ւր ին։
Ըսավ,—Գացած է ժամ, ախպե՛ր ջան։
Ըսավ.—Գոնր մի, ձըր էգ մըռլի խերուն,
Ձեր էգ հոգու հացից տվեք,
Մենք էլ՝ յոթ գեղի նախրջի,
Բոմներ ինք ձըր սինոսի գլուխ,
Տանինք, ուդինք,—ըսավ։
— Ախպե՛ր ջան,—ըսավ,—մանցի,
Հըրի ժամեն .յեկին .յիգան,
Մըռնչի տեսաեր չիգա, տիրացու՝
Մենք չենք իդա։
— Ա՛խր, հըրի ես մնամ, նախրջի իմ,
Մալ կըգողնան, տանին։
— Չէ՛,—ըսավ,—ես չեմ իդա։
.Յաճկ պդոցուց, տեսավ օր ճոպան ամբրի գլուխն է,
Ճոպան բերեց, ձեռ թալեց,
Բղիպ Քընդրեն հանեց,
Ճոպան թալեց բղդին, շալկեց,
Փարխրջի եղ առավ մեղ ձեռ,
Տաշտ գլխեց, դրեց գլուխ,
Տաշտ Քնդրա վրեն դրաւ էր,
Դղրլներ գարգեց խայիշն ու վերցուց,
Դաստեմ՝ էլ հաց գարգեց խոլՔուղ.
— Աստվա՛ծ օղորմի,—ըսավ,—ձըր մեռելներուն,—
Ու գնաց։
Հարա վազավ ժամ, ըսավ.
— Արե՛ք, օր,—ըսավ,—նախրջին տարավ։
— Ես բղնց համար է, Քր՛խ տանը։
Դավիթ Քրխ դա էգտեղ, հոգու հաց, հարիսա տանելու,
Մենք խաբար տանք նախրջոցից։

21. Քառասուն հատ գողեր թալին նախրի վրեն,
Դավիթի նախրից քառասուն հատ անծին էրինջ ջոգին,
Առնին էրթան։
Օր տարավ դրնց, տեսավ, օր մարդ չիգա հաց ուզելու։
— Ա՛յ մարդ, արե՛ք, կերե՛ք,
Թե .յուշ իմ էդի, բիչ իմ բերի՝ ըսնք։
— Տո՛, ի՞նչ սև-մութ ուզել,—էն մեզ ըսավ,—
Դու օր գնացիր, գողեր էգան,—ըսավ,—
Քու նախրից քառասուն հատ էրինջ ին տարած։
Ըսավ.—Ի՞նչ էնիմ,—ըսավ,—դի՛, դու իմ մալին մուգաթ կեցե՛ր։
Բերեց մե գափին մի հաց վրաիեց .յիրար,
Ջարդեց եղի մեջ, էրեց բուռմա,
Եղ թափավ գոշերուն, ու ուզելեն գնաց։
Գնաց, օր հեռացավ դաշտից, .յընգավ խամ տեղ,
Մալի արդեն դաֆա էրեվաց,
Մալի դաֆեի հեդ գնաց, գնա՛ց,
Տեսավ, օր, ա՛յ մարդ, եռևսունին էրինջ կա, կարձան,
Ու ի՛շ շներ կա, ի՛շ բան կա։
Գնաց տեսավ օր՝ մե մդաբև մ'է,
Մե էրինջ մորթած է,
Քառասուն հոգի մդաբի մեջն է։
Բռնեց քառասունի դլուխ էլ կդրեց, թալեց դուրս։
Մդավ մդաբեն, տեսավ օր, ի՞նչ տեսնի՝
Քառասուն տարի օր բերին, չը խլըսի՛։
Ըզեց քառասուն տարվա գողություն հող բամուղ։
.Յելավ էն մե էրինջ դրեց պղնձի մեջ, թողեց հող,
Եռևսունին էրինջ էլ տվեց .յառեջ,
Քշեց էգավ, խառնեց նախրին,
Բերեց ցերեգով՝ հո՛, հո՛, հո՛, քշեց, բերեց էրեց գեղ։
— Արե՛ք,—ըսավ,—ձեր նախիր,
Ձեր հե՛րն էլ անիծիմ, ձեր նախրի՛ն էլ...—
Ու թողեց գնաց։

22. Գնաց։ Գնաց հասավ տուն։
Քեռին գացեր էր կորեգ գըջրեր։
Ցերեկվան էգավ տեսավ, օր Դավիթի պառդուղ է։
— Հե՛յ գիդի,—ըսավ,—ջեջ .յօտ Դավի՛թ,

Դու էրասաս էղնիս նախրջի՛,
Քու հախ առնիս կորի՛ց,
Բնդիս, տանիս ջաղացս, աղա՛ս,
Արմաղան մա՛ղը, շա՛ղը, քրխո՛,
Էս ձևորով դնիմ էս բերան՝
Չևմ հա՛վադա։
.Յելավ.—Քևի՛, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ։
—Գրո՛ղ առնի քըզի,—ըսավ,—ինչ...
— Քևի՛ ջան, ի՞նչ ըսիր։
Մևդ էլ էդ խոսք շարունակևց.
— Դու էրասաս էղնիս նախրջի՛,
Քու հախ առնիս կորի՛ց,
Տանիս ջաղաշ աղա՛ս, բնդի՛ս,
Արմաղան մա՛ղը, շա՛ղը, քրխո՛,
Էս ձևորով դնիմ էս բերան՝
Չևմ հավադա՛։
— Քևի՛,—ըսավ,—մևնք քանի՞ հորի ինք առևն։
Ըսավ.—Ասավա՛ծ վերու բդի,
Քըդնով բառասուն ջան ինք։
Ըսավ.—Ամեղուդի մեղ-մեղ չվալ,
Մեղ-մեղ շրիդ պրպաղրաստիք,
Ընձի էլ էրդու հադ չվալ պրպարդիք .յիրար, կարի՛ք,
Արևվն օր պադավ, ընձի ձևն կիդաք։
Հըմալ տեխամ՝ իմ դևն օր, Քևի՛,
Քառասուն տարի կրինք՝ չրխըլլսախ։
Ու պառդավ քնավ։
Բևրևցին, ինչ օր բանք էր, պաղրաստևցին,
Էդավ արևվ պադավ, էդավ.
— .Յելի՛, .յելի՛,—ըսավ,—սուտխոսա՛ն, .յելի՛,
Ըսնանք յո՞ւր բդի տանիս մըդի, յելի՛։
.Յելավ, .յընգավ .յառնջ ուրանց, էդավ։
Էսդին, էնդին՝ Քևոին դաղրևր է, դուզն դառնա,
Քևոու ձևո խայիմ բանևց,
Չէ՛, գաշելով էդավ, դդավ։
Էդավ մդարևն դդավ, բացին տևսան, օր հասած՛ա,
Ինչպես օր կըսե՝ լիքն է։
Բևրևցին շորից, օսկուց լցևցին բառասուն էլ, շալկևցին։
Էրինջ դրուզ էր պղնձի մեջ,

Բերից փեղ մի էդգից էդ պղնձի կանթեր, բսավ.
— Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Ես իմ քյաբբըցուն չեմ Քողի հոս։
Առավ պղինձ էլ էգավ։

23. Էգան, էգան, .յառավոդ՝ մեզ էղավ պաղաշար,
Մեզ էղավ ծածկող, մեզ էղավ չամուռ էրող։
Բսավ.—Քա՛ր վըր քարին, սո՛ւն վըր սան,
Էրեցին Սասուն։
Էղավ Սասո՛ւն։
Ու ուրանը մանցին էդտեղ, աբրան։

24. Դավիթ կէրտա, նեճրուիչուն կէնե։
Բայց Մսրա Մելիքին բդնց սայման Ովասար կա.
Բաղան քաշուդ է, մեջ ծառեր,
Ու ինչքան օր ջին-ջանավար կա՝
Ըդնր մեջ կա։
Օր գիկա ամառ, բդեղ գիկան սեյրան էնելու։
Քեռին բսավ.—Դավի՛թ,—բսավ,—
Ախվախլը, արեվմուդք, հարաֆ կէրտաս,
Հուսիս չէրտաս։
— .Յընչի՞, Քեռի՛,—բսավ։
Բսավ.—Հուսիս կողշով բոլոչ կա,
Հեռվանց,—բսավ,—մարդու գը կլու։
— է,—բսավ,—Քեռի՛,—չը՛մ էրտա։

.Յելավ, նեճրուիչուն կէնե։
Օր մի, բան չընգավ ձեռ, գառավ գերի Հուսիս։
Գնաց տեսավ, օր տղն մի
Գմեշ կանգըցեր է ջրի վրեն, գըլվա։
— Տղա՛,—բսավ,—հեռո՛ւ գնա,
Էդ կողշով բոլոչ մգա ընձի գըկլու։
— Ի՛մկընի,—բսավ,—Սասման ծո՛ւռ,
Ես՝ էրեխա, ընձի չըկլու...
— Գնա դե՛ն,—բսավ,—Քեռին բսեր է, ընձի գըկլու,
Մգա գըզարդիմ։
Տղեն օր տեսավ՝ հնար չէղնի,
Ջրկըրնա խոսք հասկըցու,

.Յօդ դրեց գրմշու կողշին, .յելավ հեձավ։
Մդաձեց. «Ա՛յ մարդ, էդ էրեխեն օր չըկլու,
Ընձի .յրնչի՞ գրկլու»։
Էգավ ըսավ.—Էս ի՞նչ է։
— Ի՛մկրնի Սասման ծո՛ւռ, հըլը՛ գնա Մշու դաշտ,
Տե՛ս,—ըսավ,—յոթ լուձ գրմհշ գրլձին,
Գութան կէնին, վար կէնին։
Ըրը ըսավ.—Էս ի՞նչ է՝ էնգեղ կերեվա։
— Հաստա՛տ օր,—ըսավ,—Սասման ծուռ խս,
Էդի՛,—ըսավ,—Մսրա Մելիքի Մովսասրն է։
— Տո՛ խմա՞լ՝ Մսրա Մելիքի Մովսասր։
— Ըրը, էդի Մսրա Մելիքի Մովսասրն է։
— Տո՛,—ըսավ,—րու հե՛րն էլ անիձիմ,
Մսրա Մելիքի՛ն էլ.
Էգեր է, իմ .յախպին էրեր է ուրին Մովսասր։

Գնաց մդավ, մե դիուց բանդեց բադան,
Մդավ տեսավ, օր ինչքան ջին ու ջանավար կա՝ կա մեջ։
Ուր նեձիր էրեց, պադ մե դիուց քանդեց։
— Գացե՛ք, իմ հոր խերուն,—ըսավ,—
Ձըզի համար ազադ ապրեք։
.Յելավ, էլի էդ քարեր դրեց .յիրար վրա.
Դրեց փիջին, էդավ։

Էգավ՝ .յուշացավ։
Քևռին տեսավ, օր Մովսասրու Քարաֆին գիկա.
— Տղա՛,—ըսավ,—էդ .յուրդի՞ց է...
— Քևռի՛,—ըսավ,—հրմալ ՚տեխ միմ՝ գդի,
Օր քաուսուն տարի կըրիմ,—ըսավ,—չը խըլըսի։
— Ա՛յ տղա,—ըսավ,—էդի Մսրա Մելիքի Մովսասրն է։
— Հը՛մ, Մսրա Մելիքի Մովսասր...
Մսրա Մելիքի հե՛րն իմ անիձի,
Իմ .յախպին Մսրա Մելիքին .յրնչի՞ ըդի էդնի Մովսասր։
Էգավ, վերջ համոզեց, թե.
— Ա՛յ տղա, գիկա, թակավո՛ր է, մըզի գրկդրե։
Շադ օր խոսաց.
— Քևռի՛,—ըսավ,—էլ չեմ էրտա։
Քևռու միտքն էլ էն է, օր .յառավոդ էրտա,

Էդ էրգու-իրեք քար դնեմ .իրար վրա,
Ու էդպես էլ .լընցնեմ էրեսս։

Օր քնան ըդնեք, Դավիթ՝ օր Դավիթ իս,
Գողեգող .յելավ, ուր չարներ գողցավ,
Էգիպաց .յողնեքն ու դնաց։
Գնաց քանդեց, մեկ դնեն քանդեց, քաշեց,
Ջանավարներս փախան.
Քանդեց ծառներ, բիրտդի քաշեց գուրս,
Ու բեռի՝ էլ կորեզ էր շալդի տարի հեզ,
Սկսեց կորեզ ցանել։

Քեռին .յառավոդ .յելավ տեսավ՝ օր Դավիթ չկա։
— Յա՛, ու՛,—բսավ,—էդ .յո՞ւր է ծուռ։
Ըբը բսավ.—Գացեր է Մովսասար։
.Յելավ էգավ։ Էգավ տեսավ օր՝ քանդեր է,
Դավիթի ավեր է դառուցի,
.Յիսառդ բադան-մադան քանդեր է։
— Տա՛,—բսավ,—Ըր՛խ էրտան բսին՝
Ընդոր քուր կղրեն ըդ իմ ջե՛ղ։
Մարքեց ուրին .յարա, կորեզ ցանեց։
Քեռին տեսավ, օր Դավիթի ավեր էրեր ը,
Դառան էգան։

25. Խաբար դնաց Մսրա Մելիքին, թե՝
Քու Մովսասար քանդած է, Դավիթն է։
— Է՛յ գիդի,—բսավ,—ես էն վախտ բսեցի,
Օր ըդրա ջինս խալը ը։
.Յելավ մարդիկ խրդեց, բսավ.
— Գնացե՛ք,—բսավ,—տեսեք՝ ի՞նչ է էղի,
Ու մեր յոթ տարվա խարջն էլ,—բսավ,—առե՛ք։
Դավիթի գլուխ, Մանուկի բեվ, Արմաղան՝
Կրբեքիք մըդի։
.Յելան էգան։

26. Էդից մարդիկն օր էգան, բդի դան խարջի,
Մեկ կնիգ մի էգեր էր ջրի.
Տեսավ օր էգան, բսավ.

— Էդ .յո՞ւր էգաք բըց շուն վազան,
Էդ .յո՞ւր կէրտաք բըց գել գազան։

Ըսավ.

— Քաքի՛դ, քաքի՛դ քաքի՛դ պաբէ՛ր,
Մդե՛ք տներ՝ էրե՛ք դիվան,
Նսաե՛ր դիվան՝ էրե՛ր շիվան.
Կէրտանք Սասուն սա ու բայան,
Ջղալ ձգներ բնրինք լձան,
Կեռիպ կովեր բնրինք կբան,
Կարջ կնգրտիք՝ .յերգանք ազան,
.Յերգեն կնգրտիք՝ բաշի համար էրտան-.յիգան։
Դավիթի գլուխ, Մանուկի աչ բազուգ, Արմազան՝
Տանինք Մսրա Մելիքին՝ հոլ խազան։

Ըսավ.

— Քաքի՛մ ձըր պարուն, Թը՛ տան, Թը՛ տան։

27. .Յելան էգան։
Էգան, Քեռի Թորոսին կանչկին, բերցին, ըսին.
— Մենք,—բսավ,—էգեր ենք՝
Քառասուն տարվա խարչ բդի՛ տար։
— Քեռի՛,—բսավ,—ի՞նչ խարչ.
Ուրանք Մսրը, մենք Սասուն,
Ի՞նչ խարչ տանք բդնց։
Քեռին ինչ էրեց-չէրեց՝ չէզավ։
Էդ օր կէրուխում .յուզեցին։
Քեռին բսավ.—Իդը խմցուենք,
Բըլթեմսի համոզինք, ճամպու դնինք, էրտա։
Կէրտանք էնտեխ ծառեր կբանդինք,
Մե սաից բան մի կէնինք։
Բևրեցին, էդ յոթ կանքնեն պղինձն, օր բևրեր էր մաղարից,
Լցեցին գինին, դրեցին մեչ, ախսեցին խմել։
— Քեռի՛,—բսավ,—Թուլ կիդա՞ս,—բսավ,—
Էս պղինձ գինին,—բսավ,—
Իմ հոր հոգեհանգստութեյան համար խմիմ։

Ըսավ.—Համե՛, Դավի՛թ ջան։
Վերուց, դրնց բերնին, .յի՛ստակ էդ պինին խմեց.
Դավիթ էդավ շող-շողագան,
Սմրուլ-գդագան՝ .յընդավ։

Ըզիք էդան։ էդան, խարչ գուզին, շագ խոտացին,
Մեզ էլ .յիմցավ. .յիմցավ .յիւլավ տնասվ.
— Էս ի՞նչ բան է։
Մամ բսավ ինձ.—էգաձ է՝ խարչ գուզին,
Ասավա՛ծ բու արևվ ըսպանեն,
Գացիր Ծովասար լե քանդնցիր,
Մգա էգաձ է,—բսավ,—խարչ գուզին։
.Յելավ էդավ, էլ չաշնց.
Որին՝ .յագուն քաշնց, զարգնց ճադատ,
Որին՝ .յանկ հաննց,
Որին՝ .յանգաչ կդրնց,
Տասերգուսն էլ՝ յուզի-գոզի, բելխարզ էրնց։
Ըսավ.—Գնացե՛ք, ձեր թակավորին ըսեք՝
Թը՛զ ընդրա Թուր կդրե իմ ձի՛ու
.Յելան գնացին։

28. Գնացին։ Որ ժամանագն օր գացին,
էդ կնիգն, օր ջրի էր գացի,
էլի պադահավ.

— Հա՛, էդ .յո՞ւր գացիք բըց գել-գալան,
էդ յո՞ւր դառաք բըց շուն-վազան։

Ըսավ.

— Քաքո՛ղ, քաքո՛ղ, քաքո՛ղ պարե՛ր,
Մդե՛ր աներ՝ էրե՛ր դիվան,
Նատեր դիվան՝ էրե՛ր շիվան։
Գացինք Սասուն առ ու Թալան,
Գիցանք՝ Սասումա տնեղ գուղ ու մկդան,
Զգիցանք՝ Սասումա տնեղ բար ու կապան,
Մնջ մարդ կա, զըզարգե, բրին զբրանա՝ խաչ-պադուհան։
Դավիթի ճուշ ու պլիր՝ գարնան հեղղին,
Գան, ձրգի .յերգանք աղան։

— Դե՛, — ըսավ, — բաքի՛մ ձըր պարուն, իմալ օր տեսաք,
Գացե՛ք, ձըր թակավորին հըմալ էլ պադմե՛ք։
Յելան գնացին։

29. Գացին հասան Մսըր։
Թակավոր տեսավ օր՝ բիրադի յուղի...
Պադմեց, ըսավ.
— Դավիթն, — ըսավ, — մեզի էս օրին բցեց...
Ըսավ. — Ես էն օր պիտիներ,
Օր Դավիթ մեր պլուխ էս պրհաներ։

Ըսավ.

— Թղթի՛գ մի գրիմ արնես-մանս՝ խրդիմ Հայաստային,
Թղթի՛գ մի գրիմ արնես-մանս՝ խրդիմ Հուսիասային,
Թղթի՛գ մի գրիմ արնես-մանս՝ խրդիմ արևվլյան,
Թղթի՛գ մի գրիմ արնես-մանս՝ խրդիմ արևմդյան.
Թող գա՛ն իմ Բագլի բեգե՛ր,
Խաչ պարոննե՛ր,
Սագոի պլխնե՛ր,
Թիյոդ լեզվե՛ր,
Բայ յագոե՛ր՝
Սաֆա՛ր է վրը դյավուրին օր՝ սաֆա՛ր է։

Մսրա Մելիք կազմեց զորք,
Ու էլ հողի՛ն, թփի՛ն հաշիվ կա՝
Ըզնր զորքին չկա,
Հավաքեցին ու էզան.
Դհոլ-զուռնան էցկեցին յառաջ,
Զարդելով էզան Սասուն։

30. Էգավ։ Խաբար տարան Քևռի Թորոսին, թե՝
— Մսրա Մելիք՝ բար ու փեդ, հող զաևր է զորք, էգավ։
— Է՛, — ըսավ, — ի՞նչ էնիներ։
Բևռեցին էլի խմցուցին Դավիթին,
Էրեցին շող-շողագան,
Սմբուլ-զդագան, բյալլին պագուցին,
Ուրանը յելան հեսունին հոդով
Ուրանց տըմբլիգ ծեծեցին,

Գացին ուրանց չադըր զարգեցին,
Զորքի դեմ կայնան։

31. Արմաղան նստավ լաց։
Լաց, արցունք թափավ Դավիթի .յերեսին,
.Յիմցավ, .յելավ.
— Մարե՛,—ըսավ,—.յօրի՞ գիլաս, .յօրի՞...
Ըսավ.—Աստվա՛ծ վերու բրգի, .յօրի գիլամ՝
Ընդէր Սովասար թանդեցիր,
Բիրադի յուգի-դյոգի բելյիսրդ էրիր, խրդեցիր,
Առած ը հարին զորքով, էգած ը։
Մգա էն հալիվորուն հոն կրսպանին,
Գիկան հոս էլ՝ իմ գլուխ ու բում կդրին։
— Մարե՛, ըրը ի՞նչ էնինք։
— Ես ի՞նչ գինամ՝ ինչ էնիս։
— Մարե՛,—ըսավ,—.յելի՛, սաջ դի՛ր,
Բիր փուդ մի ադանձ էրե՛,
Տո՛ւ, ես ուդիմ՝ բըլթի մեռնիմ։
.Յելավ բերեց սաջ, դրեց կրագ, գնաց ձավրի։
— Մարե՛,—ըսավ,—ես բդրնև իրեք փուդ էլ ուդիմ՝
Ջրմ մեռնի։
— Ըրը ի՞նչ, տղա՛։
— Ինա նուգանից քարեր բի՛ր, թա՛լ մեջ, թը՛ղ կարմրի,
Ես իմ բերան կրբանամ, դու թա՛լ իմ բերան։
Կնիգ էր՝ համոզվավ։
Բերեց էրդու հադ քար, թալեց սաջի մեջ, կարմրավ.
— Դե՛, արի,—ըսավ,—ի՞նչ էնիմ։
Էգավ ըսավ.
— Ես իմ բերան կրբանամ, դու վերո՛ւ, թա՛լ։
— Ինչո՞վ վերումե։
Ըսավ.—Շորո՛վ, ինչով։
Էն օր շոր վերուց,
Բանից մամու ձեռներ, քամեց քարի վրեն.
— Մարե՛,—ըսավ,—իմ հոր ի՞նչ կա։
— Աստվա՛ծ վերու բրգի,—ըսավ,—ի՛ր, ըսիմ։
Թողեց։ Ըսավ.
— Քու հոր կա ձի մի,
Գուրգ, գլխու թաս, զրրխ, թուր։

Ըսավ.—.Յո՞ւր է։
Տարան, ցույց տվեցին։

32. Գնաց տեսավ օր՝ Քուռդի Ջալադ.
Քաշեց, լավ մի .չելավ թիմբեց,
Բևրեց զրբխեն ու թուրըն, հակավ զրբխըն՝
Ինչ օր մուդ պադի կարաս։
— Մարե՛,—ըսավ,—բամբադ բի՛ր։
Բևրեց մարենը բամբադ,
Զրբխի մեջ, թասի մեջ լցնեց, հարմարցուց, .չելավ.
— Մարե՛,—ըսավ,—իմ հոր ձիուն ի՞նչ շնորք կա։
— Լաո՛,—ըսավ,—քու հոր ձիու մարիֆաթ՝
Օր ճամբաես չըգիցար, թողես դիզդին ուր ըզին,
.Յինք կէրտա։
Որ կ՚ողմն օր գնաց, դիզդին ըզի չըդառուա։
Հևձավ ձին ու կանչեց ուր աստված, գնաց։

33. Գնաց, չըգինա՝ .յուր կէրտա։
Զի .յուր է տեսի,
Թոփալ անջախ կըռներ քելեր,
Քուռդի Ջալադի պես ձի է հեձի։
Զին թողեց ուրին, ձին գնաց։
Գնաց, լիջավ, տեսավ օր՝ մե բանըշ՚ր տեխ մ՚է։
Աշեց, օր մոմ, բան է վառած.
— Բա՛նըր Մարաթուխ Աստվածաձի՛ն,—ըսավ,—մեռնի՛մ
բըզի։
.Յիջավ էդտեխ, աղոթք էրեց ու քուն տարավ.
Քնավ։ Քնավ, մեզ էլ էրած տեսավ.
«Դավի՛թ,—ըսավ,—.չելի՛,
Քու .յուխտըդ ընդունելի էղավ,—ըսավ,—.չելի՛,
Սուրբ Նշան գլխուդ տագն է,
Համբուրե՛, դի՛ ծնցդ,
Հևձի՛ Քուռդի Ջալադ, .յիջի՛ ձոր՝ դուշմընի մեջ.
Քու թուրը դուշմընին կրջարդն,
Ու դուշմընի թուրը բրդի գիր չենե։
.Յելավ տեսավ օր՝ լցվեր է,
Էդ է, գլուխն էլ տրաքի, սիմեր է զրբխ ջանն։
Քանդեց հանեց բամբադ, բիրադի թափեց։

— Մեռնի՛մ քըզի,—ըսավ,—Բա՛նձըր Թուխ Աստվածածի՛ն,
Իդաք լև քըզի,—ըսավ,—ճրաքի պագրո՛ւր։
.Յեկավ հնձավ ձին, գնաց։

34. Գնաց, տեսավ օր՝ ի՛նչ տեսնի.
Քեսին մե դաշի հեզ պարդեր է ուր Էսեսունին չաղըրն,
Ու էնդեն էլ զորքին հա՛դ ու հաշիվ չկա,
Լցված է...
«Ի՞նչ էնիմ, էրտամ դեբի Քեսի Թորո՛ս,
Բզի բզո՛ր ըսին՝
էնդո՛ր ի՞նչ էրեցին, դու ինչ բզի էնիս.
Է՛, թե էրտամ դեբի Մսրա Մելի՛ք,
Քեսին բզի ըսե՝
վախեցավ, չազի կո՛զմ գնաց։
Ըսավ.—Թողիմ ձիու ումուդին, .յուր գնաց՝ գնաց»։
Թողից ձիու ումուդին,
Ձին քշո՛ց գնաց բզո՛ր թաբաֆ։
— Է՛յ,—ըսավ,—.յո՞ւր է Մսրա Մելիքի չաղըր։
— Իմկրնի Սասման ծո՛ւռ,—ըսավ,—չո՞ս տեսնի,
էն, օր, է՛, խնձո՛ր չաղրի ձորին կա։
Քշից գնաց.—Բա՛րև ձեզ։
— Բա՛րև։
Ըսավ.—Լուսուն,—ըսավ,—վըր դյավուրին սաֆա՞ր է։
Ըսավ.—Սաֆա՛ր է։
— Եթե սաֆար է,—ըսավ,—ընձի մոդ չաղըր տո՛ւր,
Իմ ձիուն՝ ե՛մ, ընձի էլ՝ կերագո՛ւր։
Դառավ ըսավ.—Հա՛ցն ու դինին, Տե՛ր կենդանին,
Մեր տան մարդ իրևը դիր բզի փորձև ուր դուշմընին։
Մեզ էլ դարձավ.—Մելիք աղա՛,—ըսավ,—
.Յեզուց մայամ-մայամ գյավուրի վրեն սաֆա՞ր է։
Ըսավ.—Սաֆա՛ր է։
— Ընձի մոդ չաղըր,
Իմ ձիուն՝ ե՛մ, ընձի՝ կերագո՛ւր։
Մեզ էլ դառավ.—Մելիք աղա՛,—ըսավ,—
.Յէզուց մայամ-մայամ սաֆա՞ր է։
Ըսավ.—Սաֆա՛ր է։
— Դե՛, ընձի մոդ չաղըր տո՛ւ,



Իմ ձիուն՝ ե՛մ, ընձի էլ՝ կերազո՛ւր։
Բերին չազըր տվեցին, դնաց պատռավ։

35. Աղոթքան չըր բացվեր է, .յելավ։
Յելավ բռաց.

— *Ով քուն է՝ զարթնցե՛ք,*
Ով զարթուն է՝ ձիան քամբնցե՛ք,
Չավրի՛ք անուն կտրըճի։

Իրնք դիր բռաց ու յելավ հնձավ ձին։
.Յելավ հնձավ ձին,
Քևռի Թորոս էնդիուց ուր սըմբլիզ ոտնց ու .յընգավ մեջ։
Սկսավ չարտևլ։

Ըսավ.—Քուռկի՛կ, դու վազա՛, Քուռկի՛կ,
Բրի՛կ, դու կզրե՛, Բրիկ՛։

Աջու կըծորև, ձախու կըծորիըրին,
Ծա՛ր գլուխ գևլներ։
Քառասունուհինգ մանուգ օնպա գլկանգրցներ,
Արևն հևղևղ գևլներ, նուգանից բարնը կըգլորներ։
Իրնք անգամ էնդիուց գնաց էնդին, էգավ,
էգան, .յինր ու Քևռի Թորոս առան .յիրար։
Զարգին, էգան հասան .յիրար,
էգան հասան .յիրար, չըճանչըցան .յիրար.
— Հա՛,—ըսավ,—աղա՛, բու դո՞րն է, Քե՝ իմ դո՞ր։
— Չէ՛,—ըսավ,—Հա՛ցն ու դինին, Տե՛ր կենդանին,
Մեր տան մարդ ուր դոր մարդու չըտվեր է։
— Դե՛ լավ,—ըսավ։
Գուրզ քալեց։ Գուրզ օր քալեց,
Քևռին բռշաքմիշ էրեց, ուրին քալեց ձիու տագ։
Գուրզը շան պես օռնաց,
Գուքնի պես պռռեց, գնաց։
Թռավ .յելավ Քևռին.
— Հա՛ն, աղա՛,—ըսավ,—իմ դո՞րն է։
— Քցի՛ր,—ըսավ։
Չարգնց։ Օր զարգնց, այար բռշաքմիշ էրեց՝ չրկըռցավ։

.Յօտու Թշից մև կողմե վէրկից, պադռից, առավ գնաց։
— Հա՛, տղա՛,—ըսավ,—իմ Թուր քարեր կըծագեր,
Քըվի բան չէրե՞ց։
Քու հեբա-հերանին ըսե՛,
Քու մերա-մերանին ըսե՛։
Իմ Թուր աբառաժ քարեր կըծագեր,
Քըվի պէր չէրե՞ց...
Ըսավ.—Իմ հեբա-հերանին Թորո՞ան է,
Իմ մերա-մերանին էլ Արմադա՛ն է։
— Վա՛յ,—ըսավ,—Դավի՛թ ջան, դու ի՞ս։
— Քեռի՛, դու ի՞ս։
— Հա՛։
.Յիջան։ Ըսավ։
— Ի՞նչ է էղե,—ըսավ,—խս բան չի՞ էղե։
— Չէ՛,—ըսավ,—ինչ օր լու մի խաձեր։
.Յիջան տեսան օր՝ ի՞նչ լու, պոռթի գացեր է...
Ինչքան օր փալան ու ձիու փէթեր կար՝ լցկին,
Հավիվ կացան լցին, կարնցին։
Էդտեխից էլ վերցրեցին ինչքան ավար բերեցին Սասուն՝
Էն էլ ուրանք պինան։
Դավիթ պրծավ։
Իրեն համար կէրտեր, կըպղըդեր ձիով։

36. Խաբար գնաց Կաղզվան։
Էդտեխ Վաչո-Մաչո կային.
Ըզնց մե խանդութ անվէր տխմիզ կար,
Պարսկաստանի շայի տղի հետ նշանուց էր.
Լսեր էր Դավիթի ձեն։
Ըզնր էլ՝ նստած է .յօդին տաս-տասնմեկ հոգի,
Գրխմին ըզնր կենաց, թե՝
Բըլբիմսի մեկն ու մեկին հավնի։
Մեզիմ լի չըհավնավ։
Կանչեց մեր Մարդիրոսի պես* մե աշըղ մի.
— Աբի՛,—ըսավ,—ի՞նչ տամ, օր դու էրտաս Սասուն,
Ընձի գովաս։
Ըսավ.—Ի՞նչ գովամ։

* Վիպասացի համապատասխան նվագող երգիչ։

— Աշը՛ղ իս,—ըսավ,—չըս պինա՞,
Քու տունը քանդվի՛,—ըսավ,—էրտաս, դուվաս ընձի։
Ըսավ.—Չէ՛։
Ըսավ.—Քըղի ինչ օր կառնիս՝ մեղին յոթ կիդամ,
Կէրտաս Սասուն, կըսիս.

—Իմ խանդուղի բոյն՝ ինչ օր ծառն ի չինարին,
Իմ խանդուղ՝ ինչ օր խնձոր ծերն ի ծառին,
Իմ խանդուղ՝ ինչ օր բամբակ գլիս ու դիզիս։

Մև յոթ դիր ուվեց ըսել՝ սուվրավ։
.Յելավ Քոփալ էշ մի հնձավ
Ու էդավ գնաց Սասուն։

37. Գնաց Սասուն։ Գնաց, ուրանք շաղըցած է.
Օր մըդավ գնի մեջ, Քևոր Թորոս նստուդ էր բինադպաշի վրևն.

Բարևվ ուվեց, բարևվ առավ։
Սաղ կար մոդըն,
Սասունա էրեխեն, բացի սազի՛ց, մա՛րդ չըտեսեր է,
Է՛շ՝ մարդ հնձուդ,
Էրեխեք՝ մեզ կըբդեն, մեզ կըբաշեն։
Քևրին տեսավ, օր բոլի էդ է՝ խախտրլդան,
.Յելավ գնաց, էրեխեստանուն դևն բշեց, բերեց.
— Ի՞նչ մարդ իս։
Ըսավ.—Ա՛շըղ իմ։
— Դե՛,—ըսավ,—ա՛շըղ չա՛ն, օր աշըղ իս,
Կդիր մի,—ըսավ,—սազ դա՛րդ,
Բը՛խ էդ էրեխեք քըղնից հևսևնան, չտես ինն։
Բևրեց սազ. մեր Մևլոյի .Յակոբի* պես,
Մև քանիմ՝ դիր օր չալեց, սկսեց.

Իմ խանդուղի բոյ՝ ինչ օր ծառն ի չինարի,
Իմ խանդուղ՝ ինչ օր խնձոր ծերն ի ծառին,
Իմ խանդուղ՝ ինչ օր բամբակ գլիս ու դիզիս»։

* Վիպասացի համագյուղացի խաստուրցի նշանավոր երգահան-աշուղ, որը Ս. Աբաջյանի վկայությամբ, գնացել է Կ. Պոլիս, մրցել տեղի հայտնի աշուղների հետ և հաղթել։ Տաճ. բանահավաքների։

— Տղա՛, — բսավ, — զարդե՛ր,
էղեր է, խարե, տղին պրատներ։
Լա՛վ մե ջառուեցին,
Բևրեցին կաբեցին իշու վրեն ու դառուցին,
էշ գնաց։

38. Էզավ ճամպու հեդ։
«Ա՛յ մարդ, — իրեն, իրեն մդածեց, — ես ի՞նչ բսեցի.
Ես բսի.

Իմ խանդուղի բոյ՝ ինչ օր ծառն ի չինարի,
Իմ խանդուղ՝ ինչ օր խնձոր ծերն ի ծառին,
Իմ խանդուղ՝ ինչ օր բամբակ գլիս ու գիպիաս։

Դավիթ լեղնվեն լսեց.
— Հա՛, — բսավ, — կայնի՛, աշո՛ւղ։
Բսավ. — Իմկրնի մաման ծո՛ւս, — բսավ, —
Գացի ձըր գեղ, ընձի բսպանեցին,
Ու լե բղի հիմա քաշիս գլուխս կգբիս։
Բսավ. — Յքնչի՞։ Իդ ի՞նչ բան է։
Բսավ. — Ես աշըղ իմ։
— Ըբը, — բսավ, — բղդի ինչի՞ ծեձին։
Բսավ, — Գացի բնտեխ խաղ բսի։
— Հըլը՛, էդ խաղ, — բսավ, — ես էլ...
— Չէ՛, — բսավ, — չըմ բսի՛, ընձի կըսպանիս։
— Չէ՛, — բսավ, — ես չե՛մ բսպանի,
Աղսիր գինամ, աղսիր կէնիմ,
Իգա բու վիզ լե շիդգի։
Յինքն էլ տեսավ, օր պադմածից ու բոբշից՝ Դավիթն է,
Դավիթն էլ քաշից վիզ շիդգեց,
Սկսեց. սկսեց գուլալ։
— Լա՛վ, — բսավ, — դու քանի՞ օր կէբտաս։
Բսավ. — Յոթ օր կէբտամ։
— Ո՛ր օր գացիր, կըսիս,
Օր էդ օր ես ուր խոնախն իմ։
Աշըղին ճամպու դրեց, գնաց։

39. .Յինք պղըդավ, խոսք տված օրը .յառավոտ .յևլավ,
Իմմըրնց Քուռկի Ջալադ, կերցուց,
Հակավ ու .յևլավ հեձավ։
Հեձավ, էդավ .յիջավ Մշու դաշտ։
.Յիջավ Մշու դաշտ, տեսավ օր՝
Ամառ ը, յոթ լուծ գմեշ լծած ը գութան,
Վա՜ր կէնին։
Գնաց հասավ, բսեց.—Բարե՛վ ձեզ։
— Աստ՛ւ բարին։
Ըսավ.—Էս ի՞նչ կէնիք։
— Վա՜ր կէնինք, գութա՜ն կէնինք, հերկ կէնինք։
— Տո՛, —ըսավ,—էս է. ա՛յ մարդ, յոթ լուծ անջա՞ղ։
Ըսավ.—Մդա բդի բսիս. քե ես էլ բաշխո՛մ։
Ըսավ.—Հարձրդի՛ք,—բսավ,—ես բաշխո՛մ։
Հարձրդնցին գամշրդան, է՛. պիշխրնա՞ն չըհարձրդին։
Բերնց լուծ վերուց, դրնց այարի մոդ, .յոդնեցուն
Ու ձիուն քոզնց։
Քաշնց մե փաթ մի, մե հոդաղ.
— Հա՛, —ըսավ,—Քուռկի Ջալադ բաշե,
.Յինք պինա, քե ուր շնորբն է։
Վերցուց ձին քոզնց, կանդրցուց.
Բռննց բնադից ու սկսնց քաշել։
Քաշնց, օր բռնավ՝ հերսոդավ,
Հերս .յևլավ, բռննց օլրնց, քաշնց...
Ագա դեռ բնդոր սաժու կդորդանք .յերկրնքուց դիկա։

40. Քշնց, գնաց, հասավ Կաղզվան։
Գնաց Կաղզվան, խանդուդ բադնի վրեն կըսդրդնը։
Գնաց.—Դոբդի՛կ դոբնսա՜հ,—ըսավ,—արի՛, ձես բաշե՛։
Զին բաշնցին տարան։

Գնաց տեսավ, օր տաս-տասնմեկ հոգի նստած է. գրխմին
Ըդոր օր Դավիթին տեսան.
— Է՛, —ըսին,—խանդուդ բդոր տեսավ,
Մըդի .յընչի՞ կառնե։
Մեկ-մեկի խդելով, .յևլան դուս, խորուրտ էրին.
— Արե՛ր,—ըսավ,—Դավիթին բսպանինք,
Որես օր առավ, քոզ մեկնիներ լե էդնին հարսնավոր։

Խորտրտ էրին, էգան, նստան։
էն տասը տվեցին Դավիթին, տասը տվեց ըզից.
Դավիթին խմցուցին։
էն ժամանադն օր կըկզեր,
Տասն էլ Քրեր կըքաշեն,
Օր կըշիդզեր՝ քշեն թագըներու տագ։

41. Քեռի Թորոս տեսավ՝ չէգավ, յուշացավ։
Իրմ Քալեց, քաշեց Քուր.
— Ախաֆ՛,—ըսավ,—իմ Վանցօղնեն Լազին քաշո՛ր,
Տղեն նեղության մեջ է։
էդ բոպատօղլին ըտաստ է էգի, խասկ, տարեր է։
Քաշնցին Վանցօղնեն Լազին, հնձավ, էգավ։

էգավ, գիշեր է, հասավ Կաղզվան։
Դուռ զարգնց՝ Գորգիկ դռնպահ քնուգ է.
— Գորգի՛կ դռնպահ,—ըսավ,—դո՛ւռ բաց,
Գորգի՛կ դռնպահ, դո՛ւռ բաց,
Գորգի՛կ դռնպահ, դո՛ւռ բաց.
Երրորդին նայր յիմցավ։
— Ասսո՛ւ բարին, ասսո՛ւ բարին, ասսո՛ւ բարին,
Քեռի՛ Թորոս։
Ըսավ.—Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Իրեք գիր իմ ասսու անուն չիդեր՝
Գլուխի կըկդրենք։
Ըսավ,—Դավիթ յո՞ւր է։
Ըսավ.—Տիա՛, էս յօդեն կըխմին։
էգավ, դուռ բացնց, տեսավ օր՝ ի՞նչ տեսնի.
Որ ժամանադն օր կըկզի՝
Տասն էլ Քրեր կըքաշեն.
Որ ժամանադն օր կըշիդզի՝
Տասն էլ Քրեր կըդնեն կուլբի տագ։
Աշնց, մեզ էլ՝ կգած վախտ, օր կգավ.
Մե չըբուխ մի բոյեն քաշնց,
Շաբուխտե մե օր զարգնց.
— Քեռի՛,—ըսավ։
— Իմկընի Սասման ծո՛ւռ,—ըսավ,—
Նստեր իս դու դուշմընններու մեջ, կերուխում կենի՞ս։

— Տո իմա՞լ դուշման...
Ըսավ.—Հըլա թաղքներ վերցո՛ւ։
Ըսավ.—Կռնադդի տո՛ւ դռան։
Կռնագ տվեց դռան, թաղքներ վերցին,
Տեսավ օր՝ ամեգու մեջ՝ մե թուր մի։
Բռնեց, տասի գլուխ էլ կդրեց
Ու փանջարից թալեց էդ վերևվն, օր խանդուդ կաբրեր,
Ու բերեց թրերն էլ բամեց .յիրար, կոդրեց։
— Քեռի՛ ջան, դե՛,—ըսավ,—լի՛ց մեր խուրջին,
Տանինք, մեր տեխ բարիա է,
Կէնինք մեր ձիանուն նալ ու մը՛խ։

42. .Յառավոդ լուսցավ։ Գորգիկ դռնպահին ըսավ.
— Գնա՛,—ըսավ,—կանչե՛ Վաշոյ-Մաշոյին՝ Քը՛խ դռան։
Էգան։
— Իմ հարսի,—ըսավ,—.յոդ ու ձեռ տեսե՛ք,
Ես կըտանիմ։
— Քեռի՛ Թորո՛ս,—ըսավ,—քու գլխո՛ւն ու արեվուն մեռնիմ,
Ա՛խըր էդի նշանու է շայի տղի հեդ,
Տարար՝ մեր երդիր գըբանդին, կավըրին։
— Ըրը ի՞նչ էնինք։
— Ես ի՞նչ գինամ, դո՛ւ գինաս։
— Տղա՛,—ըսավ,—էրտանք, կավի՛նք։
— Էրտա՛նք, Քեռի՛։
Բդի էրթեն.—Ա՛յ մարդ,—ըսավ,—
Ես բդիր ախճիգն առանց տեսնելու...
Կարելի է՝ Թոփալ է, բոռ է, բաշալ է,
Ես էրտամ բդիր համար մեռնի՞մ։
Ըսավ.—Կանչե՛ք, էդ ախճիգ Քը՛խ գա,
Հըլը՛ ես տեսնամ։

Դավիթն օր լսեց՝ ախճիգ բդի կանչին,
Գնաց, դողու պես մդավ մե տեխ, տապավ։
Ախճիգ էգավ։ Ախճիգն օր էգավ,
Ձեռ թալեց ախճգա վիզ, մեզըմ պաքեց.
Ըսավ.—Քու ճամպո՛ւ խաթըրն է։
Մենգ էլ պաքեց.
Ըսավ.—Էս էլ քո՛ւ խաթըր։

Մեկ էլ պաքեց.
Ըսավ.—Քու ասսո՛ւ խաթըր
Մեկմ՛ էլ օր պաքեց.
Ըսավ.—Ի՛նչ լրբութիւն կէնիս
Չեո քարդեց դոշ, զա՛րդեց պադին։
Օր զարդեց՝ պլուխ առավ պադին,
Դավիթի բթեն-բերնեն արուն թալեց։
Վազավ .յոդնվեն՝ ախճիդ ուրին թալեց Քեռու բոլ։
Թալեց Քեռու բոլ.
— Հա՛ցն ու պինին, Տե՛ր կենդանին,
Քրկի գուրգ մի կըթալիմ,
Դու բնձի իմ Քեռու .յառնչ հրմլա խայտառակ էնի՛ս։
Էգան նստան։ Տեսավ ախճդան։
Բերեցին իրեք հազ իշու փալան գնդրեցին րիթ,
Տարան Արագի վրեն լն լվացին,
Արագու կես՝ ջուրն արուն էղավ,
Հազիվ կըրցան բդիր արունը կդրեցին։
Արուն կդրեցին, մնաց մյուս օր,
.Յելան հնձան Քեռի ու եգիտն, գացին։

43. Գացին։ Գացին դերի Պարսկաստան։
Խարար տվին շալին, թե՝
Քու հարսին զառավ էգած, կրատնին,
Էգած է, քու հեղ բդի կովին։
Շայ ինչբան զորք խրդեց՝ չարտեցին,
Ինչբան խրդեցին՝ չարտեցին։

Բալց էրտլու ժամանակ, օր գացին,
Դավիթ կանչեց ախճդան.
— Խանդո՛ւդ,—բսավ,—մենք կէրտանք,
Թակավորի հեղ է կըկովինք.
Յոթ օր օր չէգանք՝
Գիկաս, մեր էրզրսի չանդագ չոգիս, բերիս։
Ըսավ.—Մեր աչ թևվի վրեն Մսե խաչ կա։
Կովան։ Յոթ օր օր թրմավ, .յախտեցին, էգան։

Խանդուդ հնձի ձին, գնաց.
Գնաց .յառնչ ուրանց։



Դավիթ տեսավ, օր խանդուդ էգեր է. .յերտըվեր էր,
Ադաղորեց, Քեռուց .յառնջ .յընգավ ու թշեց,
Օր թշեց, խանդուդ տեսավ, դառավ, փախավ,
.Յեդնվեն հասավ՝ ուրին թալեց լեռի տագ,
Կաղզվընու տագ,
Ջարգեց նեգով՝ լեռ հղավ, .յընգավ շոշի վրեն։
Մգա ղրո հըլը էն քար ճամպու վրեն մանցեր է։
Քեռին .յեդնվեն հասավ, բռնեց.
— Քեռի՛, Հա՛ցն ու դինին, Տե՛ր կենդանին,—բսավ,—
.Յերտըվեր ենք՝ մե գուրզ մի գըթալենք,
Էն էլ ուր բախտից՝ չըբռնեց.—
Ըսավ,—է՞լ բան չըմ բսի։

Առան էգան էգան Կաղզվան.
— Վաչո՛-Մաչո՛, մեր հարսի թագարուր տե՛ս,
Մենք առնինք էրտանք։
Էդ մարդիկ .յոդ ու ձեռ տեսավ ուր ախճդան,
Առավ Դավիթ խանդուդին էգավ։

44. Էգան Սասուն։
Մանցին մե ժամանագ մի,
Դե՛, ագաթ կար .յառնջ ախբր՝ գարձ բդի տաննեն։
Էգան, խանդուդին Վաչոն-Մաչոն գարձ տարան։
Մե քանիմ՝ վախտ .յրնցավ, խաբարն էգավ.
.Յոնի ագագվեր է, մե տղա է ունեցի,
Տղի ձեռ խըպուդ ը, չըկըռնան բանան։
.Յուղեցան բանան, բսեցին.
— Ա՛յ մարդ, կըբանաք՝ ձեռը սբխտի,—բսավ,—
Գիկան Կաղզվան բարութանդ կէնին։
Համ .յաչքալուս խրպինը ուրանց,
Հա՛մ էլ բսինը, օր ձեր տղի մեզ ձեռը փագ է.
Թը՛խ .յիկան, ինչ կէնին՝ էնին։
Էգան, մուժդա բեռեցին Քեռի Թորոսին
Ու բսին օր՝ տղի ձեռը խպուդ է,
Չեն կրռնա բանան։
Կանչեց Դավիթին, մե ագոթք սովըրցուց, բսավ.
— Չէրթա՛ս ծուռ-ծուռ քամիս,—բսավ,—

Տղի մաղներ չարդիս։
.Յելավ գնաց։

45. Գնաց, տեսավ օր՝ հասատա՜տ, տղի ձեռ խպուգ է,
Բերից աղոթք էրից, մաժմըժից,
Տղի ձեռ բացից, տեսավ օր՝
Տղի ձեռաց մեջ լերդ արուն է,
Օսկոն էլ մեջ։
— Հե՛յ վախ, հե՛յ,—բսավ,—
Մենք մարդ կըսպանինք,
Էսի արուն բդի խմե,—բսավ։

Մնաց մե քանիմ՝ օր, բդի .յիգեն,
Վաշո-Մաշոյի միտք խա՛լը է, բսավ.
— Քառասունք Քրմի՝ նոր հարսն էլ տանիք։
Էգան, բերեցին կերուխում սարքեցին,
Դավիթին սկսեցին խնդրել.
— Փեսա ջա՛ն, ախըր դու մեր փեսեն իս,
Էլ մի՛ կռվի.
Կռվիս, կոխվ է, օր մի կըսպանվիս,
Մեր ախճիգ կըմնա օրպեվերի։
Վերջ, շագ օր համոզեցին, բսավ.
— Չե՛մ կռվի, ինչ կա օր։
—Չէ՛,—բսավ,—բսելով չէ։
— Ըբա ի՞նչ։
Ըսավ.—Քու Սուրբ Նշանի վրեն .յերդվի՛,
Օր դու բդի չըկռվիս,
Օր մենք էլ հավատանք, արահով էղնինք,
Օր մեր փեսեն չըկռվի,
Մեր ախճիգ էլ օրպեվերի չըմնա։
Դավիթ, որ ժամանագ օր գնաց կռվելու,
.Յելավ Բարձր Մարութա Մայր Աստվածածին,
Էդաեղ Սուրբ Նշան տվեցին,
Համբուրեց, դրեց ծոցը, ծոցն էր։
Ըսավ.—Արի՛, էս քու Սուրբ Նըշնի վրեն .յերդվի՛,
Օր դու բդի չըկռվիս,—բսավ.—
Մենք էլ արխեյին էղնինք։
Բերեցին սոխպյալ, Դավիթն էլ .յելավ դուրս,

Գլխու սանդր դրեց աջակողմ՝ Սուրբ Նշանի տեղ,
Նշան էլ դրեց սանդրի տեղ, էգավ, ըսավ.
— Էս Սուրբ Նշան,—սանդրն է որպես,—հասատա՛տ,
Չե՛մ կավի։
Կդնըմ՝ մնաց, .յելավ դուրս, ըսավ.
— Մեղք ը, Սուրբ Նշան,—ըսավ,—ձախ կնդմն է։
.Յելավ տեսավ օր՝ ձեռն օր զարդեր է,
Սուրբ Նշանն էլի իր տեխն է,
Չորս մադի տեխն էլ սեվցեր է։
— Հե՛յ վախ, հե՛յ,—ըսավ,—էս ի՞նչ էր էգավ իմ պլուխ։
Էգավ, ըսավ աննըոջն ու զոնըըջին.
— Պադրաստություն տե՛ս, մենք կէրտանք։
Պադրաստություն տեսնելու... Համոզեցին, քե.
— Դու ջահել իք, ձըզի նորից էրեխա կէդնի,
Մենք չունինք, էս մե տղեն քողեք մըզի,
Դու .յելե՛ք գնացեք։
Տղի անուն էդտեխ կըդնե պարու անուն՝ Մհեր։
Համոզեցին, տղեն առան,
.Յելան մարդ ու կնիդ հեձան ձիանք։

46. Քեռի Թորոս էլի որմ աշեց.
.Յերթըվեր էր .յերգուն։
— Արմազա՛ն,—ըսավ,—տղեն .յուշացավ։
Բերեց որմ թալեց, քաշե՛ց,
Տեսավ օր՝ Քրի բերան ժանգոտզեր է։
— Քաշե՛ք իմ վեցօդնեն լազդին,—ըսավ,—
Տղեն նեղության մեջ է.
Կա՛մ հասնիմ, կա՛մ չ'հասնիմ։
Քաշեցին վեցօդնեն լազդին.
Քեռի Թորոս հեձավ, բշեց էգավ։
Էգավ, ի՞նչ տեսնի.
Տեսավ, օր կաղզվընու ձոր, էդ ճամբաեն, օր բդի .յիգա,
Սեյով, փեդով կդրած է։
Դավիթն ու Խանդուդն օր .յելան,
Քաղաք՝ էրեխան, .յօդնազնեն, դինվան
Ու .յրենգան .յեդեվե ուրանց։
Աշեց տեսավ.
— Խանդո՛ւդ,—ըսավ,—էս խասրի՛ն բնձի։

— Դավի՛թ,—ըսավ,—դու մի՛ վախենա,
Դու քու շորեր տո՛ւ ընձիգ,
Դու իմ շորեր հակի՛, բանե՛ ձին, ընանիս կայնի՛։
Խանդուդ հակավ Դավիթին շորեր, սկսեց կռվիլ։
Քեռի Թորոս էգավ, տեսավ օր՝ կղրաձ է դեղուկ,
Չի՛, մղրդղով Յալի՛ց, Յալի՛ց,
Ճամպաիս մի բացեց։
Էգան էրդու դիուց, հասան,
Էրդբսով չարաեցին, էգան .յիրար։
— Տղա՛,—ըսավ,—հարս .յո՞ւր է։
Տեսավ՝ չբխոսաս։
— Տղա՛,—ըսավ,—հարս յո՞ւր է։
Չխոսաց։ Աշեց՝ Դավիթ էնտեիս ձին բռնուդ։
— Էս ի՞նչ բան է։
Գնաց։—Քեռի՛,—ըսավ,—ընձի խապաճ է.—
Ըսավ,—նա .յերբվեր իմ։
— Վա՛յ,—բսավ,—դու վի՛ղը կողրի,
Էս ի՞նչ իս էրի...
Տղեն .յո՞ւր է։
Ըրը բսավ.—Տղեն Թողեցինը ընդոնց։
— Ա՛յ մարդ, էս ի՞նչ իր էրի։
— Թողե՛ր ինք։
Է՛, հրմգա կավաճ է, սաղ բաղար ջաուտաճ է...
Վերջ գացին։ Ըսեցին.
— Էրտանք, փորձանք մի գելնի։
Հեձան ուրանց ձիան, էգան։

47. Էգան, էգան հասան Սասուն։
Էգան Սասուն. Դավիթ կէբտեր, կրպղրդեր,
Ուր նեձրութուն կէներ։
Սավորություն ուներ՝ գիշներ ցերեկներ,
Կէբտեր Մեղրագետ, կըլողդրներ։
Էդտեղ Ծրմեբրմի Սուլթան կար,
Գուզեր առներ Դավիթին.
Դավիթն օր գնաց առավ Խանդուդին,
Էդ մարդ Դավիթի հեղ թշնամի էր.
Գրպղրդվեր .յեղավեն,
Գուզեր, օր Դավիթին սբրաներ.

Օրերուց մեկ օր Դավիթ էգավ լողընալու։
Տվեց Շրմճրմի Սուլթանի ախճիդ գուրզ, նետ ու աղեղ,
էգավ, խամիշ կար, խամշըներու մեջ,
Դավիթին, օր կռնագ դնքի ուրին էրև, կրլողըներ,
.Յեղեվանց նեդով զարդնց,
Բանեց սրտի մեջ, չրթողնց գուրս գեր
Ու ճվաց թե.
— Ընձի զարդեցի՛ն։
Էտուխից ձեն գնաց Սասուն.
Քեռի Թորոս բսավ.
— .Յելի՛ք հեձեք, էրտանը։
.Յելան հեձան, էգան, տեսան օր՝
Ջրի մեջ արուն կէբռա։
— Տղա՛,—բսավ,—ի՞նչ է։
— Քեռի՛,—բսավ,—ընձի զարդեցին,
Բայց զարդող իմ ձինից էղ խամշըներու մեջն է,—բսավ,—
.Յերթրվեր ևնք, օր մարդ բդի չրսպանենք,
Է՛դ է,—բսավ,—բռնե՛ք, բերե՛ք,
Տվե՛ք, բդեր գլոխ կդրի՛մ,
Ես օր կրմեռնիմ։
Էգան տեսան օր՝ ախճիդ ձինից .չրնգեր էր,
Բռնեցին ախճդան, Դավիթին հանեցին,
Տվեցին, թաշեց, ախճդա վիզ կդրեց,
Դավիթն էլ մեռավ։
Բերեցին կարեցին ձիու վրեն դիակ,
Նաշը կբտանին։ Ըսավ.
— Ջրի՛նդ խաղցեք, օր խանդուդ չդիդենա,
Բրլքի սաղ բռնինք։
Եթե խանդուդ էլ մեռավ, ես ծերացեր իմ,—բսավ,—
Անձրդներ ձեր .չաչքեր դ'հանին էս սարի գլուխ։

48. .Յելան սկսեցին չրինդ խաղալով՝ էգան։
Յուան վեջըն բշեց էգավ.
Խանդուդ բաղնի վերավեն բսավ.
— Որ ածեր՝ չէգավ, որ չածեր՝ էգավ,
.Յո՞ւր է,—բսավ,—իմ շահ-բալաբան Դավիթ չէգավ։
Ըսավ.
— Քրդի պադսավ պարեն Դավիթ,

Զրպագսի՛ պարոն իրիգ։
— Վա՛յ,—ըսավ,—քաքի՛մ քու բերան, վէջո՛,—
Ըսավ,—Դավիթի մեռնելն դուրս
Ես առնիմ բըզի՞,—
Ուրըն բաղնից բցնց։
Գլխու վրեն քցնց։
Մգա գըռ ըղնր գլխու տակ
Մե փուդրմ կորեզ-ձավար գրլնան, կրծեձին։
Էգան տեսան օր՝
Արդեն խանդուդն էլ էդտեխեն է մեռի։
Բևբեցին էրգու դիագ էրեցին մեգ,
Տարան բաղեցին։

Գ

ՓՈՓՐ ՄՀԵՐ

49. Մանցին։ Մե վախտ մի .յընցավ, քանի տարի։
Կանչեց հոխպեր.—Ձինով Օհա՛ն,—ըսավ,—
Մհեր մեռավ, Դավիթ սրբանվավ։
Իդա տարի գլուխ,—ըսավ,—ես էլ մեծըցեր իմ,—
Ըսավ,—անձըղներ մեր .յաճկեր գ'հանին։
Արի՛ էրտանք Կաղզման,
Ընանք, թե բիչ չէ՝
Մեր տղեն բերինք։
Ըսավ.—էրտա՛նք։
.Ցելան գացին։
Գացին. ըղնք օր գացին,
Արդեն տղեն տարած պայած է։
Տղին մե .յօդեմ՝ կէնին, ոչ դուրս կրթողին,
Հաց, բան, ջուր՝ ըղտեխեն է,
Արեվ լե չըտեսնի։
.Ցիրգուն հարց ու փորձ.
— Ըրը .յո՞ւր է,—ըսավ,—մեր տղեն չէգավ։
Լացին, ծեծկրվան, թե.
— Տղեն մեռեր է, .յրսօր քանի՛ օր։
Քեռին ոմ կաշե՞՝ տղեն սաղ է,

Բայց ուրանք կըսին Քև՝ մեռեր է։
— Չէ՛,—ըսավ,—իմ տղեն չը՛մեռեր է։
Ըսավ.—Մեռե՛ր է։
Ըսավ.—Իմ տղեն յոթ տարեգան է,
Իմ շագերով կէղնի յոթ շալ ընդոր բոյ։
Մարդիկ պայեցին՝ .յինք օր քելա, շագեր շափեցին,
Գացին դերեզմըններ քանդեցին, փորեցին,
Բնբեցին օսկրոից, փեղից-մեղից լցեցին,
Յոթը շագանից մե դերեզմանմ՝ սարքեցին,
Հող ծածկեցին, էգան։
.Յառավոդ .յելավ գնաց, տեսավ օր՝
Ա՛յ մարդ, դերեզմանն ուր բսած դերեզմա՛ն է,
Բայց Քեռին որմ կաշե՛՝ տղեն սաղ է։
— Ա՛յ մարդ,—ըսավ,—իմ տղեն սա՛ղ է։
Գիլան, Քև մեռեր է։
Զինով Օհան ըսավ.—Քանդե՛,—ըսավ,—էս դերեզման։
— Ա՛յ մարդ, դերեզման էլ քանդո՞ւ, խաչո՛ւդ ը, կնքո՛ւդ ը։
— Քանդե՛,—ըսավ,—քանդե՛։
Քանդեց, տեսավ՝ բիրադի օսկոռ։
Ի՞նչ էրեցին՝ տղեն չըմռին։
Չըռվեցին, .յինք էլ մենագ էր, ծեր էր,
Վախեցավ, ըսավ.—.Յելի՛,
.Յելի՛ էրտանք քաղքից խրաղ, իրեք դիր բռնա՛,
Թե մեր տղեն ը՛, գիկա՛,
Թե օր բիջ է,—ըսավ,—տանինք, ի՞նչ էնի՞նք։
.Յելան էգան քաղքից խրաղ,
Բռռաց Զինով Օհան.
— Սասունցի Դավիթի տղա Մհեր .յո՞ւր է, Բո՛ղ դա,
Ուր Քեռին ու հոխպեր էգած է ուր .յեղեվին։
.Յառաջի անգամ օր բռռացին,
Բնբեցին հաց դրեցին .յառէջ,
Կերավ, օսկոռ կար մեջ։
Երգրորդ անգամ ձվաց հոխպեր.
— Սասունցի Դավիթի, խանդուդի տղեն .յո՞ւր է,
Թո՛ղ .յելնի գա,
Ուր Քեռի Թորոսն ու հոխպեր էգած է ուր .յեղեվին։
Զարդից օսկոռ, ակոշկեն չարտեց,
Տեսավ, օր ակոշկի .յառջևվեն բաղաք Բո՛ւնդ առեր է, կէրտա։

.Յելա՛վ, .յելավ խառվավ բդոց, գնաց։
Երրորդ .յանգամն օր բռաց,
Քեռի Թորոս աշեց, օր ժողովրդի միջեն մե մարդարոյ մե՝
Ըսավ.—Մեր տղեն էգա՛վ,—ըսավ,
Ու լցեց ձին ու քշեց։
— Ա՛յ տղա,—ըսավ,—պադրաստվի՛,—ըսավ,—
Գուրզը քուզը՛դ է։
Քցեց. օր քցեց՝ բռնեց։ Բռնեց.
— Հա՛, տղա՛,—ըսավ,—քու հերա-հերան ըսա՛,
Քու մերա-մերան ըսա՛,
Իմ գուրզ աբառաժ բարի՛ր կըճդիր,
Քըզի բան չէրե՞ց։
Ըսավ.—Իմ հերա-հերանին վաշո՛ն է,
Իմ մերա-մերանին Մարջո՛ն է,—
Ու դոմի քաշեց։
Օր դոմի քաշեց, Քեռի Թորոս .յընգավ, մեռավ։
Բևբեցին ջուր լցեցին, պիրա բամեցին, այրզուցին, .յելավ։
— Տո հալվի՛ր,—ըսավ,—
Դու գրզով զարդիր՝ ես բռնեցի,
Բայց ես դոմի քաշի՝ դու մեռա՛ր։
— Տո՛,—ըսավ,—քու պխո՛ւն ու արիվուն մեռնիմ,
Ա՛խբր ես քու դոմիդից չըմեռա,
Ես քու խոսքի՛ց մեռա, է՛։
Ա՛խբր քու հերա-հերան Դավի՛թն է,
Քու մերա-մերանին Արմաղա՛նն է, խանդո՛ւդն է.
Դու վաշոյի-Մաշոյի ըսիր՝ ես քու խոսքի՛ց մեռա։
Էս էլ,—ըսավ,—քու հոխպե՛րն է։
— Իդը իմ հոխպե՞րն է, դու էլ իմ բեռին ի՞ս։
— Հա՛։
— Դը՛, քելե՛ք էրտանք,—ըսավ։
Առան Մհերին, էգան Սասուն։

50. Էգան Սասուն. տղեն էգավ մե բանի տարեգան։
Արդեն հերն օր մեռեր էր,
Սուրբ Նշան, զըրխաս, բաս, բաներ՝
Բիրադի պայաձ են.
Ձին էլ պայաձ են, բոլորովին դուրս չըն թողե։
Էգավ տղեն օր հասավ, վերցին հանձնեցին տղին։

Հանձնեցին տղին, բերեցին օր մի կերուխում էրեցին՝
Հոգևհանգիստ Մհերին, Դավիթին։
Բերին, բրոշ դրեցին, օր նստան խմելու, ըսավ.
— Քեռի՛,—ըսավ,—կըթողի՞ս, էս պղինձ գինին
Խմիմ իմ պաքի և իմ հոր հոգևհանգստյան կենաց։
Ըսավ.—Լա՛ռ, էս բրոշով մեզ քու հերն է խմի,—
Ըսավ,—հիմի էլ դու դգի խմիս.
Խմե՛,—ըսավ,—Մհե՛ր ջան։
Վերցուց ու դրեց բերնին, խմեց։
Ցոան Վեջոն ըսավ.
— Ա՛յ մարդ,—ըսավ,—.յուր օր բիջըմ կա,
Կըրեներն, կէնին Սասունցի Դավիթին տղա,
Անուն էլ կըդնին Մհեր,
Քառասուն հոգու բորխա կըկարին,
Դըլնան մեզի փեր։
Մհերն օր լսեց, վերուց զարդեց Ցոան Վեջոյին գետին,
Վրեն դրեց

Հոթոթ, Մոթոթ,
Անուշ Քոթոթ,
Բռնին Ուռի,
Դնին Մոթի,
Սանասար,
Ադնամելիք,
Քեռի Բորին վրեն սարուբար

Ու .յելավ նստավ վրեն։
.Յելավ նստավ վրեն, Քեռին ըսավ.
— Մհե՛ր ջա՞ն,—ըսավ,—ընձի՛ խնայե,
Ա՛խըր չէ՞, ես ծեր իմ։
Ցոան Վեջոն վրեն-մրեն բողդեր էր,
Վերցին .յոդնեն, թալեցին դուրս,
Տարան, վերջ, լվացին։
Մե դիր մի, երդրորդ, երրորդ դիր էլի խմեցին,
Էլի էդ խոսք ըսեց.—.Յուր օր բիջըմ կա...
— Է՛,—ըսավ,—օր ես էս տան մեջ բի՛չ իմ,
Ես ի՞նչ գործ ունիմ էս տան մեջ մնամ։
.Յելավ հեծավ ուր ձին, վերուց ուր գենքեր,
Մհերն՝ պարն, օր գնաց Մսրա Մելիքի բով,
Էդտեղ սամուր բուրքիմ՝ են տված նվեր,

Էդ սամսար քուրքին էլ վերաց, առավ վրեն,
Հնձավ ուր ձին ու գնաց։

51. *Քշեց, գնաց դեքի Բաղդադ։*
Բաղդրդու խալիֆին մե չայիր մի կար,
Օր հավրըն վրավով չընցներ,
Մեջ մե յախտուր կար, ծառն էլ վերևվ։
Տեսավ էդ ծառ, յինք էլ, շեղ, դադրուգ, ըսավ.
— Քաշիմ ձիս քաղիմ իդա կանաչ տեղ, կղներ մի արձի,
Ես էլ ծառի տակ կղներ մի պառկիմ,
Դինջանամ, հրահաթիմ, յելնիմ էրթամ։
Բերնեց ձին օր տավլեց ըղներ մեջ,
Յինք էլ էկավ էդ յախտրի վրեն, հաց կերավ, ջուր խմեց,
Առավ սամսար քուրքին վրեն, քնավ։
Առեր էր քուրք վրեն, քնավ,
Մեկ էլ դուրբին դրեց Բաղդրդու խալիֆեն օր՝
Ուր չիմանա չայրի մեջ, ա՛յ մարդ,
Բացի հավը՝ ձին մեջ կարծա,
Մարդմ՝ էլ ուրան յախտրի վրեն քներ է։
— Գացե՛ք,— ըսավ,— հըլը բռնե՛ք, բերե՛ք,
Էդ քանի՞ պխու տեր է, օր էդեր է,
Ձին էլ քաղեր է, կարտաձա,
Յինք էլ իմ յախտրի վրեն,
Ծառի տակ քներ է։
Յելան էգան էրգու-իրեք հոգի։
— Ա՛յ մարդ,— ըսավ,— խարե՛ր մարդ իմ,
Ըղդիցեր իմ, էրեր իմ։
— Չէ՛, դու բռնավեր իս,
Բըղի կըտանինք մեր խալիֆեն։
— Ա՛յ մարդ, ընձնից վազ կեցե՛ք, ի՞նչ դուգիք։
Շադ օր խոսաց՝ չէղավ,
Բռնեց էրգսի յանգըշներ լև կդրեց։
— Գացե՛ք,— ըսավ,— ձըր խալիֆին ըսեք՝
Բե՛ր ընդրա քուր կդրե իմ չե՛ղ։
Գացին, պադմեցին։
Յելան զորք էրեցին, էգան.
Գալաձ՝ չարտըվան, գալաձ՝ չարտըվան,
Իրեք օր կովան, իրեք օր չարտեց։

Օր ջարտվան իրևք օր, Բաղդըդու խալիֆեն ըսավ.
— Դու ի՞նչ մարդ իս՝
— Ես,—ըսավ,—Մասունցի Դավիթի՛ տղեն իմ՝
— Դը լա՛վ,—ըսավ,—օր էդպես ի՝,
Իմ ախճիդ,—ըսավ,—կիդամ քըզիդ՝
Ու առան էդան՝
Զևռ դրևք էր խալիֆի փիջին, որպես փնսա-ատներ՝
Մուդրևռ էր վրեն՝
Տարան Քաղեցին դեն, Հիսարդին, էդան՝
էդան, օր բևրնցին, ըսավ.
— Ամո՛ղ է, օր ես քըզի տանիմ իմ հեղ քաղաք, իմ տուն.
Բդի բսին՝ դնաց, էսքան ջարտվավ,
Ուրիշի տղա ին, ջարտվան,
Օր դու քու բուդեն բդի բևրևր քու տուն,
էլ մըզի Հընչի՞ ջարտնցիր.
Բդի էդի Հևրես տան ընձի՝
Քըզի չաղըր կիդանք, հաց, բան,
Մե էրդօր, իրևք օր հող արբի,
Մինչի կդնիմ՝ լև էս աուդ Հընցնի,
Արդեն գիկաս՝ քու նշանած բուդդ է՝

32. *Բևրեցին չաղըր ավնցին Մհևրին.*
Մհևր չաղրի մեջ կապրևր՝
Ուրանք խորուրտ էրեցին.
Ախճդա յառնջ մե Ավդալ անվնր մարդըմ կար,
Դա Մհևր տրբին մարդ էր՝
էգավ օր, ըսավ.
— *Գոհա՛ր,—ըսավ,—էսպես խորուրտ է էրած.*
Գիշևր օր Մհևրի լուս Հընցավ՝ ճրագ,
Բդի էրտան, Մհևրին սրբանին՝
Յիրգուն օր էղավ,
Ախճիդ Հելավ հնձավ մե սեվ ձի,
Հակավ սեվ շոր, դնաց՝ Գնաց.
— *Բարի Հիրիգո՛ւն՝*
— *Աստո՛ւ բարին՝ Դու ո՞վ իս,—ըսավ՝*
— *Ես Գոհարի ախպե՛րն իմ,—ըսավ,—մեծ ախպերն իմ,*
էգեր իմ, իմ կռիվ քու հեղ կռի՛վ է,
Իմ քուր ես չե՛մ տա քըզի՝

Ղոներ հեդ կռվան մինչի լուսու դամ.
Տեսան, օր մեգ-մեգի չ'հախտեր,
Ախճիդ գառավ էգավ, մդավ ուրանց տուն,
Տղեն էլ պառգավ քնավ, դինջացավ։
Մեգել օր էլի հնձավ մե կարմիր ձի,
Հակավ կարմիր շոր, գնաց, բսավ.
— Ես էլ օրտանջա ախպերն իմ,—բսավ,—
Իմ քուր ես չե՛մ տա,—բսավ,—
Իմ կռիվ քու հեդ կռի՛վ է։
Էլի սկսան կռվել մինչի լուսու դամ,
Մեգ-մեգի չ'հախտեց։
Գառավ էգավ ախճիդ ուր դիման,
Տղեն էլ գնաց, պառգավ քնավ։
Մնաց երրորդ օր։
Յելավ հնձավ ճերմագ ձի մի,
Ճերմագ շոր հակավ, գնաց։
Գնաց, սկսեցին կռվել,
Կռվան, մինչի լուսցավ։
Օր լուսցավ՝ մեգ-մեգի չ'հախտին, բսավ.
— Արի՛,—բսավ,—մե բան մի էնինք։
Բսավ.—Ի՞նչ։
Բսավ.—Մադնի՛ք դնինք,, ումն օր նեղուսաղել միջից յընցուց,
Հաղթողըն էն էղնի։
Բսավ.—Էնի՛նք։
Բնեցին դրեցին էՙ, Մհերի մադնիք կէղնի սելի մի հալըղ,
Տարան դրեցին։ Իրեք հազ ախճիդ բցնց,
Իրեք էլ միջից յընցուց։
Յառաջին ազեն օր բցնց, զարկնց՝ յընկավ։
— Յա՛,—բսավ,—զլուխի կորի՛մ։
— Չէ՛,—բսավ։
Բսավ.—Պայման պայմա՛ն է։
Բսավ.—Այո՛, պայման պայման է.
Իմ յաճկ քու յերեսն էր,
Բսի՝ ախպերն օր էսբան սիրուն է,
Քուրն ինչքա՛ն խորոտ էէղնի.
Արի, յընցի՛ յեղավս։
Ախճիդ յընցրնց յեղավ, իրեք դիր բցնց՝
Իրեքն էլ յընցուց։

Ախճիջ խնդաց ու ձեռ թալեց, փափախ վերուց։
— Տո՛, — ըսավ, — յըսօր իրեք օր դո՞ւ էիր ընձի...
Ըսավ.— Մհե՛ր ջան, յըսօր իրեք օր ես ենք բըզի տանջոզ.—
Ըսավ.— Պայման կար՝ բու լույան օր յընցներ,
Յիգեն բըզի ըսպաննեն։
— Ինչ էնինք։
Ըսավ.— Յիրդուն դիկաս իմ բով։
Մնաց յիրգուն.
Ավդալ ախճգա ծառան էր, խրգից, բերին տարան։
Տարան, վերջապես, կէրաներ-դիկեր։
Մամուր բուրքին մնաց յօդի՝ Դոհարի սենյակ,
Յինր օր կախեր էր, էդպես էլ մնաց։

53. Գելներ դիկեր յիրդուն ախճգա բով, կընասեն, խոսեն,
Ջօր դիկեր կէրտեր։
Էդ՞եր տըլի յեդիվեն լրտեսներ կըպդոցըցեն լարերով։
Տղեն օր յօդաց ճանապարհ կէրտեր,
Ձեներքեր ու Սուրբ Նշան, օր վիդն էր,
Կըբնեներ կախեր ձիու խաշից,
Քառասուն շաշ ուր շաղերով հեռու կէրտեր,
Մեղր պրհամարեր։
Օր մի, հետևվելով, յեդեվ յընգնելով,
Օր գնաց յօդաց ճանապարհի,
Բերեցին թալեցին ցանց,
Մհերին բռնեցին։
Մհերին օր բռնեցին, ձին փախավ։
Բերեցին Մհերին բրի բսպանեն՝ մարդիկ մեջ յընգան,
Խալիֆի դիվնի մեջ՝ սրահի մեջ, մե մեծ հոր մի կար,
Թալեցին էդ հորու մեջ։
Խորուրտ էրեցին, օր բերին բար յըլնան վրեն,
Արճիճ հալին, յըլնան վրեն, մնա հորու մեջ։
Մագ է Քողած, օրագան գիկան, գ'հարցուն.
— Մհե՛ր, իմա՞լ իս։
Կըսե.— Յաուչ ասաված,
Հա՛ցն ու դինին, Տե՛ր կենդանին,
Ես կա՛մ ու դուբ չկա՛ք,
Ինչ օր Բաղդրդու դուրան ներ կոլինք։

54. Բայց էդանիկ յոթ տուն հայ ջուլլապ քրիստոնեա կային.
Ըղձք լսեցին,
Բերեցին պառավու մի ավելցին մեն խաղմեմ՝ ու ըսին.
— Գը տանիս...
Պառավ գիկա, ձեն կիդա՝ հաց ժողվող պառավ մ՚ է.
— Մհե՛ր,— կըսեւ
Կըսե.—Ին ի՞նչ է։
— Որոշում կա, օր բու վրեն բար .լըլնան էդ հիր,
Արճիճ հալին, .լըլնան վրեն, օր դու մեռնիս։
Հորու աջակողման կիղմը նորից մի հիր կա.
Էս խաղմեն բըզի, էս էլ բամբակ ու բուրդ,
Էս բուրդ ու բամբակ գըզարցիս դեմ,
Օր արճիճ չիգա առնե բըզի,
Թե չէ՝ բու վրեն բար գըլնան,
Արճիճ գ՚հալին՝ դու կըմեռնիս։
Կառնե խաղմեն, կըծագե, գընցնի էնդեն,
Էդ բուրդ ու բամբակ գըզարցե էդ ծագ, կըբռոցու։
Խալիֆեն յառավոդ գելնի, կըսե.
— Որն օր իմ գլուխ կըսիրե,
Մեգ-մեգ բար բերե, Բալե գյավուրի վրեն։
Բերեցին բար, լիբ լցեցին,
Արճիճ հալեցին, լցին վրեն։

55. Քեռի Թորնս որմ աշեց, օր Մհերին բռնած են,
Տեսավ, օր Քրի բերան էլի ժանդոռդեր է։
— Է՛,—ըսավ,—քաշե՛ք իմ Վեցօդնեն Լաղդին,
Տղեն նեղութեան մեջ է։
.Յելավ էդավ Բաղդըդու դեմ, մե տեխ մե,
Ուր .լեռնատնեին չաղըր գարգեց ու կոպասե։
Բայց Ավդալն, օր Քալեցին Մհերի վրեն, արճիճ լցեցին,
Էդ մարդ խաբար կըտանե,
Թե՛ Բաղդըդի խալիֆեատանուն կըտանե,
Թե՛ էդ յոթ տուն ջուլլաղներին կըտանե,
Թե՛ Քեռուն կըտանե։
Կէբտա հորու վրեն, գ՚հարցու.
— Մհե՛ր,—կըսե,—ո՞նց իս։
Կըսե.—.Յառեջ ասսվա՛ծ,
Ես կա՛մ ու դու չկա՛ր,

Ինչ օր Բաղդրդու դուրան նա՞ր կավիմ։
Էդ խաբարը կըտանեն Քեսի Թորոսին,
Ընդից էլ կէրտա, կըսե.
— Հա՛, հա՛, գյավուրի ձեն կղրուդ է,
.Յըսօր-.չէգուց՝ գյավուրի ձեն կըկղրի։
Զին էլ փախավ գնաց մե սարին,
Մի տեղ քուլպալամիշ էղավ, ուրին փորեց,
Ջօր կէրտեր էդ քուլդեն կըմներ,
Գիշեր կէրտեր արձեր։
Ուր Մուրը նշան, բոյեր, ինչ օր սարք կա՝
Ջիու վրեն էր։

56. Յոթ տարի մնաց հորում։
Էդ բրխատնա ջուլյաղներ օր մի բևրեցին ժողով բրեցին.
— Ա՛յ մարդ, մենք էստեղ յոթ տուն բրխատնա ինք,
Մենք չրհոցանք էդ մարդուն...
Գոնյա խազմա, բան մի տեննր,
Մզա բանդելով .յինք .յելեր էր, հա՛։
Բևրեցին, տարան հաջաի ավեցին, քե.
— *Մհո՛ր, էլ հնար չկա, դու բդի բանդիս։*
Էդ մարդն էլ քանդեց.
Հա՛ լցեց, հա՛ .յելավ, հա՛ բանդեց, հա՛ լցվավ։
Էդ պառավն, օր շարունագ բդիր մոդ կէրտեր-.յիգեր,
Էն մեզ օր.—Հա՛,—բսավ,—իմա՞լ իս։
Ըսավ.—Լա՛վ իմ։
Ըսավ.—Ի՞նչ կիդաս, օր բդի հորեն հանիմ։
Ըսավ.—Ի՞նչ ունիմ, օր ինչ իդամ,
Յոթ տարի է, շիր էլ չկա վրես, ի՞նչ տամ։
Ըսավ.—Կառնի՞ս իմ ախճդան։
Ըսավ.—Քու ախճդա անուն ի՞նչ է։
Ըսավ.—Ջըղա՛ր է։
— Է՛,—բսավ,—չեղավ Գոհար, Բը՛խ էղնի Ջըղար,
Բի՛ տեսնամ։
Գնաց, պառավն էր, ախճիդ բևրեց.
Արդեն բանձըրցեր է, հորու բևրան բացեց,
Ախճիդն օր կգավ վրեն, բդի տեսներ,
Ձեռ բալեց, ախճդան քաշեց հեր,
Քաշեց հեր, կանչեց ուր աստվածմ,

Ոտ դրեց ախճդա վրեն, հարի ախճիդ լըղդավ՝
.Յինք ուրին քալեց հորից դուրս։
Պառավ սկսեց բոռբոռալ,
Պառավու գլուխ լն կդրեց, քալեց ընդեղ։

57. .Յելավ հորուց դուրս, Ավդալ .յրռաստ էգավ։
— Հա՛,—բսավ,—Ավդա՛լ, .յո՞ւր կէրտաս։
Ըսավ.—Ի՞նչ կա, կէրտամ խաբար տանիմ,—
Ըսավ,—հա՛, հա՛, էդ է՝ գյավուրի ձեն կդրելով է,—
.Յինք գիցավ, թե էդ Բաղդրդու ժողովրդից է,—
Ձենը կդրելով է։

Մսրա Մելիքն էլ,
Մհերն օր գնաց Մսրը՝ Մեհ Մհեր,
Էդ ժամանակ Մհերից մե տղեմ էր էդի,
Ձիուց էլ՝ մի բուռաղ։
Ամեր՝ Մհերի հեղ, Քոռ կէղնին,
Էնի Մսրա Մելիքի տղեն է,
Էնի՝ Դավիթի տղեն է։
Մսրա Մելիք Գոհարի նշանածն էր, .յուզած են,
Էն էլ էգեր էր ուր նշանած տանելու։
Ախճիդ կայներ էր.
— Քանի՛ Մհերի ձեն կենդանի գիկա,
Քու գլես հազա՛ր էղնի՝ ես չըմ տանի։
Ավդալն ընդենց կրտանե, թե՝
— Հա՛, .յրսօր-.յէդուց ձենը կըկորի.
Ընդենց էլ տանե, թե՝
— Կենդանի՛ է, շուտով դուրս գիկա։
.Յելավ էնտեղ պադահավ Մհերին,
Որ ժամանագ օր ըդենց խաբար բդի տանե,
Ըսավ.—Հա՛, հա՛, գյավուրի ձեն կդրելով է։
Աշնց բոլոր, բսավ.—Ես Մհեր էղնիմ,
Իմ .յառեջ,—բսավ,—գյավուր ըսի՞նչ։
Հրմը՛ բռնեց վիզըն օլըրեց, քալեց հորու մեջ,
Շորեր հագավ ու հասկըցավ, թե ըդոր դերն ինչ է,
Գնաց։

58. Գնաց ջուլպգներու տուն.
— Հա՛, Ավդա՛լ ջան, ո՞նց է Մհեր։
Ասավ.—.Յառնջ հա՛ց՝ .լեզնվ հա՛րց։
— Ավդա՛լ ջան,—բսին,—էդ ինչքա՞ն իս սովածդի,
Օր անոցեր իս, հաց գուզիս։
Բևրնց հաց, կերավ։
Յոթ տուն գնաց, յոթ լև բսավ.
— .Յառնջ հա՛ց, .լեզնվ հա՛րց։
.Յոգուց էգավ գնաց Քևռի Թորոսի մոդ.
— Հա՛,—բսավ,—Ավդա՛լ ջան,
Մհերից ի՞նչ խաբար կա։
Ըսավ.—Քևռի՛ ջան, .յառնջ հա՛ց .լեզնվ հա՛րց։
Հա՛ցն ու դինին, Տե՛ր կենդանին,
Է՛ս ձեռով բրդուջ դրեր իմ Մհերի բերա՛ն
Ու էգեր իմ,—բսավ։
Դառավ էգավ։ էգավ գնաց Գոհարի բով։
.Յիրգուն գնաց Գոհարի բով,
Տնսավ օր՝ սամուր քուրքին իմալ օր կախեր ը,
Հրմալ կախուգ ը։
— Գոհա՛ր,—բսավ,—էս վի՞ր քուրքն է։
— Է՛,—բսավ,—քոռնա՛մ ես,
Էդի,—բսավ,—Մհերի քուրքն է։
— Ի՞նչ կէղնի,—բսավ,—տա՛ս, առնիմ վրնսի։
— Ես իմա՞լ,—բսավ,—Ավդա՛լ, Մհերի քուրք տամ քրկի։
— Է՛, ի՞նչ կէղնի,—բսավ,—բո՛ւրք է, էլի՛։
— Չէ՛,—բսավ,—չե՛մ տա։
Շատ օր խնտրավ, բսավ.
— Ես օր իմ ձեռնով չեմ տա,
Բայց դու օր գուզիս՝ դու .յելի՛, .յիձո՛ւ։
Իմալ օր .յինք կախեր է,
.Յինք էլ բդի ուր ձեռնով .յիձու։
Ձելավ, Մհերն էր, քաշեց քուրք, առավ վրեն։
Կըդառնա, կըքնկե՛՝ Մհե՛րն է,
Օր կըդառնա, կաշե՝ Ավդա՛լն է։
Ըսավ.—.Յառաջ հա՛ց՝ .լեզնվ հա՛րց։
Ի՞նչ խաբար իմ բերի՝
Հա՛ցն ու դինին, Տե՛ր կենդանին,
.Յըսօր է՛ս ձեռով բրդուջ դրեր իմ Մհերի բերան, էգեր իմ։

Շատ օր չարչըրեց, էգավ ըսավ.
— Ջե՞ս ճանչընա,—ըսավ,—տո՛ւնդ քանդվի,—
Ըսավ,—Ավդալ խուրբան է էդի քըզի՛,
Մհե՛րն իմ, Մհե՛ր։
Ըսավ.—Յելե՞ր իս։
Ըրը.—Հա՛, ձեն չըհանի՛ս,—ըսավ։

59. էգավ գնաց Մարա Մելիքի զորքի մեջ։ Գնաց.
— Հա՛,—ըսավ,—Ավդա՛լ, գյավուրից ի՞նչ խաբար։
— Հա՛, հա՛, հա՛, ձեն կդրեր է.—
Ըսավ,—էս քանի օրս է՝ ձեն կըկդրի։
Տեսավ, օր բերած է զորքին միս է էփած.
— Մելիք աղա՛։
Ըսավ.—Ի՞նչ է։
Ըսավ.—Կըթողի՞ս,—ըսավ,—էս միս ուտիմ,—
Ըսավ,—էդ գյավուրի ձեն կդրե։
— Ավդա՛լ ջան, ի՞նչ կըտնաս օր՝ կե՛։
Կերավ, օսկոր լցնց փեշեր ու ըսավ.
— Մե դհոլ ու զուռնե մի գա՛րկ,
Ես .յելնիմ խաղամ,—ըսավ։
Բերեցին դհոլ-զուռնա գարկին, .յելավ խաղալու.
Օր գիտեց՝ որի գլուխ կոդրավ, որի .յաչը .յելավ,
Որ մեռավ—յուզի-գյոդի բեյլըսըզ էրեց։
Խառնան .յիրար.
— Ջէ՛,—ըսավ,—ո՛րն օր իմ գլուխ կըսիրե,
Ավդալին,—ըսավ,—ձեռ չիտաս։
.Յելավ .յոդոց էգավ, գնաց ջուլյագների բուվ։

60. Գնաց ջուլյագենց տներ,
.Յայդնեց ուր ով էդնելը։
Քեռուն .յայդնեց, ըսավ.—Իմ ձին .յո՞ւր է,
Իմ ձիու տեղ գինա՞ք։
Ըսավ.—Քու ձին մե սարիմ՝ տիրեր է,
Ջօր կէբտա բոլգալամիշ կեղնի,
Գիշերն էլ գելնի կարձա։
Ըսավ.—Գացե՛ք, իմ ձին բերե՛ք։
— Մարդ-իսան էդ ձեն չըկոնա էրտա,
Իմա՞լ քու ձին բերինք։

Էդ դեն կդրեր էր յոթ տարի, հավք էլ չէրտաւ
Կիգա արախչին, կրտե.
— Տարե՛ք իգա իմ արախչին, քալե՛ք,
Տե՛յ, շադ հեռու գացեք.
Էգավ կայնավ արախչուս վրեն՝ կիշանա,
Բռնե՛ր, առեք արե՛ք։
Տվեց էրգու տղին, տարան Յալեցին,
Չին էգալ կայնավ վրեն, հոդոդաց ու կայնավ։
Օր կայնավ, տղեղներ գացին, բռնեցին ձին,
Քաշին, առան էգան։
Յելավ տեսավ օր՝ ուր Սուրբ Նշան,
Ուր ամեն բան վրեն է,
Բայց յոթ տարի խոլան-խուսխուն բիրադի փդեր է։
Բերեց խոլան-խուսխուն տարբեց,
Ամեն բան կարեց, պադրաստեց,
Խաբար տվեց Քեռուն.
— Քեռի՛, արդեն ես յելեր իմ,
Քուռդի Ջալատ լե տագս է։

61. Խաբար առավ Մարթա Մելիք, թե՝
Մհեր յելեր է։
Ժողովուրդ կայնան.—Ախպե՛ր,—բսեցին,
Ուրիշի տղե՛ն. ինչի՞ էդից համար կովին.
Օր մե կնգա համար բդի կովին,
Վերն օր հարդավոր է՝ Քր՛ղ էրդուս էրտան կովին։
Բերեցին որոշեցին օր՝
Մարթա Մելիքի տղեն ու Մհեր բդի կովին։
Կովին. էգան. բրա բսավ.
— Աբի՛ պայման էնի՛նք,—բսավ,—
Իրևք Քուր ե՛ս բրդի գնրդիմ,
Իրևք՝ դո՛ւ գնր։
— Էնի՛նք։
Էգած կայնած է։
Քեռի Քորնս արդեն էգեր բ յաուաջի Քեռին։
— Սրեն վի՞րն է։
Ըսավ.—Սրեն ի՛մն է,—բսավ,—
Օր դու էգեր իս, գոռով իմ նշանած կանիս՝
Յաուաջի սրեն ի՛մն է։

— Է՛,—ըսավ,—Քր՛խ քրգի էղնի։
Բևրևց, Մհևրն էր, համբուրևց Սուրբ Նշան, դրևց գլխուն,
Թաս կոռնևց գլխուն, ըսավ.
— Քու սրեն է, իրևք Թուր դո՛ւ գնա՞ր։
Գնաց։ Գնդրևց։ Քաշևց Թուր, .յատաջին գնդրևց,
Երգրորդ, երրորդ՝ հաղիվ կըռցավ Թուր Սուրբ Նշան կդրևլ։
Թռավ հորեն .յևլավ, ըսավ.
— Դև արի՛,—ըսավ,—սրեն քո՛ւմն է։
Օր բդի Մսրա Մևլիքին մդրցևն հետ՝ մեր էգավ.
— Մհև՛ր ջան,—ըսավ,—
Իմ ամադ շադ կա քու ջէջ պաբու վրևն։
— Թև՛,—ըսավ,—քու ամադ իմ ջէջ պաբու վրեն կա, չկա՝
Ես չը՛մ գինա,
Թուր մի,—ըսավ,—բաշխիմ բրգի,
Թուրմ՝ էլ կրբաշխիմ իմ աստուն,
Մե Թուր մի քու ադին կրգնդրգիմ,
Քու բախտն է, ինչ կէղնի՝ էղնի։
Բևրևցին մդուցին հետ,
Ինչքան օր փալա՞ն ու ջուլ-բան կար՝
Բևրին լցին վրեն,
Ջաղչի քար դրևցին գլխուն։
— Է՛,—ըսավ,—իրևք Թուր իմ ադին գնդրգևց՝
Ըդրան բան չէդավ,
Էդ էլ էն ասկից է,
Ըդնր մե Թուր ի՞նչ բդի էնև։
Էդավ, կանչևց ուր աստվածն,
Հացն ու գինին, Տեր կենդանին,
Ու Թուր Թալևց։
Թալևլուն՝ կդրևց, հորի մեջ .յիջավ, շնդևց,
Էրգու կոնր էրևց,
Մեզ էնդեն .յընդավ, մեզ՝ էնդեն։
Ըսավ.—Յելի՛։
Ժաժ էգավ, տեսավ՝ կդրևր է։
— Ա՛ն,—ըսավ,—քու ադեն էլ քեզի՛։

---

* «Օր կըսեն՝ գնաց Մսրը, Ֆրյան, բևֆան, բդոք մըդի հարգավոր չէ։ Ես ինչ-պես օր լսեր իմ, բդոք կըպադմիմ, բդոք մըդի հարգավոր չին, որովհետև ես բդոք չեմ լսերիս։ Տաճոր վիպասացի։

Բերեցին Գոհարին տվեցին Մհերին։
Հարի էդ ժամանակ կռվու պատրաստություն էր,
էդ ժամանակ էդան հարանավներ,
.Ցելան վերցրեցին Գոհարին ու առան գնացին։
Քևի Թորեսի հետ էդան հասան Սասուն։
Հնքիաթ գառավ Մհերին։
էլ Քևի Թորոսին, բանևրուն՝ բան չկա։

62. Մհերն էր, գնաց, իրեն համար մի չադըր մի զարգեց.
էդ չադրի մեջ կաբրնր։
Աստղիկ Ցոլածին կար, Մհերի .յեղնվեն կըպդրվեր։
Դրա նշանածի անուն Դեղձուն Շամ էր.
Ըսեցին, օր շադ սիրուն է,
Աստղիկ Ցոլածինի պես էլ սիրուն մարդ չկա.
Նա էլ օդապարով կըպդրվվեր։
Գուզեր օր ըղրան բռներ, բայց չըր կրռնե։
Ըսավ.—էրտամ Դեղձուն Շամին քաշիմ բերիմ.
Բըլքի մի կերպ ձեռ էցքիմ։
Գնաց, Դեղձուն Շամին բերեց,
էդան էրգու կնիգ։
Աստղիկ Ցոլածին օդապարով վերևվեն կըպդրվվեր,
Շարունագ Քաս գլխուն էցկուզ էր,
Վերևվեն ինչքան օր կրՔափեր՝
Թասին բան չըր էնե։
էն մեգ օր էլ չադրի .յառեջ կը պդրդեր,
Գոհար տեսավ օր՝ սկսեր է .յերգընքուց Քափել.
էգավ, կայնավ.—Աստղի՛կ Ցոլածի՛ն,—ըսավ,—
Իմ շահ-բալաբան Մհերին խնայե՛,—ըսավ,—
Ի՞նչ գուգիս՝ կիգամ։
— Հե՛յ վախ, հե՛յ,—ըսավ,—ես Մհեր էղնիմ,
Իմ կին .յիգա իմ .յառեջ, ըսե՝
Ինչ գուգիս՝ կիգամ։
Բայց որպես մեղը՝ դերի .յերկինր նետ չըր ըրցե.
Զոքալ ու ըսավ.
— Մեղը էլ էղնի՝ Գոհարի վիզ։
Տվեց, օր տվեց, օդապարու տզից զարգեց,
Սրդից, կըռնըզից դուրս տվեց։
Մեգ էլ օդապարով էգավ, .յիճավ.

Էգավ .յիճավ՝ մեռեր է արդեն.
Աշխարքի մեջ էդպես խորտա մարդ չկար։
Տարան հորեցին։
Էգավ, ըսավ.—Դու օր էս էրեցիր,
Էդ քու մեկ խոսքի համար,—ըսավ,—
Յոթը տարի կէրտամ կատտուն կովիմ,
Յոթ տարուց .յետո նոր պիկամ։
.Յելավ գնաց։

63. .Յելավ գնաց։ Մեկ տարիմ՝, էրգու օր .յընցավ,
Օր կարոտցան, բերեցին, ըսավ.—Արի՛,—ըսավ,—
Ջամաշուր՝ շարիգ-Բումբան, դեղինք, խրզինք էրտա,
Օր հակավ, գ'հիվանդանա,
Կա՛մ մըզի կըկանչի, կա՛մ .յինք պիկա,
Կէրտանք տեսնինք։
Բերեցին էրգուս էդ մուշավարեն էրեցին,
Ջեռք մեկ շարիգ-Բումբան բերեցին, դեղեցին,
Իհարգե, էնպես դեղեցին, օր չըմեռնի,
Օր միան ուրին Բուլ, բան գա՝ հիվանդ,
Խրզին գացին։
Ըզնեք օր հակավ՝ հիվընդցավ։
Հիվընդցավ մի քանի օր, էգավ։
Էգավ, բերեցին դրեցին, շորեր հանեցին,
Լողըցուցին, լվացին՝ լավցավ։
Օր լավցավ, ըսավ.
— Էս ի՞նչ բան էր,—ըսավ,—էս շորեր...
Ըսավ.—Մհե՛ր ջան, բըզի օր շատ կարոտցանք,
Մենք էրեցինք, օր .յիգեր՝ մեր կարոտ առնենք։
— Լա՛վ,—ըսավ։—.Յառավոտ .յելավ, ըսավ,—կէրտա՛մ,
Տասնուչորս տարի կէրտամ կատտուն կովիմ,
Տասնուչորս տարին ըլմի՝ նոր պիկամ։
.Յելավ հնձավ ուր ձին ու գնաց։

64. Գնաց, գնաց մի գեղ, մի տուն խոնախ էդավ.
Մե կին'մ է։
.Յիրգուն խոսացին, ըսավ.—Դու ի՞նչ կէնես։
Ըբը.—Մհե՛ր ջան, ես էս գեղի նախրջու կինն իմ։
— Մարդ .յո՞ւր է։

Ըսավ.—Մարդ չունիմ։
Ըսավ.—Ձրս առնի՞ բնձի։
Ըսավ.—Կառնի՛մ։
Բերեցին որոշեցին՝ առան .յիրար։
Առան .յիրար, մե էրգօր մնաց հոդ,
Պայման էր՝ բդի էրտա, կովի կաւտուն,
Ըսավ.—Ես կէրտա՛մ,
Տասնուչորս տարի կաւտուն կրկովիմ։
Ըսավ.—Եթե բնձի տգա էդա՞վ,
Էս բազբանդ կրկարիս Բևվ, կրխրգիս .յիգա բնձիդ,
Եթե ախճիդ էդավ՝ կրծախիս, կրպայիս,
Մինչի ես .յիգամ։
Օսյաթ էրեց նախրջու կնդան,
Բազբանդ ավեց ու .յեկավ գնաց։
Գնաց։ Գնաց տասչորս տարի կաւտուն կավավ։

65. *Խարար տանք նախրջու կնձջ։*
Տղե մի բերեց տարին Բրմաձդան։
Ուրիշներ տարով մեձրնեն,
Էդի օրով մեձրներ։
Արդեն տղեն էդեր է հասունացած տգա.
Վիր հեղ կրկովի, Մհերի սևրունդն է,
Ջնրգե, կրջարտե, դիկան, կրրոդոթին։
Շատեր լե բիջ կրսին։
Սաղ գեղ բողոքեցին, թե.
— Բիջ բերեր իս, պայեր իս գեղի մեջ։
Էն մեզ օր էգավ, մոր ըսավ.
— Քըզի կրսպանի՛մ,—ըսավ,—ես օր բի՛ջ իմ,
Ըրը դու բնձի բնչի՞ չրս ըսի։
— Ա՛յ տգա, ի՞նչ բիջ, ո՞ր կրսե՝ դու բիջ իս։
— Սաղ գեղ բնձի բիջ կրսին։
— Դու Սասունցի Մհերի տգեն իս։
— Ըրը իմ հերն .յո՞ւր է,—ըսավ։
— Քու հի՛ր,—ըսավ,—կաւտուն գացեր է, կրկովի։
— Ըրը ես հոս ի՞նչ գործ ունիմ։
Բերեց բազբանդ կաբեց տղի Բևվ,
Հակուց, տղեն գնաց։

66. Տղեն գնաց, Մհերի տասնուչորս տարին թըմեր էր,
.Յինք էլ եղ գիկեր։
Տեսավ օր՝ մե երիտասարդ մի, ճամպու հեղ,
Փեղ ձեռ՝ բարի գըզարգն, փեղի գըզարգն,
Խաղալեն գիկա։
Օր էգավ, մոզեցավ.
— Ա՛յ տղա,—ըսավ,—ճամպուց դո՛ւրս արի։
Ըսավ.—Դու ո՞րն իս, օր ընձի գըհրամայիս,—
Ըսավ,—դո՛ւ դուրս արի ճամպուց։
Շատ օր .յիրար չըհասկըցան.
— Հա՛,—ըսավ,—քըզի պայե՛ էգա՛։
Գուրզ Թալեց։ Օր գուրզ Թալեց, զԱրզոնց՝
Տղեն .յընգավ, մեռավ։
Էգավ տղի վրեն.
— Լա՛վ,—ըսավ,—ընձի օր ըսպաննեցիր,
Իմ հոր պաղասխան խմա՞լ բդի տաս։
— Տո՛,—ըսավ,—քու հեր ո՞րն էր։
Ըսավ,—Իմ հեր Սասունցի Մհե՛րն էր։
— Հե՛յ վախ, հե՛յ,—ըսավ,—քու խրգոզի լո՛ւսը քոռնա,
Ես իմ ձեռով,—ըսավ,—իմ տղեն սըբանի՞մ...
Ըսավ.—.Յո՛ւխտ ու պայման էդնի .յատաջի աստուն,
Էրտամ,—ըսավ,—էդ էրգու կնիգ լի սըբանիմ,
Նախրջու կնիգն էլ սպանիմ,
.Յիկամ էրտամ, բանամ՝
.Յո՞ւր է իմ տեխ գ'հասնի...
Գնաց էրգըսին էլ սըբանեց,
Նախրջու կնգան էլ սըբանեց,
Էգավ հեձավ ձին, էգավ։

67. Էգավ. մե խայե մի ռաստ էգավ։
— Է՛յ, աստվա՛ծ,—ըսավ,—իմ բագում մեղաց համար,
Ես իմ Թուր Թալիմ, էս խայեն բացվի,
Ես էրտամ մեջ։
Ու գուրզը զԱրզնց։
Զարգելուն՝ խայեն բացվավ,
Մհերը գնաց էդ խայի մեջ,
Խայի մեջ էլ մնաց։

Մգա՜, մգա՛, դրու ձիու չնո, օր կըշռե՝
Կաթ-կաթ էն խայ֊ից կըթափվի։

68. *Մհևրն հըմգա էդ քարի մեջ,*
Ուր ձիով կըսպասե՝
Մինչի, թե ո՞ր վախտ բդի բացվի,
Օր նորից ֊յելնի,
Կռապաշաններու հետ կռվի։



Սանա Ծոերը

պատմեց
Ապարանցի Երվանդ Հովհաննիսյան
Ապարան-Արայի գյուղ
գրառված է 1972 թ.



Երվանդ Բաղդասարի Հունանյանը ծնվել է 1898 թ. Ապարանի Բազարջուղ (այժմ Աբայի) գյուղում, հողագործի ընտանիքում։ Վաղ մանկությունից զրկվում է ծնողներից և անցնում հորեղբոր խնամքի տակ։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը հոտաղությունն է արել Օշական, Աշտարակ, Մելիքգյուղ (այժմ՝ Մելիք գյուղ Աբազայի շրջանում) գյուղերում։ 1914-ին զորակոչվում է բանակ, ծառայում մինչև 1921 թ.։ 1923-ին ամուսնանում է, կազմում ընտանիք։ Այժմ ունի վեց աղջիկ, երկու տղա։ Տղաներն ապրում ու աշխատում են Երևանում։ 1930—1960 թթ. Երվանդը զբաղվել է օրմնագործությամբ՝ իրենց և հարևան գյուղերում։ 1960 թվականից պահակությունն է անում կոլտնտեսությունում։

Երեք տարի ծառայել է կարմիր բանակում, մասնակցել է Հայրենական պատերազմին, 1943 թ. զորացրվել և վերադարձել է գյուղ։

Վեպը լսել է համագյուղացի հայրենի վիպասաց Բարսեղ Մահակյանից, որը նկատելիորեն (երվանդի ասմամբ) օգտագործում հաճախ է պատմել վեպը։ Բարսեղը մահացել է 1920-ական թթ.։

Երվանդը գրաճանաչ է, գրել-կարդալ սովորել է ինքնուրույն։ Գյուղում հնչակված է իբրև լավ հնքնաիմաց. գիտե բազմաթիվ հեքիաթներ, առակներ, լավ երգիչ է, երգում է ժողովրդական և աշուղական երգեր։

Վեպը պատմում էր շատ արագ, մեզմ, վարժ ու բանիմաց։ Մեկ-մեկ, հատկապես Գավթի ճյուղի չափածո հատվածներում, զգացվում էր Բաղդասյանի պոեմի ազդեցությունը։ Բայց ամբողջ պատումը խիստ ավանդական է և պատկանում է մշո տարբերակների խմբին։

Ե. Հունանյանը վեպը հաճախ է պատմել համագյուղացիներին։ Նա վերջում նշեց, որ Կուպարա Թագավորի անունը եղել է Սենեքերիմ։

Ա.

ՍԱՆԱՍԱՐ ԵՒ ԲԱՂԴԱՍԱՐ

Յաւէջ ժամանակով Արեմտեան կոթաշտ թակաւոր կար.
Ղրան ուներ էրկու տղա՝ Սանասար և Բաղդասար։
Ղրա հերն կազմակերրեց, օր բդի.
— Մենք էրթանք խաշապաշաններու վրեն կռիվ։
Էդ ժամանագ ըդոնք դուս էգան կռիվ։
Օր էգան խաշապաշաններու վրեն կռիվ,
Չկարողացան հաղթել, հաղթվան։
Օր հաղթվան, փոքր ադին մադաղ խանչեց ուր կռքերին.
Իրանց կռքերին մադաղ խանչեց Բաղդասարին,
Օր՝ մեզ էլ էրթանք պատերազմի, հաղթենք։
Իսկ էդ թաբավորի կինը խաշապաշ էր.
Ղրա կինն օր խաշապաշ էր, տղեկներուն սովրըցուց,
Ըսեց Սանասարին.—Քու ախպերըն,—ըսեց.—
Խոստացե, օր բդի մադաղ էնե կռքերուն։
— Ինչ էնիմ,—ըսեց։
Ըբը ըսեց.—Վերցո՛ւ ախպերըդ,
Գնա՛ խաշապաշաններու երդիրը, աբրե՛ր։
Էդ վախտ Սանասարին ու Բաղդասարին նույն գիշեր
Մնողըն հաց թխեց, պատրաստեց իրանց համար պատառ,
Վերցրին ու առան գնացին։

2. Գնացին հասան խաչապաշաններու երկիր։
Հարցուին, Թև.—Մ՞ր երդիկ իր։
Իսկ փոքր տղեն՝ Բաղդասար, հլա փոքր էր,
Ըսեց.—Արեւմտյան կողմից։
— Օ՛, —ըսեց,—էդի կռաբաշաններուց ա, տեղ չիդա՛ր։
Տեղ չավեցին ըդրանց, գացին գոմեր, քնան։
Մանասար Բաղդասարին ըսեց.—Ա՛յ մարդ,
էդ անուն մի՛ առ, էլի՛, քու հաշիվ չէ՛,—
Ըսեց,—օր ուրիշ տեղ էրթանք, ես կըխոսանմ։
էդ օր քնան, .յելան գնացին մի ուրիշ գյուղ։
Գնացին, հարցուին, Թև.—Մ՞ր երդիկ ես։
Թև.—Արեւելքի կողմից ենք։
— Հա՛, —ըսեցին,—ուրեմն խաչապաշա երդիկ ես։
Տեղ ավեցին ըդոնց, հուրասիրեցին,
Կերցուցին, խմցուցին, պատգան քնան։
Ախպեր ըսեց.—Տեսա՞ր,—ըսեց,—ախպե՛ր ջան։
.Յելան էդ տղեկներ գնացին։

3. Գնացին, շատ ու քիչ աստված գինա, գնացին,
Տեսան՝ մի ջաղաչի ջուրը գրկա,
Կրկղրա մի հսկայական ջրի, դանցկենա։
Ըսեց.—Ա՛յ ախպեր, տե՛ս,—ըսեց,—
էս մի քիչ ջուրը,—ըսեց,—տե՛ս ինչքան ուժեղ է,
Օր էս եբա գեղն կղրա, դանցնի։
— Բա ի՞նչ էնենք։
Ըսեց.—Արի՛ հըլը .յեկենինք ըդրա .յագրն։
.Յելան տեսան, օր էսբան ջուր պիկա,
Խառվի ջաղչի ջրին, կղրև ջուրը, գընցնի։
էդ ժամանագ .յելան, յելան .յագրն գդան,
էդտեղ նշան էրին իրանց, օր ուրեմն,
էստեղի մարդիկ ուժեղ կէղնին, զորբա կէղնին։

4. Նրանք .յելան .յօգկի, հարցրեցին, Թև.
— Էս Թակավորը ո՞րդեղ ա։
Ըսին.—Թևավորեա Թակավո՞ր,—ըսին,—Մանրձկերդու
բաղաքն է։

Տղեգներ .յառավոդ գնացին, հարցրին, թե.
— Թևաթորիս թակավոր .յո՞ւր է։
Թե.—Գնացեր է վան, բերդ կըշինա,
Գնաց էնդեղ բերդ շիննելու։
Իրանք՝ տղեգներ, .յընգան թակավորի .յեղեվ։
Թակավորին ուներ մե հատ խեվ ձի,
Ամբերու հետ կրթոններ։
Էդ ժամանագ, ըղրանք օր գնացին հասան վան,
Հարցրին, թե.—.Յո՞ւր գնաց։
Թե.—Գնաց կարուդկեղ, կաղըվան։
Ընդեղից էլի գնացին բամագ.
Վերջ, .յիրիգուն պղղոնցին, էգան էդեղ հասան։
Թակավորն էգավ, նստավ իրա գային,
Սինոսի մարդիկն ըսեցին օր.
— Էրգու նրիտասարդ էգած են, բեղ պրհարցրնեն։
Ըսեց.—Բա .յո՞ւր ին։
Ըսեց.—Չգիդենք։
Մենգ էլ տեսան՝ տղեգներ դուն .յելան,
Մդան, թակավորին գլուխ տվեցին, կայնան։
Թե.—Ո՞նչ տղա իք։
Թե.—Արևելյան կողմից տղա ինք։
Թե.—Բա .յո՞ւր եք։
Թե.—Վա՛լլա, գնացինք բու բամագըն վան,
Վանեն գնացինք Մանըճկերդ,
Էգանք հասանք էտեղ։
Ըսեց.—Շա՛դ լավ։ Ո՞նչ տղա իք։
— Տղա՛ ինք, էլի՛, էգեր ինք, օր բու մոդ ծառայինք։
— Դե՛,—ըսեց,—օր էդպես ա,—մեծ տղին ըսեց,—
Սանասա՛ր, դու մացի՛ իմ մոդ,—
Փոքր տղին տվեց սեյիդ։
Էդ մարդիկ կաշխադեն,
Իրանց համար լավ կաբրեն էդեղ մի ժամանագ։

5. Դե՛, էն վախտ ջրինդ կըխադեն։
Ջրինդ կըխադեն, ձիավորներ սկսեցին ջրինդ խաղալ,
Էն փոքր տղեն հա՛ մդավ նեբս, .յելավ,
Հա՛ մդավ նեբս, .յելավ,

Մեծ ախպեր՝ Սանասար ըսեց.
— Բաղդասա՛ր, ի՞նչն ա նպատակդ ի՝
Ըսեց.—Գուզիմ չրինդ խաղամ։
Հրավիրեցին Քե.—Համեցե՛ք, չրինդ խաղցեք։
— Դե՛, օր,—ըսեց,—էդ տեսագ ա,—ըսեց,—
Դու ամբողջ մի կնդմ էղե՛ք,
Մենք էրգու ախպեր՝ մի կնդմ էղնինք։
Էդ էրգու ախպեր մի կնդմ էգան,
Էդ ժողովուրդն էլ՝ մի կնդմ։
Հնձան ձիան, սկսեցին չրինդ խաղալ.
Շատ խաղցան, շատ քե բիշ,
Էն փիլը տղեն չդայնացավ, սկսեց չրինդ բցել,
Որին ոդ կոդրեց, որին գլոխ կոդրեց, որին քնվ կոդրեց,
Ըդոնք հրմը ձիուց .յրնգան, ախպեր հերսոդավ վրեն, ըսեց.
— Էս ի՞նչ ես անում, թակավորը մըզի կըգնդագահարա։
Դացին. գացին մդան նեբս,
ժողովուրդ գացին թակավորին բողոբին, քե.
— Էս չանավըրնեը էգած ա բատեղ, էս ի՞նչ ա կէնին,—
Ըսեց,—մի օր բու թակավորություն լի բու ձեռնեն կառնին։

Էդ վախտ էն մեծ տղեն սեղան պադրաստեց,
Դնաց թակավորի մոդ, խնդրնց թակավորին.
— Թակավո՛ր արբած կենա՛ք, նեբոդությո՛ւն,
Իմ ախպեր սխալ է էրե։
— Դե՛,—ըսեց,—բախշեցի՛ք։
Մի ժամանագ բդինք մացին։

6. Էն մի օր թալան էգավ,
Ջանեց, էդ թակավորի իլխին տարավ։
Օր տարավ, ժողովուրդ .յրնգան քամագ, ոչ ոք չկըբցավ.
Էդ էրգու տղեն հնձան ձին, գացին,
Ըդոնց չարդնցին՝ էդ հարամիքներուն, դարձրին, բերեցին։
Դարձրին, բերին, էգան թակավորի մոդ, ըսին.
— Թակավո՛ր, օր մի չէ, օր մե քըզի գայից կազագին,
Կըբցին գայից, էս տեսագ ուժեդ...
Տղեղներ լե տեսան, օր ուրընցնն դիլխոր կէղնին,

Ըսեց.—Թակավոր արքաձ կենա՛։
Ըսեց.—Ի՞նչ աւ։
Ըսեց.—Մի տեղ տո՛ւր,—ըսեց,—մեզի շենք շինինք,
էրթանք մեզ համար արքինք։
Ըսեց.—Ո՛րդեղ գուզիր,—ըսեց,—իմ հողի մէջ, գնացե՛ր։
Ըսեց.—Մըզի նշանաբան տեղ կա,—ըսեց,—
կէրթանք ընդեղ շինինք։
Ըսեց.—Գնացե՛ր։ Օրագան մի տնտեսություն ձրդի հաց
կիդա։

7. էդ մարդիկ գնացին էդ .յախպրի վրեն, օր կար,
էդտեղ սկսեցին իրանց համար շենք շաբել։
Շե՛նք, էն տեսակ շենք շարին, օր չըտեսնված։
Մի տաս-քսան հազ էլ առանձին շենքեր շարեցին,
Մի հարուր հազ շարին, պրծան, ըսեց.
— Գնա՛, թակավորին ըսա, գա՛,
Մեր գյուղին անուն դնե։
Գնացին թակավորին խանչեցին, թե.
— Թակավոր արքաձ կենա՛,—փոքր տղեն գնաց,—
Իմ ախպեր կըսա, գա՛, մեր գյուղին անուն դնա։
էգավ թակավոր, տեսավ. տեսավ ի՛նչ,
Եքա խայա քարեր գրուգ վըր .յիրար,
Օր ըսկի քսան գմեշ չըկոնա քաշե։
Ըսեց.—Ա՛յ մարդ,—ըսեց,—ի՞նչ անուն դնիմ,
Սուն վըր սան՝ Սասուն։
Անուն դրեց Սասուն։
Անուն դրեց Սասուն, ըդոնք էդտեղ արքան ժամանագ մի,
Մնաց, ամեդ գյուղից մի տնտեսություն խրգեց ըդոնդ,
էգավ գյուղ։

8. Օր էգավ գյուղ, .յօրագան կէրթեն մեզի տուն, հաց կուդեն։
Ըսեց.—Ախպե՛ր, ըսենց բան չէղնի,—
Մեձ ախպեր ըսեց Բաղդասարին, ըսեց.
— Գնա, թակավորին ըսա՛,
Օր մըզի մի հազ հացքուխ տա։
.Յելավ փոքր տղեն գնաց, թակավորին ըսեց, օր.

— Թակավոր արյած կենա՛, մըզի մի հադ հացթուխ տո՛։
— Հը՛մ,—ըսեց,—ուրեմն, կին ա ուզե, էլի՛։
Դի՛, շադ լավ,—ըսեց։
Կանչեց ուրունի Թորոսին, ըսեց.
— Քեռի Թորո՛ս։
Ըսեց.—Ի՞նչ ա։
Ըսեց.—Էս իմ ախճիկըն կդամ,—ըսեց,—
Տանիս, կդաս էդ տղին, որպես իրան կին,
Դու էլ կըմնաս ընդեղ,
Դու էլ կըմնաս որպես խնգավար։
.Յեկավ Քեռի Թորոս, վերցուց ախճիկըն էդավ.
Տվեց, ըսեց.—Ահա՛, էս էլ քեզի հացթուխ,
Թակավորի ախճիկն է, նվիրինք բըզի։
Տղին բերին ամուսնացրին,
Հարսնիք էրին յոթ օր, յոթ գիշեր։

9. Դրանից հետո փոքր տղեն անջատ բնակ էս հատ,
Ախպերներեր .յիրար հետ կըբնեն։
Մեզ օր, էրգօր, իրեք օր, մի ամիս,
Տեսավ՝ ախպերք քանի կէրթա՝ եդ կէրթա,
Հա՛ գըզբնի, հա՛ գըզբնի։
— Ա՛յ ախպեր, էս ի՞նչ բան է։
Էն մեզ օր ըսեց, օր.
— Ա՛յ ախպեր, ի՞նչ գըհարցուս,—ըսեց,—
Գիշեր չուր լուս էս մեր էդ անիծուզ կոքեր,—ըսեց,—
Իմ փորու վրեն կըխաղան։
— Շա՛դ լավ,—ըսեց,—օր էդ տնասագ ա,
Քեզի մե խրատ կդամ.—
Ըսեց,—կէրթա՛ս,—ըսեց,—կոքերուն բրդիս,
Կրադ գըլնաս, գըվառիս ու կրսիս.
«Որն օր իմ աստվածե կըպաշտա,
Կրդառնա խաչապաշտ՝ չըմ բսպանի,
Չէ՝ բոլորիդ սրի գըբաշխիմ»։

10. .Յեկավ փոքր տղեն,
Իրա քարն էր, խանչալն էր կաբից վրեն, գնաց։

Որ գնաց, հերըն տեսավ.
— Ահա՛ն,—ըսեց,—տեսա՞ք,
Մեր կոքեր իմալ բերեցին իմ տղին։
Կըսեք՝ տղեդ փախցուցեր իս, օր ինչ ա, մադաղ չէնիս,
Տեսա՞ր, իմալ էգավ. էգա՞ր, որդի՛։
Ըսեց.—էգեր իմ, հայրի՛դ,—ըսեց,—
էգեր իմ, օր մադաղ էնիս ընձի։
— Լա՛վ,—ըսեց,—.յելի էրթանք .յառավոդ կոթատուն,
Ադոթինք, .յերդըրպակութուն տանք,
Որ բրգի մադաղ էնիմ, ընդունելի էղնի։
Ըսեց.—Հա՛։
.Յելան գնացին կոթատուն,
Կոթատան տանիք էլ բավագանին խոդ կար,
Հերըն .յելավ, բլցրեց դեղին, էդ կոքերու դեմն
Ու .յինքըն թուրըն քաշեց։
Էն վախտ օր քաշեր, կոքեր ձեն գըհանեն, էլի՛.
Ձեն գըհանին, հերըն գլոխ կըբանձրցուցեր, շիդգեր։
Վերջ, էրգու-իրեք .յանգամ օր կղավ, էլ չըխնայեց,
Քցեց թուր, հոր գլուխ կդրեց
Ու .յելավ, ինչքան օր խոդ կար,
Բերեց, լցեց կոթատուն։
Ժողովուրդ ըսին.—Հըլը տեսնե՛ր, ի՛նչ ա կէնա,
Կոթատուն ինչ ա կէնա, էս ի՛նչ ա կէնա։
Կրագ տվեց, վառեց։
Կրագ տվեց վառեց, խժխժուն .յընգավ էդտեղ,
Թուր քաշեց, .յելավ, ըսեց.
— Ով օր իմ աստվաձ կըպաշտա՛,—ըսեց,—
Թո՛ղ,—ըսեց,—ձեն չըհանա,
Իմ ծրագրին թող գա,—ըսեց,—իմ աստվաձ պաշտող.—
Ըսեց,—ով օր աստվաձ չըպաշտա՝
.Յըմնուդ գլոխ կըղանի՛մ։
Ըսին.—Լա՛վ, ի՛նչ աստվաձ դու կըպաշտիս,
Էն էլ մենք կըպաշտինք։
Էդ ժամանագ էդ տղեն ագադվավ։
Էդտեղ իրա թակավորութուն տիրեց,
Սկսեց խաչապաշտութուն էնել, աստվաձ պաշտել,
Ու սկսեցին դրանք էդտեղ արբել։
Մենք դառնանք Սանասարի վրեն։

Բ

Մեծ Մհեր

11. Մանասարն օր ամուսնացավ,
Ղրբանից մի հազ տղա էդավ,
Անուն դրեցին Մհեր։
Իսկ բդրա ծնվելու ժամանագ, բդրա ափներն օր բացին,
Ձրն կրանե բանե, տադմեր չբր կրանե բանե,
Հորբն խանչեցին, էդավ, հազիվ բացեց,
Ըսեց.—Վա՛յ, քու տուն շիքվի՛,
Ինչքան արընքառեր բդի էդնիս։
Արուն լերդել էր էս մադներու արանր։
Ղրբան բերեցին անուն դրեցին Մհեր։

12. Մի ժամանագ մնաց, Մհեր մեծբցավ.
Մեծբցավ, գնաց իրան համար, ճապաղջուր կար, Ծովասար կար,
Էդանդ բերդ սարբեց, վանք կար, էդ վանքն էլ կառուցեց,
Իրա համար պադրաստեց, հասար քաշեց։
Ամեն տարի կէրթեր, ավ կրգաներ, կրբերեր,
Կրբերեր, բաժաներ գյուղացինց վրեն։

13. Մնաց օր, Մհերն կէրթեր Մսըր։
Մսըր կէրթեր, Մսրա խալիֆա կար,
Էդ խալիֆեն մահացեր էր,
Մհերն բդրա կնգա հետ նիստուկաց ունեցավ։
Ղրբրնե էդավ մի հազ ախճիգ, մի հազ էլ տղա.
Տղի անուն Մսրա Մելիք դրեցին,
Իսկ ախճգա անուն, թե ինչ դրեցին, էդ էլ չգիդեմ,
Անուն չկա ընդրան, մոռցեր իմ։

14. Մհերին Ցռան վեբեվ անունով մի հազ էլ տղա ուներ.
Շազ վախկոտ էր, ուժեղ էր, բայց վախկոտ էր։
Ըսեց.—Ա՛խր, իմ մրհանալուց .յեդո
Իդա երգիր ո՞վ բդի տիրե,—ըսեց.—
Ուրիշ դիկա տիրա, մեր Սասուն կավիրա։
Իմ մեռնելուց .յեդո,—ըսեց,—էս ո՞վ բդի տիրա։

Շատ .ինք ու կին ոդաձևցին, լացին,
Իր ձեն հասավ աստծուն։
Ընդեղից ձեն ավեց, բանց.
— Մհե՛ր, Մհե՛ր, քեզ մի տղա կրնի,—բանց,—
Բայց էն ժամանակ,—բանց,—
Դու էլ կրմեռնիս, քու կինն էլ կրմեռնի։
Բանց.—Ո՛ղ ասաված ընձի տղա տա, օր երգիր տիրա,
Էն վախտ քոզ իմ կինն էլ մեռնի, ես էլ մեռնիմ։
Էգ մարդ էգ տեսագ խոստացավ,
Ին ամիս, ին ժամ բմավ,
Պառգավ, բերեց մի հաղ տղա,
Անուն դրին Դավիթ։
Էգ վախտ ինք էլ մահացավ, կին լև մահացավ։

Գ

Դ Ա Վ Ի Թ

15. Իսկ Քեռի Թորոս վերցուց տղին,
Տարավ տվեց Մարա Մելիքի մորքն,
Բանց օր.—Էս տղին պայ՛։
Տարավ պայեց տղեն, յոթ տարի պայեց։
Յոթ տարին օր լրացավ,
Քեռի Թորոս գնաց, վերցուց, առավ էգավ։
Առավ էգավ, տղին օր բերեց,
Էգ Քեռի Թորոսի կնիգ բանց.
— Ա՛յ հողեր տամ վրեդ,—բանց,—
Ի՞նչ է կէնիս,—բանց,—
Քերեր իս սրբի որբերուն տուն պատապ-սարապ պտորցուցեր
—բանց.—
Դու բդրան իրք կէնիս։
Իսկ Դավիթ լև տուն չբր .իգեն.
Դավիթ լև, մի հաղ Պառավ կար,
Կէրթեր, իրան համար ժանդիղ բան վերցներ,
Բան գրհաներ, բանջար-բան գրհաներ,
Գիկներ, էրգեն էգ Պառվու տունըն կրպատգներ։

16. Մնաց օր, Մսրա Մելիքն օր արդևն հասունացավ,
.Յելավ էգավ Սասուն։
Սասուն էգավ Քևռի Թորոսի մոդ, օր.
— Բդի՝ խաբջատուր էղնիք,
Ձեր երգիր բդի հանձնիք ընձի,
Ամբողջ ձբր Սասուն բդի գա, իմ Քրի տրգով .լընցնի,
Օր բոլորդի լուսուն գնիք չտանիք մբր դեմ։
Է՛, խեղջ Թորոս լսեց, բսեց.
— Շա՛դ լավ։ Բայց մբդի,—բսեց,—
Լավ .յաշկով իշկա ու մբդի վնաս չիգաս։
Բսեց.—Ձէ՛։
Ասնչեց բերեց, ինչբան օր Սասուն ժողովուրդ կար,
էգան, Քրի տրգով .լընցան։
Բայց Դավիթին ինչ էրին-չէրին,
Դավիթ չէգավ, չէգավ մոդ։
Բրդեցին, բսին.
— Ա՛յ մարդ, գնա՛, Քրի տրգով .լընցի՛։
Բսեց.—Քևռի Թորո՛ս,—բսեց,—
Իգա գընգնի իմ վզին,—բսեց,—չը՛մ էրթա։
Բրդեցին, օր բրդին,
Ճգուտն առավ մի քարի, կայծագ Ըռավ։
Կայծագ օր Ըռավ, տղեն Ըռավ, .լընցավ էն յան։
Մսրա Մելիք մեծերուն բսեց.
— Էս փոքր տղեն ես պետք է սրբանիմ։
Բսին.—Ա՛յ Մսրա Մելիք, դու էդբան ուժեղ, էդբան հակա,
Էս մի փոքր ի՞նչ բդի էնա քրդի։
Բսեց.—Էս օրը վկա, սրանից գրկա,
Ինչ փորձանք գա իմ գլոխ՝ սրանից գրկա,—բսեց։
Ու գնացին բդինք։

17. Բդինք գնացին, բերեցին Դավիթին տվեցին գառնարած։
Տեսան, օր իլլաջ չկա, բերին տվին գառնարած։
Օր տվին գառնարած, գառներ օր քշեց հանեց Սասման սարեր,
Սկսեց երգել.—Սասման սարեր, ջա՛ն սարեր,
Ձեր հովին մեռնեմ։
Ու բոռաց։ Օր բոռաց, ինչբան օր գել ու գազան կար,
Սարերուց .լելան ու փախան։

.Յընգամ .յեղեվ ուրանց,
Էս յան վազավ, էն յան վազավ,
Բոլո՛ր բերից, խառնից գառներուն։
Օր բերից խառնից գառներուն, բշից .յիրգուն բերից։
Տեսան օր՝ էլ գիլու ձեն ու էլ աղվբուս ձեն
Ու էլ առջի ձեն՝ կրռալեն գիկան.
.Յրմեն փախան, լցվան ներս։
Փախան, լցվան ներս, գացին Քեռի Թորոսին բսին.
— Ա՛յ մարդ, իդա օր բերեր ես, էրեր ես գառնարած,
Ո՛չ գառ կըշոդի, ո՛չ գել, ո՛չ գազան,
Մենք իմո՞ղ էնինք։

Էգամ, կայնամ մեյդան, ձեն տվից.
— Հե՛յ, գառնատե՛ր, հե՛յ, ուլատե՛ր,
Ով մինն ունի՝ տասն եմ բերե,
Ով տաս ունի՝ քսան եմ բերե։
Ըզմենք ոչ ոք .յախտս դուրս չելան,
.Յինք լե գլոխ գրեց չոր քարի վրեն
Ու էդ մեյդան պառգավ գառներու գիմաց։
Սաբախատան Քեռի Թորո՞ս .յելավ էգավ,
Ասից.—Քեռի Թորո՞ս, մոդ մի՛ արի,—ըսից,—
Էս բոզ ուլերըն,—ըսից,—շադ չար ին, կըփախչին։
Աղվբաներ, էլի. մեզ հադ փախավ,
Գնաց գոռով, գանից, սադդրցուց։
Ըսից.—Դավի՛թ, գլխուդ-արիվուդ մեռնի՛մ,—ըսից,—
Ըզմենք,—ըսից,—քիչ՛ ղ, քրխ էքան,—ըսից,—
Քու հաշիվ չէ՛,
Մենք գիկանք, մեր գառ ու ուլ կըշոդինք։
Ըսից.—Դու գիդաք։
Օր հեռացավ Դավիթ, ըզրանք .յրմեն փախան գացին։
Էգան, ամեզ ուր գառներ ջոգին, տարան, բսին.
— Քեռի Թորո՞ս, դու էզնիս՝ քու աստվա՛ծ,
Ըզրան գի՛ր ուրիշ գորձի,
Էս տեսագ բան չէզնի,—ըսից,—
Մեր գեղ օր մի Թամուզ գաղաններով վերջ կիդա։

18. Քեռից տվից հորքարած։
Դավիթին օր տվից հորքարած,

Դավիթ հորթևր քշեց, հանեց սար,
Տեսավ, օր էն գյուղից մի հազ հորթաբաձ էգավ,
Ուր հորթևր թողեց, վազավ, գնաց ընդրա մոդ,
Ըսեց.—Բարև, քեռի՛։
Ըսեց.—Ա՛ստու բարին։
Ըսեց.—Քեռի՛, դո՞ւ լև հորթաբաձ խս։
Ըսեց.—Հա՛, Դավի՛թ ջան։
Ըսեց.—Քեռի՛, օր հըմալ ս, օր դու հորթաբաձ խս,—ըսեց,—
Ես քնիմ, իմ հորթևր լև դու պահա՛։
— Հա՛,—ըսեց,—Դավի՛թ ջան,—
Դավիթի անուն լսեր էր, ա՛խր,—հա՛,—ըսեց,—
Դու քնի՛, ես կըպայիմ։
Շաբաթ մի, էրդու, իրեք պայեց,
էն մեգ օր քեռին եդրցեր էր,
Ըսենց Սըփ խաչի օր էր, էլի՛*,
Դավիթ հա՛ գնաց, իշկեց, տեսավ՝ քեռին չկա.
Տեսավ, օր հանդա՛, .յո՛ւշ-.յուշ էգավ։
— Տո՛, քեռի՛, ը՞նչ էր .յուշըցեր։
— Տո՛, Դավի՛թ, գլխուդ-արեվուդ մեռնիմ,
.Յըսօր մեռելնց էր, գուգներ փշու մի հրբիսա ուդներ,
Մեր գերեզմըներ հրբիսա են բերած,
Օր եդրցա, քու համար հրբիսա...
— Տո՛,—ըսաց,—օր հըմալ ս,
Դու հորթևր պահա՛, ես հասնիմ, բերիմ։
Գնաց, տեսավ, օր հանդա՛, գերեզմըներ,
Մեն-մեն բըղդըներով հրբիսա ս բերած դրած.
էդ ժամանագ վերցուց մե հազ գոսյալ,
Քցեց մեգի կանթրն ու սկսեց քելել։
Մի պառավ ըսեց.—Յամա՛ն, տարա՛վ։
Ըսին.—Սո՛ւս, տո՛ անպետաբ, .յաբեննախերն ս,
Սասունցի ծուռ Դավիթն ս,
Խելագար ս ըդի, քեղ, քը՛ր տանա ուդա։
Առավ, էգավ։
Ըդ էրեքլուց .յեդո, մի շաղ էլ անձրև ս բալև,
Հարսմիք էգած են էն յանեն, զանձած են

* Պատումի գրանցման օրը (1972 թ. սեպտեմբերի 16) Սուրբ Խաչի տաճն էր։ Վիպասացը նկատի ունի այդ իրական տխտական օրը, որ համընկնում էր պատումի հիշյալ դրվագին։ Տես. բանահավաքենեի։

Խուֆարա բիձու հորթեր ու տարած են.
Բիձեն նատե, գիլա։
Էգավ, ըսեց.—Ինչի՞ գիլաս,
Արի՛,—ըսեց,—ճաշ ուդինք։
— *Տո՛,—ըսեց,—հորթերն է տարած,*
Գլխո՛ւդ-արևուդ մեռնիմ, Դավի՛թ։
Ըսեց.—Քու տո՛ւն շիքվի,
Յիրգուն կէրթանք, աղն ու եղ լն վրեն կուդինք,
Արի՛, ճաշ ուդինք։
Հա՛, շերեփ վերցուց ու սկսեց ուղել,
Կուշտ կերավ, պրծավ, ըսեց.
— *Քեռի՛, ի՞նչ ա կըսես։*
Ըսեց.—Քու հորո՛ւն մեռնիմ,—ըսեց,—
Հարամիք էգան, դանեցին իմ հորթեր տարան,—ըսեց,—
Իմ կոտ կորկըն կըկդրին,—ըսեց,—ես իմա՞լ էնիմ։
— *Վա՛յ, վա՛յ,—ըսեց,—դե՛, օր հըմալ ա,*
Դու հորթերուն մուղաթ կացե։ Դի՞ր գնացին։
Ըսեց.—Իգըն կերևավ, շաղ մը անձրև թալեց, իզ կերևավ։
Ըսեց.—Դե՛, հորթերուն մուղաթ կա՛ց։
Էն հորթերուն մուղաթ կացավ։
Գնաց, տեսավ օր, հանդե՛,
Էս մեր Խարաբա խանն օր կա՞,
Ըդննց պես, ըդեղ գեղ կա,
Էդ գեղի մոդըն հորթեր մորթած, լցած պղինձ,
Իրեք-չորս կանթինեն մեծ պղինձ մի,
Ուրանք լն պատգամ կշտներ։
— *Տո՛,—ըսեց,—ես ձըր ֆլա՛ն ու բնֆա՛ն,*
Ը՞նչ իր էդ հորթեր բերի։
—*Յեկե՛ք, ըդրա վիզ կդրե՛ք։*
Էն մեզը տեխից յեկավ. օր յեկավ,
Քառասուն հոդի են, քառասունի վիզն էլ գոպըլով Քռուց։
Քռուց, ինչ կերավ՝ կերավ, մխսրն դարդրգեց,
Խազան վերուց, ինչ օր կաշի կար, լցեց խազան
Ու թալեց Քնվրն, էգավ։
Էգավ, օր հըլա գերեզմրներն ին,

---

* Վիպասացը նկատի ունի Ապարանի շրջանի Խարաբա խան կոչված ավերակները, Տաճ. բանահավաքներ։

Պղինձ ափեց գեղին, ըսեց.
— Արե՛ք, ամեցդի ձեր հորթերու կաշին դո՛ղ ք,—ըսեց,—
Հըդա՛ պղինձ լե ձըր հորթերու տեղ,
Իմ քեռուն,—ըսեց,—եթե մի հադ կոդ կորնգ կդրեր իր,
Զըր .յըմնու գլոխ կդրիմ։
— Տո՛,—ըսին,—Դավի՛թ, գլխո՛ւդ-արեւուդ մեռնիմ,
Իդա պղինձըն մըր հըրիր հորթերդու տեղ հըլա՛ շատ ա։
Ու .յինք թողեց, նորից դարձավ գնաց։
19. Գնաց, էդտեղ շուռ էգավ, մդավ մի հադ գազա,
Տեսավ օր՝ մի յան օսկի ա դիզուդ, մի յան արծաթ ա,
Տեսավ օր՝ մի հադ էլ ձի կա էդտեղ։
Ըսեց.—«Քեռի՛,—ուրին-ուրին կըսե, էլի,—
Քեռի՛,—ըսեց,—իդա սըլիդ-պըլիդ .յըմեն բըզի,
Իդա չանավար ընձի։
Սըլիդ-պըլիդ,—ըսեց,—.յըմեն բըզի,
Իդա չանավար ընձի»—ու գարձավ էգավ։
էգավ, .յիրգըվա յան էր, հորթեր շուդ բշեց,
Քշեց ու կըգամըրա հորթըդուն,
Կըդանա, վիզ կըճուռ։
Քեռի Բորյա տեսավ, օր Դավիթ չդայնացեր ա, ազար բռնե։
Ըսին.—.Յելի՛, Քեռի Բորյո՛ս, .յելի՛ տես՝ Դավիթ ինչ կէնա։
Քեռի Բորյոսըն .յելավ. .յելավ.
— Տո՛, Դավի՛թ, էդ ի՞նչ ա կէնիս,
Գլխո՛ւդ-արեւուդ մեռնիմ։
Ըսեց.—Քեռի՛,—ըսեց,—սըլիդ-պըլիդ .յըմեն բըզի,
Իդա չանավար ընձի։
Ըսեց.—Հա՛, հա՛, հա՛,—ըսեց,—չանավար լե բըզի,
Սըլիդ-պըլիդ լե բըզի,—բսավ,—բո՛լ է զանիս։
Բերեց հորթեր, ամեց իրա հորթիդ տարավ, տեղավորեց։
Գնաց տուն, մութըն ավեց, էս վախտ, ըսեց.
— .Յելե՛ք,—ըսեց։
Ըսեց.—.Յելե՛ք,—ըսեց,—ծուռըն բան մի տեսեր է։
Վերցուց Յոան Վերնվըն, Զինով Յովան, Ճնճղափորըդի,
Ըդոնք .յըմեն դնվեք վերցին, գացին։
Գացին, հասան էդտեղ, .յինք փշու մի եդ էր .յընգե,
Օր .յելան էդտեղ, տեսան օր՝
Քառասուն հադ պառդուդ ին էդտեղ.

— Տո՛,—Յոան վեքիլ ըսեց,—Քեռի Իորի՞ս, դառցի՛, փախնինք,
էս շան տղա ծուռ,—ըսեց,—մըզի բերեց,
Մգա հարամիք գելնին, մըզի կըսպանին,—ըսեց,—
էդ ի՞նչ ա կէնա՝
էգան, էգավ հասավ, ըսեց.
— էդ ի՞նչ աւ
Ըսեց.—Շա՛ն տղա, բերեր ես,
Իդա հարամիք գելնին, մըզի կըսպանին՝
— Տո՛,—ըսեց,—կայնե՛ք էդտեղ՝
Գնաց, .յըմեն չանդրդներ գոպլով հոլընդեց, Յալեց չուր,
Ըսեց,—Ալե՛ք՝
էգան, գացին՝ Ղոնը սկսեցին օսկին .յըլնալ,
Էնի Քուռդի Ջալդին սկսեց Թիմարել՝
Քուռդի Ջալդին Թիմարեց, ըսեց.
— Քեռի՛,—ըսեց,—սըլիդ-պըլիդ բըդի, իդա ընձի՝
Ըսեց.—Հա՛, հա՛, Դավի՛թ չան,
Դլխո՛ւդ-արևուդ մեռնիմ, էդի բըդի՝
էդ Քուռդի Ջալդուն բերեց, սկսեց պայել՝

20. Իսկ .յինք ի՞նչ կէնե.
էդ ձին գ'հեձնա, կըպդդա,
.Յիրգուն գիկա, էդ Պառվու Թունդրա շուրի կըբնի՝
Մեզ օր, էրգօր, իրեք օր...
Էն մեզ օր կէրթա Պառվու բոստան կըմդնի,
Շըխալդով շախկամ կըբանդա՝
Պառավն էգավ, տեսավ.
— Տո՛,—ըսեց,—Դավի՛թ, հողըս բու գլխի՛ն,—
Ըսեց,—յոթ հազ ախճիգ ունիմ, էդ շախկամն է,—ըսեց,—
Դու Թողեր իս Ծովասարն ու Ճապաղջուր,—ըսեց,—
Էգեր իս, շախկամ է կուդիս,—ըսեց,—իմ վիզ գանեցիր՝
— Ի՞նչ Ծովասար ու Ճապաղջուր,—ըսեց,—
Մայրի՛գ,—ըսեց,—ես չըմ լսե,
Ծովասարն ու Ճապաղջուր ո՞րն աւ
Ըսեց.—Հողեր գլխո՛ւդ,—ըսեց,—
Դու էն հոր տղե՞ն բդի էղնիս,—ըսեց,—
Մարա Մելիք էգե, բու Ֆլան-բեհան հըմլա էրե,
Հա՛մ Ծովասարն ա տիրե,—ըսեց,—հա՛մ էլ՝ Ճապաղջուր՝

Ըսեց.—Մայրի՛ դ,—ըսեց,—ես փոքր իմ,
Չեմ հասկանա,—ըսեց,—էդ ի՞նչ ես ասում։
Ըսեց.—Բա՛, Մսրա Մելիքն ա էգն,—ըսեց,—
Քու հոր իրքըն տիրեր ա։
Ըսեց.—Բա՛ իմա՞լ էնիմ։
Ըսեց.—Ես ինչ օր կրսիմ, դու էրա։
Պառավըն սովրըցուց, ըսեց.
— Ճապաղչուրն օր կա,—ըսեց,—ընդեղ էլ գիկա, դանա։
Կէրթաս,—ըսեց,—յոթ տարվա խարաչ գուգիս։
Ընդոնք բերին, բրգի փալաս-մալաս կիդան, չըվերցո՛ւս,
Մի էրգու-իրեք գառ կիդան, չըվերցո՛ւս,
Յոթ տարվա խարչ գուգիս։
Ըսեց.—Շա՛դ լավ։

21. *Լսեց ըղրան, .յելավ գոմպալ վերուց, գնաց։*
Գնաց, բարև ավեց, բարևն առան,
Մեձամեձներ էգան, տեսան, օր արդին Դավիթին ա.
— Հա՛, ի՞նչ ա, Դավի՛թ, գլխո՛ւդ-արևուդ մեռնիմ։
— Մրգի յոթ տարվա խարչ իր տալիք,
.Յելի՛ր բերեք, տվեք։
Մեդ գնաց փալաս բերեց, մեդ խալի բերեց, մեդ օչխար բերեց։
Ըսեց.—Չէ՛, յոթ տարվա խարչ րգի տաք։
Բռնեց յոթ տարվա խարաչ առավ ըղրնցնեն։
Օր առավ ըղրնցնեն, բերեց, լցեց Քեռի Թորոսի ամբար։
Քեռի Թորոս ըսեց.—Ա՛յ քու առն շիրվի՛ր, ի՞նչ էրիր,
Լուսուն մենք Մսրա Մելիքի պադասխան կիդա՞նք։
Ըսեց.—Մսրա Մելիքը ի՞նչ հաշիվ ունի մեր հողին,
Իմ հոր հնդն ա, ես իմ տիրելու,
.Յինքն ո՞վ ա։
Էդ ժամանակ մնաց, էլրն գնաց։
Գացին, Մսրա Մելիքին խաբար տվեցին, թե.
— Դավիթըն գացեր է, ճապաղչուրըն քարուքանդ է էրեն,
Յոթ տարվա խարչըն տարեն։
Ըսեց.—Լա՛վ, տարե՝ տարեն։

22. *Մնաց էն մեդ օրըն էլի գնաց Պառվու բոստան, սկսեց քանդել։*

Պառավ ըսեց.—Տո՛, Դավիթ,—ըսեց,—հորի՛մ զլոխդ,
էն հոր տղե՞ն բդի էղնիս։
Սովասար՝ տարեգան քու հերըն հազար հաղ նեճիր կըզաներ, բերեր,
Ամեգ անտեսության յոթ հաղ կիզեր,—ըսեց.—
Դու Թողեր իս Սովասար, էղեր իս,
Լո՞ր կըզանիս իմ արտի մեջ։
Ըսեց.—Մայրի՛դ, էդ ես չըդիդեմ, ո՞րտեղ ա։
Ըսեց.—Գնա՛, Քեռի Թորոսին բսա։
Գնաց, խանչեց Քեռի Թորոսին, ըսեց.
— Քեռի Թորո՛ս։
Ըսեց.—Ի՞նչ ա։
Ըսեց.—Իմ հորըն, որսասար է էղե,
Ո՞րտեղ ա,—ըսեց,—տա՛ր, ընձի տու նշան։
Ըսեց.—Ա՛յ որդի, էն էյ գնաց մեր ձևնի՛ց,
Քու հերն էլ գնա՛ց,—ըսեց.—ի՞նչ որսասար։
Մարա Մելիք գիմանա, գիկա, մեզ կըսբրանա,
Մեր երդիր բարութանդ կէնա։
Ըսեց.—Մարա Մելիքն ո՞վ ա,
Օր գա, իմ հոր երդրին տիրություն էնա։
Իմ հոր երդրին ա, ես եմ տիրելու,—ըսեց.—
Յելի՛, շուտ ընձի տար իմ հոր որսասար։
Ըսեց.—Ա՛յ որդի, էնի մեր բուրջեր քանդած,
Քարութանդ էրած...
— Չէ՛,—ըսեց,—տա՛ր։
Վերցուց տարավ։
Տեսավ, օ՛, յըմեն քարութանդ էրուդ է բուրջեր։
Ըսեց.—Բդի՛ բերես, սարքել տաս։
Ժողովրդին բերեց, սկսեց սարքել։

Բայց յինք բնուդ էր.
Տեսավ, օր հոր վանք չե քանդուդ ա,
Տեսավ, գիշեր էդ վանքից լուս կըբանձրանա, ցածրընա,
Կըբանձրանա, ցածրընա։
Ըսեց.—Հորեղբա՛յր։
Ըսեց.—Ի՞նչ է։
Ըսեց.—էն ի՞նչ լուս է, օր էնտեղից կըբանձրանա, ցածրընա։
— էնի,—ըսեց,—քու հոր վանքն է։

Քու հեր,—ըսեց,—միշտ գիկեր, էնդեղ աղոթք կէներ,
Նոր կէրթեր պատերազմի։
Ըսեց.—էդ վանքըն բդի կառուցինք։
Ըսեց.—Լա՛վ։
Գնացին։ Ինչքան օր վանքըն կըշարեն, կըբանծըրնա,
.Յառավոդ գէնին՝ քանդուդ է։
Ըսեց.—Քանդե՛ք հըմիցյ։
Քանդեցին, մեռնի՛մ ուր սուրբ հրաշքին,
Մի հաղ Սուրբ Նիշան գուրս էգավ,
Համբուրեց, դրեց ծոց։
Դրեց ծոց էդ Նիշան,
էդ ժամանակ Դավիթըն հրաման ավեց, շարեցին,
Շարեցին, հոր վանքըն կառուցեց,
Պատարաք էրեց մեջ, պրծավ,
Ամբողջ բուրդեր կառուցեց, էգավ։

23. *Խաթար տարան Մարա Մելիքին, քև.*
— Քու տուն շիքվի՛, Դավիթ իշխան է գառե,
Հոր բերդն է տարբեր ա,
Բուրջըն, ճամպաղջուր լե էնդեղ։
Կանչեց Կուզբատին ու Զալխադին, ըսեց.
— Գնացե՛ք, Սասուն բարուբանդ էրե՛ք,
Իմ յոթ տարվա խաթաջ .յուզեցե՛ք, բերե՛ք,
Քանդե՛ք, ավիրե՛ք, արե՛ք։
Ղո՞ներ օր .յեյան .յիգեն զորքով, ըսեց.
— Շա՛դ լավ, գլխիս վրեն, տե՛ր։
.Յելավ .յիգեր, կնդիրք տեսան,
Օր Կուզբատին ու Զալխադին գիկեն,
Մատ զանին, սկսեցին ուրխրնալ։

— Մեր Կուզբատին կէրթա Սասուն,
Կանայք բերա քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով դեղին ոսկի,
Տեղը ջնջե հայոց ասկի.
Եղներ կըբերա լծկան,
Կովեր լե կըբերա կթան։
Ջա՛ն Կուզբատի, քա՛ջ Կուզբատի,
Սասունցի Դավիթին զարգես գետին։

Կըսա.—Ձեն ձըղի կդրե՛ք,
Եփ օր բերեցի, էն վախտ ըսեր։

24. .Յեվան էգան։
Էգան, գացին Քեռի Թորոսի մոդ, ըսին.
— Քեռի Թորո՛ս, էս յոթ տարվա խաթաջ կըդաս՝ տո՛ւր,
Չէ՛, Մարա Մելիքըն գըկա, երգիրդի քարութանդ կէնա։
Էդ վախտ Քեռի Թորոսըն խանչից, ըսեց.
— Աբե՛ք,—ըսեց,—արե՛ք, յոթ տարվա խաթաջ տամ։
Քառասուն ախճիղ ջոդեց արմադան,
Քառասուն կաճ, օր էրդանք տդան,
Քառասուն երգար էլ՝ ուղդեր բառնան,
Մարա Մելիքին խաթավաշ դառնան։
Էդոնք ջոդեց, .յըմեն էրեց մարադ։
Հեդո էգավ, օսկին կըչափեր...
Դավիթըն գնաց, մդավ Պառավու շախկամի մեջ։
Պառավն էգավ, ըսեց.—Դավի՛թ,—ըսեց,—
Հոդըս տա՛մ գլխիդ, էս ի՞նչ ես անում.
Մարա Մելիք էգեր ա, քու հոր կարողություն ա կըտանա,
Քու երգիրն ա կըթալնա,
Լավ-լավ ախճրգներ, կնգդիք՝ կարճ, երդար,—ըսեց,—
Կըտանա՝ ուրին խաթավաշ դառնա,
Դու էգեր իս էտեղ, շախկամ կըլափիս։
Ըսեց.—Ո՞րտեղ ա, մայրի՛գ,
Էս ի՞նչ ես ասում, չեմ հասկանում։
Ըսեց.—Դնա՝ հըլեւ Զինով .Յովանի մոդ*։
Դնաց տեսավ օր՝ Կուզրատին ու Չալխաղին
Նստած, օսկի կըչափին։
— է՛,—ըսեց,—Կուզրատի՛, հետու կայնի՛ դու,
Իմ հոր օսկին է, ես եմ չափելու։
Կուզրատին ձեռ տարավ մուրութ,
— Հե՛յ,—ըսեց,—Զինով .Յովա՛ն, մուրութս վկա՛,
Կէրթամ Մարա Մելիքին կասեմ,
Գըկա, ձեր երգիր քարութանդ կանի։
Դավիթ հեռսդավ, ըսեց.

* Այս և հայտրգ մի քանի տեղում է նկատվում Հ. Թումանյանի պահմի աղճատությունը, որով իսկ Քեռի Թորոսը հանկարծ դառնում է Զինով .Յովան։ Ուշ. բանահավաքների։

— Յելե՛ր, դուք կորե՛ր, Մսրա շնե՛ր,
Ի՞նչ խարդի տագ իք դրե մեզ,—ըսեց։
Կոտրն շպրտեց, ավեց Կուղբատու գլոխը ջարտեց,
Փշրանքներ պագից մի վերս էլ գնն գնացին...
Էն ժամանագ Կուղբատին ու Ջալխագին
Առան ուրանց զորքեր, փախան։
Իսկ ախճիդներ ու կնկտիքըն յինր գնաց, գումից հանեց,
Յըմեն Դավիթին արև հիշացին, ըսին.
— Դավի՛թ, քըզի երդար կյանք էղնի՛,
Օր մըզի ազատեցիր։

25. Գնացին։ Էն ժամանագ օր գացին,
Հասնելով են ուրանց գեղ,
Տեսան, օր Կուղբատին զորքով էգավ, ըսին.

— Ջա՛ն Կուղբատին, քա՛ջ Կուղբատին,
Մատունցի Դավիթին գարգնց գեղին։
Կանայք բերած քառասուն-քառասուն,
Քառասուն կով բերնց կթան.
Ընդներ բերնց լծան...

Էգավ, տեսան օր գլոխըն մեզ յանից ջառատուգ էր.
— Տո՛,—ըսին,—Կուղբատի՛,—ըսին,—
Գեղի՛ն մղնիս դու,
Չէ՞, դու կըսեր, օր կէրթամ Մատուն,
Մատունցի Դավիթին կըգանիմ գեղին։

— Տո՛,—ըսեց,—լըրե՛ր,—ըսեց,—
Դուք ձեր մարդիկն իք տեսե,
Դուք չըք տեսե Սասման ծռեր,—ըսեց,—
Սասմա ծռեր լերան-լերան,
Ննդեր ունին՝ մեղ-մեղ գերան,
Զորքեր ջառատին էսքան հազար,
Հազիվ իմ գլոխ առեր իմ, փախե,—ըսեց,—
Գարնան հեղ ընդունց պլորդան
Գիկա ձըզի արմադան։

26. Էդ վախտ գնաց, չորավ Կուղբատին Մսրա Մելիքի դեմ։
Մսրա Մելիք ըսեց.

— Բի՛, տենամ Սասնա ոսկին ու ախճըգներ։
Կուզբատին ըսեց.
— Ինչպե՞ս բերենք հայոց ոսկին,—չսեց,—
Մի խենթ ծնվավ հայոց ոսկին,—ըսեց,—
Ոչ ախ գիդի, ոչ մայ, ոչ մեծ, ոչ փոքր,—ըսեց,—
Գլոխա ավեց, էսպես ջարաեց,
Ձորքին ըսեց. «Ձեր թակավներ, քե խոշազ ա,
Բըՙխ գա, զոռով տանանա»։
Մարա Մելիք կադդավ, փրփրավ, խանչեց ուր զորքին.

Հազար-հազար մարդ՝ քմբուդ զանող,
Հազար-հազար մարդ՝ նիր .յելող մուրթավ,
Հազար-հազար մարդ՝ բեղով,
Հազար-հազար մարդ՝ երիտասարդ...

Վերջ, ժողվեց ահակին, գնա՛, ասիմ, ինչքան զորր,
Հավաքեց, բերեց։
Բերեց Մարա Մելիքըն Սասունա ջրի վրեն զանեց,
Էգան խմեցին, էդ ջուրըն գամաքավ։
Քեռի Թորոսըն քուրթ քեվին առավ,
.Յելավ տեսավ, օր ջուր կդրե։
Տեսավ ի՞նչ՝ զորքըն էգե, դրե,
Վրժալեն զարցավ էգավ, ըսեց.
— Հա՛յ-հարա՛յ,—ըսեց,—փախե՛ք,—ըսեց,—
Փագե՛ք դուռ ու լուսամուդ,—ըսեց։
— Ի՞նչ է էղե, Քեռի Թորոս, ի՞նչ է էղե։
— Գրողն,—ըսեց,—ու ցավ Սասունցի Դավիթի ջա՛ն էղե.
Մարա Մելիք զորք հավաքե,—ըսեց,—ամբողջ զորքով էգե,
Մեր երդիր քարուքանդ կէնա։
.Յելե՛ք,—ըսեց,—արբանք տանինք, բան տանինք,
.Յրնգնինք .յոդքեր, աղաչանք անինք,
Օր գոնե,—ըսեց,—բախշա մըզդի։
.Յելան մարդիկ էգան, օր բդի էրթնեն,
Պառավըն ըսեց.—Ա՛յ քու տուն շիքվի,—ըսեց,—
Հըլը .յելի՛, տես, ինչ ա կէնա,—ըսեց,—
Հորդ ոսկին կրտանին կիդան Մարա Մելիքին։
— Իմա՛յ,—ըսեց,—բա ո՞րտեղ,—ըսեց։
Ըսեց.—Գնա՛, Մարա Մելիք էգե, կռիվ կէնե։
— Տո՛ւ,—ըսեց,—տադի՛,—ըսեց,—

Ժանգոդ էրգաթի, բան մի չկա՞,—ըսեց,—
Վերցում, էրթամ, կռիվ էնեմ։
Ըսեց.—Հողեր տամ գլխո՛ւդ,—ըսեց,—
Գնա՛, պահանջա՛ քու հոր զենքըն,
Քու հոր ասպաքըն,
Քու հոր ձին, որ օսկե թամբ վրեն, Քուռկի Ջալդին,
Գնա՛,—ըսեց,—ըդոնք պահանջա.
Ժանգոդ էրգրթով էրթաս Մսրա Մելիքի վրեն կռի՞վ էնես։

27. *Գնաց, կայնավ Քեռի Թորոսի շեմքին.*
— Քեռի Թորո՛ս,—ըսեց։
Ըսեց.—Ի՞նչ է։
Ըսեց.—.Յո՞ւր է իմ հոր Ոսկե Դռան ձին,
.Յո՞ւր է իմ հոր Արծըրեն ձին,
.Յո՞ւր է իմ հոր Սուրբ Բազդին,
Թուր Կայծագին։
Ըսեց.—Որդի՛,—ըսեց,—ո՞րտեղ ա, չկա՛։
Ըսեց.—Չէ՛,—ըսեց,—կրսըրսանիմ, քելե՛, էս րոպեին բե՛։
Տեսավ, օր իլլաջ չկա, գնաց բերեց, տվեց։
Օր տվեց, Դավիթ հեծավ,
Սուր Նիշան կարեց Քեվի վրեն,
.Յըմալ ուժեղացավ օր, լցվավ։
.Յելավ հեծավ ձին, Քեռի Թորոս ըսեց.

— Ա՛խ, ափսոս, հըզար ափսո՛ս, մեր հրեղեն ձին,
ա՛խ, մեր հրեղեն ձին.
Ափսո՛ս, հըզար ափսո՛ս մեր Ոսկե Դռան,
ա՛խ, մեր Ոսկե Դռան։

Դավիթն օր լսեց, ջղայնացավ, դարձավ.
Օր դարձավ, ըսեց.

— Ափսո՛ս, հըզար ափսո՛ս, իմ նորելուդ մանուքըս կորավ,
Մանուքըս կորավ, Դավիթս կորավ։
Դավիթ մեղմացավ, .ւիջավ, Թորոսի ձեռ համբուրեց։

28. *Գնաց, տեսավ օր՝ դորբի՛ն ու աստղին հետաբ չկա։*
.Յիջավ դորբի մեջ, ըսեց.

— Ով քնած է՝ յարիւն կենա,
Ով յարիւն է՝ քաղ վեր կենա,
Ջսեք՝ Սասունցի Դավիթի գող-գող էգամ,
դարցավ, գնաց։
Ու սկսեց էդտեղ կռվել։
Կռվավ, էդ ժամանակ մի հազ ծերունի յելավ ըզրա դեմ,
Ըսեց.—Տղե՛ք,—ըսեց,—քաղեք, ես էրթամ,
Խոսամ Սասունցի Դավիթի հետ։
Գնաց, Սասունցի Դավիթին ըսեց.
— Սասունցի Դավի՛թ,—ըսեց,—
Ինչի՞ կոդորիս էս մարդկանց,
Սրանք ամէն մեդ տան հրագ ին,
Որըն,—ըսեց,—ամուսնացուդ ա, որը նշանլու ա,
Որը,—ըսեց,—էրեխեն քաղե, էգե,
Մարա Մելիքն ա մըզդի հավաքե, բերե,
Բերե բատեդ, օր ձեր հետ կռիվ էնինք։
Ըսեց.—յո՞ւր ա Մարա Մելիք։
Ըսեց.—Մարա Մելիք էն ա,—ըսեց,—պատդուդ չաղըր,
Ուր գոլորշին դուրս դիկա բերանից,
Չաղըր կըբանցըրնա՞, ցածըրնա։

29. Ջին քշեց, գնաց, կայնավ էդտեղ,
Ձեն տվեց, ըսեց.—Մարա Մելիք յո՞ւր ա,
Ըսե՛ք, քաղ գա, կռիվ էնինք։
Ըսին.—Մարա Մելիք քնե.
Իրեք օր ա քնե, յոթ օր բդի քնի,
Չորս օր էլ կա՝ վեր կենա։
Ըսեց.—Քնել-մնել ես չեմ յիմանում,
Վե՛ր կացրեք, քաղ գա՛, կռիվ էնինք։
Բերեցին մի հազ շիշ դրեցին կրագ,
Չանեցին ըզրա կրնգին։
— Օ՛ֆ,—ըսեց,—էս անաստված լվեր
Ջըն քաղնի ըսկի մարդ հանդիստ քնի։
Շըռչըվավ մեգել կողքին։
Բերեցին մի գութանի խեւի դրին կրագ,
Չանեցին քիզընքին։
— Ա՛խ,—ըսեց,—էս անաստված մոծաղներ, էս ի՞նչ են
անում։

Շիդդավ, օր շիդդավ, տեսավ՝ Դավիթի կայնուղ է,
Փչեց, .յինք գիներ, փչելով բդի քաներ.
Օր փչեց, տեղից չշարժվեց,
Յոթ գրմշու ուժ պագասավ։
Սիձդաց.—Հա՛, հա՛, հա՛, Դավի՛թ,—բսեց,—
էգևր ես, կոխվ կէնի՞ս։
Ըսեց.—Հա՛։
Ըսեց.—Արի՛, նատի մի սեղան,
Հաց ուդինք, խմինք .յիրար հետ,
Նայ,—բսեց,—.յէնինք, պատերազմինք։
Դու մի բաս, էդի բառասուն գազգան հետ ս փորս,
Ոմն օր հաղթել չկըրնաս,
Կըրևրա, կընատըցու էդ հորու վրեն,
Գընդնի էդ հորու մեջ,
.Յինք արդեն հախտանագ կըտանի։
էգավ Դավիթըն, նատավ,
Նստելու բաշտան՝ .յընգավ հետ։
Օր .յընգավ հետ, ծիծղաց, բսեց.
— Հա՛, հա՛,—բսեց,—դե՛, գնա՛, հորում փդի,
Ինչքան կրտնաս, գնա՛, հորում փդի։
Քևրեց բառասուն ջաղչի քարեր շուրց վրեն,
Ըսեց.—Դե՛, գնա՛, մացի բդտեղ։

30. Իսկ Քևռի Թորոսըն բնուղ էր։
էրազին տեսավ օր.
Մարա աստղըն կրփիլա,
Իսկ Սասունա աստղըն արդեն սկսեր ս խավարել։
— Հա՛յ, հա՛յ,—բսեց,—Դավիթոսի գնաց։
.Յելավ Զինով .Յովան, ձնչդապտորրիկ, Յոան Վեբևի,
.Յրմնուն հավաքեց, հանեց Սասմա սարի գլոխ։
— Զինով Օհա՛ն,—բսեց,—բննեց բռռաս,
Օր էրթա .յընդնի Դավիթի .յանգաչ,—բսեց.
.Յելան, գրմշու կաշի փաթեցին, բռռաց.
— Հե՛յ, հե՛յ, Դավի՛թ,—բսեց,—ո՞րտեղ ես,
Դո՛ւրս արի լուս .յաշխարք։
Բռռաց, ձեն գնգղնգալեն գնաց,
.Յընգավ Դավիթի .յանգաչ։
— Հա՛յ, հա՛յ,—բսեց,—իմ Քևրեն ս բնձի կանչում,

Էս ի՞նչ բան է։
Յելավ, խանչից Սուրբ Բաժակին,
Ու Սուրբ Նշանին համբուրեց, Քուրըն բցեց։
Որ բցեց՝ թառասուն-թառասուն քարն էլ կդրավ,
Ինք Քռավ, յելավ։
Քռավ, յելավ.—Տո՛,—ըսեց,—Մելի՛ք,—ըսեց,—
Ելի՛, կռիվ էնինք։
Ըսեց.—Արի՛, հաց ուդինք։
— Չէ՛,—ըսեց,—դու մոխաննաք իս,
Քու հացին է՛լ չեմ նստի,
Ելի՛, կռիվ էնինք։
— Դե՛,—ըսեց,—յելնինք, կռիվ էնինք,
Բայց յառնչ,—ըսեց,—ես ըդի զարդիմ։
— Հա՛,—ըսեց,—յառնչ դու զարդ։

31. Դավիթ գնաց, մեյդրնի մնչ կայնավ,
Էդի ձին հնձավ, բշեց։
Բշեց, գնաց մինչև Հալեր, ընդեղից էգավ,
Էգավ դանեց՝ փոշին յելավ, ամբեր ծածկեց.
Ըսեց.—Հա՛յ, հա՛յ,—ըսեց.—էս մի զարդիցս Դավիթ գնաց։
Ըսեց.—Կենդանի՛ եմ, մի՛ն էլ արի։
— Հա՛—ըսեց,—մոդիզ տեղից էգա։
Էս հաղ բշեց, յավելի էն յան գնաց,
Էգավ, մեզ էլ զարդից։
Էլի փոշին յելավ ամբին, ըսեց.
— Դավիթ գնաց էրգու զարդից։
Ըսեց.—Կենդանի՛ եմ, մի՛ն էլ արի։
— Հա՛յ, հա՛յ, մոդիզ տեղից էգա։
Գնաց Մսրը, Մսրա ընդեղից էգավ ու դանեց,
Չանեց, յոթ օր, յոթ գիշեր փոշին յելավ, ամբրն ծածկեց։
Ըսեց.—Արդին Դավիթ կորավ։
Յոթ օր յընցավ, Դավիթ կայնավ, ըսեց.
— Կենդանի՛ եմ, հերքն իմն հասավ։
Դավիթ հնձավ Քուռդի Ջալդին,
Խանչից ուր ասաված, ուր խաչ Բազուգին,
Համբուրեց Սուրբ Նիշանն ու ձին փոթորգեց։
Օր բշեց՝ մերըն յելավ դեմ,
Մեր յելավ դեմ, ըսեց.—Դավի՛թ,—ըսեց,—

Էս իմ ծձերուն բախշե՛, օր,—ըսեց,—
Յոթ տարի ծիծ իս կերի,—ըսեց,—
Էն մեզ զարգըն ընձի բախշա՛։
Ըսեց.—Բախշեցի՛։
Մեզ լեռ ձին ֆոբցուց, փոթորգեց,
Մեզն էլ քուր չելավ դեմ, ըսեց.
— Դավի՛թ, էդ մեզ զարգըն ընձի զա՛րդ,—ըսեց,—
Էդ մեզ զարըն էլ ընձի բախշա՛։
Ըսեց.—Լա՛վ, էդ էլ քեզ բախշեցի։
Ըսեց.—Է՛յ, ասսվա՛ծ,—ըսեց,—էլ մարդ չըպադայի,
Էս զարըն օր բդի զանիմ։
Ձին փոթորգեց, բշեց, էզավ.
Քևռի Թորոս ընդեղից ձեն տվեց, ըսեց.
— Դավի՛թ, բննեց բդի զանիմ,
Օր մեջտեղից էնիս էրդուսը,—ըսեց,—
Դնիմ կիշևոր, քաշիմ,
Եթե,—ըսեց,—կես էն յան թամամ չէգավ,
Էլ քըզի Դավիթ չըմ անվանի։
Ընեննց խփեց օր.
Քառասուն քար էր քաշն վրեն,
Քառասուն գոմշու կաշի,
Ըդոնք կդրեց ամբողջ, չիջավ,
Դեռ մի գյազ էլ գեղին գնաց։
Մարա Մելիք ձեն տվեց, ըսեց.
— Դավի՛թ,—ըսեց,—մեզ էլ զա՛րդ։
Դավիթ ըսեց.—Ա՛յ մարդ, էս ի՞նչ բան էր,
Իմ զարգից,—ըսեց,—Մարա Մելիք կենդանի մնա՞։—
Ըսեց.—Մելի՛ք, հըլա քըզի քափ տո՛ւ։
Մելիքն օր քափ տվեց,
Կես էն յան յընդավ, կես՝ էն յան։

32. Ձին հեձավ, փոթորգեց, սկսեց զորքի մեջ։
Օր սկսեց զորքի մեջ, բոլոր զորքն կայնան, ըսեցին.
— Դավի՛թ ջան, գիդա՞ս ինչ.
Մարա Մելիք մըզի հավաքեր է, բերի,
Օր մենք քու հետ կովինք։
Մենք,—ըսեցին,—քու հետ կէղնինք ախպեր։
Աստըխ Երկրանցի կար, ցոլվեր էր.

Էնի Դավիթի հետ էդավ ախպեր։
Մադներ ուրանց կրնեցին, էդան ախպեր։
Իսկ մենդ էլ կար՝ Հալրու խալիֆեն,
Գնաց, Դավիթի հետ արթ ու շարթ էդավ, բսեց.
— Դավի՛թ, վերև աստված, ներքև՝ ես ու դու,—բսեց,—
Իդա քու ձին շհա՛դ էդնի,
Թե տղա էդավ՝ ես իմ ախճիդ տամ քու տղին,
Թե քրդի ախճիդ էդավ, ընձի տղա էդավ,
Քու ախճիդ տաս իմ տղին։
էդենց արթ ու շարթ էրեցին ու
— Դե՛,—բսեց,—ամենդը գնացեք ձեր տեղ։
Իսկ .յինք վերցրուց Մսրա Մելիքի մորն ու քուրիչ
Տարավ Մսըր։
Տարավ Մսըր, գնաց, էնդեղ մնաց։
էնդեղ գնաց մնաց,
Իսկ մենք խարար իդանք Կաթուղիկոզ, Կաղըզվան։

33. Կաթուղիկոզ, Կաղըզվան խանդութ խանում կա.
Լոռվա Համզին ու Շարու Խորբսանցին գուլին, օր ըղրան առնին։
Յոթ հատ փայլևվան բերած՝ ըղրա տուն պաշտպանելու,
Բայց խանդութ խանում չառնի։
Իսկ մի հատ աշուղ էդ կռվուն էղեր էր,
Գնաց, խանդութ խանումին պատմեց,
Օր Սասունցի Դավիթ բսենց բաջ ա,
Ըսենց-բսենց խոշաղ մարդ ա,
Մսրա Մելիքին բսենց ջառատեց,
Էս տեսագ էլ գնդեցիգ ա։
— Դե՛,—կըսա,—կըռնա՞ս էրթաս,
Ընդոր բերիս իմ մոդ։
Կըսա.—Կըռնամ, .յընչի՞ չըմ կըռնա։
.Յելավ .յօգկի էդ աշուղն էդավ։
Էդավ, խանդութ խանումի նզար լև դրեր է ծոցըն,
Էդավ, գնաց Սասուն,
Գինա, թե Դավիթըն Սասունն ա։

34. Գնաց օր՝ Յոան Վևթով նստուգ ա դիվան, բազ գլոխ։
Գնաց, բարև ավեց, բարև առավ,

Սկսեց էդտեղ գովալ։
Գովաց Խանդութ խանումին, շադ օր գովաց.
— Ըհը՛ն,—ըսեցին,—հրլա տես,—Յոան վկեվվ ըսեց,—
Իդա էգն մեր շան տղա ծուռն,—ըսեց,—գուզե տանեն,—
Ըսեց,—տփե՛ք, լարե՛ք ըդրան։
Տփեցին ըդրան, լարեցին, էդի գնաց,
Քաղքից .յելավ, .յելավ գնաց մի կարմընջի տագ,
Ջուր կէրթեր, էդ կարմընջի տագ պատգավ, բնավ։
Օր պատգավ, բնավ, սաբախտան հոդրղներ,
Էն վախտ գ՛հնձնեն գոմեշ, պիկեն,
Գոմեշ հոդրղներ հնձած են, պիկեն,
Օր էգան, էդ կարմընջավ բդի .յընցրնեն,
Միամիդ էդ կարմընջի տղով օր .յընցան,
Գոմեշ խրոդավ, հոդաղ .յրնգավ։
— .Յի՛,—ըսեց,—աարի վայրենի՛,—ըսեց,—
Ի՞նչ է,—ըսեց,—էգեր ես բստեղ շընթրռեր իս,
Խրոդավ գըմեշ, .յրնգա, բդի ոդսի կոդրեր,—
Ըսեց,—դու խո՛ վայրենի չիս։
— Տո՛,—ըսեց,—վայրենի դու .յինքնդրդ իբ,
Ձեր թակավո՛ր, ձեր արեն ու ձեր թակավորի՛ն.
Գլոխըն,—ըսեց,—մե կողվի չափ ա,
Աչքեր լե,—ըսեց,—մեղ-մեղ կոտ կոլեզ կրտանա,
էդ աչքատեսն,—ըսեց,—ձեր թակավո՞րն էդ ա՞,
Կըսիք՝ Դավի՛թ, Դավի՛թ։
— Տո՛,—ըսին,—շա՛ն տղա, էդի Դավիթ չէ,
էդի,—ըսեց,—Յոան վկեվվն ա։
Դավիթ գացեր ա Մսըր,—ըսեց,—
Ուր մոր հեղն ու քուրմ գացե Մսըր, .յոն ա։
— Հա՞։
— Հա՛։
.Յելավ գնաց Մսըր,
Տեսավ օր, իսկական, Դավիթ, բա՛լի Դավիթ։
Բարև տվեց, բարևն առավ, հանեց նզար, տվեց,
Ըսեց բա.—էս ի՞նչ ա։
Ըսեց.—Կարուդկող-Կաղըզվան խանդութ խանում կա,—
Ըսեց,—էս նզարի տեր քզի կըխանչե, օր առնի։
— Դե՛ լավ,—ըսեց,—դու գնա՛, ես գիկամ։
էդ .յելավ գնաց։

Էդի օր գնաց, Դավիթ մի բանի օր մնաց,
Հեծավ Քուռդի Ջալդին, գնաց։

35. Գնաց, օր բդի խլաթով .յընգներ,
Դու մի ըսա, էդ խլաթի խալիֆի կնդա մարդ մեռե,
Դավիթըն, օր դիշեր բդաեղ խոնախ էղավ,
էդ էլ ուրիշ զավան էր, է՛, Քուրք էր,
էդ կնիգըն դիշեր Դավիթի հեզ հարաբերութուն ունեցավ։
Օր ունեցավ Սբի Նիշանի մե կնգըն սևցավ։
.Յելավ գնաց։
Իսկ բդրանից էլ մի հազ կիչիա կիգնի։

36. էդ .յելավ գնաց։
Գնաց, էն վախտ գնաց, օր էդտեղ դուռ բացեց,
Տեսավ, օր մե մարդ կանուդ է դուռն դեմ,
Բարև տվեց, բարևն առան։
— Հա՛ն,—ըսեց,—սաներ Դավի՛թ, համեցի՛ր։
— Քու անուն ի՞նչ ա։
Ըսեց.—Գորգիկ։
— Քավո՛ր Գորգի՛կ,—ըսեց,—ձին բռնա՛։
էդան բդտեղ ուրանց բավոր-սաներ, առանց տեսնել։
Տարավ ձին կաբեց։
էդ յոթ փայլևան .յոդ էր,
Տարան, փայլևներ տեսան, զարուրան, բսին.
— Հը՛, էդ ա Սասունցի Դավիթ։
Բևբեցին իրանք սարբեցին սևդան,
Սկսին դինի խմել,
Մեգ-մեգ բաժագ .յընեն, կրխմեն։
— Ա՛յ մարդ,—ըսեց,—էդ ի՞նչ ա կրխմիր,—ըսեց,—
Կարբին բան խմե՛ր։
Դավիթ տեսավ, օր իլլաջ չէդնի, տաշտըն դրեց բևրնին,
Ար՛մեց, բաշվավ էն յան, բևֆըն հասավ։
Տաշտով դինի խմեց։
էն վախտ, օր բևֆ կրբռներ, բանց զրոխ կրկներ,
Թրեր, բաշեն էդ յոթն էլ.
էն վախտ, օր զրոխ կրբանձրրցներ,
Թրեր կրզանեն տեղ։
Քավոր Գորգիկ տեսավ, օր էլ իլլաջ չկա,

Կարող ա Դավիթին ըսպանին,
Խանդութ խանում լև խաբար չէ,
Ըսեց.—Սաներ Դավի՛թ, սաներ Դավի՛թ,—
Ըսեց.—քնաստուն չէ, վնաստուն է։
Օր ըսեց՝ գլոխ բանձըրցուց,
Օր գլոխ բանձըրցուց՝ թուր քաշեց,
Էրգու-իրևքին ըսպանեց, մնացող փախան։
Փախան. Գորգին դուռ կայնուգ էր,
Էն մեզի ձև թխավ, Գորգու վիզըն տեխեն .յելավ։
Օր մի յանի վրա էր, էգավ, ըսավ.
— Քավ՛որ Գորգի՛ն, էդ ի՞նչ է էդե։
Ըսեց.—Դավի՛թ, գլխուդ-արևուդ մեռնի՛մ, սաներ Դավի՛թ,
Էն,—ըսեց,—փայլևան, ձև թխավ, վիզըն տեխեն .յելավ։
Ըսեց.—Իմ մեր ընձի աղոթներ ա, բի՛ր։
Պըլընաբրդով զարկեց՝ վիզ .յընգավ տեղ։
Ըսեց.—Բա՛ խանդութ խանումին իմա՞լ տեննանք։
— Խանդութ խանումին,—ըսեց,—
Քի՛չա, բզի տանիմ հաս բախշեն,
Մգա էնի գիկա ման գալու,—ըսեց։
— Իմա՞լ կըռնամ ճանչընամ։
Ըսեց.—Քառասուն ախճգա հետ գիկա,—ըսեց,—
.Յամեննաբույով, գեղեցիկն էն ա, .յըմնից բույով ա։

37. Գնաց էդ հաս բախշեն, դուռըն բացեց,
Դուռն քամագրն տապավ։
Իրգըվա հովին էր, խանդութ խանումն էգավ,
Էգավ, բզի էրեկ հաս բախշեն։
Ախճիղներ էգան, .յընցան, խանդութ խանումն էգավ,
Օր էգավ՝ ձեռ թալեց, .յերես պաբեց.
Օր պաբեց՝ խանդութ խանում մի՛ հետ յումբրդով բիլ ու մըռթի մնջ։
Ջանեկուն՝ արուն թալեց։
Օր արուն թալեց՝ ջղայնացավ,
Ջղայնացավ, էգավ, ձին բզի հեձներ,
Ըզրանց բաղաբըն ամբողջ քարուքանդ էներ։
Էդ բավ՛որ Գորգին բաներ ա բզրան, թև.
— Սաներ Դավի՛թ, ի՞նչ ա կէնիս։
— Չէ՛, օր չէ՛,—կըսա,—

Անպայման բդի բդոնց բաղաբդն բարուբանդ էնիմ։
Գընդնի .յօղներ, կրփաթվի,
Փշում լև խմուզ է Դավիթ...
Վերջ, ախճիզ բսեց.
— Քելե՛ք, խոնչա պադրաստինք, տանինք Դավիթին,
Մգա,—բսեց,—չղայնություն բռներ ա, էրդիր կրբանդա։
Էգավ ախճիզ, խոնչեն պադրաստեց,
Էրդու-իրեք ախճիզ խոնչեն բանին,
Գացին Դավիթի դեմ։
Խանդութ խանում քամագից էգավ, ինվեր բանեց,
Դառցավ, ինի տվեց, բսեց։
— Ծո՛ղ, էդ ի՞նչ էր էրիր։
Ըսեց.—Դավի՛թ, Դավի՛թ,—բսեց,—
Դու քու հոր տղեն իս,—բսեց,—
Ես էլ իմ հոր տղեն իմ։
Էդ յոթ փայլևնին,—բսեց,—ես մինագ կրսպանենք,
Ձեռով կրսպանենք, առանց ձրի։
Դու բդի՛ էրթաս,
Լոռվա Համդի ու Շաբու Խորասանցի գլոխ բերիս,
Նի՛ր,—բսեց,—ես բդի կառնիմ։
— Շա՛դ լավ։
Մացին էդտեղ ժամանագ մի, .յելավ,
.Յելավ, ձին հնձավ, բշեց,
Բդի էրթներ, Լոռվա Համդին ու Շաբու Խորասանցին բերեր։

38. Էդ ժամանագ Սուրբ Սարգիս բող ձիով էգավ .յրուսաս։
Ըսեց.—Դավի՛թ, գլխուդ-արևուդ մեռնի՛մ,
Դո՞ր ա կէրթաս։
Ըսեց.—Կէրթամ Լոռվա Համդի ու Շաբու Խորասանցի գլոխ
բերիմ։
Ըսեց.—Գնա՛,—բսեց.—
Աղ Դանդիզ, Խարա Դանդիզ,
Մովրն գյամին բանդ է էղև,—բսեց,—
Ընձի խանչաձ, ես կէրթամ .յոնի,
Գնա՛,—բսեց,—ես գիկամ բրդի օգնություն։
Գնաց։

Գնաց հասավ Շաբու Խորասանցի մոդն ու Լոռվա Համդի մոդ,

Բարև ավից, բարև առավ.
— Հը՛, ի՞նչ մարդ իս։
Ըսից.—Խանդութ խանումի մարդն իմ։
— Հա՛, էգեր իս, նշանաբան առնի՞ս։
Ըսից.—Հա՛։
Տեսավ, օր էն մեզի մուխքն կաբուզ ա չանգրլնեբով,
Ուժեղ մարդիկ ին, հասկա։
— Է՛,—ըսից,—ես ըզրանց հետ իմա՞լ էնիմ։
Մե յոթ օր, ութ օր մնաց, ըսից.
— Էգեր իմ Խանդութ խանումին նշանաբան առնիմ։
Ըսից.—Շարո՛ւ, խորասանցի, Շարո՛ւ, խորասանցի,—
Լոռվա Համզին ըսից,—
Էդ ճկտիդ մաղնիք հա՛ն աուր,—ըսից,—
Տղեն էցկա մազ,—ըսից,—առնա,—
Ըզն դինա, օր Դավիթին ա, էլի՛,—
Տանա նշանաբան։
Ճկտի մաղնիք հանից, ավից,
Դավիթին էցկից՝ էգավ, մգավ բիլագ։
Մաղնիք լորդից, ըսից.
— Ես էգեր իմ,—ըսից,—ձեր պլխներ առնիմ,
Այլ ոչ ըն էս նշանաբան առնիմ։
Ըսից.—Ծուռ Սրբույի փոկերուց ա,—ըսից,—
Յելի,—ըսից,—ըզրա պլոխ կդրա՛։
Լոռվա Համզին յելավ.
Յելավ, սկսեցին յիրար հետ կռվել։
Օր կռվան՝ ըզրա պլոխ կդրից։
Ըզրան օր ըսպանից, Շաբու խորասանցին յելավ, հերսոդեր էր,
Յելան, չուրի կեսօրին էնքան պանին յիրար, գուլաշ հասան,
Վերջ Դավիթի ըզրան էլ զանից գետին։
Ըզրան էլ ըսպանից ու սկսից ժողովրդին կողոպել։
Տեսավ՝ մի խումբ ձիավորներ յելան ըզբա սար.
Օր յելան ըզբա սար, ձին քշից,
Ձին քշից, տեսավ, օր Քեռի Թորո՛ս կանուդ է էդտեղ.
— Տո՛, Քեռի Թորո՛ս, դու ըստե՞ղ...
Տո՛,—ըսից,—ըզը էն ձիավորներ էգան, յո՞ւր գացին։
— Տո՛, լաո՛,—ըսից,—ծառն բցեցի,
Ամբողջ,—ըսից,—գացին, լցվան ձո՛ր։

Քեռի Թորոսի ձեռքն համբուրեց, ըսեց.
— Քեռի Թորո՛ս, դու գնա՛։
Յինքըն բռնեց Շաբու Խորասանցի ու Լոռվա Համզի պուխը
Կարեց ձիու վրեն
Ու հեծավ ձին, բշեց։

39. Քշեց, յոթ օր, ութ օր յեղբցեր էր,
Խանդութ խանումին ըսեր էր.
— Եթե ես յոթ օր զը նգրնամ,
Ութ օրի վրեն նիհ չէգա,
Մե հազար դիակ կէղնի վռուդ,
Իմ թիկունքին հաչ կա,
Էն հաչով ընձի դղնաս, թագիս, Մոսե հաչ։
Ըսեց.— Շա՛դ լավ։
Ուրեմն, յեկավ յօդկի Դավիթըն,
Վերցուց էդ պիճներ, կարեց ձիու վերեն ու էդավ։
Էդավ ճամփեն, վրա ութ ավուր,
Խանդութ խանում տեսավ, օր յուշացավ,
Հեծավ ձին ու յինք ու Վարդ ախպերը կար՝ անուն,
Յինք ու էդ Վարդ ախպերըն էգան։
Էգան, ճամփու մեջտեղ Դավիթ տեսավ,
Օր էրգու ձիավոր դիկան։
Ըսեց.— Կարող ա իդա ձիավորնեը ընձի վնաս տան,
Կարող ա դիրնին ընձի։
Էդ գիճներ յիջուց, ուրին դրատեց,
Օր դրատեց, ախճիդրն հատավ ու, յա՛լլա, մի հազ դանեց։
Ջանելուն՝ պնչնեերուց էլի արուն էգավ.
Էլի պնչնեերուց օր արուն էգավ,
Խանդութ յուզեցավ հեձներ ուր ձին,
Հատավ, բամատուց թևվեր բռնեց։
Բռնեց, Վարդրն գնաց, յրնգավ յօդներ, ըսեց.
— Էս ի՞նչ ա կէնիս։
Ըսեց.— Մա՛չի, բուչուղ գերդարո՛յ,
Էս էլ էրգու անգամ,— ըսեց,— էս տեսած ընձի բան ա կէնիս։
Ըսեց.— Դավի՛թ,— ըսեց,— դու քու հոր տղեն իս,
Ես էլ,— ըսեց,— իմ հոր տղեն իմ։
Նո՛ր,— ըսեց,— ես գիդամ, օր դու իմ ամուսին իս։
Առավ էգավ։

Գլխներըն ի՛ւ մազերին, ի՛ւ ինչ էրեցին...
Նո՛ր էդտեղ բևրեցին,
Յոթն օր, յոթ գիշեր հարսանիք էրեցին,
Դավիթին կարքի՞ն։
Դավիթին կարքին, Դավիթ մնաց էդտեղ, արքայ՝
Կարուդիճ-Կաղըզվան։
Մի տարի, էրկու տարի, մոդ յոթ տարի մնաց։
Ըզրան էղավ մի հազ տղա,
Անուն դրեցին Մհեր՝ պարու անուն դրին։

40. Յոթ տարին, ութ տարին օր լրացավ, ըսեց.
— Յավաշ յելնիմ էրթամ Սասուն,— ըսեց,—
Տեսամ ինչ կա, դառնամ, յիգամ։
Յեղավ էգավ։
Էգավ, խլաթով բդի յընցընի.
Խլաթով օր բդի յընցընի, խլաթի ժողովուրդ յելան գնմ.
— Դու բդի մեր հեդ կռիվ էնիս։
— Հա՞։
— Հա։
— Դե՛,— ըսեց,— օր էդ տեսաք ա,—
Կնիգըն վերցե հեդ, յինք ու կնիգն է գիկան,
Տղին Բողն էնաեղ, կնիգըն վերցե, գիկա։
Ըսեց.— Իմ ամուսին իմ հեդն ա,
Ես կըխնդրիմ, օր Քուլ տար,— ըսեց,—
Իմ ամուսին տանիմ Սասուն,
Դառնամ գամ, կռիվ էնինք։
— Դե՛,— ըսեց,— յերթալա՛
Յերթացավ, փոխանակ ձեռըն դաներ Սաներին,
Ձանեց Սբփ Նիշանին։
Սբփ Նիշանի էրգու յերեսն էլ սևցավ։

41. Էգավ Սասուն, մի բանի օր մնաց,
Կնիգըն Բողից էդտեղ՝ Խանդութ խանումին,
Ու յինք յելավ, գնաց.
Գնաց, օր խլաթըն կռիվ էնե։
Գնաց խլաթ, ժողովուրդ յընդան յեդավ,
Օր յընդան յեդավ, յինք փախավ, ըսեց.
— Յավա՛շ, բաշվինք հեռուն, նո՛ր սկսիմ կռդորել։

Յիրան բցնց մի հաղ հերկ, չուր կաթած են վրեն,
Քուռդի Ջալդին էն վախտ օր Քաղվեր,
էն տրդի չիրըն գնլներ, շփեր վերնվ,
Ուր շորեր Քամուզ էղավ ցնխ։
Օր էղավ ցնխ, մի հաղ յախպուր կար,
Խամիշ կար էդ յախպըրի վրեն, խամշըլըղ էր,
էգավ, բսնց.—Յավա՛շ, շորերսի հանիմ, լվամ, շորցում,
Ներ յնլնիմ, կռվիմ։
Հանեց շորեր, լվաց, շորցուց, շարիդըն քաշնց վիզ,
էգ ժամանակ մի հաղ նեղ՝ Քիզունքրին։
Օր գանեց, Դավիթ կռաց,
Օր կռաց՝ մեզ ձեն գնաց Կաբուզկող-Կաղըզվան,
Մեզ էլ՝ Սասուն։
Իսկ էղանդի գանողըն չորցավ.
Դու մի բսե, էղանդի ախճիկն էր,
էդ կնճիկն էր՝ ուր ախճիկ։

42. Ձեն օր գնաց հասավ Կաբուզկող-Կաղըզվան,
Տղին բռնեցին, բսին.—Դավիթ բսպանվավ,—
Տղին բռնին պային, բսին,—Դավիթն օր բսպանվավ,
Լսեցին, օր Դավիթ չկա, տղեն օր յուղա չէղնի,
Լոռվա Համզի ու Շաբու Խորասանցի զորքերըն գիկան,
Ըղնք օր մնռան, բսպանվան,
Ըղնց զորքեր գիկան, մեր երգիր բարուբանդ կէնին։
Տղեն բդի պայիներ։
Տղեն պայեցին։

43. Իսկ ձեն էլ գնաց հասավ Սասուն,
Քնռի Թորոս բսնց.
— Վա՛խ,—բսնց,—Դավիթըս բսպանվավ, յնլե՛ք։
Վերցուց Զինով Յովանին, ճնճղափորրիկին, Ցոան Վերվին,
Ըղոնց յրմնուն հավաքնց, գացին։
Գացին, էն վախտ գացին, օր գնռ Դավիթ կենդանի էր,
Գացին, բսին.—Դավի՛թ, էդ ի՞նչ էղավ։
Ըսնց.—Բա՛ չէղավ, ես չըմ մահանա,—բսնց,—
Իմ գանող էս խամշրներու մեջն ա,—բսնց,—
Մդա իմ ձիննց էնի մահացեր ա,—բսնց,—
Կրանա՞ք բաշիր, բերիք իմ մոդ։

Քաշին, առան էդան,
Տեսան օր՝ չոր, .յերգեն կեճկեճ՝ էր։
Բանեց լամպրն դանեց, ըդրա սիլսրն ճղեց,
Արուն հանեց, դրեց լիզվի վրեն՝ մահացավ։
Մահացավ, Դավիթին բառցան դևվի վրեն, առան էդան։

44. Առան էդան,
Յոան Վեքիվ հեծավ ձին ու՝ Քուռդի Ջալդին, .յառնչ դնաց։
Գնաց. Խանդութ խանում կանուդ էր վերի հարդ,
Քուռդի Ջալդին օր վերից էդավ,
Իշկից տեսավ օր՝ իդա Քուռդի Ջալդին է,
Բայց վրավին Դավիթ չէ, Յոան Վեքվին է։
Էդավ, մոդեցավ, բանց.—Ախպե՛ր, ախպե՛ր
Բանց.—Ի՞նչ է։
Բանց.—Դավիթին իմա՞լ էդավ։
Բանց.—Խանդութ խանում, դու խոշ, մը խոշ,
Դավիթ մըր բու, սըրն տր խոշ*։
Էդ ժամանակ ձիուց .յիջավ,
Օր .յեկնի, Խանդութ խանումին բանի,
Խանդութ խանում իրան վերվեկն բցնց։
Բցնց, .յընդավ սանդուխ բարի վրեն,
Գլուխըն ցխավ .յիրարուց, մեռավ։
Քեռի Բորիսըն էդավ հասավ.
— Տո՛,—բանց,—շա՛ն տղա ցոան, բյուիօղլի՛,—բանց,—
Էնի էնտեղ մահացավ, իդա լի էդտեղ մահացավ.
Հըլը տեսեննք՝ ըդրան էրեխա էղո՞ր էր, չըր էղեր է,
Կա՞ր, չկար, էս ի՞նչ բան ա։
Խանչից մեձ կնգաից,
Էդան, ծձերուն ձեռ տվին, բսին.
— Ըդրան էրեխա է էղե,
Ըդրան էրեխա էղե, էնտեղն ա։
— Դե՛,—բսին,—օր ըդրան էրեխա է էղե,
էրթանք, մեր էրեխեն բերինք։
.Յելան վերցին Զինով .Յովան, ձնձղափորրիկ,
Քեռի Բորիս, Յոան Վեքվի,
.Յրմեն .յելան գացին։

* Քրդերեն է։ «Խանդութ խանո՛ւմ դու ողջ լինես, ես ողջ լինեմ, Դավիթը մեռավ, բո զուռթը ողջ լինի»։

Գ

ՓՈՓՐ ՄՀԵՐ

45. Գացին կարուղկող-Կազրվան։
Ղոյնք ի՞նչ ևն էրած.
Գեղնի տագ փորած ևն, յոթ դանեն նեղս տարած ևն,
Տղին պայած ևն.
Ու դո՛լ-զուռնեն կըզանին, էդտեղ կըխաղան։
Քևռի Թորոս դնաց, խանչից վարդին, բանց.
— Աբի՛,—բանց,—.յո՞ւր ա,—բանց,—
Մըզի էրեխա է էղե, դո՞ր ա մեր էրեխեն։
Ըսին.—էրեխա չէղե։
Ըանց.—Չէ՛, մըզի էրեխա է էղե։
— Ճիշտ է, էղե մի հազ ախճիզ,—բանց,—մեռեր ա։
Ըանց.—Ինչքա՞ն վախտվա։
Ըանց.—Իրեք ամսվա յա։
Ըանց.—Իրեք ամսվա չա,
Մեր ցեղ՝ ամեզ ամիսն մի մեռր երզարություն ունի.
Ո՞ր մե զերեզմանն է, բելե՛, տու նշանց։
Գնաց, .յերբեն զերեզման մի տվեց նշանց.
Լոր մի թալեց՝ զերեզման .յընցավ։
— Չէ՛,—բանց,—մըզի էրեխա է էղե,—բանց,—
Ըսե՛ք մըր էրեխի տեղ։
Ըանց.—Չէղե՛։
Խանչեց Զինով .Յովանին, բանց.—Զինով .Յովա՛ն։
Ըանց.—Ի՞նչ ա։
Ըանց.—էրեխեն պայած ա,
Անուն լե,—բանց,—Մհեր կէղնի, տղա կէղնի.
Բղի՛,—բանց,—բռռաս, օր էնի բու ձիննից .յելնի, .յիդա։
Բևրեց յոթ հազ զրմշու կաշի փաթեց ու սկսեց բռռալ.
— Մասունցի Դավիթի տղա Մհե՛ր,
Դո՞ր իս, դո՛ւս աբի։
Էդ ձեն գնաց, .յընգավ տղի .յանգաջ։
Տղեն հանգարձ, ջոջկա զիրդն էր, տեղից շարժվավ։
— Տո՛,—բանց,—լատ՛, .յո՞րի զելնիս դուսըն,—
Ըանց,—Թոփ ա կրագին, բան ա կրագին,—բանց,—
Էդ ի՞նչ բան ա։

— Տո՛ տադիգ,—բսեց,—ձեն .լընգալ իմ .յանգաջ,
Ինչ օր ընձի խանչեցին։
— Չէ՛,—բսեց,—ա՛յ լաո, չէ՛,
Դու չըս գինա։
Մեզ էլ բռասցին, էլի ձեն գնաց .լընգալ .յանգաջ,
Տղեն էլի տեղից շարժվավ, էլի տադիգըն չբռողեց։
Վրա երդրորդին,
Քեսի Թորոս մե հազ սիլլա բաշեց Զինով .Յովանի .յերես,
Օր .յերես տբժժաց.
— Տո՛,—բսեց,—շա՛ն որդի,—բսեց,—
Ուրիշ վախտ, օր դու կրխոսես, ես կրկեռնենք,
Մգա դու կրբռաս, ես չըմ լսի,
Էդ իմա՞լ ա բռաս։
Մեզ լև բռաց, բսեց.—Դավիթի տղա Մհե՛ր,
Դո՞ր խա, դո՛ւս արի։
Օր բռաց՝ տադգա գրդից ինավ,
Յոթ դուռ լև ջարտեց, .յելավ,
Տեսավ օր, հա՛նդե, յոթ հազ կայնուգ ին էդտեղ։
Գնաց, տեսավ օր՝ հերըն չկա,
Տեսավ օր՝ Յոան վեքեվի գլոխ քազըն գրուգ ա.
Բսեց.—Անպաճառ բդի իմ հորեղբայր կէղնի։—
Գնաց, ձևորն համբուրեց, բսեց,—
Իմ հայրիգից ի՞նչ խաբար ունիս։
Բսեց.—Քու հայր մեռավ, մենք սաղ մնանք։
Օր բսեց՝ տղի .յուշկ գնաց, բդտեղ .լընգալ։
— Տո՛,—բսեց,—բյոփօղլի ցոա՛ն,
Էս ի՞նչ էրիր,—բսեց,—
Յոթ օր բդրա .յուշկ ներ բդի գա գլոխ։
Յոթ օր լև մնանք, իգա վարդի տուն բարութանդ կէնինք,
Ուրանք չըն կրտնա մբդի պայի։
— Ըրը ի՞նչ։
Բսեց.—Խոո Մանո՛ւկ,—Քեսի Թորոսի տղեն էր,
Բսեց,—դու բդի՛ մնաս տղի մոդ, մենք էրթանք։
Տղեն օր գնէնի,—բսեց,—
Ուր հոր ձին, զենք, ասպարըն կիդաս,
Գ՛հնանիք, կառնիս գիկաս Սասուն։
Ըդենք .յրմեն .յելան գացին,
Մնաց Խոո Մանուկ։

46. *Ես Մանուկ մնաց.*
Յոթ օր թըմամ, տղեն .յելավ։
.Յելավ, ըսեց.—Դու իմ ի՞նչն իս։
Ըսեց.—Ես քու քեռու տղեն իմ։
— Անունդ ի՞նչ է։
Ըսեց,—Ես Մանուկ։
— Լա՛վ։
Ըսեց.—Քու հոր գնաք ու ասպար, շորեր բերեր իմ, հասի՛ր։
Է՛, հասավ հոր շորեր՝ ինչ օր մուդ .յրնդնի կաթսա։
Բերեց, մեռնի՛մ ուր սուրբ Հրաշքին,
Բերեց Սուի Նիշան կաբեց ինվի վրեն, համբուրեց,
Էննեց լցվավ օր՝ հորից .յավելի ուժիդ։
— Դե՛,—ըսեց,—հնձի՛,—ըսեց։
— Գինաս ի՞նչ կա,—ըսեց։
Ըսեց.—Ի՞նչ։
Ըսեց.—Իմ հոր գոր արբանած ա,—ըսեց,—
Կրտանիս էնդեղ բնձի։
Եթե չրտանիս,—ըսեց,—գլոխդի կդրիմ։
Ըսեց.—Կրտանիմ։
Ըսեց.—Դը՛ արի, .յերտում կի՛ իդա Սուի Նիշանով։
Ըսեց.—.Յերտում չըմ ուդի, բայց կրտանիմ, մհե՛ր։
— Լա՛վ։
.Յելավ վերցուց, էգան դուզ ելաթ։

47. *Էգան ելաթ, ըսեց.*
— Իմա՞լ էնինք, օր .յրմնուն կողորինք։
Դնացին, մդան չաղաչ, չաղճըրնին հանին,
Մի քանի ոսկի տվին, բսին.
— .Յելի՛ գնա, ժողովրդին բսե օր՝
Սասունցի Դավիթի տղա Մհեր փիդր ա,
Էգավ, .յրնցավ, կէրթա Սասուն,
.Յելե՛ք բսպանեք, քանի չըմեձրցե,
Օր մեձրցավ՝ գիկա ելաթըն կրկդրա։
Էդ չաղճըրան գնաց, ձեն տվեց բաղաթրն, օր.
— .Յելե՛ք, ելաթցի՛ք, Դավիթի տղա Մհեր էգավ,
Փիդր է, .յելե՛ք բսպանինք, քանի օր չըմեձրցե,
Օր մեձրցավ՝ գիկա բոլորիսի կըբդրա։
Սաղ ժողովուրդ .յելան,

Մհեր մդեր ա ջաղաչըն,
Էդ Խոո Մանուկ ալլրողն .յերես, կայներ ա դուռ։
Գալող պիկա, թե.
— Գյավուր օղլի հարդա՞ն գեթաի։
Կըսին.—Բուդարադա՛ն գեթաի։*
— Է՛ս յանով գնաց, է՛ս յանով գնաց,—գալողին։
Տեսան օր՝ պառվրներ .յելան էդան՝ անթըրից դիմհար.
— Գյավուրօղլի հարդա՞ն գեթաի։
Կըսա.—Բուդարադա՛ն։
Ձեն կիդա, կըսա.—Մհե՛ր, հըլը .յելի՛, տե՛,—կըսա,—
Պառվրներ լե .յելան։
Կըսա.—Շա՛դ լավ։
Գ'հեծնի Քուռդի Ջալդին ու գընգնի .յեղավ ուրանց.
Կըսա.—Խոո Մանո՛ւկ, Քեռու տղա՛,—կըսա,—
Ո՞չ մի հադ չըթողի՛ս մնաս։
Կըսկսին ըդոնց կոդորել, դառնան բաղաբ։
Կըսա.—Գինաս ի՞նչ կա։
Կըսա.—Ինչ՞։
Կըսա.—Էս յանից դու բռնա, էս յանից՝ ես։
Արի՛ .յերտում կի,
Օր մի հադ կադու՞ յա շուն լե չըթողիս մնաս։
Կըսա.—Հա՛։
Էնի էն յանից կրկոդորա, էնի՝ էն յանից։
Դու մի բսա, Աատղ Երդըրանցին էդտեղ նշանած ունի.
Էդ Խոո Մանուկըն պիկա, գ'հանդիբի ըդրան, կրճանչընա,
Գինա, օր Աատղ Երդըրանցու կինն ա,
Ըդրան ձեռ չիդա։
Կոդորին, պիկան, գ'հանին .յիրար.
— Դե,—կըսա,—պրծա՞նք։
Կըսա.—Հա՛։
Կըսա.—Էլ մարդ չըմնա՞ց։
Կըսա.—Չէ՛։
Կըսա.—Դը՛ արի .յերտում կի։
Կըսա.—Ի՞նչ .յերտում ուդիմ,—կըսա,—վա՛յլա չըսիս,
Օր Աատղ Երդըրանցին քու հոր հետ սիսդեր ա,

---

* Թուրքերեն է. «—Անհավատի որդին ո՞ր կողմով գնաց։—Այս կողմով գնաց»։

Ընդրա,—կըսա,—նշանկուն .յոդ ա,—կըսա,—*
Ընդոր ձեռ չիմ տվե։
— Ահա՛ն,—կըսա,—քու .յաչք .յընգդ ընդրան։
Էնի իմ հոր Բշնամին ա, բդի .յուզիմ քըզի,—
Կըսա,—անկարելի ա, բդի՛ տանիս բըրան։
Բերե էդտեղ էդ կնգան կըտեղավորա բդրա մոդ։
Կէրթա, էդ պեղրաններուց ժողովուրդ կրժողվա,
Բերե ժողովուրդ գրինա Հայք,
Էլի կէնա ժողովուրդ, կըսա.
— Էդոր էլ քըզի ժողովուրդ,
Բայց,—կըսա,—տես, անուն, րըզի կրսիմ՝ չէդնի տա՛ս։
Կըսա.—Չէ՛։
Ի՛նչ կէնե էդ մարդ լե. բուր-մխոցոր պես կրպայա,
Որպես բուր ու մխպեր կրպայա։
.Յինը գնդի էրթա Սասուն։

48. *Գնդի էրթա Սասուն,*
Կըտեսնան, օր տղեն էգավ,
Գ'հասնին, գ'համբուրին տղին, կըհույրասիրին։
Մի ժամանագ կըմնա էդտեղ։
Ցետո վ'հրնվ տղին բան կըսա, վատ խոսքեր կըսա,
Էդտեղից տղեն ինադ կէնա, կըսա.
— Կէրթամ Հայք,—կըսա,—էրթամ քեռի Մանուկի մոդ։
Էն վախտ կէրթա, օր Ասորդ Երդրանցին էգե, ուր կնիգ դուդա։

Գնաց էդտեղ, տեսավ, օր էդտեղ զորք էգե.
Ըսեց.—Քեռու տղա՛, էս ի՛նչ բան ա։
Ըսեց.— Ասորդ Երդրանցին էգե, ուր կնիգ դուդա.
Բդի տանք, տանի։
Ըսեց.—Չէ՛, չը՛մ իդա,
Իմ հոր Բշնամին ա,—ըսեց,—չը՛մ իդա։
Վերջ, զանին, թափեցին, իլլաջ ու հնար չէգավ.
Ասորդ Երդրանցին ըսեց.
— Ես քու հոր սխպերն իմ,—ըսեց,—
Մեր մադներ կդրեր ինք, էդեր ինք սխպեր։

* Ասորդ երդրանցու նշանկութ անունը Թուխթամ է,—ասաց վիպասացը հարցումից հետո։ Տաե. բանահավաքնեբի։

Արի՛,—ըսեց,—տո՛ւր, իմ նշանած տանիմ։
— Չէ՛,—ըսեց,—քու նշանած տվեր իմ իմ քեռու տղին,—
ըսեց,—
Իմ հոր դուշմանն իս, չե՛մ տա։
Ըսեց.—Չի՞ս տա։
Ըսեց.—Հա՛։
Ըսեց.—Դե՛ արի, կռվինք։
Իսկ Ասպրդ Երգրանցին .յինք ցոլվեր էր, կըցոլեր.
Սկսեցին Մհերի հետ կռվել։
Մհեր գուրզ կըզաներ՝ չըր բիանև,
Իսկ Ասպրդ Երգրանցին գուրզ կըզաներ Մհերին՝ կըբիաներ։
Ասպրդ Երգրանցու կնիկ տեսավ, օր Մհեր երիտասարդ ա,
էն լե ցոլվեր ա, ըդի Մհերին ըսպանեն,
էդ վախտ ըսեց.—Լուսուն օր տարավ ընձի,
Ըդի ըսա, թե. «Գացիր Խոռ Ւմանուկին էղար կնիկ,
Նոր էգար, էղար ընձի կնիկ»,
Ըդի .յերես տա։
.Յելավ, կաչնավ բալկին, ըսեց.
— Ասպ՛ղ Երգրանցի, Ասպ՛ղ Երգրանցի,—ըսեց,—
Մհեր երիտասարդ ա,—ըսեց,—մի՛ խփա,—ըսեց,—
Մի՛ ըսպանա,—ըսեց,—ըզդի իմ ծձերու մեջ կըպայիմ։
Օր ըսեց, Ասպրդ Երգրանցին գաղցավ, Թամաշա էնեց,
Թամաշա էնելուն՝ Մհեր գուրզ զանեց,
Զանելու բաշտան՝ տեղնուտեղ .յընգավ։
Ըդրան սըբանեց, զորըն կոդորեց.
էդ մարդ մեռավ, ժողովուրդ լե Քողին գացին։

49. *Մնաց էդտեղ ժամանագ մի, էլի գնաց Սասուն։*
Գնաց ժամանագ մի Սասուն, Սասուն մնաց,
էլի Յոան Վանքով ըդրան բան ըսեց,
Նեղեցան, դիլաժաժ էղան, .յելավ ըսեց.
— Էրթամ Կաբուդկին-Կազըզվան։
.Յելավ ձիու գլոխ Քողեց, ըսեց.
— Ձիսի դիր գնաց՝ էնդեղ ըդի էրթամ։
Ձին օլըրվավ, փոխանագ էրթիր Կաբուդկին-Կազըզվան,
Գնաց դըբա Հալեր։
Գնաց դըբա Հալեր, էդ Հալբա խալիֆեն,
Օր .յերտում ա կերաձ Դավիթի հետ, թե,

«Քրդի տղա էդավ՝ տաս իմ ախճրգան,
Ընձի ախճիգ էդավ՝ տամ քու տղին».
Ըդրան էլ մի հադ ախճիգ էդև,
Հա՛ կարքիմ, հա՛ .լըսօր, հա՛ լուսուն,
Հա՛ կարքիմ՝ չըկարքա էդ մարդըն, կըսա.
— Ես .յերտում իմ կերև Դավիթի հեդ,
Օր ընդրա ձիով րդի .յիգա։
Էդ ձին դո՛ւզ գնաց էդ յան, գնաց Հալեր։

50. Էդ վախա, Հալեր էրթալու ժամանագ,
Էրդու երիտասարդ, մի հադ ջեյրան կար,
Էդ ջեյրանի .յեդեվ .լընգած են ու զրգանեն։
Ինչքան գուզեն, օր բռնեն ու գանեն՝ չըն կրռնա։
Մհեր տեսավ, օր էրդու երիտասարդ բրդրնքի մեջ,
Զիանք հեձած, չըն կրռնա էդ ջեյրանին գանի,
Զին քշեց ու ա՛լրըալ ջեյրան գանեց,
Վերուց, դրեց թաթը։
Էդ տղեգներ էգան, հասան, բսին.
— Ա՛յ քու տուն շիբվի՛, մենք վատանք բդրա հեդ,
Դու ջեյրան գանիր, վերցիր։
Բսեց.—Համեցե՛ք ձրդի, երիտասարդնե՛ր։
Մհերըն տվեց բդինց, բդինք բսին.
— Օր դու նվիրիր մրդի՝ դու մեր խոնախն իս,
Բդի դաս մրդի խոնախ։
Բսեց.—Շա՛դ լավ, .յայբիս վրեն։
.Յելան էդեղից, ձիան հեձան ու գացին։

51. Իսկ էդ Հալրու խալիֆեն, ժողովուրդ բումած է, թև.
— Ա՛յ մարդ, քու ախճիգըն կարգա՛, ամուսնացո՛ւ,
Ախր, չէ՞ օր ժամանագ .լընցներ ա։
Էդ վախա բսեց.—Ի՞նչ բսիմ, .յերտում իմ կերև։
Տեսավ օր՝ իրեք հոգի գիկեն,
Իշկնց տեսավ օր՝ մեկրն Դավիթի ձին էր։
— Ահա՛ն,—բսեց,—վերեվ աստվա՛ծ, ներքեվ մենք շրհա՛դ,
Ահա՛ն,—բսեց,—իդա Դավիթի ձին ա,
Թե վրեն ո՛վ էդնի՝ շըդիդեմ։
Էգավ, էգավ օր՝ հարցուց.—Որդեղացի՞ իս։
— Սասունցի իմ։

— Լա՛վ։ Վի՞ր տղեն իւ։
— Դավիթի տղեն իմ։
— Ահա՛ն,—բսեց,—տեսա՞ր։
Էդ մարդուն տարավ, հույրասիրեց։
Դու մի բսա, ֆեյրան զանազներն էլ բզրա տղեզներն ին։
Տարան, սկսեցին բդեղ ուղև-խմել, բեֆ էնել։
Բևրին կազմեցին, օր.
— Քու հոր հեդ ես արի ու շարի իմ էնև,
Օր իմ ախճիգրն բդի տամ բզրի։
Բևրին էդտեղ նշանեցին, հարսնիք էնեցին։
Էդ Հալբու խալիֆեն բսեց.—Գիդաս ի՞նչ,—բսեց,—
Բուրզա,—բսեց,—մըզնե խարջ կառնի,—բսեց,
Ախճրդան սովըրցուց օր.
— Ըսա՛, օր գնա, Բուրզա ավիրա,
Ըսե բդենց թակավորին, օր էլ խարջ չառնե մըզնե,
Նոր, բսա՛, քու կինն եմ,
Չէ՝ չը՛մ առնի բզրի, չը՛մ ամուսնանա քու հեդ։
Ախճրդան սովըրցուցին, ախճիդ բսեց, օր.
— Բդի՛ էրթաս, Բուրզա ավիրես,
Օր նոր գաս, էդնինք ես ու դու մարդ ու կին։
Ըսեց.—Շա՛դ լավ,—բսեց,—կէրթամ։

52. Իսկ բդենք .յիմցած ին,
Օր Դավիթի տզա Մհերըն էգներ ա էդտեղ, ամուսնացեր ա։
Բդենք պադրաստած օր՝ Դավիթի տզա Մհերըն դիկա,
Բուրզի կավիրա՝ էնի մըզի խարջատուր ա,
Մենք բդի իդհաղ խարջ տանք բզուր։
Բևրած, մի հադ կարմունջ կա, ամբողջ ծով ա,
Մի հադ բարագ կարմունջ ա, նեղուց ա,
Էդտեղ բռնած էդ կարմընջի վրևն ձուի հալած, լցած,
Օր ոչ ձի .յընցնի, ոչ բան,
Մհերն օր .յիգա, բդեղ բյաման Թալին, բռնին։
Հնձավ ձին, գնաց։
Քշեց կարմընջի վրևն՝ չելավ,
Ըսեց.—Յավա՛շ ձին Թողնիմ բստեղ,
Ես,—բսեց,—ոդով էրթամ։
Ձին Թողեց էդտեղ, օր բդի ոդով էրթեր,
Սկսեցին բյաման Թալել։

Օր քյաման Քալեցին՝ մի բան հոդու հըմլա Քափ ավեց,
Բևրեց լցեց ծով, խնխտան։
Ըսեց.—Շա՛ն որդիք, ընենց քյաման Քալեք,
Օր .լընգնի էս Քևվեր, օր չկըռնա շարժվի,
Քաշինք, բևրինք։
Քյաման Քալեցին՝ .լընգավ Մհերի Քևվեր,
Բևրեցին Մհերին, կարին։

53. *Մի հադ հոր փորած ա, մի պառվու տան մոդն ա,*
Բևրին, Քալեցին Մհերին էդ հոր։
Արձիջըն բդի քանդին, նորից հալին, .լընան Մհերի վրեն։
Էդ պառվուն լև, տան մեջ, մի հադ հոր կա բդմալ,
Էդ պառավըն խղճահարվավ, ըսեց.
— Ա՛յ, իդա երիտասարդին բևրին, Քալին էս հո՞ր...
Մութն օր ավեց, ըսեց.—Մհե՛ր, Մհե՛ր։
Ըսեց.—Ի՞նչ է։
Ըսեց.—Խըլդ լուսուն արձիջ դ'հալին,
Դբլնան քու վրեն, իմա՞ կ'ևնիս։
Ըսեց.—Ի՞նչ էնիմ, էս հորու մեջ հնարք ու իլլաջ չկա։
Ըսեց.—Եքե խոզմա տամ, ցույց տամ,—ըսեց,—
Կբռնա՞ս,—ըսեց,—ծագիս,
Էդ յան լև՝ իմ տան մեջ, մի հադ հոր կա, .լընցրնիս։
Ըսեց.—Տո՛ւ, մայրի՛դ։
Խազմեն ավեց, ա՛լբհալ ծագեց, .լընցավ էն յան։
Ըսեց.—Մայրի՛դ։
Ըսեց.—Ի՞նչ ա։
Ըսեց.—Քնչա, բան, բսակի բրուչ ու մրուչ չկա՞,—ըսեց,—
Տո՛ւ, օր զանիմ էն հալկու ժամանաղ իգա ծաղ։
Ըսեց.—Կա՛։
Ժողվեց պառավ էս յանից, էն յանից,
Բևրեց սարբեց մի հադ լավ իրը՝ էդ ծագի չափ,
Օր զանա դևմ։
Մնաց։ .Յառավոդ բևրին ձուի հալին, էգան.
— Սասունցի տղա Մհե՛ր, Սասունցի տղա Մհե՛ր։
Ըսեց.—Ի՞նչ ա,—ձեն ավեց։
Ըսեց.—.Յո՞դ իս։
Ըսեց.—Հա՛։
Ըսեց.—Դե՛ գնա, չորցի՛ հորու մեջ։

Ղոյնք սկսին վերելից .լըլնալ,
Էնի .լընցավ էն յան ու էդ բանըն պանից պեմ
Ու քամագ տվից ուրին։
Արձիչ լցրի՜ն, հալեցին, հալին, լցին։
Մնաց։ Մգա տղեն հորուց չըկըռնա .լինի.
Պառավ կէրթա, հաց-բան կըրնըա, կիգա,
Հորու մեջ տղեն կուգա։
Մեզ օր, տաս օր՝ տղեն նիհարավ։
Ըսեց.—Մայրի՛գ։
Ըսեց.—Ի՞նչ ա։
Ըսեց.—Հալեքուց բսկի մարդ կա՞ էգտեղ, ժողովուրդ կա՞։
Ըսեց.—Շա՛դ կա։
Վաճառապաններ լև կան, հարուստներ լև կան։
Ըսեց.—Գնա՛, բղոյց միջոցավ,—ըսեց,—
Բաս՝ դան, բնձի հորուց հանին,—ըսեց,—
Ես ընդոյց լավ մարդ կըդառցում։
Իսկ ձին ի՞նչ է էրև.
Ձին լև ճամպեն կդրեր է,
Ժողովուրդ է՛լ էդ ճամպով չըն կըռնա էրթա,
.Յընցնող-դառնողին ձին կըսադրըցու, կըպահա։
Գնաց, հասկըցուց էդ վաճառապաններուն,
Էգան, Մհերին հանեցին հորուց։
Հանին, տեսան, օր նիհարեր է,
Սկսեցին բերել, էդ մարդուն կերակրել։

54. Շարաթ մի, էրգու՝ .յիրգուն ըսեց.
— Յալա՛չ էրթամ, շորերսի հակնիմ,
Տեսնիմ, տեղն առեր է,
Նոր դառնամ գամ, ավիրիմ,—ըսեց,—
Չէ՛՝ զըթի չէ։
Էգավ, ձիու մոդով .լընցավ, ձին տեսավ,
Համբուրեց ձիուն ու թողեց, .լընցավ գնաց։
Գնաց, մդավ կնգա սենյագըն.
Ըսեց.—Ո՞րդեղացի իս։
Ըսեց.—Բուլզեցի իմ։
Ըսեց.—Սաատնցի տղա Մհերին ի՞նչ էրին։
— է՛,—ըսեց,—քու տուն շիրվի՛,—ըսեց,—ի՛նչ էրին,
Թալեցին հեր,—ըսեց,—արձիչ հալին, լցին վրեն,

Սաքախտան .յելա,—ըսեց,—
Զռնապղիզ մի խաղցա վրեն ու էգա։
Օր ըսեց, ախճըդա .յուշկ գնաց։
Ախճըդա .յուշկն օր գնաց, էնի շորեր հակավ.
Շորեր հակավ, տնսավ, օր հըլը տեխ չէ,
Շորեր կախեց ու քաղեց գնաց։
Ջուրի ախճիդ .յիմցավ, արգևն տղեն գնաց։
Գնաց, մի ժամանագ մնաց, ըսեց.
— Յավա՛շ, էրթամ տեսնիմ՝ տեխն առե՞ր է։
էգավ, էլի ըսեց.—Ո՞րդեղացի խ։
Ըսեց.—Բուրդեցի խմ։
Ըսեց.—էն Սասունցի Դավիթի տղա Մհեր խմա՞լ էգավ։
— Հը՛,—ըսեց,—բու տուն շիրվի՛,—ըսեց,—
Արճիշ հալինր, լցինը վրեն,—ըսեց,—
Սաքախտան .յելեր խմ, պար խաղցեր խմ վրեն,
Զռնապղիզ մի խաղցեր խմ, քաղեր խմ էգի։
Օր ըսեց, ախճիդ խըստու .յուշկ գնաց,
Տղեն հակավ շորեր, ախճիդ քոավ, բռնեց.
— Տո՛,—ըսեց,—Մհե՛ր, բու հոդուն մեռնի՛մ, մի՛ գնա։
Ըսեց.—Չի՛,—ըսեց,—կէրթամ,—ըսեց,—ախճի՛,
Օր ըսեր խմ, ըսեր խմ։
կէրթամ,—ըսեց,—ձեն չը՛հանիս։
Լուսուն,—ըսեց,—Բուրդի կավիրիմ։

55. Գնաց, խանչեց էդ պառվուն, ըսեց.
— կէրթա՛ս, ինչբան օր հալերցի կան,
Ըսա՛, .յելնին ինա սարի գլոխ,
.Յըսօր ուրանց տոնն ա,
Ճամպով չըն կրոնա էրթա, ձին կդրեր է ճամպեն,
Ոտով բդի էրթանը,
Ըսա՛, օր բդի քնի էնինը,
Մի կերպ, օր ժողովուրդըն բըլրի .յընցնինը,
էրթանը մըր .յերդիր։
.Յըմեն, ինչբան օր հալերցի կար,
.Յելան էդտեղ, սկսեցին իրանց համար քնի էնել,
ուրախանալ։
Մհեր գնաց, ձին ֆամբեց, հեձավ,
էգավ, մդավ բաղաբ ու սկսեց կոդորել։

Կպդրեց, էգավ հասավ Թակավորին,
Ըսեց.—Արի՛,—ըսեց,—գլոխդ կըկդրիմ,
Արի՛,—ըսեց,—.յանձնատուր էդի՛,—ըսեց,—
Սատրագրութեան ատ՛ուր, օր դու,—ըսեց,—
Խարշ տաս Հալեբուն։
Էդ Բուրգեցին բերեց՝ Թակավորն, սատրագրեց, օր.
— Ես,—ըսեց,—խարշատուր իմ ընդրան։
Նայր ըդտեղից, ուրիմն, էդ ժողովուրդ էգան,
Ինչքան օր Հալեբցի կար,
Ըդոնց .յըմեն կայք ու կարողութեան ավեց, բան ավեց,
Ըդոնք, օր ուրին կերագլած են,
Ըդոնց լավ-լավ տեղրան ավեց,
Սկսեցին ըդոնք արբալ։

56. .Յինք էգավ, ժամանակըմ մնաց էգանգ։
Ժամանակըմ մնաց կնդա մոդ, .յեկան գացին ավուխուշի։
Որ .յեկան գացին ավուխուշի, մի հաղ չեչրան փախավ։
Չեչրանն օր փախավ, .յինք ձին բշեց,
Ձին քշեց՝ ինչքան չեչրան գնաց, .յինք գնաց,
Քարափըն բացվավ, չեչրանըն մդավ բարափ,
.Յինք լի ձիով մդավ բարափըն
Ու ... վերջացավ։

57. Ասում են, իրըև Համբարձումն-Համբարձում
Էդ բարափից չուր կրկաթաս։
Ասում են, իրըև ընդրա ձին օր կրշտա,
Էդ չուրըն է։
Ասում են, ինչ վախտ օր դեղին ամբացավ,
Ընդրա ձիու ոդ վերցուց,
Նոր նա բարափից դուրս դիկա։



Ղևոնդի Հետքերով

պատմել է
Ասպարանցի Գևորգ Պետրոսյանը
Ասպարան – Արուճած գյուղ
գրառված է 1972 թ.



Հարց Մարգարի Պետրոսյանը ծնվել է 1898 թ. Ապարանի Ղազանճար (այժմ Արագած) գյուղում։ Նախնիները 1828—29 թթ. գաղթել են Ալաշկերտից։ Կնոջը պրագմատիզով հոգագործ է, եղել է նաև հովիվ։ 1909—11 թթ. սովորել է գյուղի դպրոցում, ունի երկդասյա կրթություն։

Մասնակցել է Հայրենական պատերազմին. հինգ տարի ծառայել է աշխատանքային գումարտակներում։

Վնդր լսել է հորեղբորից՝ հայտնի հեքիաթասաց Նիկողոս Պետրոսի Մարգարյանից, որը մահացել է 1938-ին, 75 տարեկան հասակում։ 1912—13 թթ. երմանդ ձմռանը Ղազանճարում (այժմ՝ Արագած) Նիկողոս Մարգարյանից գրառել է բազմաթիվ հեքիաթներ։ Նիկողոսի քեռիներն ապրել են Բազարչուղում (այժմ Արագի գյուղ)։ Հայտնի վիպասաց Բարսեղ Մահակյանը, որից այդ թվականներին Ն. Լալայանը դասընդել է վնդր, եղել է։ Գեորգի վկայությամբ, Նիկողոսի քեռորդիներից մեկը, որից և վնդր սովորել է Նիկողոսը։

Գեորգը թևակոտ գրագետ է և գրքերում էլ կարդացել է «Սասնա ծռերը», բայց պատմում է մեծ հորեղբորից լսածը։ Եվ, իհարկե, նրա պատումի վրա բնավ չի նմանվում գրքային ազդեցություն։

Պատումն էր դուսպ ոճով, հատ-հատ, տեղը-տեղին, տրամաբանված, ժողովրդական թևավոր խոսքերով համեմված։ Երբ վիպում էր Դավթի հավատքության մեջ պահպանվելու մասին, ասում էր՝ Դավթի հավատքի մեջ պահպանվեցին, հուզվում էր հաճախ, քան երևույթին արձնանում էին իր երբեմնի հավատքի հուշերը։

Պատումում կան զգալի թվով չափածո հատվածներ, ինչպես, առանձին գեղջկուհում, փորը ինչ խաթարված, բայց շատ հետաքրքիր։ Զավակները վկայում էին, որ տանը հայերը մի քանի անգամ պատմել է «Սասնա ծռերը»։

Վիպասացի վկայությամբ՝ հորեղբայր Նիկոն (Նիկողոսը) վեպն անվանել է «Դավթի հեքիաթ» և «Ողջմիտով» չի սկսել վնդր։

Գեորգ Պետրոսյանը պատմեց նաև «Ռուսաստամ Զալ» հայ-իրանական վեպի «Ռուսաստամ Զալ և Սալմանն Մեդն» ճյուղը, որ դարձյալ լսել է հորեղբորից*։

Վերնագիրը վիպասացինն է։

---

* Սույն պատումի գրառումից հետո պարզվեց, որ Գ. Պետրոսյանից մի քանի տարի առաջ ուրիշներն էլ են գրանցել վեպը (գրառողի անունը վիպասացը չէր հիշում)։ Երբ 1973 թ. «Երևանի համալսարանի Բանբերում» (№ 2) տպագրվեց Գ. Պետրոսյանի այդ պատումը, պարզվեց, որ գրառողը եղել է Գր. Գրիգորյանը։ Համեմատությունը ցույց տվեց, որ երկու գրառումների մեջ զգալի տարբերություններ կան։ Ուստի, սոսկ գրական նկատառումներով, իրրև նույն վիպասացից տարբեր ժամանակներում գրառված վեպի տարբերակներ, որոշեցինք մեր գրառումը ևս հանձնել տպագրության, որ կարող է վիպասացի ավյալ տարբերակների համեմատական հետազոտության համար լուրջ նյութ բացել։

Ա

ՄԵԾ ՄՀԵՐ

Աստուն կար Մհեր, Մսրը կար Մելիք։
Մի ժամանակ անց՝ Մելիք կըմբհանա։
Մելիքն օր կըմբհանա, Իամիլ խաֆուն նամակ կըգրա Մհերին,
Թև. «Ախբ՛, ամուսնացի իմ հեդ»։
Նա դուգա, օր էրտա, ամուսնանա, կին չ՚ամաձայնի.
Կին ասում ա.—Ա՛յ մարդ, մի՛ գնա,
Ընչի՞ կէրտաս դու այլասկի հեդ կամուսնանաս։
Վերջ, Մհերի հեդ իլլաջ չէղնի, գննի էրտալու։
Օր գննի էրտալու, կին կըսա.
— Ես յերտում կուդիմ ասածու դեմ,
Օր բառասուն տարի ոչ քու յերես տեսնամ,
Ոչ քու հեդ խոսամ, դրանից հետո։
Մհեր անկաջ չէնա, կէրտաս։
Մհերն օր կէրտաս, Իամիլ խաֆուն հեդ կամուսնանա,
Կըմնա էնտեղ, Մելիք կըծնվի։
Մելիքն օր կըծնվի, մեդ ժամանակ կըմնա,
Յոթ տարեգան կէղնի, կըտեսնի օր՝

Մելիք մե հադ մարալի պլոխ զարգեր ա ընձի տաք՝ քաշեքաշ
դիկա,
Օր կըտեսնա, Մհեր կասա.—Համ-համ,—կըսա,—
Ես հայ ասկի հրադ անցուցի, այլասկին՝ վառեցի։
Էս ի՞նչ բան էր էղավ.
Ընձնե եվե մի հադ ժառանգ չէղնի,
Զրկայնի այլասկի դեմ,
Դրանք մեր Սասուն կըդան օդաց տակ, կըկդրին։
Գելնի գալու։

2. Օր գելնի գալու, խաբար դիկա կնդան,
Ըև.—Մհերն էղավ։
Կնիդ յոթ փադ կըբցա դուան յեղնավ։
— Ընդրա յերես բդի չառնի իմ յերեսին,
Իմ աչքին բդի յերես չառնի։
Նա դիկա, լուսամուտի տակ գըկայնի.
Կըսա.—Կի՛ն, յելի, դուռ բաց,
Ես հայ ասկի հրադ անցրեր իմ,
Այլասկին կըբուցեր իմ։
Ըև.—Ինչպե՞ս։
Ըև.—Էպե՛ս,—կըսա.—ընձնիդ մե հադ ժառանգ
չէղնի,
Զրկայնի այլասկի դեմ, հայութուն չըպաշտպանվի,
Սասուն օդաց տակ կէրտաս։
Կնիդ չ'ամաձայնվի։
— Կնի՛գ,—կըսա,—արի՛
Քառասուն տարին էնինք քառասուն ամիս,
Քառասուն ամիսն էնինք քառասուն օր,
Քառասուն օրն էլ էնինք քառասուն ժամ,
Լրանա, յիդանք յիրար մոդ։
Էդպես գ'ամաձայնին, բայց կինը կըսա.
— Մեղնից մեգը,—կըսա,—
Մենք օր յերտըմազանց էդանք, մեգըս կըմըշանա,
Էն ժամանագ,—կըսա,—մեգըս կըմըշանա։
Քառասուն ժամն օր կըթմի, դիկա մոդ։
Վերջ, կըմնա էրեխով, իրանց մի հադ աղա կէդնի։
Տղեն օր կըծնվի, կինը կըմըշանա.
Կինը կըմըշանա, տղեն կըմնա անտեր։

Ասըմ ա.—Սրա բինի տագ ոչ մի կին չի դիմանա,
Եթե դիմանա՝ Խամիլ խաթունն ա՛,
Չըդիմանա՝ Խամիլ խաթունն ա։

3. Գևղնի, տղեն կըխրգա Մսըր։
Տղեն օր կըխրգա Մսըր, Խամիլ խաթուն օր գրանանա, կըսա.
— Ես ի՞նչ էնիմ, ոչ ծիծ ունիմ, օր տամ պայիմ, ոչ բան։
Ջունե՞ր իրան հարստություն,
Մի տիզ մեղր խրգեր, մի տիզ կաթաք,
Ես էս տղեն պահենք։
Խաբար կըտրին Մհերին,
Մհեր, ինչն օր պահանջն ա, կըխրգա, կէրտա,
Տղեն կըպայա։

Բ

ԴԱՎԻԹ

4. Տղեն օր կըպայա, կըմեծրնա,
Մե ժամանագ կըսկսա ման գալ։
Դրանց էլ ի՞նչ սովորություն ունին.
Նրա հերն օր մահացեր ա, Մելիքն օր ծնվեր ա,
Նստեր ա հոր տեղ թաքավոր։
Դրանք սովորություն ունին, .յագուզ օրեր ունին,
Օր, հաշված, կիրագի, կամ շաբաթ օր կէրտան,
.Յագուզ մեյդան ունին,
Էդ մեյդնի մեջ հոլ կըխաղան։
(Էդպես կասեր Հարոխպերս)։
Էդ ժամանագ, օր էրթլու կէղնին,
Դավիթ ինչքան դիլա, քե.—Մայրի՛գ,—ասում ա,—
Ըսա .յիրան՝ Թողա, ես էլ էրտամ Մելիքի հեդ։
Մելիք ասում ա.—Չէ՛,—կըսա,—
Էդիկ էնպիսի մե ասկ ա,
Օր գիկա էնտեղ, ընձի մե փորցանքի մեջ կըբցա։
Վերջ, մոր հեդ իլլաջ չէղնի.
— Դե՛,—կըսա,—քու ախպերն ա վերջիվերջո,
Բղի գա քու հեդ։

Ախպերն օր կըտանա հետ, կըսա.
— Ես գինամ, ըդոնք ինչ ասկ ին,
Դոռոզ ասկ ա էդի։
Կըբերա մե հատ գումշի կաշի կըփաթա ախպեր,
Ճոպնով խայիմ կըկապա, կըբցա,
Ու իրանք կէրտան խաղալու։
Ուրանք օր կէրտան խաղալու,
Տղեն շատ գիլա, կըսխպա, կրմորմըրա,
Աստված խանչա, կըսա.
— Ես լսեր իմ, օր ես հայ իմ.
Օր հայ իմ, ես հայ լուսավորչական հավատա կրկանչիմ.
Օր էս ճոպան՝ շրիդ, կորվի,
Ես միջեն .չկընիմ։
Դե՛, հերքի բան է, ըսկլով,
Կըկարի ճոպան, ազեն գկընի։
Տղեն գկընի, էն ժամանագ կէրտա օր,
Կըկայնի էն մեյդրնի էն տեխ,
Օր Մելիք հոլ բդի զարգա, դա էնտեխ .չկընի։
Իսկ հոլի զարգելու սրեն Մելիքին ա։
Մելիքն օր դրան դրտեանա, կըսա.
— Ինչ էնիմ, ձեն տա՛մ,
Վայ քե, էդի դոռոզ ասկ ա, տեխից ժամ չիկա,
Ջիդամ՝ զարգիմ, բդի ըսկն, քե.
Կաներ մի հացի համար զարգեց, ուր ախպեր բսպանեց։
Ձեն կըտա, կըսա.—Դավի՛թ, Դավի՛թ, էդտեխից հետցի,
Հոլ չիգա, դրբի քըդի։
Կըսա.—Ես ես քոռ չի՛մ,
Դու օր զարգիր՝ ես էլ կըփախիմ։
Էդ հետևանց օր էնի հոլ կըզարգա,
Գիկա, ձեռ կիդա դեմ, կըբռնա,
Կըզարգա ըդրա ժողովրդի մեջ,
Կէրտա ըդրա խոշունի մեջ, զորբի մեջ,
Մոդ իրեք հարուր հոգի բսպանվին ու վիրավոր կէղնին,
Ու .չինք էդտեղից կըփախնին։
Փախնի գըկա, կըպառկի ու կըքնի։
Օր կըպառգի քնի, Մելիք կըսա.
— Էլ հե՛չ ա խաղալ,—ասում ա,—վերցրե՛ք էրտանը։

5. Խաղ փոդմիշ կէնա. դիկա,
Դիկա, էն ժամանագ դիկա, օր Դավիթ քնուգ ա։
Բուր քաշա, օր վիզ կդրա,
Մեր գ՝ասնի, չըթողա, կըսա.
— Ի՞նչ կէնիս, անաստվա՛ծ։
Կըսա.—Գիդաս էդի ի՞նչ օյին հանից իմ պլոխ.
Ես օր կըսանք՝ մայրի՛գ, միք Բողի էդի գա իմ հետ,
Գու .յանգաջ չէնիր.
Էսպես վնաս տվից իմ ժողովրդին։
— Դը՛ օր էդպես ա,—կըսա,—յավա՛շ,
Մե սինի օսկի .յըլնանք, մե սինի՝ կրագ
Ու .յիմաց տանք, տեսնանք՝
.Յելնի, օսկին գըվերցո՞ւ, ի՞նչ կրագ։
Եթե օսկին վերո՛ւց, դիտավորյալ է էրև,
Եթե կրագ վերուց, էրևյա է, միամտաբար է էրև։
Օսկին ու կրագ դնին, իրան գ՝իմացուն.
Իրան օր գ՝իմացուն, գելնի,
Է՛, .յինք չըֆա՞մի, օր կրագն ու օսկին ինչ ա,
Ձեռ կրատնա, օր օսկին վերցու,
Հրեշտագ ատծուն ձեռ կօլըրա,
Կըդնա կրագի մեջ։
Օր կըդնա կրագի մեջ, ձեռն օր կէրնցի,
Կըդա լեզվին, լեզուն էլ կէրնցի,
Կըմնա Թլոլ՝ Թլոլ Դավիթ։
Օր կըմնա Թլվագ.—Դե՛,—կըսա,—
Օր էդպես ա, մայրի՛գ,—կըսա,—
Էլ էն լեռանին յաո չըհանա,
Խրգա՛, Քրխ էրտա ուր հոր երգիր,
Իմալ կէդնի՝ էդնի,
Էլ մեզ էլ իմ աչք չառնի ըզրան։

6. Մեր գելնի պադրաստություն կըտեսա,
Ըզրան խրգա էրգու փայլեվնի հետ։
Էդ փայլեվներն էլ, իմալ օր Դավիթին բերած ան,
Դավիթի հոր փայլեվաններն ին.
Մեզի անուն Շարպանդա Քամի ա,
Մեզին՝ Բաթմանա Բուղա։
Էդոնք օր գիկան, կըսա,

— Օր իմ հեր մըհացեր ա,
Է՛լ դու մի գնացեք էնդեղ, մնացեք իմ մոդ,—
Մելիքն ա ասում,—ես ձրդի պայիմ։
Դրանց կըսովըրցու գադանի, քե.
— Կրտանիք ճամպու մեջ, մե կեր բդրա վերջ կիդար,
Կըսպանիք, կամ մե բան կէնիք,
Ուրնոդ շորեր բերիք, կիդար բնդի։
Տղեն օր կըդնին ճամպու, բդինց հետ դիկա,
Իրեք օր դիշեր-ցերեկ դիկան,
Տղին ոչ հաց կիդան, ոչ կրսին՝ արի՛,
Ոչ կրհարցուն՝ ծառավ իս, սոված իս.
Կամ օդնեորդի փշեր ծագած ան,
Ինչպե՞ս ա, Դավի՛թ.
Վերջ, բոլորովին չրհարցուն։
Դիկան հերի Փրե Բաթմանտա կարմունջ,
Օր դիկան էդ կարմընջի մոդ, կրսին.
— Աշկարա մենք վայթն չրկըրնանք բդրա վրեն.
Յավա՛շ, խոպինք, էտեղ Քող գա,
Հասնինք, ամեն մեդ ձեռ, մեզ ոդ բռնինք,
Քցինք ջուր, Քող տանա։
Ըդինց օր ձեն կիդան, քե.
— Դավի՛թ, Դավի՛թ, արի՛։
Կրսա.—Հա՛, ի՞նչ ա, ձեր միաբ ձեր վրեն կատարի,—
Կրսա,—էս իրեք օր ա գրկանք, ընչի՞ չրհարցըրիր,
Քե՝ Դավիթ ասված իս, ծառավ իս,
Փշեր օդնեորդ ծագեցին, որեչ մի բան էդավ քեզի։
Դիկա հասնի կարմընջի վրեն,
Մեզրն մե կողմից գիկա, մեզ՝ մե կողմից,
Օր բռնեն, քցեն ջուր։
Ձեռ կըզարդա, էրգըսին էլ կըբերա,
Խայիմ զարգա .յիրար, սրխամա,
Էրգըսի կողեր կըմանի .յիրարու փեր։
— Դե՛,—կըսա,—դնացե՛ք,
Ձեր Մելիքին ինչպես տեսաք, էնպես էլ ըսե՛ք։
Ես կէրտամ էս .յանդամ,
Հարցուցելով, ուղղություն կրվերտամ,
Կէրտամ մեր Հայաստան, մեր երդիր՝ Սասուն։
Գիկա։

Ընդ՚ք Քրխ դառնան էրտան,
Հասնին, խարար տանին Մկլիքին,
Տղեն գիկա։

7. Խարար կրտանին Զինով Օհանին, Քե.
— Աչքդի լո՛ւս, Դավիթն էգավ։
Դավիթն օր գիկա, կրտեհնան.
Ճիշա ա, մեզ պադանի յա, քայլ հսկա յա։
Տղեն կրպային։ է՛, էրեխա ին,
Բդի չիլնին խաղան քուշին, կամ պլանի վրեն։
Կբխաղան. կրտեհնա, օր էրեխեք ճան կբխաղան,
Գիկա, հորոխպե՛ր կբսա.
— Հորոխպե՛ր, բնձի էլ ճան ա՛։
Խաթրից չ՚էլնի, ճան կանին, կէբտա։
է՛, Դավիթ խաղալ շա՞դ գինա.
Կբխաղան, կրտանին ճաներ։
Ճաներն օր կրտանին, կբսա.
— Ետ տվե՛ք իմ ճաներ։
Ասում են.—Ընչի՞ եդ կիդանք,
Մենք տարեր ինք, խա՛ղ է։
— Չէ՛, բդի եդ տաք։
Մեզ ընդուց, մեզ ընդուց, բդտեղ.
Որին քաշա՝ Քեվ տեխից կբհանա,
Որին զարգա սիլլով՝ վիզ կբծռա,
Բոլոր գիկան հորոխպեր մոդ բոզոր.
Կբսա.—Մենք յոնջա չինք՝ նորից կանչընանք, Զինով Օհա՛ն.
Ձա՛ մըդի քուչըցու էս քաղաքից,
Ձա՛ բդրան մի կերբ էրա, մի տեղ խրգա՛։
— Ի՞նչ էնիմ,—կրսա,—ես։

8. Բևրա կիդա գառնարած։
Կրսա.—Դավի՛թ, օր իդա գառներ պահիս,
Մենք շադ հախ ժողվինք, կբհարուստանանք։
— Դե՛,—կրսա,—դու տվիր, ես էլ կրպահեմ, հորոխպե՛ր։
Կէբտա, բդրա օդով էրգրան կոշիդ կիդա շիննել,
Մի հադ էլ էրգրից փեդ կիդա շիննել։
Ու Դավիթ գառներ կրբշա։

Կրսա.—Չէրտաս Սեվ սա՛ր,
Կէրտաս Հրոռլա դաշտ, Դավի՛թ ջան։
Է՛, Դավիթի շագ հէգն ա,
Քշա ու... հայդե՛ Սեվ սար։
Օր կէրտա Սեվ սար,
Ընդրա հոր մրհանալուց մինչև էդ վախտ,
Էդ Սեվ սար ոչ մի մարդ չըդնացեր ա,
Ջուն ու ջանավըրով լցվեր ա.
Մեզ տեխից աղվես դիլնի փախնի,
Մեզ տեխից դել կրփախնի,
Մեզ տեխից նաբաատագ կրփախնի,
Որին օր ձևոր կիդա, բռռա,
Գիկան, լցվին ուլերու մեջ։
Հաչին Օհան Հայ կրտանա տղին.
Տղին օր Հայ կրտանա, տանտա օր.
Լիք լցվեր ա գառներու ու ուլերու մեջ,
Հարուրըն գառցն հազար։
Կրվախեննա, կրսա. «Էրտամ մոդիդ, վեճյան ընձի ուդին»—
Ասում ա,—Դավի՛թ, Դավի՛թ, արի, հայ տար,
Բեզրեր իմ, մեձ մարդ իմ,
Մինչև էատեղ էգեր իմ, էլ չըկարամ գամ։
Ասում ա.—Հա՛, իմ հորոխպեր վախեցավ։
Գիկա, կրսա.—Տո՛ հորոխպեր,
Տեսնա՞ս էս անտեր բոզ ուլեր,
Աստված օրշնա էս սեվերուն, ըստոնք անմեխ ին,
Ինա բոզեր էն տեսագ չար ին, իմ հոգին առած ա։
Մեզըն մե սար կրփախնի, մեզ մե ձոր կրփախնի,
Լարելով հոգիս .յեկեր ա։
Տեսնի օր՝ մահազն էլ մաշն, էգեր է հասե ձեռ,
Էնքան ա զոռգն քարին,
Օդի օդնամաններ մաշե։
— է՛,—կրսա,—Դավիթ ջանավարն ու գառն .յիրարից չըջոգա։
Գիկա, կրսա.—Զրր դռներու .յեղեվ յոթ փագ բցի՛ք,
Դավիթ էնքան ջուն ու ջանավար ա ժողվե, բերե,
Որ լցվան քաղաք, մեր քաղաք կուղին։
.Յիրգուն կրքշա, բերա, կրտեսնա օր՝
Վիր ձեն կիդա՝ մեզ ջ'էլնի։

Ըսավ.—Վերն օր մեզ ա՝ էրդուս իմ բերև,
Վերն էրդուս ա՝ ասաս իմ բերև,
Վեր հինգ ա՝ քանի իմ բերև,
.Յեկե՛ք, տարե՛ք ձեր գառներ։
Մեզ .յախտու չ'էլնի,
.Ձիներ լև գիկա, մեյդընի մեջ արխային կըպատկի ու քնի։
Կըսա.—Օռշնըվառնե՛ր, էն օր գոհնին ա՝ դուրս գնացե՛ք,
Ներսենին ա՝ ներս մնացե՛ք։
Ժողովուրդ գելնին, գողդու գոներ կըբանան,
Ուրանց գառ, ոսլ քաշին ներս,
.Ձիներ կըմնա քնուց։
—.Յառավուդ գելնի կայնի մեյդան՝
Մեզ ոսլ ու գառ չըբերաս։
Օր Ձեն կիդա, Քե.
— Ձեր ոսլեր, գառներ բերե՛ք,
Տանիմ, պայիմ,—չըն բերի։
Գիկա, կըսե.—Հորոխպե՛ր,
Վերո՛ւ ջվալ, էրտանք, մեր հախ ժողվինք։
— Տղա՛, լաո,—կըսա,—մեզ ավուր պահլուն հախ կըդա՞ն։
Կըսա.—Չէ՛, իմ օրն էլ օր ա,—կըսա,—
Մեզ օր իմ պայե, Քե տաս ամիս եմ պայե,
Օր չըբերին՝ ես մեզավեր չիմ։
.Յելի՛, բդի էրտանք, հախ ժողվինք։
Հորոխպոր կըտիպա, կէրտան, ժողովին։

9. էլի կըսկսա Դավիթ բաղաբի մեջ ման պալ,
էլի չարություն կէնա,
էրեխեքներու հետ ինչ կէնա՝ կէնա.
Վերջում շատ կըզայրացու, ժողովրդին էլի դուր չի գա,
Գիկան նորից բողոք.
— Օհա՛ն,—կըսին,—յա՛ իդրան մե կնգմ էրա,
Յա՛ մենք կըբոչինք էս քաղաքից.
Մենք բդրա դարդեն չենք մնա,
Մեր էրեխեքներուն էս տեսակ գըմնասաս։
— Որ էդպես ա,—կըսա,—բերեք տանք նախրչի,
Մի հատ էլ խելբով մարդ գնինք հետ,
Օր չէրտա Մեվ սար, էրտա Հըռոլա դաշտ։
Բերին կիդան նախրչի Դավիթին,

Մև հադ էլ խելքով մարդ կըդնին հեդ, կըսին.
— էս մարդ ի՞նչ օր ըսա, դու բդի լսիս։
— Հա՛,— յիրդում կուտա,— դի՛, քշի՛, էրտանք։
Քշին կէրտան Հրոռլա դաշտ, տեսնի օր՝
Մև թևթևվ դեղ, էս մեր Թաքյաուլուխ* պես,
Ժողովուրդ կէրտա ժամ, ելումուտ կէնա։
Կըսա.—Հորոխպե՛ր, էս ի՞նչ բան ա։
Կըսա.—Գիտե՞ս ինչ բան ա.
Էդ դյուղ,—կըսա,—մարդ ա մեռե, պատարագ կա։
Կըսա.—Էդ պատարագն ի՞նչ ա։
Կըսա.—Հաց կըդան, ճաշ կըդան, խերու հաց կըդան։
— Դե օր էդպես ա, դու գնա՛, էնտեղ կի,
Ընձի էլ բաժին բի՛։
Կըսա.—Ինչքա՞ն բդի բերիմ, օր դու կշտանաս։
Դավի՛թ, դու գնա՛, հա՛մ կի, հա՛մ էլ ընձի բաժին բի։
— Դավիթ կէրտա։ Դավիթ կէրտա.
Ժամուց գելնին, տանին մեռել, կրթագին՝ ննջեցյալ,
Գիկան, նատին հաց ուդելու, հրրթա յա էփած ան։
Ըռևնց մեձ ամեներ կըդնեն Բունդիր,
Մենք էլ յառաջ պատարագ կրտենք, հարանիքներին, հա՛։
Տեսնի օր էդ մարդ՝ ուրին ոչ կըսին՝ նատի,
Ոչ կըսին՝ արի, հաց կի.
Իլլաջ կդրի, կէրտա, եղբն զրվերու,
Գրլնա էդ ճրդի մեջ, կրխառնա,
Վերցու բան մի կէցկա, կրթալա թևվն ու կէրտա,
Հացն էլ դասդնով կրզարդա յուներ, կէրտա։
Կըսե.—Էդ ի՞նչ իս էրի, ա՛յ տղա։
Թև.—Գիտա՞ս ինչ իմ էրի.
Ընձի բանի տեղ չըդրեցին,
Ես էլ վերցրրեր իմ, բերեր իմ.
Ընդոնք չաժին՝ ուդին, արի՛, մենք ուդինք։
— Ա՛յ բու տունը շինվի,— ասում ա,—
Ես բդի մե աման ուդիմ, դու յընչի՞ իս բերի էդ։
Թև.—Ի՞նչ դու կերար, ի՞նչ ես կերա, մնող էլ զրլնամ տավրին,

* Թաքաուլուխ (այժմ Ծաղկաշեն) գյուղ է Ապարանի շրջանում և վիպասացի հայրենի Արագած (Ղազանճար) գյուղին հարևան։ Ծան. բանահավաքների։

Չըն ասիլ ընդունք, մեզ էլ ես էրասամ։
Բևրա, ասան մի էդ մարդ կուդա,
Մեզել՝ ձև ինչքան .յինք կուդա,
Մնող էլ գընա տավրին։
Կրսա.—վերցրո՛ւ էդ բզիդ, ճղիդըրն, գնա՛,
Իրևք .յանգամ ըսա. «Օղորմի՛ իրան, օղորմի՛ իրան, օղորմի՛ իրան» ու արի՛։
Գըվներցու, կէրտա, կրտևանի, օր հըլա ժողովուրդ նատուգ ին։
— Օղորմի՛ իրան, օղորմի՛ իրան, օղորմի՛ իրան,—իրևք անդամ։—
Կրսա.—Ի՞նչ կա, ինչ էլ օր կար, վերցի ես, տարա, կերա,
էլ ընչի՞ իր նատի, դե՛, .յելի՛ր ու գնացիր։
Ու .յինք գառնա դիկա։
Մինչև իրա գառնա, գա, դևվեր գրկան.
էդուր .յընդեր գնվներան օր կրտևանա,
.Յախու խելք կէրտա, գընդեի մե բարի տապ.
Ըզինց ոևսին մե բալաթ նվ կա,
էդ նվ կըշոգին ու քշին կէրտան։
.Յինք դիկա, տևնա՝ նախիր բատադա,
Ու մարդ չկա։
Էս յան, էն յան՝ դիկա, բարի տրգևն գգնի,
Պիրդ կօլըրա, ուշք դիկա տեղ, կրսա.
— Հա՛, ի՞նչ պատահավ։
Կրսա.—Դիդա՞ս ինչ պատահավ. դևվերն էգան,
Ես .յախու ուշքի գացեր ա,
Մեր բռևսի նվ ջոգին ու տարան։
— Դե՛, օր էգպես ա,—կրսա,—դու .յելի՛ր,
Նախիր բշա՛, գնա քաղաք կամ գյուղ,
Ես կէրտամ. էդ դևվերն ի՞նչ հոգու տեր ին,
Օր իմ անուն չ'յտած, օր ես Դավիթն իմ,
Էգած ան, իմ նվ տարած ան։
Էդ տղեն .յինք չիգա, կէրտա։
Թև.—Ո՞ր կողմ տարան։
Թև.—Էս ճամփով քշին ու գնացին դուզ սար։

10. Բռևն ճամփեն կէրտա։
.Յէրի մի մեջ տեսնա, օր մե նվրն մորթած ան,
Լցած ղազան, գրած ան կրագի վրևն։

Դիկա էդանդ, կըսա.
— Դուք ը՞նչ իք իմ նդ բերե,
Դու իմ անուն չըը լսե՞րի։
— Հա՛յ-հա՛յ,—կըսին,—հլա դու սրան իշկիք,
Էդեր ա դևվերուն անուն գ՚արցու։
Մնգին կըսա.—Գնա՛, ըդրան մե սիլլա զարդ, Հող վիղ Ծոր։
Գրկա, ձեռ կրհալա, ընդրա ոդրն կըրռնա,
Կըշինե ուրին փեղ ու մյուսներուն կըսկըսա զարդել։
Բայորին խուրբան կէնա ձրզի, դառնա, տենա՝
Մե հալիվեր նատեր ա էնդեխ,
Ըդրա խոշախութիւն օր տեսեր ա,
.Յախու նատած տեխ մեռեր ա,
Ադրմներ մացե դուրս։
Կըսա.—Դու իմ ինչի՞ն չ՚ավնար,
Օր ես հըլա Դավիթն իմ, տասերդու տարեգան,
Օր իմ վրեն կրծիծդաս։
Մե սիլլա կրզարդա, զարդելու հեղ՝
Ըդրա մուրքի միջեն մե դասատ բալնեք գընգնի։
Բալնիքն օր գընգնի, գնկի, կրսկըսա դռներ բանալ.
Կէրտա՛, մե դուռ կըբանա, կրտանա օր.
Ա՛յ, էս ա՝ օսկի, արձաթ, խալի։
Հտեխից ինչ օր ուրին գըվերու, գըվերու,
Գնկի, դռներ կրփադա ու գիկա։
Նախերն օր .յընգեր կրտանա, կրպատմա,
Թե.—Ըռեսի եզ գնվեր տարան, Դավիթ գնացեր ու
Հոլոխպըրդիր՝ Ջինով Օհանն ու Վեհկո գնկին,
Մեթամ գիկան, օր հասնին ըդրա օգնութեյան։
Էնի օր էն կողմից գիկա, հոխպըրդան էլ՝ էս կողմից,
Կրտեսնան, կըսին.—Փա՛ռ աստծու, Դավի՛թ ջան,—կըսին,—
Չէ՞ դու սաղ-սալամաթ էգար, տեսանք բըզի։
Կըսե.—.Յելի՛, .յելի՛, հոլոխպե՛ր,
Էգա, հըմա շատ հարատութեյուն եմ գըտե։

11. Դիկան մեզ ժամանագ ճամպեն,
Կրտեսնան, օր մութ տվեր ա, կըսա.
— Դավի՛թ ջան, արի, գիշեր մնանք էստեղ,
.Յառավոդ ներ .յելինք էրտանք քաղար։
Կըսա.—.Յընչի՞։

Թև.—Քաղաքի դարպյաններ զարգած ան,
Դռներ փակած ան, չըն բանա մեր դեմ։
Կըսա.—.Յընչի՞ ևս չկլևոնա՞մ բանամ,—
Կըսա,—կըզըրգիմ, բանամ։
— Ա՛խր,—կըսա,—չէ՞ օր մեր կարկատուքենն ա,
Քաղաքի տեր մենք ինք,
Մենք օր մեր կարգ խանդարինք,
Բոլորն էլ կըխանգարին։—
Կըսա.—Մեզ գիշեր ա, կըմնանք էսանդ,
.Յառավոդ գելնինք էրտանը։
— Դե՛, օր էդպես ա, մնա՛նք, հորոխպե՛ր։
Գիկան իրանց մեզ տեղ՝ քև քարի տագ ա, քև տալդա չա,
Էդտեղ Դավիթին գըրցին իրանց արանք,
Ուրանք էրգըսավ՝ մեզ էն կողմ կըպատգի, մեղ՝ էն կողմ,
Դավիթի շորնրու փեշեր կըդնին իրանց տագ,
Մինաւմ Դավիթ չելնի, էրտա, բան ու ման տենա։
Գիշեր էրածին կըտեսնա օր.
Մե տեղ լուս գելնի՛, գիջնի։
Գելնի, գիջնի՝ էլ չ'հարցու բզոնց, .յիմցու,
Դանագ բցա, որ փեշեր կորա ու գելնի կէրտա։
Տեսնա օր՝ ուր հոր գերեզմանն ա,
Գերեզմնի վրեն լուս գելնի, գիջնի, գելնի, գիջնի։
Ընդոնց սովորություն կա.
Օրինակ՝ ընդոնց ազգից օր մարդ մեռնի,
Բդի քաղին, մեզ օրում վանք շինին վրեն՝ բումբութ,
.Յառավոդնե սկսին շինին,
Մինչև .յիրիգուն՝ մեջ պատարագն էնին,
Հաց ուղին, .յելնին՝ աըեվոլ։
Էդ օր չ'էրած ին՝ էդ լուսն ա, գելնի, գիջնի։
Քնավ, .յառավոդ .յելավ, ըսեց.
— Հորոխպե՛ր,—ըսեց,—էս ուղղությանն,—ըսեց,—
Մե լուս կար՝ գելներ, գիջներ,
էն ի՞նչ լուս էր։
— .Յը՛,—ըսին,—հոր գերեզմնի լուսն ա տեսե։
Դե՛,—ըսեց,—դա Հըռոլա դաշտն ա,
Ամեդ ուրան համար հոդաղ ա, հալիվ ա,
Գութան էրող ա, տավար պայող ա,
Դուս մացող ին .յըմեն,—ըսեց,—

Կարող ա, էն լուսն էղեր ա։
— Չէ՛,—ըսեց, ընձի մը՛ խապեք, ձիշտն ըսեք։
Թև.—Քեզնից պայինք, ասուց ի՛նչ պայինք, Դավի՛թ ջան.
Քու հերն օր մահացավ, մենք բդի վանը շինենք վրեն,
Չրկյրացնըրինք, մեր ուժ չըպադեր ա,
էդպես մնացեր ա։
— Յա՛,—կըսա,—պրծա՛ք, թե օր ասուց ըսեք,
էրդուսիդ վիզն էլ կըկըրենք։
Ու գիկան տուն։
Կըսա.—Հորոխպե՛ր,
Ինչքան օր ձի, ջորի, գիվս կա թաղաբին,
Ժողվե՛ք, էրտանք խապինեն բերինք։
.Յեղեն կէրտան, խապինեն կըբերին։
Գիկա, կըսա.—Հորոխպե՛ր,—կըսա,—
Գնա՛, էսբան,—կըսա,—բար կդրող դղի,
Քար կդրող՝ կդրա, կրողըն՝ կրա,
Շարողրն՝ շարա, բրանող՝ բռնա,
Վերջապես, մեզ ավուր մեջ ղսխ բերին,
Օր պադարաբն էնինք մեջ,
.Յիպտուն արեվով գուրս գանք։
Հորոխպերն, ինչն օր պահանջն էր, կըկադարա.
Քար կդրող, կրող, շարող,
Ամեն ինչ կըբերին, կըպադրաստին,
Վանըրն կըշինին, մեջ հաց կուղին, կօֆին,
Հաց կուղին, պադարաք կէնին,
Գևրնին արեվով գուրս գիկան։
էդտեղ կըբերա մեզ հադ վարտարենդ,
Տաս հադ սարկավադ կըգնա, կըսա.
— Ինչն օր ձեր պահանջն ա՝ ընձենից կըստանաք,
.Յորադան պադարաք կէնիք, իմ հոր գ'իշաք՝ իմ հաշվին։
Ինչ լե օր պադաս կէդնի,—կըսա,—շո՛ւտ խաբար կէնիր ընձի։

12. *Ու .յինք ի՞նչ սովորություն ունի.*
Ուրին բազա, Բազի, բան գըվներու
Ու կէրտա արտեր, լեր կըբռնա, կաբալ կըբռնա։
Դու արի տե՛ս, խաբար կէրտա Մելիքին։
Խաբարն օր կէրտա Մելիքին, Թև.

— Դավիթ հոր վանք չիներ ա,
Քեզի բանի տեղ չըդրեր ա։
Էն էլ դոռոզ մարդ ա, կըսա.
— Հա՛յ-հա՛յ,—կըսա,—ես Մելիքն էղնիմ,
Էն էրսա վանք շինա, ընձի քեզի բանի տեղ չըդնա։
Չէ՞ օր կենե էլ իմ հերն ա,
Իմ հոր համար ես էլ փող կըդնենք։
Գելնի խուրքադուն, դրա ձին իրեք օղնանի ա,
Խանչա, կըսա.—Բդի էրսա՛ս,—կըսա,—

Մեզ տարվա խարջի տեղ յոթ տարվա խարջ բերիս,
Քառասուն կնիգ կըբերիս բեդ՝ իմ ուղդեր բառնան,
Քառասուն ախճիղ կըբերիս ընձի արմազան,
Քառասուն էլ կարջ կնիգ կըբերիս, օր երգանք ազան,
Քառասուն բուղա կըբերիս, օր լճան,
Քառասուն կարմիր կով կըբերիս կիման,
Ասուն կէնիս առ ու թալան։

Էղի օր կըսա, կըսա.—Շա՛դ լավ,—կըսա,—
Ինչ օր դու կըսիս՝ ես կըկատարիմ։
Գելնի, զորք ժողվա ու գիկա։

13. Գիկա, Դավիթի յախան էլ չիգա բաղրի վրեն,
Դուզ կէրսա վանքի վրեն։
Կէրսա, սաղ սարկավագներ կըսպանա, վարսաբեդներ,
Մեզըն սաղ կըթողա.
Էն սաղ թողդն էլ՝ կըփաթիվի մեզ բան, գաղդնի կըմնա,
Մինչևի վանքըն կըթալնին, բարութանդ կէնին ու կէրսան։
Կէրսան, էղի գելնի,
Ըղենց արնող շորեր զըժողվա ու կառնի յիգա։
Կառնի յիգա. էն վախտ գիկա,
Օր Դավիթ լեր խորովե, դրե դեմ,
Նուան գինին դրեր ա, կուգա, կըխմա։

Կըսա.—Շա՛դըն բարին իմ պարոնին,
Նատե, խմա նուան գինին,
Թալանեցին վանք Մորթեայինն,
Ըսպանեցին ին սարկավագ, մեզ վարսաբեդին,
Առան գնացին։

— .Յա՛ն,—կըսա,—վանքին ի՞նչն ա պակաս,
Խունդ, մեմ, ինչի՞ց ա պակաս,
Տվե՛ք, ըքխ էրտա։
Նորից էդ խոսք կըսա.

— Շա՛ղըն բարին իմ պարոնին,
Նսաև, խմա նուան դինին,
Թալանեցին վանք Մարութային,
Առան ու դնացին։

— Տո՛,—կըսա,—ո՞ւր։
Թե.—Խուզրատին։
Գելնի էդտեխից, հերսից էլ ոչ օդնաման կըտարնի, ոչ բան,
Ձեռ կրթալա, մեզ բարդի քոթահան կէնա ու դիկա։
Դիկա վազնի.—Ըղոնց դեմ,—կըսա,—ես .յո՞ւր կգրիմ,—
Կըսա,—Սրանելա կապան օր ըղոնց դեմ չըկդրիմ,
Ուրիշ տեղ չըմ կյըռնա։
Դիկա էդտեխ, գալոզին կըգնըդա,
Չա՛րդ ու փշուր կէնա։
Խուզրատու ձին քրոզ ա, կըթոնի,
Ձեռ կրթալա պոչ, պոչ կգրի, ձին կըփախի։
Դավիթ նորից բերից, էդ վանք բարութանդ էրից, թափից,
Ըսից.—Արունք էղեր ա ըզրա մեջ, պետք չէ։
Նորից չիննից, պատրաստից, պատարաքն էրից։

14. Խուզրատին օր կըփախնի, կէրտա,
Ըղոնց կնգդիք տանըքներ կայնուգ կէղնին.
Մենք, հին սովորությյան էգմալ է էղե,
Տանըքներ կայնուգ կէղնին, կըսին.

— Խուզրադի՛ն, լեռան-լեռան,
Էդ ո՞րդեղից քաջի՞գ բերան,
Չէ՞ դու կըսեր՝ էկրտամ Մասուն, կէնիմ առ ու թալան,
Քառասուն կնիգ բերիմ՝ ուտա բառնան,
Քառասուն կառճ կնիգ՝ էրգանը աղան,
Քառասուն ախճիգ կըբերիմ արմաղան,
Քառասուն բուղա կըբերիմ լըձան,
Քառասուն կով կըբերիմ կրթան,
.Յո՞ւր ին մեր մարդիկ, ոչ կան, ոչ կերևվան։

Կըսա.—Լըրե՛ր, հեռեցե՛ր,—կըսա,—ի՞նչ է կըսիր.

Կըսա.—Դուք տեսեր իք Ձըր մարդիկ,
Դուք չըտեսեր իք Մասնա Ծռեր.—
Կըսա.—Ընդոնց նետեր գերանական,
Ընդոնց մարդիկ գազանական,
Էն վախտ օր կըզարդեն՝ կըբանեն պատուհան,
Դու տեսեր իք Ձըր մարդեր,
Չըտեսեր իք Մասման Ծռեր
Ու գիկա։

15. Գիկա, մեզ ժամանադ կըմտնի տուն,
Ու խաբար կըտանին Մելիքին, Քե.
— Մելի՛ք, խուրքատին էգեր ա։
Կըսա.—Խանչե՛ր բերեք,—կըսա։
Կըխանչին բերին, կըսա՝
Էլի կնգրանց խոսք կըթաբրաշա,
Էդ էլ կըսա.—Դուք Ձըր մարդիկն իր տեսե,
Դուք չըր տեսե Մասման Ծռեր։
Ի՞նչ բսիմ իմ Թաբավորին,
Տե՛ս, էս տեսակ գարդին, չարդուփշուր Էրնցին մեղի,
Ես էլ անջախ փախեր իմ, պրծնե։
— Լա՛վ,—կըսա։
Էդտեխից գնին, դանակ Թալա,
Ուր օդ կդրա՝ ուր Թութակ,
Արուն գըվերու, կըսա.

— Դիր մի գրիմ Հարաֆային՝
Հազար համար իմդադ գա Մսրա Մելիքին.
Դիր մի գրիմ Հուսխաային՝
Հազար համար իմդադ գա Մսրա Մելիքին.
Դիր մի գրիմ արևվնէք՝
Հազար համար իմդադ գա Մսրա Մելիքին.

Դիր մի գրիմ արևմուտք՝
Հազար համար իմդադ գա Մսրա Մելիքին։

Կըգրա, խոշուն գըվերու ու գիկա։
Խոշուն օր գըվերու, գիկա,
Էդտեղ Ջինով Օհան սաբահատան բուրք կառնե վրեն,

Գևևի տեսնի օր՝ ի՛նչ.
Ուրանց դաշտ չադըրի մեջ սիվղըգեր ա։
— Հա՛յ-հա՛յ,—դիկա, կըսա,—էգեր ա,
էգեր ա, էգեր ա, էգե։
Կըսա.—Ո՛վ էգեր ա, հոգևխպա՛յր, ո՞վ է։
— Ձա՛վն ու կրակ Դավիթի պնչին ա էգե.
Մարա Մհլիքն էգեր ա։
.Յևլե՛ք, օսկիք տաճիներ, ախճըղներ տաճիներ, աղաչանք էնիներ։

Բալի մեզի խնայա, բան չըսա,
Չըկդրա մեր քաղաք, բարութքանդ չէնա։
Իսկ Մհլիքը գևևի իրա մարդերուն կըխրդա, թե.
— Գայե՛ք, մեզ խաբչի տեղ բառասուն տարվան բերնք,
Քառասուն ախճիկ բերնք, օր միշտ իմ օդևներուն ճանճեր բշին,

Իմ էրեսի ճանճեր բշին՝ ես բնիմ։
Եղո, տաս գևվարևո օսկի բզի տան, օր պրծնին իրանք,
Թե չէ՝ կդրիմ ուրանց քաղաք։

16. Իսկ Դավիթի հետ չէ,
Դավիթ բսկի ինչ օր խաբար չէղնի.
Գևևի կէրտա էլի լեր բանևլու։
Էդ մարդիկ օր գիկան Ջինով Օհանի մոդ,
Ջինով Օհան ու ախպեր գըհամաճայնվին,
Թե.—էրտանք, օսկին տանք, ի՛նչ էնինք։
Գիկան, կրակրսին օսկիք չափել։
Իսկ Դավիթ, Պառավ մի կա,
Էդ Պառավ կորեզի մի արտ ունի,
Գևևի կէրտա .յըմնօր,
Էդ կորեզի արտի մեջ լեր կըբռնա։
Կըսին.—Դավիթ .յո՞ւր ա, .յո՞ւր։
Պառավ կըսա.—Ա՛յ լըմըն,
Էլի գնացեր ա իմ կորեզի արտ,
Մըգա բարութքանդ էրեց, ավիրեց։
Գևևի կէրտա, տեսնի օր՝
Դավիթ էս գլխուց կըհոգու էն գլոխ,
Էն գլխուց՝ էս գլոխ։
Գըհատնի, մե հատ ըզրա գլխուն կըզարդա, կըսա.

— Վարա՛մ առնիմ քու բնթնեն,
Շախկըմկիր Թլվադ Դավի՛թ Սասունա,
Քու էգեր իս իդա տեխ իմ արտ քարութանդ կէնիս,
Իսկ էնդեղ Մելիքն էգեր ա,
Սասուն քարութանդ կէնա, կըտանա։
Կըսա.—Ի՞նչ էնիմ, մայրի՛դ, ի՞նչ էնիմ, օր կըտանա։—
Կըսա.—Մեզ գոնյա ժանգիդ քուր էլ չկա,
Օր տանիմ, մեղին դնիմ դեղին, գլոխ կգրիմ։
Գըհասանի, մեզ էլ զրզարդա, կըսա.
— Քու արև՛ հորիմ,—կըսա,—
Չկա Մհերին,—կըսա,—Քաւգիդ Ջալլատին,
Խաչ Պաղրատին վըր ուր Քևլին, աչ բազդին,
Չկա Կաբևն ատին,
Չկա սապոկներ ընդրա՞ն,
Գլխարգըն Մհերին,
Քամարն, օր կը կաբա մեջը...
Կըսա.—Մայրի՛դ, էգոնք .յո՞ւր ին։
Կըսա.—Գնա՛, քու հորոխպոր սասնա՛, տես,
Կըսա, Քև .յուր ին, .յուր չին։

17. Գիկա։ էն ժամանադ գիկա,
Օր կայնած ին, օսկի կըշափին։
— Հե՛յ,—կըսա,—հորոխպե՛ր,—կըսա,—
Դու անբախտ իք, լավ չըշափիք,
Իմ ախպերն օր էգեր ա, խեղջ ա, էդբան նեղութենի ա,
Թողե՛ք ես չափիմ օսկին։
Էդի կըսին.—Ի՞նչ կըսին՝ Դավիթ ծուռ ա,
Ի՞նչ լավ, բարեվի մարդ ա։
Հա՛, բևրա, կոդ կըշռա,
Մի հադ կոդի էս արանք կըխրդա,
Մի հադ՝ էն արանք, մեզ՝ էս, մեզ՝ էն.
— Դե՛,—կըսա,—դե բռնե՛ր, գարդրդիմ։
Զինով Օհանին կըսին.—Ա՛յ Զինով Օհա՛ն,—կըսին,—
Ասո՛ մենք ծաղրածու չինք,
Էդի ծաղր կէնա մեր վրա, էդ ի՞նչ բան ա։
Թև կիդաս՝ առուր, թև չէ՝ մենք Թողինք էրտանք։
— Տո՛,—կըսա,—խառուսմասդնե՛ր, .յընչի՞, օր կըսին,
Էրդու ախպեր մեջ կռիվ կըբցին կամ .յիրար կըբցին,

Դու չըք .յուզի՞, օր ես ու իմ ախպեր համաձայն ապրինք։
Ու կըսկըսա էն մեզի ծա բանել,
Մյուսներուն տալ դըրբի տագ,
Ջա՜րդ ու փշուր կէնա, մեզին կըսա.
— Դե՛,—աղբմներ քաշա, շարա ճագատ,—
Գնա՛, քու Մելիքին բսա,
Ես քյանի կամ, խարջ տվող չկա։
— Գևկի պիկա, կըտեանի օր՝
Ախճիղներ մեզ մարագն էրած,
Կնանիք մեզ մարագն էրած,
Տավար մեզ մարագն էրած,
Մեզ տեխ էրած, օր առնին, էրտան օսկու հեզ։
Կըսա.—Քուչրե՛ր, մայրե՛ր, աղե՛ր, դուք դացեք ազատագան,
Ես կէրտամ ձըր չարի փոխան։
Ախճրղներուն նույնպես, վերջապես, անասուններն էլ
կրթողա,
Ու .յինք էլի տրխայինք։

18. Կըմնաւ Նորիկ էնի Բութի կըզրա,
Կըսա.—Իմ բսած կըխըզիս,
Թև քազաք էլ ուրիշ բան չկա, վերջ կիզամ,
Այսինչ ժամին քազաք կըկզրիմ։
Կըսա.—Հորսախա՛ր, ախր մեզի Քուռդիզ Ջալլատին կա,
Իմ հոր ձի կա, հագուստ կա,
Թուր Կայծագին կա, հաչ Պադրասատին կա,
.Յո՞ւր ա ըդՆեր։
Կըսա.—Վա՛յ, քու սուլբրցնողի վի՛ղը կոդրի,—
Կըսա,—էդ էլ դու .յիմցա՞ր։
ԸդՆեր դուզին խազազություն .յընցուն, էլի՛,
Օսկի, բան տան, կոխվ չըբացին։
Կըսա.—Դավի՛թ ջան,—կըսա,—քու հոր մայից .յեդո
Ձին գնդնի տուդն ինք պայե
Յէրաբդից ջուր ինք տվե,
.Յէրտգից խնա ինք տվե.
Կա՛, չկա՝ չըգինամ։
Թե.—Ո՞րտեխեն ա։
Տանին ցուց կիդան.—Դե՛, բևրևք քանդինք։
Մինչև քանդողներ քուլընգով կամ լոմով քանդին,

Էնի ձևոներով քանդա։
Մեզ էլ կըտեսնա, օր՝ ա՜հ,
Մեզ հադ բուռագ էնտեխ կաբուգ։
Շարներ գըվերու, հակուտարն գըվերու,
Թուր, բան գըվերու,
Իրանք էլ էատեխից խաբար դրխրդա,
Թե.—Գիկամ կոխվ։
Էդ ժամանագ հորոխպեր կրսա.—Գացե՛ր, տեսեր.
Էն վախտ օր Մհեր կովու կէրտեր,
Զիու փարքաշներն օր կրպնդեր,
Զիու .յառչի օղներ կրկդրեր։
Եթե էդ էլ կրկդրա՝ կրվոդիմ էրտա կոխվ,
Թե չէ՝ չըմ Բողի էրտա։
Գիկան, կրտեսնան՝
Էն վախտ, օր ջրներ կըրռնա, հէրտեր կրթաշա,
Զին չորս ոտ կրվերու, կրդնա։
Կրսին.—Ա՛յ բու տունը շիրվի,
Թե էնի .յառչի դեն կրկարեր,
Էդի Բոմարի ձին կրվերու։
— Դե՛,—կրսա,—օր էդպես ա, կրվոդիմ էրտա։
Զիու խոլաններն օր կրթաշա,
Յոթ փութ գիկա հասնի .յիրար, նոր կրհասնի.
Բևրա իրա գլխարկ՝ հոր գլխարկն, օր դներ գլուխ,
Մե փուդ էլ համարյա բամբագ կրդնա,
Անջախ գլխով էէդնի.
Թուր կարա վրեն՝ յոթ Բիզ գոդին կրգրսա.
Կարեն ատին օր կրկարա՝ նույնպես,
Օսկի գոդին՝ նույնպես.
Վերջապես, ամեն ինչըն ուր վրեն չի դա։
Էդ ժամանագն օր գնեի էրտրլու, հորոխպեր կրսա.
— Ախա՛ս, հազար ախա՛ս Քուռդիգ Ջալատին,
օր գնաց Սասունա տնեն.
Ախա՛ս, հազար ախա՛ս Թուր Կայծադին,
Ախա՛ս, հազար ախա՛ս Խաչ Պաղրատտին։
Վերջ, բոլորն օր կախտոսա,
Էդ հորոխպեր կինը գըհանի,
Մեզ սիլա կրզարդա մարդուն,
Մե բամբաչա գլխուն,

Կըսա.—Հողի՛մ քու գլոխ, ընչի՛ չես ըսեր.
Ափսոս, հազար ափսոս Թաւլան Դավիթըն,
օր գնաց Սասունա տեղեն։
Կըսա.—Հարսիսպիր կի՛ն,—կըսա,—
էդի խուրըա՛ն էղնի քըզի,
եթե էդ խոսք դու չըսեր,—կըսա,—
Թուր մի գըթալենք, ուր բախտից,
Մեռներ լե .յինք էր, չըմեռներ լե։
Ներ կէրտա։

19. Կէրտա, դհատնի մեյդրնի մեջ,
Կրտհանի օր՝ հա՛ղդա, մեզ հաղ ճայիջ տեխ,
Ջուր միջեն գելնի, կէրտա։
Ինչքան ձին զանգուլամիշ կէնա, ձին ջընցնի։
Կըսա.—Դավի՛թ, Դավի՛թ,—գելնի լեզու, կըսա,—
էսի քու հոր փորցանանց .յախպուրն ա,—կըսա,—
.Յիջի՛, բանդա՛, թող ջուր .յելնի,
Դու էլ խամ, դու էլ լվացվի,
Ես էլ խմիմ, ընձի էլ լվա,
Մե քիչ հաց կիր, իմ չոր օդաց մեջտեխ քնի,
Գելնինք, կէրտանք, ներ կոխվ կէնինք։
էդի գիջնի, կըբանդա, ջուր գելնի,
.Յինք էլ կըխամա, ձիուն էլ կիդա,
Ձիուն էլ կըլողըցու, .յինք էլ կըլվացվի,
Գիկա, հաց կուդա, կըպատգի, կըքնի,
Գելնի, կըտեսնա. սապակներ կըթաշա օդնե՛ր,
Բամբագ միջեն զրհանա, թաւա՝ զոռով անջաս կըմոնի,
Թուր կաբա վրեն՝ յոթ քիզ բանձրցեր ա,
Կաբեն աստին անջախ զրհանի, Օսկի Գոտին,
Վերջապես, ա՛մեն ինչ, ա՛մեն ինչ,
Խաչ Պաղրատսոին էն վախտ .յեվել էր,
Մըգա .յելեր ա ուր իսկական փիջի վրեն՝ աչ Թևվի վրեն։
Գ'նձնի ձին ու կըբշա, կէրտա։
Կըբշա, կէրտա, կրտհանա օր՝
Հա՛ղդա, մե էրդաթն սուն կա կաչնուգ.
Ձին էլի ինչքան կատպանդազա,
Ձին ջընցնի, զանգուն գըզարգա։
Կըսա.—Դավի՛թ, էսի քու հոր փորցանանց սունն ա,

Դու կայնի մեզ օդաց վրեն՝ դանգու վրեն թուր բցա,
Թե կդրեց յընցա՞վ՝ մենք կռիվ կէբտանք,
Թե չէ՝ եդ կըզատնանք։
Գելնի կայնի վըր մեզ օդաց զանգուին,
Կըբցա թուր.
Թուրն օր կըբցա, էնպես կըբցա,
Օր ըսկի սուն .յիրար չի գա,
Կրկդրա-գընցնի պանրի պես։
Կրսա.—Հա՛յ-հա՛յ, թե՛վ, դու թուլներ,
Նուժելի մեզ զարդով դու չըշոչեցի՞ր։
Թեվ կըթուլնա։
Քամին գելնե ասածու հրամանով՝ սուն կըշռչի։
Սուն օր կըշռչի.—Հե՛յ վախ,—կրսա,—աստվա՛ծ,
Քու դեմ ես երդում կուդիմ,—կրսա,—
Իմ թեվին առողջություն տո՛ւր,
Ես էրտամ, էս խոշուն եդ տամ,
.Յիգամ, կամք ասու յա,—կրսա,—
Էն ժամանագ, ինչ օր ձեր կամքն ա, թող կատարի։
Թեվ կրսաղնա. դե՛, հնքթի բան ա,
Թեվն օր կրսաղնա՝ կէբտա։

20. Կէբտա.—Ի՛,—կրսա,—
Ես օր կրագ էղնիմ, ըստինք՝ բամբագ,
Ես չըկյեռնամ վառիմ։
Յավա՛շ, ձին բշիմ, մե քանի մ՝ գլոխ էրթամ-.յիգամ։
Զին կըբշա, կէբտա-.յիգա,
Մե բան կըչարտա խոշունից, էլի՛։
Ըդինք գելնին, փափրխներ գըբցին.
— Փո՛շտ, փո՛շտ, փո՛շտ։
Կրսա.—Հա՛, ի՞նչ,—կրսա,—Դավի՛թն իմ,
Հըլա տատնուք տարիս չըթրմեր ա,
Ի՞նչ տեսաք իմ վրեն, ի՞նչ այիր տեսաք,
Օր տնագ կէնիք։
Կրսին.—Դավի՛թ ջան, գինա՞ս ինչ.
Մեղի էդպես մեզ սովորություն կա,
Մեձ մարդ օր .յիգա՝ մենք էդմալ գըհարգինք, էլի՛։
Կրսին.—Ա՛խր, մենք ի՞նչ ինք էրի բզի,
Օր դու մըզի կրկոդորիս։

Կըսա.—Դու էգեր իք մեր վրեն կռիվ,
Ես էլ ձեզի կըկոդորիմ։
Հիմի, որն օր քնուզ ա՝ .յելե՛ք, .յիմցե՛ք,
Ձեր ձին պադրաստե՛ք։
— Դե՛,—կըսա,—դու հաշիվ ունիս.
Մելիքի հետ հաշիվ էրա, մենք ի՞նչ մեխք ունինք։
— Դե՛, որ էդպես ա,—կըսա,—Մելիք ո՞րտեղ ա։
Կըսա.—Է՛ն լանդյատի չադրըն օր զարդուզ ա.
Օսկի խնձոր պլոխ,
Էնի Մելիքն ա, մեջ քնուզ ա։
Էն, օր ծուխն էլ գելնի,—կըսա,—
Ընդրա բերնի զոլորշն ա։
— Դե,—կըսա,—օր էդպես ա, գնացե՛ք,
Ընդրա բոլոր բցնք փափախ, փոշտ էրեք,
Ես գիկամ։

21. *Գիկա, կէրտան, էդպես կէնին,*
Էդի կէրտա, կըսա.—Դե՛, .յիմցուցե՛ք Մելիքին։
Թե մահ չկա, ես ընդրա մայ բնրեր իմ,
Ընդրա գրող կէղնիմ ես։
Կըսին.—Ա՛խր, էդի յոթ օր բդի քնի,
Իրեք օր քնի, չորս օր էլ կա, հրլը բդի քնի։
Կըսա.—Ես չըհասկընամ քնել-բան,
Ասե՛ք, ինչ շո՛ւտ վեր կենա։
Թև.—Ո՞նչ էնենք։
.Յառնջ շիշ կրգարդին՝ տաք շիշ։
Կըսա.—Էս լվեր չըթողին քնիմ։
Հետո՝ գուլինի խաչ,
էն մեր հին փենգ գուլիներու խաչ կըտաբցուն,
Քցին օդաց վրեն, գելնի։
Դավիթին օր կըտեսնա...
էն վախտ օր Դավիթին ճամպու դրեր ա,
Մե էրեխա յա, էյի՛, մե պատանի ա,
Իսկ հըմի էղեր ա մե աժդահա,
Ձիու վրեն նստեր ա, ինչ օր մեզ տար։
Օր կըտեսնա, աչքեր կարընխրոնի.
Կըսա.—Հե՛յ վախ,—կըսա,—
Ես վըյտե բդիր ձեռնեն չըպրծնիմ։

Այլասիկ մեջ կնդաավորութիյուն կա,
Որ նեղրն գրնդնի՞ն, բաղդրութիյուն ցույց կիդան։
Կրսա.—Դավի՛թ,—կրսա,—անխո՛ղճ,—կրսա,—
Իմ ախպերն իս, էգիր իս, ձիուց .իջի՛, արի՛,
Ուդինք, խմինք, մե քիչ քեֆ էնինք,
էն ժամանագ գնինք, կռիվ կէնինք.
Որիս օր ասուլաճ ուվեց, Քոռ մնգլին կոդորա։
Կնդաավորութիյամբ դիջու,
Կրսկըսա յոթ տարվա գինին խմցուցնել Դավիթին։
Դավիթի քեֆն օր գհասնի, կրքնի.
Օր կրքնի, գուլա վիզ կտրա, մեր չրթողա,
Կրսա.—Ա՛յ քու տունը շիրվի,
Հնր փորա՛, քցա՛ հնր,
Քառասուն գազագան հնր փորա՛, Քրխ էրեա փջանա,
Էլ ինչի՞ գու քու ախպնր կրսպանիս։
Մոր բաձրն գրկադարա։

22. Գու արի՛ տես, գիշեր Ջինով Օհանին էրազ գիկա։
Տեսնի օր՝ Մսրա աստղ պայճառացավ,
Սասմա աստղ խավարավ։
Կնգա անուն Շերին Նանախտում Գուհար կէղնի.
— Շերին Նանախտում Գուհա՛ր,—կրսա,—
.Յելի՛, մուրազ ասուլա՛ճ, Մուրազ ձին քամքա՛, գամա՛,
էրտամ, հասնիմ Թաւրան Դավիթին։
Կնիգ կրսա.—Ա՛յ քու տունը շիրվի,
Էստեխ քնիս, էնգեխ, Դավիթի մոդ էրազ կրտեսնաս.
Դավիթ մգա, Լսիմ, ինչ օրհորդի հնդ քեֆ կէնա։
Կնիգ կրհամոզնա, կրսպասդի։
Մեգ էլ էրազ կրտեսնա.
Գելնի գուրս, գիկա, նորից կնգան կրսա,
էլի չրհամաձայնվի կնիգ, էլի մարդուն կրհամոզա։
Նրրորդ անգամ կնիգն օր չ'էլնի,
Լանգն մը կրգարդա՝ մե կնդրն կրկոդրի։
Կնդն օր կոդրի, գելնի, ձին գհնձնի, կրսա.
— Մուրազ ասուլա՛ճ, Մուրազ ձի՛ն,
Ընձի ե՞րբ գրհասուս Թաւրան Դավիթի՞ն։
Կրսա.—Մինչև լուս բացվի, կրհասնիս Դավիթի կռվին
— Քու բերանը կոդրի՛,—կրսա,—նեզ տեխ ա, ասա՛։

Ձինը մեզ, էրգու, իրեք կրսա,
Երրորդ անգամ կրսա.
— Եթե ոդուի դնիս զանգուսի,
Մեզնէ մինչև հեձնիս,
Ես քեզի գըհասում Թաւլան Դավիթի կավին։
Գըհեձնի ու կըթշա։

23. Ձին օր կըթշա, կըրոռա.
— Դավի՛թ, Դավի՛թ,—կրսա,—քու վի՛զը կողրի,
Խաչ պաղրատին մոռցե՞ր իս։
Դա էլ էնրևս ձինով մարդ է,
Օր ըզրա ձեն, ասիմ, բանի կիլոմետրի վրա կէրտա։
Դավիթի գլխու գինին կըթափի.
.Յանգաչ դնա, մեզ էլ կրլսա ու կրսա.
— Ահա՛, իդ իմ հորոխպոր ձեն էգավ.
Եթե էգավ, ընձի էտեխ տեսավ,
Լավն էն ա՝ ես մեռնիմ,
Քանց քե իմ հորոխպերս ընձի բանց նեղ տեսնա։
Իմ .յերտում դո՞ր, ես ինչ տեխ եմ .յրնգե։
Էդտեխ կրսկրսա աղաչել, կրսա.
— Է՛յ, երգնային Տեր աստվա՛ծ,—կրսա,—
Լյովի իդա հոգ, ես .յևնիմ,
Իդա խոշուն ադա էնիմ,
Ընդրնե եդ՝ կամք քուդդ ա,
Գուզիս իմ հոգին ա՛ռ էն ժամանագ։
Դե՛, հեքաթ ա, էդպես կասեր.
Հոգրն կըլցվի, .յինք գևնի, կրսա.
— Մեզ էլ տեսնենք ես Քուռդիզ Ջալատին,
Քո՛ղ աստված հոգիս առնե։
Կրտեսնա օր՝ ինչպես օր .յինք .յիջեր ա,
Ուր գենք, ասպատ, բոլոր շորեր կարուզ ա վրեն,
Էնրևս կարուզ ա, ոչ ոք չիշխըցեր ա ձեռք տվեր ա։

24. Գևնի կէրտա, ձին կրթիմարա, քանի գհեձնի,
Գիկա, կրկայնի, կրսա.—Մելի՛ք, .յելի,—կրսա,—
Քու նամարդություն տեսա։
Էլի գևնի, կրսկրսա օյին թափել,
Ալլահի, գինաս, էլի՛. Քե.

— Ախպե՛ր ջան, .յիջի՛, նորից քնի էնինք,—ֆլան, բնֆան։
Կըսա.—Չէ՛,—կըսա,—րու ննդուքեն տեսա,
էլ ես րու հնդ հացի չեմ նստի։
.Յելի՛,—կըսա,—կոխվ ունիս՝ էնինք .յիրար հետ։
— Դե՛, օր էդպես ա,—կըսա,—
Կավու .յառջի զարգն ի՞մն ա, քի՞ րումն ա։
Կըսա.—Մեզ ախպեր դու ես, րումն ա .յառջի զարգը։
— Դե՛, օր իմն ա,—կըսա,—
Ես գհնձնիմ իմ ձին, դու նստի մեյդանի մեջ,
Կէրտամ, գամ, զարգինք։
Ձին կըթշա, կէրտա մեզ մանդրիլ,
Օրինակ, էստեխից մինչև էս խաբարիլիսա՝,
Էնտեխից գիկա, կըզարդա.
Խաչ Պադրաստին կիդա դեմ, կըսա.
— Հավատա՛մ Խաչ Պադրաստին,
Դավիթի աչ Քևվին,
Էնբես բանա գուրգըն,
Օր բակի բամի չառնի Դավիթին։
Օր զըզարդա՝ ոչ մի բան չէղնի։
Ձեն կիդա, կըսա.
— Սա՞ղ ես, հըլա կենդանի՞ ես։
Կըսա.—Կենդանի՛ իմ,—կըսա,—մե՛զ էլ արի։
Մեզ ժամանագ էլ կըթշա,
Կէրտա Հասանի Աշտարակ, Հաշված,
Էնդեղից գիկա, մեզ էլ օր զըզարդա,
Էլի ձեն կիդա, կըսա.—Կենդանի՞ ես։
Կըսա.—Կենդանի՛ իմ,—կըսա,—արի՛, մե՛զ էլ զարդ,
Օր զարգըն տաս բնձի։
Կըսա.—Մանդրիլսի բիչ էր,
Յավա՛շ, մեզ էլ էրտամ, գամ։
Քշա, կէրտա, Հաշված, Հասանի Մասիս,
Ու էնտեխից ձին բաց Թողա, գիկա, զըզարդա.
Փոշին ու իրըն օր կըբանցըրնա,
Կըսա.—Հե՛յ-վախ,—կըսա,—
Ես ինչքան էխտիբար ախպեր ենք,

---

* Վիպասացը նկատի ունի Ապարանի Ղարաքիլիսա (այժմ Հարթավան) գյուղը։ Տաճ. բանահավաքների։

Օր գնդգի, իմ ախպեր ըսպանեցի մեզ զարգո՞վ։
Կըսա.—Արխայլին կեցի՛, ես կենդանի իմ։
Բայց գուրզի մեզ թևվն օր բաներ ա՝ փեշըն,
Վիզ օղրեր ա։
Գոմփով զըզարգա, կըսա.—Անտե՛ր,—կըսա,—
Հըլա մեզ փեշն ա բանե,
Դվա՛ էնիս Խաչ Պաղրատաուն,
Օր Քոմարի բաներ, ի՞նչպես բդի էներ։
Գըզարգա դգա ուր վիզ, գելնի։
Դու արի՛ տես, Մելիքի մերըն,
էն վախտ օր էգած ան կովով,
Մեր հետ էգեր ա։
Մե տաս-տասվերդու հետ էլ ախճիկ զարե-զարդըրե, բերեր ա,
Կըսա.—Կովու ժամանակ ախճրդներ ցույց տամ,
Բալի Թավիթ Մելիքին չըսպանա։
Ախճրդներ էդ ժամանակ կըսկըսա պար բանել, խաղալ.
Զարեր ա, զարգըրեր ա։
Կըսա.—Թավի՛թ, քուլ տա՞ս, մե հոր փորիմ։
Կըսա.—Քուլ կիդամ, փորա՛։
— Քուլ կիդա՞ս, յոթ հետ գըմշի կաշի քաշիմ վրեն։
(Հորսխպնըրս էդպես կըսեր)։
Կըսա.—Քուլ կիդամ, քաշա՛։
— Ջնդաչի բա՞ր...
Կըսա.—էդ էլ քաշա՛։
Յոթ դաղ հոր գըփորի, մդնի մեջ։
էն վախտ օր գելնի, ձին դհնձնի, կըսա.
— Ես ոչ մի տեխ չըմ էրսա,
Մեզ օդացսի վրեն կրկաչնիմ, քցիմ.
Քու բախտից՝ կդնից էլ, քու բախտից՝ չըկդնից էլ։
էդ ժամանակ կըտեսնա օր՝ ըսկի ախճրդներու վրեն չիշկա,
Կըսա.—Ախճիդնե՛ր, սեվ կաբեցիք, քողե՛ք։
Մելիքը ըսպանվավ, պարտ ու բան քողե՛ք։
Գիկա .յառեջ, կըսա.—Դավի՛թ,—կըսա,—
Ես քեզի ծծի կաթ իմ տվի, պահեր իմ էսքան ժամանակ,
էրեր իմ մարդ, խրգեր իմ, դու մարդ իս դարցի,
Մե գըրը չը՞բախշիս ընձի։
Կըսա.—էդ մեզրն կըբախշիմ քրվի։
— էն մեզ գնդրն էլ բախշա՛ քու հոր գերեզմընին

Ու վերևվ աստրծուն։
Կըսա.—Էն էլ կըբախշիմ իմ հոր գերեզմընին,
Վիրևվ աստրծուն։
Իսկ էն մեզ դըրբըն կըբցիմ,—կըսա,—
Մեռավ էլ՝ ուր բախտից,
Մնաց էլ՝ ուր բախտից։
Գելնի կայնի զանգուլ վրեն, կըբցա, կըսա.

— Հավատա՛մ Խաչ Պադրատին,
Դավիթի աչ Քեվին,
Քաշիմ Բուր Կայծակին,
Քյիմ, էնբես կդրա կաշին,
Էն ջաղլի բար, Մելիքին,
Յոթ գազ էլ գնդին էրիա։

Էդ օր կըբցա, ըսկի Մելիք չ'իմնա,
Կրկդրա, էնբես կրկդրա, օր ըսկի Մելիք չ'իմնա։
Կըսա.—Կենդանի՛ իմ, դըրբ ունիս, արի՛։
Կըսա.—Հըլա մեզ ժա՛ժ արի։
Յա,—կըսա,—Քե՛վ, դու Քուլներ,
Էդ ի՞նչ բան էր էղև, չըկարևցիր
Ժաժ դիկա, մեզ կղնր էն կնդմ գընդնի,
Մեզ կղնր էն կնդմ գընդնի։
— Գե՛,—կըսա,—էս աչ կնդմըն ընձի գհասնի, իմ հորն ա,
Իսկ ձախ կնդմ ձերն ա,—կըսա։—
.Յելե՛ք,—կըսա,—առե՛ք ձեր չանդադն ու գացե՛ք,
Թե գուդիք կռիվ էնիք իմ հեդ՝ էրե՛ք,
Թե չէ՝ մեզ էլ չըտեսնամ, մեզ Մարա ժողովուրդ օլըրի,
.Յիգա Սասնա վրեն կռիվ։
Կըտեսնա՞ք իդը օր, գելնիմ էլի ձեր գեմ,
Ինչ օր իմ հունար կա,
Էն ժամանագ ես ձեր գեմ կռվիմ։
Գելնի կառնի գիկա։
Ընդենը Քող առնին ձախ կնդմ էրտան,
.Յինը աչ կնդմ կըբևրա, ժամով, պատարագով կրթաղա,
Ինչ օր ուրանց պահանջն է։
Էդ Քաղումն էրևց ու վերչ տվևց էդ մեգրն*։

* «Մնաց էն մեկել. ես գիդամ իրա պատգվելու հաւղրն, էն էլ առանձին ձուղ էր։ Սահ. վիպասացի։

25. Դավիթն էդ կռվուց եդ
Հր՛մ խելքի էգեր ա, հր՛մ մարդ ա դարձե.
Բոլոր իդ անգամ Դավիթի արեվով գ՚էրալվին։
Էգեր ա իրա ամուսնանալու ժամանակ։
Դու արի՛ տես,
Խոյա հանդուպ խանում ըդրա անուն օր լսեր ա,
.Յելավ մեգ քուխտ գրեց Դավիթին, ճամպեց էգավ։
Ճամպեց էգավ, էդ գալողներ էգան, կըսին.
— Դու ընչի՞ չըս կարկըվի։
Կըսա.—Ախր իմ չափին, իմ հաշվին օղլուշաղ չկա.
Ախճիկ չկա, օր ես առնիմ։
Կըսա.—Ընչի՞ կա. Խոյա հանդուպ խանում,—կըսա,—
Ընդրա .յաչքերն օր կա՝ մեգ-մեգ չինի յա,
Ընդրա ճակատըն էնպես լեն ա,
Օր համարյա էրգու թզաչափ.
Ընդրա գեղեցկություն, ընդրա .յամեն ինչըն,—կըսա։
Օր ըմալ կըսին, կըսա.

— Ես քընց գառ անմեղ ննք,
Դու ընձի դիլուց չար դառցուցիք,
Էն օր դու ըսեցիք։

Դե՛,—կըսա,—օր էդպես ա, դու գնացե՛ք, ես գիկամ։
Դառե՛ք գնացեք, հանդուպին ըսե՛ք, օր Դավիթ շուտով գիկա։
.Յելավ ըսկսեց ուր պադրաստություն տեննալ, էգավ։

26. Էգավ գնաց ճամպու մեջտեղ,
Կրտեսնա օր՝ հա՛նդա, մե մե՛ձ դաշտ,
Ինչպես օր կոլխոզի գութներ կաշխադին,
Յոթ գութանավոր էգած ան,
Օր յոթ օր գութան էնին, հերգ էնին։
Ըդոնք նստած ան հացի.
Էն ժամանագ հասավ, օր նստած ան հացի, հաց կուդին։
Ըսին.—Ա՛յ բարեկամ ճամպորդ,
Համեցե՛ք, հաց ուդինք, էգեր իս պադայի.
Մենք սովորություն ունինք՝ ինչ ճամպորդ օր .լիգա,

Մեր մոդ բդի հաց ուդա։
— Է՛,—կըսա,—Թե ես .իջնիմ, բդոնց հաց ուդի՛մ,
Ըդոնք ինչքա՞ն հաց բդի ունենան, օր ընձի կշատցնին։
Թե ջիչնի՛մ, բդի ըսին՝ ինչքան նամարդ մարդ ա,
Ըսիմ, մարդու հաց ավեր ա, օր հաց ուդա։—
Կըսա.—Բդի .իջնիմ, էլ ի՞նչ էնիմ։
Գիչնի, դիկա, ձին կրկաբա,
Տավրի խաո ուդելու ժամանակն ա,
Ես ձին էնդեխ քոզ ուդա,
.Ձինք կընատի, հաց կուդա։
Ինչքան կուդի՛ն, կըբցին,
Ինչքան հաց կուդին, կըբցին,
Օխտ ավուր հաց կըխլըսի։
Իշկին .իբար, կըսկսին փսփսալ,
Կըսա.—Հա՛, ի՞նչ էղեր ա։
— Գինա՞ ինչ,—կըսա,—մենք չ՝գինանք,
Թե ինչ պադահավ մեր մեջ.
Մենք յոթ ավուր հաց ենք բերե,
Օր յոթ գուբան էնենք,
Իսկ մեկ ժամ կերանք էդ հաց։
Կըսա.—Ես իմ կերե, դու չըկերիր իբ.
Քանի՞ օր բդի գուբան էնիր։
Թե.—Յոթն օր բդի մենք գուբան էնինք։
— Դե՛, ձեր գուբաններ կարենք .իբարու։
Գուբաններ յոթն էլ կրկարին .իբար,
Ձին պըլձա։
Մե չորս ավուր վար ձին կէնա։
Էդ ժամանակ բդոնք կրսկսին հա՛ խոսալ, Թե.
— Հունարը ձիուն ա, իսո՛ հունարը ուր չէ։
— Թե օր հունար իմ չէ,—կըսա,
Ձին կհարցըդա, կըբցա ուր Թեվ,
Իրենք ավուր վարն էլ .իրենք կէնա,—
Դե՛,—կըսա,—գնացե՛ք։
— Վա՛յ, աստված քու բան աջողա՛,
Մենք բդի յոթ օր մենք ցրտու դեմ, անձրևու, շոգու,
Դու մըդի ազադեցիր։
Էն մարդիք դելնին կէրտան ուրանց տեխ,
Էդ մարդ էլ դիկա ուր ճամպու հեդ։

27. Կէրսա, պհասնի խոյ։
Օր պհասնի խոյ, էն ժամանակ կէրսա,
Օր գարգըվանչին գարգահ զնգրկեր ա,
Քաղաքի գարգահներ զնգրկեր ա։
Կրսա.—Գարգըվանչի՛, դուռ բա՛ց, .յիգամ,
Ես Դավիթն իմ։
Կրսա.—Էդմալ օրներ չկա,
Մեր խանըմից էդմալ հրահանգ ունինք,
Օր մեր գարգահներն օր գարգին,
Էլ մարդ չբնակներ ներս գա, ժամանակ չէ։
— Դե՛, օր էդպես ա, գարգըվանչի՛,—կրսա,—
Իմ սիրտ խաբալ չէնա,
Դանդա բա մեզ մադրն էս գարգըրի արանքից հա՛ն,
Ես բա մադ համբուրիմ,—կրսա,—
Փափագրն առնիմ՝ միևչև .յառավոտ։
Գարգըվանչին օր մադ կըհանա,
Էդի կրբաշա մադրն։
Մադրն օր կրբաշա՝ չեզնըւց կրկդրի։
Կրսա.—Քու բախտ .յընկնի՛մ, Ք՛ոչ, գարգահ բանամ։
Ըսալ.—Վի՞ր դեմ բդի գարգախ չբրաներ, իմ դե՞մ։
— Հա՛։
Կրբանա։ Գարգահն օր կրբանա.
— Դե՛,—կրսա,—գարգըվանչի՛, դնա՛, խանըմին բսա՛,
Ես Դավիթն իմ, էդեր իմ,—կրսա,—
.Յերդա, .յիրար տենանք. Քե ընձի պհավնի՝ հավնի,
Չի՝ դառնամ ես կէրսամ։
Կէրսա, կրսա խանումին, կրսա.
— Գնա՛, ուրին բսա՝ էսբան փայլևան
Մինչև հրմի էգած ան ընձի համար, օր ընձի առնին,
Մենգ էլ .յինը։
Ը՛րե էրսա, ընդհնց հեղ մե գիշեր մնա,
.Յառավոդ ես գալնիմ, կէրսամ հաս բախչեն.
Թող գա, .յիրար տեսնանք,
Ամոթ ա, մրգա .յիրար տենանք։
Գիկա գարգըվանչին ուրին կրսա։
— Դե՛,—կրսա,—իմ ձին բաշա՛,
Ընդհնց ձիանու մոդ կարա։
Կրսա.—Ձիանուն տեխ չկա, ի՞նչ էնիմ։

Կըսա.—Թո՛ր,—կըսա,—թե իմ ձին ա,
Թը՛ղ էրսա, ուրին տեղ գընի,
Թե չէ՝ թը՛ղ էրսա սադգի։
Ձին կըթողա ձիանու մեջ,
Կէրսա բատուր-ընդուր, ի՞նչ բդի էնին ընդրա ձիուն.
Բոլոր յանջա յա, գարի յա, ինչ ուզելիք, կըտկսա ուտել։
28. *Դու արի՛ տես, բդոնք օր լսած ան՝ Դավիթի էգեր ա,*
Կըսին.—.Յուզա-չուզա,
Էգ խանում բդրան գհավնի, մըզի ջ՛հավնի։
Էսքան ժամանակ մենք էգեր ինր,
Էգ մարդ մըզի ջ՛հավնի։
Կըրկրին, ամեց գինի գըտպագրատան,
Գավեր կառնին ձեռ ուրանց,
Ամեց մեց հաղ գրլնան գավթի,
Կիգան մեձ թասերով, թե.—Դավիթի խոտա, բնֆռվնա,
Մենք Դավիթին բռտանինք։
Օր կրմգնի նեղա, էն ուր կողմից.
— Դավի՛թ, դու բարո՛վ էգար, համեցի՛, էսի բնձնից։
Հա՛ էնի.—Դավի՛թ, դու բարո՛վ էգա՛ր։
Սրբով գրխամ՛, բնֆն օր կըբռնա,
Ըգոնք էլ Թրնր .լըմմե՛ն դրած ան հազրր,
Թե բնչա յա, ինչ ադրաթ ա՝ ուրանց նատելու տեղ,
Օր հազրր էգնի, չսպանին։
Քնֆն օր գհատնի, բդոնց գվերու, կըթոթվա,
Էգ Թրնր .լըմեն կըժողվա,
Հըմլա՛ գրգարգա չորին, կըսա.
— Դարդըվանչի՛, տա՛ր, Թալա իմ ձիու խուրջին,—կըսա,—
Կէնիմ իմ ձիուն նալ ու մըխ։
— Հա՛յ-հա՛յ,—կըսին,—էգի օր իդր էրնց,—կըսա,—
Էլ մենք ի՞նչ կյանանք էնինք։

29. *Մնա մինչև .յառավոտ.*
.Յառավոտ ինչ օր խանըմը ժամն էր սազմանե,
Էն ժամին գիկա բազչեն, .յինքն էլ էս յանից կէրսա։
Խանըմին օր կրտեսնա՝ գեղեցկություն,
Սրտի .յեխշեն գրհատնի ճագագ կրպագա։
Ծագագն օր գրհամբուրա,
Մեզ էլ կրսկըսա ձեռն համբուրել.

Մեղ էլ օր դող կը՛համբուրա,
Մեզ հազ սիլլա զըզարդա, կըսա.
— Խուռումա՛ղ, Օղան-Տողան ընձի հիսի՞ր ա բիրե.
Հըլը էն մեզըն համբուրնցիր,
Ըսեցի երիտասարդ է, բախշի ուր երիտասարդություն,
Մյուսը՝ նմանապես, իսկ էսի՞...
Կըսա.—Օր էդպես ա, խանո՛ւմ,—կըսա,—
Ասուց կըխնդրիմ՝ յոթ ավուր մնչ,
Օղան-Տողան խոշուն կարին,
.Յիդան քու վրեն կոխվ.
Ես էրտամ, դուննց հետ կոխվ էնիմ,
Ես դուննց .յախտիմ,
Նոր դամ բեզի արժանանամ, բիզի առնիմ։
Թե չէ,—ասում ա,—ես բեզի չեմ առնի։

30. Դու արի՛ տես, յոթ օրն օր դրժիմ,
Էդ Օղան-Տողան օր կըսին՝ թագավոր է.
Էդ թարավորնեը խոշուն կրկարին, գիկան կոխվ վրեն։
Գիկան կոխվ, խարար գիկա փայլեվնեըուն, թե.
— Օղան-Տողան էգած ա՛ն կոխվ։
Կըսին.—Որն օր դըռ չէգեր էր,
Դնաց մոդըն կաս բախշեն, ճաղադ համբուրնց,
Ըր՛ս էնի էրտա կոխվ,
Մենք ընչի՞ էրտանք կոխվ։
Կըսա.—Խուռումադ ճնջղու ձագի՛ր,—կըսա,—
Ես .յերտում իմ կերե, իմ .յերտման դևմն էգած ա,
Ես կէրտամ, ձըգի ո՞վ ըսնց՝ արնք կոխվ,
Օր դուբ ամեք ձըր կողմից մեզ բան կըխոսար։

Դավիթ գևնի գիկա, կըսա.
— Խանը՛մ,—կըսա,—կէրտամ կոխվ,
Կոխվն օր գըվերջանա, յոթ օրն օր գրժիմ,
Կամ քե՝ սայմանած օր, գիկաս, կըտեսնաս,
Տեսնաս, օր որի քեվին խաչ կա՝ Ման խաչ,
Էնի իմ չանդագն ա,
Կըբերիս, կըթաղիս ժամով, պադարաթով։
Թե ախտեցի լը, զըթի ես գիկամ։
Դու արի՛ տես, էնի գիկամ,

Կըսկսա ըդոնց հետ կռիվ էնել.
Օր զրկովի, բյամանները կըթալին,
Քյամանին խամ ա, Դավիթին կըբռնին։
Դավիթին օր բռնին, բերին ի՞նչ կէնին.
Տախտագ, մեծ տախտագ ծագին,
Դիջուն գլոխ՝ Քևվերու վրեն,
Ուրանք էրգրսով գնդին նսաին վրեն,
Կևրուխում կէնին։

31. Օր կևրուխում կէնին,
Հորոխպեր էլի էրաձ կըտեսնա։
Հորոխպերն օր էրաձ կըտեսնա,
Կըտեսնա, օր Դավիթ նետն ա յընգե, գէնի, կըսա.
— Կնի՛գ, ձին պատրաստա՛, .յէնիմ, էրտամ։
Կըսա.—Ա՛յ քու տունը չըքանդվի,
Էնի գացե խայ, խանդութին գրկե, հըմի քնի,
Քու էտեղ ընդրան էրաձ կըտեսնաս։
Կըսա.—Կնի՛գ,—կըսա,—էլօղլու ախճիգ խս, .յէլի՛։
Վերջ, կնգա հետ իլլաջ չէղնի,
.Յինք գէնի, ձին կըքաշա,
Կնգան էլ մե լավ կըջարտա,
Թամքա, գամա, հնձնի ու գիկա։
Գիկա, յոթ ավուր ճամպախ ըդրա ձեն կէրտևր,
Կըրոռա.—Դավի՛թ, Դավի՛թ,—կըսա,—քու բերան կոդրի՛,
Խաչ Պատրաստին մոռցի՞ր խս։
— Հե՛յ վախ,—կըսա,—իմ հորոխպերն էգավ.
Ընձի էս տեսակ տեսավ,
Ես մեռնիմ լավ ա, քանց Քև սող մնամ,
Օր հախտրվեր իմ։

Կըսա.—Հավատա՛մ խաչ Պատրաստին,
Դավիթի աչ Քևվին,
Աչ պըդրդիմ՝ կոդրի տախտագ,
.Յիջնիմ, ըդոնց կռիվ ադա էնիմ,
Ներ էրտամ, արժանանամ խանըմին։

Ըսելու հետ՝ կըտաքգի տախտագ,
Ըդոնք զընդնին, էրգըսին լև կըրռնա.

Էրդրսին էլ սաղ կրրռնա,
Ձեռ ու ոդ ուրանց կրկաբա,
— Դե՛,—կրսա,—կռիվն էն ա։
Հորոխպերն էլ էն կռզմից գիկա, կրսա.
— Հորոխպե՛ր, դու իդոնց պայիս,
Չէդնի բդոնց բսպանիս, Թաբավոր ին,
Մինչև ես էս խոշունի վերջ ասմ։
Յինր օր կռվու վերջ կիդա,
Բդոնր օր յիրար գիկան,
Հորոխպեր յախու կրբռնա Էրդրսին էլ կրմորթա,
Կրսա.—Էդ պախան իմ ձեռնեն,
Գիկա, էլ ձեռնեն չըպրձրնիմ։
Գիկա, կրտեսնի, օր բսպաներ է Էրդուս լի,
Կրսա.—Ա՛յ քու տունը շիրվի՛, ես բրգի բան բսի...
Կրսա.—Վո՛ւյ, բրգնե պայիմ, ասուց ինչ պայիմ,
Եվի օր յիրար էդան՝ ես վախեցա,
Ըսի՝ վայթե յեղնին, փախնին,
Էլ Դավիթի ձեռնեն չըպրձրնիմ,
Էրդրսին էլ բսպաներ իմ։
— Օր բսպաներ իս՝ բսպանե, էլ ի՞նչ էնիմ։

32. Դու արի՛, տես, խանդութ ձին հեձեր ա,
Տղամարդու շոր հագե, մզրախ առե ձեռ,
Ձին հեձեր ա, գրկա։
Կըզարգա ջանդարնեերին՝ բսպանվաձներին,
Կրդա արևվի դեմ,
Կրտեսնա, օր խաչ չկա, կըբցա,
Ըստեղից համարյա էն ծառ կէբռա։
Կրսա.—Հա՛յ-հա՛յ,—կրսա,—
Էն օր դու մեն գիկաս,
Ես ընդրան շո՛ւտ իմ խուրբան էրի ընձի՛...
Կրսա.—Հինդ իմ պես, տաս քու պես,
Ես խուրբան կէնիմ ընդրան,—խանդութ կրսա։
Մեզ խանդութից, մեզ իրանից, կրսկրսին կռիվ էնել։
Օր կռիվ կէնին, գիջնին, գհասնին յիրար դուշ,
Ձեռ կրբցա, իրա ծիծ կրբամա՝
Յոթ կոթ արուն կէրտա։
Կրսա.—Հա՛յ, խուռումսա՛ղ,—կրսա,—

Հըյֆի հանեցիր, թո՛ր,—կըսա Դավիթին։
— Դե՛,—կըսա,—օր էդպես ա, դիդա՞ս ինչ.
էս իմ հորոխպերն ա, մեր մեձն ա,
էսի բդի .յրնդնի .յառնչ,
Ես նրա քամագ, դու էլ իմ քամագ։
Եթե մըդնի .յառնչ յրնդար՝ ես բդի տարող չիմ։
— Վա՛յ,—կըսա,—շա՛տ լավ,—զրհամաձայնվի խանըմ։
Դու արի՛ տես, խանըմի մդնն կէրսա,
Կըսա.—Ա՛խր, անպատրաստություն ա,
Նի օր իրա հոխպերն էգեր ա,—կըսա,—
Յավա՛շ, էս կարճ համպով ես ձին թևքիմ,
Շուտ էրտամ, պատրաստություն տենամ,
Մինչև ընդննց գալ։
էդի օր ձին կըթևքա, կէրսա, կըսա.
— Հորոխպե՛ր, տեսա՞ր ինչ էդավ։
Կըսա.—Ի՞նչ էդավ։
Կըսա.—Ձին թևքից, գնաց։
— է՛, գնաց՝ գնաց, մենք էլ կէրսանք։
Կըսա.—Մենք մարդ էդնինք, էնի կնիգ էդնի,
Ուրեմն, մեզնից .յառնչ .յրնգնի, էրտա՞։
Հող էն մարդու գլխուն, օր էդպես բան էնա։
Ըր՛մ տանի, օր ըր՛մ տանի,
Հորոխպե՛ր, դարցի՛, էրտանք։
Դառնան, ձիան կըթըին.
Կըսա.—Ա՛յ տղա,—կըսա,—խնդչ ունիս,
էդեր իս, տանջվեր իս...
— Չէ՛, օր չէ՛, ես բդրան էլ առնող չիմ։
Ձիան կըթըին, գիկան,
Դարգըվանչին խարար կըտանե, կըսա.
— Խանըմ,—կըսա,—Դավիթ գնա՞ց...
— Ինչպե՞ս գնաց։
— Տո, վա՛ղա, գնաց,
Դու օր հըմյա թևքվեր էր, էնի գնաց։
էդտեխից էլ ոչ օդնաման կըհարնի,
Վատգութենից ոչ ձի կըհեձնի,
Բոբիդ գրնդնի քամագ։
Չէն կիդա.—Դավի՛թ, կայնի՛, կայնի՛։
Մեզ ժամանագ գիկա, .յանդաչ չէնա, կըսա։

— Հորեղբա՛ր, խանդութ ափսո՜ս ա,
Հըլա կայնի, տեղանք, ի՞նչ կըսա։
Գիկա, կըսա.— Ա՛խր, ես գնացի,
Պադրաստութիւն տեղեկ ձրգի հարգելու,
Դու էդ ի՞նչ էր էրեցիր,
Նո՛ր չկընեկ, էրտեկ։
Կըսա.— Ես է՛լ էնդեղ դառնող չիմ,
Յերտում իմ կերկ ասու գիմ.
Հո՛ղ էն մարդու գլխուն, օր ուր ըսաձին տեր չըկայնի։
Թե գիկա՞ ասի, հենի թաբրըմ, էրտանք,
Թե չէ՝ ես ըրդի տարող չիմ։
Խանըմ ճար նաճար կրհամաձայնվի,
Գ՛հենեկ թաբրըն, ու բշին կէրտան։

33. Շադ գիկան, քիչ գիկան, գրհասնին Սասուն։
Խանդութ կըմնա էրեխով։
Խանդութն օր կըմնա էրեխով, կըսա.
— Գինա՞ս ինչ, խանդո՛ւթ,— կըսա,—
Ես էրտամ Հուրըսատան, մեզ հազ հուրի բռնիմ, բերիմ,
Օր քու դեմը աշխատի, ծառայութիւն էնա,
Դու էրեխով խա։
Մե կողմից էլ կըսա.— Ես կէրտամ,
Բայց թե օր մեզի տղա կէղնի,
Էս օսկի կակավ կրկարես թևովն,
Գա՛, հասնի իմ յառեջ։
Թե ախճիղ կէղնի, զրկի, թե օր ես չէդա,
Հողից-հողի խուրդիք, ուդիք՝ ձրգի բավագան է։
Տղի անուն էլ,— ասում ա,— կրդնիք Մհեր։
Ու յինք գէղնի կէրտա։

34. Յինք կէրտա. մինչեկ ուր էրտալ, գալ,
Դու արի՛ տես, ին ամիան օր գըթմի,
Տղեն կրծնվի։
Տղեն օր կրծնվի՝ անուն կրդնին Մհեր։
Անուն օր կրդնին Մհեր,
Թե ուրիշներ ամսով, տարով կրբեդրնեն,
Էդի օրով ու շաբթով կրմեծրնա։
Ինչպես օր ուր հերն էր, էդպես էլ յինք ա չար։

Որի տղի հեդ օր գնէի խաղալու՝ կռիվ կէնա.
Կըսին.—Օր դու լավ էղներ,
Քու հեր քու .յերսից չըհևանեներ։
Դիկա կըսկըսա լալ։
Էդ Պառավուն կըպատպատի.
Պառավուն օր կըպատպատի, կըսա.
— Մայրի՛ գ,—կըսա,—իմ հեր .յո՞ւր ա գնացեր ա,—
Ըդհենց հավադարիմ էդ Պառավն ա, օր հորը պադահավ։
Կըսա.—Գինա՞ ա, .յո՞ւր ա գնացե.
Քու մեր գինա քու հոր տեխ։
Կէրտաս, օր չըսա, ինչքան օր դու կըսիս,
Տեխ չըսա քու վնասվելու համար,
Էն ժամանագ դու կըսիս. «Մայրի՛ գ, իմ տղամ կըցավա»։
Դե՛, մեզ տղա իս, օր տղամդի կըցավա, դու շատ գըվշվշաս,
Էն ժամանագ էնի գիկա, դեմ գընդնի, քե.
«Ի՞նչ էնիմ, դեղ ի՞նչ էնիմ»։
Ըսա. «Իմ տղամի դեղ գինա՞ ա ինչ ա, մայրի՛ գ,
Ավազ խարդա՛, էնի դնիմ իմ տղամի վրեն՝ կըսաղնա»։
Էն վախտ օր էնի կըսկըսա ավազ խարդել,
Ձեռ օր կըտանա, հադ մի վերու,
Ձեռ կըխփես ավզի վրեն.
«Մինչև իմ հոր տեխ չըսիս՝ չըմ Քողի,
Վառի լև՝ չըմ Քողի»։
Էն ժամանագ քու հոր տեխ կասի։
Գիկա, կըսա.—Մայրի՛ գ, իմ տղամ շատ կըցավա,
Ի՞նչ էնիմ, դեղ-դարման գինա՞ս։
Կըսա.—Ի՞նչ էնիմ, բալի՛ գ ջան։
Կըսա.—Մայրի՛ գ, ես իմ տղմի դեղ գինամ.
Եթե ավազ դադիս, դնիմ իմ տղամի վրեն,
Իմ տղամի ցավ գանցնի։
Դե՛, մեզ տղա է, մարդըն գացե,
Չկա շուդվանից խաբար,
Ըևրա ավազ կըդադա, կըսա.
— Դե՛, մե հադ տո՛ւ, հըլա գնիմ, տենամ, կըդինջանա՞։
Ինչպես օր մեր ձեռ կըտանա մեջ,
.Յինք ձեռ կըսիմա ավզի վրեն, կըսա.
— Մինչև իմ հոր տեխ չասիս՝ չըմ Քողի։
Ընձի .յըմեն էքուտ կըխանչին, կըսին.

«Քու հեր քու .յերսից ա փախե, գնացե»։
— Դե՛,—կըսա,—օր էդպես ա, քեր, ըսիմ, բալի՛գ չան։
Կըթողա, կըսա.—Ես օր մնացի քեզնով էրեխով,
Քու հեր գնաց Հուրըստան,
Օր հուրի բերա մեր համար ծառայելու,
Մեր տան մեջ աշխատելու։
Գնացեր ա, ինձ էլ էս պարզևեն ա ավե,
Որ քրդի խրդիմ, էրտուս ուր .յառնե։
— Դե՛, օր էդպես ա,—կըսա,—ես կէրտամ իմ հոր .յառնե։
Գելնի, էդ օսկե կախվեն օր կա, քեզ կրկարա,
Շորերու մեջըն կրկարա, դուրս չըկարա։
Էնի կըսա. «Կարա՛ դուրս, օր .յիգա, տեսնամ,
Իմ տղեն ճանչընամ»։
Ներս կրկարա, տղեն գելնի, գհեձնի ձին
Ու բամու քեֆի հետ կէրտա։

Մենք խաբար տանք Դավիթից։

35. Դավիթն օր կէրտա Հուրըստան, կռիվ կէնա,
Հուրի կրբռնա, կրբերա, կրխլա,
Գիկա՝ Սուլթան Զմիշկ գելնի դեմ։
Սուլթան Զմիշկ գելնի դեմ, կռիվ կրպահանջա։
Կռիվ օր կրպահանջա, կրսա.
— Իմ հետ օղլուշաղ կա, քե՛ր, էրտամ,—կրսա,—
Իրեր ամիս բնձի ժամանագ տո՛ւր,
Իրեր ամսից եղ .յիգամ, կռիվ էնենք,—կրսա,—
Որ օր ախտեց՝ քող բասանա։
Ես գերըվամ բոլս համար, կէրտամ։
Գիկա։ Ըզեր հետ պայման գրկարա ու գիկա։

Գիկա, տղեն պադայի ճամպեն։
Օր գրպադայի, կրսա.—Հա՛յ, հա՛յ...
Էն վախտ օր Դավիթ էգե,
Ըսպիդագ մազեր .յրնդի առախատ .յերես.
Կրսա.—Հըլա տեսե՛ք էս մեծ մարդին,—կրսա,—
Էդ հուրին բնձի կրպատկանե,
Ոչ քե քրդի կրպատկանե։
Կրսա.—Հըլա տեսե՛ք,

Ծովեր .լընցեր իմ՝ իմ ձիու նալ չըտըգներ ա,
Բարադ .յառուն գուգա ընձի խնիառա։
— Ուրեմ, գու ընձի բարագ .յառու հաշիվեցի՞ր,—
Տղեն ա ասում։
Ու կըսկըսին կռիվ էնել։
Օր կըսկըսին կռիվ էնել,
Ձիանու վրեն ինչըրան կավին, մեգ-մեգի չ'ախատա։
— Դե՛,—կըսա,—.յիջի՛, հասնինք գուլաշ.
Եթե մեգըս-մեգին գնդին խփե, թող վիզ կգրա։
Էդ օր գիջնին գհասնին,
Է՛, տղեն ուժեղ ա հորից,
Հոր գըզարգա գնդին,
Թուր կըթաշա, օր վիզ կգրա։
— Հը՛յ, կդրի՛ճ,—կըսա,—քու գլխուն-արևուն մեռնի՛մ,
Դու ընձի ըսպանիր,
Ըրը իմ կդրիճի ձևից իմա՞լ բդի պրծնիս։
Կըսա.—Ո՞վ ա քու կդրիճ։
Կըսա.—Էն, օր օսկե կակավ Քեվի վրեն կըրուգ ա։
— Ա՛յ,—կըսա,—քու ատ՛ևը շիրվի,
Բա ես քու տղեն իմ՝ Մհերն իմ։
— Դե՛, օր դու Մհերն ես,—կըսա,—
Ասուց կբանդրիմ՝ մինչև Քրիստոս գա դադաստան,
Ո՛չ բըզի մայ էղնի.
Ո՛չ քու .յեղավ ժառանգ .յընդնի։
Էդ անեծք օր կիգա տղին,
Տղեն ինագ կէնա ու... ծոյ,
Հա՛յդն, քեռիներու տուն։
.Յինք գեղնի, կառնի հարբին ու գիկա։

36. Հարբին օր կառնի գիկա, կըբերա տուն,
Կըմենա, կըմոռնա Սուլթան Ջմիշկին։
Տարիներ գընցընի։
Օր գընցընի, էն մեգ օր, գիշեր, գընդնի մղեն։
— Կնի՛գ,—կըսա,—.յառավոտ չուր գի՛ր,
Ես լողգընամ, .յիսաբղվիմ,
Ես .յերտում իմ կերե, էրտամ, կռիվ էնիմ,
Տեսնամ՝ սաղ գիկամ, Քե չէ։
Չուր կըդնա, կըբերա, լողգըցու,

Կըսա.—Իմ ջանի վրեն ինչ այիր օր կըտեսնաս,—կըսա,—
Զըսի՛ս, իմ .յանդաջ չէցկիս, իմ .յերես չիդաս,
Եթե տաս՝ ես կէրտամ, ըսպանվիմ։
Կնիգն օր կըլոզըցու, կըտեսնի,
Օր Մսե խաչի մեգ թևըն սևցնր ա։
— Վա՛յ, Դավի՛թ,—կըսա,—
Իդա թու խաչի մեգ դենըն սևցնր ա։
— Վա՛յ,—կըսա,—թու բնթա՛ն կոդրեր,—կըսա,—
Ես ըզդի բան չըսեցի՛, ես կէրտամ, կըսպանվիմ։
Էդ ես օր .յերտում ուրացեր իմ էսքան ժամանակ,
Էն համար էլ սևցնր ա։
Գնէնի, ձին կըպադրաստե, հնձնի, գիկա։

37. Գհնձնի, գիկա,
Կըսկըսին Սուլթան Զմըշկի հետ կռիվ էնել։
Օր կռիվ կէնին, բանի օր հավ ա,
Կըկռվի, ըդոննց կ'ախատա.
Շնգն օր կիդա, կէրտա, մե՛ձ կարմունջ կա,
Էդ կարմընջի տագ կըմդնի ջուր՝ Դավիթն։
Դու արի՛ տես, ըդոննք գրհնդվին, կըսին.
— Էդ .յո՛ւր կէրտա, օր ըսկի չէրևվո՛։
Տեսնան, օր կարմընջի տագն ա։
Բևրին, վերևից մե հատ գուբնի խոզ,
Օր գրզարգին գլխուն՝ գլոխ կըրացվի,
Կըբռռայ ու կըմեռնի։

Գ

ՓՈՓՐ ՄՀԵՐ

38. Օր կըմեռնի, ձեն գընգնի տղի .յանդաջ՝ խոյ։
Կըսա.—Տեսա՞ր, քեռի՛,—կըսա,—
Իմ հեր գացե Սուլթան Զմիշկի հետ կռիվ,
Իմ հոր ըսպանեցին, ես կէրտամ։
— Դե՛, օր դու կէրտաս,—կըսա,—
Ես էլ գիկամ, մենք էլ գիկանք.
Մեր փեսին ըսպանին, ըրա մենք չիգա՞նք։

— Գիդա՞ս, քեռի՛,—կըսա,—
Ընդո՞ւնք սեհրբազ ժողովուրդ ին,—կըսա,—
Տավար գիկա .յառնչ ձըգի՝ կդրեք, մը՛խնայեք,
Օչխար գիկա՝ կդրե՛ք,
Հեռի լսողաց, շուն, գել, կատու, ինչ գիկա՝ կդրե՛ք,
Ընդո՞ւնք սեհրբազ ին,—կըսա։
Ինչ օր էդի պագվեր կիդա՝ կէնին։
Գիկան, կըտեսնան, օր Սուլթան Զմիշկ .յելեր ա մինների գլոխ,
Էդն կատու, պո՞չ փաթե վիդն ու նստեր ա։
— Կըտեսնա՞ք,—կըսա,—.յուր ա նստե, քեռի՛։
Նեդ ու անեդով կըղարգին՝ գընգնի ցած։
Օր գընգնի ցած, դ'հանա հոր, կըբերա.
Հոր կըբերա, դ'հասուն Սասուն,
Հոր կըթաղին, կըսա.
— Ես .յերտում իմ կերե, էլ չըմնամ էստեղ,
Քեռի՛, կէրտամ ձեր տուն։

Դու արի՛ տես, քեռիք լե,
Ինչքան ժամանագ օր էդի գացե,
Թե տարիներ է անցե, ինչ էղեր ա,
Որի հեդ կէրտա աշխատանքի, կաշխադցուն,
.Յիրգուն օր գիկա՝ մեզ ուր տուն չըտանա Մհերին։
Մեզ հադ գալար ուտենի,
Կըհասնի, ձեռ կըթալա, կզըցու, կըբերա, կըսա.
— Քեռի՛ք, հըլը արի՛ք, .յելի՛ք վրեն,
Տեսնանք՝ թաք-թաք կյնանա՞ք խաղալ։
Քեռիք գելնին, գիջնին, հա՛ ըմալ կէնա՞,
Օր յոնն էլ գելնին վրեն, ու կըթողա.
Օր կըթողա, եսիմ, քեռիքներուն .յո՞ւր կըբցա։
— Գնացե՛ք,—կըսա,—իմ հոգին առաք էսբան ժամանագ։
Էդտեղից գելնի, դո՛ւզ գիկա ուրանց տուն։

39. Գիկա ուրանց տուն,
Հորոխպեր՝ Զինով Օհան, կըսա.
— Լաո՛, օր դու էգար, էլի մեր, ինչբան չէղնի,
Հորդի տեխ կըպաշտպանիս մեր բաղաք։
Դու արի՛ տես, բսել լե լավ չէ,

Կնգա միաբ խալը կէղնի՝ Օհանի։
Կրսա.—Ի՞նչ էնիմ,—կրսա,—
Ես հրյա Մհերին փորցիմ, անհամ,
Էն էլ էլօղլու տղա, ես էլ էլօղլու ախճիկ,
Իմա՞լ էնիմ, օր էդի,—կրսա,—փոխվի իմ հետ։
Ջուր կրդնա, կրսա.—Մհե՛ր ջան,
.Յրսօր գիկա՞ս, ջուր .յրվնաս, ես մե քիչ լողգրնամ։
Մեծ հորոխպեր կնիգն է, .յանգաջ կէնա.
Գիկա, հորոխպեր կինն օր կրսկսա լողգրնալ.
.Յինք, բանց, .յերես կրբերթա,
Ու մե ձեռով ջուր գրընա։
Կրսա.—Հա՛յ, հա՛յ,—կրսա,—
Էդի բնձի հավանություն չրտվնց,—կրսա։
Գելնի, ուր .յերբսներ կրճանգրդգա,
Ուր շորեր կրճգրդգա,
Գիկա ու մարդուն գանգրդի, կրսա.
— Տեսա՞ր,—կրսա,—կրսեիր՝ մեր ասկ էս տեսագ ա,
Գուղեր բնձի էպես խայդառագներ,
Աչջախ սրձեր իմ ձեռնեն։
Կրսա.—Կնի՛գ, անհրդչություն մ'էնի,
Մեր ասկին էդ բան չկա։
Կրսա.—Չէ՛, օր չէ՛, էղեր ա։
Կրսա.—Օր էդպես ա, էնի գիկա,
Ես .յիրգուն մնգ խոսք կրսիմ.
Եթե էդ բանին էնի էրաճ էղնի՝ .յիրգուն ա, չէրսա,
Եթե չէ, էնի էատեխից ինադ կէնա ու կէրսա։
Դե՛, .յինք կէրսա, ջահել տղա յա, խաղալու հետ,
Մինչև տասէրրսին գիկա, գուռ կրծնծա.
— Հորոխպե՛ր, .յելի՛ գուռ բաց, հորոխպե՛ր։
Կրսա.—Ո՛չ գու էղնիս, ո՛չ բու հորոխպեր,
Փչացա՛ծ,—կրսա,—հրյր հորոխպեր անուն կիդա՞ս,
Էդ ի՞նչ իս էրես։
Կրսա.—Հորոխպե՛ր, ամո՛թ բրդի,
Օր գու խասլար մե կնգա, մեզ լաշու։
Ահա՛ն,—կրսա.—Թո՛ղ իդա տուն,
Իդա հեղ ու ջուր իմ վրեն հարամ էղնի,
Ես գացի։

40. Կէրտա գընդի Հոր գնդեմբնի վրեն ու պիլա։
Գիլա՝ Հեր գնէնի լիզու, կըտա.
— Լաո՛,—կըսա,—քանիեր ա մազ պէխուցսի,
Գացե դրէշմն .յեղբսիցսի,
Ասու տագ իրավունք չունիմ օր .յեղնելու,—կըսա,—
Գնա՛, օր էդքան նեղ իս .յընգե,
Ադռավանց քար կա,
էն քար կըբացվի, դու կէրտաս.
Քու ամեն ինչ պադրաստ կէդնի էնգեխ.
Կարբիս, մինչև Քրիստոս դա դադաստան։
Տղեն կէրտա, ինչպես օր Հեր պադվեր ավեր ա,
էնքեա կէրտա, կըտեսնա օր՝ Տա՛ղա,
Քար բացվավ, .յինր մդավ մեջ,
Ու քար էգավ, խդավ։

41. Զադդի Ավագ Հինդշաբթի օր
էդ քար կըբացվի,
.Յինր գնէնի մեգ ժամ Համարյա դուռ,
Կըթադմրնա, .յուշխար կըտեսնա՛,
Հեքըթի բան ա, էդպես կըսին,
Ու կըմդնի նեբա։

42. էն մեգ օր կըտեսնի օր՝
Հա՛, մեգ Հադ տղա,
էս մեր տղի պես մի չայել տղա,
Մե սինի Հավդիթ ա մեջ,
Զադդըվա Համար բան, ուղելիք, կէրտա։
Կըսա.—Տղա՛ չան, .յո՞ւր կըտանիս։
Թե.—Մեր քավորին տուն կըտանիմ,
Մեր քավորի փայն ա։
Թե.—Զերը քավոր ես իմ,—կըսա,—
Դե՛, բի՛, տո՛ւր ընձի, գնա։
էդի օր կըբերա, սինին կիդա բդրան,
էդ էլ բուռ մի օսկի կիդա տղին։
— Դե՛, գնա՛, բսա՝ մեր քավորն առավ
Ու էս բաշխիչն էլ տվեց ընձի։

Դառնա կէրտա, տղին կըսա.
— Տարա՞ր, տվի՞ր։
Կըսա.—Հա՛։
— Յո՞ւր է մեր բավորիչ տուն։
Թև.—Մե բարի դեմն էր, մեզ մարդ կայնուդ էր,
Կըսեր՝ ես ձեր բավորն իմ։
Թև.—Ի՞նչ բար։
Թև.—Էսպես բար մի։
— Դե՛, չիլի՛, էրտանք, էդ բար տեննանք։
Գիկան, բար կըտեսնան օր...
Կըսա.—Ըսանդ կայնուդ էր։
— Ո՞ն,—կըսա,—Մհերի բարն ա։



Սասնա Ծռեր

պատմեց
Սարուխանեցի Հովհաննես Հակոբյան
Սարուխան – Վաղարշապատ գյուղ
գրառված է 1973 թ.



Հովհաննես Մարգարի Հակոբյանը ծնվել է 1905 թ. Դյոբչայի Ալի Ղոբխ (այժմ Մարտունու շրջ. Աստղաձոր) գյուղում, ծերձակի ընտանիքում։ Կիսագրագետ է, սովորել է մեկ տարի (1918 թ.) գյուղի դպրոցում։ Զբաղմունքով հոգագործ է, եղել է նաև կոլտնտեսության հովիվ։

1941-ին մեկնել է բանակ, կռվել ռազմաճակատում։ 1947-ին վերադառնում է հայրենի գյուղ, ուր և ապրում է մինչև այժմ։ 1967-ից թոշակառու է։

Հովհաննեսը վեպը լսել է հորից՝ Թարգի Մարզարից (Մարզար Մուխուբ-Հակոբի Հակոբյանից), որի պապերը գաղթել են Բայազետ քաղաքից, սկզբում հաստատվել Նոր Բայազետում, ապա տեղափոխվել Ալի Ղոբխ։

Թարգի Մարզարը վեպը լսել է հորից՝ Մահտեսի (Մուխուբ) Հակոբ Հակոբյանից. վերջինս եղել է պապա, գնացել է Երևան, որից է մականունը։

Հովհաննեսը խոշոր, խամ աչքերով, ներշնչուն դիմագծերով տղամարդ է։ պատմում է աշխույժ, հարատար, նուանդուն շարժուձևերով։ Վարպետ վիպասաց է, դիտե նաև բռնմաթիվ հեքիաթներ։ Նա վեպը հաճախ է պատմել գյուղի օդանևրում. վերջին անգամ պատմել է 15 տարի առաջ։

Հովհաննեսը դաշտում համագյուղացիների հետ խոսք էր հնձում, երբ իրիկնապահին հասանք արտ։ Նա թողեց հունձը և մինչև ոչ երևկո մեքենայում պատմեց վեպը։ Ձայնագրելիս մեզ օգնեց գյուղի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ջանիկ Օհանյանը։

Պատմեր գրառել է Մարգիս Հարությունյանը։

Ա.

ՈՍՆԱՊԱՐ ԵՎ ԱՍԼԻՄԵԼԻՔ

Ժամանակավոր, սասե, մի հաղ Կորապաշտ թակավոր կար,
Կուռք էր պաշտում.
Ուներ էրգու հաղ տղա։
Տղաներ՝ մեկի անուն Սանասար, մեկին՝ Ասլիմելիք։
Տղաներն օր մեծացան, էղան տաս-տասներկու տարեկան,
Տրանց սովորությունն ի՞նչ էր.
Տրանց արտերը ղշերը կըծնծկին։
Տղաներին ասվեց, թե.
— Կնացե՛ք, արտը պաշտպանե՛ք,
Օր ղշերը չըծնծկեն արտին։
Տղաներ գնացին,
Մեկը պառկավ արտի վերին ղլոխ,
Մեկը՝ ներքին ղլոխ։
Սկսեցին ղշերին զանել մինչև՛ ճաշին, կնաօրին։
Ղշերը գնացին հանդիստանալու,
Տղաներ՝ մեկը պառկավ ներքին արտի ղլոխ,
Մեկը՝ վերին արտի ղլոխ,
Սկսեցին հանդիստանալ։

Ջէյ ախպերը Սանասարն էր, իշկիս երկինք.
— Ջանըմ,—ասեց,—մեր հայրը օր կուռք է պաշտում,
Բա էս վերին դեխինն ինչ ա։
Ասաց,—կա՛, չկա՛, սա աստված ա.
Անպայման մենք պտի,—ըսեց,—ավտանք աստված։
Օր ասաց, արդեն իրիկվա խավըն ընկավ,
Ղշեր էկան, չիշան արտ վրեն
Ու քողին գնացին։
Օր գնացին, .յկլավ գնաց, ախպոր ասաց.
— Ախպե՛ր ջան,—ասեց,—
Ես ավատացել եմ վերին դեխի աստված,
Հիմա ղշեր,—ըսեց,—մեր արտին չեն ծեծկում։
Վե՛ր կաց, գնանք տուն։
.Յելան էրկու ախպերով,
Համարա քե ժամի չորսին գնացին տուն։
Գնացին տուն, հայրըն ասաց.
— Ինչի՞ էկաք, ա՛յ տղաներ,
Հիմա,—ասեց,—խավն ընկել ա,
Ղշերը արդեն ծեծկում են։
Ասաց.—Հայրի՛կ,—ասաց,—
.Յառավըրանն մինչև ի ճաշին
Ղշեր չէինք կարող արտի վրավից նոացնեն,
Ճաշից նոո,—ըսեց,—ղշերն եկան,
Է՛լ մեր արտի վրեն չիշան։
Ըսեց.—Կերեվի դու ավատացեր եր վերին դեխի աստված.
Անպայման,—ըսեց,—ուրթաթ օր կուրի մադաղն եր։
Մերը լսավ, տղաների մայրը լսավ,
.Յելավ ասեց.—Բալե՛ր ըս,—ասեց,—
Քու հոր խոսքըն մենկըն էրկու չէղև,
Նա,—ասեց,—գոռոզ մարդ է,
Վե՛ր կացեք, փախե՛ք, գնացե՛ք ուրիշ երգրներ։
Գիշեր տղաներ եկան
Ու .յուրանց հոր խողից քողին ու գնացին ուրիշ երգիր։

2. Գնացին, գնացին ճանապարհի մեջտեղ,
Թե մե օր էր, թե էրգօր էր,
էդ մարդիկ, վերջնական, խասան մե հաղ ջրի, մեծ գեղան ջրի։
Հասան, եդո տեսան՝ էն կողմից մե բաբռնգ ջուր ա գալիս։

Էդ բնրնդ ջուրը, էդ փոքր ջուրը,
Էդ ամբողջ ջուրը կրլնի յիտասն բաղ ջուր,
Տրան կրկդրա, գրնցի էն կողմ,
Եգո կրխաոավի խնան ու կէքա։
Ջնչ ախպեր կանալ մտածնց՝ Սանասար,
Ասնց.—Նխպա՛ր,—ասնց,—
Էս ջուրըն էնքան ուժնղ ջուր ա,—ասնց,—
Օր ինքրն մե բաղ ջուր ա,
Նռնասն բաղ ջրուն կդրա, գրնցի էն յան,
Նոր կրխաոավի խնար, կէքա։
Գիտո՞ա ինչ կա,—բանց,—
Էս տեղի ծնվող էրեխեն,
Եթե էստեղ ծնվի, էս ջրուց համ,
Մե մարդըն հարուր մարդու դեմ կռիվ կէնա։
Ասնց.—Էստեղ մեզ տուն սուքնր։
Էդ մարդիկ՝ քաքավորի տղա, երիտասարդ տղա,
Բնրնցին սկսնցին խիմ էնել։
Խիմ էրնցին, բնզարացան։
Ասաց.—Նխպա՛ր, մենք արդեն չենք կարող տուն սարքել,
Էրկրսով մենք չենք կարող,—բանց,—
Էսի մեր խիմն ա, քցեր ենք,
Թո մնա բատեղ, մենք գնանք էդ բաղաքներ,
Փող աշխատինք մե կերպ, բնրենք,
Էստեղ մենք տուն կը սարքենք,
Արդեն խիմը գցեր ենք։

3. Յեվան էդ մարդիկ գնացին.
Գնացին մե քաղաք։
Էն վախտ գնացին քաղաք,
Օր Քաքավորը իր խայվաշու վրեն, չըրբխշու վրեն
նրստոտեր էր,
Գործից քցեր էր։
Էդ տղանեըն օր գնացին,
Գնացին Քաքավորի կուշտ.
— Հա՛,—բսաց,—ի՞նչ Յարդիք եք։
Ասաց.—Ծառա ենք։
Ասաց.—Գըլնի՞ք ընձի խայվաշի, չըրբխշի։
Ասին,—Այո, գըլնինք, Քաքավո՛ր։

Է՛, Թաթավոր տեսավ՝ տղաներ լավ տղա՛, կարթադրեց թե.
— Էս մարդիկ թը՛ ըլնին մեզի խայվաչի, չըբըխչի։
Էդ մարդիկ էղան էդ Թաթավորին խայվաչի, չըբըխչի.
Մեկըն խայվա չա անում,
Մեկըն չըբուխն ա տանում։
Վերջում Թաթավոր էտոնց էնքան չարքեց, օր չըտեանվաձ։

4. Թաթավորըն իր ոզիրին ասեց.
— Իմ ախճիկըս կտամ Սանասարին։
Իսկ ոզիրըն մտադիր ունի, օր Թաթավորի ախճիկըն ուզի իր տղային.

Ոզիր գլոխ կախեց։
Ասեց.—Ինչո՞ւ, ոզի՛ր, գլոխդ կախիր։
Ասեց.—Սրտիդ չէկա՞վ։
Ասեց.—Չէ՛, Թաթավո՛ր, բու ախճիկն ա,
Ինչի՞ իմ սրտին չի գա։
— Չէ՛,—ասեց,—եսիմ, սրտիդ չէկավ։
Ասեց.—Սրտիս էնքան չէկավ օր՝
Անփոր տղա են, տրանց փորցնենք, նոր ախճիկ տուր։
— Շատ լա՛վ.—Թե,—ո՞նց փորցնենք։
Թե.—Գնանք ձիաթոխա խաղալու։
— Դե՛,—ասեց,—Սանասա՛ր, Ալիմելի՛ք,—ըսեց,—
.Յատավոդ շուտ .յելի՛ք,
Պադրաստություն տեսեք,
Գնանք ձիաթոխա խաղալու։
Տղեգներ ուրախցան,
— .Յավելի լա՛վ։
.Յելան .յատավոդ շուտ,
Խայվեն, չըբուխ բերին, գրին Թաթավորի .յառաջ.
Կերավ, խմեց, .յեղավ նատավ իր ձիեր, գնաց։
Տղաները իրանց կերան, խմեցին,
.Յելան, նատան իրանց ձիանք ու բշին։

Էն վախտ բշին օր՝
Ոզիրըն իր դաշուն մե կողմն ու կայնացրեն,
Թաթավոր մե կողմն ա կայնացրեն։
Տղաներ բշին, մեջտեղ կայնան էրկրտով։
Թաթավոր վերուց բսաց.

— Տղանե՛ր, Մանասա՛ր, Ալիմելի՛ր,—բսաց,—
Որդի՛ք, յա՛ իմ ղոշունի վրեն արե՛ք,
Յա՛ գնացեք ոդիրի ղոշունին.
Դու էրկըսով կայնել եք դատ՝ ի՞նչ կէնեք։
Ասին.—Թաքավո՛ր, խա՛ցն ու գինին՝ Տե՛ր կենդանին,
Մեզ օր կես մայ ա, կապես ա։
Նորից կրկնավ թաքավո՛ր, ասավ.
— Ա՛յ տղեք ջան, Մանասա՛ր, Ալիմելի՛ր,
Յա՛ իմ ղոշունին արե՛ք,
Յա՛ ոդիրի ղոշունին գնացե՛ք։
Ասին.—Թագավո՛ր, խա՛ցն ու գինին՝ Տե՛ր կենդանին,
Մեզ օր կես մայ ա։
Ասաց.—Ոդի՛ր, քու ղոշուն քաշա՛ վրը իմ ղոշունին։
Ոդիր իրան ղոշուն քաշեց,
Գնաց թաքավորի ղոշունի վրեն,
Տղեկներ բշին, ոդիրի ղոշունի տեղ կայնան։
Թագավորի ղոշունից գնաց տղեկներին ձիաթոխս բալելու։
Օր ձիաթոխս բալալ՝ եղ դարցավ,
Տղաներ դանեցին, ձիուց էրքեցին, վիյավորվավ։
Վերջնական. մինչև .յիրգուն մե հատ սալամաթ ղոշունից չպրծավ.
Ամբողջ վիյավորված, թև ըսպանված։
Նոր .յիրգվան ֆշանդ բցեցին, ետ գացան,
Ընդոնք գնացին իրանց տեղ,
Տղաներ շուտ էգան .յիջան,
Տարան ձիանք կապեցին.
Թաքավոր էգավ, թաքավոր .յիջուցին, տարան ներս՝
Խոյվեն, չըբուխ պադրաստ դրին թաքավորի .յառաջ։
Կերան, խմեցին, թաքավոր ուրախ ըցավ։

Մնաց. ոդիրն ու թաքավոր էկան, միասին նստան, խոսացին։
Ըսեց.—Թաքավո՛ր, տե՛ս, ի՛նչքան գոռող մարդիք ին,
Օր իրեք անգամ կարքադրիր,—ըսեց,—
Ո՛չ իմ ղոշունին էգան, ո՛չ քու ղոշունին էգան.
Կայնան իրանց տեղ,—ըսեց,—
Մեր ամբողջ ղոշուններ ջարտեցին։
Դրանք,—ըսեց,—էդպես գոռող մարդիք են,

Մե օր մեկը խայվեն ծուռ կըդնա բերա, մեկը՝ չբուխ,
Միլով կըզանեն, բեզի գործից կըթալեն,
Իրանք կընստեն քու տեղ թաքավոր։
— Բա՛,—ըսեց,—ի՞նչ անենք։
Ըսեց.—Դու գիտես։

Տղաներուն խանչեց.
— Սանասա՛ր, Ալխա՛ելի՛ր,—ըսեց,—որդի՛ք,
Դու լավ մարդիք եք, լավ տղաներ եք.
Ես կամք չեմ տենա՝ իմ ձեռի վրեն աշխատիք, ծառայեք։
Արե՛ք, ո՛ր քաղաք գուզեք, որ ձեզի պատկանա,
Տամ՝ գնացեք, ձեզի տեր-տիրական էղեք,
Ինծեզ ապրեք։
— Հա՛,—ասին,—թաքավո՛ր,
Երեի յերեկ մե քիչ ձիաթոխս ենք խաղցեր ենք,
Նեղացեր ե՞ս մեր վրին։
Ասեց.—Չէ՛, որդի՛, չեմ նեղացեր եմ,—ըսեց,—
Էդպես եմ ուզում։
Ասեց.—Թաքավո՛ր, որ էդպես ա,—ասեց,—
Մեզի տուն ունենք,
Ինչքան քու դյուղըն քյասիբ, չբավոր կա՝ տո՛ւ մեզի,
Մենք կէթանք էդտեղ, տուն կըսարքենք։
Թև.—Շատ լա՛վ։
Թաքավո՛ր բոպնական հայտարարություն գրեց, կպուց պատըն,
Թև՝ «Ինչքան չբավոր, քյասիբ մարդիկ կա,
Հավաքե՛ք, էկնք թաքավորի դիվանխանեն»։
Հավաքվան, գնացին, Թև՝
— Ի՞նչ բան ա, թաքավո՛ր ապրած կենա՛։
Թև.—Էս մարդիկ որտեղ կէթան,
Ձեր բոշեր կըբառնաք,
Էս երկու տղայի խետ կէթաք, կ՚անձնեմ ձեզի։
Էդ մարդիկ յամամաչինվան,
Յիլան, քյասիբ մարդիք յիրանց բոշեր բառցան՝
Ամեն մե եզան վրեն, մե կովի՛ վրեն.
Ու էդ մարդիք յրնգան յառաջն
Ու առան էդ մարդկանց գնացին։

5. Գնացի՜ն, խաւան էդ ջրու վրեն, օր խիմը քցել են
Կայնան, ասեց.
— .Յարգելի ժողովո՛ւրդ, գիտեք ի՞նչ կա,
Մենք էստեղ մեզի պտի բնակարան սարքենք, տուն
սարքենք,
Որ նստինք էստեղ, ապրվինք։
Համաձայնվան.—Դե՛, ի՞նչ անենք։
Ասեց.—Մենք, մե մարդս չի կարող .յիրան տուն սարքել,
Պետք է օբշի էդինք,
.Յօրական մե քանի տուն սարքինք.
Ի՞նչ պատրաստենք, ներ բաժանենք։
Մարդիկ էդան խմփով ու սկսեցին տուն սարքել։
Տուն սարքեցին,
Դե՛, մե քանի, եռհարուն, հարիւր մարդ օր քամին,
Ինչքա՜ն մեծ-մեծ քարեր կըրեբեն դնեն վրը .յիրար.
Դրեցին, սարքեցին, պատրաստեցին,
Վերջնական, էդ մարդիք բախշեցին էդ մարդկանց,
Տներ տվեցին, դնացին նստան։
Թե.—Մենք ինչպե՞ս անենք։
Թաքավոր ասեր էր.
«.Յօրական մեկի տուն կըտանեք էս մարդկից,
Հաց կերցուք էս էրկու տղային, ընտանի չունին»։
Էդ պայման էդ մարդիք կապեցին,
Ու էդ մարդիք իրանց տներ նստան։
Էդ մարդից գութան .յօրական մեկըն կըտանի իրանց տուն,
Հաց կուտեն, կըխմեն,
Գնչեին գութան իրանց տեղ, քնին։
Էն մի օր ջոջ ախպեր մտածեց, ասեց.
—Եհպա՛ր,—ըսեց,—էսպես չէղի,
Մենք,—ըսեց,—տինք մեր ֆասը-ֆըսը, տաղ կէմանք
էտոնց տներ...
Մեկի տուն ա մրոտ,
Մեկի կերակուրն ա անհարմար,
Մեկի .յառիքն ա ցածր,
Մեկի դրընդին մեր գլուխ կառնի...
— Բա ի՞նչ անենք։
Ասեց.—Գնա՛, թաքավորին ասա՛,—պզտիկ ախպեր ասեց,—
Թո՛ մե խատ .յիրա ծառաներից ծառա ատ,

Դա մեզի խացքուխ էնա, ուտենք, ապրինք։
— Շատ լա՛վ։

6. Յառավոդ տղեն չելավ,
Յիրան ձինը խնծավ ու բշեց։
Օր բշեց՝ թաքավորի աչքըն դիպա էդ ճանապարին էր,
Իշկենց տեսավ օր՝ մեկը փոթորկի նման գիկա։
Ասեց.— Ոզի՛ր, սա Մռևրու գալից ա,
Մռևրն ա գըկան,— բսեց,— իրանց ձի բշելն ա։
Քշեց, դնաց չիջավ,
Տեղը գիտեր, տարավ իր ձինը կապեց,
Էկավ թամանդար եղավ թաքավորին, կայնավ։
— Հա՛,— բսեց,— որդի՛, ի՞նչ ա պատահել, Աալիմելի՛ք։
Ասաց.— Թաքավո՛ր ապրած կենա՛, չէ՞ մենք էլ մարդիք ենք,
Անհարմար ա, ամեն օր գնանք դրանց տներ, հաց ուտենք,
Չի կարելի ա.
Մեկի տուն ա մրնա,
Մեկի կերակուլ անհարմար ա, մեղ էլ լայեղ չէ։
Հիմա,— ասեց,— մե հատ քու ծառաներից տո՛ւ,
Տանենք, մեզի խացքուխ էնա,
Ուտենք, ապրինք։
— Ի՞նչ ծառա,— ասեց,— բալա՛,
Իմ ախճիդըս կըտամ քու ախպորս։
Ոզիրը գլոխ կախեց։
— Հա՛, ոզի՛ր, ինչո՞ւ գլոխդ կախեցիր։
Ըսեց.— Թաքավո՛ր ապրա՛ծ,
Քու ախճիդն ա, բայց անհարմար ա։
Թե.— Ո՞նց։
Թե.— Հիմա քու ախճիդ ուտս, էդ տղեն ատի էքա՞։
— Բա իմա՞լ էնիմ։
— Դե՛,— բսաց,— խալդ ունիս,
Հարսանիք էրա՛, բան էրա՛,
Քո՛ մարդիք գան, առնին, էքան։
— Շատ լա՛վ,— ասեց,— էտ էլ լավ ա։
Դե՛, ասեց,— որդի՛, գնա՛,— ասեց,—
Այսի՛նչ օրըն ձեր պատրաստությունն կըտեննաք,
Գուկար ձեր խաբս վերցուք, կառիք, կէքաբ։
Էդ մարդը գառցավ էկավ, ախպորըն պատմեց,

Ախպեր .յամառնալվավ։
.Յետո էդ մարդիկը, ինչ որ օրըն նշանակել էր,
էդ նշանակած օրըն .յկան, իրանց .յուլերըն վերցրին,
Գնացին Թաթավորի դիվանխանեն։
Թաթավոր էնդեղ ուտել-խմել,
Վերջնական՝ հարսանիք, քեֆ, ուրախություն,
Վերցին իրանց խարըն, առան էկան։

7. Մե առժամանակ մնաց, պատիկ ախպեր ասեց.
— Նախա՛ր,—ասեց,—ես կէթամ իմ խոր երկիրը.
Դու մացի էստեղ, ես կէթամ իմ խոր երկիրը։
— Ջանը՛մ,—ասեց,—ախպե՛ր ջան,—ընչի՞ կէթաս.
Դու գիդես, օր մեր խերը գոռոզ մարդ ա,
Էնդրա մե խոսքըն էրկու չէղի,—բասց,—
Անպայման գայիր՝ քեզ կըմորթա։
Ասեց.—.Յուզում ա մորթա, չըմորթա՝ կէթամ։
Ասեց.—Դու էս Թաթավորի ախճիկն ես .յուկն ընձի,
Ես էթամ էմալ Թաթավորի ախճիկ .յուղեմ օր՝
Ես, իմ ընտանիքը քու ընտանիքի ձեռ վրեն ջուր լցա։
Ասաց.—Չէ՛, ախպե՛ր ջան, քեզ խալա՛լ բլի, ես կէթամ։
Ի՛նչ արեց ախպոր խետ, հնար չէղավ,
Ախպեր .յեավ, իրան ձիենը խեծավ,
Շարունակեց, իրան խոր երկիր գնաց։

8. Գնաց, գնաց խառավ խոր երկի՛ր,
Գնաց խոր առուն։
Օր գնաց, մեկը տեսավ տղային, ուրախացավ ահագին։
— Որդի՛,—ասեց,—ինչո՞ւ էկար,
Դու գիտեր, օր ձեր խերըն գոռոզ մարդ ա,
Անպայման,—բսեց,—քե կըմատղա։
— Տա՛,—բսեց,—էկել եմ, մայրի՛կ, էկել եմ։
Հետո գնաց խոր կուշտ։
Նեն էլ տեսավ՝ ուրախացավ.
— Հա՛,—բսեց,—որդի՛, էսքան ժամանակ դո՞ր իր,
.Յրխտամոտ դառի, գնացեր իր.
Դու չըգիտիր օր՝ Ջոջ կոքի մատաղն իր,
Անպայման բդի ձեզ մատղիմ։
— Հայրի՛կ,—ասեց,—որտեղ օր գնացի,—բսեց,—

Ջեչ կուռքն էդավ գունդըմ կրակ, սիրտս վառեց,
Քաշև, առև էկև։
Ասեց.—Ուրբաթ օր կոքի մատաղն խս։
— Լա՛վ,—ասեց,—հայրի՛կ, մատղի՛։

Մնաց, ուրբաթ օրըն,
.Յելավ՝ տղային վերցրեց.
— Դե՛, .յելի՛ գնանք,—ըսեց,—կոքատուն,
Օր թեղի մատղեմ Ջեչ կոքին։
.Յելան գնացին կոքատուն։
— Դր՛,—ասաց,—էսքան ժամանակ գնացեր եք, .յրխատամոռ էղեր եք,
Մև .յիրեք .յանգամ ծունդր դի՛,
Օր արյունդ հալալ ըլնի կոքին։
— Հայրի՛կ,—ասեց.—ձիշտ ա,
էսա յոթ տարի գնացել ենք, .յրխատամոռ էղել ենք,—ըսեց,—
Բայց աչքերուս կոքեր չեն էրևում։
Մև անգամ, էրկու՝ դու ծունդր դի՛,
Գոյնեն աչքերըս լուսովնա,
Կոքեր տենամ,—ասեց,—ծունդր գնամ։
Խերը կզավ գետին մև .յանգամ,
Ծունդր դրեց, .յելավ, ըսեց.
— Հա՛, ո՞նց ա։
Ըսեց.—Մե՛ քիչ արդեն կոքեր կերևա .յաչքերիս,
Մեկ էլ կգի՛։
Մեկ էլ օր կզավ, խոր գուրզը էնտեղ էր,
Տղեն վերցուց, բերեց դրեց բամակ։
— Հա՛,—ըսեց,—ո՞նց ա։
Ըսեց.—Հայրի՛կ, կոքեր էրևում ա, մեկ էլ դի՛։
Մեկ էլ օր կզավ գետին՝
Գուրզ բերեց վըր՛ խոր գաղթին։
Ջըրգեց, խորն ըսպանեց.
Առավ գուրզ պրծավ մըջ կոքերուն.
Ըմա՛լ ջառատե՛ց,
Ջառա-փշուր էրեց,
Կոքեր .յըմեն խանեց, թափեց դուս։
Ժողովուրդն էլ կայնած,

Թե.— Թաքավոր իրան տղային ա կրմատղա,
Մենք կայնինք, քամաշա էնենք, թե իմալ ա կէնա
Հանից կոքեր, քափեց դուրս,
Հոր առից բռնեց, հանից քալեց քուչեն, ըսեց.
— Ժողովո՛րդ,—ըսեց,—էս իմ խե՛ր՝ բսպաներ եմ,
Կոքաղաշտ էր, ես էլ կոքերուն չարտեր եմ.
Հիմա թե կ՝ավատաք իմ աստվա՛ծ,
Կրնասիմ ձեր թաքավոր խնկավարքեն,
Թե չավատաք,—ըսեց,—
Գլխիմ ձեր ամբողջ դյուղըն կիրթեմ, քողեմ կ՝քամ։
— Վա՛յ,—բսին,—մեր թաքավո՛ր ես, մեր տե՛ր ես,
Մենք կավատանք քու աստվածդ։
Էսի նստավ էդտեղ թաքավոր։
Թո՛ էսի էդտեղ թաքավորա՛,
Մենք դառնանք Սանասարին։

Բ

ԱՌՅՈՒՄԱԶԵՎ ՄՀԵՐ

Ց. Սանասարին էղավ մե հատ տղա,
Անուն դրնցին Մեհեր։
Անուն օր դրնցին Մեհեր,
Մեհերն էղավ մե տաս-տասնհինգ տարեկան տղա,
Սկսեց որսի էքալ։
Որսի գնաց մե առժամանակ,
Մի օր որս չբռնկավ տղայի ձեռ.
Օր որս չբռնկավ, բշեց էդ ճանապարհով գնաց,
.Յանգարձ մե հատ ջանավար .յեկավ,
Դուշ էղավ տղին։
Է՛, տղեն չբզիտա, թե ինչ ջանավար ա,
Թուշ էղավ տղին.
Զիու վրեն էնքան կովավ օր՝ չբկարցավ ախտել։
Ետու նրսը բռնեց,
Հըմա՛ ձիուց ուրին քալեց,
Զեռ քալեց էդ ջանավրի մե ջուաբ,
Մե ձեռն էլ քալեց մե ջուաբ,

Քաշեց ճղեց ու թալեց դատի
Ու առանց որսի .յելավ,
Քրանած նստավ ձիու վրեն, էկավ։
Էկավ, ձիեր տարավ կապեց,
Գնաց խոր կուշտ։
Խեր իշկեց տղայի դուխչուն.
— Վա՛յ,—ըսեց,—որդի՛ս, ի՞նչ ա պատահել,—ասեց,—
Էդպես սևացած մտար ներս, ի՞նչ ա եղել աւ
Ասեց.—Հայրի՛կ, .յէսօր գնացի որսի, որս չէղավ,
Մե ջանավար պատահավ,—ասեց,—
Ի՞նչ արի ձիու վրեն՝ չըկարցա ախտել էդ ջանավրին.
Եղո,—ասեց,—օր երբս .յելավ,
.Յիջել եմ ջանավրին, մե ձեռ թալեր եմ մե ջուար,
Մեկն էլ թալեր եմ մե ջուար,
Ճղեր եմ, թալեր եմ դանի,
Իողեր եմ, էդեր եմ։
Ասեց.—Վազի՛ր, ային՛լ,—ասեց,—տղի ասածըն առյուծ ա,
Բայց տղի չափ .յասակ չէ, օր առյուծ ճղա։
.Յառավոտ,—ըսեց,—դորք կապե՛ք,
Գնանք, էդ ջանավար տեսնանք։
Դե՛, առյուծից վախենում են,
Ձենք չունեին, բան չունեին։
.Յերան մե քսան, երեսուն, .յիտսուն ձիավորով էդ մարդիք,
Տղան էլ խետ վերցին, գնացին։
Թե.—Որդի՛, գիտե՞ս տեղ։
— Հա՛, հայրի՛կ, գիտեմ։
Գնացին, տղեն .յընդեղ .յասիչ ձիեր բշա,
Տրանք երգուղով են գնում,
Թե տղի ասածըն առյուծ չըլնի,
.Յանդարծ առյուծ .յըլնի, մեզ վնաս տա։
Տղեն բշեց, գնաց կայնավ վրը ջանդըղին։
Գնաց կայնավ վրը ջանդըղին.
Խեր, ժողովուրդ գնացին տեսան օր՝ առյուծ աւ
Խերն .յիջավ, տղի .յերեսները պաքեց, ասեց.
— Սրանից հետև իմ տղի անուն կըդնեմ Առյուծասեև Մհեր։
Տղի անունը մեզ Առյուծասեև Մհե՛ր։

10. Քաշեց մէ ժամանակ, հերը մահացաւ։
Խեր մահացաւ, բերին Մհերին օծին, դրին թաքաւէր։
Օր օծին դրին թաքաւէր,
էդտեղ մէ հատ Աւաջա Տաղ կար
Տղեն գնաց Աւաջա Տաղի բոլոր տվնց բադան քաշել,
Օր ամբողջ որսը լցի մեջ,
Աշուն էքա, որս էնա։
Ետա, մի հատ Ճապաղջուր կար,
էլ-ադասի կար, գուբեր էդտեղ էլը կըգաներ,
էդտեղ քոդա կըտեր էդ մարդին։
Մէ առժամանակ գարուն կէքա գարդըխներ կըբացա,
Աշուն կէքա գարդըխներ կըգարգա,
Մհերըն՝ Առյուծաձև Մհեր, կըմտնի միջի որսըն կէնա,
Դուբա, կըտա.
— Սասունցի՛ք,—դյուղի անուն դրած Սասուն,—
— Սասունցի՛ք,—կասա,—դնացե՛ք,
Ճերմակ օշխար, կարմիր մաքալ՝ հազարն էդ մէ կապիկ,
Բերե՛ք, լցե՛ք Սասուն, կերե՛ք,
Դբվա էլե՛ք Առյուծաձև Մհերին։
Կէքան, չըվներ կըշըլդեն սասունցիք,
Կէքան, կըբերեն, կուտեն, կըխմեն,
Դբվա կէնեն Մհերին։
էտ Ճապաղջրու էլ-ադասին որ գուբա,
Տարին լոթ հազար մանեթ կուտա,
Նոր էդտեղ էլը կըգարգա,
Մինչև ժամանակին քոդա կէքա։

էդ կարըն օր դրեց Սասունի մեջ,
Ետա Մհերըն գնաց Մսըր, էնտեղ ամուսնացավ։
Ամուսնացավ՝ մէ հատ տղա էգավ նրան,
Անուն դրին Մսրա Մելիք։
Ու էտ դառցավ էկավ տուն։

11. էտ ժամանակ Մհերին բդի կարքեն,
Թե.—Որտե՞ղ մի լավ ախճիդ կա, ուզենք Մհերին։
Ասին.—Մանճկերտ մէ հատ ախճիդ կա,
Նրանից գնղեցիկ ախճիդ չկա՝ Թաաթորոսի ախճիդ։
.Ցկան ու գնացին էդ ախճդան .յուղելու։

Օր գնացին Մանբզկերտ,
Թևաթորոսի տուն խարցուց, ըսևց.
— Թևաթորոս տո՞ւն ա՝
Ասին.—Չէ՛, Թևաթորոս .յառավոտ .կելավ վլացվավ,
զավոբրիկ էրևց,
Գնաց խարտըն՝ բերդին խիմ քալելու։
Նորից խևծավ, գնաց խարա։
Գնաց խարա, հարցուց.
— Թևաթորոս էտե՞ղ ա։
Ասին.—Հա՛, էտեղ էր,
էկավ բերդի խիմ քցևց, գնաց Դիաբէքըր։
Նորից խևծավ, գնաց Դիարբէքըր։
Դիարբէքըր խարցուց.
— Թևաթորոս էտե՞ղ ա։
Ասին.—Այո՛, էտեղ էկավ, բերդի խիմ քալևց,
Գնաց մե .յուրիշ բաղաբ։
Գնաց էտ բաղաբ, խարցուց, ասաց.
— Թևաթորոս էկե՞լ ա էտեղ։
Ասին.—Այո՛, էկավ էտեղ, բերդի խիմ քալևց, գնաց տուն։
Պատռևց, էկավ տուն։
Բայց Մհերին ուներ Շաշփառ ձի էտ վախտ.
Շաշփառ ձինը խևծեր էր։
Խարցուց, էկավ տունը գտավ։
Էկան, տուն գտան, .յիջան,
Դե՛, հարսաիրևց էտ մարդկանց,
Խոնախ վերցրևց, ճանչրևներ Մհերին.
— Դե՛, ի՞նչ ա, Մհե՛ր ջան։
Ասևց.—Էկեր եմ քո ախճիզ առնելու՝ Արմազան։
Ու էդտեղից Արմազան .յուզեցին։
Քյաոի Թորոսին զրին խետ չեզ,
Քյաոի Թորոս էկավ իր քրոջ ախճդա խետ չեզ։
Էկավ, եզո էզավ իրեք տղա։
Քյաոի Թորոս մնաց էդտեղ, հա՛։
Մհերին էզավ իրեք տղա.
Էզավ Յոան Վերան՝ մեծ տղեն,
Էզավ Փորրիկ Ճնջուղ՝ միջնակ տղեն,
Էզավ Դավիթ՝ փոքր տղեն։

Մհեր խիվընդցավ։
խիվընդցավ, խանչից Քեռի Բարսին։
— Քեռի Բարի՛ս,— ասից,— ես կըմահանամ,
Իմ ջիւ տղեն,— բանց,— Մարըն ա,
Անուն Մարա Մհլիք ա։
Կըտանես իմ էքըմներ, կիտաս, էնի պահա,
Դու չես կարող պահել։
Մհերը մահացավ, օղորմի՛ իրան,
Սասումըն յոթ տարի սուգ մտան։
Ձ՚ վար էրին, ա՚ ցանք էրին Մհերի .յետև,
Ոչ մի աշխատանք չարեցին։

12. .Յելավ.

— Դե՛,— ասից,— կնի՛կ, մե բանի խաս խաց Թխա՛,
.Յելնիմ իմ էքըմներ տանիմ Մարը, տամ պահել։
.Յելավ, խաց Թխից։
.Յելավ, տղաներին էրեց .յառնչն ու դնաց։
Տարա՛վ, տարավ խառուց Մարը։
Տարավ Մարը, դնաց Մարա Մհլիքի տուն։
— Բարև՛,— բանց,— Մարա Մհլի՛ք։
— Վա՛յ,— բանց,— խազար բարի, Քեռի Բարի՛ս։
Ասաց.— Մհերըն մահացավ,
Հիմա,— բանց,— էքըմներ ուզարիկը ա բու մոտ,
Որ դու պաշտպանես։
Մարա Մհլիք մտածելուց ետո.
— Կըպաշտպանեմ,— բանց,— Քեռի Բարի՛ս։
էրկու բան կա, կուզեմ,
Եթե ավի՛ր՝ կըպաշտպանեմ յոթը տարի,
Եթե չըտվիր՝ իմալ բերեր ես, իմալ ա՛ռ, գնա՛։
Ըսից.— Ի՞նչ ա։
Ասից.— Ալաջա Տաղի բաղան, ծաղաղջուրի բողեն.
Կըտաս՝ յոթ տարի կըպահեմ,
Չի տաս՝ իմալ բերեր ես, հըմալ ա՛ռ, գնա՛։
Քեռի Բարին մտածելուց ետո
— Ջանի՛մ,— ասից,— Ալաջա Տաղի բաղան սասունցիք
բերեն, կուտեն, քնձի ի՛նչ,
Ծաղաղջրի բողեն՝ նուշնպես,
Հաղըր տամ, իմ էքըմներ պահի, էլի։

Ասեց.—Տվի՛։
Պայմանադիր էրնջին.
— Յոթ տարի,—ըսեց,—կրպախեմ,
Յոթ տարի հաո, գութաս, տանիս։
Էդ մարդըն յոթ տարի տղաներ պահեց,
Մնծացան, էղան ահագին տղա։

13. Յոթ տարի օր քըմավ,
Է՛, Սասուն սուգ ա մտե՛,
Յըմեն սոված են, սովածությունից կըմահանան։
Յիլան դյուղի մեծամեծ մարդիք, իշխաններ,
Տեբաներ վերցին, գե.
— Էվանը Քևռի Թորոսին սպից խանենք,
Դոյնե քուլ աս, մեր աշխատանը կատարենք,
Դե՛, սուվ յընդամ մեզի։
Քևռի Թորոսին ուներ իրեր տգա՝
Ճոո Մանուկ, Հոո Մանուկ, Բոնի Կատիկ։
Հա՛, յիլան գնացին,
Գնացին Քևռի Թորոսի տուն,
Բարև տվին,
Քևռի Թորոս բարև առավ,
Նստան. տեբաերըն խորից ըսեց,
Բաժակ լցին, դրին Քևռի Թորոսի յառաջ։
Օր դրին Քևռի Թորոսի յառաջ,
Էքըմներ յընդամ մտեն.
Շուռ դրեց վըր յանկըշին ու հիշկա մըչ քասին։
Մեկըն իրավունք չունի,
Թե «Քևռի Թորո՛ս, վերցու բաժակ, խմե՛»։
Ճոո Մանուկ չոչ տղեն էր.
— Տո՛, Քևռի Թորո՛ս,—ըսեց,—
Դու գիտես օր, յոթ տարի Սասունը սուգ պահեր է,
Ժողովուրդ,—ըսեց,—բոլոր սովից կըմըհանան,
Յոթ տարի,—ըսեց,—մարդիք սուգ պահեն,
Իրանց միջոցներով ապրին,
Յաղվագուն բան է,—ըսեց։
Ինչ է,—ըսեց,—ձեռըդ դրեր ես վըր յերեսիդ, կիշկես մըչ քասիդ։

Ինչ կա մըչ քասին։

— Տո՛, շան որդի,—բսաց,—Պլեհկերի տղա՛,
.Յելա՝ կըտփեմ պատ,
Տաշտաքերով բերեն՝ չը պրծիս,—բսաց.—
Թող ամեն գնան իրանց աշխատանքին։
.Յելան ամեն մարդ,
էլ ոչ ասել, ոչ բան,
Հըմա՛ Քողին ու գնացին.
Գնացին ամեն ուր աշխատանքին։
Ըսեց.—Կնի՛կ, խաց Քխա՛, էհամ էքըմնեռուն։
Կնիկն .յելավ խաց Քխեց,
.Յելավ, Քալեց խուրջին իր Քևվի վրեն ու գնաց։

Կ

Դ Ա Վ Ի Թ

14. Գնա՛ց, գնաց խառավ Մսը՛ր,
Գնաց Մսրա Մելիքի տուն,
Տղաներ բեղրցած, էշած ահագին մարդ։
Բարև տվեց, բարև առավ։
— Հա՛,—ասեց,—Մսրա Մելի՛ք,—իմա՛լ են տղաներ։
Ըսեց.—Լավ բեղրցեր են, Քևռի Թորո՛ս,
.Յըմմեն աշխատանքն էլ կկենեն։
— Դե՛, լավ,—բսեց,—.յառավոտ առնիմ, էհամ։
Շատ լավ ես էրե։
— Լա՛վ, .յառավոտ ա՛ռ, գնա՛։
.Յելավ .յառավոտ.
— Դե՛, .յելե՛ք էքանք։
.Յելավ Մսրա Մելիք, .յիրան Քուրը կապեց վրեն,
Քևռի Թորոսի խետ, տղաների խետ վերցուց էկավ,
Գյուղից .յելավ գուրս։
— Քևռի Թորո՛ս,—բսեց,—կայնի՛։
— Ի՞նչ ա,—ասեց,—Մսրա Մելի՛ք։
Ըսեց.—Դու գնա՛ էն կողմը կայնի,
Տղաներ Քրե էսեղ կայնին,
Ես մեջտեղ կայնիմ.
Իմ Քուր բաշեմ կայնիմ.

Քու տղաներուն խանչա՛, դան, իմ Քրի տկով .յընցին,
Ա՛ռ, դնա՛։
Ըսեց.—Շա՛տ լավ։
.Յելավ էդ մարդըն՝ Քեռի Թորոս,
Գնաց էն կողմի վրեն կայնավ,
Մարա Մելիք կայնավ էդ կողմ,
Մարա Մելիք էկավ, կայնավ մեջտեղ։
Տղաներուն ըսեց.
— Յոա՛ն վեր ջան,—ըսեց,—
— Արի՛,—ըսեց,—քու ջիջ ախպոր Քրի տրկով .յընցի,
Քեզի տանեմ էնեմ Քաբավնր։
Յոան վերն հրմա՛ պլոխ կախեց,
Էկավ Քրի տրկով խժալով .յընցա՛վ,
Գնաց կայնավ Քեռի Թորոսի կուշտ։
Ըսաց.—Փոքրիկ ձնշո՛ւդ,
Տեսա՞ր,—ըսեց,—քու ախպեր ինչբան խունար էր,
Դուն էլ,—ըսեց,—պլոխդ կախ արա՛,
Մարա Մելիքի Քրի տրկով .յընցի,
Քեզ էլ տանեմ կէնեմ հորթարած։
էն էլ պլոխ կախեց,
Էկավ զրմփըռտալն, գնաց կայնավ Քեռի Թորոսի կողը։
Ըսեց.—Դավի՛թ ջան,
Քու էրկու ախպեր ի՛մալ խելոք ին,—ըսեց,—
Դուն էլ քու պլոխ կախա՛,
Արի՛, քու ջիջ ախպոր Քրի տրկով .յընցի՝ Մարա Մելիքի,
Քեզ էլ տանիմ էնիմ նախրներդ։
— Ըհա՛,—ըսեց,—Քեռի Թորո՛ս,—
Ա՛ռ ու գնին, Տ՛ր կենդանին,
Խաղար կաներ էդիմ,
Մե կաներ Մարա Մելիքի Քրի Քրկով չընցիմ։
Ասեց.—Ինչո՞ւ, բալա՛ ջան, քու քեզի չը խփա,
Արի՛ անցի, էլի։
Ասեց.—Էլի՛ կասեմ.
Հազար կաներ էդիմ,
Մե կաներ Մարա Մելիքի Քրի տկով չըմ .յընցի։
Ասեց.—Դավի՛թ ջան, արի՛ անցի, գնա՛, էլի,
Խելոքութիւն էրա։
Ասեց.—Էլի կասեմ.

Ամ՛ էն ու դինին, Տէ՛ր կենդանին,
Հազար կուր էղի,
Մէ կուր բդի Մարա Մելիքի բրի տրկով չընգի։
Քեռի Թորնա նրատուավ.
Էկավ Դավիթի մնից բռնէց, թալէց.
Բռա՛վ բրի վրայով,
Դնաց .յամարա թէ մէ .յիտցուն մէտր էնտեղ,
Ոտն առավ մէ հատ քարի,
Քարն առավ մէ քարի,
Իրէք ժամ մուխ փաթնից էաննց։
Մարա Մելիք խառավ Դավիթի .յերեաներ պարնց,
Ընէց.—Դնա՛, Դավի՛թ,
Մէ շատ խասի ընձի՝ քեզնից ա,
Չըխասի՝ քեզնից ա.
Դնա՛, կաթըդ խալա՛լ էղնի։
Մարա Մելիք դարձն առավ էդտե՛ղ։

15. *Էկան։*

Էկան գյուղ, ժողովուրդ բոման, ուրախըցան, վերջնական։
Դե՛, բերնց գործի դրնց.
Յոան Վերոյին դրնց թաքավէր,
Փաքրիկ ճնշուղին դրնց հորթաբած,
Դավիթին էրնց նախրիդ։
Դավիթին օր էրնց նախրիդ,
Դավիթ փետ կըղնա, կոպալ,
Մէ ջիշ կոպալ ա սարբել,
Կոպալ կըղնա վըր Քեվին,
Սապախտան նախիր կըբոմա, կիտա .յառնչ, կըտանա,
Ակռսին կըդարձու բերա։
Բոորանց ըընգի գյուղ.
Կնկտիք կանիծեն.
— Վա՛յ, Դավի՛թ, քու Քեվը Քաւի՛ր,
Դու էգ նիր տարար նախիր,
.Յո՞րի դարցուցիր բերիր,
Մեր հորթեր ծծին,
Մեր կովեր անկըթել...
Էս ի՞նչ ա կէնես մեր գլոխ։
Քեռի Թորնա.—Տո՛, Դավի՛թ չան,—կըսա,—

Լուսան փշում՝ ետ բե՛, էլի՛։
— Ետ՛, Քևռի Թորո՛ս, լուսան ետ կըբերեմ։
Կը տանա,
Էտ օրըն չուր գիշերվա մեկին, էրկրսին նոր կըբերա։
Բոտրոց գ՝յընգի գեղ,
Մեկի կով կորի,
Մեկի տավար կորի.
— Ա՛յ մարդ,—կըսեն,—Դավիթի ծառիյան բանե,
Էս ի՞նչ ա կէնա մեր գլոխ։
— Ա՛խր,—կըսա,—Դավի՛թ ջան,—Քևռի Թորո՛ս,—
Ախր արևով բե՛։
— Հա՛, լուսան արևով կըբերեմ։
Լուսան ժամը չորսին կըբերե։

Էն մի օր Դավիթ .յելավ,
Տավար տվեց .յառնջ, գնաց սարըն,
Էննոց նատեր էր, տավար կարծեր.
Մեկ էլ տեսավ էն յանեն մեկըն.—Օհո՛։
— Վա՛յ, էն քյոփօղլին,—ըսեց,—ո՞րն ա։
Ըսեց.—Դու ո՞րն ես։
Ըսավ.—Ես Զուլաքարա* նախրյարդն եմ։
Դավի՛թ ջան,—ըսաց,—արի, խաոնենք .յիրար նախիր, արծրցնենք։

Ըսեց.—Արի՛։
Էկան էզան ախպեր, նախիր խաոնին .յիրար։
Էդ մարդըն նախրի ժամանակ գիտեր,
Էդ Զուլաքարա նախրյարդ.
.Յիրիզման, օրինակ, ժամու խընգին կըլներ,
Դավիթի նախիր կըջոկեր, կիտեր Դավիթին.
Ուր նախիրն էլ կաոներ, կէթեր ուր գեղ։
Էտ օրըն ժամանակին նախիր բերեց.
— Վա՛յ,—ըսին,—Դավի՛թ ջան, աստված քու արեվ պահա՛,
Էսօր լավ ժամանակին բերա,
Տավարն էլ լավ կերած։
Մի օր, էրկօր, իրեք օր,
Դավիթն արդեն էդ վախտ կըբերա։

* Վերջացրը նկատի ունի Մարտունու շրջանի իրենց հարևան Զուլաքար գյուղը։ Մաս. բանաճավաճ։

16. Քեռի Թորոս ըսեց.
— Դավիթ լավ ա,—ըսեց,—արդեն յընդհատեց.—
Ըսեց,—կայնի, էքսամ տենամ՝
Փոքրիկ ճնշուղ յորքերուն ի՞նչ ա կէնա։
Յետավ յիրիգվա գնաց
Դնաց գյուղի վերև՝ Փոքրիկ ճնշուղի յառիչ, յորքարած ա։
Իշկնց տեսավ օր՝
Ի՛շքան ջուն, ջանավար, նապաստակ, աղվես, գել
Խառնեն իրա, գուբա։
Օր էկան խառան գյուղի մեջ, շներ խաչացին.
Շներ լսան, ամեզ ուրան ջանավրներ, աղվեսներ շիդգան,
Նապաստակներ փախան դաշտ։
Յընդավ.—Քե՛չ վեյուր, քե՛չ վեյուր, քե՛չ վեյուր,—
Գը լարա, օր քերա։
Քեռի Թորոս.—Ա՛յ մարդ,—ըսեց,—
Հըլը էնի գիշեր կըքերեր՝ տավար կըքերեր,
էսի,—ըսեց,—էս ջանավրներն դո՞ր ա կըքերա։
Էկավ խառավ.
— Տո՛ Փոքրիկ ճնշուղ ջան,—ըսեց,—իմա՞լ ես։
— Տո՛,—ըսեց,—լա՛վ եմ, Քեռի Թորո՛ս, շատ լա՛վ եմ,
Էս բալ ուլեր լապաթ չիտան։
Ըսեց.—Ա՛խր էտոնք ի՞նչ են.
էտոնք,—ըսեց,—չոլի ջանավար են,
Նապաստակ են, աղվես են,—ըսեց,—գայլ են.
Դու բոնոք ընչի՞ կըքերես.
էսի օր քու յառիչն է, էս է հորթիկ։
— Տո՛, Քեռի Թորո՛ս,—կըսա,—
էտոնք ընձի նեղություն կիտան,
էտոնք խեղճ են։
— Տո՛,—կըսե,—ընդոնք մի՛ բե։
— Լա՛վ։
էդ էլ յըմլա։

17. էն մե օր Դավիթը նախիր տարավ սար,
Չոլաքարա նախարդն էլ էկավ խառավ.
— Դավի՛թ ջան,—ըսեց,—դիտե՞ս ինչ կա.—
Ըսեց,—առաման ժամ ա, մեր գյուղըն պատարագ ա էրած,
էքսամ, խըրխա բերեմ, ուտենք։

Ըսեց,—Դու ինչքա՞ն էիաս բերես,
Որ ես ուտեմ, դուն էլ ուտես։
Դու մուղաթ կո՛ց,—ըսեց,—ես էիամ։
— Դավի՛թ,—ըսեց,—իմ մուղաթ կենելուն՝ մուղաթ կենամ,
Բայց,—ըսեց,—էստեղ յոթ խատ դեվ ա քնակած.
Էս դևվեր,—ըսեց,—գուբան իմ նախրից տասմար կըջոկեն, տաննեն։
.Յերկուն ես տրանց պատասխան իմա՞լ տամ։
Ըսաց.—Ընգնեք չիգան,
Իմ անուն լսած, իմա՞լ գուբան։
Է՛, Դավիթին ի՞նչ կէնա,
Մի կոպլի բաննդ կէնա։
.Յելավ, կոպալ դրեց վըր թևիին ու գնաց։

Էն վախտ գնաց օր՝
Ծըրիսեն բերած, դրած ժամու դուռ՝ դոպկըներով.
Ու մի հատ պատավ կըխատնա։
Կըխատնա, օր ժամուց, պատարագից .յելնին, գան,
Ծըրիսեն լցեն, ուտեն։
Գնաց, նստավ էտ նանեի կշտի խետ, ըսեց.
— Նանե՛,—ըսեց,—փշում՝ խըրիսա լցես, ուտենք։
Ըսեց.—Խա՛, մեռնի՛մ քեզի,—ըսեց,—
Մկա պատարագից .յելնին, լցեմ կե, գնա։
— Տո՛, նանե՛,—ըսեց,—փշում՝ լից ուտեմ, էլի՛։
Ըսաց.—.Յո՞ւսա ես։
Ըսեց.—Սասունցի։
— Օ՛յ,—ըսեց,—Սասման ծոերուց ի՞ս...
Կոպալ տվեց նանեի կոզին, նաննեն .յընգավ,
Հըմա՛ խայիշ խարցընց, բալեց դոպկի կանդրներ.
Բալեց շլակն ու կոպլի վրեն ու գնաց։
Էտի օր ծոզ ըզտեղ էնա,
Մենք խարար տանք դևվերուց։

Դևվեր արդեն .յիմացել են, օր Դավիթ գնացեր,
Գուբան Զոլաթաթա նախրից յոթ խատ անծին էրինջ կըջոկեն
Ու կառնին կէթան։
Տաննեն ու կըմորթեն։
Գնաց, Դավիթ առավ գնաց.

Իշկաց տեսավ՝ էդ մարդ նախ՛ք-նախ՛ք նստեր
Ըսեց.—Տնաշէ՛ն,—ըսեց,—.յո՞նչ ես նիստ,
Մե դոպիկ բերեր եմ, հա՛ կե, էլի։
— Տո՛,—ըսեց,—ի՞նչ ուտեմ,—ըսեց,—
Գնովը,—ըսեց,—էկան,
Իմ տավրից յոթ խաս տավար ջոկած, տարած.
.Յիրգուն էքամ ի՞նչ պատահան տամ։
Ըսեց.—Շո՞ւտ ա տարած։
Ըսեց.—Մե քիչ .յառջ։
— Դե՛,—ըսեց,—արի՛, խրթխան կե՛.
Մկա կէքամ, բերեմ։
Էկավ, խրթխեն կերավ՝ ալնի, անեղ։
— Տնաշէն,—ըսեց,—փշում՝ աղ բերիր, փշում՝ եղ բերիր։
— Տո՛, անաշէ՛ն, կե՛,
.Յիրգուն գնա քու տուն,
Փշում աղ, փշում եղ թալ, բը՛խ էքա, խառվի .յիրար։
Էդ Զոլաթարա նախրէդրդ չկերավ։
Քաշեց կոպլի տակ,
Խրթխեն ամբողջ կերավ, դոպիկ գլորեց,
Գլոր-գընդի գնաց, .յընկավ, կոտրավ։
.Յեկավ, ըսաց.—Դէրվի՞ տարան։
Ըսաց.—Դես տարան։
Կոպալ դրրից վրր թեվին ու գնաց։

18. Գնա՛ց, .յիջավ ձորու մեջ էր՝ Աշմի ձո՞ր*։
.Յիջավ էդ ձորու մեջ,
Տեսավ օր՝ դեվեր յոթ կանթեն խաղան,
Էդ յոթ տավար մորթած, ջանդրդներ լցած մեջրն, էփեն.
Կաշիք փռած դուրս։
Հետու կայնավ, ըսեց.
— Ըսաննք յոթ խոկի են.
Էս խաղան անջախ յոթով վերցուն, դնան դետին,
Վերցուն, դնան վրր կրակին։

* Վիպասացը մեկ առած է Աշմի ձոր, մեկ՝ Խաշմի ձոր։ Հարցումներից պարզվեց, որ դա վիպասացի գյուղի (Աստղաձոր) մոտակայքում գտնվող ձորի անունն է, որ կոչվում է Խաշի կամ Խաշմի ձոր։ Նույն կերպ վեպ է մտել նաև Աստղաձորին հարևան Զոլաթար գյուղի անունը, այսինքն՝ կատարվել է վիպական փոյրերի պարզ տեպայնացում։ Տես. բանահավաքի։

Թև ևս պացի,—ըսաց,—վերցի մինակ, դրի դևաին,
Վերցի, դրի վրը կրակին՝
Էսոնց խետ կռիվ կչնեմ.
Թև չը կարցա՝ թողեմ կէթամ,
Կըսեմ՝ չըտեսեր եմ, ի՞նչ կէնա ընձի։
Տրանք մտած .յէրի մեջ՝ դևվեր։
Գնաց .յէրի դռնով .յընցավ,
Հըմա՛ խաստավ խաղան կրակի վրավէն վերցուց, դրեց դևաին
Ու վերցուց, դրեց վրը կրակին,
Կայնավ .յէրի դուռ։
Ըսաց.—.Յրմնուն կրապանեմ։
Էգ տեսան՝ շուրջմ .յընցավ։
Ըսաց.—.Յեվե՛ր, տեսեր էն ի՞նչ էր,
Էրեք շիշլիկ, բերեր ուտենք, չուր միան էփի։
.Յեվնողին՝ մե կոպալ դանեց։
Օր կոպալ դանեց՝ էլ ձեն չելավ։
Էն մեկ բսաց.—Ա՛յ մարդ,—բսեց,—էտի խո չկերա՞վ,
.Յեվե՛ր, բերե՛ր, մե քիչ էլ մենք ուտենք։
Էնի .յելավ՝ մե կոպալ էլ բնդրան։
Յոթն էլ .յելան, յոթ կոպալ դանեց՝
Յոթն էլ սատկան։
Մտավ ներս, տեսավ օր՝
Ի՛նչ խրզինա, ի՛նչ հարստություն, ի՛նչեր կա, ձիանր կա։
Ձիանքն էլ բռնեց.
Որին ձեռ կըզարդա քամակ՝ պորտեր կառնին դևաին։
Մե հատ քուռակ կար.
Լարա՛ց, լարա՛ց, լարա՛ց, լարա՛ց,
ԵՒսըդցուց մե քունջ, բռնեց,
Իմավ օր ձեռ դանեց քամակ՝
Ձեռ տփեց .յառիք։
— Ա՛խ,—ըսեց,—Քեռի Թորոս խուզի էս Քուռիկ Ջալաբից տա բնձի։
Ու .յելավ .յէրից։

19. .Յելավ, միսըն կուշտ կերավ, մսին թափեց,
Կաշիք .յըմեն ժողվեց, լցեց խաղնի մեջ,
Թալեց կոպլի վրեն ու էկավ։

Էլ չէկավ նախրորդու կուշտ,
Էկավ Զոլաքար, նախրին խաբար չէր։
Էկավ Զոլաքար, կայնավ Քոփ դարին, բոռաց.
— Զոլաքարցի՛ք,—բանց,—արե՛ք,
Ես,—բանց,—էկա բառեղ աաման ժամ խրբխաա ուտելու,
Ձուր դացեր եմ, դևվեր ձեր նախրից յոթ հատ տավար չոկած տարած։
Արե՛ք, ձեր կաշիք ճանչըցեք, տարե՛ք։
Մի հատ էլ լավ կաշի չոկնց,
Դրանց տակն ու նատավ վրևն։
Էկան, .յամեզ մարդ էկավ, .յուրանց կաշիք ճանչըցան։
Ըանց.—Էսի կաշի՞ն ա։
— Ա՛ա։
— Դե՛,—բանց,—կըտանես,
Ժամանակին իմ ախպոր .յախ չըկտրես.
Օր կտրես՝ զուբամ քե կոպլի մե դրրբ կէնեմ։
Ըանց.—Չէ՛, Դավի՛թ ջան, .յորի՞ կտրենք։
Տվե՛ց, պրծավ։
Էն մե կաշին էլ՝ տերբն էկավ, բանց.
— Էտ էլ իմ կաշին ա։
Ըանց.—Էտա խազան կըտանե՞ս քու կաշու տեղ։
Ըանց.—.Յորի՞ չըտանեմ, Դավի՛թ ջան։
Էտ մարդըն էտոնց Քամբխաց,
Օր իր ախպոր հախը չըկարե՞ն,
Ու վեր կացավ, էկավ։
Օր էկավ, գյուղի յանից ա կէքա,
Էտ նախրորդ իշկնց.—Ա՛յ մարդ,—բանց,—
Շան որդին,—բանց,—էգբան մե դոզիկ կերավ, չըկշտացավ,
Նորից գնացե խրբխաա ուտելու։
Իմ տավար դևվեր տարան, իմա՞լ էնեմ։
Էկավ խաասավ.—Բարե՛, ախպե՛ր։
Նիաթ-նիաթ բանց.—Բարո՛վ։
Ըանց.—.Յորի՞ .յըմալ նիաթ բարև առար,
Ձուր դացի՝ դևվեր քու տավար մորթած ին,—բանց,—
Գացեր եմ կաշիք վերցեր եմ, դրեր եմ խազան,
Տարեր եմ, տերբըտեր էրեր եմ։
Ասնց.—Քամբխեր եմ տիրվըդին,
Եթե քու .յախ կտրած, չէդեր ես, ընձի բսեր ես,

Քեզի մեհ կոպլի բանդ կէնեմ.
Անպայման գուբաս կրանաւ
Բոլորին քամբախը եմ,
Օր յախեր կարին՝ գուբաս ընձի կրանաւ
Մե,—բսաց,—հատ էլ կաշի ավեր եմ իմ բուրջ*,
Օր դու էքաս խաբես,—բսեց,—
Խազան էլ ավեր եմ տիրոջ՝ կաշու տեղ։
Բսեց.—լա՛վ ես էրե, Դավի՛թ ջան։
Բսեց.—.Յելի՛, նախիր ջոկաւ։
Բսեց.—Դավի՛թ ջան,—բսեց.—հըլը ժամու էրկուան ա, ա՛խր,
Մե քիչ մնաւ՝ նէր։
— Չէ՛,—բսեց,—.յելի՛, ջոկաւ
Է՛, ի՞նչ կէնաւ Դավիթին։
.Յերսոտավ վրեն.
— Ջանը՛մ,—բսեց,—դևվեր խաւուցի,
Կայնի, .յելնիմ ջոկեմ, թո՛ առնի էքաւ։

.Յելավ նախիր ջոկեց, տվեց Դավիթի .յառէջ,
Դավիթ քշեց, բերեց ժամը էրկրսին, լցեց գիզ։
Ռոբբռոց .յրնգավ գեղ,
Կնկախիք.—վա՛յ, Դավիթի ծաւիթեն բռնեն, աստվա՛ծ,
Քու արև՛ մեռնի, Դավի՛թ,
Էտ ի՞նչ էրիր մեր գլոխ։
Քեռի Թորոս էկավ.
— Դավի՛թ ջան,—բսեց.—յորի՞ բամալ շուտ բերիր,
Ըխը՛ր, .յերեկվա վախտ...
— Ձեն մ՛էնա՛,—բսեց,—Քեռի Թորոս, խազինա եմ դառ։
— Ի՞նչ խազինա։
Բսեց.—Խազինա եմ դառ։
Բսեց.—էախ վարթևա՞րն ա։
— Խա՛։
Բսեց.—Ես գարնանն պախի՞ր եմ չուրի վարթևերին.
Մե խատ էլ բռնա՛, թըխ պախա չուր աշուն,—բսեց.—
.Յախըն կիսենք։
— Շա՛տ լավ։
.Յելան էդ մարդիք գնացին,
Մե հատ նախրորդ բռնեցին,

* Նկատի ունի նախրորդի գնորը։ Տես. բանահավաքի։

Բևրին, նախիր ավեցին .յառնջ։
— Դե՛,—ըսեց,—.յելի՛ էրթանք, խաղինեն բերինք։

20. .Յևլան .լինը ու Դավիթ,
Դավիթըն գնվի .յանզըջներ բրդև, լցև ջեր,
.Յևլան, գնացին, գնացին հաշտի ձորու մեջ.
Գնացին, գնացին, գնացին,
Քևռի Բորյա իշկևց օր՝
Դևվեր արևու դեմ ուռա՜ծ, էզած մև նբա.
Թառցավ, նատոր կրփախ։
Դավիթ շիտկավ օր՝ Քևռի Բորյա կրփախ։
— Ա՛, Քևռի Բորյո՛ս, որ՞ր ա կրփախա։
— Տո՛,—ըսաց,—.յևլան մեր..
— Տո՛, Քևռի Բորյո՛ս,—ըսաց,—էստինց խատուկ վախտն ես
ըսաստ էկի,
Որ սաղ վախտն իր՝ քաքիր ֆումբան։
Խանեց անդրջներ, լցնց Քևռի Բորոսի .յառնջ։
Որ անդրջներ տևսավ, խաստավ Դավիթի .յերևևներ պարնց։
— Քևռի Բորյա ջա՛ն,—ըսաց,—
էֆանք, խաղինա եմ գան։
Դացին մտան։
Դե՛, .յարամի՛ր ֆալանություն էրած, բևրած, լցած գատի։
Քևռի Բորյան էլ ուժնզ մարդ էր,
Բևրնց ու սկսնց բառնալ ձիանքներուն։
— Քևռի Բորյո՛ս, ինա Քուռիզ Ջալաբին տա՛ս ընձի։
Ըսնց.—Խա՛, Դավի՛թ ջան, բառնանք ձիան։
— Քևռի Բորյո՛ս, Քուռիզ Ջալաբին տո՛ւ ընձի, էլի՛։
Ըսնց.—Խա՛, Դավի՛թ ջան, կիտամ բև։
— Քևռի Բորյո՛ս,—ըսնց,—Քուռիզ Ջալաբին տո՛ւ։
Ըսնց.—Տվնցի՛ քնզի։
Օր ըսավ՝ ավեցի քնզի,
Հըմա խաստավ Քուռիզ Ջալաբիզ բռննց,
Խայիշ արցըզնց, զրնց վիզ, ըսնց.
— Խա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Քևռի Բորյո՛ս, ես գացի։
Քևռի Բորյա էլ ուժնզ մարդ էր,
Բևրնց էտինց ձիանք, բառցավ էդ խաղինեն,
Բևրնց, լցնց իրանց խաղինի վրեն, սկսին ուտել։

21. Դավիթ էկավ գյուղ,
Մե հատ անթըրից էրևց նետ ու անեղ,
Մե հատ ցուլուլ սուրից ուրին բազա
Ու սկսեց որսի էթալ։
Մե հատ Պառավ, էդ գյուղացի՝ սասունցի,
Ցոթ նաֆար ա, յոթ կորի կորեկ ա ցանել։
Դավիթըն կէթա էտ կորեկի մեջ,
Կորեկըն .յելե, էզև խասնելու.
Կէթա կորեկի մեջ «քը՛շտ, քը՛շտ, քը՛շտ», կէնա,
Էներ կըթռի.
Օր լեր կըթռի, ցուլուլ կըթռցա.
Է՛, սավեր չէ, օր էթա լորան բռնա.
Ցուլուլ գէնա կէթա, լեըրն գնե ա։
Կծիկ ա կապել ուտ, քնել,
Կըծկատ՛, կէթա խասի ցուլուլին.
Կըբռնա, մնկ էլ...
Իրևց կորին ըմալ էրև՛,
Սըթար չըթռոզև մեջ։
Դառնա .յիրգուն գութա։
Մնաց, .յառավոտ Պառավ բսևց.
— Ջանը՛մ,—բսևց,—արդեն ախլավա յա,
Ասց չունիմ, էրևիևք սաված ևն,—բսևց,—
.Յելնիմ էթամ, տենամ կորեկ չըխա՞սև,—բսևց,—
Քաղնիմ, բերիմ, էրևիևքներուն սավից պրծում։
.Յելավ .յառավոտ շուտ, գնաց։
Գնաց, իշկևց օր ի՛նչ.
Իրևք կորին ը՛մալ ավերև՝ սըթար չկա նև.
Էն չորս կորին լավ, սաղլամ կայնուկ։
— Վա՛յ,—բսևց,—ձեր վի՛ղը գնևի.
Ո՞ն ա,—բսևց,—իմ իրևք նաֆարի վիղ կտրև, չորսին բաղե։
Ըսևց.—Տաիմ դաս, հայբաթ բստրա էրող գութա։
Տաիսավ էդտեղ, արև տաքցավ,
Մնկ էլ տեսավ՝ Դավիթն էկավ։
Դավիթն օր էկավ, «քը՛շտ, քը՛շտ, քը՛շտ» էրևց,
Էներ Թռավ.
Օր լեր Թռավ՝ ցուլուլ Թողևց.
Է՛, ցուլուլ գենա գնաց, լեր՝ գենա,
Զո՛ւր կծիկ բռաղ էդավ։

Կծիկն օր բռաղ էղավ, կծկե՜ց,
Գնաց, ցուլուլին բանեց։
.Յելավ կայնավ.—Վա՛յ, Դավի՛թ,—ըսեց,—քու թևվը կոտրի՛,
Քու թևը թափի՛,—ըսեց.—
Դու ընչի՞,—ըսեց,—իմ իրեք նաֆարի վիզ զարկեր ես,
Ջորսին թողեր ես,—ըսեց։
Օր դու խոշաղ ես,—ըսեց,—
Մսրա Մելիք թ... քու ծնող,
Էսա յոթ տարի,—ըսեց,—Ալաջա Տաղի բաղնի ավն ա
կըտանա,
Յոթ տարվա,—ըսեց,—Ճապաղջրի բողնն ա կըտանա,
Դու էղեր ես,—ըսեց,—իմ կորնկն ես ավիրե՞։
Դավիթ շշմավ, կայնավ։
— Նանե՛ ջան,—ըսեց,—քե վնա՞ս է էղե։
Ըսեց.—Բա՛ չէղե՞,
Իմ իրեք նաֆարի վիզ զաներ ես, չորսին թողեր ես։
— Էսա ճանկ օսկին բեզի՛, Նանե՛ ջան,
Քու վնասի տեղ գըլցա՞։
Ըսեց.—Խա՛, Դավի՛թ ջան։
— Դը, ընձի օրշնա՛։
Ըսեց.—Աստվա՛ծ քու մեր կատր պահա։

22. .Յելավ .լիրիզվան, դարցավ էկավ.
Ձին տարավ կապեց։
Քեռի Թորո՛ս տանիսն ա.
.Յելավ տանիս, սկսեց Քեռի Թորոսի խետ պտոտել, խրատ
էնել.
— Քեռի Թորո՛ս, էչ՛ն բադան օր կերևվա,
Էն ի՞նչ բադան ա։
— Տո՛,—ըսեց,—չանորդի Պլենկերի տղա՛,
Ի՞նչ գուզես իմ ցավից,
Տիե՞մ պատ՝ տաշտաբերով բերեն, չըպրծիս։
— Տո՛, Քեռի Թորո՛ս, .յորի՞ կը հերսոտիս,
Կըխաբցում, էլի՛։
Ըսեց.—Ի՞նչ բադան ա,—ըսեց,—
Էնի,—ըսեց,—քու օզորմած խեր Մհերն էր, Առյուծաձև
Մհերն ա սարբև.
Դարուն,—ըսեց,—կէքեր,

Իրևք տեխով զարդյախ ա քողև,—ըսեց,—
Դարդյախներ կըբացեր,
Ինչքան անասուն կար, ոչխար կար, տավար կար վայրենի
Դան կըլցվին,—ըսեց.—
Աշուն կէրթեր, զարդյրխներ կըպռրգեր,
Միջի ավր կէներ,
Սասունցիք բերին կուտին,
Դըվա կէնին Առյուծաձև Մհերին։
Էս ա յոթ տարի՝ Մսրա Մելիքն ա կըտանա։
— Քևռի Թորո՞ս,—ըսեց,—
Յոթ տարի Մսրա Մելիք ընդեղ ավ չէրև,
Յատավոտ կէքամ, յոթ տարվա ավրն կէնեմ։
Ըսեց.—Մսրա Մելիք կըլսի, քու ծնող ը..ա։
Ասավ.—Լսի՝ չլսի՝ կէքամ։

Յելավ յատավոտ, կոպալ դրեց վրը ինվին ու գնաց։
Դարդյրխներ զարդյեց, աշուն էր,
Է՛, յոթ տարվա որս լցվև մեջ.
Ըմա՛լ ջառաե՛ց...
Էկավ ըսեց.—Սասունցի՛ք,—ըսեց,—
Ձերմակ օշխար, կարմիր մարալ՝ հազարն էդև մև կապեկ.
Գնացե՛ք, թռե՛ք, լցեք Սասուն, կերե՛ք,
Դըվա էրե՛ք Դավիթին։
Սասունցիք սովոր մա՛րդ, յելան վազան։
Ձրվևնք առան վազին,
Ինչքան օր ավ էր էրև, բերին, լցին Սասուն, կերան,
Դըվա էրեցին Դավիթին։

23. Քաշավ մև ժամանակ,
Յելավ Քևռի Թորոսի հետ էլման տանիս ման գալու,
Ըսեց.—Քևռի Թորո՞ս,
Է՛ն շառապղջուր՝ էն վրաներ, ի՞նչ վրաներ են,
Ի՞նչ վրան են դանի։
Ասեց.—Ա՛յ մարդ,—ըսեց,—վա՛ղն արի,
Մսրա Մելիք կըլսի,
Քևռի գութա կաթո-կաթո կէնա,
Ի՞չ գործ ունիս։
— Դե՛.—ըսեց,—կըխարցում, էլի՛։

Ըսեց.—Էնի ճապաղջուրն ա.
Էնի,—ըսեց,—տարին յոթ հազար մանեթ բո խեր բոզա
կառներ,
Նոր կրծողներ էլ-ազատին գուբեր էնառեղ,—ըսաց.—
Էլ կըզաներ, չուր մինչև աշուն,
Աշուն քոչեն, կէթենք։
Հիմա,—ասաց.—տվեր եմ ձեր պախալէն.
Յոթ տարի,—ըսաց,—Մարտ Մեղրեն ա կառի։
Ըսեց.—Յոթ տարվա խարջ չառե,
Կէթամ .յառավոտ, յոթ տարվա խարջ կըպահանջիմ։
.Յելավ .յառավոտ, նստավ Քուռիկ Ջալաբին ու բշեց։

Քշեց, գնաց,
Էլ-ազատին տեսավ օր՝ ախավոր էր էկավ.
Դեմավորան, տարան նստուցին.
.Յեմացան օր՝ Մհերի տղեն ա,
Նստուցին զրան, սկսեցին խոսալ,
Բուրքերուն խանչել, էլին խանչել։
Էլին խանչեց էդ էլ-ազատին, ասեց.
— Գիտե՞ր ինչ կա,—ասեց,—
Էսի մեր խին տղի տղեն ա,
Էրեխաիր, Մհերի էրեխաիր վըր մըդի շատ ա,
Հիմա,—ըսեց,—կարող ա .յըրգի, .յընգըրվորե, էկել,—
ասեց,—
Ամեղ մե օշխար տվե՛ր,
Ամեղ մե գառ տվե՛ր,
Ամեղ մե բան տվե՛ր, լիովին ճանապարհի դնանք։
Էդման բըլբփրտա .յրնգավ մեջ էտենց,
Դավիթ ըսեց.—Էլ-ազատի՛,—ըսեց,—էտ ի՞նչ բըլբփրտի ա,
Աատ՛, ես էլ լսիմ, էլի՛։
Ասաց.—Ի՞նչ ասեմ, Դավի՛թ ջան։
— Ձէ՛,—ասաց,—պարզ ասա՛, ես էլ լսեմ։
Ասաց.—Մհերի էրեխաիր վըր մեղ շատ ա.
Հիմա գու էկել ես,—ըսեց,—
Հանչել եմ բերել.
Մեկըն մե գառ տա,
Մեկըն մե օշխար տա,
Մեկըն մե բան տա, մե բնչա տա,—ըսաց,—

Քնդ լիովին ճանապարհնիք...
Ըսնց.—Էս ինչ ա կըխոսաս.
Լկեր նմ՝ յոթ տարվա խարջն ա գուզամ բնգնի։
Ըսնց.—Դավի՛թ ջան, էդման մի՛ բսա,—ըսնց,—
Էլ նն, կը-յըորբին, Քողին կէքան,
Դուն էլ զարդակ կէքաս։
Ըսնց.—Յո՛թ տարվա խարջն ա գուզամ...
Մե՛ հատ՝ մըչ Դավիթի բնրնին,
Օր զարդնց՝ արուն լցվավ Դավիթի բերան։
Յեվավ, հըմը լայլուղ դրնց վըր բնրնին,
Գնաց, վրանից նլավ, գնաց նոու,
Իր յարունը մարբնց,
Նենձավ Քուռիկ Ջալաբիդ,
Կոպալն առավ, պրծավ մըչ էլուն.
Ըմա՛լ ջառանե՛ց՝
Մե խաա խարբրբեր չըպրծավ։
Էկավ, ըսնց.—Մասումցի՛ք, դացե՛ք,—ըսնց,—
Կովերն ու ոչխարն ու տավար՝ հազար էլն մե կապեկ,
Բևրե՛ք, լցե՛ք Մասուն, կերե՛ք,
Դրվա էրե՛ք Դավիթին։
Մասումցիք գացին, ամբողջ էլըն բերին,
Լցին Մասուն, կերան,
Դրվա էրեցին Դավիթին։

24. *Մսրա Մելիք լսա՛վ.*
Թե Դավիթ գացե, Ալաջա Տաղի բադան գնրդե,
Յոթ տարվա ավն է էրե,
Գացե, ճապաղջուրի բոզնն էլ-աղասուց յուղն՝ չը տվե,
Կտրե ամբողջ էլըն,
Կտրե, բերե լցե Մասուն, յինը էկե։
— Ա՛յ, հա՛յ,—ըսնց,—
Ես չասի՞ օր մե շատ գա՝ Դավիթից կըխասի ընձի։
Մսրա Մելիք նստավ, յոթ պետությունից իմդադ գրնց,
Օր յոթ պետությունից զորք գա,
Գա Դավիթի վրեն կռիվ։
Նստավ գրնց։
Մսրա Մելիքին մե հատ խոզբատի կար, ծառայող։
Խոզբատին էկավ, ըսնց.

— Էտ ի՞նչ ա կէնես, Մարա Մկի՛ր,
Ի՞նչ ա գրես։
Ըսեց.—Գրեմ, յոթ պետութիւնից իմզատ գա,
Էթամ Դավիթի վրեն կռիվ։
— Տո՛, տնաշէ՛ն,—ըսեց,—
Յոթ գոմշու ուժ ունիս,
Էլ ի՞նչ պետք բու թաբաւորութիւն։
Էնտեղ չըսէ՞ն՝ էտ պետութիւններ,
Էտ իմա՞լ ուժեղ պետութիւն ա,
Օր յոթ պետութիւնից զորք գա,
Նոր էթաս էտ մէ պետութիւն վրեն կռիվ։
Էն մեկըն բաս մէ կռմից.
«Յելի բաս՝ ի՞նչ զորք ա,
Մէ հատ երիտասարդ ուղա յա»։
Էլ բու անուն ինչի՞ պետք ա։
Ըսեց.—Ըդ ի՞նչ էնեմ։
— Յիտցուն Ձիավոր տո՛ւ բնձի՛,
Էթամ Դավիթին սաղ բռնեմ, բերեմ, տամ բե։
Ըսեց.—Էնի դիրս ձագ ա, տանիմագլխս չէդի.
Տաննա՝ կը ջառաս։
Ըսեց.—Չէ՛, բու ի՞նչ բանն ա։
— Լա՛վ,—ըսեց,—կիտամ։

25. Դավիթի սուրբութիւն ի՞նչ ա.

Սասունից խրաղ մէ հատ մատուռ կա,
Յիներ, տերտեր, տերոջ ախճիկ,
Յատավոտեն-յատավոտ գուբան էտ մատուռ,
Տունդր կրդնան, կէթան.
Յերեկոյան էման գուբան, Տունդր կրդնան, կէթան,
Իրանց ուխտ կէնեն։
Քաշեց մէ ժամանակ, ուրեմ,
Խոզրատուն Յիտցուն Ձիավէր ասէց,
Խոզրատին էկավ.
Էկա՛վ, էկավ խասավ մատուռ։
Օր խասավ մատուռ,
Տերտերըն մատուռից գուրս Յելավ.
Օր գուրս Յելավ՝ տերջ կապին պլետ.
— Գյավրօղլու Դավի՛թ, գյավրօղլու Դավի՛թ...

Ախճիկ .յելավ դուրս։
Տեսավ օր՝ ձիավորներ տերջէ կըսփին,
«Դյավրօղլու Դավիթ ա» կըսին։
Մտավ, ըսեց.—Դավի՛թ,—ըսեց,—
Ձիավորներ,—ըսեց,—տերջէ կըսփին,
«Դյավրօղլու Դավիթ» ա գուգին։
.Յելավ, ըսեց.
— Տղեկնե՛ր, էտ ի՞նչ բախտ ա,
Ինչի՞ կըսփիք էտ ծեր պահանին։
Ըսաց.—Դավիթըն բդի սաղ բռնա, տա մե։
Ըսեց.—Դու էտ ծեր պահանին ջոգե՛ր,
Ես Դավիթին սաղ բռնեմ,
.Յառավոտ բերեմ, տամ ձե։
Թողեցին, էտ մարդիք գնացին։
Դավիթն էկավ։
.Յառավոտ .յելավ, Քուռիկ Ջալաբիզը խնծավ,
Թուրը կապեց վրեն՝ կայծակի պոտ, գնաց։
Ասաց.—Ե՛ս եմ Դավիթ։
Կավան, բառաստաններին բսպանեց,
Խոզրատին զորավար էր,
Խոզրատու ատրմներ բաշեց, չարեց ճակատ, ըսեց.
— Շատ ես տեսե՝ քիչ խրատ էրա,
Մարա Մելիքի խաթըր բնձնից չըմնա։
Ու գնաց։

26. Գնաց էդ Խոզրատին,
Մե գյուղ կա, էդ գյուղով օր պտի անցնի։
Գյուղի կնտիր .յելած, աշուն ա,
.Յառճկան ա կըմանեն՝ կայնած գոներ։
էն մե կնիկ շան որդի կին էր, ըսեց.
— էսի Խոզրատին էր,
.Յերեկ կէքեր Դավիթի վրեն կռիվ։
.Յերեկ մենք ըսեցինք.
Խոզրատի՛, օր գացիր, Դավիթին ախտիր,
Մեզ ի՞նչ կըբերես։

Ըսեց.—«Բերեմ .յերկեն կնտիր՝ ուղտեր բառնան,
Կարճ կնտիր՝ էրկանը ազան,

Ախաբդներ՝ լալական-ծառական»։

Ըսեց.—Մկա տենանք ի՞նչ կըբերա։
Էկավ, տեսավ օր՝ խոզբաառ բերնեն ջուր-ջրջուր ա կէքա,
Գլոխ կախեց, օր .յընցեր։
Օր գլոխ կախեց, .յընցեր,
Էն շան որդի կնիկ ըսեց.
— Խոզբաառ՛, Խոզբաառ՛,—ըսեց,—կայնի՛։
Ձին թաշեց, կայնավ։

Ըսեց.—Էս յանեն կէքիր գելը-զազան,
Էն յանեն գիբաս կառուկ շան,
Բերնեդ կէքա չոգերըմ քան,
.Յո՞ւր ա քու բերած .յերգեն կնաիր՝ ուղաեր բառնան,
Կարճ կնաիր՝ .յերկանք աղան,
Ախաբդներ՝ լալական-ծառական։

Ըսեց.—Ես ի՞նչ գիտի՝ Դավիթ էր գելը-զազան,
Գուրզըն կըբացեր՝ լենըրն ձեր պառուխան,
Ձեր իրկոնց կ... ձեզի ուղաեր բառնան,
Պլորներ էլ՝ լալական-ծառական։

Ու քշեց, գնաց։

Քշեց գնաց, գնաց Մսրա Մելիքի կուշտ։
Մսրա Մելիք տեսավ օր՝ ատրմներ չարուկ ճակատ.
Ըսեց.—Խմա՛լ ա։
Ըսեց.—Ի՛նչ էկե վըր ընձի,
Տա՛ս էնքան աղուբեն քափե վըր բրգի, Մսրա Մելի՛ք։
Ըսեց.—Որ ես կըսեի՝ էնի գիլու ձագ ա,
Տանմազըղ չէղի. .յընչի՞ չավատացիր։

27. *Նստավ, .յիմդաղ գրեց։*
Օր նստավ յոթ պետությունից .յիմդաղ գրեց,
Մի հատ սեյիղ կար, ձիարած՝ սեյիղ, Մսրա Մելիքին.
Էկավ, ըսեց.
— Ի՞նչ ա կէնես,—ըսեց,—Մսրա Մելի՛ք։
Ըսեց.—Գրեմ՝ յոթ պետությունից .յիմդաղ գա,

Էթամ Դավիթի վրեն կռիվ։
— Ջանը՛մ,—ըսեց,—ամո՛թ ա քու անվան,
Դու,—ըսեց,—ունիս յոթ դամշու ուժ,
Էնի.—ըսավ,—բիրիքի երիտասարդ տղա,—բսավ,—
Օր ուրիշներ էթան ըսեն.
«Ա՛յ մարդ,—ըսեն,—էս ի՞նչ պետություն ա, օր էտ մարդին՝
Յոթ պետությունից յիմդադ էթան,
Օր նո՛ր էթա մե պետության վրեն կռիվ.
Մեկըն ա, էլի՛, մե հատ երիտասարդ տղա յա»...
Քու անվան էլ բյանի կապիկ ուժի։
— Ըբը ի՞նչ էնեմ։
— Հարիր ձիավո՛ր տո՛ւ ընձի.
Ես Դավիթին սաղ բերեմ։
Ըսեց.—կէնես խոզբաստուն.
Տանես՝ ձիավորներ կըսպանա,—ասեց,—
Բայց էնի գիլու ձագ ա, տանեմապլըդ չէղի։
Ըսեց.—Քու ի՞նչ բան ա, տո՛ւ։
— Լա՛վ,—ըսեց,—հարիր ձիավոր էլ կիտամ քեզի։
Յելավ էլաման յառավնա,
Հարիր ձիավոր տվեց էդրան։

28. Ուրեմ, էտենց սովորություն՝ Դավիթի, տերոջ, ախճդան,
էլի դուքան մատուռ, յուխտ կէնեն, կէքան։
Էլաման յառավոտ յելան,
Գնացին էդտեղ յուխտ էնելու.
Ձիավորներ գնացին, մատուռի դուռ կայնան։
Տերտեր յելավ դուս՝
Տեփոր կապին պլետ.
— Դյավրօղլու Դավի՛թ, դյավրօղլու Դավիթ...
Ախճիզ յելավ դուս,
Տեսավ օր՝ ձիավորներ սաղցած, տերոջ կրտիվեն։
— Տո՛,—ըսեց,—Դավի՛թ,—մտավ, ըսեց,—
Ձիավորներ սաղցած, տերոջ կրտիվեն։
— Խմա՛լ,—ըսեց,—սաղցան։
Յելավ, իշկեց, օր ճիշտ ա։
— Ա՛յ մարդ, ի՞նչ մարդ ևը,
Ի՞նչ ա դուզեր էտ ծեր գահանից։
Ըսեց.—Պաի Դավիթ սաղ բռնա, տա մե։

Ըսեց.—էսի ձեր գահանա,—ըսաց,—
էսի Դավթին կանա՞ բռնա.
Դու էդրան թողե՛ք,—ըսեց,—
Ես Դավթին բռնեմ, բերեմ տամ ձեռ։
— Լա՛վ։
Թողեցին, գնացին։
Գնաց քնավ.
.Յառավոտ .կելավ, Թուր կապեց վրեն, էկավ.
Ըսեց.—Ես Դավի՛թն եմ։
Ընբռունքնին բսպանեց,
Սկիզբեն էլ սաբմներ թաշեց, շարեց ճակատ, տանց.
— Շատ ես տեսե՝ բիչ խրատ էրա,
Մարդա Մելիքի խաթըր ընձնից չըմնա։
Ու գնաց։
Գնաց, էլի գնաց Մարդա Մելիքի կուշտ,
Մարդա Մելիքը օր տեսավ, էլի ըսեց.
— Իմա՞լ էր, օր ես բսի՝ ձիավորնեը կըսպանա՞։
Ըսեց.—Ի՛նչ օր Թափե վրը ընձի,
Տա՛ս էնքան աղուրեն Թափե վրը քե։

29. *Նստավ, .յիմդադ գրեց.*
Յոթ պետության .յիմդադ գրեց։
Յոթ պետություն էլ զորքեր բռմա՛ն, էկան Մարդ։
Էկան Մարդ՛ը, Մարդը կայնան,
Օր պտի պրիկազ էդի,
Գան Դավթիի վրեն կռվի։
Գիշեր Մարդա Մելիքը քնավ։
Քնավ, էրազ տեսավ.
Տեսավ՝ մե հատ ասպրդ արևելյան յանեն .կելավ,
Մե հատ լուսին արևմտյան յանեն .կելավ.
Էկան, կնսավուր մեջտեղ առան .կիրար՝ լուսին ու ասպրդ,
կռվան.
Է՛նքան կռվան,
Քյանի գնաց՝ լուսին խավարավ, ասպրդ պոչտառացավ.
Վերջում լուսին փրջավ,
Ասպրդ մնաց ընդեղ կայնավ։
Խոդավ, .յիմցավ։
—Մայրի՛կ,—ըսեց,—վեր կո՛ց։

Ըսեց.—Ի՞նչ ա՝
Ըսեց.—Էրազ տեսա՝
Ասեց.—Մե հատ աստղ,—ըսեց,—արեւելյան կողմից .յելավ,
Մի հատ լուսին՝ արեմտյան կողմից.
Էկան,—ըսեց,—կեսավուր մեջտեղ առան .յիրար, կռվան՝
Քյանի գնաց,—ըսեց,—լուսին խավարավ, աստղ պայծառացավ՝
Վեչջում,—ըսեց,—լուսին փջավ, աստղ պոյծառ մնաց՝
Ասեց.—Մարթա Մելի՛ք ջան,—ըսեց,
Լուսին օր կա՝ գո՛ւ ես,
Դու ջիչ ախպերն ես,
Իսկ աստղդն՝ Դավիթն ա.
Արի՛, մի՛ գնա Դավիթի վրեն կռիվ.
Դու կրփջանաս, Դավիթ առնդչ կըմնա՝
— Է՛, մայրի՛կ,—ըսեց,—ևիկ շուտ տեննեք էրազ,
Ես .յիմդացրն չը գրի՝
Հիմա յոթ պետությունից .յիմդաղ էկև,
Հիմա ե՞տ տանք՝
Պտի տանեն «Ա՛յ մարդ, էտ ի՞նչ պետություն էր,
էտ մարդը չի կարող գնա յոթ պետության զորքով էնդրան կռիվ».
էլ իմ անուն բյանի՞ կապիկ աժե՝
Ըսեց,—Կէթամ, քե սաղ մացի, քե մեռա՝
.Յելավ, վերցուց ուր զորքը,
Յոթ պետության .յիմդաղ, օր էկեր էր,
Մե՞րն ու քուրն էլ խանն էկան՝
Ասին.—Մենք էլ գուբանք զորքի խեա՝
էկան, Սասուն փաթին գիշեր, կայնան.
Սասման գետ խմեցին,
.Յեհին գալոցին չըմնաց՝

30. *Քեռի Թորոս, աշուն էր, նստուկ ին .յոդեք,*
Իմալ օր .յոդից .յելավ, .յելավ իշկեց օր՝
Սասման բոլոր ամբողջ դարձե ճերմակ վրան՝
— Ա՛յ-հա՛յ,—ըսեց,—էս ամբողջ ձուն էկե Սասման բոլոր,
Գյուղի վրեն չէկե, էս ի՞նչ բան ա՝
Տեսավ օր՝ ի՞նչ. ամբողջ վրան ա՛՝

— Ա՛յ, հա՛յ,—ասեցին,—էսի Մարա Մկիւթ էկեն մեր վրեն
կռիվ։
Դավիթն էլ որ տեսավ, .յելավ գնաց քեռի Թորոսի կուշտ։
— Քեռի Թորո՛ս,—ըսեց,—
ես, օրինակ, քանախինդ տարեկան երիտասարդ տղա եմ,
Մարա Մկիւթ,—ըսեց,—յոթ գունդի ուժ ուներ,
Թո՛ղ գեր՝ .յիրար հետ կռիվ էնինք,
էս ամբողջ զորքի պատասխան իմա՞լ տամ։
— Ա՛,—ըսեց,—Դավի՛թ ջան, մի՛ վախենար,—ըսեց.—
Յոթ տարի մնաս, էնի չի գա վրը քե կռիվ, քյանի դու չէիտաս։
Ըսեց.—Մհերի շորեր էնտեղ խոպինեն կախուկ ա,
Գնա՛, խաբի.
Թե քու վրատով էղա՛վ, քու կռվու ժամանակն ա.
Թուրն էլ,—ըսեց,—կպրա կարսի մեջն ա.
Թե քաշեցի՛ր ամբողջ՝ քու կռվու ժամանակն ա,
Թե չը կարցար, շորեր քու վրատով չէղավ,
Դու չես կարող կռվի։
.Յելավ գնաց.
Շորեր խաբավ, ինչ օր մուկն .յրնկներ կարաս։
Գնաց կպրե կարսի դուռ.
Թուր քաշեց՝ չըկարող։
Ըսեց.—Չէ՛, Քեռի Թորո՛ս, չեմ կարող։
Ըսեց.—Քու կռվու ժամանակ չի։
.Յելե՛ք,—ըսեց,—յոթ խատ անծին էրինջ վերցե՛ք,
Տանեննք,—ըսեց,—մատաղ էնենք,
Մտինք եկեղեցին, պատարագ էնենք,
Մե հնարք էնենք, բլի դեմն առնինք։
.Յելան յոթ խատ անծին էրինջ վերցեցին,
Տարան եկեղեցին, մատաղեցին.
Ու պահանեն կայնավ պատարագ,
Ժողովուրդ մտան, սկսեցին իրանց աղոթք էնել,
Սրբի Նիշան Ֆռռալո՛վ մտավ Դավիթի ծոց,
Խաչըն գծրգեց Դավիթի թիկընթի վրեն։
.Յելավ գնաց։
Գնաց խոր շորեր խաբավ՝ անջախ ճրոճրալով մտավ
Դավիթի վրեն։
Թուրը քաշեց՝ ինչ օր ջրու միջեն խաներ։
— Դավի՛թ ջան,—ըսաց,—քու կռվու լա՛վ ժամանակն ա,

Մի՛ վախեցի, դնա՛ կռիվ։
Ըսեց.—Քեռի Թորո՛ս,—ըսեց,—
Ա՛ջն ու դինին, Տե՛ր կենդանին,
Պտի իրեք դան Մսրա Մելիքի խնամ խաց ուտեմ,
Նոր խնամ կռիվ էնեմ։

31. .Յելավ գիշեր, .յիրան վրանը կապեց Քուռիկ Ջալաբի վրեն,
.Յիրան Կայծակի Բուրը կապեց,
Քշեց, գնաց խոշունի .յետև,
Էդտեղ իրան վրան զարկեց,
Ձին կապեց դուռն ու մտավ վրան, քնավ։

.Յառավոտ Մսրա Մելիքը .յելավ, վլացվավ,
Նռադիտակ դրեց .յաչքերին, նայեց,
Օր մի հատ ձիավոր զորքի բամակ արդեն էկեր ա,
Վրան զարկեր ա, քներ ա։
Ասեց.—Կերևի,—ծառայողներուն ըսեց,—
Նա մեղի .յիմդադ է էկե, բամակ է էկե,—ըսեց,—
Գնացե՛ք, տեսե՛ք, ի՞նչ մարդ ա, առե՛ք, էկե՛ք։
.Յելան գնացին, տեսան օր՝ մե հատ մարդ քնե վրանի մեջ,
Օդներ վրանից երկու մետր .յելե դուս։
— Ա՛յ, հա՛յ,—ըսին,—Նոր,—ըսին,—Դավիթին կախտենք։
Էսի Մսրա Մելիքից ուժեղ մարդ ա։
Աղա՛, աղա՛, աղա՛։
.Յելավ։
— Ի՞նչ մարդ ես։
Ըսեց.—Էկել եմ Մսրա Մելիքին բամակ, .յիմդադ։
— Դե՛,—ասաց,—Մսրա Մելիք քեզ կանչում է։
.Յելավ, ձին ու վրան Բողեց դան,
.Յինք .յընդավ դրանց .յետև, էկավ։
Էկավ, Մսրա Մելիքի վրան կայնավ,
Մսրա Մելիք իշկեց.
— .Յա՛յ,—ըսեց,—Դավիթին կախտե,
Սա էլ իմ նման մարդ է։
Համեցեք էրավ, նստան։
Մսրա Մելիքի խորակն ի՞նչ է.
Մի հատ կարմրցուկ ոչխար,

Մի հատ սինի փլավ,
Մե փուռ էլ խաց։
Էտ Մարա Մելիք կուտեր։
Օր բերեցին էտի դրին,
Մե հատ էլ տրան բերեցին.
Էտի Մարա Մելիքի խետ բարևնարար խաց կուտեր,
Հըլը Մարա Մելիքից մե բան էլ .յավել կուտեր։
— .Յա՛, — ըսեց Մարա Մելիք, —
.Յազարեն մե մարդ, — ըսեց, — իմ չափ խաց չուտեր,
Մա, — ըսեց, — բնձնիկ շատ ա ուտում,
Դավիթին կա՛խտենք։
Իրեք օր խետը խաց կերավ։
Իրեք օր խաց կերավ, ըսեց.
— Մարա Մելի՛ք, — ըսեց, — դնում իմ ձին ու վրան բերիլու,
Մինչևի քու թշնամին գա, խետ կռիվ էննենք։
Ասաց. — Գնա՛։

32. *Գնաց, վրան քաշեց, թալեց դան,*
Քուռիկ Ջալաբիդ խեծավ, քշե՛ց,
Էկավ, կայնավ վրանի դուռ։
Ըսեց. — Մարա Մելի՛ք, ես Դավիթն եմ,
.Ցելե՛ք, կռիվ էննենք։
— Վա՛յ, — ըսեց, — իրեք օր Դավիթ իմ խետ խաց կերավ,
Ամեն մե մարդու բերնից չէկեր էր՝
Իմ խետ բարևնարար խաց ուտեր,
Սա Դավիթն էր։
Ասեց. — Ի՞նչ էննենք։
Ասեց. — Ձիու վրա կռվինք։
Ձիու վրա կռվան։
Կռվան մինչև .յիրիկուն, .յիրար չ'ախտեցին։
Ցշանգ թալեցին,
Նա դարձավ իրան գնաց հանդիսատանալու,
Դավիթ դարձավ իրան հանդիսատանալու։
.Յատավոտ էկան.
— Ո՞նց կռվինք։
Ըսեց. — Գուլաշ խատինք։
Էկան, գուլաշ խատան։
Էն վախտ օր .յիրար չըգոռնն,

Էսոնց օաներ՝ յոթ նամեթի գութան,
Կրշնփն էս յան, կըշնփն էն յան։
Մինչև .յիրիկու խաասն գուլաշ, .յիրար չ՚ախաեցին։
Նա զարձավ գնաց իրան հանդիստանալու,
Մսրա Մելիք գնաց իրան հանդիստանալու։
.Յառավոտ էկան.
— Ի՞նչ անենք։
Ըսեց.—Բուրը բցենք։
Ասեց.—Դավի՛թ, դու փորրն ես,
Պահ .յառաջ ես բցեմ։
Ըսեց.—Դո՛ւ բցա։
Մսրա Մելիք խնծավ .յիրան ձին,
Քշեց, գնաց բավականի եռավորության վրա.
Դավիթ չոքավ,
Ետևից Սբի Նիշան, խամբուրից, դրեց ծոց, չոքավ։
Մսրա Մելիք էկավ, Բուր զնրգեց.
Եըտ զարգել, Դավիթ ըսեց.
— Մսրա Մելի՛ք, քու Բուր զնա՛ր,—ըսեց,—
Ես .յեկա՝ կըզննեմ։
— Ա՛յ,—ըսեց,—մոտիկ էկա,
Մոտիկ տեղից էկա, Բուրըն բյար չէրեց։
Գնաց բավականի եռավորության վրեն.
Էկավ, Նորից Բուրը Քալեց։
Բուր Քալեց,
Ըսավ.—Մսրա Մելի՛ք, մնաց մե Բուր.
Քու Բուր Քա՛լ, ես .յեկա՝ կըքալեմ։
— Ա՛յ,—ըսեց,—էլի մոտիկ էկա, Բուրը բյար չէրեց։
Գնաց բավականին եռավորության վրա,
Էկավ, Բուր Քալեց,
Դավիթ Քոավ, .յեկավ կայնավ։
Ըսեց.—Արի՛։
Քառասուն գյազանոց խոր ին փորած.
Բերին Մսրա Մելիքին .յիջուցին խոր,
Դնվի ջանդրկներ, գոմըշի կաշիք լցին վրեն.
Բերեցին յոթ ջաղչի բար, դրեցին վրեն։
Դավիթ յոթ շենք չափեց եռավորություն,
Գնաց, Բուր քաշեց, օր գեր,
Մերն .յեկավ, լացավ, ըսեց.

— Դավի՛թ ջան,—բանց,—
Սիծ չըտվեր եմ, բայց հաց, ամագ եմ ավե,—ասեց,—
Մե քուր բախշա՛ ընձի։
Բանց.—Մայրի՛կ, մե քուր բախշի քեզի։
Բանց.—Մե քուրն էլ բախշա՛ քու ասուն։
Բանց.—Մե քուրն էլ բախշի իմ ասուն։
Քուրն .յնչավ, բանց.
— Դավի՛թ,—բանց,—ես էլ թեզ չուր եմ լցի, վլացվեր ես,
Մե քուր բախշա՛ ընձի։
Ասեց.—Չէ՛, էս մե քուր աղի քուրն ա, կրթալեմ,
Թե սաղ էլ բլնի՝ ձեր բախտից,
Թե կաղ էլ բլնի՝ ձեր բախտից։
Յոթ շենք էր չափե,
Էկավ՝ քալեց։
Մարա Մելիք ձեն տվեց, բաավ.
— Դավի՛թ, քու քուր քա՛յ։
Բանց.—Մարա Մելի՛ք, քա՛փ արի։
Մարա Մելիք .յիրար էկավ, էղավ էրկու կռիվ։

33. .Յնչավ, քուրը բաշեց՝ պրծավ մըչ զորքին,
Մկանց զորքին չառավ։
Քեռի Թորոս տեսավ էնտեղից, օր Դավիթ կռիվ ա կչենա,
.Յնչավ մե հատ ծառ բոթքխան էրեց,
Դրեց վըր ինքն, էկավ,
Մե հարիր ձիավոր դեմ էրին Քեռի Թորոսին, օր էքան։
Դավիթն իշկեց.—Վա՛յ,—բանց,—իմ Քեռի Թորոսն ա գուրա,
Ձիավորներ գնացին՝ Քեռի Թորոսին կրսպաննեն։
Դավիթ ձին շիտկեց, օր բշեր էդ յան,
Էտ մարդիք շուտ խասան Քեռի Թորոսին։
Հըմա՛ ծառըն ճղերով էրեց՝
Հարիրն էլ էնտեղ բսպանեց։
Բսպանեց, մե .յատ ձիավոր փախավ։
Օր փախավ՝ ավեց .յնտև,
Ձիավոր .յուրին ձիուց քալեց, բանց.
— Դավի՛թ, քու բա՛խտն իմ .յընկեն,
Ընձի մի՛ բսպանա,—բանց,—
Իմ ախճիղ կիտամ քու աղին։
— Ա՛յ մարդ,—բանց,—ես ազատ տղա,

Էսի ո՞ն ա, օր ուր ախճիդ կաա իմ ուղին։
Ըսեց,—Դու ո՞ն ես։
Ըսեց.—Ես Բաղդըդի խալիֆի ուղեն եմ։
Ըսեց.—Օր քալես իմ ձիու քոռ,
Գնա՛, բախշի քըզի։
Էս մարդ սաղ գնաց։
Էկավ, տեսավ, օր մերն ու քուր կայնած դիլան։
— Է՛,—ըսեց,—մայրի՛կ, մի՛ լացեք,—ըսեց,—
Ես գուբամ Մսրը, կընատիմ Քաբավներ, ձըզի կըպախիմ։
Ձեվավ առավ, էկավ Մսրը։
Էկավ Մսրը, նստավ Քաբավներ.
Ձեն .յընկավ դուրս,
Թև Դավիթ էտիխի բան է էլե։

34. Կապուտակիզ մե հատ խանդուտ խանըմ անվեր ախճիդ կար.

Էդտեն օր ձեն լսավ,
Քառասուն Քաբավորի տղա էկած,
Նստած մի առանձին սենյակ, քրտած,
Կերըխում ա կէնեն,
Օր խանդուտ գա, էտենց մեկին խավնի, առնի։
Օր Դավիթի ձենը լսավ,
Բերեց, մե հատ նամակ գրեց,
Տվեց մե հատ փոշտալչոնի, ըսեց.
— Էսի շուտ կըխաասուս Դավիթին։
Փոշտալչոն առավ, էկավ։

Էկավ, Դավիթ գնացեր էր որսի։
Էկավ, Քե.—Ձեր Քաբավներ որտե՞ղ ա, Քաբավներ որտե՞ղ ա...
Տարան ցույց տվին։
Գնաց իշկեց օր՝ Յոան վ.երդն ա Քաբավներ։
Իշկեց.—Հը՛,—ըսեց,—քու յո՛ւրտ քանդրվի, կնի՛կ,
Էն մարդ էկած .յուրին կառնին,
Օր էսի էնդենց չարեք չէղի.
Էս ճիու բերան,—ըսեց,—
Էտարան իմա՞լ ա կուռի։
Խանեց նամակ, տվեց էտրան։
Օր կարդըցավ.—Տո՛,—ըսեց,—բիչ խավխըվա յա բաշե,

Էս էլ մանցև Կապուտկիղի խավխավէն,
Բռնէ՛ք։
Բռնին, սկսին ըտրան տփել.
Ըմա՛ղ տըփի՞ն, չանդրկախան էրին,
Տարան գնդից քալեցին, Քողեցին էկան։
Դավիթ .էրրիկուն որից դարձավ էկավ.
Տնաավ օր՝ մե կանավի մեջ տրից ա կա։
Քշեց վրեն ձին, հասավ.
— *Ա՛յ մարդ, էտ ի՞նչ մարդ ևս։*
Ըսեց.—Ի՞նչ մարդ եմ,
Աստված ձեր Դավիթ Թաքավորի տուն բանդա՛,—ըսեց,—
Ընձի ըմալ ա տըփեե՛, մրկա կըմեռնիմ։
— *Իմա՛լ Դավիթ։*
Ա՛յ մարդ, ես Դավիթն եմ, քեզ ի՞նչ ա տփե։
— *Իմա՛լ,—ըսեց,—դու՝ Դավիթ։*
Ըրա ըսաց.—Քեզի Յոան Վևրոն ա տփե։
.Ձեկավ, սաղցավ. ըսեց.
— *Դու Դավիթ ե՞ս։*
Ըրա.—Հա՛։
Դարձավ էկավ։

Դարձավ էկավ, էկավ գնաց Խանդուտի մոտ.
— *Քու յո՛ւրա քանդըվի,—ըսեց,—*
Դավիթի նամակ ես տվեր եմ Յոան Վևրոյին,
էն նամակ քաշես, ճղես, ընձի էլ տփես,—ըսեց։
Ես Դավիթին տեսեր եմ։
Ըսեց.—Դը՛, ա՛ռ նամակ, գնա՛։
Նորից բերեց, տվեց Դավիթին։
Դավիթ ըսեց.—Դը՛, դու գնա՛, ես գուբամ։
էտ տղան գացավ էկավ՝ նամակատար,
Դավիթըն մե քանի օրից հետո .ձեկավ,
Քուռիկ Ջալարիդը խնծավ,
Թուրը կապեց վրեն ու գնաց։

35. *Գնա՛ց, գնա՛ց դաշտի մեջտեղը,*
Տնաավ օր մե տեղ գութան ա կէնեն։
էտ գութանըն, էտ ըռնչալրի սրտըն,
էտ մուշակի արտն ա գութնեն։

Գնաց.—Բարով ձեզի, աղանե՛ր։
Ըրը.—Հազա՛ր բարի,—ըսեցին,—ճանապարհո՛ւդ ջան։
Ասեց.—Էտ անասուններր մեզք են, էլի,—ըսեց,—
Շո՛ւտ ա, քողե՛ք, քող մե քիչ հանգիստանան, նորից վարեր։
Էն նոքյարն ասաց.—Ճիշտ ասաց, իմ արան ա,
Քող հետո էլ չըթմինք,—բաց,
Մարդըն լավ կըսա,—ըսեց,—մեր ճանապարհդըր,
Քողե՛ք, քող հանգիստանան։
Էտոնք քողեցին, ըսեց.
— Էտա լուծ, բան վրավից չյարձակե՛ք,
Ես էլ գուլեն բարնջըար էրիմ, սավորիմ, էլի։
Էտ լուծ, բան վրեն չյարձակեցին, դրեցին մեկ կնդում։
Ըսեց.—Դե՛, էտ բնասեն ավե՛ր իմ ձեռ։
Բնասեն ավեցին ձեռ, ըսեց.
— Մանջրն ո՞ն կըբռնա, հըլա մանջրն բանե՛ր։
Մանջրն բռնին,
էրկու փութ ձիուն դանդուլամիչ հանց, էկավ.
էրկու փութ էկավ սրտի բոլոր։
Օր էկավ՝ բնասեն քողաց ու ձին բշեց։
Էն մեկ ըսեց.—Ձիու ուժն էր։
Էն մեկ ըսեց.—Չէ՛, չիրան ուժն էր։
Ու էտոնց մեջ սկսեց կռիվ չըննկնել։
Ըսեցին.—Չէ՛, մեր մեջ մարդ կըսպանվի։
Բոռացին.—Ախպե՛ր, կա՛յնի, ախպե՛ր, կա՛յնի։
— Ի՞նչ աս։
Ըսին.—Դա՛րձ արե։
Դարձավ էկավ, ըսին.
— Ախպե՛ր ջան, դու գացիր՝ մեր մեջ մարդ կըսպանվի։
Հիմա տեննանք՝ էս ուժըն ըո՞ւն էր, ին ձիուն էր։
Ձիուց չիջավ, գուլեան փութից վըր բըլակին, ըսեց.
— Մա՛նջ բռնեք։
Մանջ բռնին, էրկու փութ էլ օր ֆռաց՝
Մե չենք էլ սինոռից խառնեց խետ։
Օր խառնեց խետ, իշկին օր՝ խացն էկավ։
— Ախպե՛ր ջան,—բռնին,—խացն էկավ,
Կայնի խաց կե՛, ներ գնաս։
— Չանը՛մ,—ըսեց,—ինչբան խաց էրի օր՝ ես ուտեմ, դու ուտե՛ր։

Ըսեց.—Դու կն, մնա՛ց՝ մենք կուգանք,
Զբմնաց՝ մեր տներ մոտ ա, կէյանք, կո՛ւգանք։
Դե՛, բյասպի սիրտ լի յա.
Մե ջնչ խազան փլավ էխե,
Մե բավականին եղ լցե վրեն,
Խոցեր դրե՝ մե բավականի խատ, մե սիպտակ շորի մեջ,
Առավ էկավ։
Բերեց, դրեց Դավիթի յառջե։
Դավիթըն սկսեց պռրկել։
Կեա՛ բավ՝ խացըն խըլըսավ։
Օր խացը խըլըսավ,
էն սպիտակ կտորից հըմա՛ հղեց,
Մե բիչ փլավ էր մացե,
էն էլ վերցուց քաշեց ու...
Հոտղըման իշկին յիրար յերես.
— Ա՛յ մարդ,—բսին,—էս հիմա մեղ էլ կուտա։
Յեկավ, դնաց։
Յեկավ, ձիրը խնծավ, բսեց.
— Տղանե՛ր,—բսեց,—էա գուխան բանդե՛ր,
Ամբո՛ղչ բերեք կոլոխը,—բսեց,—
Ես մաս-մաս տենամ, իմա՛ լա։
Յեկան, բերեցին գուխան, բանդեցին,
Բնատեր բանդին, լծներ բերին,
Յըմե՛ն կոլոխցին վըր յիրար։
Թուր բաշեց, բսեց.
— Եթե ես խասիմ իմ մուրազին՝ էս յըմեն կտրա։
Իմալ օր քաշեց՝
Բնատեր օղեր վրովբռալով յեկան օդի մեջ։
— Վա՛յ, ախպե՛ր, րու վի՛ղ կտրի,
Դու էս ի՞նչ վնաս տվիր մեզի։
Հիմա մենք խարիր մանեթով չըկանանք գուխան ճարենք,
էս ի՞նչ էր էրիր։
Խանեց մե ճանկ օսկի, տվեց, բսեց.
— Էսի ձեզ, մե գուխան կառնի՛ր։
Ըսեց.—Հա՛, ախպե՛ր ջան,
Տաս հատ գուխան կառնինք։
— Դե՛,—բսեց,—ընձի օշնե՛ր։
— Բարո՛վ խասնիս րու մուրազին,

Ուրախութենով խասնիս քու մուրազին, դնա՛։

36. *Գնաց, ճանապարհի մեջտեղ տեսավ՝*
Մև եքա քաք, կոլոլուկ։
— Ա՛յ, հա՛յ,—ըսեց,—էս քաքի տերը ընձի կըսպանա.
Էսքան,—ըսեց,—մարդ քաքա՞։
Իշկեց, տեսավ օր՝
Մև խատ սեվ բան .յելավ, գուբա։
Ըսեց.—Էս էն քաքի տերն ա,
Էս ինձի կըսպանա։
Թուր քաշեց, օր .յիրան պաշտպանա։
Տեսավ մև հատ պտի աղա՝ .յելավ, կայնավ.
— Վո՛ կայնի՛, վո՛ կայնի՛, վո՛ կայնի՛։
Էկավ՝ վրեն կայնավ։
Էկավ.—Քո՛ւթ, բո՛ւթ, բո՛ւթ, բո՛ւթ։
Գլոխ ցածըրցուց,
Ոտ գրեց վըր կոշին,
Թռավ, .յելավ խնծավ։
— Ա՛յ մարդ,—ըսեց,—էս ի՞նչ բան էր։
Դողաու քուր զինից տեղ։
Ասեց.—Ջրտե՞նաս,—ըսեց։
Ջինից տեղ, էկավ.
— Բալա՛ ջան,—ըսեց,—էտի ո՞ն ա։
Ըսաց.—Մեր Մուսրն ա, ախպե՛ր ջան,—ըսեց,—մեր դամէշն ա.
Էդանց շորըցներ էր, բերի,—ըսեց,—գոլի վրեն, կառիմ կէքամ։
Ասեց.—Դե՛ դնա։

37. *Գնաց։ էկավ խասավ Կապուտկիղ։*
Օր խասավ Կապուտկիղ,
Էտ քաքավորի տղաներուն մէ հատ ծառա կար,
Անուն Գորգին էր։
Էտի էտինց .յառնչ կըծառայեր,
Էտ տղաներ բոնած ին, ուրանց ծառայութիւն կէներ։
Գորգին լսե, օր Դավիթի գուբա,
Դավիթի ճանապարն ա կըսպասա։
Մեկ էլ տեսավ, Դավիթն էկավ։

Դավիթ օր էկավ.—Բարե՛վ ձեզ։
— Վա՛յ,—ըսեց,—հազա՛ր բարի, Դավի՛թ ջան,—ըսեց,
Ըլբըլը ձին բռնեց։
Ըսեց.—Դու ո՞ն ես։
Ըսեց.—Ես քու քավէր Գորգին եմ։
Ըլբըլ ձին տարավ կապեց, ըսեց.
— Դավի՛թ ջան, .յամեցո՛ր, էքանը էս մարդիկց մնչ։

38. Առավ գնաց.
Տեսան օր՝ բառասուն մարդ նստած էզանդ,
Կերուխում ա կէնեն։
Դավիթին օր տեսան.—Ա՛յ, հա՛յ,—ըսին,—
Խանդուտ խանում մեր ձեռնեն առավ։
Էսի,—ըսին,—խանդուտ խանում կառի մեր ձեռնեն։
.Յելան կայնան,
Դավիթին տեղ տվին, նստան։
Բաժակ լցին, դրին Դավիթի .յառէջ։
Վերցուց, ըրը.—էս ի՞նչ ա։
Ասաց.—Համիչք ա։
— Տեսնեննե՛ր,—ըսեց,
Էսի թալեց, գնաց բառաբունով կուլ,
Ըսեց,—բան բերե՛ր, խմենք,—ըսեց,—
Աման բերեք, բառբան էս ի՞նչ ա։
Գացին, բաղչեն առան էկան։
Ինչբան օր բրաղ կար, լցին, դրին բաղչեն.
Դավիթ դրեց բերնին, խրը՛մեց, ըսեց.
— Դը՛, առե՛ք, խմե՛ք։
Դավիթ խամ տզա՛, էրազ չբխեմ, բնի բռնեց։
Օր բնի բռնեց, սկսեց հրմա՛ն կռնդրխել։
Էռներ .յելան կայնան,
Խանչըլներ բաշին, կայնան։
Ըսին.—Էս դրան ըսպաննենք, օր խանդուտ մեռ առնի։
Դու մի բսա, Քավէր Գորգին ընդեղից կիշկա.
Օր Դավիթ գլուխ էսման կէնա,
Էռներ խանչըլներ կըբերեն, օր գնին,
Օր էսման գլուխ կըտանկա՝
Խանչըլներ կըպախին։
Ըսեց.—Դավի՛թ ջան,—ըսեց,—

Էսի խաթաբնաուն չէ, մըխաց տուն է,
Ճանջ գըդըղա, գա՜ն։
Օր ըսնց՝ էտոնք փախան,
Դավիթ օր ըսման էրնց, օր .ելնելը,
Էտոնք փախան։
.Ձվնող՝ մե սիլա Գորգուն,
.Ձվնող՝ մե սիլա Գորգուն,
.Ձվնող՝ մե սիլա Գորգուն,
Քառասուն էլ զնանին քառասուն սիլա՝
Գորգու վիզ ծռավ, վիզ մնաց ծուռ։
— Տո՛,—ըսնց,—էտ ի՞նչ էր էղավ, Քավլար Գորգի՛։
— Տեսանն,—ըսնց,—քեզի կըսպանին,—ըսնց.—
.Ձվնող մե սիլա զանա՝ մկա իմ վիզ ծռե, չկանանմ։
Ըսավ.—Ախ՛, իմ ջոջան մե աղոթք ա սովըրցուցե։
Էկավ, էսման պոռ բաննց,
Տարավ էն յան, բերնց էս յան,
Պլոխ բանձըրցուց՝ վիզ դրավ։
Ըսավ.—Ըբա խանդուտ խանումին դիր տեննամ։
Ըսավ.—Խանդուտ խանում բու ձեն լսե,—ըսնց,—
Մե կրտա, հազար էլ շըրթիկա։
.Յիմա,—ըսնց,—կիչիա Գյուլլի բաղ.
Կարող է Գյուլլի բաղի մեջ տեննաս։
— Որտե՞ղ ա Գյուլլի բաղ։
Տարավ, տվնց նշանց։

39. Դավիթ գնաց, .յիջավ Գյուլլի բաղի մեջ,
.Յիրկուն ամբրգամ հախընդան ժամու մեկին էր,
Խանդուտ իր ծառաներով մտավ Գյուլլի բաղ։
Օր մտավ՝ ախճիկներուն ըսնց.
— Գնացե՛ք,—ըսնց,—ձըգի վարի բաղելու։
Ախճըգներ գնացին վարի բաղելու,
.Յինք էկավ Դավիթի կողմն։
Դավիթ .յելավ, Խանդուտ խանըմի հետ բարևվ էղավ.
Մե պահ՝ էն .յերեսեն, մե պահ՝ էն .յերեսեն,
Մե պահ՝ էն .յերեսեն, մե պահ՝ էն .յերեսեն,
Մե պահ՝ էն .յերեսեն, մե պահ՝ էն .յերեսեն։
Խանդուտ խանըմ ձեռ թաղց դոշ, ժխշնց, ըսնց.
— Մե պահ՝ բու խաթրին,

Մեկ՝ թու գալած ճամպի խաթրին,
Մեկ՝ իմ խաթրին,
Դու,—ըսեց,—Լոռա Համդու, Շայմանցովի գլուխն ես բերն
ընձի՞,
Քառասուն պակ առար իմ գլխո՞ւն։
Ձիրդից բաղնի պատ.
Ասու զննել, Դավիթի պնչներեն բլավ արուն, սկսեց էթալ։
Ու .յինք գնաց։

Օր գնաց՝ հանդուտին մե հատ ծառայող ուներ.
1780 *Հանդուտ ծրծդեր՝ կրծրծդեր, էր՝ գիլեր,*
Կայներ՝ կայներ, նստեր՝ կբնստեր։
Էս ծառայողըն տեսավ՝ Դավիթի գլոխ ինչ օյին խանեց։
Գնաց. մեկ կբսա՝ տաս կբշրթրթկա.
Տնսավ, ծառան չի ծրծդում։
Ըսաց.—Յո՛ղ,—ըսեց,—
Դավիթըն ընձենից ա պակ առե,
Դու ընչի՞ չես ծրծդում։
Ըսեց.—Դավիթ թու խամար էր էկե, իմ խամար չէկեր էր.
Էն օյին խաներ Դավիթի գլոխ,
1790 *.Յելավ՝ խորըդ բաղար գընցու, կէքա։*
— Ո՞նչ ա էղե։
Ըսեց.—Ձեռ քալիր դոշըն, զարկիր պատը,
Լոռա Համզի, Շայմանցովի գլոխ .յուզիր մոտենն։
Ըսեց.—Պնչներուց արուն պրծավ, կէքա։
Դավիթ .յելավ ուր արուն-մարուն սրսիեց,
Էկավ, ըսեց.—Ախճրգնե՛ր, .յելե՛ր։
Ախճրգներ .յելան էկան, գնացին,
Գնացին, .յամեց ուր տեղ Հանգիստացան։

40. *.Յառավոտ Դավիթ .յիր Քուռիկ Ջալաբին խնծավ,*
1800 *Էկավ օր էքա Լոռու Համզի, Շայմանցովի գլոխ բերելու։*
Էկավ, հանդուտի պալատի տրկով զընցի։
Հանդուտ գլոխ հանեց դուս լուսամուտից.
— Դավի՛թ,—ասեց,—արի՛,—ասեց,—մի՛ գնա,
Ըզտեղաց էթող՝ ետ չի դարցե,
Բախշա՛ ընձի։
*Ասեց.—Չէ՛, հանդո՛ւտ,—ասեց,—

Եթե էտ պլոխ չուզիր,—բսեց,—անպայման չէիր,
Որ բսպանվիմ էլ, պտի էիմ։
Ասաց.—Քե կրսեմ՝ մի՛ էիա։
Բսեց.—Չէ՛, կէիմ։
Բսեց.—Ընձի շատ կրցավա՞ս, խանդուտ խանո՛ւմ,
Ասեց,—Այո՛։
Ասեց.—Օր շատ կրցավաս,
Ես կէիմ էնտեղ, կրսպանվիմ,
Աբի՛, իմ դիակըս զախ, հորա՛.
Ծող քու լավություն էտ էղի։
— Դը՛,—ասաց,—դու կէիաս՝
Կռիվ մեկ կէղի, ջանդակ՝ հազար կէղի,—բսեց,—
Ես ի՞նչ կրճանչընամ քու դիակ, ո՞րն ա։
Ասեց.—Տըկլոզցու,
Որի քամկի վրեն Մահ խաչ եղալ՝ էնի ես եմ։
Բսեց.—Քե հաչողությո՛ւն։
Ու գնաց։

41. Գնա՛ց, գնաց մե առժամանակ,
Գնաց, տեսավ մե հատ ճանապարհի վրա,
Տեսավ, մե հատ վրան զանուկ,
Էրկու հատ մարդ նստած մեջ,
Բնատիք բերած .յետևանց ախռռով խորած՝ չանդրևներով,
Բնատի չանդրևներ քաշած ուրանց կողքեր՝
Էտման մահր շրուչն .յետիվանց,
Որ բդահղ նստեն, .յիրար տենան, կերբխում էնեն։
— Ա՛յ, հա՛յ,—բսեց,—էս ի՞նչ մարդ են։
Գնաց կայնավ, էտենք տեսան։
Իրանց ծառայողին բսին.
— Գնա՛, տես էտ ի՞նչ մարդ ա։
Գնաց, բսեց.—Ի՞նչ մարդ եա։
Ասեց.—Ես խանդուտի մարդն եմ,—բսեց,—
Ընձի ուղարկն խանդուտ խանում,
Ասում էր՝ գնա՛, լռուա Համզի, Շայմանցուվի նշանարան բե,
Մինչևի,—բսեց,—.յիրանք գան։
Էկավ, ասեց։
Էն մեկը հանեց .յիր ճրկտի մատանիք, ասաց.
— Տա՛ր տու, թո՛ղ տանա։

Օր բերեց, տվեց Դավիթին,
Դավիթ ձեռ տարավ՝ մե՛ խաւտ մըչ բտրա բերնին.
— Շա՛ն որդի,—բսաց,—ես քեզնից նշանաբան եմ .յուզում,
Ես՛ շան դող չեմ .յուզում.
Սա շան դող ա՝
Էտ մարդ առավ, լալով գնաց՝
Ասաց.—Ի՞նչ բսաց՝
Բսաց.—Կասա՝ էսի շան դող ա՝
— Օ՛,—բսեց,—սա է՞լ Սրբոյի փոկերուց ա՝
Ասաց.—Այո՛, ես Սրբոյի փոկերուց եմ,
Մեր կռիվ՝ կռիվ ա՝
.Ձեւավ, կռիվ էրեց, էրկրսի գլխս կտրեց,
Բաշըմներ կապեց .յիրար, թալեց ձիու խաշ,
Լեզվըներ .յընկավ գետին քաշ՝
Քշեց, գիկա, օր էլա խանդուտ խանումին՝

42. Էկավ, դու մ'բսա, խանդուտ խանում ասում ա.
— Գնամ Դավիթի .յետևիից,
Տենամ ի՞նչ խոշախության կէնա՝
Խանդուտ խանում տղամարտական շորեր խակն
Ու իրան ձին խեծե ու էկավ՝
Էկավ, էմալ ա գուբա, օր.
Դավիթն էլ էս յանից ա կէթա՝
— Ա՛յ, հա՛յ,—բսեց.—էս ձիավոր ընձի դագմիշ կէդի՝
Ջուր գլխներ թալեց, չուր .յինր պատրաստավ,
Խանդուտ զէրկեց՝
Օր զէրկեց, գուրզ զարկեց՝ Դավիթ յան տվեց,
Գուրզ առավ գետին, խանդուտ փախավ՝
Օր փախավ՝ ձին շիտկեց, բշեց .յետևվ,
Զէրկեց խանդուտի .յառջ.
Գետին ճղվավ, էղավ փուլ,
Ձին խառտավ, կաչնավ.
Խանդուտ .յուրին ձիուց թալեց, ծծեր բացեց՝
— Վա՛յ,—բսեց,—խանդո՛ւտ, դո՛ւ իր ընձի բապանիր՝
Ըսեց.—Դավի՛թ ջան, ես էլ քեզնից պակաս մարդ չեմ՝

Նոր էդտեղից դառցան էկան,
Նոր էտ մարդիկ պատկվան վրը ձիրար,
Նոր էդտեղ ձիրար վայելեցին։
Նրանք խասին իրանց մուրազին,
Դու էլ խասիր ձեր մուրազին։



Սասնա Ծռեր

պատմեց
Մարտունեցի Սիրփիչ Ավետիսյան
Մարտունի – Վաղաշեն գյուղ
գրառված է 1973 թ.



26—518

Մկրտիչ Պարտամի Ավետիսյանը ծնվել է 1898 թ. Ավդալատյուռ (այժմ Վաղաշեն) գյուղում, հողագործի ընտանիքում։ Նախնիները գոպիռ են 1828—29 թթ. Ալաշկերտից։ Ջրագմունքով հողագործ-անասնապահ է։ Կրթապրպտա է, գրամատուչյուն ավարտել է ինքնուրույն։

1917-ին զորակոչվել է բանակ, կռվել Կովկասյան ռազմաճակատում, իսկ 1918—1920 թթ. ծառայել է հայկական զորամասերում։ 1921-ին վերադարձել է գյուղ, 1922-ին՝ ամուսնացել։ Կնոջ մահից հետո երկրորդ անգամ ամուսնացել է 1932-ին։ Ունի 12 զավակ, 54 թոռ։ 1935-ին ընդունվել է կոլտնտեսություն։ 1969-ից թոշակառու է։ Մկրտիչը «Սասնա ծռերը» լսել է համպդուղացի Բժու Բաղդիից (Բաղդասար Գևորգյան), որ մահացել է 1930-ական թվականներին։ Բժու Բաղդան, բացի Մկրտչի, եղել է հիմնաւոուն մարդ, մրցել մի շարք նշանավոր աշուղների հետ (Ջիվանի, Սազայի և ուրիշների) և հաղթելով սազերն առել։ Բժու Բաղդիից բացի, վեպը լսել է նաև համպդուղացի Նորսոյի Ավդից (Ավետիս Ներսիսյան)։ «Ռուսատամ Զալիմ» Բուրգու ճյուղը ևս նա լսել է այդ երկու վիպասացից։

Մկրտիչը վեպը և այլ հեքիաթներ հաճախ է պատմել, բայց 1950-ական թթ. ի վեր քնավ չէր պատմել։

Մ. Ավետիսյանը, բացի ավանդական բանավոր պատումներից, վեպը կարդացել է նաև գրքերում, բայց մեր խնդրանքով պատմեց միայն մեծերից լսածը, ուստի սկսեց որը Դավթի նախորդության դրվագից։

Հարցաւորձից պարզվեց, որ Մկրտիչը լսել է նաև վեպի Սանասար-Բաղդասարի և Մեծ Մհերի ճյուղերը։ Նա համառոտ և կցկտուր պատմեց մի քանի դրվագ վեպի հիշյալ ճյուղերից։ Ըստ Մկրտչի լսածի, Սանասարի և Բաղդասարի մայրը եղել է «հայր ախթիդ» «Տաճկական բռնակալ թագավորը» այդ ազգին գերեզկուբյան խամաճ տարե իրեն կին։ Աղջիկը հղիացել է հրաշքով բացված աղբյուրից խմած մեկուկես բաւ ջրից։ Բայց թագավորին հավատացրել է, որ ինքը հղիացել է նրա հետ գրուցելուց։ Ծնվում են Սանասարն ու Բաղդասարը։ Թագավորը կամենում է երկվորյակներին գոհարերել. մայրը և զավակները փախչում, գալիս հանդիպում են մեծ գետը կարող դրամոր աղբյուրի ջրին և այդ աղբյուրի ակունքին կապացում իրենց տուներ։ Այս տարբերակում Դեղձուն ծառը Մեծ Մհերի մայրն է, Քեռի Բաբար՝ Դեղձուն ծառի հղբայրը, որը բրոչ հետ նկել է իրրև վերարնակիչ։

Վիպասացը բավական մանրամասն պատմեց Մեծ Մհերի առյուծ սպանելու դրվագը, որն ամբողջությամբ դրված է պատումի սկզբում։

Պատումը գրառել է Սարգիս Հարությունյանը։

Ա.

ՄԵՆ ՄԱՀԻ

Վհեր էղեր ա Սանասարի տղեն.
Բաղդասար, Սանասար ախպեր են՝
Մհեր մի տղա էր, ոչ մի բան չկար.
էտենց երկիրն էլ անասուններ պահին,
հաց չունին, օր ուտին.
հաց ուրիշ տեղից էր բերին.
Մնաց օր՝ էղ մարդկանց հացի պատուիրյուն ըզդացին.
Եփ օր հացի պատուիրյուն ըզդացին,
Մհերն էլ երդասարդ տղա էր,
Փոքր՝ տասնըվեցնդ տարեգան.
Հարց տվեց.
— Քեռի՛,—ըսեց.
(Քեռին վերաբնակիչ ա ուրանց մոտ, հա՛),
— Քեռի՛,—ըսեց,—ընչի՞ մեզի հաց չկա,
Ի՞նչն է պատճառ՝ հաց չկա.
Ըսեց,—Մենք հաց չըցանենք,
Մեզի,—ըսեց,—կարևկ կա,
(Սասուն կորեկից բացի, բան չըցանի),

* էհնաոնց պատմություն էլ առանձին ա, բայց էտի չեմ կարող պատմել։
Տաճ. վիպասացի։

Կորեկ կա, կորեկն էլ,—ըսեց,—խացի նման չէ։
Մեր խաց ուրիշ տեղից ա գուքա,
էս այսինչ, այսինչ երկրներուց ա գուքա*.
Մենք կէքինք, կըբերինք։
Ասեց,—Ընչի՞ չըբերինք, էնտեղ էլ չկա խաց։
Ըսեց.—Չէ՛, էնտեղ կա։
Ըսեց.—Մե հատ ջանավար ա գուշ էղև էդ ճամփու վրա,
ժողովրդին կուտա։
ժողովուրդ չիշխընա էքան-դան։
— Ի՞նչ ջանավար ա։
Ըսեց.—Մե՛ծ ջանավար ա,
Առյուծ ա,—ըսեց,—ամբողջ ջանավրներու մեծն ա։
էդ մեծ ջանավրրի .յախուն,—ըսեց,—չէքան։
— Քեռի՛,—ըսեց,—էդ իմա՞լ կուտա մարդու,
Մոտեվանց կուտա՞, Քեռի՛, քե՞ հետևվանց։
— Չէ՛,—ըսեց,—բալա՛ ջան, մոտենան՝ ներ կուտա։
— Օր մոտենան՝ կուտա, ես կէքամ,
էդ քը՛խ ընձի ուտա, օր մոտենան՝ կուտա։
Մհեր կէքա։
ժողովրդին կըսեն.—Մհեր կէքա ճամփա,
.Յելե՛ք, գացեք խնտրն, ոչ մի բան էլ չէնեք,
Գացե՛ք խնտրն, Մհեր ճամփա բանա, էքաք խացի։
կէքան։
Առյուծն օր գուքա, կըսե.
— էս է առյո՞ւծ։
Կըսա.—Խա՛։
Ասում ա.—Չենըվ-բանով, քրով-բանով չէղի՛ գանեք,
էսի զենք չունի։
Ես էդ՞ր խեռ կըկռվիմ, գուլաշ խասիմ։
Կըսա.—Ասումած ընձի տվեց, քե՞ էտ՞ր։
էսի,—ասում ա,—զենք չունի, ես էլ չունեմ։
կէքա բռնա, քաշա, կրճղա։
Անուն կը մնա առյուծանև Մհեր։
Ու էդ ժամանագվանից քաքավորություն կըխաստատեն
Մհերին.
Երկրի քաքավոր կըդառնա Մհեր։

* «էդ երկրներու անուններն էլ չգիտեմ»։ Սաս. վիպասացի։



Բ

Դ Ա Վ Ի Թ

2. .Յառնչ ժամանագ սասունցիք ունեն սովորութին.
Ին օր աղքադ էր, ապրելու միչոց չուներ, կիտին հորթարած։
Դավիթ էդ ժամանագ հորթարած էր,
Սասունի հորթեր կըպահեր։
Եփ օր հորթեր կըպահեր,
Ուներ մե խատ .յընգեր՝ ճապաղչուրնցի,
Ուրանց հարևան գյուղացի, ճապաղչուրնցի .յընգեր։
Էդ մարդը .յընգեր կըճարա,
Էրկըսով մխասին հորթեր կըխառնեն .յիրար, կըպահեն։
Դավիթ .յախտ էր վըր ուր .յընգերիչ, ասում էր.
— .Յընգե՛ր ջան, ես կէդիմ քե .յընգեր նրա համար,
Օր ես պտի իմ կոպալ տնգեմ, խով տեղ քնիմ մինչև .յիրգուն,
Դու իմ հորթեր պահես.
.Յիրգուն դու ընձի .յիմցուս,
Իմ հորթեր ջոկես, տաս իմ .յառնչ ու էրեանք գեղ։
— Ախպե՛ր ջան, ընձի բան մը՛ սա,
Ընձի մի՛ ափա,
Վաղդա էղի, ինչ օր կըսես, ես կըկատարեմ։
Էդպես էլ էդ մարդիկ նրկուս .յընգեր ին։
Դավիթ կըպատկեր, կըքներ,
Էդ մարդ ուր հորթեր կըպահեր։
Ամեն օր էդ սովորութչուն էդպես էր,
Ախպեր, տղա, կին էդ ֆորմի։

3. Էն մե օր Դավիթ գնաց չոլ,
Տեսավ օր՝ .յընգեր չկա։
— Ա՛յ մարդ, ես իմ .յընգեր ի՞նչ էղավ, .յուշացավ։
Մե .յըրոպե, մեզ ժամ, էրկու ժամ,
.Յընգեր էկավ, գեղից էկավ։
Դավիթ կոպալ քաշեց, խոսավ.
— Տո՛, ա՛յ մարդ,—ըսեց,—
Իմ քնու ժամանագ .յընցավ։
Ինչո՞ւ,—ըսեց,—.յուշացար, օր ես պտի քնիմ։
— Ա՛խ, Դավի՛թ ջան,—ըսեց,—ընձի կըներես,

Էսօր,—ըսեց,—գեղ մնալ կար,
Խրրիսա ին գրած, աչքս էլ մնաց մնջ, չըկերա։
Քու .յախտուն,—ըսեց,—հորթեր .յուշացուցի՛ ու չըկերա,
Հըլա մնալ չրթաղած է, օր խրրիսան ուտեն։
Էկա,—ըսեց,—էդ խրրիսի խամար .յընգա նու։
— Յա՛,—ըսեց,—օր խրրիսա կա, արի՛,—ըսեց,—
Բան չկա, .յըսօր էլ չրնիմ,
Կէթամ գեղ, խրրիսա կրբերիմ։
Օր էդմալ ա՝ հորթեր մըղա՛թ կեցի։
Հորթեր Դավիթ Քողեց .յընգերնջ և .յինր գնաց։
Եփ օր գնաց, գնաց ճատագնջուր.
Տեսավ օր, իրոք, խրրիսեն պատրաստ ա,
Ժողովուրթըն լցված, ժամուց .յեկած, մնալ խորած՝
Նստուկ խրրիսա յա կուտեն.
Կարաս լիք խրրիսեն գրուկ ա։
Անձեն ու ձու,
Վայրենի մարդ, ոչ բարով, ոչ բարի լուս, ոչ մի բան,
Խաստավ, քեզի էդկից կարսի մեջ՝ կանթներ.
Կոպալ դանեց էդ մարդըն էդ կանթներուց,
Վիրցուց դրեց քեվի վրեն ու գեղից անձենձու .յեկավ ու
քելեց։
Բերավ, խաստու .յընդերնջ։
Էկավ խաստավ .յընգերնջըն,
Տեսավ օր՝ .յընգեր նստի, գիլաս։
— Քու տուն քա՛նդվի,—ըսեց,—.յընչի՞ գիլաս,—ըսեց,—
Խրրիսեն բերեր իմ, խո՛ փիրըդ չրթափա՞վ։
Հանգը՛,—ըսեց,—ա՛ռ, կեր։
— Տո՛, Դավի՛թ ջան,—ըսեց,—ես չիլամ ո՞ն լա,
Դեվլեր էգան,—ըսեց,—գնրկին իմ հորթեր տարան։
— Իմա՞լ հորթեր տարան։
Ըսեց.—Հորթեր տարան։
— Բա՛ն չկա,—ըսեց,—տարան՝ տարան, կէթամ բերիմ,
Դու արի՛,—ըսեց,—խրրիսեն կեր։
Կարաս դրեց Դավիթ .յընգերնջ .յառեջ.
— Դնրվի՞ տարան։
Ըսեց.—Էս խըրն մըլում ա,—ըսեց,—
Շաղն,—ըսեց,—գրե, հըլը՛ իդ մըլում ա,
Էմալ քշին, տարան տարնուվեր։

— Թև՛,—ըսեց,—դու խրխիանն կե՛,
Մի՛ լա, ես հա՛նդա խատա, կըբերեմ։

Դավիթըս սկսեց էթալ հորթերու ետևնապարով։
Շատ գնաց, քիչ, ատոված գինա,
Գնաց խատավ մե հէրի դուռ,
Տեսավ օր՝ մե հատ խազան գրած ա,
Հորթեր լցած մեջ, կրակի վրեն
Ու հորթերն ա կըխաշեն։
Տեսավ՝ քառասուն դեվ նստած խազանի չորս կողմ։
Կոպալ քաշեց, ըսեց.
— էդ ի՞նչ կէնեք,—ըսեց,—
Խա՛ցն ու գինին, Տէ՛ր կենդանին,—ըսեց,—յիրար չիգա՛ք,
Ամեդուդ մե կոպալ կըզանեմ։
Խատավ ու բռատց։
Էգոր ձինից էգոնք խակի տեղից չըշարժըվան.
Ամեդուն մե կոպալ զանեց,
Պատըցուց էն յան, ատակըցուց,
Բերեց էդ մարդկանց ականջներ կտրեց,
Էկեց մե հատ սալիմ՝ տակ
Ու խազան վերցուց կրակի վրավեն,
Վերցուց, դրեց դեն։
Ըսեց.—Յավա՛շ, մանիմ, տեննամ,—ըսեց,—
Էս քառասուն մարդ, էս դեվեր էսոնք ի՞նչ ունեն,
Էս տեղ ինչո՞ւ յա բնակըռած։

Մտավ էդ հէրի մեջ,
Մե հատ մեծ ջաղացի բար կեր դեմ,
Վերցուց, լորդեց դեն,
Մտավ տեսավ օր՝ ի՛նչ տեսնի.
Հէրի չորս կողմ ոսկի յա գոքսուդ,
Էս կողմ՝ ճոխ ա գոքսուդ,
Էն կողմ խալու-խալիչա յա գոքսուդ.
Ու էդ մարդըն գլոխ ատրավ, բերեց, ըսեց.
— Մատուն էլ բյասիբ ա,
Ես բռատվ,—ըսեց,—գըհարատացում։
Էդպես մտածեց ու մյուս դռներ բացեց.
Մեկ փորը դուռ կար, էդ էլ օր բացեց՝

Մե հատ թուխիկ չկա՞ր կապուղ.
Չուտե՞ս, չխմե՞ս, էդ թուխին քամաշա էնես,
Քյաչնել թուխիկ ա՝ ձի։
Դավիթին օր թուխան տեսավ, կատղութիւն բռնեց,
Փոխուռ ուվեց վրր բերնին ու բառբառն դրեց.
Ըսեց.—Խա՛ղն ու դինին, Տե՛ր կենդանին,
Ո՛վ օր,—ըսեց,—իմ քուռկուն ձեռ տա,
Մե կոպալ կրզնեմ,—ըսեց,—
.Յէվել չըզանեմ.—
Ըսեց.—Եաղիենն, էս դոլմաթ, ինչ օր կա՝ ձեզի եղի,
Քուռկուն,—ըսեց,—ձեռ չիտա՛ր, քուռակն իմն ա։
Չանեց, զարկըվեց, կրկնեց մե տաս անգամ էտի։
Դառցավ .յինք .յերան մտածեց.
— Ա՛յ մարդ,—ըսեց,—ես բոռռամ, էս ի՞նչ ա,—ըսեց,—
Ոչ մի բան չկա, ես վի՞ր խտան ա կրկռվիմ։
.Յելնեմ,—ըսեց,—էթամ,
Ո՞վ իմ քուռկուն ձեռնես կառնի։
էթամ,—ըսեց.—բան առնիմ գամ, քուռակն էլ առնիմ։
էդ մարդըն .յելավ,
Ինչ օր էդ դռներ շինուկ էր,
Քարերն էլ ավեց դեմ, սարբեց
Ու հելավ խաղան զռնեց կոպալ, զռնեց կռնբռներ,
Դրեց վրր քեհեն.
Քառասուն կռնբից մե հատ խաղան՝ պղնձից,
Եսիմ ինչ էր, մեծ դին ուներ,
Վերցուց ու էկավ։
էկավ տեսավ օր՝ .յրնգեր լեն գիլա։
— Ախպե՛ր ջան,—ըսեց.—.յրնչի յա գիլաս։
Ըսեց.—Քու տո՛ւն բանդվի, լեն չիլա՞մ։
էդ,—ըսեց,—սատկուզ հորթեր բերիր, ի՞նչ էնեմ։
— Ըր էս խըրխանն .յրնչի՞ չես կերե։
Ըսեց.—Անաղ, անեղ խըրխաս՞ կուտվի։
— Տո՛ւ,—ըսեց,—ախմա՛խ, ըր՛խ ուտիր,
էթեր գեղն էլ եղն ու աղը ուտիր վրեն,—ըսեց,—
Ես՛ կրակ չը՞նկե քու փիր։
— Դավի՛թ ջան,—ըսեց,—.յողներ՛ւզ մեռնիմ, Դավի՛թ,
Ես իմա՞լ տանիմ էդ սատկուզ հորթեր տերըրտեր էնեմ,—
ըսեց,—

Կրպանեն ընձի, բաննց նման կբաժակցուն։
— Յա՛,—բսեց,—էդմալ բա՞ն կա։
Ըսեց.—Հա՛։
— Դե՛,—բսեց,—դու հորթեր մուղաթ կե՛ց,
Ես առնիմ գնդ, բու հորթեր ցրվիմ։
Ի՞նչ ես առե աշուն, օր առա։
Ըսեց..—Մե փոցիկ, մե կոտ կսրեդ։
Ըսեց.—Էդ կորեգներ ժողվեմ, կիտամ բու կնգան
Ու,—բսեց,—գութամ, իմ հորթերն էլ առնիմ,
Հայիվ ե՞ս։
Ըսեց.—Հայիվ եմ, Դավի՛թ ջան։

Էդ մարդ .յելավ, էկավ գնդ՝ ծապաղջուբ։
Կայնավ գնդի .յորթալաղ, ձեն տվեց.
— Է՛յ, գնգացի՛ր,—բսեց,—արե՛ր, ձեր հորթեր տարեր,
Դևվեր տարած,—բսեց,—խաշխըռնած,
Արե՛ր ձեր հորթեր ջոկե՛ր, տարե՛ր,
Իմ ախպոր մե-մե կոտ կորեգ բերե՛ր։
էն մեկն էկավ, բսեց.
— Մե՛յ մարդ, էսի էն մարդն էր, օր անձենձուկ խրրխանն տարավ։
Հիմա,—բսեց,—էս էլ հորթերն ա բերե։
Դր՛, արե՛ր էքաներ, տենանը էդ ի՞նչ ա էրսա։
էկան, տեսան օր՝ հորթեր, իրոր օր, խաշուգ, լցուգ խապան։
էդ մե մարդն բսեց.
— Ախպե՛ր ջան, ազա՛, անունդ ի՞նչ ա։
Ըսեց.—Դավի՛թ։
— Դավի՛թ ջան,—բսեց,—էդ խադան լե կիտա՞ս մեզի,
Օր հորթեր տանինը,
էդ բու .յրնգերնջ լե հախ տանը։
— Յա՛,—ասեց,—մեռի՛մ ձեզի,—բսեց,—
Խազան լե ձեզի,—բսեց,—հորթերն էլ ջոկեք,
Իմ .յրնգերնջ հախերն էլ բերեք։
էդ մարդիկ Դավթի բսած կատարին.
էն հրրոպա գախ ամեգ մե կոտ կորեգ բերեցին,
Դավթի .յրնգերոջ կնգան հանձնեցին։
Խազաներ Քողեց էդ մարդըկինց մոտըն,
էկավ չուր հորթեր։

Էկավ օր՝ հրլա .լընդեր նսան դիլա։
— Ախպե՛ր, .լընչի՞ ա դիլաս։
Ըսեց.—Տնաշե՛ն, ի՞նչ էնեմ չիլամ,
Վա՛յ քե,—ըսեց,—էթամ գեղ՝ ընձի տիեն։
Ըսեց.—Ախ եմ տվե, ա՛յ մարդ, քեզի չըտիեն։
Եփ օր,—ըսեց,—քե բան ըսեն,
Վազիս Սասուն, ընձի հավար կիտաս։
Ըսեց.—Շա՛տ լավ, ախպե՛ր ջան։
Ըսեց.—Գնա՛,—ըսեց,—քու՝ ինչբան հորթիկ էր,
Էնբան կոտ կորեղ ժողվեր եմ։
Էդ մարդն դնաց գեղն,
Տեսավ օր, իրար, կնիկ ըսեց.
— Արի՛,—ըսեց,—էրկու ամիս հորթիկ ես պահես,—ըսեց,—
Ամբողջ տարվա հահն առավ՝ տվից էդ մարդու։
Էդ մարդ նստավ, ուրխըցան,
Դավիթ հորթեր բշեց, բերեց գեղն։

Հիմա էսոր հորթեր, անտերներ շուշուա չըբերեն,
Վռազ ա, բշա, գուբա օր խասի գեղինը,
Օր ձեն տա, էդ մարդիկ .լելին էթան խնգինա բերեն։
Որ հորթիկ օր ետ ղընգնի,
Պոչից կըվերցու, լորդա։
Մինչև հառավ գեղինը, հորթերու կեսըն սատկըցուց։
Հորթեր փռեց ջաղըն ու գնաց։
Գնաց, մեյդան կայնավ, բոռուն դրեց.
— Ա՛յ,—ըսեց,—գեղացի՛ք, .լելի՛ք արեք,—ըսեց,—
.Յելի՛ք արեք, ձեր հորթեր տարե՛ք, ու,—ըսեց,—
պատրաստվեցե՛ք։
.Յէգուց,—ըսեց,—ուրաբանչուր տուն մե բեռ օսկի բդի տամ
ուրանց։
Էթանք,—ըսեց,—խնգինա բերենք։
— Ա՛յ մարդ,—ըսին,—Դավի՛թ ջան,
Բա կես հորթեր .լո՞ւր են։
Ձլանքնոսի պատասխան էկավ.
— Դավի՛թ ջան, մեռի՛մ քու .լոդներուն...
Ըսեց.—.Յընգավ ետ, պոչից թելեր եմ,
Գնա՛ ջանդմի, եսիմ .լո՞ւր ա։
Վերջապես, էդ մարդ Դավիթեն հորթեր ցրվեց։

Ա. Սաքախտան .չկալավ Քեռի Թորոան, էգավ.
— Հա՛,—բանց,—Դավի՛թ ջան,—
Էդ ի՞նչ բոռբոռուն ես գրե,
Էդ ի՞նչ ես տեսե։
— Քեռի՛,—բանց,—գացեր եմ դևվերուն բաշաներ եմ,
Դևվերներուն խաղինա կա,—բանց,—
Խնդինեն,—բանց,—ձեզի.
Էն սատվա՛ծ վկա, երկի՛նք, գետի՛նք,—բանց,—
Իմ Քուռկուն ձեռ չիտան,
Սա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,—բանց,—
.Յերսում կուտեմ,
Եթե իմ Քուռկուն ձեռ տված,
Կոպալըմ կըզնեմ,—բանց,—
Ամեկուն մե կոպալ կըզնեմ, կըսպանեմ բոլորին։
Բանց.—Դավի՛թ ջան, մեռնի՛մ քե,
Քուռակ բե՛զի յա, Քուռակ բե՛զի յա,—բանց.—
Դի՞ր ա խնդինեն։
Բանց.—Կապուտ սար։
Սաքախտան Քեռին .չկալավ գետի մեջ։
— Տգե՛ր,—բանց,—իմ Դավիթին .յանգաչ էրե՛ր։
Ամեն մի բեռ, ի՛նչ ունիր, բարձե՛ր,
Ձեր ջվրներ թալեր գարդագ ձեր եզներու վրեն,
Ձիանքներու վրեն, ջորիքներու վրեն,
Էթանք, տեսնանք Դավիթ մեզի դի՞ր ա կըտանի։
Վերջ, գեղով .չկան, Դավթի խետ գացին։
Գացին խառան էլի նորից էդ մնդազեն.
Դևվերներ ուռած ա, մեկ-մեկ եղած սար, որ սատկըցուցեր ա։
— Դավի՛թ,—բանի,—էն ի՞նչ են էնդիներ էնտեղ։
— Սատկուգ դևվ ա,—բաում,—քելե՛ր էթանք։
— Չէ՛, Դավի՛թ, էնդիներ մեզի կուտեն։
— Տո՛, ձեր տո՛ւն բանդվի,—բանց,—
էնդիներ .յերեկ եմ բաշանեն, սատկուգ են։
Քելե՛ր,—բանց,—Ճար Կուտան, Ճար Կուտան, Ձենով Հովան. Ճնճղաթեվիկ,
Քելե՛ր,—բանց։
— Չէ՛,—բանց,—Դավի՛թ ջան, էդիներ մեզի կուտեն։
— Դե՛, օր կուտեն, դու կայնի՛ր պնտե։

Դավիթը գնաց խաասալ,
Էդ ինց պոշերուց բանենց,
.Յանդուդ ձորունը լորանց, կորցուց, էկավ.
— Ը՛ր, քեզի՛ք։
Գացին խաասան օր՝ օղերի գնվ չկա։
— Ը՛ր,—ըսենց,—էսի քար ավուկ ա մաղազի դեմ,
Թալե՛ր դնեն։
Մոտեցան, գնդով ճրճըցուցին՝ չկըըրցան։
Ըսենց.—Գացե՛ր դնեն, տեսնա՛մ։
Գացին դնեն,
Դավիթը բաշնց քարըն, լորդնց դնեն, մտավ
Ու կաղաղավ ու էլի բոռբռուն դրնց,
Ըսենց.—Աստվա՛ծ սիրող, խաղինենն ձեզի,
Իմալ փայ կէնեք, նս տեր չեմ,
Բայց իմ Քուռիս Ջալաթուն ձեռ տվեր եր,—ըսենց,—
Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,—ըսենց,—
Նս մե կոպալ կըղանեմ բեզի։
Քեռին էկավ էն յանենն։
— Դավի՛թ, Դավի՛թ,—ըսենց,—մի՛ ծոի,
Քու Քուռակ բումն ա։
— Չէ՛։
— Դավի՛թ ջան,—ըսենց,—ձեր ասքին,
Քու օղրմած հոր, քու ապեր ձի չըպրտոցուցեր.
Էդ Քուռակ գինաս հըմա քե կըպրտոցո՞ւ,
Օր,—ըսենց,—բոռբռուն դնես։
Ըսենց.—Ը՛ր, ի՞նչ էնեմ, Քեռի՛։
Ըսենց.—Լեա,—ըսենց,—ձեռ ճրխտա մըչ միչքին,
Տեննամ,—ըսենց,—ի՞նչ թավուր բուռակ ա։
— Քեռի՛ ջան,—ըսենց,—շա՛տ լավ։
Մտավ Քուռկուն բաշնց, հէրից խանենց,
Չեռն օր ճխտենց, հուփ տվենց,
Դազանի ուժ ուներ Դավիթին,
Բայց Քուռակըն .յավելի մեչքըն բանցըրցուց։
— Ա՛յ, Դավի՛թ ջան,—ըսենց,—խալա՛լ էղի,
Գինամ օր Քուռակ բումն ա,
Փրկիր մեր աշխար։
Քեռին խրվանություն տվեց,
Դավթի ճակատ պաքենց,



Քուռկուն քաշեց, խանեց,
Ու խնդիրներն բառացան։
Է՛մալ հէրըն դարտրկեցին սաղ գեղ,
Մէկ հատ կոտրուկ կապկի էլ չրթողին,
Վերցին ու առան էկան։
Սասուն լցվավ փողով։
Սասուն աշխատանք՝ լա՛վ, ծո՛վ։

5. Էտոնց դեն Դավիթըն էլ արվեստ չունի,
Էլ հորթիկ չը պահա, Քուռկին ու։
Քուռիկ կրխանդի ուրին խամա,
Ուրին կէթա ավրդուշ էնելու։
Մեկ օր ավրդուշ կէնա, էրկօր ավրդուշ կէնա,
Ինչ օր գընկի ձեռ՝ կըտրա։
Ինչ օր գընկի ձեռ,
Բոլորովին Դավթի ձեռնեն մե ՚րա չը պրծի։
Մե օր էլ Դավիթըն լեր ա կրխփա.
Լեռըն լա՛րեց,
Բերեց կոխեց մե հատ Պառավու կորեկի արաի մեջ։
Կարեկն է Պառավ քաժա ջրե.
Ձեն քշեց կորեկի արաի մեջ,
Էնեմա՛ էրեց էդ խեղճ Պառավու կորեկի արաբն,
Տողըն խանեց, կորեկ ծածկեց։
Պառավ եռնվանց տեսավ,
Օր Դավիթըն մտե ուր կորեկի արաի մեջ։
Բումբան քաշելին, էկավ խաստավ Դավթին։
— Տո՛ Դավիթ,—բսեց,—
Հարա՛մ ուտես դու, Դավի՛թ, էդ լորերու տեղ։
Դու,—բսեց,—էն խոր որդին դրի էղի՞ս.
Ես,—բսեց,—օխտ տխմիդ ունիմ՝ կուտ,
Ու լրմեն նստուկ տուն՝ անշեր, անթումբան։
Անաստվա՛ծ, իմ ապրուստ էդ մե կորեկի արան էր,—բսեց,—
Դու էլ էդմալ ավեցիր գնտին։
— Յավա՛շ, նանե՛ ջան,—բսեց,—
Ի՞նչ ա էղե րու կորեկի արտին։
— Տո՛,—բսաց,—էլ ի՞նչ էղի, անաստվա՛ծ,
Դու, օր մարդ էր,—բսեց,—
Յելի՛, բո հոր տեղ բռնա,

Օր քու խեր՝ Մովսաարից մինչև էքա խասի Մարր,
Ամբողջ էդ քո խոր երկիրն էր,—ըսևց,—
Ուրին առանձին որսասար կա,
Դու,—ըսևց,—էկեր ես որս կէնևս։
Ըսևց.—Նանե՛ ջան, նանե՛,
Ես,—ըսևց,—էդ բան չըլևեր եմ,
Հըլա մատաղ եմ, բան չըդինամ.
Որտե՞ղն ա մեր էդ որսի սար։
— Գնա՛,—ըսևց,—Քևռիդ կըսա։
Ըսևց.—Քևռին կըսա՞։
Ըսևց,—հա՛։
— Դե՛ լավ,—ըսևց։
— Քու,—ըսևց,—հորաքսևր Օհան, Քևռին կըսա։
Էդ մարդըն.—Դե՛, նանե՛ ջան,—ըսևց,—մեռնի՛մ քև, նանե՛,
Էսա ճանկ օսկին քև,
Քու ձևն կտրա, ես կէքամ։
Ճանկ օսկին տվևց նանեին,
Նանեն ձևն կտրևց։
Էկավ տուն.—Քևռի՞։
Ըսևց.—Ի՞նչ ա, Դավի՛թ ջան։
Ըսևց.—Քևռի՛, քև օր մեզի նախկին որսի սար կա,
Ընչի՞ չըսևս, էս էքամ որս էնե՞մ։
— Է՛, մեռնի՛մ քև, Դավի՛թ ջան,—ըսևց,—
Էն ժամանակ .չընցա՛վ, գնա՛ց,
Մարա Մելիքն .չելավ, լաո՛ ջան,—ըսևց,—
Մեր որսասարն էլ քանդե՛ց, պարիսպներն էլ քանդե՛ց,
Մեզն էլ՝ ննջարկից ուրի՛ն,—ըսևց,—
Է՛լ չկա մեզի որսասար էլ...
— Չէ՛,—ըսևց,—վեր կա՛ց .յառավոտ, էքանը որսասար։

6. Էդ մարդիկ են մյուս օր
Քևռու խևս, խոբախապր խևս՝ Օհանի խևս,
Յնելան գացին որսասար։
Գացին որսասար, պրտտուեցին,
Էդ սարեր ամայի ա, ոչ մի բան չկա։
Էդ մարդիկ օր էդտեղ պատկան հանգստանալու,
Դավիթ իշևց օր՝
Էդտեղ սարի պոխրն մի լուս կերևա,

Ուր աչքին լուս կերևա, ուրիշի՝ չէ։
— Քևռի՛,—բսեց,—էն ի՞նչ լուս ա։
— Է՛,—բսեց,—մեռնի՛մ քև, Դավի՛թ ջան,
էնի,—բսեց,—Մարութա Բանձրը Աստվածածին ա,
էնի,—բսեց,—մեր, քու պապկան, քու խոր վանքն ա։
Մսրա թաքավէրն օր .յելավ՝ էդ վանք քանդեց։
Բսեց.—Ի՞նչ կապ ունի վանքի խետ Մսրա թաքավէր, Քևռի՛։
— Դե՛,—բսեց,—էտի քանդեց, լաո՛, ես ի՞նչ անեմ, Մսրա Մելի՛ք։
Բսեց.—.Յառավոտ էվանք, էդ վանք տեննանք։
.Յառավոտ .յելան, գացին առի գլոխ,
վանքըն տեսավ, բսեց.
— Քևռի՛, էս վանքից ես դուս չիգամ բոլորովին։
Էստեղ,—բսեց,—բևդնի գուզիմ քառասուն խատ վարպետ, .յիրան բանվորներով.
Քառասուն օր էս վանքըն կանգուն տեննամ,—բսեց,—
Ինչպես էդն իմ խոր ժամանակ։
Էնպե՛ս բոլ վանքըն Նորից կանչրնա.
Ու վանքն, ևկեղեցին քահանաներով բսկանն էկեսեռներ բսել։
Էդ մարդըն սկսեց վանքըն շինել։
Հրաման տվեց, չի .յելի, առից չիջավ,
վանքըն շինե՞ց, պրծա՞վ վերջտեղս։

7. Վանքըն օր շինեց, պրծավ՝
Խաթար տաբան Մսրա թաքավորին։
— Մսրա թաքավո՛ր,—բսին,—քու տո՛ւն քանդրվի,
Աստուն Դավիթ դուս էկե,
Խոր վանքըն շինե, կայուն կայնըցուցե
Ու .յիներ ուրին թաքավորություն ա համարում։
— Դե՛ օր,—բսեց,—էդպես ա,—բսեց,—
Էս քանի տաբի մենք Աստեռան խարջ չըվերցըրևր ենք,
Էս ևրևք տաբի չըվերցըրևր ենք։
Խանչևց,—խոզրպագի՛, Սուդի՛, Չարխադի՛.
Արե՛ք,—բսեց,—գացե՛ք Աստուն, մեր խարջըն բերեք։
Եփ օր էկան էդ մարդիկ խարջ հավաքելու,
Աղ ու հացով, ամեն բանով սաստունցիք .յելան դեմըն։
Դավիթըս ուրին խամա ՝ռրս ա կէնա։

Դավիթ ուրին խամա ՝ի րա ա կէնա,
էլման բևրևց, քշևց լորևր,
Բևրևց, քշևց, կոխևց Պաղվու արաի մէջ։
Պառավ տեսավ՝ էլ լորևր բևրևց ուր արաի մէջ.
Էդ ժամանագն ա,
Օր էաձնք կուտրն գրած ա, ոսկին կրչափին,
Իրևք տարվա խարջըն ա կուգին Սասնա մեծ անից։
Պառավ տեսավ, էկավ ըսևց.
— Դավի՛թ, Դավի՛թ, առ՛ խելաբար, խելառ Դավի՛թ.
Էն խոր որդին էդի՛,—ըսևց,—
Էլի մատ՚ր իմ արաի մէջ։
Էլի ջրևր ևնք, կայնևր էր,
Էա ի՞նչ ա կէնես իմ արաի գլոխ,
Տո՛, մարդ ես,—ըսևց,—գնա՛, ՝ի ա՛ռ,
Մսրա Թաթավևր ևկև ձեր տուն,—ըսևց,—
Օխտ տարվա խարջ ա գուգա,
Ոսկին Թեղած ա, կրտանին,—ըսևց,—
Դե՛, ընդրա դևմն ա՛ռ։
— Տո՛, Նանե՛ ջան, Նանե՛,—ըսևց,—
Քու .յոդնևրուն մևռի՛մ,
Ես էդ նևր ա դիմնամ.
Ի՞նչ Մսրա Թաթավևր,
Դի՞ր է, ի՞նչ ա կէնին։
Ըսևց.—Քու .յաչքն ա դ՚անին։
Էկած ձեր տուն,—ըսևց,—խարջ ա գուգին,
Ու էսբան էլ ախճիղ կրտանին գնի՛ր,—ըսևց։
— Տո՛, Նանե՛ ջան, ես նևր ա դրլսիմ.
Դի՞ր ա մրկա հիմա։
Ըսևց.—Ձեր տուն։

Քշևց, էկավ, ձին .յախտա կապևց,
Մտավ, տեսավ օր՝
Մեծ-մեծ մարդիկ նստած ոսկի ա կրչափին։
— Վե՛ր կացեք,—ըսևց,—տեղին։
Ըսին.—Ի՞նչ կա։
— Էա,—ըսևց,—իմ խոր ոսկին ա,
Ե՛ս պտի չափիմ։
Էդ մարդիկ, Թե.

— Քեռի՛, էս ծառն տա՛ր, նռեցո՛ւ,
էսի լավ բան չէ, նկի էառնդ կրճքիճքիա.
Էս ի՞նչ գուշն մեր գործից։
— Ա՛յ մարդ, ի՞նչ լավ բան չէ,—ըսեց,
Վի՞ն ա կըտանիք,
էտ օսկին վի՞ն ա կըտանիք։
Ըսեց.—Կըտանինք քու ա՛չքն հանողին՝ Մարա Թաթավորին։
Ըսեց.—Ես Թաթավո՞ր-մաթավո՞ր չըճանչնամ։
Կոտրն վերցուց, զարկեց խոզրադու գլոխ չարտեց,
Կոտ շըփրռուց,
Պատրն զընգըզալին տանուն .ելավ նրդիք ու գնաց,
Ջուր մըկա կէթա։
— Գացե՛ք,—ըսեց,—ձեր մեծ Մարա խե՛ր անիծած էղի,
Ես ոսկի չիտամ,—ըսեց։
Գացե՛ք, ըսեք, օր Դավիթ ձեզի խարջ չի տա.
Դու ապրե՛ր ձեզի, մենք՝ մեզի,
Ի՞նչ կապ ունիք մեր օսկին տանիք ձեզ։
Էտ մարդիկ արևնքրթաի փախան դիպա Մարր։

8. Եվ օր էս յանեն գացին էդ մարդիկ,
Կնկտիք թաղալու ին բռնած կրսին.

— Ջա՛ն, ջա՛ն,—ասում ին,—
Մեր Խոզրադին, Սուդին, Ջարխադին գացին Սասուն,
Օսկին բերեն բեռներով,
Քառասուն կով կթան բերեն,
Քառասուն էլ՝ աղմարան ախճիգներ բերեն։

Էն յանեն օր էկավ,
Էդ՚ներ արդեն էդ.
— Օսկին շարենք մեր ճակատին,—
Ըսկըսին պարել նորից։

— Է՛յ Խոզրադի, է՛յ Ջարխադի,
Էս յանեն կէքիք գել ու գազան,
Էն յանեն գուրաք քրց շուն վազան,
Բերնե ձրգի պըրծն չորքրնի բան,
Էտ ի՞նչ բան ա ձեր գլուխն .ելել։

— Տո՛, քուխօղլու դիլա՛նը,—ըսեց,—
Հալա՛ դու ձեր մարդիկն եր տեսե,
Հալա՛ Սասնա ծռեր չըտեսեր եր։

Էդ մարդիկ գացին, .յրնգան թաքավորի .յոտր։
— Թաքավո՛ր,—ըսին,—Սասնան մի ծուռ ա դուս ևկե,
Ոչ տեր դինա, ոչ ախ, ոչ երկուղ,
Էն տեսակ,—ըսեց,— տվեց, գլուխ չառաեց։

9. Մարա թաքավոր հավար էգրեց,
Ամբողջ բանակին հրաման տվեց,
.Յիտասան տարին ժողվեց մինչև տասներեք։
Ու զորք կապեց Սասնա Դավթի վրա։
Էկավ, նստավ Սասնան դաշտ։
Սասնան զեռրն կըտրըվավ՝ ճապաղչուր։
Եփ օր ջուր կարավ,
Քաղաքացիք մանցին գարմանք.
— Էս ջուր ընչի՞ կտրավ։
.Յելան իշկին օր ինչ.
Բանակ ա էկե նստե վըր ջրին։
Հայ-հայ .յրնգավ էդ ժողովրդի մեջ։
— Բևե՛ր,—ըսեց,—օսկին տանք, ինչ օր գուզեն,
Ադաչենք, պաղատանք՝ մեզի սրի չըթաշեն։
Դավիթն օր լսեց էդ բան, ըսեց.
— Խորհրդարդ Օհա՛ն և Քեռի Թորո՛ս,
Էդ ի՞նչ ա կէնեք։
Ըսին.—Արե՛ր, օսկի տանք,
Էթանք աղաչենք, մատաղ կտրենք,
Աղ ու խաց տանենք .յառեջ ուրանց,
Օր մեզի սրի չըթաշեն։
Ըսեց.—Ձեր խե՛ր չի։
Էդ ես համ էրթ, ես էլ պատասխան կիտամ։
.Յառավոտ ես գելիմ, կէթամ Սասնան դաշտ,
Ես էտենց պատասխան կիտամ։
Էդմալեն Դավիթ վեր կացավ, Քուռիկրն խնծավ։
Եփ օր Քուռիկրն խնծավ, զենքեր կապեց,
Էդ ժամանագ Քեռին .յնլավ, կաչնավ։
— Դավի՛թ ջան, Դավի՛թ,—ըսեց,—
Դու էկեթաս պատերազմ,

Էդմալ գործով պատերազմ չէղի։
— Բը ի՞նչ,—ըսեց,—Քեռի՛։
Ըսեց.—Դու արի էքանը ևկևղեցին, քեզ մատաղ էննենք,
Արնով քո լոխկըցունը,
Ու գնա,—ըսեց,—Տեր խըտ քեզի։
Նոր բևրեցին Դավըթին քառասուն էրինչ մատղեցին,
Էդ֊ներ արնով Դավթին լոխկըցուցին,
Դավթի աջ բազկի վրևն Մսե խաչ կար.
Էդ խաչն էլ օշնեցին գ՚հաներ,
Ու Դավիթը խնծալ ուր ձին,
Կապեց Թուր կնծակին
Ու .յելալ Սասնան դաշտըն գնաց։
Սասնան դաշտըն օր գնաց էդ մարդ՝
Սկսին պատերազմ։
Դավիթըս խամ էր, սկսեց ջառիկլ.
Հախ֊նըհախ կըջառիա,
Աջ ու ձախ կըջառիա,
Ոչ մի բան չըպրծնի։

10. Դու մ՚ըսա, էդ Մսրա Մելիքըն էկեր ա հետ տեղից,
Հիմա քուն ա մտե։
Էդ մարդըկաց մեջը մի մարդ կար,
.Յելալ Դավիթի դեմ.
— Դավի՛թ ջան, Դավի՛թ,—ըսեց,—
Մևռիմ քև, Դավի՛թ,
Դու լսիս իմ ծերունու խելքին,
Մե անգաջ էրա՛ ընձի։
Ըսեց.—Ի՞նչ։
Ըսեց.—Ի՞նչ ասած էս անմեղ մարդիկ բեզի,
Օր կոտորես հախ֊նահախ։
Արի՛,—ըսեց,—բալա՛ ջան,
Վեճ ունիս՝ թաքավորից ա՛ռ։
Մեզի ժողվե, բերե,
Ոչ մի բան մենք մեղ չունինք,
Մեզի բերե բառեղ,—ըսեց,—
Իզուր ընչի՞ դու կըջառտես։
— Բա,—ըսեց,—.յո՞ւր ա ձեր թաքավէր,
Օր բերե ձեզի ու .յինք ըսկի չէրևա՞։

Ըսեց.—Է՛ն բանձրը վրան օր՝ ոսկէ խնձորն էլ գլոխ
զարկուկ ա.
Էնի,—ասեց,—մնջ քնուկ ա։
Էն ծուխն օր գէնի,—ըսեց,—
Ասո ծուխ չէ, ուր գոլոշին ա բերանի։
— Դե՛,—ըսեց,—էդմալ ըսե՛ք,
Ես կէթամ ընդոր կըրնցում հավիտենական։

11. *Քշեց ձին՝ կայնավ Մարա թաթավորի չայրի դեմրն։*
Ջասավոներ, ծառաներ կանուկ ին,
Օր տեսան՝ զարուրան։
Ըսեց.—Ձե՛ն ովկը.
Ինչո՞ւ է բերել խըլղին էս անմեղ՝
Էս դաշտին արյան խըմուն,
.Յինք,—ըսեց,—քուն ա մտե։
.Յիմացուցե՛ք,—ըսեց,—ձեր Բշնամուն, իմ Բշնամուն,
Թե մախ չունի՝ մախ եմ ես,
Թե քուն գուզա՝ հավիտենական քնցում ես։
Էդ մարդիկ գացին .յիմացուցին.
Ջը.յիմնա էդի, քնու մնջ ա։
Բերեցին գուբընի խոփ դրեցին կրակ,
Կարմըրավ՝ զնրկեցին կըրընկին, բաց կըրընկին։
Շըռաւալ մե կողմի, քնավ.
— Օ՜ֆ,—ըսեց,—էս անիծուկ լվեր չըթողեն մարդ քնի։
Նորից բերեցին խոփ դրեցին կրակ,
Չարկին մերկ թիկընքին։
Օր զարկին թիկընքին, էդ մարդըն ըսեց.
—Ա՛յ մարդ,—ըսեց,—էս ի՞նչ բան ա,
Մոծակներ կերան ընձի։
— Տո՛ր, քու տո՛ւն քանդըվի,—ըսեց,—ի՛նչ մոծակ,
.Յելի՛ր,—ըսեց,—Դավիթն ա էկե։
Էդ մարդ .յելավ, նստավ մրջ վրանին,
Իշկեց՝ Դավիթ վըր ձիուն,
Կամեցավ փչով Դավիթին ձիու վրավեն թըռցուցեր։
Իմալ օր փչեց՝ Դավիթ .յիրար չէկավ,
Քառասուն զրմշու ուժ պակասավ մարդու մոտեն։
.Յըզգաց ուր մախ։

— Է՛, — ըսաց, — Դավի՛թ, Դավի՛թ, — ըսաց, — արի՛, .յիշի ձիուց,

Արի՛, .յիշի ձիուց,
Ուտենք, խմենք, կովինք.
Աստված յա՛ք տա, յա՛ ընձի։
— Լա՛վ, — ըսաց։
Ձիուց .յիջավ Դավիթ, սեզան պատրաստ էր։
Դու մի ըսար, էդ կախարտըն խալին փռև ծածուկ խորի վրա։
Դավիթ .յիջնելուն, օր պոի մոի չա՛դըր,
Պրծավ խալուց ու գնաց քառասուն դյուզականաց խոյն .յընկավ։
— Հա՛, հա՛, հա՛, — ծիծղաց դաժան ֆաթավիր,
Դնա՛, փախ խորու մեջ, — ըսաց, —
Էկև .յո՛ւմ վրա յա ֆուր կըբանցու։
Դավիթ ըրև մնա խորու նե։

12. Ձինով Օվան դիշեր էրագ տեսավ։
— Հա՛յ, հա՛յ, — ըսաց, — էս ի՞նչ բան ա.
Սաանան աստըղն, — ըսաց, — խավարեց,
Մարա աստըղն, — ըսաց, — պայծառ էր։
.Յելավ. — Կնի՛կ. — ըսաց, — .յելի՛, մեր Դավթին բան էղավ։
— Ա՛յ մարդ, — ըսաց, — դու էստեղ կըքնի՛ս,
Էրագ ուրիշի կըտեսնի՞ս, քու տո՛ւն քանդըվի։
Խորոխպեր գելնի, կնգան .յանգամ չէնա,
Կըխեծնի ձին։
— Ձի՛, — ասում ա, — կարմի՛ր ձի,
Ընձի ի՞մ կըխաստուս Դավթի կովին։
Ձև կըզանա միջքին, ձին տայող չիտա։
Սեվ ձիուն օր կըտա, սեվ ձին.
— .Յոտքդ դնես զանգուն, — ասում ա, —
Մեկըդ շոշես վրես,
Քեզ կըխաստում Դավըթի կովին։
Էդ մարդըն գելի, նատի ձին,
Գուբա Սաանա տարի գլոխ օր՝
Սաանան դաշտի մեջըն ձին անտեր կըպատտա՝ էդ Քուռիկի Ջանյատին։
— Վա՛յ ու վա՛յ, — ասում ա։

13. Քառասուն գրմշու կաշի կըփաթա ուրին՝ կըպրով,
Կըպատրաստա, օր բռռալուս չըճղի
Ու կըրռա.
— Դավի՛թ հե՛, հե՛, որտե՞ղն ես,—ասում ա,—
Ձեն տո՛ւ Մայրամ Աստվածածին,
Խաչ, ու խաչ վրը ու աչ թևին,
Ինչքան հանդուգներ էղին, դուս գնենաս։
Գրուգրուալեն ձեն կէթա, կըխառե Դավիթի .յանգաչ։
— Ա՛յ մարդ,—ասում ա,—էս ի՞նչ ձեն ա սարի պլխուց գալա,
Երևի,—ասում ա,—իմ խոռոխպերըն ա, էկավ էառեն կըրռա՞։
Մեկ էլ անգաչ կըղնա,
Տեսնա օր՝ իրոք, էղ ձեն կրկնվավ։
— Հա՛յ, հե՛յ, Դավի՛թ,—ասում ա,—
Խանչա՛ Սուրբ Աստվածածին,
Ջու խաչ թևի, սուրբ Մայրամ Աստվածածին,
Դո՛ւս արի էղ հանդուգրից։
Ու Դավիթ էդեղ գելի, խաչ կըխառնա .յերևս,
Խանչա ուր կենքանի աստված
Ու ինր կըթալա ու .յինք ու .յինչ կըծըղա,
Էղ քառասուն գլեզականոց խորից կըգնա ինր,
Կըճդա էղ ամբողջ.
Չիխըցի քարըն դրավ ա էղ խորու բերան,
Չիխըցի քար կըճղվի,
Կաներ կէթա մի յան,
Կաներ կէթա մի յան,
Դավիթ գելի խորեն դուս։
.Յելի դուսըն, ձին կըբերեն խառնա Դավիթին,
Ու կըպատրաստավի արդեն ներ պատերազմի։

14. Էդի ամբա յա ասում, ասում ա.
— Դավի՛թ ջան, արի՛, նառինք նորից խաղի։
Ուառինք, խմենք, տեսնանք ո՞վ զարկըն .յառաջին։
Ասում ա.—Քո՛ւմն ա զարկըն .յառաջին։
Ես պատրաստվիմ, դու զնրկի։
Դավիթ իր ինրըն կըբռնա, կընառի,
Ու մսրա թաքավեր մրնդիլ կըբաշա

Մե համարա էրկու կիլոմետր հեռավորության վրա,
Զիով գուբա, օր գնանա,
Դավիթին տար հողի տակ։
Իմալ օր կըգնանա՝
Մուխ գնէի, կըփաթա երկինք։
— Հա՛յ, հա՛յ,—ասում ա,—Դավիթըն էդ մոլորի մեջ կըկորի։
Իմալ գննի՝ գոնե կաթըմ սրուն չըմնաց։
— Հե՛,—ասում ա,—Մսրա գոռող թաքավո՛ր,
կենդանի եմ, մեկ էլ սրի՛։
Վերջապես իրեքն էլ կըգնանե,
Իրեքն էլ՝ էդ մարդ կենդանի ա։
Դար գուբա Դավիթին։
— Մսրա թաքավո՛ր,—ասում ա,—գորն իմն ա,
Նասի,—ասում ա,—մի հատ գարկեմ քե։
Ասում ա.—Ջո՛րկ, Դավի՛թ, պայման՝ պայման է։
Դավիթն օր ետր կըբնա, օր գնրկա,
Էղեղ բուր գնէնի գեմ՝ Մսրա թաքավորի բուրը։
— Դավի՛թ, Դավի՛թ,—ասում ա,—օղնէրուդ մեռի՛մ,
Էդ մեկ ղըրըղն բախշա՛ վերև ասուն։
Ասում ա.—Բախշեցի՛։
Էդ ղըրըղն բաշխեց ասուն։
Էն մեկելըն՝ մերըն գնէնի գուս,
Ծծեր կրթնալա գուս՝ Մսրա թաքավորի կնիկըն.
— Դավի՛թ,—ասում ա,—էս ծծերով ազադակ կէնեմ,
Էս ծծերով եմ քե պահե,—
Որովհետև էտոր կաթ կերե, էլի,—
Էս ծծերով եմ քե պահե,
Ինձայ՛ էդ մե ղըրըղն էս ծծերուս,
Չէ՞ օր գու էստով ես անուտր վերցնե։
Ասում ա.—Էտ էլ խնայեցի՛ էտ ծծերուն։
Մեկ էլ,—ասում ա,—իմ գեմ գալող չէղի,
Աստված վկա՛, ցուց չկա։
Էս մե ղըրըղն բդի գնենեմ։
Մսրա թաքավորն էլ քառասուն գյազական խորու մեջ տափե,
Քառասուն հատ էլ ջաղացի քար ա դրե վրեն,
Ու էդ խոր հանդուդքին է.
Թե իմալ բդի Դավիթ գնենա։

Կէքա մընգիլ քաշա, դուքա,
Էդ վախտ Քեռի Թորոս գնէլ .յառիջ.
— Դավի՛թ,— ասում ա,— ըմալ բդի գնանես, որ Թալխից
կարի, .յիջի.
Թալեմ քաշն,— ասում ա,—
Մե գրվանքա տարբերություն բդի չտա,
Դուզ կտրես .յորթալխից։
— Քեռի՛,— կըսա,— էդմալ էլ կըգնեմ։
Ջինա՛.օր կը գնա՝
Քառասուն բար կըկդրա,
Քառասուն խալին կըկդրա,
Գիշնի էդ բարավորի գաղթից կըբռնա,
Աջից կըճդա, Թալե դնե։
— Դավի՛թ,— կըսա,— սաղ եմ, կենդանի եմ։
Ասում ա.— Ջեմ ավատում, հըլա թո՛փ տու քե։
Իմալ օր Թափ կիտա՝ կէդի էրկու կտոր։

Խորուց կըխանեն։
Ասում ա.— Դավի՛թ, բդի քաշեմ։
— Քաշա՛,— ասում ա,— Քեռի՛։
Կըբերա քաշա,
Ասում ա բառասուն փութ էն մե կտոր մեծ էր մեկից։
Դավիթ մըկռավ։
— Դավի՛թ,— ըսեց,— էս ինչպե՞ս ա պատահի,
Որ բառասուն փութ էս մե կտոր մեծ ա մեկից։
Ըսեց.— Քեռի՛, .յընչի՞ բդի մեծ էդի,
Օրովհետև ես դուզ եմ խփե։
Ըստուքին, օր էդ մարդն, դու մըտա՝ մե պլորեն ա, Թաք
տաշա՞։
Էդ մե պլոր բառասուն փութ ա։
Դավիթն ուրախըցավ։
— Մի՛ տընջըվի, Դավի՛թ ջան,— ըսեց,—
Էս շան որդին,— ըսեց,— մի պլորեն ա,
Հըլա՛ բերեք պլոր կտրենք, տենանք ինչքա՞ն ա։
Կտրին քաշին օր՝ բառասուն փութ։
Վերջապես Դավիթ սրտաբացվավ։
Ժողովուրդն .յնլան, կայնան բոլոր։
— Դավի՛թ,— ըսեցին,— մեր տերն ես,

Ինչպես օր ծառայել ենք քու խոր,
Էմալ էլ կըծառայենք քեզի։
Մեր կյանքն ես, մեր փրկիչն ես, մեր տերն ես.
Օր մեզի բոլ Թաթավորես։
Դավիթըս էդոր դեն Մսըր նստավ Թաթավորավ,
Իսկ Սասուն՝ վերդոն, Սասուն էլ՝ վերդոն։

15. Էդ համփսվըն տարածվավ ամբողջ երկրագունդըն.
Որ Դավիթ հաղթություն տարավ,
Մսրա Թաթավորին ա բռնանե,
Թարավորությունն ա տիրե։
Զևն դնաց խոտավ կապուտկյոր՝ հանդուխ խանըմին։
Մի Թաթավոր կա կապուտկյոր,
Էդ Թաթավորի ախճիղըն՝ հանդուխ խանըմ է անուն,
Էսնց Դավիթի համփավ,
Խոնչնց ուր Թաթավորդան պալատ աշուղին, ըսնց.
— Աշո՛ւղ ջան, .յարի՛, նամակ, նկար տամ քե,
Գնա՛, Դավիթին իմ դեղեցկությունն ղոլա՛, իմ նկար տուր,
Բոլ Դավիթ գա, ես Դավիթի խետ պառկիմ։
Էդ բան կատարես՝ քեզի մեծ գումար կըտամ։
Աշուղ նկար, նամակըն ընդունենց,
Փեղն էլ, իհարկե, ու էկավ Սասուն։

Եվ օր էկավ Սասուն,
Գնաց Թաթավորդան պալատի կուշտըն.
Տեսավ գուբա՝ ուր սաղըն ճրնդրացուց։
Կայնան, սեսան օր էս աշուղ ա։
Վազան ասին,—Թաթավո՛ր,—ըսնցին,—աշուղ մ՛ա էկե։
Ըսնց.—Բերի՛ք դնա։
Դացին.—Աշո՛ւղ ջան,—ըսին,—
Մեր Թաթավոր քե խանչա։
Ըսնց.—Խա՛, իմ գլխուն, իմ .չերևսին։
Գնաց աշուղ։
— Դը՛, աշո՛ւղ ջան, ի՞նչ կա։
Ըսկսնց հանդուխ խանըմի գովասանք էնել։
Ըսնց.—Կապուտկոդի հանդուխ խանըմ շատ գեղեցիկ,
Քեզ խանչում ա, օր ամուսնանաս նրա խետ։
— Ա՛,—ըսնց,—էս աշուղ գուզա բնձի տանի Թալա կրակ։

Տղաներ, — ըսեց, — ասոնք սիրեք.
Ամեն մեկ լըրուխ բերե՛ք, — ըսեց, — աշուղին տըփե՛ք։
Ջըրըխներ բերեցին,
Տաս խատ քոթուկ կապեցին,
Ըմա՛լ տըփեցին էդ խեղճ աշուղին.
Աշուղըն վերցին էդմալ, տարան թաթխին ջուր,
Տփին ու տարան թալեցին չոլի մեջտեղ։

.Յիրգուն, մութ ավե,
Մի խոպոտ մեկըն էկավ, տեսավ օր՝
Մի հատ խեղճ աշուղ չայրի վրեն կըտքա։
— Աչո՛ղ, ի՞նչ ա, ինչի էտենց կըտքաս, ի՞նչ մարդ ես։
Ըսեց. — Տղա՛ ջան, տըփած՝ կըմեռնիմ։
— .Յընչի՞։
Ըսեց. — Էկա ձեր Դավթի մոտ, — ըսեց, —
Խանդութ խանըմ կա՝ ընդեր գովասանք էնիմ, —
Ըսեց, — ջոջայնացավ, ընձի էտենց տփեց։
Ըսեց. — Իմա՛լ Դավթի մոտ։
Ըսեց. — Ըբա՛։
Ըսեց. — Ըստեղ Դավիթ դաս չէ։
Ըսեց. — Ըբը էդի ո՞ն էր։
Ըսեց. — Էդի Վերդոն էր։
Քու տո՛ւն քանդվի, — ըսեց, — Դավիթ Մսրըն ա թաքավեր,
Էտեղ չէ նստուկ, — ըսեց, — էդի Վերդոն ա։
— Վա՛յ, — ըսեց, — տղա՛ ջան, ընձի ա՛ռ, գնա բու տուն։
Վերցուց էդ խոտաղըն էն մարդուն,
Առավ գնաց տուն,
Կերցուց, խմցուց, լոխկըցուց։
Վերջ՝ սաղցուց, պախեց, ուժեղացավ,
.Յելավ գնաց Մսըր։

Եփ օր գնաց Մսըր,
Գնաց թաթավորի դիվան, ներկայացավ։
Էտ մարդըն պատմություն ըսկսեց խազով գովալ։
— Աչո՛ղ, — ըսեց, — էդ խազ ու մաղ մի՛ գովա։
Ըսեց. — Ի՞նչ ունիս նշանաբան էդ ազգկաց, ինչ օր անուն կուտաս։
— Դավի՛թ ջան, — ըսեց, — նկար էլ ունիմ, նամակ էլ ունիմ։

— Դը՛,—ըսեց,—տո՛ւր, տեսնամ։
Հաննց նկար, տեսավ.
Իրոք, մի գեղեցիկ Քաբատուք ախճիկ ա,
Ախճի՛կ, ի՛նչ ըսեմ,
Ջուտե՛ս, չմե՛ս, էդպիր մահ ու ջամալին Քամաշա էնես։
էն մարդն օր տեսավ ախճգա նկար,
Խակուն սիրահարվավ վրեն։
Ըսեց.—էս որ կա՝ իմ կին ա՛,
Ես էլ էստրա մարդ.
Ես բրդ էքա՛մ, էսոր բերեմ։
Ու բավականին ոսկի տվեց աշուղին, աշուղ բավարարվավ։

16. Աշուղ Քրե էքա.
Դավիթն էլ, բաշեց մե բանի օր ժամանաղ,
Ուր տես մարդ բնարեց,
Պաշտպաններ դրեց ամեն տեղրն
Ու չկտավ, որ ձին խեծավ,
Ուր գնաց վերցուց ու Հա՛յ, Կապուտկող դո՛ր ես,
էքամ Խանդութ խանըմի չկեղվից։
Քեռի Թորոս էդ վախտ չկտավ չտուհչ.
— Դավի՛թ ջան,—ըսեց,—դո՞ր ա կէքաս։
— Քեռի՛,—ըսեց,—կէքամ Կապուտկող՝ Խանդութ խանըմին բերելու։

— Է՛, բալա՛ ջան,—ըսեց,—
էն տեղրն կողշով բլոջ կա, բեղի կրպանեն.
Դու կտնա՞ս էդ կողշով բլոջներու դեմն առնիս։
— Քեռի՛,—ըսեց,—կողշով բլոջն ի՞նչ ա։
Ըսեց.—Կողշով բլոջ ա,—ըսեց,—ի՛նչ ա,
Դազանի նման սեվ կուշներ ունի։
— Է՛, Քեռի՛,—ըսեց,—ի՞նչ ա ախ ա կիտաս բնձի.
Կողշով բլո՞ջն էլ մարդու կըդանա։
— Դե՛,—ըսեց,—բան ա կըսեմ քե,
Սիրտդ ախ պախա, լաո՛, կէքաս՝ գնա։
էդ մարդն չկտավ, գնաց,
Կողշով բլոջն էլ չըտեհա, ինչ ա։

էդ մարդ, ճամփեն օր գնաց, գնաց մի դաշտըն,
Տեսավ օր՝ մի հատ անտանելի քաք կա։

Կայնավ քարի պլխուն.
— Վա՜յ,—ըսեց,—էսքան էլ մարդ քաքա՞.
Էս քաքող,—ըսեց,—ընձի կ՚ախսաս։
Նայեց էդ քարին, նայեց դես-դեն
Ու չըգուշակեց, թե էդ ինչ կենթանի ա դուս .յելե։
Բայց զըմշու թրիք ա։
Եփ օր գնաց խասավ՝
Տեսավ ըռընջըրարն գութան ա կըվարա, զըմըշներ լծե։
— Ա՜յ,—ըսեց,—կոզղով բլոջներից ա։
Կայնավ.—Էս Քևռու ըսած կոզղով բլոջներն են։
Նետ ու աննդ .յիջուց, օր զըմշուն սատկըցու,
Վար ա կէնա։
Էդ մարդն իշկից օր՝
Էդ մարդն նետ-աննդ բռնե իրենց զըմշներու վրեն։
— Տղա՜, ապա՜,—ըսեց,—խելառ չե՞ս, ա՜յ մարդ,
Էդ .յընկլե՞ ես պատրաստե, վիճե ա կըզանես։
Ըսեց.—Էդ կոզղով բլոջներուն։
Ըսեց.—Ա՜յ մարդ, կոզղով բլոջ ի՞նչ մեկի.
Գըմեշ են,—ըսեց,—գութան ա կէնենը։
Էս գութան չէղի, մենք ինչացո՞ւ ենք։
— Ի՞նչ գութան,—ըսեց,—ի՞նչ բան ա կէնենք։
Ըսեց.—Ախի՜, ապա՜ ջան,
Ջեղի՞ դու սասունցի ես, բան չըտեսեր ես։
Խասավ էն մարդկանց մոտ,
Իշկից օր՝ իրոք գեղեցիկ կենթանի էն,
Էդ մարդկանց ձեռ կիտան, կըլծվին,
.Յանդաջ կիտան ձեռ ուրանց։
Ըսեց.—Էդ ի՞նչ ա կէնենք։
Ըսեց.—Վար ա կէնենը։
Ըսեց.—Էս օխտ-ուիթ զըմեշ լծեր եք էս գութան, անջախ պըտոցուն։
Հըլը՛,—ըսեց,—էդոնց հարցըգնե՛ք, ես քաշեմ,
Տենամ, կրնա՞մ պըտոցում էդ գութանըն։
Էդ զըմշըներ հարցըգնեց,
Բնադեն դրեց ինքին, ձիով օխտ փաթ վարեց,
Պըտոցուց, օխտ փաթ պըտոցուց։
Ըսեց.—Էդմա՞լ։
Ըսեց.—Լա՛վ պըտոցուս, վարիս։

Խոզդու մեկ թռավ էն յանեն կայնավ, բանց.
— Ախպե՛ր ջան, էտի քու հունար չէ, դու վարթիր։
Բանց.—Ըբա վի՞ն։
Բանց.—Քու ձին էր քաշնց։
— Յա՛, կէղի՞,—բանց,—իմ ձին քաշնց։
— Ձին ա քաշե։
Բայց չինքըն խուվաթով ա բոնե։
Բանց.—Լա՛վ,—բանց,—ձիուց գիջիմ, օխտ փութ էլ ես կըվարեմ,
Տենամ, չըկրանա՞մ։
Ձիուց չիջավ, օխտ փութ էլ էդի վարեց,
Արաբն վարեց, խըլըսուց։
Արտ վարեց, խըլըսուց, էտինց խացն էկավ։
էտինց խացն էկավ,
Բևրին խաց դրնցին, խանչին.
— Ախպե՛ր ջան,—բսին,—արի՛, խաց կե։
— էդտեղ ի՞նչ կա, օր ես ուտեմ, ա՛յ մնուշեններ։
Մի ջոչ չոխտըրիկ փլավ ա, մե տաս խատ էլ խաց։
— Ախպե՛ր,—բսնց,—արի՛,
Ինչքան մենք կուտենք, դու էլ էնքան կե։
էկավ, հրմա՛ ձեռ զանեց՝
էրկու-իրեք խաց մեանկամից վերցուց, կերավ՝
Իրեք թիքա էրեց.
Ամբողջ էդ օխտ-ութ մարդու պռոցին՝ իրեք թիքե էրեց։
— Ո՛ւ,—բսնց,—էտի մըկա մեղ էլ կուտա,—էլի էտ խոտաղ։
Քաշվավ, բսնց.—Խոտա՛ղ, դու էտա բանի՞ դյաֆ դանես
բնձի։
Բանց.—Բևրե՛ք հըլե՞ էս գութան բոմեք,
Զրնջրլներ-մրնջրլներ ամբողջ վրը ֆիրար,
Ինչքան լուծ-մուծ կա, բոմե՛ք վրը ֆիրար։
Բանց.—Յրնչի՞։
Բանց.—Ձեզի կրտեմ բոմե՛ք վրը ֆիրար,
Ձէ՛,—բսնց,—ես ձեզի բոմեմ վրը ֆիրար։
Տեսան՝ կատղավ,
Բևրին բոմին վրը ֆիրար էտ ամբողջ էրկիղեղեն, ժրնջիլ-
մնջիլ։
Թուր թաշնց, կայնավ վրը ամբողջ դոշծի վրեն։
Բանց.—Թուր կըթալեմ.

Թև,—ըսեց,—կտրիր էտոնց, բրթիր, յիջար գետի՛ն՝
Խանդութ խանըմ կըրևեմ,
Թև,—ըսեց,—չկտրիր էսոնց՝
Կըդառնամ էսեղեն, կըդառնամ կէթամ։
Թուրն օր յըդմա՛լ օր ԹԱլեց՝
Ամբողջ գուլխի գործիքներ էրեց էրկու կտոր,
Ամբողջ ավիրեց, թափեց։
Խոտաղ թռավ էն յան.
— Տո՛,—ըսեց,—քու տո՛ւն քանդվի,—ըսեց,—
Խունկ ու խինեն յավ ծախիր.
Բայց գուլգուլու մեջ քաքիր.
Էդ ի՞նչ էր էրիր,—ըսեց,—
Մեր գործիք, մեր բոլոր ավիրիր։
— Խոտա՛ղ,—ըսեց,—ի՞նչ աժի ձեր...
Տեսավ՝ մանճկալն է նստե գիլա։
— Ախպե՛ր ջան, դու յորի՞ գիլաս։
Ըսեց.—Քու տո՛ւն քանդվի,—ըսեց,—
Ասա վարիր՝ վարիր,
Էս էլ,—ըսեց,—ավիրիր։
Ըրը մենք,—ըսեց,—էս յո՞ւստ շինենք։
— Էդ ինչքա՞ն փող կըշինա։
— Էդի կըշինա մոտիկ յիտուն մանեթ փարա,
Հազիվ գլոխ գա։
— Ապրի՛ք,—ըսեց,—էսա ճանկ օսկին, տարե՛ք, շինե՛ք։
Օսկին տեսան՝ էդ մարդուն մոռացան։
Ու յելավ, ձին խնծավ, գնաց։

17. Գնաց Խլաթի քաղաքի մեջ։
Ցերեկ ա, Խլաթի՝ ամառվա շոր տվեր ա, շոր երդիր։
Ուր ձիու վրեն խելք կէթա համարա շոբուց։
Ձիու վրեն՝ քաղքից պտի դուս գա,
Քաղքից դուս գուրա,
Էդտեղ մե հատ դուխ մե՝ նռնվանց տեսավ,
Օր մե հատ ձիավոր դիքա,
Կըթըմախնա էդ ձիավորին.
Տեսավ օր քրտինքեն պատռե,
Ձին էլ քշա, գընցի քաղաք,
Դիմավորավ, յառնչ կտրնց։

— Տղա՛ ջան, երիտասա՛րդ ջան,—ըսեց,—էսի խրլաթ
քաղաքն ա,
Շորուն մրկա գու էլ պատռիս, քու ձին էլ,
Արի՛,—ըսեց,—.յիշի՛, .յիշի՛,
Դառցի մի քիչ հանգըստացի,
Քու ձին քաշենք,—ըսեց,—խով՝ բյահիլ,
Հանգիստացի,—ըսեց,—մե քիչ,
Պուտրմ պաղ ջուր խրմա, հանգիստացի։
Դավիթի խելք մտավ.
Ձիուց .յիջավ, ձին քաշին ծառի խով,
Ուրիշ էլ առան, դացին մի լուսիղեն լավ անկյակ,
Նստըցուցին ու սկսեց սեղան պատրաստել։
Սեղան պատրաստից, Դավիթին լավ հուրտախրում ա,
Կերցուց, խմցուց։
Դավիթ իշկից օր՝ ժամանագն .յընցավ, բդի էթա, ըսեց.
— Քուրի՛կ, ձին քաշի՛ր, ես պտի էթամ։
Ըսեց.—Չէ՛ղավ, չէղա՛վ, չէղա՛վ,
Մեր ընչի՞ն չըխավնար, օր գիշեր մըզի...
Համոզեց էդ դռեն, Շըմշըմիկ ձաթուն էր անուն.
Շըմշըմիկ ձաթուն գիշեր պահեց Դավիթին գոռով ուր մոռ։
Յորդան-գուշագ թալեց, Դավիթ պառկավ,
Գիշեր էկավ, շուռլվավ Դավիթ ծից։
Դավիթ միամիտ, ոչ մի բանից խաբար չէ,
Անարատ աղա, ազար, երիտասարդ.
Տաճիկի խետ գիշեր գնրծ ունեցավ,
Անօրեն դռի խետ գիշեր գնրծ ունեցավ։
Օր գնրծ ունեցավ, առավոտ .յելավ,
Ձին քաշեց ու շարունակեց ուր ճանապար։
Եփ օր շարունակեց ուր ճանապար, քաղաք-քաղքով կիցան,
Օր քաֆրի* մեկըն էկավ մեծ մարդու կնգան խոնախ,
Բաղըրդնի կնգան խոնա՞խ,
Գիշեր մնա՞ց ու խետն ապրավ, գնաց։
Ու էդ ամբողջ քաղաք .յիմացան,
Էդ գրություն ծածուկ չըմնաց։
Դավիթն էլ .յելավ ու գնաց։
Մեկ օր, օրմ՝ իշկան՝ գնաց, խասավ Կապուտկնդ։

* «Թուրքեր հայերին քաֆըր կըսենու Նահ. վիպասացի։

18. Գնաց, խաւսավ Կապուտկիղ,
Քաղաքըն մտնելուն, մեհ հատ բաղի բռաստ էկավ,
Բաղի դուռը տըփեց.
— Բաղվանչի՛, բաղվանչի՛։
Բաղվանչին դուրս էկավ.
— Հա՛,—ըսեց,—բա՛, ի՞նչ ա։
Ըսեց.—Խոնախ եմ։
— Դե՛,—ըսեց,—բարով ես էկե, խոնա՛խ ջան, արի՛, համեցի՛։
Տարավ բաղի մեջ, ձին կապեց, տղին էլ նստրցուց։
— Հա՛, բարով ես էկե, տղա՛ ջան, անունդ ի՞նչ ա։
— Դավիթ։
Քու անուն ի՞նչ ա, բաղվանչի՛։
Ըսեց.—Իմ անուն՝ Գորգի։
— Լա՛վ,—ըսեց։—Ըսեց.—Գինա՞ս, Գորգի՝ ջան, ես Դավիթն եմ,
ես,—ըսեց,—Սասունա Դավիթն եմ,
էկեր եմ ձեր էս բաղաքի թաքավորի ախճըդա խաւմար։
Հիմա, կըռնա՞ս,—ըսեց,—մեզի նպաստակ էնես,
Օր մենք յիրար տեսանանք,
Կամ ինչպե՞ս խորհուրդ կիտաս՝ ես էդ ախճիդն առնիմ։
Ըսեց.—Դու Դավիթ, Սասնան Դավի՞թն ես։
Ըսեց.—Հա՛։
— Դե օր Սասնան Դավիթն ես,
Եթե խոսք իտաս, ընձի էնես քե բավեր,
Ես գնիցըն կ'աշողցում։
— Հա՛,—ըսեց,—էսօրվընից դու իմ բավի՞ր, ես՝ քու սանհեր.
Էդպես դու բավիր կանչա, ես՝ սանհեր։
Էդ մարդիկ սանհեր-բավիր դարձան՝
Բավիր Գորգի՛, Սանհեր Դավի՛թ։
Ըսեց.—Ես նպաստակ ունիմ, Գորգի՛ ջան,—ըսեց,—
Թուղթ ունիմ, նամակ ունիմ,
Կրնա՞ս հանձնես Խանդութ խանըմին,
Օր յինք ա տվե, ուր աշուղն ա տվե։
Ըսեց.—Բե՛։
Նամակն, նկարն վերցուց,
Գորգին գնաց քաղաք՝ Խանդութ խանըմին տեսություն։

19. Գորգին ԹԸԼա էյա խանդութ խանըմին խաբար էնա՜,
Դավիթըս էդտեղ չըհամփերից՝ բաղից.
.Յելավ, տեսավ՝ բաղից դուս մե հատ .յաշտարակի վրա
Մարդիկ նստած ա, խմիչք ա կըխմեն։
Գնաց, բարևեց.
— Բարև՜, տղե՛ք։
— Բարև՜։
— Ի՞նչ մարդ եք։
— Ինչ մարդ օր էդինք։
Էսա տաշտ գլեր ենք, գինին լցեր ե՞նք,—
Մեծ-մեծ գավաթներ-կիլանոց.—
Նատի՜, խմա խանդութ խանըմի կենաց։
Դու մ'բսա էդրանք էլ պատկամավոր են,
Ուրիշ երկրի թաքավորներու փայլևաններն են,
Էկած էդ ախճրգան .յուզընգան։
Էդ մարդիկ նստած, իրենք մարդ են, էդոնց կենացն են
կըխմեն,
Էդոնք, մե բաժակ վերցած, էդ գավաթներով կըխմեն։
— Տղե՛ք,—բսեց,—խանդութ խանըմի կենաց էդպես չըխմեն։
Բսեց.—Ըբ ինչպե՞ս կըխմեն։
Բսեց.—Էս տաշտով կըխմեն։
Տաշտըն վերուց ու դրեց վըր բերնին։
Էդ յոթըա տաշտ մե անդամ խըմմե՛ց,
Տաշտ տփեց գետին, բսեց.
— Էսպես,—բսեց,—խանդութ խանըմի կենաց։
Ու գինին տվին, տարավ, բերեց։
Էտոնք բսին.—Էսքան գինի խմո՛ղ մեզնե խլեց խանդութ
խանըմ.
Էս ո՞վ էր, ի՞նչ մարդ էր։
Ըզգուշություն էրին, օր էդտեղ Դավիթին վնասեն։
Գորգին էլ խաբար էնե, էկե բաղըն է, կըսպասա,
Օր Դավիթըն գացե էդ պատկամավորներու, էդ
փայլևաններու խեռ խմիչք ա խմե.
Տեսավ՝ էտոնք ըուբ քաշեն, օր Դավիթին բռնանեն,
Գորգին բռռա.—Սանահե՛ր Դավիթ։
Կրան.—Ի՞նչ ա, Քավո՛ր Գորգի։
Կրան.—Էդտեղ վնաստուն ա, քե ըզգուշ պահա՛։
Կրան.—Ի՞նչ վնաստուն։

Էտոնք շո՛ւտ իրանց թուրեր կըքաշեն, դանեն ուրանց
խուրուլ։
Գինեին ուրին կըտանին։
Գինեին ուրին կըտանին, էտոնք գուգեն տղին ըսպանել։
Էլի Գորգին էդտեղ ըզգուշություն կէնա.
— Սահմե՛ր Դավիթ,—կըսա։
— Ի՞նչ ա, Քավո՛ր Գորգի։
— Քե կըսեմ՝ ըզգո՛ւշ մանցի, քե կըվնասեն էդտեղ։
— Ա՛յ մարդ,—բսեց,—էս ա իրեք անգամ դու կըրուռաս՝
«Ըզգուշ մացի՛»,
էսա իրեք .յընգիրներն ին, իրա .յիրար համիշք ենք համե,
էսոնք ա ընձի վնասեն.
Դե՛, յավա՛շ, տեղամ, իմա՞ լ ա կըվնասեն։
Վերցուց էտոց բռնեց,
Օր մե թևից բռնեց ու էտ աշտարակից լորտեց.
Իրեքին էլ լորտեց, գացին, .յընգան,
Որի թևե կոտրավ, որի գլոխ կոտրավ, .յոդ կոտրավ։
.Յեկան էտոնք ու էդտեղից բսին.
— Ա՛յ մարդ, էսի Սասնան Դավիթն ա՛,
էլ էսոտր խնա իլաջ չէզի,—
Ու էտոնք թողին ու գացին.
Քաշվան, գացին ուրանց երկիր։

20. Բրխ էտոնք էթա՞ն, բոտղ էղի՞ն,
Ուրեմ, էդ խանդութ խանըմ պատրաստվե,
Տղամարդու գեստ խաբե, փափախ դրե գլոխ, զենք կապե,
Մե հատ կապուտ ձի ա խեծե՝ առնակավիր,
Ու էն յանեն .յիմցավ,
Դանիսեներին ալբըալը տարան,
Օր փայլեվներուն Դավիթ թալեր ա, գացած, ցխած,
Էն յանից ձիով քշեց վըր Դավիթին։
Խանդութ խանըմ ձին նստած,
Էս յանեն էլ Դավիթ ձիու վրա՝ կիսախմած,
Ու հանդիպեցան մեկ մյուսին։
Խանդութ խանըմ բոռաց.
— Տղա՛,—բսեց,—դու իմ ախպըրտից մըրներից վեր ես
թալե,
Պատրաստվի՛, քեզ խփեմ։

Ու դուրզ բերեց.
Դուրզ բերեց, մըհալ չէղավ,
Ջանդուն տվեց էդ՛ր դուրզի տակ,
Ջանդուն՝ ձիու զանդուն, կտրեց, թալեց՝ Խանդութ խանըմի
դուրզ։

Մեկ էլ շիդգան .յիրար խփելու,
Դավիթըն թալեց,
Թալելու խետ՝ Խանդութ խանըմին ձիուց բերեց ցածր։
Ձիուց բերեց ցածր, ձիուց թռավ, օր վիզ կըտրա՝
Ծձևր թալեց դուս։
— Է՛,—բսեց,—տղա՛, բու տո՛ւն ակոլի,
Տո՛, մե ախճիդ ա կըպանե՞ս։
— Տո՛, դի՛լ անբսկամ, միթի՛,—բսեց,—դու ես, ընձի
կրփռըցնա։
Ըսեց.—Խո՛, Դավի՛թ, ես իմ,—բսեց,—
Ես ի,—բսեց,—բեզի փորցի։
Դու, ես գինամ, օր իսկական տղամարդ ե՞ս, իսկակա՛ն.
Ես,—բսեց,—էստոր դնեն, իմ .յօժար կամով բև կնի՛կ, դու
ընձի՝ իրիկ։
Ու էդ օրվանից էղան իրիկ-կնիկ։

21. *.Յրնգավ Խանդութ խանըմի բնճի խետ,*
Էդմալ քաշեց մի տարի՝ մնաց Կապուտակող։
Էտենց էրեխա էղավ.
Էտենց էրեխա էղավ՝ բերին դրեցին Որփիկ Մհեր՝ անուն։
Տարին օր լրացավ, էրեխեն .յառուճ մատղաշ էր,
Ուրանք ուզեցան գալ,
Էրեխեն Թողին ուրանց պապի մոտ՝ Կապուտիզողի Թաքավորի
մոտ,
Ուրանք .յեկան ու շարունակին ուրանց ճանապար։
Ամառն ա, էրեխեն չըբերիցին խետ ուրանց։
Էդ մարդիկ .յեկան շարունակին ճանապա՛ր,
Օր շարունակին ճանապար, էկան խաստան հըլա՛ր,
Էկան խաստան հըլաթ, հիմա հըլաթ .յառնջ կտրին էդ
մարդու։
.Յառնջ կտրին՝ պատերազմ են .յուզում, թե.
— Դու՝ հայու մեկ, դու էկար մեզի վարպարեգնչիր,
Մեր խանըմին՝ Շըմշըմիկ Խաթունին, մոտեցա՛ր,

Մեր թշնամին ես, օր մենք պատերազմինք։
Թուր քաշեց, օր մարդկանց վրա կռվի,
էտ մարդու թուրըն շաշխատավ, բոլորովին չըկրցավ։
Տեսավ՝ .ինք շաշխատի, ուր ինվ շաշխատի,
Կնիգն ըսեց.—Քու տո՛ւն քանդվի,
Թուր տո՛ւր ընձի, ես,—ըսեց,—էստինց դիվան էնեմ։
— Չէ՛,—ըսեց,—կնի՛գ, սպասի,—ըսեց,—
Քեզանից ա, օր իմ թուր շաշխատի, կինարմատ ես դու։
Արե՛ք,—ըսեց,—ժողովո՛ւրդ, պայման կապենք, .յերտում ուտենք՝
Իմ կին տանիմ տուն, էս իմ կին ա,
Ես,—ըսեց,—պատնամ գամ, ձեր վրա պատերազմ էնիմ.
Թե ով ունի՛ք՝ էն ժամանագ կտանիք ընձենի։
Բնրին էդ մարդրկան .յերտում կապեցին,
.Յերտում՝ .յերտում էր էդ ժամանագ.
«Հացն ու գինին, Տեր կենդանին,
Իմ կին խաստում տուն, ետ գամ ձեր վրա,
Ինչ վեճ ունիք՝ կատարեք»։
Էն մարդիկ թուլադրեցին էդ մարդուն, Թողեցին, գացին։
Բաց Թողին, էկան խաստան իրանց քաղաք՝ Սասուն։
էդ մարդիկ սկսեցին ապրել Սասուն։
Ու կնիկ Թողեց գնաց ու ըսեց.
— Տղանի՛ր, Քեռի՛, ես կէթամ,—ըսեց,—
.Յերտում եմ կերե, կէթամ Խրլաթ։
Խրլաթ կէթամ, մեծ, Թուրքի քաղաք ա,
Էնդինց .յերտում եմ կերե,
էթամ էնդինց պատասխան տամ,
Իմ .յառնջ կտրած ին, իմ կնիկ խնամս էր։
.Յինք Թաքավոր մարդ էր,
Ոչ ոք ուր դեմ չըկացավ առավ.
Ու կնգան Թողեց ու .յինք գնաց Խրլաթ։

22. *Եփ օր գնաց Խրլաթ, քաշեց օխտ տարի։*
Օխտ տարեկան էր Դավիթի մոտի ախճիկըն,
Օր եղեր էր Շրմշրմիկ Խաթունից։
էդ օխտ տարվան մեջըն օր չկեր,
Օր էդ ախճըդան .յերես չիտեն;
Որ «Դու քու խորից չես,

Դու մի հատ հայուց ես, քաֆրից ես՝ Դավիթ անունով,
Սասունցի էր, էկավ իր մոր խնդ ապրավ.
Դու քիճ ես»։
Էդ ախճիդն էլ ոնց էր պախն էդ Դավիթի վրին։
Ոնց էր պախն Դավիթին,
Ըսպասում ին, օր էդ մարդըն գնր։
Եփօր Դավիթն էկավ հըլաթ,
Էդ մարդիկ պատրաստված ա, օր պատերազմնն։
Թե շատ, թե քիչ յուզնցավ աշխատել,
Ըզկրցավ էդ մարդկանց չառաել,
Էլման ուր ինուր չըբանա վրնն։
Չին բշնց բաղաթ։
Չին օր բշնց բաղաթ, բաղաքից յելավ գնտի յափըն,
Էս մեկըն սազ ա, էն մեկըն՝ գնտն ա,
Շոր ավեր էր վրնն.
Կայնըցուց ձին, ըսնց.—Մե քիչ լոխկընամ։
Իմալ օր մտավ ճուր, գու մըտա, էդ կնչնն տափուկ ա գնտի՝
Կնչնն տափուկ ա էդ սազի նմն.
Ննա-անեղով Դավիթի սրտին գնննց։
Օր գննց՝ Դավիթ էդտեղ գոռաց.
Ուժնվ օր գոռաց,
Հըլաթից ձնն էկավ Սասուն, խասավ Քնռի Թորոսին, Սասնա ժողովրդին։
Եսիմ բանի ավուր ճամփա յա, Դավիթի ձնն խասավ Սասուն։
Հավար չում էկավ, ըսին.
— Էսի Դավիթին էր խփնցին, էսի Դավիթի ձնն էր։
Էկան, Դավիթին գտան.
Դավիթ կննթանի յա, հըլը գնտի ա, ձին էլ խնա։
— Դավի՛թ,—ըսնցին,—էդ ի՞նչ բան էր քե պատահ՞վ։
Ըսնց.—Իմ թշնամին էս սազի նմն էր։
Ես էկա էտեղ լոխկըցա, էտեղ էր խըփին ընձի։
Դացին սազի նմն, ժուռ էկան, օր մե հատ կնչնե խանեցին,
Մի հատ ախճիդ, ախճգա տուն ակուի՛,
Օխտ մետր ընդին յերկնություն էր,
Էդնր բոռալուց՝ յախու գնտի սատկեր էր,
Էդնր ձինից սատկեր էր ախճիդըն։
Խանեց Քնռին, բերնց.

— Դավի՛թ, լաո՛,—ըսեց,—էս ի՞նչ ախճիկ ա։
Ըսեց.—Եսի՛մ, Քեռի՛, ի՞նչ ախճիկ ա։
Ըսեց.—Լաո՛,—ըսեց,—քե ախտել չէղի,
էսի քու ժառանգն ա,
Դու մե զալաթ չունննար, էս փորցանքն չիլավ քու գլոխ։
Իդհաղ պատուցին, իշխին օր՝ Քեվ Եաչն էլ սեվ ա։
— Վա՛յ,—ըսին,—դու անօրի խետ նատեր ես-կայներ ես,
Քու Քեվ Եաչըն սլեվցե,
Ու դու էլ՝ էդ փորցանքն էկավ քու գլոխ,
Էս էլ քու ժառանգ քե ըսպանեց։
— Դե՛,—ըսեց,—բո՛լ է ընձի տաք խոսալ.—
Ըսեց,—ա՛յ, էդ իմ նեռ քաշե՛ք, ես հանդըստանամ։
Էկան, նետըն սըրտի մըչեն քաշին՝
Դավիթ խորին ավեց, մահացավ։

23. Դավիթն բերեցին դեղ,
Եանդուր չիմացավ, օր Դավիթին բսպանած, դիակն ա կը բերեն։
Չելավ աշտարակից, օխտ չարկեն աշտարակից ուրին քալեց.
Իմալ օր քալեց մատաո բարի վրեն՝
Գլոխըն չըբվավ մատաո բարի մեչ, եղավ սանդ։
Էն էլ դեն մախացավ։
Էդ երկսին էլ տարան խորեցին։
Բայց խորելու ժամանագ, էկան էդ մարդու կուրծքը բացին,
Տեսան օր՝ կաթ գուբա էղեր կուրծքից,
Կաթ ունի, կուրծք ունի։
Ներ որոշեցին օր՝ Դավիթին տղա կա.
Դավիթին Կապուտկեղ տղա կա, պտի էթանք, բերենք։
Էդմալ էլ Դավիթի վերջն էղավ։

Գ

ՈՐԲԻԿ ՄՀԵՐ

24. Տղին պապեն կըպախա։
Պապեն էլ չիմացավ փեսի մեռնել, ախճղա մեռնել.

Էլ .յերասում կնրավ, օր «Անպատճառ էս տղին չիտամ
սասունցոց,
Էս տղեն բոլ մնա՞, նա .յուսում տա՞մ,
Իմ ախճըդա ժառանգն ա,
Մնա, ընձի տղություն էնա, ոչ թե էթա սասունցոց»։
Էդ մարդիկն էլ, նրա որ .յիմացան ուրանց խարսի կուրծքեն
կաթ դուբա,
Ալբըրալ գուշակին, օր ուրանց էրեխա կա։
.Յելան էկան, Զինով .Յովանին խնա ուրանց բերին՝
Քևոխ Թորոս, Զինով Օվան, մե քանի մարդ,
Էկան, խասան Կապուտկող։
Թաքավորին .յիմացում տվին,
Նա էկավ էտենց .յառաջ, ընդունեց էդ մարդկանց.
— Դե՛, բարևկամնե՛ր ջան, էդ ի՞նչ փորցանք է էլավ ձեր
գլոխ։
Ըսին.—Մեր փորցանքին էլ լաղա չունինա,—ըսին,—
Մեր տղին տո՛ւ, տանինք։
Ըսեց.—Ի՞նչ տղա։
Ըսեց.—Մեր քոռ տո՛ւ, տանինք,
Մեր տղեն՝ Դավիթի տղեն, տո՛ւ, տանինք։
Ըսեց.—Էդմալ բան չէղեր ա, սուտ ա.
Ոչ տղա յա եղեն, ոչ բան։
Ըսեց.—Չէ՛, տարի ու կես տպրե ձեր մոտ, մեզի քոռ կա,
Մեր խարսի կուրծքըն կաթ կար։
Անպատճառ մեր էրեխեն տասա, թե ինչ էրեխա յա՝ տասա։
Սեր օր էտենք .յիմացան, օր էտենք էկած էրեխին,
Էրեխեքեներուն բոմեց, տարավ լցեց մի հատ մե՛ծ մարադ,
Էդ Դավիթի տղին, Որփիկ Մհեր է անուն, Որփիկ Մհերին էլ
էդ ճժերու խնա։
Ճժերուն սովըրցուցին.—Ճժե՛ր ջան,
Ճանե՛ր, էտա կապլևկնե՛ր կտանք ձեզի, ճան խաղցեք,
խալմախալ էրեք։
Ուրեմ, հանկարծ տղեն քրխ .յընցի,
Չուրի էդ մարդկանց դեններ ճամփու։
Էդ ֆոյմին տղին պախած ին էրեխեքեներուն մեջըն,
Օր խրժվրժուն գնան, տղին ձեն չ'անի։
Օր ուրացավ, Զինով Օվան ըսեց.

— Թաքավո՛ր,—ըսեց,—մի՛ ուրացի՛ր, մենք մեր տղին
կըգիւնք։

Ըսեց.—Ի՛նչ, օր տղա չկա, յո՞ւստ կիւր։
— Օր չկա՝ չկա, բան չունիմ ըսելու,
Ես .չելա՝ բռատ, տենամ, նիւն որդին էդի՝ գուբա։
Ու կաշին փաթնեց ուրին, օխտ հատ զըմշու կաշին,
Զըմըլնեց, քաշեց ուր կիդ, օր չըճղի
Ու կաշնավ քաղաքի մեջտեղ ու ուժեղ բռատց։
Ուժեղ օր բռատց՝ էդ ձեն զնգնգալին գնաց .լընգավ մաբաղ։
Օր գնաց .լընգավ մարաղ՝ տղեն լսեց։
— Ճժե՛ր,—ըսեց,—ձեն հըլեն կուգի՛ր, էս ի՞նչ ձեն ի։
Ճժեր ձեն .յավելի ուժեղացուցին՝ զըմփըմփուն։
— Տո՛, ճժե՛ր,—ըսեց,—ես կըսեմ ձեն ձե կուգի՛ր։
Մե էրկսի էրկու-իրեք սիլլա տվեց,
Մեկին վերցուց, տփեց պատ,
Էտենք .յախտ էլ չէնեն։
Մեկ էլ Զինով Օհան բռատց։
Օր բռատց, ըսեց.—Էս իմ տաքի ձեն ա։
Ու տղեն .չելավ, դռներ ջարատեց
Ու էկավ խաստավ, փաթիվավ էդ մարդկանց։
Ըսին.—Իմա՞լ, էս մեր տղեն ա,
Ուրեմ, մեր տղեն ա՝ մեր տղեն։
Ըսեց.—.Յո՞ւր են իմ խեր ու մեր, ի՞նչ էղան։
Ըսին.—Էթանը Սասուն,
Էթանը Սասուն, բու խեր ու մեր դեն են։

25. Էկավ Սասուն, պահնցին տղին.
Սկսեց տղեն հետաքրքրվել ու ամեն բան պարզվավ տղին,
Թե՝ Հըլաթ՝ բո խոր ըսպանած,
Քո մեռն էլ ուրին թալեց, մեռավ։
Դա էլ .չերտում կերավ օր՝
— Ես պտի հըլաթա կատուն էլ կտրեմ,
Էնդենց էրեխեն է չըթողեմ,
Ոչ մի կենթանի է չըթողեմ սաղ, մինչև մեծանամ։
Մինչև մեծացավ, ջուչըցավ,
Էդ մարդ էղավ տասնըվեցնի տարեկան,
Բևեցին, իմալ օր Դավըթին, օծեցին,
Քառասուն երինջ մատաղ էրեցին,

Ժողովրդին կերցուցին, խմցուցին,
Արնով լոխկըցուցին,
Բերին նուշնպես ադին էրեցին.
Դավիթի ձին էլ հանձնեցին ադին,
Տվեն էլ .յելավ ու .յարըքներն առնե,
Էկավ Խրլաթա վրեն պատերազմ։
Որփիկ Մհեր էկավ Խրլաթ ու Քշնամիքներուն .յայտաբարեց,
Օր,—Ես Դավիթի ադեն եմ,
Եկեր եմ իմ ձխ առնելու,
Օր դուք իմ հոր էստեղ բռսրաներ եք։
Էդ մարդիկ պատրաստութիւն տեսան, պատերազմելին
խատրն.
Ամբողջ քաղաք բոլորովին մեկն էլ չըկրցավ էդ մարդու դեմ,
Քաղաքի էրեխեն, կառուն էլ կարեց,
Մարդ չըթողնց քաղաքից պրծնր.
Բոլորին բռսրանեց, ոչ մի հատ հավ էլ չըթողնց,
Ամբողջին բռսրանեց, ձխն առավ ու վերադարձավ։

26. Երկր օր քաղաքից վերադարձավ, քաղաքից դուս էկավ,
Դեսին չըվերցուց ձիուն.
Էստեղ, որտեղ բշներ՝ ձին չըթվիր գետին։
Էստեղ բշեց, էնտեղ բշեց.
— Ա՛յ մարդ,—ըսեց,—էս ի՞նչ բան ա, ձին կըշըթվի գետին.
Յավաշ լա՛ւ ես .յելնիմ,—ըսեց,—էս խայի վրեն։
Քշեց, .յելավ խայի վրեն.
Իմալ օր քշեց, .յելավ խայի վրեն,
Խայեն բացվավ՝ ադին ու ձիուն առավ մեջ։
Էդ էլ դժռ կորավ։
Էսենց ցեղն էլ էդման վերացավ։

27. Ասում ին, Մհեր էն ժամանակ դուս գուրա,
Եփ որ գարու խատրն եղավ ըիզուզ,
Ցորնին էլ էղավ պնդուկ։
Էդ խայեն նաղդի էլ կա Սասունի ու Խրլաթի արանք։
Ժամանադին կէթան տեսնան, օր էդ խայեն դիլա.
Ասում են՝ ձիան շեռն ա դիրա Թափի։

Բաղդասար և Անահատ

պատմեց
Մարտունեցի Մելիք Գևորգյան
Մարտունի – Արծվանիստ գյուղ
գրառված է 1973 թ.

Մելիք Պալուստի Գևորգյաները ծնվել է 1907 թ. Բասարգեչարի Ալիշալու (այժմ Մարտունու շրջ. Արծվանիստա) գյուղում, հողագործի ընտանիքում։ Ջրագմանքով հողագործ է և չուլհակ։

Կիսագրագետ է, երկու տարի սովորել է գյուղի դպրոցում (1916, 1921 թթ.)։ 1941-ին զորակոչվել է բանակ, 1942-ին Քեռոսիայում դնատա իջնելիս գերվում է գերմանացիներից, մինչև 1945-ը տատապում համակենտրոնացման համբարներում։ 1945-ին զորացրվում է, վերադառնում գյուղ, ուր մինչև այժմ աշխատում է կոլտնտեսությունում։ 1969-ից թոշակառու է, միաժամանակ կոլտնտեսության բանջարանոցի պահակ։

Ամուսնացել է 1925-ին, ունի 10 զավակ և 18 թոռ։

Վկայը լսել է իր պապ Գևորգից (մահացել է 1913-ին) և հորից՝ Դալուստից (մահացել է 1932-ին)։

Մելիքի պապը, հայրը, հորեղբայրները գյուղում հռչակված բանասացներ են եղել։ Նախնիները գաղթել են Բայազետի գավառից՝ Քորան գյուղից 1828-ին, սկզբում հաստատվել են Նոր Բայազետի Նորադուզ գյուղում, իսկ 1840-կան թթ. նկել բնակվել են Ալիշալուում։

Մելիքը ևս գյուղում հայտնի է իբրև հեքիաթասաց, խոսքաշեն մարդ, երգիչ։ Նա պիտի միայն վկայի առաջին ձյուղը. մյուսները լավ չէր հիշում, «տեղը չէր բերում», ուստի և չպատմեց։ Վկայեց, որ հայրը և պապը պատմելուց առաջ ողորմի էին տալիս Բաղդասարին, Մանանարին և մյուս հերոսներին, իսկ վկայ առանձին և բազմաթիվ հատվածներ ոտանավորով են ասել։

Ըստ այդ պատումի՝ Բաղդասարից ծնվում է Մհերը, Մհերից՝ Դավիթը, Դավիթից էլ՝ Փոքր Մհերը։ Մհերին հողը չի վերցնում, փակվում է քարայրում։ Այն ժամանակ գուռս կգա, երբ գարին գառնա ընկույզի չափ, ցորենը մասուրի չափ։ «Էն ժամանակ գուռս գամ, ընչված աշխարհին խաղաղություն տամ»։

Մելիքը վիպական ծովը կոչում է Մանանա լիճ։ Այն հարցին, թե մեծերն այդպե՞ս էին ծովն անվանում, նա հաստատեց, որ այդպես էին անվանում, բայց և ավելացրեց. «Գուցե համեմատության համար են ասել»։

Պատումը գրառել է Սարգիս Հարությունյանը։

ԲԱՂԴԱՍԱՐ ԵՎ ՍԱՆԱՍԱՐ

Եղել է հին ժամանակ Կռապաշտ թագավոր, Սինամգա թագավոր։
Սինամգա թագավոր բստրուգ ու էղև Կռապաշտ թագավորին։
Կռապաշտ թագավոր զորևղ է էղև։
Մեր Սինամգա թագավորին էղեր ու մի չբնաղ օյրորգ,
Մի գևղեցիկ ախճիղ։
Էդ Կռապաշտ թագավոր
Ուզում է իր ծերացած հասակում
Սինամգա թագավորի ախճիղն առնի իրեն կնության։
Բայց, օրենք, կանոն իրավունք չի տալիս էդպիսի բան։
Ախճիղը սենանում է,
Օր խերը պտի խորթակվի Կռապաշտ թագավորի ուժի դեմ,
Ճարհատյալ յամաձայնվում է Կռապաշտ թագավորին առնել։
Բայց ժամանակ է վերցնում քառասուն օր։
Կռապաշտ թագավոր եռանում է մեր Սինամգա թագավորի մոտից։
Ախճիղը տեսնում է, օր վիճակ վատ ա,
Ինքն իրան որոշում է, թե.
«Ինձ քցեմ Սևանա լիճը, խեխտվիմ»։

2. Էս ախճիդ մի օր իրեն կըթցա լիճ.
Էս մարդուն,
Թե քնություն ա, թե աստված ա, կօրնա.
Էս ախճիդ չըխնխաըվի.
Կարծես թե մի նավակի վրա նստած,
Քամու հոսանք կըտանի,
Սրան Սևանից դուրս կըհանի։
Երկօր գնա՝
Սևանի աշխատող վարդապետ ա, տերդեր ա,
Էս ախճդան կըտեսնեն, որ դուս էգավ,
Վերցնեն տանեն, կտան Վեհափառ Կաթըխիկոսին։
Վեհափառ Կաթըխիկոս ախճդան կըհարցու Թե.
— Ի՞նչ ախճիդ ես,
Ի՞նչի ես .յրնգե ծով, ի՞նչ ա պատահե։
Ախճիդ Վեհափառին կըպատմա՞ գործի էությունն։
Թե.—Կոպեշաշա Թագավոր .յուղում էր ընձի առնել,
Իսկ իմ հերը ստիպված պտի ընձի տար էդ մարդուն.
Բայց օրենք թուլ չիդեր։
Ես ստիպված եղնելով,
Ընձի ծովն եմ բցե, որ խեխտվիմ,
Բայց հանգամանքներն՝ ընձի չըխեխտեցին,
Ընձի բցեցին ձեր դիրկ։
Հիմա, Վեհափառ Կաթըխիկո՞ս,
Ճար ունիս՝ մի հանապազ բսահղծա,
Մի խորուրդ տո՛ւ, Թե ես ի՞նչ պտի անեմ։

3. Վեհափառ Կաթըխիկոսը պատրաք մատուցավ առավոտ։
Պատրաք մատուցելուց հետո,
Էրկու հատ ցորենի հատիկ կտա էս ախճդան։
Կրսա.—Ախճի՛դ ջան,
Դու էս երկու ցորենի հատը կուլ տուր։
Դե՛ ախճիդ ի՞նչ դիդա,
Թե էրկու ցորենի հատից ի՛նչ պտի դուս դա ժամանակին։
Վեհափառ Կաթըխիկոս կասա.
— Եթե դու երեխա կըբերես,
Բերես ինձ մոտ նորից,
Կնունք ես պտի կատարեմ,
Ես կնքեմ էդ երեխաներին։

Ախաֆիզ գ'ըղնա էդ էրկու ցորենի հատիկով,
Եվ շատ շուտով կաղադվի,
Կըբերա էրկու ադա։
Էլի ախաֆիզը կըվերցա, կըկանչա ուր ասուաձ,
Ուր երեխաներ կը դրա մեկ էս կրծքի վրա,
Մյուս՝ էն կրծքի վրա,
Իրան կըբցա էդ Սևանա լիճ,
Էլի նուն բնություն էդ մարդուն կրտանի բնաեդ,
Որտեղ որ Սևանա վանքն ա,
Ք'անա դուս։
Սևանա վանքում Վահափտա Կաթրխիկնա
Էս էրկու երեխային կըկնքա,
Կրմրկրրաս, մարուր, .յիսատակ,
Ետո կօրհնա.
Մեկի անուն կըդնա Բաղդասար, մեկին՝ Սանասար։
Բաղդասարին կրսա.
— *Բաղդասա՛ր, դու էնքան ուժ ունենաս,*
Էնքան զորություն ունենաս,
Որ աշխարքում ոչ մի ուժ թևի .յախտող չէղի։
Սանասարին էլ կրսա.
— *Սանասա՛ր, դու էլ էնքան ունենաս,*
Օր միջին էղնես,
Թույլ չըլնես, բայց միջին բլնես։
Էսքանով էրկուսին էլ կաղօթա,
Մորն էլ հետ միասին։
Նորից մերը գըվերցու էրդու երբեան,
Գ'ամփուրա Վահափտա Կաթրխիկոսի ձեռ.
Կրդնա ուր էրկու կրծքի վրա,
Կրնստի ջրի վրեն,
Էլի հոսանք էս մարդուն կրբերա,
Դուս կրբերա։

4. Մինչև էս ախաֆիզ ուր հոր տուն գուրա.
Կոապաշտ թաքավոր գուրա, Քի.
— *Քառասուն օր լրացավ,*
.Յիմա ախաֆիզը բդի տանինք։
Դե՛, երեխաներ Հրլա փորր ևն.
Ջնալած մարդիկ տարով կրմեձանան,

Բայց երեխաներ օրով ա կըմեծանան,
Բնություն կըմեծացու էդ երեխաներին։
Ըստիպված ախճիկը խոր կըսա.
— Նորից քառասուն օր էլ ժամանագ վերցո՛։
Նորից Սինամդա Թագավոր,
Քառասուն օր էլ ժամանագ գըվերցու Կռապաշտ
Թագավորից,
Քառասուն օրից հետո,
Կրկին էդ Կռապաշտ Թագավորը գրքա,
Որ ախճդան տանի։
էդ ժամանագ արդեն տղաներք կարրին մեծացել են։
Թև.—էս ի՞նչ բախս ա, էս ի՞նչ ա.
էս ի՞նչ խոշուն, էս ի՞նչ կռիվ, էս ի՞նչ վեճ.
Մարդիկ ընչի՞ էկած,
էս ի՞նչ մարդիկ են։
Թև.—Կռապաշտ Թագավորի մարդիկն են.
էկած ան, որ մորդ տանի կնության Կռապաշտ
Թագավորին։
Բաղդասար արդեն երիտասարդ տղա յա դարցել,
Որովհետև օրհնած, ասածու զորացրած երեխա յա։
էս երեխան սուր գըվերցա, կըսա.
— Ես գըկռվիմ էդ մարդու դեմ,
Իմ մորը համաձայն չեմ, չեմ ուզ։
Նույն՝ մյուս ախպեր Սանասարն էլ։

5. էս մարդը ձին կը նստի ու կըսկըսա կռվել։
էհենց ուժի տեր գըլնի,
էհենց գըկռվի էս մարդը,
Օր Կռապաշտ Թագավորի զորքը ամբողջովին կրկոտորա,
կըջարթա։
Մի քանի անգամ Կռապաշտ Թագավորին էտ կուտա,
Նորից զորք գըվերցու, նորից դուքա,
Նորից գըկռվի,
վերջապես, Կռապաշտ Թագավորը գ'ախտըվի Սինամդա
Թագավորի դեմ։
Կռապաշտ Թագավոր կըտեսնա,
Որ այլևս յուրին ուժ չկա՞, էլ չի կարող,
Նա կըսա Թև.

«Մի քաղաքականություն բանեցում,
Մի հնար առեղծեմ,
Որ ես կարողանամ էս աղանեքին յաղթեմ,
Թե չէ՝ էս ախճիզ չեմ կարող առնեմ»։

6. Էս աղայի պապերն արդեն յիմացեր ա պատմություն.
Սրանք ապրում են առանձին,
Իրանց համար բաներծած ներ տուն, ներ բնագարան,
Առանձին են ապրում։
Պապի տուն անդնկություն կուննան,
Որ սրանց քոռնիկներ էղած,
Քոռնիկներ էանց յերես տղա չա դարձացած։
Նամակով կըգրեն, սուրանդակին կիտան, թե.
— Տա՛ր, տո՛ւր մեր քոռներին,
Ասա՝ պապդ կանչում է Բաղդասարին։
Նամակ սուրանդակ կըբերա, կիտա,
Նամակը կըկարդա Բաղդասար.
Գիմանա օր պապըն կանչե իրեն,
Մերըն էլ կըսա.
— Գնա՛, պապդ էլ քագավոր ա,
Կըգնաս, պապդ ինչն օր պետն ա, բեզի կասա,
Քեզ հետ կըխոսի, ինչն օր հարկավորն ա։
Բաղդասար գելնի, կէքա պապի մոդ։
Բաղդասարի մոդ ունի մի հատուկ մատանի։
Նույնպես մի մատանի էլ կա Սանասարի մոդ։
Էդ երկու եխպար՝
Էդ հաշակավոր մատաններնը բասացած ան Վահափառ
Կաթըխիկոսից.
Որ եթե Բաղդասարի մատանին կեղտոտվի,
Հանգարծակի ակը կեղտոտվի՝
Սանասարն ա վտանգի մեջ.
Եթե Սանասարին կեղտոտվի՝
Բաղդասարն ա վտանգի մեջ.
Էրկուսըն մեկ-մեկու օկնության հասնին։
Բաղդասար կըքնի պապի տուն։
Պապի տնից օր գելնի յասավոտ վըացվի,
Վըացվելու ժամանագ, կիշկա տենա՝
Ուր մատանին կեխատուր ա։

— Ա՛յ-հա՛յ,—կըսա,—իմ մատանին կնխտուեր ա,
Իմ ախպեր վտանդի մեջ ա։
— Ա՛յ տղա,—կըսեն,—էսօր էրկօր դեռ քու գալ,
Ի՞նչ պատահալ որ...
— Չէ՛, օր չէ՛, իմ ախպեր վտանդի մեջ ա։
Վճհափառ Կաթըխիկոս իմ մոր էդպիսի խորհուրդ ա տվեր ա,
Մատանին էլ կեղտոտեր ա։

Է. էս էրկու ավուր միջոցին, Կռապաշտ Թագավոր,
Որ Բաղդասար բացակա չա էղե,
Գուքա Մանասարի հետ կըմիջնորդա։
Մանասարին հարուստ ունեցվածքներ կիտա,
Ինչպես մի երևելի խաչիկ՝ խաղալիքներով,
Մանասարին կըսե օր.
— Մանասա՛ր, դու արի իմ հետ,
Էս մեր սարերու կողքին մի մեծ Սեվ սար կա,
Մենք գնանք էդ սարի քամակ։
Էդտեղ մի հռչակավոր լայն տարածութիւն կա,
Ջայիր, հարմարութիւններ, կանաչ,
Մաղկավետ, ջրավետ, .յախպուրներով։
Գնանք էդտեղ, .յիրար հետ քեֆ էնենք,
Ուտենք, խմենք։
Էս Մանասարը գ'ամոզվի Կռապաշտ Թագավորին,
Կըգնան, լավ պաշար կըվերցնեն հետ ուրանց՝
Էնտեղ ուտելու ու խմելու։
Կընստին էդ մարդիկ, կուտեն, կըխմեն,
Ուտել-խմելուց ետո,
Քառասուն հատ փահլևան, առանձին զինված,
պատրաստված,
Կռապաշտ Թագավոր տարեր ա,
Որ տա էս տղի գլոխ գլխատել։
Էդ ժամանակ նոր Մանասարին կըսա.
— Մանասա՛ր,—կըսա,—վե՛ր կաց, էս քու Թշնամիներն են,
Թշնամիներու դեմն մենամարտա՛։
Ասում ա.—Ո՞նց Թե, Կռապաշտ Թագավո՛ր,
Խափեցիր դու ընձի, առար էկար էստեղ,
Հիմա քառասուն փահլևան խանիր ես,

Որ ես քառասուն փահլևանի խնամ մենամարտե՞մ։
Ես ի՞նչ ուժ ունիմ, օր քառասուն փահլևանի...
Ասում ա.—Կըմենամարտես՝ կըմենամարտես,
Չըմենամարտես՝ պո՛խրդ կէքա։
Վե՛ր կաց, մենամարտա՛,
Ինչպես կուզես քեզ տրդարացու.
Տեսնեմ ի՞նչ տղամարդ ես։
Դև՛, ի՞նչ էրած, ճարն ի՞նչ ա.
Արդեն էս մարդ .յընդեր ա թակարտի մեջ, խափեր ա։
Էս մարդ գելի, ուր ձին կըխնծի,
Ուր գենըրը կապա,
Կըսկըսա քառասուն փահլևանի հետ կովել,
Դև՛, մի մարդ՝ քառասունի հետ, ի՞նչ ուժով պտի կովի...
Ինք էլ էդքան զորություն չունի։
Ամեն կողմից դրանց գյուրգեր,
Դրանց դըրբեր, սրեր, նետեր,
Կըթափին էս մարդու վրեն։

8. Էդ ժամանակ Բաղդասար դիքա ուրանց ասեն.
Արդեն մատնըքի ակը կեխտոտեր ա, չէ՞։
Գուքա ասեն, նորից կըխարցու, թե.
— Մայրի՛կ, .յո՞ւր ա Մանասար։
— Մանասար,—կըսա,—ի՛նչ,
Մանասարին Կռապաշա Թագավոր ասրե Սեվ սարի մոտ.
Ինանէղ գըմփուն ա գուքա։
Չգիտենք սաղ ա՞, թե մեռե։
Զին քըշա պըրամա էնտեղ։
Էն ժամանակ քըշա, օր ահա՛ն,
Ախպեր չորս կողմից էգկած ան օղակի մեջ,
Էտ ա՝ վերջին շունչն է,
Օր պտի ախպերն բապանեն, վերջացնեն։
Հենց կրգոռա, կըհասնի.
— Դավաճաննե՛ր,—կըսա,—ավազակնե՛ր,
Խաբեությամբ ախպորըս բևրեր եք էստե՞ղ։
Ախպե՛ր, քաշվի՛ եղ դու,
Հիմա հերթ իմն ա։
Միանգամից էս մարդ պատերազմի մեջ կըմտնի.
Մի հարվածով՝ էրկու հոգի, իրեք հոգի, տաս հոգի,

Վերջապես, բառասուն փահլևանին կըսպանա,
Կոապաշտ Թագավորին կըսպանա։
Զորք ամբողջ արդեն կըփախի։
Կընդի զորքի քամակից,
Կրակրսա զորքին կոտորել սարսափելի կերպով,
Անմեղ զորք, որ պարտադիր կերպով Թագավոր բաշե, բերե.
Ո՛րը Թաժա կնոջ տեր, հարսի տեր,
Ո՛րը երիտասարդ, առանց ամուսնանալ,
Ո՛րը ծեր, ո՛րը մանուկ...
Մի խոսքով, էս մարդ կըսկըսա ծեր ու երիտասարդին կոտորել։

Էն տեղ գանի օր,
Էդ Կոապաշտ Թագավորի զորքի միջից
Տեղեկութիւն կրսանին Բաղդասարի մորը, Թե.
— Ի սե՛ր ասու, մարդկութիւն վերջացուց քու տղեն,
Աստծուն բաշխա՛,
Մենք ինչքան խնդիր կէնենք՝ հնար չէղի,
Մեր խնդիրք ուժ չունի.
Դու էղի՛ս, քու խիղճ, քո՛ւ ասուաձ.
Դու էղի՛ս, քու էդ տղաներու գլոխ,
Ձեր էն վհատիտա կաթըխիկիա,
Օր էդ երկու տղեն օդնե, ասուծու միջոցով տվեր ա,
Դու էղի՛ս, էն քու ըստեղծող ասուաձ,
Արի՛, դու քու տղին մե չարա էնա՝ Թա տու.
Էս ամբողջ երկրի ժողովուրդ գրվերջացու։
Մերը վեր կացավ,
Էդ մարդկից խնդիր չըմերժեց,
Յեկավ գնաց, ուր տղի յաոնջ կտրեց,
Ուր կուրծքը դուրս բերեց, ըսեց.
— Սիծ եմ տվե, պայել եմ քեզի, որդի՛,—
Ըսեց,—բա՛վական ա, անմեղ ժողովուրդ են,
Քու Թշնամին Կոապաշտ Թագավորն էր, ուր կողմնակիցներն էն,

Նրանց էլ արդեն դու վերջացուցեր Թա։
Մեղք են ժողովուրդ,
Խիղճ էնա՝ ոչ ոքին էլ մի՛ ըսպանա։
Ինչ որ ջարդեր Թա, ըսպաներ Թա՝ բա՛վական ա։
Ես որպես քո ծնող, քեզի խնդրեմ,

Վե՛րջ տուր, կամի վերջ տա՛։
Էս տղան էլ խոնարարար ծնկաչոք էկավ,
Մոր ձեռ համբուրեց և ժողովրդին ազատեց։
— Մնացած ժողովուրդը ազատ ե՛ք, գնացե՛ք։
Կռիվ վերջացավ էսպիսով։

9. Էս մարդ ետ գարձավ ուր մոր խետ,
Էկավ ուր տան մեջ,
Ուր ախպոր խետ, նստան, խորուրտ էնեցին յիրիկուն։
Ըսեց.—Մայրի՛կ, ես էստեղ չեմ մնա։
Էս երկիր ընձի ապրել ձեռնատու չէ։
— Ըրը,—ըսեց,—որդի՛, ի՞նչ գուգես։
— Չէ՛,—ըսեց,—ես պտի կապվիմ լեռների խետ, սարերի խետ,
Էնտեղ, որտեղ շատ գազաններ կան, կենդանիներ կան,
Վայրի անասուների հետ։
Ես պտի իմ բնակարանը ըտեղծեմ էդպիսի մի տեղ։
Մերըն շվարեր.
— Էդպիսի տեղ ո՞րտեղ ա,—ասեց.
— Գնանք մեր երկիր, տեսնենք ո՛րտեղ։
Էս մարդիկ մի օր, մի շաբաթ, մի ամիս
Ամբողջ էս Հայաստանի լեռներ, բստորոտներ, ձորեր,
Ման գալով, ման գալով գնացին,
Որտեղ օր Աստուն ա հիմա գոչվում։
Գնացին էդ լեռները՝
Յափելի ձեռնատու էդավ էս մարդկանց։
Բաղդասար սրոշեց.—Անպայման էս լեռների, էս ապառաժների մեջ,
Էս անմատչելի սարերի վրա,
Մենք պտի կառուցենք էստեղ մզրի տուն։
Եվ պատրաստեցին գյո՛ղ, մենք էստեղ ապրինք։
Էս էրկու վիթխարի տղամարդ, էրկու երիտասարդ,
Ամեն լեռից օր անքակտելի քարեր ին, ապառաժներ ին,
Ջնրս հսկայական մեծ քար,
Որ անքամ ներկայիս բուլդոզերներ չէին կարող քաշել,
Ջնրս քար քաշին, բերին,
Կէնին չնրս պատ,
Մի հսկայական մեծ քար էլ կրգնին էս չնրս քարի վրեն,

Կըդառներ մի առուն
Շիքեցին, մի քանի տներ շիքեցին
Մեկ հինենց Բաղդասար ուրին,
— էս մեկ՝ իմ ախպեր, էս մեկ՝ իմ հարսին,
էս մեկ՝ մեր մոր,
էս մեկ՝ էն մյուս հարսին
Վերջապես, ամեն ինչը պատրաստեցին էդպիսով

10. էս գյուղը կառուցելուցետո, Քե.
— Ա՛յ մարդ, էս գյուղ մենք կառուցինք,
էս գյուղ պաի մնա անանո՞ւն
էս գյուղին պաի մենք անուն դնենք
Ըբր.—Անուն դնող ո՞վ կկղի
Մերն ըսեց.—Գնացե՛ք գյուղեր, բաղաքներ,
Մի հասակ առած, մի ծերացած, փորձառու մարդ ճարե՛ք,
Բերե՛ք՝ ձեր գյուղին անուն դնե
Բաղդասար մոր խորուրդ լսելով,
Նստավ ուր ձին, ընկավ ճանապար
Թե մի օր էր, Քե հինգ օր էր, ճանապար գնալուց ետո,
Գնալով գնաց հասավ, տեսավ՝
Մի մարդ նստած ա մի ճանապարի վրա,
Որտեղից բաժանվում է երեք ճանապար.
Մեկը հիմնական շոշի ճանապար ա,
Երկուսն էլ քյասա ճանապար են, օր կկիան անտառի մեջ
Տեսավ՝ էտեղ նստած ա մի ծերացա՛ծ,
Երկա՛ր, սիվտակ մուրուքավո՛ր մարդ, սիվտակ մազերով
— Բարև՛,—ըսեց,—պապի՛
— Բարև՛,—ըսեց,—Բաղդասա՛ր, հազար բարի էկա՛ր
Ըսեց.—Ո՞նց Քե
Պապի՛ ջան, դու ի՞նչ իմացար, որ իմ անուն Բաղդասար ա
Ըսեց.—Որդի՛,—ըսեց,—
Ես շա՛տ վաղուց գիտեմ, որ քու անուն Բաղդասար ա
Դու,—ըսեց,—Սինամդա Քազավորի Քեռն ես.
Քու անուն Բաղդասար ա,
Քու ախպեր անուն Սանասար ա
— Պապի՛ ջան,—ըսեց,—էս բոլոր, օր դու դիտես,
Նշանակում է դու պաի գաս՝ էքանը,
Մեր գյուղին անուն դնես,

Մենք մի գյուղ ենք կառուցել։
Ըսեց.—Գնա՛նք, որդի՛,—ըսեց։
Մեր պապերի պատմելով,
Իմ պապի, իմ հոր պատմած հեքիաթի պատմելով,
Իբր թե սա եղել է աստծու աված մարդ,
Մի հրեշտակ մարդ, խմաստուն մարդ։
Էս հրեշտակ աստծուն էս մարդու խեռ՝ Բաղդասարի խեռ,
Վեր կացավ, գնաց էս գյուղ,
Որտեղ էս մարդիկ գյուղ կառուցած են։
Հենց որ էս մարդը տեսավ
Էս լեռներից կառուցած էս անմատչելի տենը, ըսեց.
— Որդի՛, սա Սասո՛ւն ա, էս ի՞նչ ա. Սա-սուն։
Հենց Սասուն անուն մնաց էա օրվանից,
Որ մնացել ա Սասուն։
Էս մարդիկ բերեցին պապին շատ հարդեցին, պահեցին,
Պապն էլ ասեց.
— Տղե՛ք ջան,—ըսեց,—ես երկար ճանապարհ գնացող եմ,
Չեմ կարող համփերել,
Ես ձեր գյուղի անուն նշեցի Սասուն,
Կըմնա Սասուն, հավիտյան Սասուն։
Ես կրկին անքամ օրհնում եմ,
Որ Սասնո նզած սերունդ, ժառանգություններ,
Թո՛ղ լինին մշտապես նվիրված .յուրանց հայ ժողովրդի
համար,
.Յուրանց ազգի համար.
Եվ ինչ որ էս հողի վրա կբծնվի,
Թո՛ղ հերոս ծնվի։

Սասնա ծռեր

պատմություն

Երբ այսպիսի թղթով Սարգսյան

Մասիս – Վէրին. Նեղլրու գյուղ

գրատված է 1972 թ.

Թորգոմ Աղումաեի Սարգսյանը ծնվել է 1907 թ. Նոր Բայազետի Քյարիմբյանց (այժմ Մազհաշեն) գյուղում։ Սովորել է (1915 թ.) գյուղի ուսուցիչների մոտ, իսկ սովետական իշխանության տարիներին՝ լենինգրադում։ Բավական կարդացած է, կարդացել է հիմնականում պատմական վեպեր։

Հայրենական պատերազմի հենց սկզբից (1941 թ.) մեկնել է բանակ, հինգ տարի ծառայել զործող բանակում։

1922 թ. Թորգոմենց ընտանիքը, սովի պատճառով, Քյարիմբյանդից փոխադրվել է Կոտայքի Արքիզ գյուղը, ուր բնակվել է մինչև 1950 թ.։

Գյուղերի խաշրացման ժամանակ Սարգսյանների ընտանիքը, շատերի հետ, Արքիզից իջնում է Արարատյան դաշտ և վերաբնակվում Չանդիբասարի ապրելեցնարենակ Վերին Նեդրլու գյուղում։

Թորգոմը երկար ժամանակ զրաղվել է անասնապահությամբ. Արքիզում նվել է հովիվ, ֆերմայի վարիչ, բրիգադիր։ Վերին Նեդրլուում աշխատել է պահեստապետ, ապա երկար ժամանակ՝ ֆերմայի վարիչ։

Ունի 8 զավակ (3 տղա, 5 աղջիկ) և 30 թոռ։ Հայրը՝ Արզումանը, ոչ ծնվել է Բայազետում և 1877-ին զաղթել նկել է Քյարիմբյանդ (մահացել է 1943 թ.), եղել է հայտնի բանաստաց, երգիչ, պատմել է «Սասնա ծռեր», «Ռուստամ Զալ» և դանազան հեքիաթներ։

Թ. Սարգսյանը վեպը լսել է հորից։ Վկայում էր, որ հայրը «Սասնա ծռերը» պատմելիս որոշ մասեր երգում էր։ Ինքը չէր հիշում երգվող հատվածների եղանակները և չկարողացավ երգել։

Թորգոմը վեպը պատմել է 1938—40 թթ., մինչև պատերազմը, պատերազմից հետո բավել չէր պատմել։ Լավ ասացող էր, պատմում էր խիստ ոգևորված, առնական շեշտերով։ Ուժեղ, ամրակազմ տղամարդ էր, խաժ աչքերով, աղու արտաքինով։ Նա թեպետ ծանոթ էր վեպի համահավաք բնագրին, սակայն նրա պատումի վրա բնավ չէր ղգացվում դրքային ազդեցություն։ Պատումը տիպիկ Մշո տարբերակներից է, լեզուն խառն է զրական և տարբեր բարբառային ձևերով՝ Նոր Բայազետի, Խոյի և Արարատյան բարբառներից։

Թորգոմը համազուղացիների մեջ հռչակված է եղել իբրև հայտնի բանասաց։ Գիտեր և ժամանակին պատմել էր բազմաթիվ հեքիաթներ, հատկապես մինչև Հայրենական պատերազմը։

Նա բավական լավ գիտեր նաև իրանական վեպը. նրանից զրանցեցինք «Ռուստամ Զալ» և «Սիավուշ» ճյուղերը. Սիավուշին անվանում էր Զաուշ։

1973-ին իմացանք, որ վեպի մեր զրանցումից 2 ամիս անց մահացել է Թորգոմ Սարգսյանը։

Ա

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

Առաջուց Սանասար, Բաղդասար դեռ չի եղած.
Եղել է նրանց մայրը՝ շատ գեղեցիկ։
Մայրը եղել է մի Թուրքի փաշայի հպատակուհյան տակ։
Մայրը չուզե ապրե խետը.
Էնի Թուրք է եղե, նա հայ է եղե,
Չուզե դրա խետ ապրել։
Վերջապես, մի կերպ համոզելով, դռռով մոռնցե,
Ջուխտ աղա չա բերե.
Մեկի անուն դրե Սանասար, մեկին՝ Բաղդասար։
Բաղդասարը մե քիչ դիժ ա եղե,
Սանասարը շատ ուժեղ ա եղե։
Մեծացել են, եղել են տաս-տասներկու տարեկան,
Փաշան ասե.—Էս երեխաները կուրբին չեն սիրում,—
Չէ՞ որ կռքերի դեմը կրակներ են վառում, չէ՞,—
Ինչո՞ւ,—ասում,—քու երեխաները կրռքի չըսիրեն,
Ինչո՞ւ չըխունարվեն,
Ինչո՞ւ չէիան աղոթք աննեն։
— Դե՛,—ասում է,—երեխա են, ա՛յ մարդ,—ասում,—
Կըմեծանան, նրանք էլ կըխունարվեն,

Մենք չե՞նք խունարվում,
Մենք էլ ենք խունարվում, նրանք էլ կըխունարվեն։
— Ո՛չ,— ասում ա,— երկսին էլ պտի գուհեմ ես,
Իմ կռներին մատաղ չինեմ։
Ասում է.— էդպես բան կարելի՞ ա,— ասում ա,—
Երկու տղային էլ մատղել կռների համար։
Ասում ա.— Որ չեն խունարվում՝ պտի դրանց մատղեմ։

Ապրում են, մինչև տասնըչորս տարեկան են դառնում։
Տասչորս տարուց որոշում է.
— Պտի բերենք անպայման իմ կուռքերին մատղեմ։
Երբ որ բերում են տղերքին մատղեն,
Մերն ասում ա.— Գիշեր կարա՞ք փախնեք։
Սանասարն ասում ա.— Ա՛յո՛, փախննեք։
Բաղդասար ասում ա.— Փախննեք՝ որտե՞ղ էթանք,
Անոթի բդի մնանք մենք։
— Ոչի՞նչ,— ասում,— կըճարենք, կապրենք.
Բա՛ մնանք ըստեղ,— ասում,— մեզի ըսպանո՞ւն թուրքերը,
կուռքերը։
Կըփախննեք, կէթանք,— ասում,—
Մե քիչ էլ կըմեծանանք,
Կուգանք մեր մորը կազատենք, կըտաննենք։
Այդպես էլ որոշում են,
Գիշեր փախնում են։
Մինչև փաշան խաբար ա ըլնում՝ բաշում ա իրենք օ՛ր։
Մարդիկ են ընկնում իռևներ,
Ման են գալում, չեն կարում գտնել։
Փախնում են, էթում են էտ մարդիկ։

2. Գալիս են, գալիս են, շատ են գալըմ, քե քիչ,
Գալիս են .լիջնում են մե հատ .յախպուր,
Շա՛տ սիրուն ջուր ա ըլնում, շա՛տ համեղ։
— Ախպե՛ր,— ասում,— ըստուց լավ տեղ չկա,
Արի՛, ըստեղ մեզի մե քոլիգ շինե՞նք,
Մե տուն շիննենք՝ ապրենք։
— Ա՛յ մարդ,— ասում ա,— ըստեղ ո՞նց կարանք ապրենք։
Ասում.— Մենք կըշինենք, որսորդություն կանենք, կապրենք.
Կըմեծանա՞նք, կէթանք մեր մերն էլ կըբերի՞նք,

էս յանից, էն յանից մարդիկ գրկան,
Կըլնենք գյուղ, էլի՛։
Ասում.—Բա ո՞նց ճարենք։
— Ա՛յ մարդ,—ասում,—էս լե՞ռ քարերն ամբողջ բերենք,
շինենք, էլի՛։
Ըլնում են էրկու ախպրով, շատ ուժեղ են ըլնում,
Կպնում են էդ քարեր.
Ջոկում են, բերում են, սկսում են շինել։
Շինում են մի մե՛ծ բերդ.
Նատում, մտածում են էրկու ախպրով։
— Անունն,—ասում,—ի՞նչ դնենք։
Ասում.—Կէ՛յանք մի մարդ կըգտնենք,
Մի մեծ մարդ, կըրնենք՝ ինչ անուն դնա։
Էլում են, պտրտվում են,
Մե հատ մեծ բիձայի գտնում են, բերում են։
— Բիձա՛ ջան,—ասում,—քստու անուն ի՞նչ դնենք։
Ման ա գալում բիձեն՝ էս կողմ, էն կողմ,
Ման գալուց եզո, ասում.
— Աստվածծ քստու անուն դրեր ա, Սանասա՛ր ջան։
Ասում ա.—Ի՞նչ ա դրեր անուն։
Ասում ա.—Սրա անուն դրեր ա Սա՛-սուն՝ ա՛ն-սուն։
— Հայրի՛կ,—ասում,—իսկապես, լավ անուն դրիր սրան։
Այդպես էլ մնում է Սասուն։

3. Գրանք բդեղ ապրում են։
Գալիս են մարդիկ, մոտենում են նրանց։
Էդ մարդիկը մեծանում են
Ու մտածում են իրանց մոր բերելու խրմար։
Էրկու ախպայրով էլ, շատ ուժեղ, ձի են ունենում,
Նեժնում են ձիանք ու գիմում են էնդեղ,
Որտեղ պահում էր փաշեն իրանց մորը.
Սա փակի տակ ա պահում մորը։
Գալիս են, գիշեր հարձակում են կատարում փաշայի
քաղաքի վրա,
Իրանց մորըն ազատում են,
Վերցնում են, բերում են։
Երփոր մորը բերում են,
Մերըն էս խատ թելադրում է գրանց ամբողջ գործը։

90 *Էդպես այդ մարդիկքն ապրում են իրար խետ մե*
առժամանակ։

Հայտարարում են մի տեղ էլի Թուրքերի խետ կռիվ։
Երբ որ կռիվ ա ըլնում,
Էրկու նախայրով շատ կոտորում են տալում։
Ըդեղ մե գեղեցիկ ախճիղ ա ըլնում.
Թե Թաքավոր ա ըլնում, Թե շահ ըլնում,
Սանասարը վերցնում, բերում իրան համար։
Երբոր բերում ա, մերն ասում ա.
— Լա՛վ, քեզ համար որ բերեցիր,
Բա՛ Բաղդասարի՞ա համար,—
100 *Ասում ա,—չէ՞ որ ախպեր ա։*
— Ոչի՛նչ,—ասում ա,—
Մե օր էլ կէրթանք Բաղդասարի համար կրբերենք կինն։
Բաղդասարն ասում ա.—Մայրի՛կ,—ասում,—ես կնիկ չեմ
ուզում։
Ջորսը բոլոր լսում են Սասունի անուն,
Լցվում են հայ մարդիկ։
Ջորեղանում են տղաներ,
Պահում են Բաղդասարին, Բաղդասարն էլ է պահվում։
Աճում են էդ մարդիկ։
Էդ Վեցոն, Զենով Օհանը, դուրս են գալիս Բաղդասարից։

110 4. *Սանասարի ժամանակ**, *Մսրա Թագուհին ասում ա.*
— Ես բդի բերեմ Սանասարին ինձ հետ,—ասում ա,—
Թող էս տղայիս պախի։
Սանասարը գալում ա բդեղ,
Իրա ախպերը՝ Բաղդասարը, հօժար չի ըլնում, ասում ա.
— Ինչո՞ւ ես էթում. Թուրքի երկիր, Թուրքի կնիկ։
Մայրն էլ հօժար չի ըլնում, ասում.
— Ի՞նչ գործ ունես Թուրքերի մեջ մտնելու։
— Չէ՛,—ասում,—չէ՞ որ ես նրա հետ խաթ լավ եմ եղե,
Օգնությունն շատ է հասցրե ընձի։
120 *Կէթամ,—ասում,—մե ժամանակ կապրեմ, էլի՛։*

* Վիպասացը մի քանի անգամ այստեղ շփոթվեց անուններում. մերթ Մհերը էր ասում, մերթ Սանասարը։ Նա մոռացել էր գալիք մեքենայը և ներդրության խնդրելով պատմեց հետևյալը։ Ծան. բանահավաքներից։

Այդտեղ կնգա հետ երդում ա անում.
— Յոթը տարի,— ասում,— չեմ գա.
Երդվում եմ,— ասում,— որ քո դռշագը էլ չըմտնեմ։
Յոթը տարուց հետո,— ասում,— նոր ես գուկամ իմ գահի վրա։
Ու էդպես թողում էթում էդ մարդ։
էթում, դրա հետ ապրում է էդ մարդ.
Դե՛, մարդ է, էլի՛։
Կինը նրան շատ սիրով ընդունում ա։
Մանաւսաորը մի օր տեսնում,
Որ Մարա Մելիքը, իրիգուն, նախիրը գալու ժամանակ,
էթում նախրի դեմ։
Նախրի դեմից տեսնում,
Որ էրկու հատ ձագ՝ գոմեշի ձագ,
Մեկը գանել էս խոլթուղ,
Մեկը գանել էն խոլթուղ, գալում։
Իշկում.— Օ՛,— ասում,— ես Աստուն քանդեցի, Մարը շինեցի։
Էս ի՞նչ արեցի,— ասում,—
էսքան ուժեղ տղին՝ ծնող,
Ես երեխա չունեմ,— ասում.—
էսի, որ .յելավ՝
Ընձի էլ րդի ըսպանա, իմ ազգն էլ կըմնա,
.Յինը կըդառնա ամրողջ Հայոթյան թաթավոր։
Ո՞նց անեմ,— ասում,— պտի էթամ ես։—
Բայց տարիքներըը չի լրացե, չէ՞, էդ մարդուն։—
Աստուա ա.— էթամ, կնոջս խնդրեմ։
Իրիգուն գալում, տխուր-տրտում նստում.
— Հա՛,— ասում ա,— Մանաւսա՛ր ջան, ինչո՞ւ ես տխուր,—
էդ կինն է ասում՝ Մելիքի մերը։
Աստուա.— Հե՛չ, տխուր չեմ,— ասում,—
Բայց,— ասում,— երկիրն .յընգել մտես,
.Յուզում եմ գնամ։
Աստուա.— Ինչո՞ւ, ի՞նչ ա պատահե քեզ.
Վա՞տ ես ապրո՞ւմ, ժողովո՞ւրդ քեզ չի ենթարկվո՞ւմ...
— Չէ՛,— ասում,— բոլորն էլ ենթարկվում են,
Բայց ես ուզում եմ էթամ իմ երկիր,
էթամ տեսնեմ՝ իմ երկիրն ի՞նչ դրության է։
— Լա՛վ,— ասում,— կարելի ա։

Բայց տենում, օ՛, չափազանց հասունացել ա տղեն։
Յինքն էլ ա տենում,
Որ իր տղեն արդեն կարող ա կառավարա իր օգնությամբ։

5. Մանասարը թողում դալի։
Թողում դալի, կնիկն ասում ա.
— Գիտե՞ս որ,—ասում ա,—մենք երդում ենք արե,
Որ մարդ ու կնիկ չբնենք յոթը տարի։
— Կնի՛կ,—ասում,—գիտե՞ս ինչ կա.
Բե՛ր օրըն անենք շաբաթ,
Շաբաթըն անենք ամիս,
Ամիս անենք տարի,
Բերենք յոթը տարին լրացնենք, էլի՛։
Ասու դեմ էլ խնդրենք,
Աստված մեր աղաղակը, աղաչանքը կրկսա,
Եվ մենք կրդառնանք էլի մարդ ու կին։
Գնում են, էդպես էլ կատարում են։
Մնվում ա տղեն,
Անունը դնում են Դավի՛թ։
Դավիթը որ ծնվում ա, էդ մարդը մահանում ա, քե
թաղանում են,
Էդ չեմ կարա ասեմ։

Բ

Դ Ա Վ Ի Թ

6. Դավիթը մնում ա ևիմ։
Դավիթի մերն էլ ա մեռնում, լրիվ մնում ա ևիում։
Բերում ժողով են անում՝
Յոան Վերդոն, Զենով Հովան, ծնեղափոթրիկ.
Բաղդասարն էլ ա մահանում,
Բաղդասարի եղածներն էլ էդ իրեք տղեն ա բլնում։
Ասում են.—Ի՞նչ անենք։
Գնաց ընտեղ՝ Մսրը,
Մսրը թաթավորություն արավ էդ մարդ,
Մսրա Մելիքի մերը պահեց որպես կին.

Նա մեր ա, էլի՛։
Բերենք մեր Դավիթին տաննենք տանք, թող պահա։
Դրանց ըլնում են էրկու խատ նոքյար՝
Զարբազալ Քամին, Բաթմանա Բուղեն։
Տղին տալում են էդ էրգրսի ձևոներ,
Թուղթ են գրում, խնդրում են, տալում են։
Բերում տալում են Մելիքի մո՛րը։
Մելիքի մերն առնում թուղթը, կարդում,
Մև հատ խոնդախ վերցնում, դնում բնգեղ։
— Բա՛,—ասում,—ինչո՞վ պահեմ,
Ընձի ծիծ չկա, ա՛խր։
Ես,—ասում ա,—Սանասարի դիրեզմանին դուրբա՛ն բլնեմ,
Սանասարի խաթեր համար կըպահեմ,
Բայց ծիծ չունեմ, ինչո՞վ պահեմ սրան։
Մտածո՛ւմ, մտածո՛ւմ,
Վերջը կանայք են գալում, մարդիկ են գալում,
Թաքավորի կին ա.
Մելիքն էլ արդեն հասունացել ա,
Վախենում են դրանից։
Ռռնում ժողով անում, ասում.—Գիտես ի՞նչ կա,
Դու յուղով-մեղրով պտի պահես,
Թե չէ՝ էդի չապրի։
Կաթը, յուղը, մեղրը խառնում յիրո՛ւր,
Դրան սկսում է էդ մարդը խնամել։
Խնամո՛ւմ, մինչև ըլնում է չորս-հինգ տարեկան։
Բայց Զարբազալ Քամին, Բաթմանա Բուղեն բդեղ են.
Դրանք, ինչպես հոր ժամանակ ին աշխատում,
Այնպես էլ ծառայում են էդ երեխային։

7. Երբ որ ըլնում խինգ-վեց տարեկան,
Մելիք վերցնում է իր քայրաշ տղերին էթում, հոլ է խաղում։
Հոլ խաղալու ժամանակ՝ Դավիթն էլ ըլնում էթում.
էթում, նատում էդ հոլի մեջտեղ։
Ասում ա.—Դավի՛թ ջան, ախպե՛ր ջան,—ասում,—
Յելի՛, գնա էն յան նատի։
— Չէ՛,—ասում,—էստեղ կընստամ։
Վերջ, ինչքան տանում քալում են էն յան,
Գալում, նատում հոլի օրթըլաղը։

— Ա՛յ մարդ,—ասում,—խայի սըլսըլա է էսի,
Ջանե՛ք,—ասում,—հոլը, թո՛ղ սատկի մեռնի։
Հոլը բռնում դնում են, որ զանեն սատկի,
Հոլը վերցնում, քամում ձեռի մեջ, շրպըրտում։
— Օ՛,—ասում,—բատու բդի տամ բսպանել,
Բատու ապրելը էլ բոլ ա։
Սա, որ մեծրցավ՝ բնձի գ՝աղթա։
Շատ դժվարանում ա իրա գործի վրա,
Թողնում բոռ ու փոշման գալում տուն։
— Հա՛,—ասում ա,—Մելի՛ք ջան,—մերը,—
Ընչի՞ ես .էչաօր տխուր։
Ասում ա.—Էդ սրիկա խայի էրեխեն բերեր ես թալեր ես բատի,
Խայից ի՞նչ կըլնի դուս.
Ջրթողում,—ասում,—մի ընկերներիս խետ խաղ անեմ ես.
Միշտ խանգարում, միշտ խանգարում,—ասում.—
Թե խրփես բսպանե՛ս,
Ի՞նչ անես, փորր ա, բդի մեղ դրնեն ինձ.
Թե չբխփեմ,—ասում,—ո՞նց անեմ ես դրա խետ։
Մեր ասում.—Բա՛ն չկա, բալի՛կ ջան,
Էրեխա յա, չի հասկանում.
Կըջոշընա, բեզի բոմագ բլնի, քեզ ախպեր ա՛,
Որտեղ նեղն .յընգնես՝ նա գուբա, բըզի կօգնա,
Գ՝ասնի թու կռիվներին։
— Ա՛յ մարդ,—ասում,—հայը ինձ օգնական չի բլնի։
Վերջը, էդ մարդը միշտ Դավիթին դեմ էթում։
Մերը համոզում է, որ էդ մարդը ապրի։

Շատ համոզելուց՝ էրկու տարի էլ ա բաշ տալում,
Մինչև բլնում յոթ տարեկա՛ն։
Էլի մի գործի մեջ մտնում էտ մարդը,
Էլի էթում, խանգարում ա։
— Ա՛յ մարդ,—ասում,—էնե՛նց խփեք,
Որ տեղից դուրս չելնի։
Բռնըցնում են .յընգերներ, ի՛նչ անում են,
Դրա զանածը կարծես իրան բոլորովին պետքը չէ.
Ինչ որ թալում են՝ վերցնում, շպրտում էթում է,
.Յիդև չեն կարողանում գնալ։

Գալում, էլի մորը բողոքում։
Ասում.—Որ բաներց ա, ճամփեներ էիա իրանց երկիր.
Իրան բարեկամներ ունի,
Թող տաներն իրան պահեն, որ դժդոհություն ես հայտնում։
— Այո՛,—ասում է,—հեռացրո՛ւ, թող էիա։

8. Չարքաղալ Քամին, Բաթմանա Բուղին բերում ա,
Այդ ժամանակ Դավիթը ըլնում ա տաս տարեկան,
Սովրցրնում ա Մելիքը, ասում.
— Սրան կտանենք,—ասում ա,—կէիաք,
Մեծ չայ ա գալում,—ասում ա,—
Էտ չայըն քցնք կամուրջից,
Թող խեղդվի, ջուրը տանի.
Գաք,—ասում ա,—ես ձեզ լավ ծառայություն կտամ,
Ես ձեր փողը շատ կտամ Սանահարից։
.Ձեղնում են, վերցնում են տղային, բերում են,
Ճամփին խոսալով գալում են.
— Ա՛յ տղա,—ասում են,—
Չէ՞ որ մենք Սանահարի հացը կերել ե՞նք,
Էդքան մեծացել ե՞նք, մեծ մարդ ենք դառե՞.
Էդ մարդն էլ՝ Սանահարի տղան ա՞.
Ո՞նց սրան բսպանենա։
Էն մեկն ասում.—Փողի խնդիր ա,
Թող մե հատ Դավիթ էլ չըլնի,
Բոնենք քե՝ չի ծնվե.
Կէիանք նրա կուշտ, նրա կուշտ կապրենք։
Էն մեկն ասում.—Ա՛յ մարդ,—ասում,—
Չի կարելի մեր տիրոջ տղային մենք բսպանենք,
Հաց ենք կերե, չէ՞, աղ ու հաց ենք կերե,
Ո՞նց կարելի ա բսպանենք։
Վերջը, բերում են բղեղ,
Էն մեկը սրիկա չա ըլնում,
Բաթմանա Բուղեն սրիկայություն ա անում,
Փաթթվում տղային, որ քցա ջուր։
— Ա՛յ տղա,—ասում ա,—էստեղ եկել եք սատանի նման՝
կարմրնջի վրա,
Կա՛մ ես պտի ձեզի գլորեմ՝ .յրնկնիք ջուր,
Կամ դուք բղի գլորեք, ես .յրնգնիմ ջուր, խեղդվեմ։

Չի՞ ըլնի,—ասում,—ախպե՛ր, էթանք ընդնինք էն յան՝
Նոր խաննենք գյուլաշ։
Էն մեկն ասում.—Ա՛յ,—ասում,—էսի լավ մարդ պիտի դառնա,
Դրան չըսպանենք, տանենք հանձնենք, էլի՛,
Տանենք հանձնենք իրա տիրոջին,
Ասենք՝ մենք չենք աշխատում,
Բողնենք էթանք,—ասում,—Մելիքի մոտ։
Բողում են էդպես,
Տանում են հանձնում Չենով Օլանի՛ն։
Չենով Օլանը բերում է, պահում։

9. *Չենով Օլանի կնգա գլխին ասո՛ւ կրակը թափի,*
Չի սիրում, էլի՛։
— Ա՛յ մարդ,—ասում,—էս բուղեն յո՞ւսա բերիր մեր գլխին,
Էս էլե,—ասում,—եքյա տղա,
Դի՛ր մի աշխատանքի, թո՛ էթա, էլի՛,
Բա՛ ես ո՞նց անեմ սրա խետ։
— Ա՛յ կնիկ,—ասում,—էրեխա յա,
Սրան,—ասում ա,—որտե՞ղ ես ուղարկեմ, ի՞նչ անա սա.
Թո՛ տպրի, էլի՛,—ասում,—
Քիչ կարողություն ունի՞ սրա հերը,
Ամբողջ դեղին ոսկին պահեստներում ա, ա՛խր.
Թո՛ իրա հոր ոսկուց ուտի, տպրի, էլի.
Մենք էլ ենք տպրում, թո՛ նա էլ տպրի։
Վերջ, մնում է, մինչև դառնում է տասներկու, տասչորս տարեկան տղա։
Կինը էլի հայդութուդուր դնում, գատ չի տալում,
Շոր էլ չի տալում մինչև քնի։
Թալում ընդեղ, պառկում իրա խրմար գետնին, քնում,
Առավոտ յելնում՝ իրա թայդաշների խետ խաղում,
Որի խետ խաղում՝
Ջանում թև ա կոտրում, գլուխ ա կոտրում։
Բողոք էլ մե յանից ա գալում վրեն։
Չենով Օհանը մտածում, որ իսկապես,
Սա գելնի Սանասարին կանցընի,
Շատ ուժեղ ա սա։
Գալում կնիկն էլ բողոք անում.—Ախպե՛ր,—ասում,—
էս խետ էլ խըլղի կնանիքն են գալում իմ վրա բողոք.

Խրփում խլդի կնանիքին,
Յարալու անում աղերքին, չարդում.
Թև ա չարդում, ոտ ա չարդում.
Չի՛ ըլնի,—ասում,—մեկ իլլաչ արա՛ ըզոր։
— Դե՛,—ասում,—կնի՛կ չան, մի՛ նեղացի,—ասում ա,—
Տանենք մի զառնարած անենք, հորթարած անենք։
Ասում.—Շատ լավ, հորթարած անենք։
Անում են հորթարած էդ մարդին։

10. Առավոտ .լելնում են, հորթերը թողում են,
Դավիթըն առնում, էթում։
Էթում, էն մյուս գյուղից մեկ հատ էլ հորթարած ըլնում խետ։
Էթում ըզոր խետ համաձայնըվում,
Հորթերը խառնում են .լիրար,
Տանում են պախում են, գալում են։
Այդպես պախելով էլ մեկ էրկու տարի էլ անցկացնում։
Շատ չարչարանքներ կրնելուց հետո,
Մի օր էլ .լրնգերն ասում ա.
— Գիտե՞ս ի՞նչ կա,—ասում ա,—
Էսօր մեռելների համար ճաշ են տալում,
Հարիսա յա դնում են,—ասում ա,—
Հարիսեն բերում են ժամի դուռը։
Դու տավարը պախա՛,
Ես էթամ, հարիսա բերեմ՝ ուտենք։
— Չէ՛,—ասում ա,—դո՛ւ պախա, ես էթամ,
Դու ինչքա՞ն պտի բերես, որ ես կշտանամ։
Ես էթամ բերեմ՝
Հա՛մ դու կե, հա՛մ ես ուտեմ, կշտանամ։
Համաձայնվում են, հըլնում գալում։
Դավիթը նէ որ գալում, հասնում ա ըզեղ,
Գալում մեկ հատ կնկա կուշտ, խնդրում.
— Նանե՛ ջան,—ասում,—մեզի հարիսա կտա՞ս։
Ասում ա.—Բալա՛ ջան, նստի՛,
Ինչքան կուտես՝ լցնեմ, կե։
— Չէ՛,—ասում ա,—.լրնկերս ընդեղ սոված ա։
— Բա ի՞նչ ես .յուզում։
Ասում ա.—Նանե՛ ջան,—ասում,—էս ա՝ կանիքը ըցնի,—
Պատուկ ա ըլնում .յատաջ, չէ՞,—

Քցեմ ըսու կանիքը, առնեմ, էիմ։
Ասում.—Բալա՛ ջան, քա՛ էս ժողովրդին ի՞նչ տամ։
— Դե՛,—ասում,—իմն բռնից ա,—ասում.
Հենց վռազ-վռազ քցում պուտուկը, դնում փեսի ծերին,
Ընտուց էլ նեալ ըլնում,
էտ նեալն էլ բռնում ձեռն
Ու բնկնում ճանապարհ, գալում նու։
— Ա՛յ մարդ,—ասում են,—էսի վարձք բմբռնից,
Թո՛ տանա, էլի, նախրչի ևն, թո՛ տանեն, ուտեն։
Վերցնում բռնից, բերում, բնկերին հասնում։

Գալում, տենում, .յընկերը լաց ա ըլնում։
— Տո՛, շա՛ն տղա, ինքան եմ բերև,
Մև գեղ ուտեն՝ չբխըլըսի, ընչի՞ ես լալում.
Ա՛ռ կեր, էլի՛, ընչի՞ ես լաց ըլում։
Ասում.—Ի՞նչ լաց ըլնեմ,—ասում ա,—
էն յանից իրեք հատ մարդ էկան, նախիրը կես արին,
Ինձ էլ էս օրին քցին, ափին, առան գնացին։
— Դը՛,—ասում ա,—արի դու հարիսեն կե՛,
Ո՞ր ճամպխով գացին։
Ասում ա.—էս յան գացին։
— Դը՛,—ասում ա,—իմ կոբալը տո՛։
Վերցնում է Դավիթը կոբալ, .յընդնում ճանապարհ։
Շատ էթում, թե բիչ էթում էդ մարդ,
Հասնում ա ըդոնց.
Տեսնում ա՝ իրեք մարդ հէրի մեջը մտած,
Ձիանքը կապած դուս, ըդտեղ կայնած։
— Հե՛յ,—ասում,—խոզածի՛ն,—ասում,—
Ի՞նչ ման ես գալում ըստեղանք։
Ասում.—Իմ տավարը որտե՞ղ է տարած,
Իմ տավարը բերե՛ք, տվեք։
.Յերիգուն էիմ, տավրի տերոջն ի՞նչ ասեմ ես,
Բերե՛ք, իմ տավար տվեք։
— .Յելե՛ք,—ասում ա,—տղե՛ք,
Բռնենք դրան, կոխենք զազանը, ուտենք։
էդ ասելուն՝ մեկին խփում կոպալով, գլուխը ցրվում,
Մեկի՛ն էլ, մեկի՛ն էլ, իրեքին էլ բսպանում։

Մտնում ներս, տեսնում, որ ի՛նչ.
Ոչ ոսկի ա տեսե լդ մարդ, ոչ արծաթ ա տեսե.
Տեղում՝ մի չանը գեղին բան ա լցուկ, մե չանը՝ սպիտակ,
Մե հատ էլ լա՛վ ձի ա կապուկ ըղտեղ։
Ասում.—Էհամ, հոբոխպորս ասեմ.
Էս բոլորն իրա՞ն,
Էս ձիուն հենց ձևե տվեց՝
Մե կորալ էլ էնու գլխուն կըզանեմ։
Տեսնում, որ արդեն էդ անասունները լցած խազնի մեջ,
Յոթը կանթանի խազանի մեջ, նոում ա։
Ջուրը քամում, խազանը քցում իրա կոբալին, դնում թևին,
ասում.
— *Տանեմ էրկու գեղի արանք, թափեմ էսի.*
Ես չըմեն մարդ գա՝
Ուր տավար կըճանչնա, կըտանի, էլի՛։
Վերցնում, գալում, .չընդերին ասում.
— *Հաց կերե՞ր ես։*
Ասում.—Չա՛, կերեր եմ։
Բա՛ տավար ունինք,—ասում,—ի՞նչ ասենք։
Ասում.—Բերեր եմ, տավարն էլ եմ բերեր, մի՛ լաց.
Տանենք, էրգու գեղի արանք կրթափենք,
Դու ձեր գեղացիքին ըսա՛,
Ես՝ մեր գյուղացիներին կասեմ,
Ես՛ գան, .չամեդ իրան տավար չոզա։
— *Տո՛, ա՛յ մարդ,—ասում,—*
Իսկապես որ ասում են դու ծուռ ես.
Էս խաշվել ա, ո՞նց...
— *Ամեն մարդ իրան ի՛ղ տանա,*
Թամամ բերե՞ր եմ, խամբրա՛,
Քսան են տարե, նոսուն եմ բերե,
Էլ ի՞նչ ես ուզում.
Ի՛ղ գան, իրանց տավար տանեն։
Տանում են տավար, թափում են,
Գեղացիք ի՞նչ պտի ասեն.
Էհում են Ջենով Օվանին բողոքում են.
— *Ախպե՛ր ջան, չէ՛,*
Մե օր էլ կը տանա մեր տավա՛ր-տավա՛ր սաղ ջանավարի
տա,

Դրան ի՞նչ անենք մենք,
Էսպես չի ըլնի, ախպե՛ր։
— Բա ի՞նչ անեմ ես դրան,— ասում ա։

11. *Դավիթ գալում, ասում ա Հորոխպորը.*
— Արի էքանք, էնքա՜ն մեհ գործ կա,
Սաղ մեհ կողմը գնդին բան ա լցված,
Մե կողմը ըսպիտակ,— ասում ա,—
Մե հատ էլ ձի ա։
Կըբնիս, Հորոխպե՛ր, էդ սաղ քոնն ա.
Եթե դու էդ ձիանը ձեռ տաս՝
Իսկուն խփելու եմ քեզ։
Հորոխպոր հետ համաձայնըվում են,
Հելնում նստում են ձիան, գալում են։
Գալում են, գալում են, խասնում են ըրևդ։
Հորոխպեր մեկ ասում ա.
— Ա՛յ մարդ, էս ծրտու յնդի յընչի՞ եմ յընդի ես.
Ըստու պղոխ ի՞նչ խելք կա.
Ասում ա. «Մե յանը գնդին ա, մե յանը սիվտակ ա»։
Ի՞նչ խելք կա ըստու պղոխ։
Ձիան էլ ասում ա. «Մե ձի կա,
Թե մոտ գաս՝ կը խփեմ քե»։
Վերջ, ըրևնց տատանման մեջ էքում,
Էքում են, մինչև խասնում են.
Ասում ա.— Էս հէրի մեջն ա։
Էքում են մտնում են ըրևդ.
Իսկապե՜ս, Ջենով Օվան իշխում, տեսնում,
Ա՛յ մա՜րդ, ոսկուն էլ հաշիվ չկա, արծաթին էլ հաշիվ չկա։
Ասըմ.— Տե՛ս, էն էլ ձին ա,
Հա՛, էդ ձիան չըդիպես։
Սրանք ի՞նչ են, հավաքա՛,
Էս էլ իրանց ձիանն է, բայց էս ձին իմն ա։
Բերում են հավաքում, լցում, դնում,
Բարցում ըրևնց ձիանքին,
Ջենով Օվանի խետ ըլնում գալում։
Բերում.— Բա՛,— կնիկն ասում,— ի՞նչ էլավ։
— Ա՛յ մարդ,— ասում,— ի՞նչ ասես չէլավ.
Իրեք մարդ ա, որ իշթես,— ասում,—

Էս կրկիր չկա էն բոյին մարդ,
Մորթել ա, բսպանել ա, խաղինեն էլ ընդեից ա գան.
Էս ձին էլ ինքն ա բերե իրան։
— Ա՛յ,—ասում,—խոզե՛ր կենա քու գլխին,
Ձին ի՞նչ ա անում էդի, խաղինեն ի՞նչ անի։
— Ա՛յ կնիկ,—ասում,—խազինեն մենք կուտենք, մեր
էրեխեք կուտեն.
Ի՞նչ ես ուզում էս մարդուց։
Դավիթն ասում ա.—Դիտե՞ս ի՞նչ կա, հորեխպե՛ր,—
Ասում ա,—ընձի պետ ասա էս ձինը,
Անծնե՞մ, էթամ ման գամ ընձի համար։
Ասում.—Ի՞նչ ման գաս։
Ասում ա.—Անծնեմ էթամ, ընձի համար ման գամ,
Ձնեռուդ, լեր, բան բսպանեմ, էլի՛։

12. Հորեխպերն համաձայնվում։
Ընում խնծնում էս ձինը,
Էթում, իրան համար պատում աշխարը։
Մի լեր ա լարում էս յանը,
Բերում մե հատ Պառվի շախկամի մեջ՝ կոխատում, կոխում
էնտեղ։
Է՛նքան ա էտ շախկամի մեջ պատում,
Որ էտ շախկամ .լըմնն չառնում։
Պառավն էն յանեն Քումքան բաշկում վազում.
— Ա՛յ,—ասում,—քո բոյը քաղե՛մ, բե խորե՛մ,
Դու էն խոր ուղո՞ն ես,—ասում,—
Էս ի՞նչ զուլում ես արել իմ վրեն,
Էտով եմ ապրում ես, ա՛խր։
Ասում.—Ի՞նչ բլե, պառա՛վ, ինչո՞ւ ես անիծում։
Ասում.—Քու խոր խազինեն Քոդել ես ընդեղ,
Էկած ուրիշ մարդիկն են տանում,
Իսկ դու էկեր ես էստեղ,
Պառվի շախկամն ես ավիրում։
— Ինչպե՞ս,—ասում ա։
Ասում ա.—Մելիքը ճամփե Մսրա՝ Կուզրադուն,
Կուզրադին էգեր ա, քառասուն կույտ ախճիք ա վերցե,
Քառասուն խաա,—ասում,—բոյով ախճիք ա վերցե,
Որ քառասուն կառճ ախճիքըն էրզանք ազան,

Էն քառասուն ախճիկը պար բռնեն, խաղան,
Իսկ էն քառասուն երգարն էլ դավա բառնան։
— Որտե՞ղ է,— ասում,— էտոնք։
— Է՛յ,— ասում,— էն ա՝ էկած Զենով Օվանի տուն,
Ոսկին են չափում, թու հոր կարողություն.
Դու էլ էգնել ես,— ասում ա,— իմ շախակամն ես ավիրո՞ւմ։
Գնա՛, թու խոր ոսկուն տեր դարձի, էլի՛, անիծվե՛ս դու։
— Նանե՛ ջան,— ասում,— մի՛ անիծա,
Էքմամ, հըլը տենամ, որ ոսկի էլավ՝
Մի մեշոկ բե կտամ։

13. Քշում գալում,
Ձինը տանում, կապում դուռ,
Ով իսկապես, մարդիկ էգած ըղնդ,
Բարև ա տալում, ասում.
— Հորոխպե՛ր, էս մարդիկ ըստեղ ի՞նչ են անում։
— Յա՛վ,— ասում,— թու պնչին,
Չես տենո՞ւմ՝ ի՞նչ են անում։
— Ա՛խր, էտ ի՞նչ են անում,— ասում։
— Էսի,— ասում ա,— Մսրա Մելիքն ա ուղարկի,
Կուզրադին էկե, հազար ձիավորով,— ասում,—
Առ ու Թալան բդի անա, հորդ ոսկինները տանա։
Մենք չենք կարում Կուզրադնի դեմ խոսա։
Ասում ա.— Իմ խոր կարողություն ես պտի չափեմ,
Մա՛րդ իրավունք չունի։
Էքում, կոտրն առնում, չափում,
Կիսատ ա լցում։
Կուզրադին ընտեղից խոսում ա։
Ասում ա.— Խոսում ե՞ս։
Վերցնում կոտը, գանում,
Կուզրադնի գլոխն անում էրկու տապակ,
Կոտն էլ ջարտում, բռնում պատին, էքում։
— Ձի՛մ տալում,— ասում,— իմ խոր ոսկիք։
Կուզրադին ըտենց յարալու Թողնում, փախնում։
Որ ամենքին գանում, .յըլնում,
Ձենք, բան չունի էդ մարդ,
Մե ծառ բոբխան անում, դնում վըր Թևին, գանում.

Ջանում, ջառամում, փշրում,
Կուզրադին, ըզոնք փախնում, դալիս են։

14. Գալիս ա, կնանիք կայնում են ճանապարհի վրա.
— Ա՛յ,—ասում ա,—էգա՞ր մեծ բերան Կուզրադի՛ն.
Ասում էիր՝ էքեամ Սասուն,
Բերեմ բառսուն կոլոտ ախճիդ՝ չերգանք ադան,
Քառսուն արմադան ախճիդ բերեմ՝ դավա բառնան,
Ընդեղից էլ կարմիր կովեր բերեմ՝ անեն եղ ու չորքան,
Մըսըրն ապրենս
Էդ ի՞ր քո օրը։

Կուզրադնի վրեն հալ չկա, յարալու մարդ,
Ընդեղ ասում, ծրծղում են,
Կուզրադին էրթում, խասնում Մելիքին։

15. Մելիքին երթ որ խասնում էդ մարդը,
Չարրազար Քամի՛ն, Բաթմանա Բուղեն տեսնում են որ՝
Օ՛, արդեն Դավիթը դարձն իսկական մարդ,
Մարդի, բանի հաշիվ չի առնում։
Ասում ա.—Բդի էքեանք,—ասում ա։
Բաթմանա Բուղեն ասում.—Ինչո՞ւ էքեանք, բատեղ լավ ա։
— Միևնուն ա,—ասում ա,—սաղ երկիր կավիրա.
Սա որ դուս էգնի՝ էս երկիր կավիրա։
Կուզրադնուն էս դորձը արողի՝ կըսպանա մնդի,
Էսդեն կըբանդի էս ախշար։
— Չի՛,—ասում ա,—չի՛ ըլնի։
Ապրում են էդպես։

Մսրա Մելիքը բզում ներս.
Բայց մերը չի Քողում Մելիքին, ասում.—Քու ախպերն ա։
Բայց մերը գիդում, որ կուժեղանա՛,
Դրա հերը նրա հորից ուժեղ ա էղե,
Չի՞ որ Մանասարը ուժեղ ա էղե Մելիքի հորից։
Ասում ա.—Միևնուն ա, սա էքեա, նա կըսպանա սրան,
Այնպես անենք, Քող մնա, հարկավոր չի,—ասում ա.—
Նա այլ երկիր ա ապրում,
Դու մեր երկիրն ես ապրում՝ Քուրքական երկիրն ես ապրում,

Ի՞նչ գործ ունես նրա խետ,
Թո՛ իրա համար ապրի։
— Շատ լավ,— ասում։

16. *Դավիթ խնծնում ուր ձին, էս խետ էքում որսի։*
Որսի ժամանակ էքում, պատում տեյ գիշեր,
Հորոխպոր խետ մնում են դուս։
Ասում ա.—Հորոխպո՛ր, էս գիշեր մնանք էս անշարքը,
Տեսննք ի՞նչ կա էս սարերքը։
Ասում,—Մնանք, Դավի՛թ ջան։
Հորոխպորն էլ է էս խետ վախենում, ասում ա,—
«Էսի նիհ հակառ էքամ, միհնուն է,
Կրզանա, մե վնաս կտա ինձի»։
Գիշեր մնում են բդտնդ։
Յիջնում էդ մարդ, գիշեր ման գալու ժամանակ
Տեսնում՝ մե հատ կրակ ա վառվում,
Ա՜նջախ բոց ա տալում։
— Հորոխպո՛ր,— ասում,—հըլը յիկի՛ վեր,
էն սարի գլոխն,— ասում,—էն ի՞նչ ա, վառում ա։
— Է՛,— ասում,—բալա՛, ի՞նչ տեսար։
— Չե՞ս տենում,— ասում,—է՛, էնտեղ լուս ա վառում,
Ես,— ասում ա,—բդի էքամ են լուսի կուշտ։
Ասում.—Ի՞նչ յավ ունես, ա՛յ բալա,
Եսիմ դաշաղ ե՞ն, եսիմ ճանապար կտրող ե՞ն, ինչ մարդիկ ե՞ն,
Ի՞նչ յավ ունենք էրթանք ընդեղ։
— Չէ՛,— ասում,—ինչ էլ որ լինի, ես բդի էքամ,
Բդի էքանք,— ասում,—տենանանք ըզինց։
— Ա՛յ բալամ,— ասում,—գործ չունես։
էքում էդ մարդ, չի լսում հորոխպոր։
էքում, էդ լուսը տենում.
Ա՛յ մարդ, բատեղ եղել ա շինուքյուննե՛ր,
Բատեղ եղեր ա ծառ-պտուղնե՛ր,
Ամեն ինչ բատեղ կա։
Դառնում գալում, ասում.
— Ա՛յ հորոխպեր, ընդեղ,— ասում,—կարդին շինարարուքյուն ա,
էդ ի՞նչ շինարարուքյուն ըզեղ։

Բայց ընդեղ,—ասում,—մե էրկու-իրեք հոգի պահակներ կան,

Խեղճ մարդ են, բան չասեցին.
Ասում են՝ էդ պատկանում ա Մելիքին։
Ասում.—էդ մերը չի, որդի՛ ջան, էթա՛ նք։
Գալում են էրկուսով, լուսը բացվում.
Բարի լուս բացվի ձեր վրա,
Բացվում էդ մարդկանց վրա։
Քշում են գալում ձիանք, հասնում են տուն, ասում ա.
— Ես էթամ իմ խորուրդավոր Պատվի կուշտ։

17. Յերնում գալում խորուրդավոր Պատվի կուշտ։
— Նանե՛ ջան,—ասում,—գիտե՞ս ինչ կա,
Ես էս գիշեր հորթախաղա հետ գացեր եմ մի սարիր, չոլիր.
Բայց մե տեղ մե լուս եմ տեսե,
էդ լուսի վրեն գնացի,
Տեսա՝ շենք կա, շինարարություն կա, բայց բանդված է։
Մե էրգու-իրեք հոգի էլ պահակ են էդտեղ։
— Հե՛յ,—ասում,—հոդեր իտա՞մ բու դլխին.
Նա Մարութ Աավարածին են ասում,
Նա բո հորդ աղոթքատեղն ա,
Մինչև նրա անունը լիդեր, նա կովի չէր էրթե։
— Ո՞նց,—ասում ա,—բա ընչի՞ բանենց ըլե։
Ասում.—Հիմա Մելիքը տիրեր ա,
Հորթախերդ վախկոտ ա՛, Մելիքն էլ տիրեր ա։
— Լա՛վ,—յերնում գալում։

— Հորթախե՛ր։
Ասում.—Ի՞նչ ա։
Ասում.—Խինդ հարուր խաա,—ասում,—բանվո՛ր,
Խինդ հարուր խաա վարպետ,
Խինդ հարուր խաա շարող,
Որ շարեն,—ասում ա,—մե ամսվա մեջ,
Մարութ Աավարածին կառուցեն։
Ջեմ դիդում,—ասում ա,—եդո, իր որաերն իր մեջ ըլնի։
Հրամեն,—ասում,—կատարես՝ կատարես,
Ջըկատարես, միևնույն է, քե կրսպանեմ։
Հորթախեր մդաճում։

Ասում.—Ես էքում եմ,
Ես ընդն բդի նստեմ, կառուցեմ, շինեմ,
Հավանեմ, թողնեմ գամ։
Հորթխպերը գալում նստում, մդաճում, մդաճում.
—Ի՞նչ անեմ,—ասում,—
Չանե՞մ՝ անպայման կրսպանա ընձի։
Կնիգն ասում ա.—Ես բա՛ որ ասում ի՝ շո՛ւտ վերջացրա սրան,
Շուտ թող էքա, յերադ բլի մեզնիկ՝ չարեցիր.
Ա՛յ, էս էլավ կրա՞կ՝ յընդավ մեր ջանն։
Ասում.—Ա՛յ կնիգ, իրան խոր կարողություն ա,
Իրան խոր ուխատատեղն ա,
Ինքը գնել ա, ինքն էլ յուզում ա պատրաստի,
Մեզ ի՞նչ ա անում։
Փայդն էլ, ոսկին էլ կա,
Ինչ որ բանվորի բդի տա՝ իրա խորն ա, բդի տանք։

Բևրում, հազար խինգ հարուր մարդ ուղարկում։
— Մե ամսվա մեջ,—ասում,—շինել Մարութա Աավարածինը,
Նորոգել, պատրաստել և տալ ինձ։
Պատրաստում են, վերջացնում են, պրծնում են,
Կանչում օծել ա տալում Նորից,
Քառասուն տերտեր ա դնում,
Քառասուն եպիսկոպոս, քառասուն խատ տիրացու յա դնում մեջ։
Ասում ա.—Էս ձեր տեղն ա,
Ձեր փողն բառացեք, ըստեղ էլ ապրեք։
Ինքը խնծնում իր ձինը, ման ա գալում։
Սկսում ման գալ իրա խամար.
Է՛, Դավիթին էլ ինչ ա բռասա գալում,
Ձեռից չի պրծնում Դավիթի.
Խփում՝ ցվրում, մարդ չի կարում մոտենա։
Անհաղթ Դավիթ որ ասում են, նա յա ըլնում։

18. Մելիքը մդաճում։
— Գիդե՞ս ինչ կա,—Կուզրադինն ա էլի էքում, ասում։
— Ի՞նչ կա, Կուզրադի՛ն։
Ասում ա.—Դավիթը խոր՝ Մհերի, որպասարը էլի շինել ա,

Մարութա Աստվածին շիներ ա.
Պահակները դրեն, որսերը դրեն մեջ։
Տո՛ւր,— ասում,— մարդիկ, որ էիմամ էդտեղ,
Ավիրեմ, փշրեմ, բանդեմ,
Ինչ որ ունի՝ թալանեմ, վերցնեմ գամ։
Հազար խինդ հարուր ձիավոր տալում Կուզբադուն,
Կուզբադին էլի վերցնում, գալում այդ վանքը,
Որտեղ որ Սաամա վանքն ա, .յբխտատեղ։
Գալում՝ էդ տերտեր-վարդապետներին ըսպանելու ժամանակ,
Դավիթը նստած խմում ա .յբնգերների խետ՝ Սասունում։
Մե տիրացու յա պրծնում,
Փախնում գալում, տեսնում՝
Դավիթը նստած, խմում ա իրան խրմար նռան գինին։

Ասում.—Հավար արե՛ք մեր պարոնին,
Խաբար արեք մեր պարոնին,
Գեմը դրած նռան գինին,
Կտրին Մարութա Աստվածին,
Քառասուն վարդապետ, քառասուն տերտեր,
Քառասունից մեկ պակաս տիրացու, որ ես եմ։

Իրեք անգամ բռնեց ասում ա։
Ասում.—Էս մարդ ի՞նչ ա բլբլում, է՛։
Կանչե՛ք ներս,— ասում,— էս ի՞նչ ա խոսում։
Կանչում են ներս։ Ասում.
— Դավիթը սա՛ղ բլի,— ասում ա,—
Մարութա Աստվածին ավիրեցին, քանդեցին, բոլորին կտրեցին,
Մինակ ես եմ էկել, որ քեզ հավար եմ բերում։
Ըլնում խեծնում ձին, վազում։
Մառը բոքահան անում, սկսում բռնեն կոտորել,
Խաբրաբեր չի թողնում։
Կուզբադին էլի փախնում։
Ասում.—Գնա՛, էլի խաբար տանող դու ես, Կուզբադի՛ն,
Պրծար քու մարդքերուց։
Դու էնքան աղվես ես, որ փախնում ես էս յան, էն յան,
Մինչև մեկը բդի էրթար խաբրաբեր։

* Երգ է։

19. Կուզբաղին գալում ա։
Հա՛ էլի էդ կնանիքն սկսում են ծըծդալ Կուզբադու վրա,
Թրանա են անում։
— Ա՛յ քյոփօղլի,— ասում ա,— ախմախանո՛ր,— կնանիքին,—

Դուք չեք տեսե Սասնա ծռեր,
Որ գալիս են լերան-լերան,
Մե փեսա ունեն դերան,
Որ գանում են՝ մարդիկ ընկնում են,
Քառասուն, յիվսուն, վաթսունական։
Էլ ես կանի՞մ Սասունա դեմ կռվիմ։
Տղա է յընդի դուս Սասունում,
Ջարդում, փշրում, մե ծառ գանում՝
Վաթսուն մարդ մե խետ կոտորում։

Էթում, էլի Մելիքին ասում.
— Մե հատ փայդա էկե,
Դավիթ են ասում, ի՛նչ են ասում,
Չենք կարա նրան լրիվ մենք մարտ անենք։

20. Յառավոտ յընդում, Մելիքն հրաման ա տալում ասում.
— Հավարա դուբեն տիե՛ք.
Քանի հազար-հազարներ ժողվեք՝ բեզավորներ,
Քանի հազար-հազարներ ժողվեք՝ մորուքավորներ,
Քանի հազար-հազարներ ժողվեք՝ ըսպիտակ մազերով,
Քանի հազար-հազարներ ժողվեք քյորփա բեզավորներ,
Քանի հազար-հազարներ ժողվեք անքեղ, անմորուսներ։
Ժողվե՛ք,— ասում,— դրի Սասունն ավիրեմ,
Դավիթին էլ ըսպանեմ, յիդամ։

Վերցնում են խոշունը գալում։
Այնպես մե խոշուն ա գալում,
Որ ասուած եղ ու եռուն անա,
Հախ-հաշիվ չկա։
Գալում, նստում Բաթմանա դետի վրա,
Գալողը խմում՝ գետը կտրում։
Հավարը գալում Սասուն։

— Ա՛յ տղա,—ասում են,—էս ի՞նչ գուլում ա էկել,
Մե .յելե՛ք, տեսե՛ք՝ էս ջուրն ընչի՞ ա կտրվում։
Հավար են տալում Զենով Օվանին,
Ասում ա.—Ա՛յ տղա, չե՞ք տեսնում՝ ձմեռ ա էկե,
Մելիքն ա էկե, մեր երկիրը քանդու։
.Յելե՛ք, աղուհաց տանենք դեմն,
էքանք խնդրենք, ազաչենք,
Որ մեր ժողովրդին չրկոտորա, չրսպանա,
Ինչ որ էլ .յուգում՝ պահանջներր տանք,—ասում,—
Թո՛ղ մեր երկրից հեռանա։
Հա՛, .Յրևնում են մի քանի մարդկրով,
Տերտրրով, ժողովրդով .յրևնում են, էքում են դեմ։

Օվ. Իսկ Դավիթը դո՞ր ըևնում.
էլի էս յան, էն յան ման ա գալում իրա խամար,
Նեժե, իրա զինավարժության խամար ման ա գալում։
Գալում ասում.—Նանե՛, էդ ի՞նչ բաս ա,
Հորթախերս գացե, էդ ի՞նչ բաս ա,
է՛, մե՛ծ չաղբրներով գանած ընդեղ։
Ասում.—Խոդե՛ր տամ գլխիդ,—ասում,—
Կոխվ էգած վրեդ,
Խորդ երկրի վրեն կոխվ էգած,
Զենով Օվան .յելե, աղ ու հաց ա տարե,
Որ խնդրի՝ չրսպանեն մեր ժողովրդին,
Թուլ տան, ինչ որ էլ ուզում՝ կատարենք։
— Ա՛, նանե՛ ջան, ես էքում եմ,
էլ քուֆր, անեծք չանես, ես էքում եմ։
էքամ,—ասում,—Մելիք կքողնե՞մ իմ հար երկիր մանի։
Ասում, .յրևնում իրա ձիևը քրմրում, սարրում,
.Յրևնում էն յանից մե հատ խին քուր ա բևնում, քե գերընդի
յա բևնում,
Կապում վրեն,
Մե հատ էլ կտրված գուրզ ա վերցնում,
Մե հատ էլ նետ-աևեղ ա վերցնո՛ւմ
Ու քշում, որ էքա։
Նանեն գիդում, որ բդի էքա, գիժ ա էդի.
.Յրևնում դեմ, ասում ա. —Դո՞ր ես էքում։
Ասում ա.—էքում եմ կռիվ,

Չես տեսնո՞ւմ, նոր ասեցիր, չէ՞։
Աստւմ.—Յա՛վը պինչ, խոզե՛ր էդ գլխից էղնի,
Քո հոր ձինն յուզա՛,
Քո հոր թուրքն յուզա՛,
Քո հոր խաչը Դոշին յուզա՛,
Քո հոր Քյամարն Մեջբին յուզա՛,
Քո հոր սապուքներն յուզա՛,
Քո հոր գդազն յուզա՛.
Էդոնք բդի խաքնես, էքաս.
Դու էս գոռդ ձին խնծես ես,
Էդ ժանգոդ թրով էլ էքում ես Մելիքին բսպանե՞ս,
— Բա՛ էդ որզե՞ ա,—ասում ա։
Աստւմ.—Գնա՛, Օհանից պահանջա՛,
Քո հորոխպկերն գրանք բոլոր պախե։
— Շա՞տ լավ,—ասում ա, ձինը քշում, դալում։

— Հորոխպկե՛ր,—բոռռում։
Դուս յըլնում. դուս յըլնում.—Ի՞նչ ա, Դավի՛թ ջան,—
ասում,—
Բոլիդ մեռնե՛մ, էդ դո՞ր ես պադրաստվել։
Աստւմ.—Էքում եմ կռիվ.
Բայց իմ հորքս Քուռդն Ջալադին տո՛ւր,
Իմ հորքս Թուրքս Կայծակին տո՛ւր,
Իմ հորքս Գոտին Մեջբին տո՛ւր,
Խաչը Ուսին տո՛ւր.
Հորս ունեցվածք, ինչ որ ունի, հագուստը վրին՝ տո՛ւր,
Խնծնեմ, էքամ կռիվ։
Աստւմ,—Տո՛ւր, քե չէ՝ վիզդ կըկարեմ։
— Դավի՛թ ջան, չկա։
— Միննուն ա, կըսպանեմ, բե՛ր.
էգաձ իմ Քշնամին, իմ երգիրն ա ավիրում,
էսենց բան կըլնի՞,—ասում ա։
Օվանը մնում շիվար.
Էքում, կնգան հավար ա տալում։
Աստւմ.—Տո՛ւ, քո՛ էքա, բալի բսպանվի։
— Ա՛յ մարդ,—ասում,—Քուռդն Ջալադին կըտանեն, ախար,
Մեր Թուրքն Կայծակին,
Խաչը Ուսին,

Գոտին Մեջքին,
Սապոգներր Ոտին.
Ախր, դրանք կըտանեն բոլոր, ո՞նց անենք,—ասում ա։
Դառնում հորթախաղր վրէն, ասում.
— Ուրեմն դուներ բնձնից .յավել աժէ՞ն,
Որ բնձի չես ափսոսում, դրանց ես ափսոսում։
Հորթախաղրն ասում ա.
— Չէ՛, Դավի՛թ ջան, բերնես բաավ. էլի՛,
Ես քե ի ափսոսում,
Բայց ասի Քուռդն Ջալադին,
Կայծակն Թուրը,
Խաչը Ուսին,
Գոտին Մըշքին,
Սապուքներր Ոտին.
Էդ դրանք,—ասում,—.յընկավ մտես,
Թե չէ՝ ես քե ի ափսոսում։
Բա դու էիաս ըսպանվո՞ս, Դավի՛թ ջան։
Անծի՛ գնա,—ասում,—թուրդ կուր ըլի։
— Տո՛ւ քո էիա,—ասում ա,—պետք չէ մեզի,
Թո՛ էիա մեռնի, ի՛նչ կըլնի, ըլնի։
Էդ ծուռն,—ասում,—ի՞նչ բդի անի Մսրա Մելիքին։
Տալում ևն, բերում խաքնում։
Խոր գդակ դնում՝ իջնում .յաչքեր.
Մե փութ բամբակ ա կոխում մեջ, ըլում գլուխ.
Թե խոր սապոգներն ա խաքնո՛ւմ,
Էլի բերում բամբակ ա կոխում մեջր, անջախ ոտով գալում։
Ասում ա.—Բա՛, էս ի՞նչ մարդ ա էլե՝ էս շորեր խաբել ա։
Գոտին բերում կապում մե՛ջք՝ երկու տակ ա բերում,
Անջախ խացնում .յիրար, կապում.
Խաչը դնում ուսին՝ .յընդնում բրտ կախ.
Թուրը կախում վրեն՝ .յընդնում բրտ։
— Էա՛լ,—ասում,—էիամ, բդի էիամ։

Նետնում Քուռդն Ջալադին,
Պատաղնում Քուռդն Ջալադին, տանում էս յան, բերում.
— Հա՛, տղա՛,—ասում,—ինչպե՞ս ես։
— Ինչպես կամենաս,—ասում։
— Բարձրըցընեմ օդրն,—ասում։

Ասում.—Գիշնեմ փորիդ տակ։
— Կրատիեմ գեղին,—ասում,—ցվրեմ։
— Գրկնեմ,—ասում,—մըշքիդ։
— Հնծի՛,—ասում,—ես քոնն եմ, դուն էլ իմն ես, նստի՛։

22. Քշում, գալում։
Պատռալ .յըլնում դեմ, ասում.
— Ընդեղ մի երգաթե սուն կա.
Գնա՛, էդ սանր փորձի,—ասում,—
եթե ուժդ էն երգաթե սանր չախթից,
Ուրեմն, կռիվ չէթաս,
Քե միևնույն ա, կըսպանեն։
— Ի՞նչ էրգրթե սուն։
Ասում.—էդ թուրը որ կախել ես, ոռնդ .յընգն կախ,
էդի բդի քաշես. զանես էն էրգրթե սան,
Բդի կըլրե՝ անե էրգու խատ.
եթե կըլրից՝ .յիմացի, որ դու գ'ախթես քու քշնամուն։
— Հա՛,—ասում,—շնորհակալություն, նանե՛։
Քշում էթում, տեսնում՝
Իսկապես, էրգրթե սուն ընդե անկած ա։
Քաշում, կանչում Մարութա Ասվարածին՝ թուրը թալում.
Թուրը թալելուց՝ անում էրգու կտոր։
Դառնում գալում,—Նանե ջան,—ասում,—կըյնցի։
Ասում.—Իրավունք ունես, քաջությունը քոնն ա,
Էս գիշեր էլ որ էթաս հորդ գերեզմանի վրա,
Հորիցդ ուժ կառնես նորից,
Հորդ օշնությունը կվերցնես,
Եվ էդ բոլոր զենքերն գուբա քեզ վրա.
Էնքան գըլցվես՝ գուբա քեզ վրայով,
Կրզառնաս իսկական մարդ,
Կէթաս, Մելիքի խետ կրկռվես։

Էդ գիշեր էլ էթում հոր գերեզմանի վրա,
էդ մարդը հորից խնդրում ա ամեն բան,
Լաց ըլնում, աղաղակում, որ բսախս թշնամին էգե։
Ասում շնորհիվ, ասում են, էդ մարդու .յաշքը կրնում,

լցվում է։

.Յլնում անում, որ հարձրվէ վրայից, .յամեզ մե յան
.յընգն,
Ոդներից .յելե, .յընգե.
Բերում կոխում ոդներ՝ չեն մդնում։
Ըս հեղ միչից դարդագում, կոխում ոդները, հաբնում,
Դառնում իսկական մարդ։
Դալում.—Նանե՛,—ասում ա,—լավ ա՞։
— Ա՛, տեսնո՞ւմ ես, ամե՛ն ինչը բո վրայով էլավ։
Դե՛, դնա՛, ասում աչողությունն բըզի,
Դե՛, դնա՛,—ասում ա,—կըկոդրես, բոլորին կըկոդրես,
չըվախեննաս։

23. Քշում ձինը դալում։
Դալում, հասնում խոշունին, բաբև ա տալում։
Է՛հ, բարև ո՞րն ա առնում։
Ասում ա.—Դե՛, ո՛րը ձի չի խնծե՝ ձի խնծնի,
Ո՛րը բնած է՝ արջնանա,
Ո՛րը ձի ունի՝ խնծնի,
Ո՛րը ձինը չի ֆամբե, ֆո՛ ֆամբա.
Ջասեք՝ Դավիթ գող էգա՞վ, գող գնա՞ց.

Դավիթը բաշում ա Թուրը Կայծակին,
.Յընդնում ժողովրդի մեջ, սկսում կոտորել։
Մելիքն իր համար յոթ օրով բուն ա մտե, չադրը խփե։

Դավիթ կոտորելով էթում, պտի խասնի Մելիքին։
էն յանից մե խատ ծերունի ասում.
— Ա՛յ մարդիկ, ախար ինչո՞ւ ենք կոտորվում,
Մենք .յառեջ,—ասում,—Մանասարին խարջատուր ենք, .յէ՞.
Հիմա ինչի՞ կոտորվենք Դավիթի բրով մենք.
էֆանք դեմը, խնդրըվենք,
Յուց տանք Մելիքին, ֆո՛ղ էֆա.
Մելիքն յա՛ սրան կըսպանա,
Յա՛ սա Մելիքին կըսպանա,
Մենք սաղ կըպրծեննենք, չէ՞։
էդ մարդը վազեվազ գալում, ասում ա.
— Կայնի՛, կայնի՛, կայնի՛, ախպե՛ր, կայնի՛, կայնի՛։
Ասում.—Ի՞նչ ես խոսում,—ասում,—է՞։

Ջինը քշում ծերունու վրեն,
Ծերունին խնդրում է, ասում.
— Կայնի, էլի՛, խնդրում եմ,
Մե աղաչանք ունենք քեզի, Դավի՛թ,— ասում ա,—
Թուրդ կտո՛ւր լինի։
— Ի՞նչ ես ասում։
— Ա՛խր,— ասում ա,— որոնք Քրի զոռով, ուժի զոռով
բերեր ա,
Որքն նշանլու չա, կինն ա մնացել,
Որը թապա հարս է, բերեր է, նրա կինն էլ ա մանցել,
Որը որ սիրած ունի, սիրածն ա մանցել,
Որը որ մեղի նման հալիվորներ՝ բերե լցել,
Քյուլփաթ ունենք, էրեխաներ ունենք ասեն մեջըն։
Էսպես զոռով, Քրով՝ բերե լցի կովի պաշա,
.Յինքն էլ յոթ օրով քուն ա մտե։
Ասում.—Էդ ո՞վ ա։
Ասում.—Էդի Մելիքն ա։
Ասում.—Ես Մելիքին եմ պատում, էլի, որտե՞ ա Մելիքն։
Ասում.—Է՛ն չաղըր, որ խնձոր ա կախած չաղրիից,
Էն էլ, որ մուխըն .յըլնում,— ասում—խո՛ մուխ չէ,
Նա իր բերնի զոլորշումն ա ըլնում։
Ասում.—Ոչի՛նչ, քեզ ըլնի։

24. Ջինը քշում գալում.—Բա՛րև ձեզի։
— Բա՛րև։
Տեսնում՝ Մելիքը քնած ա։
Մերը տենում Դավիթին.
Որ տենում՝ զիդում, որ պրոդն էիավել,
Մելիքի պրոդն էս ա։
— Դավի՛թ ջան,— ասում ա,— .յիջի՛ ձիանից։
— Չէ՛,— ասում,— ի՞նչ .յիջնել, .յիջնելու ժամանակ չէ,
Խանե՛ք վեր,— ասում ա,— Մելիքին խանե՛ք վեր,
Ժողովուրդը բերե լցե կովի պաշա, անոթի, ծարավ,— ասում,—
.Յինքն էգե յոթ օրով քուն ա մտնո՞ւմ։
Ասում.—Դավի՛թ ջան, բոյի՛դ մեռնեմ,
Նա իր յոթ օրը բդի քնի,
Եթե չբդնի, մարդ իրավունք չունի Նրան խանելու։
Ասում.—Ես կբխանեմ Նրան։

Բևրում մև իատա իւնի, դնում կրակ, կարմըրցընում,
Բևրում, տալում կընդին։
Տալում ինև չէ, իրրիրընգվում, .յընում, ասում.
— Ա՛յ բռանա՛ր դուբ,—ասում,—
Ճանջևրը կծում են ընձի,—ասում,—
Չև՞ր բշում ինձ վրայից։
Ասում.—.Յևլի՛ վե՛բ,
Մահ չունիր՝ մայ եմ բևրև,
Գրող չունիր՝ ես բո գրողն եմ էկև.
.Յևլի՛ վեր,—ասում ա,—
Դու էս խեղճ ժողովրդին անօրի, ծառավ,
Ընչի՞ ես իրենց տներ բարութանդ արև, բևրև, լցև կովի դաշտ,
Դու էկեր ես յոթ օրով բուն ես մտե։
.Յաշրերը բացում՝
Յոթ գոմշի ուժ պահում, որ տենում ա Դավիթին։
— Դավի՛թ ջան,—ասում,—մենք ախպերներ ենք,
.Յիջի՛ր, ուտենք, խմենք, նոր .յեկնենք կովենք։
Ասում.—Չեմ .յիջնի ես, դու նամարդ ես։
— Չէ՛,—ասում,—.յիջի՛ր, ախպեր մարդ ենք։
Մևրն էլ ա գալում, խնդրում են,
Բայց խորեր ա փորած բլնում,
Խալիչեն վրեն բաշած բլնում։
Դավիթը գալում ա որ .յընգնելու՝
Հա՛յդև, պրծնում էիում խորի մեջ։
— Հը՛, հը՛, հը՛, հը՛,—ծրծդում, ասում ա,—
Դավիթը կոտորեց, Մսրըր կոտորեց,—ասում ա, ծրծդում ա էդպես։

25. Քուռդև Ջալադին փախնում, .յընդնում սարեր։
Դիշեր էիում, Ջենով Օվանին ձայն ա տալում.
— *Հորոխապե՛ր,—ասում,—ես .յընգել եմ անդունդը,*
Պտի բնձի ազատես։
Հորոխապեր խրտնում, .յընում.
— *Դավիթը,—ասում,—աշբերս բռանա՛,*
Ջում էսօր լավ էր զորբի մեջ կռվում,
Դավիթն .յընգև նեզը,—ասում ա,—
Պտի էիամ, հասնեմ Դավիթին։

Կնիգն ասում.—Խոզեր տա՛մ պլխիդ,
Դավիթ գացն իրա խրմար բեֆ անում,
էս էլ Դավիթին դիշեր էրազով ա տենում։
— Ա՛յ կնիգ,—ասում ա։
— Ձէ՛,—ասում։
Վերջապես համոզում, բերում պառկըցնում ա։
Մեկ էլ ա գալում երազ.
Մեկ էլ .յելնում, բոբռնջ դնում, ասում ա.
— Քաշե՛ք իմ ձիեն,—ասում ա,—
Ես պտի խաանեմ Դավիթին։
Էլի կնիգն համոզում։
Երբորդը որ գալում էրազ՝
Հորթախաչերը տեղից բարձրանում, հրաման տալում՝
Նոքյարներ ձիանք բերում են։
Սիվտակ ձիուն ասում.
— Ե՞տ դու պտի խասցընես Դավիթի կռվին։
Ասում.—Մինչև ոտդ դնես զանգուն, խնծնես վրեն՝
Կրհասցնեմ Դավիթի կռվին։
— Հա՛,—ասում,—խարա՛մ բլներ էն բիշմիշն ու դարին.
Պետք չե՛ս բնձի,—ասում,—տարե՛ք։
Սև ձիեը բերե՛ք։
Սև ձիեը բերում են.
— Մինչև,—ասում ա,—բեզի ժողվըռանա,
Բուրը, գենքերդ,—ասում,—ժողվես՝
Ես բի կրխասցնեմ Դավիթի կռվին։
— Պետք չե՛ս,—ասում,—բնձի,
Հարա՛մ բլնի էն, որ կերցնում եմ բեզ։
Կարմիր ձին բերե՛ք։
Կարմիր ձիեը գալում.
— Ե՞տ պտի խասցնես։
Ասում.—Մինչև ոտդ դնես զանգուն,
Ես բի կրխասցնեմ Դավիթի կռվին։
Խնծնում էդ ձիեը, բշում գալում,
Կայնում մե բարձր սարի գլուխ։
Իրան փաթաթում կաշին մեշրից, որ չըպատռի,
Մե ձայնով բոռում.
— Դավի՛թ, Դավի՛թ, որտե՞ղ ես,
Լսի՛ր իմ ձայնը.

Կանչի՛ր Մարութա Աստվարածին, խաչըն ուսին,
Կայծակն թուրըն խփի՛ր,
Որտեղ ըլնես, քեզ դուրս կբխանի,
Ինչքան նեղ տեղ ըլնես։
Բռռալու ժամանակ Դավիթի յանդաչն յընդնում.
Դավիթը այնպես գանում գուրզով,
Հա՛յդն, բարբն էթում,
Ըսիմ, հըլա, ասում են, էթում ա,
Թե որտե՞ղ էթում՝ չգիտեմ։

26. Քուռդ Ջալադին պատվելով գնում, խանում ա Դավիթին.

Դավիթ նստում վրեն, բռռում.
— Մելի՛ք,— ասում,— դուրս յելի՛, վերչիդ օրը։
— Հա՛յ, հա՛յ,— ասում,— էս ո՞վ խանից,
Էս որտեղի՞ց ազատավալ էս մարդը։
Մեկն էլ ասավ.— Որդի՛, սրի՛, համաձայնըվի, Դավիթին դարձի խարջատուր,

Դավիթ քոզ քեզ չըսպանա.
Դու Դավիթի ձեռնից չես պրծնես։
Մոր վրեն ջղայնացավ, ասավ.
— Էն գախ պտի ըսպանի Դավիթին,
Այն գախ, որ երեխա էր իմ կուշտ.
Զրնդզեցիր, ամբողջ էս քու տակն է,
Քու գործն է, որ դու կատարեցիր իմ գլխին։
Մեկնուն ա,— ասում,— էլի կըսպանեմ Դավիթին։
Դավիթ ասում.— .Յելի՛, խնծի։
Ասում.— Նստենք, ուտենք մե...
— Չէ՛,— ասում,— նամարդ մարդու խնա սեղան չեմ նստի էլ ես։

Ես մինչև ի վերջ պտի կռվեմ քու խնա,
Յա՛ քեզ կտա, յա՛ ինձ կտա։
.Յըլնում են, էրզրսով .յըլնում են.
— .Յա՛,— ասում ա,— խփելու հերթըն .յո՞մն ա։
Ասում.— Խփելու հերթըն, դու իմ մեծն ես, քեն։
.Յըլնում, խնծնում իրա ձին, քշում, հեռանում,
Թե Դիարբաքըր էթում, որտեղ,
Ընդեղից գալում, գանում։

Ջանում՝ Քուդն Ջալադին այնպես ա վերցնում Դավիթին,
Թողըն .յըլնում.
— Է՛յ,—ասում,—քոզի մեջ կորավ Դավիթն,
Գնա՛ց, անհայտ .յըննալ Դավիթ, կորավ ու կորավ։
Ձայն է տալում.—Սա՛ղ եմ,—ասում,—մե՛կ էլ արի։
— Հա՛յ, հա՛յ.—Մելիք մտածում,—էս զարրիս,
Երևի մոտիկ տեղից էգա։
Քշում էքում Շամ, Շամից ա գալում, գանում։
Էլի ասում.—Կորա՛վ Դավիթ։
Դավիթ ձայն ա տալում.—Սա՛ղ եմ,—ասում,—մե՛կն էլ արի։
Մեկն էլ ա խփում, Դավիթին ոչինչ չ'անում։
Ասում.—Հերքը խասնում է ինձ, ես բեզ հիմա կրխփեմ։
Քառասուն կյադից էդ խորը, որ փորեր իր ինձ համար,
Մեջ՛ մեջ,
Քառասուն կաշի լի՛ց վրեդ,
Քառասուն խատ չաղացի քար դի՛ վրեդ,
Որ ես իմ քուրը քալեմ։
Թե չէ՝ իմ քուր ձրի քալեմ,
Մինակ քեզի ի՞նչ անեմ։
Մտնում, վախենում, ասում.
— Կատարե՛ք, ինչ որ ասում։
.Յըլնում, խնծնում իր ձին, էքում, գալում.
— Է՛յ,—ասում ա,—Մարութա Աավարածին, Աչըն
.Յուսին,—
Աղոթք անում իրան,
Քուրը քաշում, գալիս ա։
Գալիս ա, որ խփա, մերն .յըլնում ա.
— Դավի՛թ ջան,—ասում ա,—էդ մե զարկը բախշի՛ ընձի,
Ախր, չէ՞ որ քեզի խաց եմ տվե,
Ծիծ եմ տվե, պահեր եմ, մեծացրեր եմ,
Խանդաթ ես էղե, ախր։
Ասում ա.—Էս մե զարկը բախշի քեզի՝ որպես մայր։
Ասում ա.—Էս խեստ ի՞նչ պտի անենք,
Մեկն էլ պտի զանեմ։
Քուրն ա .յըլնում, խնդրում.
— Քեզի,—ասում,—ջուր եմ տվե,
Քու շուրեքն եմ լվացե,
Էդ մեկն էլ բախշի՛ ընձի։

— Էս էլ քե՝ որպես բույր։
Կնդան ասում մերն.—Բալի խնիրվի,
Թո էդ մեկ զարկն էլ որ բախշա,
Մելիք սաղ կըպրծնի։
.Յըլնում.—Չէ՛,—ասում,—
Ես մորից մե հատ ծնվեր եմ, մե դարը է մնում,
Էն էլ ի՛մն ա,—ասում,—
Էս դըրբը պտի տամ Մելիքին,
Կրխփեմ՝ իր բախտն է։
Կանչում Մարութա Ասվարածին՝ Քուրը գանում։
Քուրը գանում՝ Մելքին անում երկու կռիր։
— Հա՛, Մելի՛ք,—ասում,—ո՞նց ես։
Ասում.—Ա՛ղ եմ։
— Դե՛,—ասում,—մինակ շարժվի՛ր։
Շարժվում՝ մե կռիր մե յան ընկնում,
Մե կռիր՝ մե յան։
Մելիքը մահանում է։

Մելիքը երփոր մահանում է,
Կանչում է ժողովականներին, Կուղրադուն, բանին,
Բոլորին բսպանում է՛,
Բողում բղնդ մի հատ մարդ՝ Կուղրադու ախպերը,
Անունը չեմ կարա հիշե, լավ տղա ըլնում,
Միշտ Դավիթի կողմն ա խոսում։
Ասում ա.—Դե՛, ես էս քաթավորությունն տալում եմ քեզի,
Կլիքաս, կրնամես քաթավոր,
Քանի սաղ ու կենդանի ես՝ Սասունին կըլնես խարջատուր։
Էդ մարդը խոշունին Քողնում է,
Գալիս են Մսըր, ապրում են։

27. Դրանից այդ ձայնըն .լընգնում է,
Էքում Կապուտկող, Խանդութ խանում ըլնում՝ քաթավորի
ախճդան։
Ասում են.—Աշխարքը քեզի հախթող կըլնի՝ միայն նա,
Որ կապրի Սասուն՝ Սասունցի Դավիթը,
Թե չէ՝ յուրիշ մարդի խետ դու չես կանա ապրի։
Ասում են, եփ որ դրան առնողներ է գալում,
.Յըլնում է խառները կռվում է,

Ախճիղը հախթում է, ըսպանում է։
.Յըլնում, մի հատ նամակ ա գրում Դավիթին.
«Դավի՛թ,—ասում ա,—էթե այդքան քաջ ես,
ես Կապուտկողի թաբավորի ախճիղն եմ՝ խանդութ խանըմը,
էթե այդքան քաջ ես, արի՛, ընձի ա՛ռ,
ես քեզ կնացու կըդառնամ»։
Նամակը գալում ա, հասնում ա Դավըթին,
Դավիթըն առնում, կարդում.
Գալում ա մոր խետ սալետ ա անում,
Ասում ա.—ես գդի էթամ։
— Ո՞ւր գդի էթաս, բալի՛կ ջան։
Ասում ա.—էթում եմ Կապուտկող։
— Ախր Կապուտկող որտե՞ղ ա, բալի՛կ ջան։
— է՛, ես ի՞նչ գիդամ՝ ինչ թաբավորական հող ա։
Պաի էթամ,—ասում ա,—էթամ ման գալու։
— Չէ՛, բալի՛կ ջան,—ասում,—ի՞նչ գործ ունես,
Գործ չունես,—ասում,—ինչի՞ բնդնես օտար երկիր,
Աչխարը քո ձեռն ա, ապրում ես, ինչի՞ գնաս։
— Չէ՛,—ասում ա,—գդի գնամ։
— Գիտե՞ս ինչ կա,—ասում,—մարե՛,
էթե ես չէթամ, մարե՛, գդի ասա,
Մե ախճիղ ա էս նամակ գրե,
Գդի ասա՝ Դավիթ վախկոտ տղա չա,
Ըզկարցավ դեր ընձի առնե։
Գդի էթամ Կապուտկող, էդ ախճղան առնեմ,
Խանդութ խանըմին առնեմ։
է՛, Դավիթին կարա՞ էդի, չէ՞ լսում, էլի։
Մարեն ի՞նչ արավ՝ չարա չէղավ։
.Յելավ էդ մարդը, բշնց ձին ու գնաց։

28. Ձինը խնծավ, բշնց գնաց.
Երթ որ էկավ ճանապարհին,
Իշնց տեսավ, որ գութան են անում,
Տավարը՝ գոմեշները կված ճանապարհի մեջտեղ։
— Ա՛յ մարդ,—ասում ա,—էս ի՞նչ չանավար ա, որ էսքան
քարում ա։
Էս չանավարը,—ասում,—որտեղ ըլնի, մեզի կուտա։
Պաի .յրնդնեմ էտու .յիդով, ման գամ,

Որտե՞ղ ա էս ջանավարը։
Գալում բանից, ման գալում,
Տննում՝ անվ գոմըշտան մե խոտաղ տվե դեմ՝ գալում ա։
Թուրը քաշում, էթում վրեն։
— Ա՛յ մարդ,— ասում,—ի՞նչ ես .յուզում անել։
Խոտաղ շատ շաղատատան գյադա յա ըլնում։
Ասում.—էդ ի՞նչ ջանավար են, որ էսքան քաքում են։
Ասում.—Ըռոններ զրմնշ են, զրմն՛շ։
Ըռոններ լծում ենք.
Հըլը էթանք՝ տե՛ս, ի՛նչ են անում ըռոններ։
— Ի՞նչ են անում,—ասում։
— Լծում, գութան ենք անում,
Արտը վարում ենք, ցորեն ենք ցանում։
Ընկնում էտ խոտըի խետ, գալում։
Խոտը քալում են, զրմնշներն ուտում են։
Տննում՝ խաց բերեցին կեսավուր դեմ,
Սովորություն էր խայերի համար.
Խարս, ախճիք խաց պտի տաներ։
Տանում են խաց, խասցընում են.
— Դե՛, ախպե՛ր,— ասում,—խոնաղ ախպե՛ր,
Արի՛,— ասում,—խաց կեր մեր խետ։
Իշկում ամներ՛ն.— Ախպե՛ր,— ասում,—
Ես ուտեմ՝ դու անոթի կըմնաս,
Դու կերե՛ր, հագր,
Ես կէթամ մե տեղ, կուտեմ։
— Ա՛յ մարդ,— ասում,—էս մե էքա խազան էփած, բերած,
Էսի ո՞րը կուտա, արի՛ կե։
Մե սուփրեմ,
Էդ մարդիկ մեկ-մեկ թիքյա պանում են,
Էդի մե խաց քալում, պտըցընում, դնում է բերան՝
Օ՜, խազնի կեսը դնաց։
Խոտաղ տենում՝ Դավիթ կ՛ուտա,
Իրանք մնան անոթի։
— Օ՜,— ասում,—լուծք անող մարդ ենք, յոթ մարդ ենք,— ասում,—
Ա՛յ մարդ, խո՛ դու .յրմեն չե՞ս ուտե, մենք մնանք անոթի.
Մենք էլ մարդ ենք, չէ՞։
— Դե լա՛վ,— ասում,—էլ չեմ ուտե, դի՛, դո՛ւ կերեք.

Էս բոլ է՝ էս մեկն ընձի։
Ըտեղնք ուտում են, վերջացնում են,
Դուքանը լծում են, դոմշներ լծում են։
Ասում ա.—Էդ դոմեշներ որ լծում եք էսքան,
Ջուրս խառտ, չորսը տուն՝ ութ խառտ.
Էս մե գութա՞նն է պտրցրնում։
Ասում.—Բա ինչքա՞ն բդի բերի։
Ասում.—Էս դոմրշներ Բողե՛ք, ես պտրցրնեմ։
Դոմրշներ Բողում են, բնադեն՝ մնջիլը, դնում Քևին,
Յոթը փաթ էս յան է էթում, յոթը փաթ՝ էն։
Խոտաղ տենում. «Օ՛, էս ի՞նչ յաման մարդ ա,—
Ասում,—յոթ փաթ էլ որ .յինը տանի էս յան, էն յան, բերի,
Ջիանից .յիշնի՝ .յարտը կըպրծնենք,
Շուտ էլ կըպրծնենք, կէթանք»։
Տանում յոթը փաթ էս կողմից ա վարում, յոթ՝ էն։
Ասում.—Էդ ջո խունարը չէ։
Ասում.—Բա ո՞ւմ խունարն է։
Ասում.—Քու ձիան խունարն է էդի։
Ասում.—Մըկա ես չե՞մ կարա էտի պտրցրնեն։
Ասում.—Չէ՛։
Գալում, բնադեն դնում Քևի վրեն խեղճ Դավիթը, վերցնում,
Էդ .յարտը՝ յոթ փաթ էս յանից էթում,
Յոթ փաթ էն յանից էթում,
.Յարտը պրծնում։
Ասում.—Իսկապե՛ս ուժեղ ես, սատկե՛ս դու.
Դու էլ ես ուժեղ, բու ձին էլ։
Ի՛նչ նպատակ ունես, բո՛ղ ասաված կատարե, մեր .յարտը պրծար։
Ես խոտաղ մարդ եմ, էս իմ աղի տունն ա.
Գացի, էսքան տարի նորարություն եմ անում,
Տարին մե խետ տալում էս .յարտը, վարում եմ, ցանում եմ,
Տանում եմ իմ էրեխեք, մորս պահում եմ։
— Շա՛տ լավ,— ասում ա,— պրծա՞նք .յարտը։
— Պրծանք։
Ըլնում են իրանց ոսյաքը Բողնում ե՞ն, ժողվրատում են, բևրում,
Էրկու ակնանի սել կա, չէ՞,
Էդ սայլի վրեն դասավորում են՝

Լուծ ա, ծնջիլ ա, ինչ որ կա,
.Յրմե՞ն գնում են սելի վրեն,
Բերում են մե ջուխտ, որ լծեն։
— Հըլա կայնե՛ք,— ասում ա,—
Տենամ՝ Բուրըս էս սելը կարա՞ կըլլա։
Խոտաղն ասում ա.— Իմա՞լ Բուր.
Բա՛ որ կըլնա,— ասում ա,— մենք իմա՞լ էլ անենք,
Ես էքամ ի՞նչ ասեմ աղին։
Ասում.— Ես էնբան կրտամ՝
Հա՛մ աղին տուր, հա՛մ էլ դու կեր։
Բուրը վերցնում Քալում՝
Ակներով կըլրում, անում էրկու խատ սելը։
Սելը որ կըլրում, խոտաղ ասում.
— Իմ տուն քանդեցի՛ր, ախպե՛ր ջան,
Էս ի՞նչ գործում արիր։
Մե ճանկ ոսկի ա տալում, ասում.
— Դե դնա, հա՛մ սելըն առ, հա՛մ բեզի գոմիշ առ,
Հա՛մ էլ մի՛ գնա նոքյար էլի։
Ասում.— Գնա՛,— փսփսաղ վերցնում,—
Ասեվա՛ծ բեզ հետ, գնա՛, ախպե՛ր։
Բերում են, մի կերպ սելը հավաքում են, կապըռտում են,
.Յընգնում են ճամպախ։

29. *Էդ մարդիկ գալում են,*
.Յընքն էլ .յընգնում ճամպախ,
Մինչև գալում, հասնում խլաթ։
Մեծ ախշար ա ըլնում խլաթը։
Գալում էս գյուղի մեջ, տեսնում, որ Բուրքեր ե՛ն,
Թշնամի են բոլոր իրա՛ն։
— Ա՛յ մարդ,— ասում,— որտե՞ղ մնամ, բըշերն նատեմ։
Մե խատ գեղցիկ կնիկ՝ էն յանից դուս ըլնում։
Դու մի ասա՝ էս նամակի տեղեկություններն ունի էս կնիկը։
Ըդու .յաչքն էլ Դավիթի վրա յա,
Անուն Ջմիշկիկ Սուլթան ա։
— Դավի՛թ,— ասում ա,— ինչի՞ ես մարթի տակ .յընգնում։
Ասում.— Բա ի՞նչ, մութն ա՛,
Ես էլ .յուզում եմ .յընցընեմ։
Ասում.— Չէ՛, դու իմ դոնախն ես,

Էսօր քանի օր ես քո ճանապարհն եմ պահում։
— Դե՛, որ քու դռնախն եմ՝ քու դռնախն եմ, ի՞նչ կըլնի։
Քշում ձին, ըդուր խետ էթում,
էտ մարդու տունը չիջնում,
Ձին կապում են, ձիան ինչ որ կերն ա՝ տալիս են,
Գալում են, նստում են։
Ասել-խոսալուց, ուտել-խմելուց հետո՝ մե տեղ է թցում։
— Բա՛,— ասում,— օրտե՞ղ կըթնեմ ես։
— Իմ կուշտ։
— Ո՞նց,— ասում,— քու կուշտ։
Մեր ցեղի մեջ,— ասում,— չէղեր է բոզություն.
Մենք ազնիվ մարդ ենք էղե։
Ասում.— Միևնույն ա, ես քեզ սիրում եմ, պտի ինձ առնես.
Եթե չէ,— ասում,— միևնույն ա, դու իմ ձեռից սաղ-կենդանի չես պրծնի,
Էս գյուղն ամբողջ կըխանեմ քու դեմ,
Քե կտամ բսպանել։
Դավիթ մնում շիվարած.
«Ջանըմ,— ասում ա,— աստծուց մի հատ ներողություն կըխնդրեմ,
Ոչինչ,— ասում ա,— ի՞նչ աննենք, պատահել ա, ի՞նչ անեմ»։
Մոտենում դրան.
Դա մնում ա երեխայո՞վ։

30. Յատակոտ ըլնում՝ դո՛ւղ Կապուտկիղ.
Քշում իր ձին, էթում։
Քշում էթում Դավիթը,
Շատ էթում, թե քիչ էթում էտ մարդը, հասնում է Կապուտկի՞ղ։
Կապուտկիղ եսի օր հասնում էղ մարդը՝
Ծանոթ չունի, բարեկամ չունի.
Էթում մե հատ այգու կուշտ,
Մե հատ այգնպան ա ըլնում՝ ծերունի։
— Բարև՛ քեզի,— ասում ա,— ծերունի՛։
Ասում.— Հազա՛ր բարի, Դավի՛թ ջան։
— Յա՛,— ասում,— ծերունի՛,
Դու ի՞նչ ես գիդում, որ ես Դավիթն եմ։
Ասում ա.— Գիտե՞ս ինչ կա,

Էս բաղը՝ անմահական բաղը,
Էսի իմ թաթավորի աղջկա բաղն ա.
Նա չա միննագ ման գալում։
Նա քո տեսքն էլ ա ասի ընձի։
Նա երազով ա տեսե քեզ։
Ինձ ասե. «Էսենց մի մարդ ևրե կըհանդիպի՛,
Անպայման դու նրան ինձ խաբար կանես»։
Ես գիդում եմ, որ դու իսկական էն մարդն ես։
Ասավ.—ԵՒրե ես հասնեմ իմ մուրազին,
Քեզ բավիր կանեմ ինձի,—Դավիթը։
Դու պտի ըլնես ինձ բավիր։
— Դե՛,—ասավ,—ձիանից չիջի՛։
Ձիանից չիջավ, ձին քաշին մե տեղ,
Ձիան կեր ավելցին, իրանք մտան բաղի մեջ։

31. Բայց գիտե՞ս ինչքան մարդիկ էկած՝ փայլևլանևլու, էդ ախճդա համար։
Սկսին գինին դևել, ուտել ու խմել, քեֆ անել։
Դավիթն էլ մասնակցից դրանց հետ։
Է՛, Դավիթ ճանապար է էկե, չէ՞.
Հոգնած մա՛րդ... ու սկսում կամաց-կամաց դանդում ա։
Եփ օր դանդում ա, նա բռնում ա.
— Սանախեր Դավի՛թ,—ասում ա,—
Սա գինեստուն չէ՛, վնաստուն ա՛։
Դավիթ աշքերը բացում։
Աշքերը որ բացում ա, չրմեն բաշվում են իրանց տեղը։
Ըտենց իրեք չանգամ անում,
Իրեք չանգամից հետո աշքերը բացում ա.
— Ա՛յ ջանըմ,—ասում,—ի՞նչ վնաստուն բտաեղ.
Վնասը ո՞րն ա բտաեղի, ընձի ասա՛, էլի։
Ասում.—Սրանք քեզ կըվնասևեն։
Վերցնում ամեքին մե պատ ափում,
Ջա՛րդ ու փշուր անում, կոտորում, թալում էն չան
Ու չինքը գալում, նստում ա։
— Հո՛ էլ վնաս չկա՞,—ասում ա։
— Չէ՛,—ասում ա,—է՛լ վնաս չկա։
Դե՛, ես հիմա էթամ,—ասում ա,—
Թաթավորի ախճդան խաբար անեմ։

.Յրլնում էդ մարդը գալում ա,
Դալում խաբար է տալի։
Խաբարը ևիտը բերում է, տալում է,
Ախֆիդը ասում է.—Դիտե՞ս ինչ կա.
Դավիթին կասես, որ իրան լավ պայի, լավ պաշտպանի,
Մի քանի ժամանակ հանդստանա,
Մինչև իմ խորից գա՝ հարսնացու .յուգա։
Եթե չուգա հարսնացու, ես նրան չեմ առնի։
Խանդութ խանըմ եի որ էդպես ասում,
Դավիթը մի քիչ քթվում, էլի, իրան մեջ,
Ասում.—Ընդեղից բատե կանչի, բերե,
Էս խնտ էլ ասում՝ թո հանդրստանա,
Ջեմ պիդում,—ասում,—ի՛նչ էնե.
Հորից էթամ ներ պտի գլոխ իջնցրնեմ...
Էգել եմ՝ խորը կըսպանեմ,
Իրան էլ կառնեմ, կէթամ, էլի.
Էլ ի՞նչ,—ասում,—ներ խնթիր-մնթիր բատեղ։

32. Մե քանի օր մնում ա,
Ախճդա խրմար կոխվներ ա գալում.
Ժողվում են ուրիշ կառավարութ յունից, ուրիշ պետութ յուն-
ներից գալում են,
Որ էս քաղաքն ավիրեն,
Խանդութ խանումին էլ տանեն։
Դավիթն էլ ընդե հանդրստանում ա։
Քավոր Ղևվանդ, այդ մարդի անուն Ղևվանդ ա բլնում,
Քավոր Ղևվանդը նատուկ ա,
Դավիթ՝ ուտում, խմում, քեֆի մեջ ա բլնում.
Խանդութ խանում ինչեր չի համփում Դավիթին, որ պահաս
մնա։
Իր քեֆին բլնում Դավիթ,
Մեկ էլ Ղևվանդը գալում, Քավոր Ղևանդը.
— Դիտե՞ս ինչ կա, Մանախեր Դավի՛թ։
Ասում.—Ի՞նչ կա։
Ասում.—Էն մեծ խոշունն օր էգեր ա,
Մեր նրգիրը չորսը բոլոր բռներ ա,—ասում ա,—
Միմիան որ Խանդութ խանումին տանեն թաթավորին
կնացու։

— Է՛, — ասում, — ի՞նչ կըլնի,
Թո՛ղ էքա թաքավորին առնի։
Մե ախճգա խամար մե քաղաք, մե երգիր ոչնչացնե՞ն։
Խանդութ խանումին ասա, որ հօժար ըլնում,
Թո՛ղ էքա էն թաքավորի խետ,
Ես կըզատնամ, կէքամ էլի իմ երգիրը։
Էքում, խանդութ խանումին ասում.
— Հա՛, գնա՛, — ասում, — Քամբեր Ղևո՛նդ,
Կէքաս կասես, որ խոշունից վախենում էր, ընչի՞ էկավ։
Գալում, ասում։
— Հա՛, — ասում, — ճի՛շտ ա, նա էլ ճիշտ ա։
Պատրաստվում, .յատավոտ ասում. — Կովի եմ։

.Յըլնում էդ մարդը գյուղից դուս էքում, սկսում կովել.
Կոտորում բոհնց, շարդում, փշրում։
Խանդութ խանումն էլ էս յանից սկսում կոտորել։
Էրկսով կոտորում են, խասնում են .յիրար։
Երփոր խասնում են .յիրար, Դավիթը շատ հոգնած ըլնում,
Խանդութ խանումը միշտ .յուղում Դավիթին խփել։
Դավիթը վերջ ադադորում, ասում ա.
— Չէ՛, ձիանքը նեղացան, — ասում, —
.Ձիջննք, գյուլաշ խասննք։
Ասում. — .Ձիջնե՛նք։
.Ձիջնում, խասնում գյուլաշ,
Խանդութ խանումին վերցնում, դնում դևտին,
Թուրը քաշում, որ ըսպանա, ասում.
— Կին եմ ես, — ծծերը բացում։
— Ո՛վ ես, — ասում, — բա՛ դու։
— Ես, — ասում, — Խանդութ խանումն եմ,
Յլան թաքավորի ախճիկն եմ։
— Բա ո՞ւմ դեմն իր կովում։
Ասում. — Ես քանի մարդիկ եմ ըսպանե։
Ես տեսնեմ, եթե դու զորեղ չըլներ, քեզ էլ կըսպանի։
Որ զորեղ ես՝ դու կարող ես ինձ հաղթել,
Ես կըլնեմ քեզ կնիկ։
Վերցնում Խանդութ խանումին, բերում,
Գալում խորը ասում։
Խերը համաձայնըվում, տալում է Դավիթին։

33. Յոթը տարի մնում ըդեղ՝
Խանդութից մե տղա ըլնում,
Յոթը տարեգան՝ առանց անուն, էդպես էլ ապրում,
Մի ձեռն էլ խուփ՝
Հանկարծ իրա աշխարն .յընդնում մտնեն՝
Երփ որ .յընդնում մտնեն, ըլնում Դավիթն ասում ա.
— Պաի էքամ ես՝
— Ա՛յ մարդ,—ասում թաքավոր,—ընչի՞ էքաս,
Ես ունեմ-չունեմ մե ախճիգ,
Էս ախճիգն էլ որ տվիլ եմ քե,
Բա որ դու էքա՞ս,
Իմ էս կայք, կարողութուն, ունեցվածք ո՞վ տեր դառնա՝
— Չէ՛,—ասում,—ես էլ ունեմ քաղա՛ք,
Ես էլ ունեմ տուն ու տե՛ղ,
Ես էլ ունեմ երգի՛ր,
Բա՛ իմ երգիրն ո՞ւմը թողեմ,
Որ ես գամ ըստեղ, Կապուտակնդի քաղաքին տիրաբրդեմ,
Ես դառնամ ըսուն պահ՝
Ես իմ երգիրը պաի էքամ՝
Վերջապես, էդ մարդին ինչքան աղաչում, պաղատում՝
Չարա չի ըլնում՝
Ասում.—Գո՛նե էս տղեն թող ընձի՝
Ասում.—Էդ տղեն թողի քե՝
Ասում.—Դու ջահել ես, մե հատ էլ կըլնի՝
Ընձի ժառանգ չունեմ, էլի,
Էդ մե ախճիգն է, էն էլ տանում ես՝
Ասում.—Էդ տղեն էլ թողի քե՝
Բայց,—ասում,—էն ա ցավ ըլնում ինձ,
Ինչի՞ց է, էդ տղի ձեռը խփված է, չի բացվում,—Դավիթն ա ասում՝
— Դա,—ասում,—կտանք բժշկի՛,
Կտանք էս յան, էն յան, գուցե ասուված տա՝
Թող սախաթ ըլնի,—ասում,—
Թող մե քևանի ըլնի, էլի տղա չե, էլի՛՝
Թողում ըդից, թողում գալում՝

34. Վերցնում խանդութ խանումին՝ իրան օժիտներով,
Ինչ որ ըլնում, վերցնում գալում՝

Օրը մի իշխան գալո՞վ, գալում հասնում Խլաթ,
Էդ կինըն էլի յեկնում դևմ։
Սայլեր են կապո՞ւմ, ճանապարհներն են կլցո՞ւմ,
Սկսում են դյուլլա տալ։
Դավիթը մտածում է՝
— Ա՛յ, հո՛,—ասում,—բատեղ ընձի կըսպանեն էս
բուրքերը։
Տղի՛ք,—ասում ա,—դուք նամուսի տեր մարդ եք, չէ՞,
Բա՛ դու նամուս չունի՞ք,
Բաղի՛ք,—ասում,—ես երդվում եմ՝
Կինս տանեմ հասցնեմ, դնեմ իմ տունըն,
Գամ, ձեզ խետ կռվեմ։
Էդ մարդը բոռնց մե կերպ համաձայնեցնում՝ բողում են։
Կնիդն էլ համաձայնվում, ասում.
— Գուցե տանա գնա ընդեղ, գա բատեղ,
Գա ինձ մոտ՝ էլ չլինա, էլի։

Գալում ա ընդեղ,
Ապրում ա խանդութի խանումի խետ մի քանի տարի,
Հանկարծ ընդնում մանն։
— Ա՛յ աղա,—ասում,—
Չէ՞ որ ես խոսք եմ տվե, Խլաթ պտի էթամ, կռվիմ.
Էն մարդերը մկա բսպասում են ընձի,
Ես իմ խոսքի տեր մարդ չեմ էլե, ուրեմն։
Քուռդն Ջալադին,—ասում,—քաշի՛ր։
Քուռդն Ջալադին քաշում են, թիմարում.
Վերցնում իրան քուրը, դուրը, նետ-աղեղն,
Խարնում, յընդնում ճամպախ։

35. Գալում, խասնում Կլաթ*.
Խաբար են տալում ժողովրդին, ասում՝ Դավիթն էկե,
Կռվում են։
Գալիս են Դավիթին խնդրելու, որ՝
— Ինչո՞ւ կռվենք, ախպե՛ր,

*Վիպասացը և՛ Խլաթ էր ասում, և՛ Կլաթ։ Բողնում ենք երկու ձևն էլ։ Ստե. բանաճավաճների։

Էս կնիկը վերցրու, գաղցի մեկի տեր-տիրական, մեզի
միրապրատա։
Ասում.—Չէ՛. ես ինձ նրդիր ունե՞մ, ախշար ունե՞մ,
ես իմ ախշարը չեմ թողա անտեր,
Գամ նամեմ էս թուրքական նրդիրը, ձեզի կառավարեմ։
Կռվում եմ,—ասում,—մինչև կոտորեմ։
Դավիթը կռվում է, այնքան է կոտորում,
Պտի վերջ առա էդ նրդիրը։
Չմիշկիկ Սուլթանի ախճիկը մորն ասում ա.
— էդ ի՞նչ մարդ ա, որ բանից կռվում։
Ասում.—էտի քո հերն ա։
— Ո՞նց,—ասում,—իմ հերը։
— Դա,—ասում,—երբ որ էգամ գնաց Կապուտակից,
Խանդութ խանումին բերելու ժամանակ, դա ինձ հետ
ապրավ.
Որ ապրավ՝ ես մնացի երեխով,
Դու ես էլի։
Ասում.—Ես բառն կըսպանեմ։
— Ո՞նց կըսպանես,—ասում։
— Կըսպանե՛մ,—ասում,—նա։
Ախճիկն էթում, քշնամիքից նետ-աննեղ ա վերցնում,
Պատրաստում, գալում։
Մի դյուլ ա ըլում.
Միշտ գալում էա դյուլը, կեսավուր շորին Դավիթ լողզընում։
Գալում կնաօրին, էլի շորերը խանում, Քուռդն Ջալադին
կապում,
Որ լողանա, հանգրատանա, էլի էթա կռվի։
Էդ ժամանակ ախճիկ նետ-աննեղ բռնում.
Իմալ որ նամում ջրի մեջ՝
Բռնըցնում, արտից դանում,
Էն յանից նետ-աննեղ դուրս ա տալում։
Դավիթը ճըշում.
Երբ որ ճչում՝ ախճիկն էլ ընդեղ ա սիրտ պատռում,
մահանում։
Դավիթը մահանում ըդեղ։
Քուռդն Ջալադուն չեն կարում բռնեն։
Քուռդն Ջալադին այդպես էլ էթո՞ւմ
Ու գալում ա խանում ա իր ախշարը։

36. *Խաբարը առնում են՝ Զննով Օվան, ճնճղափոքրիկ,*
Յոան Վեդոն,

Խաբար են առնում, որ Դավիթը չկա։
— Ուրեմն էդտեղ որ գնացե կռիվ,
Ըդեղ բռնանել են Դավիթին, որ չկա։
Յոան Վեդոն .լըլնում գալում ա, ասում.
— Խանդութ խանո՛ւմ,— ասում,—
Բը մաժ, բը մաժ,
Դավիթ մըր, սարի մը խոշա՛։
Ասում,— Խանդութ խանո՛ւմ, գիտե՞ս ինչ կա.
Դավիթը մեռա՛վ, Քող իմ գլոխը սաղ էղնի,
Մինանուն է, ես էլ Դավիթ եմ, ես էլ էն ցեղից եմ։
— Ա՛յ, վա՛յ,— ասում,—
Դավիթից .լիդև, հըլա՛ տեսնը, գամ Յոան Վեդոյին առնե՞մ ես։

Իրան քցում է բալկոնից։
Քցում է այդ սալի վրեն,
*Ասում են, խա՛ր է էքում էդ քարը՝ լեռը***։
Իր գլոխ, ոնց որ քցե,
Ըդեղ փա՛ռ էդբան գնացել ա, մահացնը ա։
Գալիս են տեղալու՝ Զննով Օվանը, էդ բոլորը,
Հավաքվում են բարեկամներ, գալում են, իշխում են։
Իշխում են, տեսնում են, որ արդեն մեռնր ա։
— Հըլա՛ տեսնը,— ասում ա Զննով Օվան,
Խելոք մարդ ա բլում, ասում ա,—՛
Հըլա՛ տեսնը, բառս ծրծներից կաթ գալո՞ւմ, թե չէ։
Իշխում են, տեսնում են՝ ծծներից կաթ ա ավե գալս։
Ասում.— Մեզի երեխա ունենք Կասպուտկին,
Մեզ երեխա ունենք,— ասում ա։
Պատ պատրաստվենք, էքանք, Սասուն չավիրենք,—
ասում ա,—
Դավիթի Քորամեն բերենք, որ մեր Սասունն էլի տիրապետա։

---

* *Քրդերեն է։*

** «Սասունցիք պատմում են, երգվում են, ասում են. —Մենք տեսել ենք էդ փոսը, որ էլև սանդ, միշտ ցորեն ենք ծեծե, մենք օղորմի ենք տվե։» Տաճ. վիպասացի։

Գ

Մ Հ Ե Ր

37. *Մտածում են, պատրաստվում են, որ պտի գան Կապուտակին։*

.Յրկնում են, գալիս են։
Գալիս ե՞ն բարեկամներո՛վ, գալիս են Կապուտակի՞ն,
Էթում են թաթավների կուշտ, գլուխ են .յիջեցնո՛ւմ։
Թաքավիրը տեղ է ցույց տալում, նստում են,
Առում.—Ի՞նչ մարդ եք։
Առում.—Մենք Դավիթի բարեկամներն ենք,
Ես հարսխպերն եմ, էս էլ հարսխպրատանքն ե՛ն։
Մենք լսել ենք, որ մեզ երևխա էլն խանդութ խանումից,
Դավիթն էլ էկավ ելաթ, կռիվ արա՛վ չորս-հինգ տարի,
Դավիթին ըսպանեցին, հիմա մեզի .յիդնամնա չունենք։
Պտի մեր երևխեն ծնվել ա՝ տաք,
Ախճիդ ա, քև տղա յա, պտի տաս, տանեմ։
Առում.—Ա՛յ մա՛րդ, ընդենց երևխա չէլն,
Մի քանի տարի մնացե՛ր՝ երևխա չունեցե։
Մե հատ էղեր ա՝ մեռեր ա։
— Քանի՞ տարեկան էր։
— Իրեք տարեկան։
Ըսավ.—Էթանք։ Որտե՞ղ ա խորուկ։
— Գերեզմըներ։
— Կէթանք իշկանք,—ասավ,—եթե իրեք տարեկան էլե՝ Իրեք շենք պտի ըլնի։
Ջափենք, եթե իրեք շենք էլավ՝ էնի մեր մեռելն ա.
Եթե իրեք շենք չէլավ՝ էնի մեր մեռել չի։
Էթում են գերեզմընները, չափում.
— Ախպե՛ր,—ասում,—ըսանեղ .յո՞ւր ա մեզ մեռել.
Իրեք շենք մեղի մեռել չկա էստեղ։
Բայց ընդեղ էդ մարդը պատրաստե,
Իր թայդաշ տղեք ջոկե,
Սազ, սաենթուր, ուտել, խմել,
Որ տղեն ըսկի ուշադրություն չըդարցընա ուրիշ տեղ,
Որ բնֆի մեջ ա, խաբար չըլնի թե՝ ո՞վ էկե, ո՞վ էթում,
Ի՞նչ մարդիկ է էկած, ինչ հարցուփորձ ա։

Տղեն էդ քեֆի մեջ ա ըլնում։
— Ախպե՛ր ջան,— ասում,— ըստեղ մեզ մեռնել չունենք։
Կանչում են քավորին։
Քավորն ասում.— Ճիշտ ա, եղել ա.
Մի տղա էղել ա՛, բայց մահացել ա։
Ասում ա.— Քավո՛ր ջան, ինչո՞ւ ես խափում,
Մեր երեխան սաղ ա,
Էտենց գերեզման չկա մեր գերեզմաններուն մեջ,
Մեր տղեն սաղ ա,
Բուղ մեր երեխան տան՝ էթանք։
Քավո՛ր Ղահ՛նդ, չէ՞ որ,— ասում,— դու քավո՛ր մարդ ես էղե,
Դավիթին հավատարիմ ես եղե,
Մենք էտենց ենք լսացեր ենք։
Վերջ, ինչքան խնդրում են, թաթալները վիզ չառնում.
«Էղե՝ մեռե»։
— Դե՛ լավ,— ասում,— ես կըբառամ,
Մեր տղե որտեղ ըլնի, ընդուց դուրս կըլնի։
Զևնով Օվան բերում կաշին, կապում մեչքն էլի,
Զևոները դնում կողերին, բառում.
Մի նարայ ա կանչում։
Նարայ որ կանչում՝ տղեն խլուշ-խլուշ ըլնում։
Նադարեն սաստիկ սկսում են խփել,
Որ տղեն չըլսա բառու ձայնը։
Մեկ էլ ա բառում, մեկ էլ.
Իրեքի վրեն՝ սկսում էս յան, էն յան տփել,
Դուս չըլնում չինը, վազնում գալում։
Գալում՝ տեսնում իրեք խառ մարդ, կաչնուկ են։
Գալում, բառնց կողքի խնա կայնում։
— Ա՛յ, էս Դավիթի տղան է, սրան պտի տանենք։
— Ա՛յ մարդիկ,— ասում,— ես վոյիդ մարդ եմ,
Բա՛ ըստուն տանեք, ես ընչո՞վ ապրեմ։
— Չէ՛,— ասում,— բա՛ մեր ախշարն ո՞վ բդի տիրա,
Մեր ախշարն էլ էդ մարդը բդի տիրա։
Էդ մարդին վերցնում են բերելու,
Խնդրում ա.— Մենք խնդրում ենք,— ասում,—
Դրա էդ ձեռը, որ բառնց փակ ա, կարա՞ք մի բացեք։
Զևնով Օվանը գալում, կանչում Մարութա Ասլարածին, Խաչն
Ուսին,

Խնդրում, ձևան չիբար տալում, բացում՝
Մըջից մի լերթ արուն թափում։
— Բա՛,— ասում,— սա ի՞նչ է։
Ասում.— Ախշար սրա ձևանով պտի ավիրվի՛, քանդվի՛,
Ախշար սրանով էլ վերանա։

38. *Ու վերցնում են տղին, գալում են։*
Բերում են տղին, պաշտպանում են, տղեն մեծանում։
Կինըն էլի ասում.— Բերեցիր, էլի՛,
Դացիր մեհատանտերը գտար,
Էլի բերեցիր, սեվ պատիժ մեր ջանը բցեցիր։
Ըստուն տուր,— ասում,— մեհաստանտերի,
Որ չկենի էթա, մեհաստանտ անի։
Ասում ա.— Ա՛յ կնիկ, երեխա չա, թող սա մեծանա՛,
Մեր Սասունա տերը կըգտանա՛,
Մենք գրա թրի տակը կատրե՛նք։
Տևտո՞մ ես, գալիս են մեզի բոլոր ճնշում են.
Երե Դավիթը չըլներ, մենք կարի՞ներ ապրինք.
Դավիթըն էգա՛վ փատահեղ ապրանք։
Ուրիշ պետութիւններ էլի գլոխ կըվերցնեն,
Կըգան մեզի վրա կռիվ,
Մեր երկիրը կըկոտորեն ու մեզ կըտանեն։
Վերջ, կնգան համոզելով՝ մինչև տղեն գառնում է տաս տարեկան։
Տաս տարեկանից ասում.— Յելել է, հե՛յ,— ասում,— խոտաղ ա,
Մե տեղ տո՛ւ, թող աշխատա։
Ասում.— Բե՛, կնի՛կ, տանը, թող ըլնի գառնարած դյուղին։
Ասում.— Տո՛ւ, թող ըլնի գառնարած։

39. *Բերում են Մհերին տալում են գառնարած.*
Անունը դնում են Մհեր։
Մհերը էթում գառների դեմ։
Տանում գառները արածցընում, բերում,
Ըզտեղ չուն, ջանավա՛ր, լաքատրա՛կ, ինչ որ ըլնում,
Ժողվում գառների խետ,
Առնում բերում, լցում գեղ։
Էնքան ա վազում էս յան, էն յան,

Ոտները ամբողջ արյուն ա քաշում,
Զարոխ չի մնում ոտներն էլ։
Ժողվում, կնասավուրին բերում.—Ա՛յ մարդիկ,—ասում,—
Էս բալու ուլերը, որ դուք քաղեր եք,—լապշտարբզնեերին,—
Ըսոնք ըսկի չեն սքրում.
Էն մեծերը լավ են, խնդճ են,—
Գայլերին, ուրիշ չանավբրներին բերում, ասում,—
Սրանք շա՛տ խնդճ են, բայց էս բալու ուլերը շատ չար են,
Ըսպանին ընձի,—ասում,—
Ըսպանին .էհսօր սաղ օրը, բսպանեցին ինձի։
Ա՛յ մարդ, տենում են՝ չո՛ւն, չանավար, պռոնները
խեղդըցա՛ծ,
Ժողվի, բերե լցի բաղաքի մեջ։
Էքում են, դռները փակում են ու պառկում են։
Դռները փակած մտնում են ներս,
.Յինքն էլ նեղանում, ասում.
— Ա՛յ մարդ, ո՛ր՝ մեկ ուլ ուներ, էրկուսն եմ բերե,
Որին էրկու գառ ուներ՝ իրեքն եմ բերե՛,
Ո՛ր՝ տասն ուներ, տասնըհինգն եմ բերե։
.Յեկե՛ք, ձեր գառ ու ուլը ջոկեցեք .յիրարից։
Ո՞վ է .յանգաջ անում ըղոնց,
Չանավարներ բերե, լցրե բաղաք։
Իլլաջ չեն ուննում։
Զննով Օվան վերջ տենում ա՝
էսի պլուխ դրեց մե հատ բանի վրա, քնավ։
Պոի փախնեն լապշտարբզներ, չէ՞։
Լապշտարբզնեն որ սկսում են էս յան, էն յան փախնել,
էսի գարթնում, ուզում ընկնել խոլվներ.
Որ ընկնում խոլվներ՝
Ոտները բորիկ զանում քարերին, կրակ ա տալում դուս։
— Ա՛յ մարդ, արի՛, արի՛,—ասում,—
Մհե՛ր չան, արի՛, արի՛, բաներ բալ ուլ են, խո՛ ուլեր չեն.
Արի՛, արի՛, արի՛ ասեմ, արի՛։
Գալում, ասում.—Հորոխպե՛ր, ի՞նչ են բա բաներ։
Ասում.—Բաներ չուլի վայրենիներ են, բալա՛ չան։
Արի՛, ձո՛ փախնեն, ձո՛ փախնեն։
Ըն մըչին էլ որը կըփախնի, ձո՛ փախնի.
Գերձ չունես, ձո՛ էքան,—ասում ա,—

Էն խալալ մալը կըմնա,
Էն խարամ են, ի՛նչ էքան։
Մհներին համոզում բերում,
Յըմեն ծողնում են չանավարներ փախնում են,
Մնում են գառներ։
Նոր յըլնում են գառների տիրվանք՝ գառներ չոկում ե՞ն։

Մի ժամանակ ապրելուց հետո՛,
Էլի էտ մարդը խնդրում հորթախպերը, ասում.
— Մե ձի տո՛ւ, մե բան տո՛ւ, ընձի համար ապրեմ։
Ջնով Օվան ասում.—Բան յըլնի դուս։
Ասում.—Ա՛յ կնիկ, սրան գառնարած անելն էլ չի սալա,
Բե՛ր, սրան գառներից խաններ դուս, էլ չի պախաս։
Մե օր էլ բաղաք կըրնրա, կըլցա չո՛ւն, չանավա՛ր,
Մեր բաղարը կավիրա։

40. Ձինը խնծնում էտ մարդը, դնում ման գալու։
Ման ա գալում է՛ չան, է՛ն չան,
Ճնճուղ ա դանում, լոր ա դանում,
Կաքավ ա դանում իրեն համա,
Մինչև հասունանում, դառնում տասնըյոթ-տասնըութ տարեկան։
Մի օր դիշեր էդ մարդը իրան որսը լարում ու էքում ա,
Յընդնում էդ որսի յետևից լարում,
Տանում, կոխում՝ որտեղ որ Մարութա Աստվարածինը շինված է,
Տանում էդ մեչեն։
Դիշեր չի կարում վերադառնա, մնում այդտեղ։
Մնում էդտեղ, պահում մի տեղ քնում,
Դիշեր զարթնում, իշխում, տենում՝ լուս.
«Էս ի՞նչ բան ա, էս ի՞նչ ա էլե,
Էս լուսը որդո՞ւց ա»։
Յինքն իրան մտածում, կասկած անում, մինչև լուսը բացվում ա։
Յըլնում գալուն։
Գալում հորթախպոր կուշտ.—Հորթախպե՛ր,—ասում ա,—
Մեր սարի մեջտեղը կա մի նկեղեցի խունարված։
Այդ նկեղեցում,—ասում ա,—լուսը կա։

Էն ի՞նչ եկեղեցի ա ընդեղ։
Հորոխապերը մտածում.
«Ասեմ, չասեմ, ասեմ, չասեմ, ի՞նչ ասեմ»։
Ասում ա.—Ա՛յ բալամ, եկեղեցի ա, էլի՛, խունարվեր ա.
Ի՞նչ եկեղեցի կըլնի, ես ի՞նչ դիտամ։
Է՛, քանի տարիներով էղել ա էդ եկեղեցին։
— Չէ՛,—ասում ա,—ըդեղ մի բան կա,
Պտի ճշտությունն ինձ ասես.
Սիրն չասես, վատ կըլինի մեր մեջ։
— Ես էդ եկեղեցուց գլուխ չեմ կարող հանել,
Չեմ էլ ւիմանում։
Նույն տղեն էլի էդ փորձարար Պառավի, Քե Պառավի
երեխան ա բլում,
Էլի սըրում ենն, սովրըցնում ե՛ն,
Էլի էթում ա էդ մարդը ըդեղ,
Ըտուց խորհուրդ ա վերցնում։
Ասում.—Բալի՛կ ջան, դիտե՞ս ինչ եկեղեցի ա էտի.
Դա եղել է քո պապի ժամանակ.
Քո պապից հետո եղել է քո հոր եկեղեցին.
Քո հորից ետո էլ էդպես խունարվե՛,—ասում ա,—
Չենով Օվանը տեր չէղի,
Էդպես էլ խունարված, էդպես էլ մնում ա։
Գալիս ա հորոխապոր կուշտ, ըտիպում հորոխապորը,
Նորից էլի բանվորներ վերցնում,
Էտ եկեղեցին տանում, պատրաստում։

41. Պատրաստելուց ետո գալում, մեն ա գալում է՛ս յան,
է՛ն յան։
Չենով Օվանի կնիկը շատ վատ ա վարվում խնամն,
Ուզում, որ Մհերին կորցնի մի տեղ։
— Մհե՛ր ջան,—ասում,—դու որ էն հոր տղեն ըլնես,
Քո հոր Բշնամիներ բռպանեցին քո հորն,—ասում ա,—
Դու կէթաս, էն երգիրը կավիրես։
Ասում.—Որտե՞ղ է էդ երգիրը։
— Էդ երգիրն,—ասում,—Խլաթին ա։
Մե կին կա,—ասում ա,—
Քո հոր զենքերն էլ էն կինն ա պահում։
— Բա ձի՞նը։

— Ջինն էլ,—ասում ա,—քու հորթախաղն ա պահում։
Գնա՛, հորթախաղրիցդ վերցրու ձին։
Ջինը վերցնում հորթախաղրից,
Ախծնում իր ձինը, յըլնում, քշում էթում։
Էթում, դե՛, հասարակ թրով, հասարակ բանով*։
Էթում էնտեղ, որտեղ իր հերը ապրել է էդ կնոջ հետ.
Քա՛նի տարիներ ա քաշե,
Պառավ կին ա դառնում։
Էդ կնոջ մոտ էթում էդ մարդը, խոնախա բլնում՝ հարցնելով։
— Բարև՛ քե,—ասում,—մայրի՛կ։
— Բարև՛, հա՛զար բարի,—ասում,—բալի՛կ ջան։
— Մայրի՛կ ջան, խոնախա կուզե՞ս։
Ասում.—Խոնախա որ կա՝ ասսունն է, բալի՛կ ջան։
Նստում էդ մարդիկը, պիշներում բդեղ,
Խոսում են, ասում են։
— Մայրի՛կ ջան,—ասում,—էն ի՞նչ զենք ա, որ ընդեխից կախած ա,—
Հոր զենքերին յաշըն առնում։
Ասում.—Զենք են, էլի՛, բալա՛ ջան.
Ի՞նչ պետք է զենքերին։
Էտ զենքերի տերը ուրիշ մարդ ա էղե,
Էդ զենքերի տերը շատ հերոս մարդ ա էղե՛։
Ասում.—Տեսնե՛նք, էլի, մայրի՛կ.
Հըլա՛ մեր ուժը կըպատա՞ էդ զենքին վերցննենք,
Խալխանը՛, իրան գուրգը՛, նետ-աննեզը՛,
Տեննանք, իմ ուժը կըպատա ըտոննց։
Ասում.—է՛դ ա, էլի, իշկա՝ տես։
Յըլնում, ընդեղից ձեռ տալում, վերցնում, բերում,
Նայում, ամեն ինչ բերում.
— Մայրի՛կ,—ասում,—էլ ի՞նչ ունեցեր ա սա։
— Սա,—ասում,—խաչ ունեցեր ա՛,
Սա ունեցեր սապուքնե՛ր,
Սա ունեցեր ա Գոտին Մըշքին,
Խաչը Ուսին.
Սրանք բոլո՛ր կա,

---

* «Որ ասում են Դավիթի թուրը, Դավիթի էս, Դավիթի էն—գուտ բաներ են, ես չեմ լսացե էդպես, ախպե՛րս։ Մաե. վիպասացի։

Էդ մարդը ինչպես ըսպանվել ա՞ ըստեղ.
Մենակ ձինը չկա ըդրան,
Բոլորն ըստեղ ա։
Վերցնում էդ մարդը բերում, ամեն ինչ տեսնում,
Տեսնում՝ հիշտ է՛.
Ինչ որ պատմել են, նույն պատմությունն է։
— Մայրի՛կ ջան,— ասում,— բառերնը տո՛ւր ընձի,
Ի՞նչ պետք է քեզի։
— Որդի՛,— ասում,— դա Քողել ենք յիշատակ, որ յիշենք։
Ասում.— Մայրի՛կ ջան, դու էլ պատվրցել ես, պոի
մահանաս, էլի՛
Ի՞նչ հիշատակ պոի մնա քեզի։
Տո՛ւր ընձի, երեսատարդ տղա եմ, էլի՛։
— Վերցրո՛ւ,— ասում,— որդի՛։
Էդ գեներերը վերցնում էդ մարդ,
Յատավոտ պատրաստվում, հարնում,
Սկսում էդ գյուղի խետ կռվել։
Յոթը տարի կռվում ըղեղ։
Այնպես է ջարդում,
Մինչև հիմա, ասում, մեռում ա հրլը էդ ախշարը։
Մհերը կատորելուց վերադառնում է.
— Մայրի՛կ,— ասում է,— քեզի չեմ դիպնում,
Դու լավ մայրիկ ես,
Ըտենց էլ մա՛ց, դու քո մահով մահացի՛։
Ասում.— Քողնում ես՝ ի՞նչ դառնամ, բայդուշ ըստե՞ղ։
Ինձ էլ ըսպանա, Քող ես քաջի ձեռով էիմ։
Մայրիկին էլ շը խնայում,
Ետում դրան էլ է ըսպանում։
Վերադառնում է Սասուն։

42. *Սասուն վերադառնում է,*
Էլի ուրիշ պետություններից կռիվ են գալում խետ։
Բայց մի ախճդա էլի սիրահարվում խետը,
*Դեղձուն Շամին է առնում**։
Ըդու խրմար էլ կռիվ անում էտի,

* Վիպասացը մոռացել էր այդկա անունը։ Բանահավաքի թվարկած հավանական անուններից ընդունեց Դեղձուն Շամի անունը և հաստատեց, որ Աբամպան եղել է Դավթի մանկկի անունը։ Տես. բանահավաքներն։

Հդեղ առնում Դեղձուն Սամին։
Դեղձուն Սամը բերում է Սասուն։
Սասուն երի որ մնում է էդ մարդը, կինը մնում է երեխայով,
Ինքը էթում ա կռիվ։
Շա՜տ ժամանակներ կռվում, շա՜տ,
Որ ասում են՝ արդեն Մհերը չկա ու էլ չըլնի։
Ու էդ փոքր տղի անունը դնում են Մհեր,
Նոր տղի անունը դնում են Փոքր Մհեր։
Փոքր Մհերը մեծանում,
Որ սկսում երեխաների հետ կռիվ, դավի, ասում են.
— Ա՛յ մարդ, քո հերը բանից մի քաջ մարդ ա եղե.
էս յան, էն յան .չըկռնելով՝ եսիմ որտեղ բռպանեցին,
Դու ընչի՞ ես էկե ընկեր ես,
էս խեղճ բյասիբ-բյուսուրի էրեխեքին բանից չարդում ես։
Գալում է, մորն ասում ա.—Ընձի հեր եղե՞լ ա։
Ասում.—Չէ՛, դու եղել ես էսա Զևնով Օվանից։
Ասում.—Էս բիձի՞ց։
Էս, ասում են, իմ հորոխպերն ա, չէ՞։
— Ա՛յո՛,—ասում ա,—դա յա մեր տերը։
— Չէ՛,—ասում,—ընձի հեր ա էղե,
Իմ հոր տեղն ասա՛ ընձի։
— Ա՛յ որդի,—ասում,—քու հոր տեղն ես ի՞նչ գիդամ.
Քու հերը գնաց ուրիշ ախշա՛ր, ուրիշ տեղ կռվելո՛ւ,
Ո՞վ գիդա հերդ սաղ ա՛, քե մեռած ա՛, եսիմ,
Հորիցդ խաբար չունեմ, տեղկություն չունեմ։
— Որտեղ,—ասում,—ըլնի, ես պտի գտնեմ իմ հորը։
Մերը շատ ա ասում, տղեն բիչ ա լսում։
— .Յուր ըլնի,—ասում,—ես իմ հոր եռևից պտի գնամ.
Ջարա չկա, իլլաջ չկա, պտի գնամ, գտնեմ իմ հոր։
Որտեղ էլ ըսպանված ըլնի, որտեղ էլ մեռած ըլնի՝
Պտի դարձյալ իմ հոր գտնեմ։
Մերը տղին չի թողում։
Տղեն ասում ա.—Ես կէթամ իմ հորը գտնելու։
— Գե՛,—ասում ա,—որ կէթաս,
Քու հորըն մի նշան կա, տամ՝ կապա քեզ։
Գնա՛,—ասում ա,—նա չար մարդ ա,
Դուցե չըճանաչեք .յիրար,
Ձեր ցևղը գոռող ցեղ ա,

Առնեք .յիրար, .յիրար բսպանեք.
Երբ կը հանդիպեք .յիրար, սա ցույց տաս՝
.Յինքը դիդա, որ դու նրա տղեն ես։
Որ կասի անունդ ի՞նչ ա,
Կասես՝ Փոքր Մհերն եմ։
Բազրանդը կապում ես,
Բայց մոր սիրտը չը տանում, էլի,
Ի՞նչ ա մտածում, ասում.
— Ես էլ պտի .յրնկնեմ սրա .յետև.
Սրանք գնացին, ես ի՞նչ պտի անեմ։

43. *.Յրնում էս մարդը, մե կողմից էլ էդի,*
Կովելով, աշխատ չափելով էիում.
Տեսնում մի հատ բիձա մարդ, մորուսը քողած,
*Մի հատ գեղացիկ աղջիկ վերցրել, բերում...**
Գալըմ են խեր ու տղա հանդրպում են .յիրար։
Հանդրպելու ժամանակ տղեն ասում.
— Հայրի՛կ, էս գեղացիկ ախճիկը դու ի՞նչ ես անում, մեծ մարդ։
Ասում.—Ընչի՞, ինձ պետք չէ՞,—ասում ա։
— Չէ՛,—ասում ա։
Ասում.—Ինձ էլ գուցե տղա ունեմ,
Տղա բլի կամ մե բարեկամ բլի, տանեմ նրա համար։
— Հա՛յ,—ասում,—իծամուրո՛ւր,
Դու ի՞նչ ես անում էս ախճիկն։
Ընենց ես չարացնում,—ասում,—
Որ մե գուրզ գանեմ, տեղնուտեղ մնաս։
— Հայդի՛ դ,—ասում,—դեռ կաթախոռ բերնեդ դալում ա,
Դու ո՞ւմը գանես։
Խոր խեռ վեճի են մտնում։
Խոր խեռ վեճի են մտնում, .յրնում են, սկսում կռվիլ։
Շա՞տ են կռվում, հորը շա՛տ չարչարում, տանջում։
Հերը մտածում, որ անպայման իրան կրպպանի էսի։
«Ա՛խ,—ասում,—էս որտե՞ղից բնա էկավ էս փահլևանը,
Անպայման ընձի բդի բսպանա.
Ես սրա ձեռը խեղճանում եմ»։

* Վիպասացը բնդմիջելով պատումը, ավելացրեց, որ գրգռող շատ բաներ կա, էդ չեմ կարա հիշեն, չեմ կարա տեղը բերեն, մտես գնացեն։ Ստեն. բանահավաքներից։

Ասում ա.—Բալի՛կ ջան, .յիշենանք ձիանքից, գյուլաշ
խաանենք.
Եթե,—ասում ա,—դու հախթի՛ր, ընձի քցի՛ր՝
Դու ինձ ըսպանա,
Եթե ես քցեցի քեզի՝ ես քեզ կըսպանեմ։
— Շա՛տ լավ,—ասում,—.յիշենանք։
.Յիշնում են էրկասով, խաանում են գյուլաշ։
Բայց մերը հնաւում ա դրանց։
Ասում.—Նա հերսոտ մարդ ա,
Իր տղային կըսպանի անպայման։
.Յրնգնում ա նժիք, գալում է.
Նայում ա հնովից, տեսնում, որ էրկասով խաասան .յիրար,
.Յիրար չարշարում են, տանում են .յիրար, բերում են,
Ջոջ Մհեր վերցնում տղին, դնում գետին,
Դնելուն՝ սուրը քաշում։
Սուրը քաշում, որ ըսպանա,
Տղի մտքեն էքում բապքանդը։
Մերը բոռում, ասում ա.—Հայրը որդուն չի՛ ըսպանա։
Լսում՝ մի հատ ձայն ա գալում։
Ձայնին ուշադրություն դարձնելուն, տեսնում, որ, ա՛յ մարդ,
էս կին ա։
Կինը մոտենում, ասում ա.—Ո՞ւր ես ըսպանում։
Ներ տղեն .յրնգնում գլխու, որ էս իմ մերն ա։
— Որ ընձի ըսպանես,—ասում ա,—
Դու Մհերի ձեռից չես ազատվի։
Ներ տեսնում սա, որ իրա տղեն ա։
Բարձրրցընում, ասում ա.—էս քո տղան ա։
Մանոթանում են բդեղ հեր ու որդի, իրար համբուրում են։
— Էս ախճիկն էլ,—ասում,—քեզ համար եմ բերե, բալի՛կ
ջան,
էս քեզ կնացու եմ բերե,
Ինձ համար չէր, էլի,
Որ դու ինձ ասում իր՝ երիտասարդ, գեղեցիկ ախճիկն ինչո՞ւ
ես բերե։
Էդ ախճիկն էլ տալում ա տղին, վերցնում գալում։
Հայրը անիծում ա տղին՝
Անմահ ու անժառանգ մնաս։
Էդպես էլ Փորը Մհերը էքում ա կորում*։

* «Ըզուց .յավել էլ չեմ կարա ասել. շատ ա, բայց մեռս չէ։ Պահ. վիպասացի։

Սեամեծ Ծնեբր

պատմություն

Նորքաղաքցի Գևորգ Գևորգյան

Կամո – Լանկաղբյուր գյուղ

գրառված է 1973 թ.

Աբեղայի ծնունդը

Նորբայազիտցի Մխիթար Գոշ

գրառված է 1973 թ.
Կամո – Լանջազեղյուր գյուղ

Գեղեոն Ավետիսի Դավթյանը ծնվել է 1897 թ. Նոր Բայազետի Քյոսաէջդ (այժմ Լանջաղբյուր) գյուղում, հողագործի ընտանիքում։ 1913-ին գնացել է Թիֆլիս, ուր մինչև 1916 թ. զբաղվել է հացթուխությամբ։ 1916-ին զորակոչվել է բանակ, կռվել Կովկասյան ռազմաճակատում, հասել Էրզրում, Տրապիզոն։ Կարսի անկումից հետո անցել է Ալեքսոլ, ապա վերադարձել հայրենի գյուղ և դարձյալ զառացել հայկական զորամասերում։ Հովհ. Սարուխանյանի գնդակավարությամբ տեղական զորամասերը ապաստամբում են դաշնակներից։ Գեղեոնը կռվում է դաշնակների դեմ, գերվում, ձերբակալվում։ Վրա է հասնում 11-րդ կարմիր բանակը, և նա շատերի հետ ազատվում է բանտից։ Հայաստանի սովետականացումից հետո 2 տարի ծառայում է կարմիր բանակում։ 1922-ին անցնում է Բարու, աշխատում իբրև հացթուխ և այնտեղ էլ 1925 թ. ամուսնանում։ 1929-ին վերադառնում է Քյոսաէջդ, ընդունվում կոլտնտեսության 27 տարի կոլտնտեսությունում աշխատում է բրիգադավար։ 1964-ից թոշակառու է։

Գեղեոնն ունի 9 զավակ՝ 4 տղա, 5 աղջիկ։ Կիսագրագետ է, 1911—1913 թթ. սովորել է գյուղի խաչֆալի մոտ։

Վկայը լսել է հորից՝ Ավետիս Դավթյանից, որը եղել է նշանավոր բանասաց (մահացել է 1938 թ.)։ Վկայից, որ հայրը «Ողորմիածում» չի սկսել վեպը, և որ պատումում երբեմն հատվածներ չեն եղել։

Գեղեոնը պատումն սկսեց Դավթի ճյուղից։ Այն հարցին, թե Դավթից առաջ ուրիշ պատմություն չկա՞, հավատաց, որ կա և դա ուրիշ ճյուղ է՝ Մհերի ճյուղը։ Եվ նա պատումը վերսկսեց Մեծ Մհերի ճյուղից։ Փոքր Մհերի ժամանակ փակվելու դրվագը ևս Գեղեոնը առանձին ճյուղ էր համարում. հրաժարվեց պատմել՝ լավ չհիշելու պատճառով։

Գ. Դավթյանի պատումը խիստ ավանդական է, գերազանցապես ազգագրական, սակայն կրում է իրանական «Ռուստամ Զալ» վեպի ազդեցությունը. համեմատելով որոշ դրվագներում ու մանրամասներում՝ եվ այդ այն պատճառով, որ վիպասացը «Սասնա Մահերից» ավելի լավ գիտեր «Ռուստամ Զալը» և սիրով պատմեց այդ վեպից նրանք ճյուղ «Սասնա ծռերին» այս տարբերակում Մհերի հորաքույրը եղել է Մարա Մելիքի հորեղբոր կինը։

Պատումի լեզուն զգալիորեն տարբերվում է Նոր Բայազետի (այժմ՝ Կամո) բուն խոսվածքից. Նոր Բայազետի բարբառային ձևերին զուգահեռ այն պարունակում է գրական հայերենի և այլ բարբառների բառեր ու քերականական ձևեր։

Պատումը գրառել է Սարգիս Հարությունյանը։

Ա

ՄԵԾ ՄՀԵՐ

Վհերը շատ հսկա, ուժեղ կռվող էր։
Մսրա Մելիքը շատ ուժեղ էր,
Համարա Մհերի չափին ուժեղ էր։
Մհերը հըլը երիտասարդ էր.
Սկսեց Մհերը սովորել գուրզի, բանի։
Նա լավ նժույգ ուներ,
Զիան վրեն նստած որսորդություն էր անում։
Էդ ժամանակ Քյոռի Թորոսը գանձապահ էր, խազինապահն էր։
Մսրա Մելիքը խարջ գրեց վրիններըը,
Որ. «Պտի դու ընձի էսքան խարջ տաք՝ բանի կոտ ոսկի»։
Եվոր բերին տվին Քյոռի Թորոսին,
Քյոռի Թորոսը տեսավ, հրամանը կարդաց,
Որ Մսրա Մելիքը էսքան ոսկի յա .յուզում։
— Օհո՜,—ասաց—ես որտեղի՞ց տամ ոսկի։
— Չէ՜,—ասաց,—կռիվ ենք .յուզում։
Բերեց էտ հրամանն, ասաց.
— .Յուզեմ-չուզեմ,—ասաց,—պետք է կատարեմ, պետք է տամ։

Իսկ Մհերը գնացեր ա որսի։
Որսից վերադառնալով.
Մարթա Մելիքը երկու հատ խաթրան փայլեվան ուղարկեր ա Քյանի Բորինի կուշտ,
Որ կոտով ոսկիքը տանի։
Տարավ խազինեն, սկսեց չափել։
Մհերը էկավ ձիանով, .յընգավ մի պառվի կորնկի առուտուրը,
Կորնկ էր ցանև, նոր էլ ջրված էր։
Մի հատ ավ էկավ .յըռաստ էտ առուի մեջը,
Քշեց էս չան, քշեց էն չան։
Մի պառավ կին վաղավ Քումբանը բաշելով.
— Տո՛, ա՛յ Մհեր ջան,— ասաց,— էտ առուն ավիրիր դու,
Էտ ի՞նչ հանիր իմ էրեխեքի գլուխ։
— Մայրի՛կ ջան,— ասում ա,— որս էր մանկ՝ բանիկ։
Քո առուի արժեքը կտամ։
Հանում մե քուռ ոսկի չա տալի։
Ասում.— Մհե՛ր ջան, դու իմ առուն ավիրիր, ոչի՛նչ,— ասում ա,—
Գնա՛, Մարթա Մելիքը էրկու խաթրան փայլեվան ա ուղարկի,
Քյանի Բորինը կոտով ոսկի չա չափում։
Գնա՛, ընդենց խետ կգալի, հա՛,
Առուի հետ իր կովում։
Էս մարդը ձինը քշում,
Գալում, բցում ախոռն ու .յիջում, էքում պահնատ։
Էքում, տենում ա, որ
Էրկու խաթրան փայլեվան ոսկիքը չափում են, տոպրակները լցում։
Ասում.— Քյանի Բորի՛ս, էտ իմա՞լ ես չափում,
Լավ չես չափում.
Ղզճով չափա՛, մարդի հարկը խղճով տանը։
Տո՛ւ, ես չափեմ, դու չես կանա։
Ձևից առնում ա, կոտը շրռշում ա,
.Յոռի վրեն ոսկինը լցում ա։
Տենում են խաթրան փայլեվաններ,
Թե.— էս ի՞նչ անում։
— Դե՛,— ասում ա,— է՛լ չխոսանք, էս չափով եմ տալում.
.Յուղում եք՝ տարեք, չե՞ք .յուզում, կռիվ եք .յուզում՝ կռիվ անենք։

Ըզեղ վիճաբանութիւնը բացրանում ա,
Մհերը վերցնում մնկին, շրփրռտում մե յան,
Մնկի էլ զննում ա էսա պուճուճկին,
Առամները քաշում ձեռի մեջ, զննում ճակատ, ասում.
— Գնա՛, քո Մարա Մելիքին խաբար տուր.
Կռիվ ա .յուղում՝ կռիվ կանեմ։
Էդ մարդը փախնում,
Մնկը արդեն մահացել ա՛, էդ էլ խաբար տանում Մարա
Մելիքին։

2. Մարա Մելիքը սկսում ա .յայտարարութիւն տա՛լ,
Հրաման տալ,
Որ պատերազմ՝ պատերազմ ա.
Իմ էրկու խաթրան փայլևանի գլուխ էննց տրին։
Պատերազմը սկսվում ա։
Գալում ա, իրա վրաններըը խփում ա դաշտը։
Մհերը տենում ա, որ է՛յ, բավականին զորամաս ա գալում.
— Դե՛,—ասում,—ասուլած ընծի տվեց,
Շատից՝ շատ, քչից՝ քիչ,—ասում ա,—
Տևեննք մինչևի .յառավոտ ի՞նչ կըտեննանք։

3. Մհերը մի լավ նժույդ ուներ,
Նատավ, բարձրացավ մի հատ սար կար, Մայրամ
Աստվածածին վանք էր .յիշվում,
Գնաց նրա մոտը։
Քառասուն խատ անծին էրինջ տարավ՝ մատաղ անում։
Սանասարի՝ հոր, շորերը ըդուն դրված։
Հոր շորերը որ ըդուն դրված էր՝ բերին Մհերին։
Ասին.—Էս ջրից խըմա՛։
Էդ ջուրը խմեց։
— Ձիան էլ,—Քեռի Թորնս ասաց,—խըմցըրա՛։
Ձինն էլ խըմեց։
Մնկ էլ տեսավ, որ՝ է՛յ, .յինըը՝ Մհերը,
Արդեն էլավ մե հըզդա տղամարդ։
Բերին Սանասարի շորերը հագցրին,
Հերն էլ հըզդա մարդ էր։

Շորերը նփ որ հագցրին,
Իսկապես, հրլը մե քիչ էլ կառճ էկավ։
Դուրդըն ըդոնդ դրված էր.
Ասին.—Վերցա՛։
Դուրդը ձեռը թաշլեց՝
Ինչ օր մի հատ ճրպոտ վերցուց։
Ասին.—Իսկապե՛ս տղեն հասունացած ա,
Կըկռվի Մսրա Մելիքի դեմ։
Էդ ժամանակը էդ մատաղը արին։
— Դե՛,—ասաց ժողովրդին,—դու գնացե՛ք գյուղը,
Ես կըմնամ ըստե, մինչև ի .յառավոտը աղոթք կանեմ.
Աղոթքից վեռջացընելուց հետո՝
Այսինչ ժամից կըմտնեմ պատերազմի դաշտ։
Ասաց.—Ոչ ոք չերթա՛ք,
Իմ .յաչքին մարդ չերթա,
Ընձի օգնություն հարկավոր չէ։

4. .Յառավոտ նփ որ լուսը բացվավ,
.Յելավ .յիրան աղոթքը արաց,
.Յիրան ձիան կերակրրնց,
Ժամանակը էկավ, .յիր նժույգը խնծավ
Ու մտավ պատերազմի դաշտ, սկսնց պատերազմել.
Հուսիս, արևելք, հարաֆ, արևմուտք բշում ձիան,
Պոչի խետ, դոշի խետ տալում ու ջառատում։
Կայնավ պատերազմի մեյդանը,
Ձեռները դրնց իրան էրկու կողքին,
Մի հատ նարա բռռաց որ՝
Սաղ .յաշխարը զուռն լցվավ.
Սկսեց ջառտել։
Դե՛ փախուստը ավնց։
Փախուստը նփ որ տվնց, լընդավ .յետևներ,
Բերնց Մսրա Մելիքին. բերնց, ասաց.
— Մենք .յառաջին երթին բարեկամ ենք եղե,
Ինչո՞ւ համար դու էսպես պատերազմ արիր, որ էդքան ջառտ տվիր.
Ես մինակ, բո ժողովուրդն էդքան ջառտվանս։
Հիմի ես բո գլոխը կտրե՞մ, թե չէ։

Դե՛,—ասում ա.—չէ՞, դու էնքան ուժեղ մարդ ես,
Բայց էլի ես քեզ թողում եմ.
Գնա՛,—ասում,—բո ժողովրդին կառավորև,
Ես չեմ յուղում արուն՝ խանև քեզնից։
Մև հատ հրամանդ,—ասում,—գըրա՛,
Որ մեր երգերը քև խարջ ու խարաջ չի տա։
Էդ հրամանը գրում, տալում ա Մհերին։
Բերում ա, տալում ա Քյանռի Թորնախ՚ն էդ գրությունը.
— Դը՛,—ասում,—էս պայմանագիրը դու պահիր,
Մինչև տեսնենք իմա՛լ կըլնի։
Եթե որ կնըրվում ա,
Ամեկ իր զորքերը ինչ որ մնում, քաշում, տանում։
Ու բաննց վեռջացընում, գալում ա։

5. Մի քանի օրից նոռ Մհերը հիվանդանում ա՛։
Բայց ունի մի հատ տղա՛.
Էդ որ ասում ենք Դավիթ՚ Մհերի տղեն ա,
Դավիթը Մհերի տղեն ա։
Մի քանի ամսից նոռ Մհերը մեռնում ա՛։
Որ մեռնում ա, լուրը խառնում ա Մարա Մելիքին։
«Մհերը արդեն մեռա՛վ,
Էլ մեր դեմը ո՞վ կանա առնի,
Նրա պայմանագիրը ո՞վ կիշկի,—ասում ա։
Մենք պետք է նորից յայտարարություն տանք պատերազմի.
Մեզի էսա քանի տարի խարջ ու խարաջ չըտված»։
Էդ մարդը էտենց ա մտածում։

Բ

Դ Ա վ Ի Թ

6. Բայց Դավիթը յոթ ախպեր են.
Մեկի անուն Զենով Յովան ա,
Մեկին՝ ճրնչըդա Թևֆուր ա,

* Մի փոքր անց վիպասացը հակառակն է վկայում, որ Մհերն ունի յոթ տղա՝ Զենով Յովան, ճրնչդա Թևֆուր, Դավիթ և ուրիշներ։ Տաճ. բանահավաքի։

Մեկին՝ ֆլան ա, բնֆան ա՝՝,
Յոթ ախպեր էլած։
Էդ յոթ ախպերը որի են մնացած։
Դե՛, որնչպըրութիւն են անում, դյուղացութիւն,
Դավիթին էլ պատի, բյորփա երեխա չա,
Համարա իրեք-չորս տարեկան տղա չա։
— Ի՞նչ անենք,— ասում,— ի՞նչ չանենք։
Գնաց Մհերը մահացավ,— ասում ա,—
Երեխաներ մնացին որփ։
Քյոռի Բորյոն ա իր ձեվի տակ առնում։

Մարտ Մելիքը կռիվը սկսում ա,
Նորից գալում ա Քյոռի Բորյոսի վրա։
Է՛, հըմի կռվող չունի, ի՞նչ անի։
Գալում ա՝ խարջ ու խարաջն էլ ա առնում,
Քարերը բացում ա, հրդի կնանիքին առնում,
Կռվող չկա, բան չկա.
Լավ կնանիք, լավ աղջըկներն էլ մինչև գերի ա առնում։
Դավթին էլ ա առնում գերի։

7. Դավիթին առնում գերի,
Մերը տենում ա՝ էնքան գեղեցիկ երեխա չա որ,
Վերցում ա խնամքի տակ իրա.
Ասում ա.— էս էրեխեն ես կըպահեմ։
— Չէ՛,— ասում ա,— բե՛, վերջացրեննք բաներց սըլսըլեն,
Ու՛ էիա բաներց ազդութիւն, ու՛ էիա կորիւ։
— Չէ՛,— ասում ա.— Մարտ Մելի՛ք, վերջիվերջո էրեխա չա,
Էրեխեն ի՞նչ արե.
Էս էրեխեն բնգի ի՞նչ վնաս սըրտի առ։
— Չէ՛,— ասում ա,— մայրի՛կ,
Էդ էրեխեն բնձի վերջում վնաս կըտա։
Վերջ, ի՛նչ անում ա, մոր վրեն չըկանում ա։
Գալում ա, նատում ա իր թագավորութիւնը որ անում ա,
Իր նախարարներին կանչում ա.
Ասում ա.— Արե՛ք բատեղ։

** «Էս անուններ մտես գացեն։ Ծաե վիպասացի։

Ասում ա.—Մհերի տղա Դավիթ կա, բերեր եմ,
Յինքը երեք տարեկան,—ասում ա.—
Բերեք, որոշենք՝ ղոխ կտրենք, թո՛ վերջանա.
Վերջ ըդուրից մեզի փորձանք գըքա։
Բերում են էրեխեն,
Է՛նքան լավ էրեխա յա, քրոխոշ։
Ասում են.—Է՛ս ա, Մարա Մհի՛ր։
— Բա՛,—ասում ա,—էս էրեխեն։
— Ա՛,—ասում ա,—բուռ մեջն ի՞նչ կա, ա՛յ մարդ,
Բառ համա էլ մտածում ես։
Երեխա յա,—ասում ա,—պախե՛ր, թո՛ մեծքնա,
Կըդառնա մեզնից, մեր տղից,
Ընչի՞ ես ուզում ղոխ գցնել։
— Չէ՛,—ասում,—պըտի գցնեմ,
Բառս մեջն խորամանկություն կա։
Ասաց.—Ի՞նչ խորամանկություն։

Բերում են փորց են անում.
Էստեղ գործելու կրակն են լցնում,
Էստեղ էլ ոսկի են լցնում։
— Տենա՛ք,—ասում,—էրեխեն ձեռքը կրակը կըտանի՛, թե ոսկին.
Թե ոսկին տարա՛վ,
Ուրեմ, բառս մեջը մի շնորք կա,
Թե կրակը տարավ՝ երեխա յա։
Բերում են գործելու կրակը,
Լցում են մե ամանի մե՛ջ,
Ոսկին՝ մե ամանի մեջ,
Էրեխեն դնում են սեղանի վրեն.
Ձեռը տանում ա, տանում ա կրակին։
Ախր, գործելու կրակ շուտ կրկանի մարդու մատ.
Որ կպում ա, մատը ետ վառում ա,
Տանում ա, դնում բերան,
Որ դնում բերան՝ լեզուն էրեցո՛ւմ։
Ըտեղ անունը դնում են Թլոլ Դավիթ։

8. Էդ ժամանակը պախում ա մայրը։
Երեքից-չորս տարի խնամքով մերը պախում ա,
Պախում, մեծացընում ա։
Մեծացընում ա, դե՛, խարջ ու խարաջի ժամանակն ա էլի.
Տարիքը անցեր ա,
Երեք տարի մի դձեն խարջ ու խարաջ ա յուղում։
Մսրա Մելիքը էլի յիրան մարդկանց յուղարկեց,
Խարջ ու խարաջը ժողվում, տանում ա։
Մինչևի տասներհինգ տարին լռացավ,
Դավիթը դառցավ տասներհինգ տարեկան։
Դավիթը նի որ դառցավ տասներհինգ տարեկան,
Դե՛, մարդիկ կան,
— Համարա,— ասում են,— Մսրա Մելիքը քո հերն ա,
Քո հերն ա, չե՞ս ճանաչում քո հորը։
Նա պիտում ա ո՛ր ծնունդն ա, որտեղից ա դուս էկել,
հասկընում ա։
Ասում ա.— Լա՛վ, իմ հերն ա՝ իմ հերն ա, ի՞նչ պրտի ասեմ։
Ընձի լավ էլ պահում են, լավ էլ սիրում են,
Իմ հերն ա։
Շատ ըշպիոնութիւն կա.
Մարդիկ գալում-էթում են իրանց կողմից էլ,
Ասում են.— Դու Սասունցի Մհերի որդի Դավիթն ես։
— Լա՛վ է,— ասում ա,— բդտեղացի եմ,
Գումե,— ասում ա,— ես կարո՞ղ եմ անցնեմ էդ հնդը։
Ասում ա.— Ինչո՞ւ չէ։
Դե՛, մարդիկը՝ խոսք տարող-բերող,
Գալիս են, ասում Քյոռոգլի Թորոսին.
— Քյոռոգլի Թորո՛ս,— ասում են,—
Արդեն տղեքը մեծացե՛ր, հասկացե՛ր իրա՞ն,
Էլի տասներհինգ-տասներվեցը տարեկան։
Նրանք պետք է միջնորդեք,
Մի կերպով պրծնի, բերեք։
Ասում.— Ի՞նչ անեմ,
Որտեղի՞ց ես կանամ էդ Մսրա Մելիքի ձեռից ազատեմ։
Բերեմ էլ՝ չեմ ազատվի,— ասում ա։
— Դե՛,— ասաց,— ուզենք-չուզենք կէրթանք,— ասաց,—
Կէթանք, կրդոզնանք։
Վերջիվերջո մի կերպով, մարդկանց միջոցով,

էն պառավ կնանիքի միջոցով,
Տղային հագցնում էն աղչկա շորեր,
Բերում են, ճանապար բցում են։
Ով մեր Քյոռոի Թորոսի մարդիկ, որ գնացե,
Ըդաեղից արդեն վերադարձնեն դեպի Սասուն։

9. Նի որ գալում են Սասուն,
Դե՛, ի՛նչ անեն, ի՛նչ չանեն,
Տասներվեց տարեկան ա արդեն, պատիկ չէ։
Դավիթը էթում ա գյուղի երեխաների խնամ.
Վիր հետ հասնում գյուլաշ՝
Որի թևին ա գանում կոտրում,
Որի ոտն ա կոտրում։
Քյոռոի Թորոսի վրեն գալում են բողոք։
Քյոռոի Թորոսը ասում ա.—Ես ի՞նչ անեմ,—ասում,—
Ախր իմա՞լ անեմ էս տղեն։
Յիրկուն Դավիթի գալում ա.
— Դավի՛թ ջան,—ասում ա,—ախր մեր հարևաններն են,
մեր գյուղացի են,
Ամեն օր գալում են ինձ մոտ բողոք քո վրեն։
Արի՛, մե ախշատանք տամ,—ասում ա,—գնա՛, տրա։
— Ի՞նչ,—ասում ա,—Քյոռոի Թորո՞ս։
Ասում ա.—Արի՛, գեղին աննենք հորթ-պարած։
Բերում համաձայնվում ա, անում հորթ-պարած։

10. Տանում, ակռեցու գուռը կոխրըդցնում ա յաուվոտ.
Բռռում են, քե.—Դավիթը արդեն հորթ-պարած ա,
Ինչ որ բերում եք, կըտանի, կըպահի։
Դե՛, բերում են հորթերը, համաբում են, տալիս են
Դավի՛թ։
Դավիթը քշում էթում, տանում։
Մե քանի օր էթում, նեղանում, չընեղանում,
Տանում, բերում, ցրվում ա։
Մի օր էլ էթում ա, եռու էթում ա.
Էթում անտառների մեջը,
Ինչ որ ջանավար կա, աղվես, լրտարտրակ, գել, առջ,

Ժողվում, լցնում ա հորթերի խետ,
Ու քշում, գալում քաղաք։
Որ տեսնում են ջանավարներն, աղվես, լրպաստրակ,
Ամբողջ հավաթն, բերն Դավիթը,
Ժողովուրդը փախնում են, իրանց դռները փակում են։
Ասում են.—.Յամմա՜ն, իլլաջ արևք մեղի,
էդ ծուռ Դավիթն,—ասում,—մեզ կանա ուջդի, գլի փայ։
Թողում, քաշվում են նոր։
— Տո՛,—ասում,—վիրըն միննն ա՝ էրեր եմ էրկուս,
Վիրն էրկուսն ա՝ էրեր եմ իրեք,
Արե՛ք, տարեք, ընչի՞ եք վախենում։
Արևք,—ասում ա,—որ բանենք ձերը չեն,
Արե՛ք, բանենց բաց կըթողեմ, էթան ապրենն։
Ըտրանց .յրմեններն ջոկում, էլի .յուզարկում դաշտ։
Գալում են, .յիրանց հորթերը տանում են։
Տանում են, էտի հորթերը սկսում պահում։

11. Մի հարևան գյուղ կա,
Մի հատ էլ հորթարած ընտեղից ա։
Ընկերացան էս խետ էդ մարդիկ։
Դե՛, Դավիթը էս գյուղից ա տանում,
Էնի էն գյուղից ա գալում,
Մոտրնում են .յիրար, ապրում են լավ։
— .Յիրկուն,—Դավիթն ասում,—իմ հորթեր դու կըջոկես,
Ես կառնեմ կէթամ, ես չեմ ճանչնում։
էդ տղեն ջոկում ա Դավիթի հորթերը,
— Դե՛,—ասում,—ախպե՛ր ջան, էս քու հորթերը,
Ա՛ռ, գնա՛։
Առնում գալում։
Մե քանի օրից նոր էտենց պահելով,
Մե օր էլ ուշ ա գալում ընկերը։
Եփ օր գալում ա, ընկերին ասում ա.
— Ընչի՞ ուշացար։
Ասում ա.—Վալլա՛, Դավի՛թ ջան,
.Յէաօրն,—ասում ա,—մեր գյուղն մի հատ պատարագ կար,
Ուզում ի, որ մենի ուտի,—ասում ա,—
Հորթերը բերող չէղավ։

— Դե՛ լավ,—ասաց,—ախպե՛ր ջան,
Հորթերը դու պախա, ես էթամ բերեմ։
Գյուղն էլ մոտիկ։
Հորթերը էդ տղեն պախում ա,
Դավիթը վերցում իրա հարային ձևոր, մտնում ա գյուղ։
Մտնում ա գյուղ, տենում՝ է՛,
Պատարագի խազները գանում ա վրեն։
Ո՛չ բարով, ո՛չ բարի լուս,
Իրանե մահակը կոխում ա մե խազանի կանթևրից,
Վերցում, դնում բևին ու թևում։
— Հա՛յ, հա՛յ,—ասում են,—էս Սասունցի Դավիթն ա.
էս ի՞նչ բան ա,—ասում,—որ առանց բարևվ, առանց
բանի,—ասում,—
վերցնց խազան, գնաց։
Էլ ո՞վ կըխոսա նրա հետ։
Էկավ, խազանը գրնց ընկերի դեմ.
— Դե՛,—ասաց,—ընկե՛ր ջան, կե՛։
Ասաց.—Ի՞նչ ուտեմ,—չկում ա։
Ասում.—Էկան, քու հորթերը բողնցին,
Իմ հորթերն .լըմեն ջոկին, առան գացին,
Քու հորթեր չըտարան։
— Դե՛,—ասում,—դու հացըդ կե՛,—ասում,—
Ես կըբերեմ, ո՞րտեղ րդի էթան։
Որ դրհո՞վ տարան։
Ասում.—էս տեղով։
Սկսնց Դավիթը քելալ։
Գնա՛ց, գնա՛ց, խասավ մի զաղալի,
Մե՛ծ զաղա յա։
է՛, հորթերի գլոխ կտրուկ,
Որը կիրած, որն ինչ արած...
Իրան չոմախ՝ մահակը, ձևռքին մտավ հէրը։
Մտավ հէրը՝ ի՛նչ տեսավ որ.
Մի քանի չանավարներ։
Դրանց խետը սկսնց կռվել։
Չանենց, էդ իրեք-չորս հոգի են,
Իրեքին-չորսին էլ բսպանենց։

12. Սի որ ըսպանեց, մտավ նեա.
Է՛, տեսավ՝ ի՛նչքան կարողություն կա։
Ի՛նչ ոսկի, արծաթ, գույք, ամեն ինչը կա։
Մտավ մի տեղ էլ,
Մտավ՝ մե հատ ձի ա կապուկ։
Ի՛նչ ձի ա որ...
Ասաց.—էս ձիևը էս ամբողջ կարողությունը ածի։
Էս կարողությունը իմն ա՛, ես չեմ տիրե,
Էսի ինչ տանի Քյանռի Բորոսը իրա՞ն,
Էս ձիևը չեմ տա։
Որը ձիան մոտցավ՝ ամեքին մե մահակ կըզաննեմ։
Անունը դրեց Քուռկե Ջալաբի։
Սի որ դրեց Քուռկե Ջալաբին,
.Յելավ էդ մարդը էկավ։
Էկավ հասավ. հորթևրը բերեց, ցրվեց, ասաց.
— Քյանռի Բորո՛ս, հորթևրը ցրվա՛,—ասաց,—
Դու գիտես՝ կըժողվես հետ, չես ժողվե,
Էլ ես չեմ էթա։
Ասաց.—Քյանռի Բորո՛ս, վերցե՛ք մեշոկևները,
Էթանք,—ասաց,—մե հատ հէր եմ մտե, ի՛նչ որ ուզես, կա.
Ոսկի, արծաթ, գույք բերևնք։
— Քյոփօղլին,—ասաց,—զառանցո՞ւմ ա, ծո՞ւռ ա.
Մուռ Դավիթ որ ասում են՝ ծուռ ա, օղորթից ծուռ ա։
Ընդե ոսկին որտե՞, հէրի մեջ որտե՞,
Ընչի՞ ընդե թաքավորություն կա։
— Տո՛,—ասում,—ընդե թաքավորություն էլ կա, ամեն ինչն է կա,
Վերցե՛ք, էթանք։
Պարկերը վերցում են, .յրնկնում են ճանապար։
Մտնում են զաղևն, տեսնում են՝ ամմե՛ն ինչը կա։
Ասում.—Դիտե՞ս ինչ կա, Քյանռի Բորո՛ս,
Ըստե մի հատ քուռիկ կա,
Անունն է դրևր եմ Քուռկե Ջալաբի.
Ո՛րը մոտիկ գնաց՝ մե մահակ կըզաննեմ։
Էդ .յրմեն ձեզի՛, Քուռիկըն՝ ընձի։
Սկսում են հավաքել իրանց ինչ որ կա,
Առնում են, գալում են։

Դավիթն էլ Ջալաբի Քուռիկը քաշում, գալում,
Բերում պահում ա։

13. *Մի տարի պահում։*
— *Դե՛,— ասում,— էլ ի՞նչ կա,— ասում ա,—*
Ես պրտի ձիավարժության սովրեմ,
էլ ուրիշ բան ընձի պետք չի.
էլ ոչ հորթիկ, ոչ բան,
էդքան,— ասում,— հարստություն ավիր եմ,
Թո՛ տանի Քյոռի Բորյոն տալին։
Ձիրան ձիան խնամքով պահում ա մի տարի։
Մեծացընում ա լավ, սկսում ա նրա անել։
Էթում ա ամբողջ օրը նրա անում։
Որսից դեռ գալում ա, էթում հանգստանում։
Մնում ա։
Էդ ժամանակ խարջ ու խարաջի վախտ ա,
Էլի Մարա Մելիքը իրան խարջ ու խարաջը ուղում ա,
Պրտի գա իրան խարջ ու խարաջի վրա։
Դավիթն էլ արդեն լավ վարժություն սորվից ձիան վրեն։
Քյոռի Բորյա շատ ուրախանում ա Դավիթի վրա.
Ասում ա.— Իմ Դավիթը շատ խելոք ա,
Շատ խելոք բնավորություն ստեղծե իրան մեջ։
Տղեն էլ էթում, իրան նրա անում ա, գալում ա։
Էդ ժամանակը էլի Մարա Մելիքը ուրան խարջ ու խարաջի ժամանակ,
Ուրան էրկու հատ ուժեղ փայլևան ուղարկում ա։
Ուղարկում, գալում են Քյոռի Բորյոի կուշտ,
Հրամանը բերել են Մարա Մելիքից։
Մարա Մելիք գրեր ա,
Որ էս էրկու-իրեք տարվան խարջ ու խարաջը
Էսքան տոպրակ ոսկի ա անում։*
Դավիթն էլ որսից էկել ա,
Նեղացած, չքնդած տունը։
Դե՛, Քյոռի Բորյոր Դավիթին ոչ մի բան էլ չ'ասում ա։

---

* «Ընդան համբրելով չէր, տոպրակով էր. տոպրակ լցվա՛ծ հաշիվ դուզն ա, որ լցվավ պրտի լցնա»։ Ման. վիպասացի։

Ասում ա.— Եթե ասեմ՝ Նորից կռիվը կսկսվի՛,
Երիտասարդ ա Դավիթն էլ,— ասում ա,—
Էլի գըննի Մհերի նման։
Վերջը, դեսից-դենից
Ջոջ ախպոր կնիկը՝ Զենով Յովանի կնիկը, ասում ա.
— Դիտես ի՞նչ կա, Դավի՛թ,— ասում ա,—
Տենո՞ւմ ես, հըլը քե երեխայի տեղ են դնում, քե խափում են,
Էկեր են հորդ կարողություն տանում են,
Հորդ կարողություն տանում են։
Ասում.— Ո՞նց։
Ասում.— Բա՛, տանում են։
— Ո՞րը։
— Մսրա Մելիքը երկու խաթրան փայլեվան, շատ ուժեղ, յերբեկե,
Խարջ ու խարաջը Քյոռռի Թորոսը տարե գոխատու ա,
Ճանապար դնա,
Որ դու խաբար չընես, կռիվ չընի։
— Դը՛ լավ,— ասում ա։
Յընում ա կամաց-կամաց էթում ա խաղինի կողքին.
Տենում ա, որ երկու հաբնված, ուժեղ հըզա,
Քյոռռի Թորոսը կգում ա,
Ըտոնք ոսկին չափում են։
Ասում.— Քյոռռի Թորո՛ս, էդ ի՞նչ ես անում։
Իշկում, տենում՝ Դավիթն ա։
— Դավի՛թ ջան,— ասում ա,— մեր պարտքն ենք տալում։
— Ի՞նչ պարտք։
Ասում.— Բա՛, մենք Մսրա Մելիքի խարջատուրն ենք,
Նրա խարջն ենք տալում։
Արդեն յիմացե. ասաց.
— Ջի՞ որ դրանք, էսա քանի տարի,
Իմ հորը պտի խարջ տան, այսինչ պատերազմի ժամանակ.
Յէսօր դու ես տալո՞ւմ։
— Դե՛,— ասում ա,— Դավի՛թ ջան, էն ժամանակ, որ դու երեխա իր,
Մենք չկարողացանք Մսրա Մելիքի վրա,
Կռվող չկար,
Նորից խարջ ու խարաջը դրեց մեր վրեն.

Եթե չխոխնք,—ասում,—մեր բոլորին էլ կըբաշեր սրի։
Էլի՛ տանք, թո՛ տանի, մենք ազատվենք։
— Չէ՛,—ասում ա,—ոչ մի հատ կոպեկ ես չեմ տա։
Դացե՛ք,—ասում ա,—ձեր Մսրա Մելիքին տա՛ք,
Դավիթը ասում ա, որ խարջն ի՞նչ ա, խարաջիլ ի՞նչ ա,
Ինքը իրան ապրի՛, մենք էլ մեզ ապրենք։
Դե՛, դացե՛ք, ես էլ ոչ կոխով եմ անում,
Ոչ էլ դավի եմ անում։
Բանից վերցնում ճանապար ա դնում։

14. Մսրա Մելիքն յիշկում՝ յուշացան, ասում.
— Յո՞ւր ա, չէկան,—ասում ա։
Էթում են յավա՛շ-յավա՛շ, կամաց-կամաց,
Տխուր էլ են էթում։
Գա՛ցին, Մսրա Մելիքն ասաց.
— Ինչի՞ դարդակ էկաք։
— Է՛, քու տունը քա՛նդվի,—ասին,—
Ընած մի հատ երիտասարդ տղա կա, անունը՝ Դավիթ,
Դավիթը որ յիշկաց մեր յերես՝
Մեր պակներ ճզավ,—ասաց.—
Որ էանց աշքերը բացում էր,
Մենք նրա դեմը ինչ որ թոնիքնք.
Նա որ փչում էր,
Մենք օրորվում ինք նրա նեֆեսից.
— Օհո՛,—ասաց,—քա՛ էն օր ասում ի՝ էտու շաոր կըխաանի ինձ։
Դը արի՛, մե՛ր, արի՛, արի՛, պատասխան տո՛ւր։
Հիմի ի՞նչ անենք։
— Դե՛,—ասաց,—ի՞նչ յուզում ես՝ արա։
Մենք,—ասաց,—նրա դիրք ու դեմքը յիմացանք,
Որ էդ տղան շատ ուժեղ ա, դու չես կանա։
— Չէ՛.—ասաց,—պատերազմ կըհայտարարեմ,—ասաց,—
Նրա հըլա երիտասարդ ժամանակն ա,
Նա հըլա քյորփա յա, ի՞նչ կանա ինձ։
Էդ մարդը պատերազմը հայտարարեց։
Զորքը հավաքեց, մի հատ հրովարտակ գրեց Քյաոի Թորոսին,

Թև. «Այսի՛նչ օրը, այսի՛նչ ժամին մենք պետք է
պատերազմենք։
Ուժ ունենա՝ վե՛ր,
Ձունենա՝ էդ էլ քո գործն ա։
Մենք պրտի քո բաղաբը, քո երկիրը ավերենք, տանենք»։

15. Քյամոի Թորոսը մտածե՛ց, մտածեց.—
«Ինչ անեմ, ի՞նչ ելք գտնեմ։
Դե՛,—ասաց,—էլի պրտի մենք էքանք,
Իմալ Մհերին տարանք,
Հիմի պրտի Դավիթին տաննենք էդ Մայրամ Աստվածածին,
Ընդեղ .յլխտանենք,—ասաց,—
Մհերի շորերը հաբցնենք, գուրզը տանք ձեռն,
Բերենք պատերազմի մեջ,
Էլ՛ ելք չկա»։
Մտածին է՛ս յանեն, է՛ն յանեն,
Սկսին հավաքել մեծամեծ մարդիկ գյուղից,
Հավաբին, գնացին վանբը։
Գնացին վանբը, մատաղ արևցին,
Բերին Դավիթին՝ էդ վանքի ջրից էլի խմցրին,
Ձիանը խմցրին՝ Քուռկե Ջալաբուն,
Հոր շորերը բերին, հաբցրին,
— Գուրզըն,—ասին,—վերցա՛։
Գուրզըն վերցրեց։
Էլե տանըրուվ, համարա բան տարեկան տղա։
Ասին.—Իսկապես կրկրովի, ինչպես որ հե՛րը կռվավ,
Ինչպես որ Մհերը կռվավ։
— Դե՛, ժողովո՛ւրդ,—ասաց,—գնացե՛ք, ասե՛ք,
Որ այսի՛նչ ժամին մենք կէքանք, ձեզ պատասխան կբտանք,
Մարա Մելիքին կէքանք, պատասխան կբտանք։
Գալում են, մի հատ հրովարտակ կրում ա Քյամոի Թորոսը.
— Դե՛,—ասում ա,—գնացե՛ք, ասե՛ք Մարա Մելիքին,
Որ ժամի էս վախտին ներ պատերազմ տա.
Գրքամ կուշտ՝ ներ պատերազմենք։

16. Սպասում ա, ժամերը ման ա,
Դավիթը .յլլնում գալում ա.
— Մ՚րն ա,—ասում ա,—Մսրա Մելիքի վրանը։
Ասում են.—Է՚ն ա։
Գալում, մտնում, տենում՝
Մե հատ հրզդա յա պառկուկ վրանը,
Որ փնչում՝ վրանը .լիրուր ա գալում։
— Վա՛յ,—ասում Դավիթը,—էս խմա՛լ մարդ ա,
Ըսենց էլ ուժեղ մարդ կըլնի,—ասում։
Դե՛, պրծի՛, էկեր եմ, Մսրա Մելի՛ք,—ասում ա,—
Դավիթն էկեր ա, պատերազմո՞ւմ ես։
— Հա՛,—ասում ա,—բա՛, ես էսա էրկու ժամ ըսպասում եմ,
Ինչո՞ւ ես ես էկե։
Դե՛,—ասում,—պատերազմ՝ պատերազմ։
— Դե՛, .յելի՛,—ասում ա,—պատրաստվի՛ր։

Ֆո էտի իրա զորքին հրաման տա՞,
Դավիթը .յուգան Քուռկե Ջալաբին քշեց,
Մե սարի գլոխ կայնավ.
Մե հատ նայա՛ կանչեց որ՝
Ամբողջ սա՛ր ու քարեր գոռացին.
Որի ձիանքի խուլանը կտրավ,
Որը ուշաթափ էլավ,
Որը ձալնից խլացավ։
.Յընգավ մըջներն. ա՛ջ ջառուեց, ձա՛խ ջառուեց։
Ըսկսեց։
Ըսկսեց՝ հարաֆ, հուսիս, արևելք, արեվմուտք ջառուեց.
Էրկօր ինչբան զորք բերեց՝ ջառուեց։
Ասին.—Մսրա Մելի՛ք, էլ հնար չկա,
Դրա զեմ իսան չըկայնի,—ասին,—
Ինչո՞ւ ես ջառուում մեծամեծ մարդիկ,
Էրկըսով դո՛ւ կռվեք.
Էլ զորքի մեջ հնար չկա.
Դո՛ւ կռվեք, բո՛լ ա, բավակա՛ն ա։
— Լա՛վ,—ասաց,—մենք կռվենք։

17. Սկսին էլ մարդիկ կռվել՝
Էնի էս չաննն չկա՛վ,
Էն էլ՝ էն չաննն՝
Յաուաջ ձիանքով կռվան՝
Ինչքա՛ն ձիանքով կռվան, չիրար հաղթություն չէլավ,
Գյուլաշով էլ կռվան՝ չէլավ՝
Ասին.—Ի՞նչ անենք, բա՛ր՝
Ասին.—Մենամեղու պետք է խփել.
Թո՛ մենկեն կայնի՝ չոբի,
Գա, գուրզը բցա.
Թե մնաց սա՛ղ, գաթի մնաց,
Թե չըմնաց՝ օղլումի՛ իրան՝
Հաշտվան էտենց՝
Ասաց.—Յաուաչին երթը վի՞րն ա՝
Դավիթն ասաց.—Մարա Մելի՛ք, յաուաչի երթը, գուրզը բե
նմ տալում,
Դու ինձանից մեծ ես,—ասաց,—թո՛ղ բեզի՝
Ասաց.—Լա՛վ՝
Սկսեց Դավիթը չոքել,
Մարա Մելիքը գնաց մե իրեք կիլոմետր հառ,
Ընդեղից ձին բշեց, էկավ.
Որ գուրզը թալեց՝
Փոշին, մառախուղը բանցրացավ,
Ամպեն չկլավ վերև՝
— Հա՛, հըգմալ կանեմ, հա՛՝
Ասաց.—Մարա Մելի՛ք, սա՛ղ եմ,—ասաց,—
Ոչ մի բանե էլ բնձի չէլե՝
Իրեք անգամ, իրեք գուրզ պրտի թալա՝
Իրեք գնն թալեց՝ ոչինչ չըկարցավ աներ՝
Վերջ, չերկարացնենք, ոչինչ չըկարցավ աներ Դավթին՝
— Դե՛,—ասաց,—արի՛, իմ երթն ա՝
Բերեց չոքեցըրեց, ի՛նչ չոքեցընել.
Քառասուն գյաղանոց խոր ին փորած,
Քառասուն կաշի ին փաթթած գոմշի,
Քառասուն ջաղչի քար ին գրած վրեն՝
— Ուրեմ,—ասաց,—դու մուխանհաթություն եք անում.
Ես կայնա գնտիր,—ասում,—դու բնձի խփիր,
Հիմի դու չիջեր ես քառասուն գյաղանից,

Քառասուն քար վրնդ, քառասուն կաշի վրնդ։
Դե՛,—ասում,—մա՛ց լդանդ,—ասում,—
Պըտի ընենց դանեմ, որ ըզնեն կշնորը՝
Կնսը էն չան դուզը գա, կնան՝ էն չան։
Գնաց, ձինը խնծալ՝ Քուռկն Ջալաբին, ու բարցրացավ։
Ոչ թե շատ հռու գնաց,
Ըսկի կնս կիլոմետրը էլ չըգնաց,
Էկավ՝ քուրը թալեց ոտների տակ, Մարթա Մելիքի քուրը։
Ասաց.—Դավի՛թ, էսբան տարի պախեր ենք,—ասաց,—
էտի խնայո՛։
Ասաց.—Ո՛ւր ջան, էս խնայում եմ ձեզ,
Էգ մե զարկը ձեզ եմ խնայում։
Մյուս զարկը՝ մերը ծծերը թալից, ասաց.
— Դավի՛թ, ծիծ եմ տվն քեզ,
Խրնայո՛ իմ ծըծի կաթին։
Ասաց.—Էս էլ խնայում եմ, մայրի՛կ, ընդի։
Բայց է՛ս զարկը՝ կըզարկեմ։
Դնաց, հռուից էկավ, էկավ, թալից.
Քառասուն կաշին էլ գնաց, քարն էլ գնաց,
Մարթա Մելիքը էլ .յօրթըլխից կտրեր էր։
Ասաց.—Կշռեք քցե՛ք։
Կշռեք քցին՝ մե յան մե քիչ ծանդր էր։
Ասին.—Քաք տաշեղ ա,
էն մե յանըն էն մե ձունը .յավել ա։

էտենց, մե հատ հրովարտակ էլ էտի խատըցրեց, գնաց։
Մե հատ էտից նախարարներից կար,
Վերցին բռուր մե առորագրություն, պայմանագիր կապին,
Որ բատուց ետ ոչ կոիվ ըլի, ոչ բան։
Դո՛ւ ձեզի ապրնք, մենք էլ մեզի ապրենք։
Թողին էկան։

18. *էկան, երկար ժամանակ ապրան,*
Համարա մե վեց-յոթ ամիս Դավիթը ապրավ։
Յոթ ամսից ետ քնավ, մի հատ երազ տեսավ։
Ի՛նչ երազ տեսավ.

Կապուտակողի Քաքավորի Խանդութ Խանըմին Երապին տեսավ։

Յա՛. Երեք անգամ քնավ,
Երեք անգամ էլ էդ տեսիլը տեսավ։
Ընդեն էլ Խանդութ Խանըմ տեսավ։
Էտ իմալ յելավ, ասաց.
— Էս երազս,— ասաց,— մի՞թե օղորթ Երազ ա։
Յաւավոտ լուսը բացվավ, ասաց.
— Քյոռողլի Բորի՛ս, Կապուտակի՞ղ կա՞։
Ասաց.— Կա՛։ Կապուտակիղի Քաքավի՞ր կա։
Ասաց.— Կապուտակիղը Խանդութ Խանըմ սիրեկի կա՞, Քաքավորի սիրեկի։
Ասաց.— Կա՛։
Ասաց.— Տեսել եմ տեսել։
Ես պըտի էթամ, Խանդութ Խանըմին բերեմ։
— Ա՛յ տղա, էնի դիր, դու դիր,
Էսքան հարս ճանապար դու դիր ա, որ էթաս։
— Չէ՛, որ չէ՛, կէթամ։
Վերջը, Քյոռողլի Բորինսն ինչ արաց՝ չըմնաց,
Չամաձայնվավ, ասաց.— Ես պըտի էթամ։
Ասաց.— Դավի՛թ ջան, որ կէթաս՝ բախուշ գնա,
Ճանապարնները վտանգ չըպատայի բեզի։
Դու,— ասաց,— դոռոզ մարդ ես,
Ուրիշների բան չասես,— ասաց։
Եթե էթում ես ուրիշ տեղրանը.
Քո ծոցը Մահ հաչ կա,
Մի հատ էլ Մանդըր կա,— ասաց։—
Սուտ երդում չուտես.
Սուտ երդում եթե կուտես՝ Մանդրի վրեն երդվի,
Եթե օղորթ ա, օղորթ՝ հաչի վրեն կի։
— Լա՛վ,— ասաց,— Քյոռողլի Բորին, լա՛վ։
Դե՛,— ասաց,— մնացի՛ բարով։
Քուռկի Ջալաբին քաշեց, նստավ ձիենը, յա՛լլա,
Կապուտակիղ դի՞ր ես, էկա։

19. Շատ էթալուց, քիչ էթալուց՝ գնաց խառավ մի դյուղ,
Որը մի ջրի վրա կառուցված էր, էդ վերևին էր.

Մի դյուղ էր, ինչ որ մեր Գեղաան էիա,
Էդ դյուղն էլ վերեվ մնաւ
Էկավ դյուղի մեջ, իափան էկան.
Է՛հ, մի հատ հսկա աղամարդ ա էկել, որ զարմացան.
Աչքերից արուն ա կաիում։
— Հա՛յ, հա՛յ,—ասին,—էս ի՞նչ մարդ աւ
Էդ դյուղի նախրըչու կնիկը մի հսկա կնիկ էր։
Դե՛, իրկուն ուշ ժամանակ էր, ասաց.
— Ա՛յ մարդ, .յէսօր արի՛, մա՛ց մեր տուն,
Էս գախ ճանապար մի՛ գնա,—ասաց,—
Վատնդ կըպատայի։
Արի՛ .յէսօր էլ ինձ գոնախ։
Ճարպիկ կնիկ էր,
Ուր լեզվով Դավիթին տարավ իր տունը։
Տարավ .յիրան տունը,
Բևրնց լավ հարդևց-պատվևց։
— Բա՛,—ասաց,—պիտի՞ս, ես էլ էս դյուղի նախրըչու
կինն եմ։
— Ինչո՞ւ,—ասաց,—էլև նախրըչի։
— Դե՛,—ասաց,—ժողովուրդ ևն, պահանջ դրեր ևն,
Տարեր ևն, արեր ևն իմ մարդին նախրըչի։
Մնաց, քնելու ժամանակ ասաց.
— Գիտե՞ս ինչի եմ ես քեզ խոնաղ բերե.
Ես ու դու պրտի իրար խնատ ապրինք էս դիշեր։
— Է՛հ,—ասաց,—վա՛ղն արի ինձնից։
— Չէ՛,—ասաց,—ես դրա համար եմ բերե,
Թե չէ՝ օյին կըհանեմ դյուխդդ.
Դու մի՛ կարծա, թե քաչ ես,
Ես քեզանից քաչ կնիկ եմ։
Վերջը, բրշեր .յբլնում ա, մանում ա Դավիթի կոխրը։
.Յառավոտ լուսը բացվում ա.
— Դե՛,—ասում ա,—ես պետք է ճանապար գնամ։
Ասում ա.—Արի՛, երտվա՛, որ գաս՝ ընձի տանես։
Մտեն էիում ա՛.
Երտումը ուտում ա խաչի վրեն.
Սուտ երտում պրտի ձախ կոխրի Սանդրի վրեն ուտեր,
Բայց աջի վրեն կերավ։
Դե, ձինը բշեց, գնաց։

20. Գնաց, հասավ կապուտկիզ,
Ման էկավ է՛ս յան, է՛ն յան,
Գնաց թաքավորի պալատի դեմը մի մե՛ծ պարտեզ կա,
.Յիջավ պարտեզի մեջ։
Մի հատ էլ դռնըպահ կա։
Ասաց.—Ա՛յ երիտասարդ, քնող, նեղացած մարդ եմ, էլի՛,
Գնամ մե քիչ էդ բուլվարը ման գամ։
— Է՛, — ասաց, — թաքավորը որ տենա, իմ գլոխ կըզծնա։
Էս խանդութ խանըմի բաղն ա,
Էտեղ ուզեղննե ի՞նչ գործ ունի։
— Ա՛յ մարդ, շա՛տ եմ խնդրում, ընձի քի՛չ ներա։
— Չէ՛, — ասում, — չի՛ կարելի։
Ասում.—Որ մե ճանկ ոսկի քեզի տամ, կբիռդնե՞ս։
Ասում.—Էա՛վ, թաքավորն ինձ օրական ի՞նչ ա տալում՝
Մե ոսկի, — ասում ա, — կամ էրկու ոսկի.
Էսի կըլնի խարուր ոսկի, — ասում ա, —
Ի՞նչ պըտի անի թաքավորը։
Որ ոսկիըը տենում ա՝ ծոզում ա։
Չինը քաշում, տանում մե անկյուն կապում ա,
.Յինըը մտնում ա։
Ասում ա.—Եթե հաջողվավ, քեզի կանեմ ընձի բավ՛որ։
Անունդ ի՞նչ ա։
— Քավ՛որ Գուրգին*, — ասում ա։
— Դե՛, — ասում ա, — Քավ՛որ Գուրգի՛ն ջան, դե՛, վերջացավ։
Տանում ա, ձինը կապում ա կոխքի մի առանձին տեղ,
Գալում ա մի հատ հատուկ վրա, սկսում ջուր խմել։
Լավ ջուր ա։
Դե՛, նեղացած ա, գըշեր էլ չը քնե,
Սկսեց լապտուր բացել, քաշել դլխին ու քնել։

21. Թաքավորի ախջիկը իրան լուսամուտից տեսավ,
Որ իրան պարտեզումը մի մարդ, մի ձի կա։
Ասաց.—Հա՛յ, հա՛յ, էս ի՞նչ բան ա։

---

* Վիպասացը դեռապանին այստեղ Գուրգին է անվանում, իսկ պատումի շարունակության մեջ՝ Գորգի։ Թոզնում ենք երկու ձևն էլ անփոփոխ։ Սահ. բանասեղծվածի։

Աստց.—Երևի էս իմ երազի տղեն էկա՞վ,
Ըսան սըրտի ո՞րը մանիր։
.Յելավ, շորերը հագավ,
Սիրտը էլ չըատրավ,
.Յելավ կամաց-կամաց էկավ,
Ոչ մի նաժիշտի խնդը չըվերցնց,
Էկավ, մտավ բուլվարը։
Էկավ, մտավ բուլվարը ման գալով, ծաղիկներից քաղելով։
Էկավ, տեսավ որ մի հատ հըզպա յա պատկուկ,
Մի պատկերի պես.
Չուտես-չըխմես՝ քամաշա անես։
Լայտուր տարավ էն յան,
Որ քնե, քրանե, քրտինքը ամե վրեն։
— Է՛, երևխա յա,—ասում,—
Սա երևխա յա, երևխայի բնություն ունի։
Հաննց երկու հատ ճան,
Հաննց չերից, քալեց Դավթի չեր։
— Հըլը էսի ճան խաղող ա։
Թողնց, գնաց, ման էկավ,
Էկավ գնաց։

22. Հանդութ խանըմին երեք տեղով
Թաքավորները իրանց խաթրան փայլևաններ ուղարկեր են,
Որ ուղում են իրանց տղերքին.
Էկեր են, լցվեր են պալատը։
Ասում են, որ սրտի ախջիկը տաս էդ թաքավորի տղին։
Ասում ա թաքավորը.—Իմ գնդի չէ,—ասում,—
Հանդութ խանըմը վի՛րը ուղում ա, նրան կտանի։
Էդպես պատերազմի մեջ են,
Միշտ էթում են, գալում են։
Հանդութ խանըմը ոչ մի համաձայնություն չի տալում։
Թաքավորին գոռում են.
— Չէ՛,—ասում են,—գոռով մենք Հանդութ խանըմին
կըտանենք։
Դավիթը վեր չելե, ձեռը տարե չերը,
Տեսե՝ որ ճանները չերըն։
— Ա՛յ,—ասում ա,—ախջիկը էկե, ես բնած եմ էլե,

Ինձ էրևի տեղ է դրև, ճանները քցև չերքս։
Դե՛, Քավլար Դորդի,—ասում ա։
Ասում ա.—էկավ, գնաց.
Ի՞նչ էր հարցնում Թաթավորի ախչիկը։
Հիմի,—ասում ա,—լյվները են Թաթավորի պալատը, ախչկան տանում են։
— Ինչպե՞ս,—ասում ա։
— Էսպե՛ս,—ասում ա.—
Իրենք հատ խաթրան փայլեվնները արդեն նստել են Թաթավորի պալատը։
Եմ որ Դորդինը ասաց Դավթին,
Դավիթը յիրան դուրդը վերցրևց ու դուրս էկավ։
Էկավ, մտավ Թաթավորի պալատը.
Բարև տվևց, գլուխ տվևց,
Երևք լեզվով խոսաց էդ մարդը։
Սկսևց, թե.—Ինչո՞ւ համար են էդ մարդիկը, Թաթավո՛ր, քև նևղում։
Ասաց.—Ա՛յ երիտասարդ,—ասաց,—
Էս երևք անգամ, երևք փայլեվաններն էկել են,
Որ խանդութ խանըմին տաննեն,—ասում.—
Խանդութ խանըմը չի համաձայնում։
Հիմի ես չգիտեմ, ի՞նչ անեմ։
Եթե, ասում են, չիտաս,
Երևք Թաթավորով պրտի բու հետ պատերազմ սկսևնք։
— Թաթավո՛ր,—ասաց,—Խանդութ խանըմը որ իր կամքով չի գնում ա,
Թաթավորի տղի հետ չի ամուսնանում ա,
Ինչո՞ւ ես դժվարանում,—ասաց,—
Մի ախչիկ ա, տո՛ւ, Բո՛ղ տանի։
— Դե՛,—ասում ա,—եթե ախչիկը չի համաձայնվում,
Ես իրավունք չունեմ տալու։
— Թաթավո՛ր,—ասում,—քանի՞ ախչիկ ունես։
Ասում.—Էդ մե ախչիկ։
— Ձի՞ որ էդ մե ախչիկ ես եմ առե,—ասում ա,—
Էլ ո՞րն ա էդ յուզող։
Սկսում են վիճել։
Խաթրան փայլեվնները յրևնում են.
Մեկին վերցում՝ մե ակոշկից ա թալում,

Մեկին՝ մեկ ակոշկից,
Մեկին էլ զանում, ատրմներ չատում,
— Դե՛, գնա՛,— ասում,—խաբար տա՛ր քո թաքավորին,
Խանդութ խանըմին քո՛ գա, տանի։
Յելավ էդ մեկըն խաբար տարավ թաքավորին,
Որ էսենց՝ էրկու խաթրան փայլևվնին ակուշկից մե հատ մարդ շըպրտեց,
Ասաց որ. «Խանդութ խանըմը իմն ա,
Դու ընչի՞ ես նկե ուզելու»։
Էն մեկ թաքավորը հայտարարեց պատերազմ։
Սկսին պատերազմ։
Երեք թաքավոր միացան, էկան Կաղաւտկողի թաքավորի վրա պատերազմ։
Դե՛, հիմի ինչ անենք, ի՞նչ չանենք։

23. *Հայտարարութիւնը տվին, հրովարտակը գրին,*
Որ այսի՛նչ օրը, այսի՛նչ ժամին պատերազմ ա.
Խանդութ խանումին տալում ե՞ս տալում ես,
Մեր երկու խաթրան փայլևվնին տալում ե՞ս՝
Կռիվ չենք անում,
Թե չես տալում, կռիվը կռիվ ա։
Դավիթն էլ էկեր ա, մտեր ա պարտեզը,
Գացե մի անկյուն, պառկե ու քնե։
— Է՛յ,— ասում ա թաքավորն,—
Էն լակոտը որտեղի՞ց բուսավ,— ասում,—
Դե՛, արե՛ք, պատասխան տվեք,
Երեք թաքավորի զորամաս էկե,
Հիմի իմ կռվողը ո՞րն ա,— ասում,—
Ես իմա՞լ անեմ։
Դե՛,— ասում,— քո՛ գա, է՛, քո՛ գա, պատասխան տա,
Իմալ որ մարդկանց լսպաներ ա,
Քո՛ գա, պատասխան չինըր տա։

Իսկ թաքավորի ախջիկը գիդում ա, թե տղեն որտե ա,
Էկավ, մտավ իրան պարտեզը,
Էկավ տեսավ, ասաց.
— Ա՛յ տղա, ես չեմ գիդում դու ի՛նչ տղա ես, ինչ տղա չես։

Ասաց.—Ես պիդի՞ս որտեղացի եմ,
Ես,— ասաց,—Դավիթն եմ,
Որ երազումը քի տեսիլի մեջ տեսել եմ։
—Հա՞,— ասաց,—ես էլ քի եմ տեսե։
Դե՛, էդտեղ փաթրիվան .յիրար, բարև մրնա էլան։
— Դե՛,— ասաց,—Դավի՛թ, ևթե թաջություն ունես,—
ասաց,—
Երեք տիրություն էկե իմ հոր վրեն կռիվ.
Դե՛, .յկի՛, պատառախան տու։
— Դե՛,— ասում,—ես պատառախան կըտամ։

Էդ մարդը .յելավ, իրան Քուռկի Ջալաբուն սարրըռտեց,
Լավ խուզղուններըը կապից, ֆամբից,
.Յելավ նստավ ու բաղաքից դուրս էկավ։
Գնաց, որտե զրամասն էր։
Էս յանից հանդուի խանըմը մի հատ ձի բաշից՝ բյահիլ,
.Ձիենքն էլ նստավ, ասաց.
— Տեսնեմ,— ասաց,—բատու մեջը բաջության կա՞,
Որ կռվի իրեք քաքավորի դեմ։
Քամակից գնաց։
Դավիթը նայեց՝ .յետևվանց մի հատ ձիավոր ա գալում,
Գյուլլեն ֆողես .յիտևվը՝ չ'ատեի։
Ասաց.—Բշնամի՛ս, գալում եմ, տայմ՛ն տուր։
Գուրզը բաշի՛ց ու՝ Դավիթի՛ն։
Դավիթը բռնեց, գուրզը բռնեց։
— Յա՛,— ասաց,—էս ի՞նչ սրիկա .յրատստ էկավ,
Հըլա չեմ խասե պատերազմի դաշտ։
Դե՛,— ասաց,—երթը խըրն ա։
Իմա՛լ որ բեռից՝ է՛, կանա՞ բռնա։
Ասաց.—Ամա՛ն, ես եմ, Դավի՛թ, ես եմ,—
Ասաց,—քու ուժն ի փորցում։
Դե՛,— ասաց,—գնա՛, դրհաղթես պատերազմին։

Գնաց պատերազմին, մտավ մեջը։
Մի հատ իր ձենով նարան կանչից, էն էլ իմա՛լ՝
Ամրողջ սա՛ր ու բարը գրռաց.
Որը խլացան, որը կյանացան,
Ամեն փախա՛ն, մեռա՛ն, ուշաթափ .յընկա՛ն։

Մտավ մըջները, սկսեց ջատռել.
Էդ ավուր մեջը իրեք պետության վերջ տվեց,
Բերեց, արաց թաթավորին հպատակ
Թող հպատակ դառնան։

24. *Յինըը դառցավ էկավ։*
Էկավ, գնաց բուլվարը, իրա սովորական տեղը պատկավ։
Թաթավորը չըգիդում՝ ո՞վ գնաց, ո՞վ հաղթեց։
Ասաց.—Մե՛ գոնե, բերեք էդ տղին,
Ես իմ թաթավորությունը հանձնեմ էդ տղային,—ասաց,—
Որ երեք թաթավորի դեմ մինակ կռավավ։
Էս չան մանն են գալում, հարցընում են.
Ո՞վ գիդա, որտե ա, որտե չի։
Խանդութ խանըմն էկավ, գլուխ տվեց.
Գլուխ տվեց թաթավորին, ասաց.
— Թաթավո՛ր, տեսա՞ր էդ տղեն,—ասաց,—
Ո՞նց հաղթեց երեք պետության։
Ասաց.—Մե՛ գոի բե,—ասաց,—
Թաթավորությունը հանձնում եմ ընտու։
Ասաց.—Թաթավորությունը մե՛ հանձնա,
Նա մի նպատակի համար ա նկե, էլի կէթա։
— Դե՛,—ասաց,—մե գոի, բե՛։
Ասաց.—Մի ժամից նա բերե՛մ։
Մի ժամից նա ներկայացրեց թաթավորին։
Էկավ, խոնարվավ թաթավորի դեմը,
Թաթավորը տեղ տվեց, նստավ։
— Բա՛րև։
— Բա՛րև։
Բարև տվեց, նստավ։
Սկսեց թաթավորը ասել.—Դու որտեղացի՞ ես, ի՞նչ մարդ ես։
— Մհերի տղան եմ։
Է՛, Մհերի ձեն աշխարք էր տարածվե, երկիր։
— Օհո՛, էդ տղեն, ուրեմ, բարձր թաթավորի տղա չա,—
ասաց։
Ասաց.—Ես էկեր եմ խնդրելու քու ախջկա ձեռ՝
Խանդութ խանըմի ձեռ։
Թե հիմա կըտա՛ս՝ կըտանեմ,

Չիտաս՝ դու էլ սաղ ըլես, ես էլ, թաթավի՛ր,— ասաց։
Ասաց.—Մե ախջիկ չէ՞ քու .յուգածդ։
Կանչեց ախջկան, ախջկան բերեց.
— Ախջի՛կ,— ասաց,—էս քո ամուսի՛ն,
Դու էլ սրա կինը կըդառնաս,— ասաց,—
Երկրով գնացե՛ք, .յիրար հետ ապրե՛ք։
Էտ .յրրոպևին ամուսնացրեց, ավից էն մարդին։

Մի համարա վեց-օթառ ամիս բդան մնաց։
Էթում ա, ման ա գալում։
Թաթավորը շատ խնդրեց, որ մնա։
Ասաց.—Չեմ կանա, երկիրը թողեր եմ անտեր,— ասաց,—
Պրտի էթամ, հասնեմ իմ թաթավորությանը։
Ես էլ,— ասաց,—թաթավորի տղա եմ, պրտի գնամ։
— Դե՛,— ասաց,—որ կէթաս, էլ ի՞շ պրտի ասեմ։
Մի ամիս էլ, երկու ամիս էլ մնաս, էլի նույնն ա։
Համարա մե ինոր ամիս մնաց էդտեղ։
Էտու կնիկը պառկավ, մի հատ տղա բերեց։
Եփ որ տղա բերեց, .յելավ Դավիթը բդտեղից ասաց.
— Էթամ երկիրը, նայ գրկամ, կինըս կբտանեմ։
.Յելավ հնձավ, ուրան երկիրն ա գալում Դավիթը։

25. Էկա՛վ, հասավ էդ գյուղը։
Էդ Դավթից մի հատ ախջիկ ա եղե,
Քանի տարիք ա քաշե,
Նախըրչու կնկնից մի ախջիկ ա եղե։
.Յիմացե էդ կինը,
Որ «Պետք է ի՛նչ վախտ էկավ, ուտուն կըպատիմ,— ասում ա,—
Ես էտու պրտի հայիֆ առնեմ, որ ընձի չբտաբավի»։
Ախջկան մի հատ նետ ու աննեղ տալում ձևոր,
Բերում մի հատ կարմընջի տակ՝ չրի կողքին տափըցնում։
Դավիթը գալում ա, .յընցում.
Դավիթը գալում ա, .յընցում ա,
Տննում ա, որ ամառ ժամանակ, լավ չուր էթում, ասում.
— Կայնի՛, բտեղ էլ մի լավ լողանամ, նայ էթամ։
.Յիջում ա ձիանից, ձինը թողում ա արածում ա,

.Յինքը ակլոզնում ա, մանում ա ջուրը, լողկընում։
Էս՝ կարմընջի տըկից նետ ու աներեր Թողում ա Քիկընքին։
Ըդան որ բռռում ա,
էդ ախջիկը ըդան սատկում ա։
Դավիթին էլ ըդան մեռնում ա։

Չևնը խաանում ա Սասուն։
Չևնը որ խաանում ա Սասուն, թդեղից սատ են.
— Դավիթին փորցանը ա պատռել, հելե՛ք։
.Յըլնում են գալում են ախպըրտանքով, Քյանի Թորոսին։
Գալում են, տենում են, որ Դավիթը արդեն մահացեր ա։
Դավիթին բերում են, Թաղում են։

26. Եվ որ Դավիթին բերում են, Թաղում են, վերջացընում են.
— Դե՛, — ասում են.— էս ա արդեն իններ-տաս ամիս մնացե բնտեղ, ամուսնացե,
Ըսաու երեխա կըլնի, — ասում են։
Աբե՛ք, էքանը, տենանք՝ երեխայի հարց կա՞, Թե չկա,
Երեխա էլե՞, Թե չէլե։
.Յըլնում ա Չևնով .Յովանը Քյանի Թորոսին վերցում, գալում են։
Գալում են Կապուտկիղ,
Գալում, էքում են Խանդութի մոտ։
Եվ օր ասին՝ Դավիթի մահացեր ա,
էն էլ իրան դլխի վրա բցնց,
Կրծքի կաթը Թափավ։
Ասին.— Ուրեմ երեխա յա ծնվի։
Գալում են, էքում են Թաբավորի մոտ։
Դե՛, նստում են, խոսում են։
— Դե՛, — ասում են, — Թաբավո՛ր,
Որ Դավիթը ըստե մնացեր ա իններ-տաս ամիս,
Մեզի երեխա յա մացե ըստե,
Տվե՛ք, տանենք։
Ասում ա.— Չէ՛, երեխա չի եղե,
Երեխա չը ծնվե, որտեղի՞ց տանք։
— Ցա՛, ո՞նց չը ծնվե։

Ի՞նչ անում են, էդ թաքավորը երեխային չի տալում։
Ասում ա.—Լա՛վ, թաքավո՛ր,
եթե մենք գա՞նք՝ կըտանենք,
եթե չըգտանք, թո՛ հալալ ըլնի քեզի։
Ասում.—Տարե՛ք էրեխեն, պայմա՛ն։
էրեխին տանում են, պայման են։
Տանում են՝ նազարա՛, դուննա՛, ասիլ ի՛նչ, խրժժալ,
Ըզտեն երեխեք ժողվում են, որ ձենը չըլսա։
Տանում են, պահում են։
— Դե՛,—ասում ա,—ես .յատավոտ գըլնեմ, կըրտամ.
Իմ էրեխեն, որ իմ ձենը լսա, գըքա իմ մոտ,
Որտե էլ ըլնի՝ գըքա։
Սկսում են նազարա, դուննա, գըհոլ, ասիլ ինչ՝ խրժ-վրժ,
Ձենով .յովանը որ ձենը քողում ա,
էդ էրեխեն վազնում դուրը։
Ի՛նչ անում ա, չեն քողում են դուս գա։
Երեք .յանգամ էտենց ձայն տալում,
էրեխեն ճժերին գցնում դես-դեն ու բռնում, փեշը բռնում։
Ասում.—Թաքավո՛ր, տնաո՞ր որ գաս մեր երեխան։
Ըզտեղից նոր երեխան վերցում են, բերում են դյուրը,
Նոր ըզտե բանի տարի էլ ապրում են,
Երեխեն մեծանում ա,
Անունը դնում են Պրատի Մհե՛ր։
Նոր բոհնը .յիրար հետ ապրում են մի առժամանակ։

Սասնա Ծռեր

պատմեց
Նորքայլերցի Զոհրաբ Ավետիսյան
Երևան – Խյուլիքա գյուղ
գրառված է 1972 թ.

Զոհրաբ Հովհաննեսի Ավետիսյանը ծնվել է 1891 թ. Նոր Բայազետի Քյարիմբյանդ (այժմ Կամոյի շրջ. Սադկաշեն) գյուղում։ Զրադմունքով եղել է հողագործ, անգրագետ է։ 1910-ական թվականներին զորակոչվել է բանակ, 1914—15 թթ. կռվել Բուրքերի դեմ՝ Էրզրումի ճակատում։ 1952 թ. ընտանիքով տեղափոխվել է Կատաջքի շրջանի Քյուլիջա գյուղը, ուր և ապրում է մինչև այժմ։ Նախնիները գաղթել են Ալաշկերտի Ուչքիլիսեից։ Վեպը լսել է հայրենի գյուղում լավ երգասաց և բանասաց Հովնի Սարոյից (մահացել է 1930-ական թթ.)։

Զոհրաբն արտաբուստ անշուք, խնդճ, անարտահայտիչ դիմագծերով, կարճահասակ ծերուկ է։

Համայնքապետների և քոռների վկայությամբ՝ նա հաճախ է պատմել վեպը։ Պատմում էր շատ վարժ, նյութին քաջատեղյակ, առանց վերհիշման ջանքերի, նա անվանի հնքիաթասաց է. գիտե «Շահ-Իսմայիլ» «Ազվան-Օսան», «Ասլի-Քյարամ» մասամբ՝ «Քյոռօղլի»։

Պատումը սկսեց Սանասար-Բաղդասար Ձյուղից, բայց առանց հայոց ու կատաղած Բագավորների, երկվորյակների մոր անունների հիշատակման։ Մեծ և Փոքր Մհերի Ձյուղերը չպատմեց։ Երբ հարցրեցինք թե ո՞վ է Մհերը, պատասխանեց, որ Դավթի հորեղբայրն է։ Մեծ Մհերի վեպի դրվագները պատմեց Սանասարի վերաբերյալ։

Վեպի գրանցումը կատարված է Արարատի շրջանի Տաշլի գյուղում, ուր դասեր մոտ հյուր էր եկել Զոհրաբը։

Ա.

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ. ԲԱՂԴԱՍԱՐ

Լ*ինում են են, ասում են.*
—Հայոց Թաթավորին մի հատ ընկնց սիրուն ախճիկ կա,
Է՛լ պատմելու բան չէ,
Լուս, բան հարկավո՛ր չէ.
Որ էլման նստում քյարգյախ անում՝
Լուսը գանում պատեր։
Թաթավո՛ր,—ասում են,—քո խաբջն ա,—պարսիկ
Թաթավորին։
Ասում.—Բերե՛ք։
Գրում ա հայոց Թաթավորի վրեն,
Ասում.—Հայոց Թաթավո՛ր,—ասում,—
Քո ախճիկ պտի տաս ընձի կնոջ խոսար։
Ասում ա.—Մո՞նց տամ,—ասում,—
Ես քրիստոնյա՛, դու մահմեդական,
Չեմ իմա, ընենց բան չկա, ընենց բան չասես։
— Չէ՛,—ասում ա,—պոռով կըտանեմ։
— Ջոռին ի՞նչ կարամ անեմ,—ասում ա,—
Ջոռով պտի տանես՝ ջոռին բանե չեմ կարա անեմ։
Մնում ա։ Մե ժուկ մնում, .յևնում Թաթավոր տենում,

Իրան բաղթի չի՛ բա բոլոր գործը—չադրի մեջն ա։
— Օհո՛,—ասում,—ախճգա խրմար ա էգած։
Ասում ա.—Ժողովո՛ւրդ, հըլը .յելե՛ք տենանք, ի՞նչ եք ասում.
Ժողով անենք, տենանք.
Կամ մըր ախճիկ տանք տանա՞,
Թե չէ՝ դոռով տանա, չէ՝ կամով։
Կնան ասում.—Ընչի՞,
Շատից՝ շատ կէթա, բչից՝ բիչ։
Պատերազմ անե՛նք, չե՛նք տա։
Կնան ասում ա.—Պատերազմ արինք՝ չը կարցանք էդ մարդի վրեն, չ'ախտինք.
Ախճիկ գաթի տանա, ժողովրդին էլ կրկոտրա,
Էն լավ ախճիկներ .յրմեն կըժողվա, կըտանա,
Ժողովրդին լուսուն կըկարա.—ասում.—
Էլ ընչի՞ եք կռիվ անում,
Թող մեր ախճիկ գա, տանա։
Ախճիկն ասում.—Ճի՛շտ են ասում, հայրի՛կ,
Թո՛ ընծի տանա, ես կէթամ, մե հնար կը գտնեմ։
Ասում.—Տվեցի՛ք։
Ասում.—Տվեցինք, ես էլ գնամ պատրաստություն անեմ։
Ասում.—Խորթո՛ւր, ե՛լ, էթանք, մե պտըտանք, հըլա տենանք՝
Փափագը բտեղից խանեմ։
Մենք է՛լ .յիրար չենք տենա,—ասում,—ինձի կըտանա։

2. էթում են, պտտում են,
էթում, խառնում ծովին.
— Ա՛խ,—ասում,—ի՛նչ խմալ ծառվըցա,
Մե լա՛վ պաղ ջուր ըլներ՝ խմի։
Ծովը բացվում ա, մե խատ կրանա թալում։
— Փո՛ռը բնդ, աստվա՛ծ,—ասում ա։
էթում, բուռը տալում դեմ, մե բուռ խմում,
Մեկ էլ որ տալում՝
Կես լցվում, կեսին՝ ջուրը կտրում ա։
Էտ էլ ա խմում, ըլնում դուս,
Ծով գալում, առնում .յիրուր։

Թաքավոր վերցում, առնում էիում։
Տանում, ասում.—Թաքավո՛ր,—ասում,—
Քառասուն ամիս ես պայման կանեմ քո խեռ.
Որ քառասուն ամիս քըմամ՝ Նոր ես քո կինն եմ։
— Լա՛վ,—ասում։
Տանում, մե առանձին օթախի մեջ դնում,
Կնանիք էիում են, խաց-ջուր են տալում։
էիում են, ասում են.
— *Թաքավո՛ր,—ասում են,—էտ ախճիկն՝ թաքավորի*
ախճիկ, էրեխով ա։
էտ ջուր վեր խմում՝ ասում հրամանով մնում էրեխով։
Ասում են.—էրեխով ա։
— *Տո՛,—ասում ա,—էտ ի՞նչ ես ասում,*
Որ էրեխով ա՝ գացե՛ք, պլոխ կտրե՛ք, ընձի պետք չէ։
էիում են։
Ասում.—Ընչի՞ ես էկել։
— *էկել ենք քո գլուխ կտրենք։*
Ասում.—Թաքավորին ասեք՝ էտ իմա՞լ թաքավոր ա,
Որ տանի իմ գլուխ կտրա.
էրեխով կնկա գլուխ կտրե՞ն, գացե՛ք, ասե՛ք։
էիում են ասում.
— *Չէ՛,—ասում,—մեղքը բան ա։*

Մե ժուկ էլ մնում՝ պառկում ա,
էրկու հատ տղա յա բերում.
Մեկի անուն դնում Բաղդասար,
Մեկին՝ Սանասար։
Անուն դնում, ու էիում են, ասում են։
Ասում.—Դե՛, գացե՛ք, պլոխ կըլըտե՛ք,
Գացե՛ք, պլոխ կըլըտե՛ք, ընձի պե՛տք չէ։
Ասում.—Երեխեն որ ըլնի մորից, երկու երեխա,
Մեղքը բան չէ՞, իմ պլոխ կտրե՞ք, նիիմ մնան։
էիում են, ասում են։
Ասում.—Ձի՛շտ ա ասում։
Մե ժուկ .յընգընում՝ տղեք ըվփռոշնում ե՞ն։
Ասում.—էսի չէլավ, պլխներ տղեքի կըկտրա, լավ չըլնի։
Լավն էն ա, տղերն .յըլնեմ ճամփու դնեմ,
Թո՛ էիան,—ասում,—քսու ձեռնից պրծնեն։

Բալի՛կ ջան,— ասում,— ձեզի էսի մեկ մըհանա կըբռնա,
Թե մըհանա էլ բռնեց, ես չեմ կանա պատասխան տամ,
Ձեր գլուխ կտրա,— ասում։
Յելե՛ք, կամավոր գացեք։
Ընդում են, իրենց խաց, բան դնում են խնամնըրը,
Էդ մարդկանց դնում են ճամպախ։

3. *Էթում են պատալով, հասնում են մեր հայոց թաքավորի քաղաք։*

Պատում են, թաքավորը տենում ա.
— Էս ի՞նչ,— ասում,— էկել մտե, բալե՛ք ջան։
Ասում.— Անտե՛ր, անտիրական ազա ենք,
Տեր, մեր չունինք։
— Բա՛ ի՞նչ եք պատում։
— Պատանք, բալի մե հնար գտեննք, ախշատեննք, ապրենք։
Ասում.— Բալե՛ք ջան, արե՛ք, ես ձեզ կըպահեմ։
Ախե՛ք իմ խնամքին,
Ձեզ փեղ կըտամ, ոսկի կըտամ,
Ձեր խըմա կևրե՛ք, խմե՛ք, պատացեք։
Ըտենց մե ժուկ պահում։
— Դե՛,— ասում ա,— շենք շիքեմ, ըստենց գնեմ շենքի մեջ։
Գնում ասում են.— Թաքավո՛ր,— ասում են,—
Մե բան ենք ըն խնդրում, էլի՛։
— Ի՞նչ եք խնդրում։
Ասում.— Խնդրում ենք, որ մեզ մե տեղ տաս,
Էթանք քո խոզի մեջ մե տեղ տան դանք, գտնինք,
Ընդե մեզ մե խաս շենք շիքենք.
Շենք շիքենք, ընդե ապրենք։
Ասում.— Բալե՛ք ջան, գացե՛ք, ես ձեզանից եմ,— ասում,—
Գացե՛ք, որդե ասեք՝ ձեզ ֆուլլ կըտամ։

Էթում են պատալով,
Էրկու ախպեր .յիրար ձեռ բռնում են, պատում են։
Մե հատ գետ ա գալում,
Մե հատ էլ բարակ ջուր գալում էր յանից,
Ջանում ա էտ գետը, կտրում էթում՝ չըխաունվում,
Ջանում-.յընցնում, էնենց էթում։

Մտածում, ասում.—Էս ի՞նչ բան ա.
Էն բարակ .յառուն,
Էս ահագին գետն էիում ա գըմփըմփալին,
Ըզին կտրում, .յընցնում էիում։
Ասում ա,—Ախպե՛ր ջան, Բաղդասա՛ր,—Սանասարն ա
ասում,—
Մենք, որ մնանք ըտեղ, մեր շենք շիքենք,
Մենք ըտենց ուժեղ կըլնենք,
Էլ մեր դեմ,—ասում,—մարդ չի կանա կանգնի։
Էսի մեզի նշանց տվեց։
Ասում.—Լա՛վ։

.Յընում գալում Թաքավորի կուշտ։
— Հա՛, բալե՛ր ջան,—ասում,—տեղ տրի՛ք։
— Արել ենք, տրըա հա՛յր,—ասում։
Բա՛ Թույլ տալի՞ս ես։
— Ես տամ՝ Թույլ կըտամ,—ասում,—գացե՛ք։
— Դե՛,—ասում ա,—մե բան եմ խնդրում, էլի՛։
Ասում.—Ի՞նչ ա։
Ասում.—Մենք էրիքսով .յընենք էիա՞նք,
Ըտե,—ասում,—խոսող էլ չկա մեր խնամ.
Մե բառուն անտնաուիչուն բյասիր գասակարգ տո՛ւ,—
ասում,—
Գան ընդե, մեր գարգինի խնամ տպռենք,
Որ մեր բնչն էլ բացվի՛, բլնեն մեզ ժողովուրդ։
Ասում.—Տվեցի՛, խոսքը որ գացե՝ կըտամ։

Վերցնում են, գալում են ըտեղ, .յիշնում են.
— Ըքը ի՞նչ աննենք։
— Ախպե՛ր ջան, Սանասա՛ր,—ասում,—
Մեզի տեղ շիքենք, Թե՞ ըտենց։
— Ո՞նց,—ասում,—մեզի տեղ շիքենք.
Ըտենց տեղ շիքենք,
Որ էս մարդեր դուրս մնան,
Մենք մեզի տեղ շիքենք, մեզ ի՞նչ կասեն։
Բերում են՝ մի ախպեր խիմ ա անում,
Մեկ էլ էիում ա, բար ա բերում։
Օրն մե տաս շենք շիրում են,

Ջիրա օր՝ քառասուն անտեսություն տեղավորվրնում են։
— Դե՛, — ասում, — մեզի էլ ըսենց շենք շինե՛նք։
Յըլնում, բերում են խիմն անում են,
էքում, բննց յատ են բերում՝ էս տան չափ։
Բերում են, քաշում են ըզտեղ, ասում են.
— Ի՞նչ անենք, — ասում, —
էքանք մե հատ վարպետ բերենք, որ՛ղ շարա։
էքում են մատ են գալում, վարպետին գտնում.
— Վարպե՛տ ջան, — ասում են, —
Մեզի շար կա, կանա՞ս գաս։
— Հենց իմ բանն ա, — ասում, — ընչի՞ չեմ գա շարի։
Գալում տենում, որ խիմն ալգեն...
Քարեր տենում, ասում.
— Էտ իմ խելքի բան չէ՛, — ասում.—
Էտ բարերն մենք չենք կանա գնդըցու,
Մենք կարա՞նք հանենք, դնենք պատի գլուխ, շարե՞նք։
— Դե՛, — ասում, — որ էտենց ա, հայրի՛կ ջան,
Դու, — ասում, — լարը կապա՛, ուղիղ շարը կապա՛,
Դու կայնի մեզի նշանց տու.
Մեր մեկը քարը կտա,
Մեկն էլ կըշարա։
Մենք չենք գիտա, — ասում, —
Ետ-յառնչ կըդնենք, պատը կըբլի։
Ուստան ասում.—Լա՛վ ա ասում։
Ջանը կապում, յիչնում, ասում.
— Էսե՞նց դրնք, էնե՞նց դրնք։
Շա՛րում են, գլխում են,
Բերում են, ծածկում են։
— Բա ի՞նչ դնենք էատու անուն, ի՞նչ չըդնենք անուն։
Ասում.—Մենք ի՞նչ ենք իմանում անուն դնել։
Սկսում են պատալ։

4, Պատալու էքում են, մե ծերունու բարև տալում։
— Բարև՛, ծերունի՛։
— Վա՛յ, բարո՛վ, — ասում ա, — երիտասարդնե՛ր ջան, — ասում, —
Ամառասա՛ր, Բադդասա՛ր, բարո՛վ եր եկե։

Մի քիչ խոսում են, ասում են.
— Հայրի՛կ,— ասում,— մենք շենք ենք շինե,
Կանա՞ս գաս, մեր շենքին անուն դնես։
Ասում.— Ինչի՞ չեմ կանա, բա՞ն ասիք.
Ձեռս բռնեք, տարեք,
Ջնջ մարդ եմ, չեմ կանա։
Ձեռ բռնում են, բերում են,
Մե ժուկ խոսում են.
— Դե՛,— ասում,— չկե՛ք, ձեռս բռնե՛ք, պացրեք բոլոր։
Ձեռ բռնում են, պացնում են բոլոր,
Պատում, գալում են։
— Դե՛,— ասում,— ի՞նչ ես դնում անուն։
Ասում.— Աստվա՛ծ ձեր տուն շինքա՛։
Էս սասուն բարեր դու էտ իմա՞լ ես բերե,— ասում,—
Դրեք ես .յիրար վրա։
Անուն մնում Սասո՛ւնց
Դնում անուն Սասունց։
Բիձես հանգարձ չկա.
— Վա՛յ, էս ի՛նչ էր բիձեն,
Էս ի՛նչ էր, հրիշտակ էր, էս ի՛նչ էր,— վրան վշվշում են։
Ըզտեն էլ սկսում են ապրել իր մոր հետ։

5. Էդ էրկու ախպերը էիում են ծովը լողդընալու,
Էիում ծովը լողդընալու, Մանասար էիում .յտանչ,
Սրդում, էիում ա ծովի մեջ։
— Վա՛յ,— ասում,— ախպե՛ր ջան,—
Լալում, ափում բիձ-բերնի մեջ.—
Ախպե՛ր ջան,— ասում,— գացիր ծովի մեջ, խնխաթվար։
Տենում ա՝ ծովը ասու հրամանով բացվավ,
Մե հատ լավ ձի խնձո՛ւզ, դուս էգավ։
Դուս գալու նման՝ գալում են, փաթիվում .յիրար.
— Ախպեր ջան, բան չէլա՞վ քե։
Գալում են։
— Դե՛,— ասում ա,— ընձի ձի չկա։
Ասում ա.— Քեզ էլ, ասում են, որ բյանուն ձի շատ կա,
Գնա՛, որ բյանուց մե ձի բե՛։

6. Բաղդասար ըլնում էիում բյանու տոմե,
էիում, ա ընդեղ՝ նստած կերուխում են անում.
Ինքն էլ ա մղնում, ուտում-խմում են։
— Հա՛,— ասում,— չես ասում, քյանի՛, ինչի հրմար ես էկել։
Ասում.— Ինչի՞ հրմար ես էկել, գա՛ դան։
Ասում.— Մե հատ ձի տաս ընձի։
— Դե,— ասում,— է՛ն ա, բառսուն-չիիսուն ձի ընդե կապուտ.
Գնա՛, որ մեկ խավնես՝ խեծի՛, գնա,
Քե ձի կըխնայե՞մ։
Էիում պրծում ա,
Որ մեկի վրեն ձեռ զանում՝ վիրն էլ առնում գետին,
բառսունին էլ։
Դեմ ու դեմ, խոսքի ընենց, Քուռիկ, էլի՛,
Լավ չըպահած ա, տես էլ չկա վրեն ըսկի,
Ընենց զարուն-մարուն բան՝ ա.
Ձեռ զանում բամկի վրեն՝ ձեռ բանցըրցնում ա։
Ասում.— Էսի կըտանեմ։
Դալում, ասում.— Քյանի՛, էն Քուռիկն եմ տանում։
— Ա՛յ մարդ,— ասում,— գաս ձիանքի մեջ՝ էդ Քուռի՞կ...
— Չէ՛,— ասում,— էդ Քուռիկն եմ տանում,
Չի չեմ տանի։
Էիում, Քուռիկ վերցնում,
Քուռիկ վերցնում, էիում ա։

7. Պղնձե քաղաքի թաքավորի ախեիրը պրում նամակ
Մանուսարի վրեն,
Ասում.— «Ես քեզի լրի առնեմ»։
Նամակ ճամպխում, գալում, տալում։
Ախպորն ասում.— Դո՛ւ գնա։
Ասում.— Չէ՛, քու վրեն է ճամպխե,— ասում,—
Դո՛ւ գնա, ես չեմ էիա։
Ըլնում էիում, ասում.
— Ախպե՛ր, ես որ գացի,
Իրեք օրիցետ գըկաս իմ հավարը.
Բայց ես շատ չեմ մնա։
Ասում.— Իրեքի վրեն՝ գամ քու հավարին։
Մանուսար ըլնում էիում, տենում,

Որ քառասուն խաւտ խոկի կայնած ա դարդըխի վրեն,
Քառասուն խոկի պահակ են։
էթում, բարև ա տալում ըտոնց,
Բարև առնում են, ասում են.
— Ա՛յ մարդ, էս ի՞նչ մարդ էր էկավ,
Մեզի ոխսկով բարև ավեց,
Մենք քառասուն խոկի ենք։
Ասում.—Էս ի՞նչ բաղաք ա։
— Մեր Թաքավորի Պղնձև բաղաքն էսի ա։
— Ուրեմ՝ էսի՞ ա։
Ասում.—Հա՛։
Ձինը լցում, բաղան քոնում, .յըլնում էն յանո։
Ասում.—Էս ի՞նչ մարդ էր էկավ, բաղան .յընցավ էն յան։
էթում ա գիշեր, Թաքավորի ախճիղ պառկում ա,
Խնձորն էլ՝ ոսկիչրած խնձոր, գլխի վրեն գանում ա։
էթում խնձորը վերցնում, առնում գալում,
Դնում ծոցը, մնում ըտեղն։
.Յառավոտ Թաքավոր .յրլնում տենում՝
Խնձոր ախճգա գլխուն չէ՞։
— Էս խնձոր ո՞ն ա,
Հըլը՛ ինքնք տենանք, էս ո՞նի ա ոխսկով էկև,
Էս խնձոր ձեռ տվե, տարե։
Ասում.—Ե՛ս եմ տվե.
Էկել եմ քո ախճիղ տանեմ։
Ասում.—Որ դու ես տվե, հըլը՛ տենանք՝
Կանա՞ս բերես, դնես գլուխ։
.Յրլնում, դնում գլուխ։
— Դե՛,—ասում,—դրեցի, տո՛ւր, տանեմ։
— Չէ՛,—ասում,—դո՞ր տանես,—ասում,—
Վաթսուն խաւտ ընձի թաշ ունեմ.
Վաթսունի խաւտ դնա՛ կռվի, վաթսուն օր,
Թե օր կռվին քեզի ընդոնք փրչացրի՞ն,
Ձրթի էլ ի՞նչ ախճիղ տանես։
Ասում.—Էտ ի՞նչ ես ասում, Թաքավո՛ր,—ասում,—
Վաթսուն օր ես կայնիմ բատեղ կռի՞վ անեմ,
Իմը կա՞ իրեք օր,
Իրեք օրից .յավել ես կռիվ չեմ անի։
— Դե՛,—ասում,—դնա՛։

Էթում ա, բաջկրի մե նռանի գլուխներ կտրում։
Նռանի գլխներ կտրում, դիշեր հանդարտվում,
Յառավոտ լըլնում, էլի խառնում.
Արուն բռնում ջան, էլի՛,
Էս խեռ էնքան չըկարում բանի, բիշ-քիշ ա կովում։

Ախպեր գալում հավարին։
Գալում խառնում բդոտ, ասում.
— Էս ի՞նչ բաղաթ ա,—բարև տալում բոռնց։
Ասում ևն,—Բարև՛,—ասում ևն,—Պղնձե բաղաթն ա։
Ասում.—Պղնձե բաղաթն էսի՞ ա։
Բա՛ էտ ի՞նչ զըռզրոռնց ա գալում։
Ասում.—Պատերազմ ա։
— Հա՞, էս իմ ախպեր խեռ ա։
Զին լցում, թոնում բադան լըցնում, էթում,
Տենում, որ ախպեր՝ լիրան արուն կապի, էլի՛,
Էնքան չըկարում ժուռ գա։
Էն յանիցե էլ ախպեր.
Էրկու ախպեր բռոնց կոտորում ևն, վերջացնում ևն,
Գալում, իրանց շոր-մոր լվում, հաքնում։
Ասում.—Թաքավո՛ր,—ասում,—ախճիզրդ տանում եմ։
— Չէ՛,—ասում,—դո՞ր տանես, նուժ կա,—ասում։
— Ի՞նչ ա։
Ասում ա.—Մեր քաղաքը մե հատ դև ա փայդի բլե.
Զորք տանում ենք՝ չարդում։
Օրեն մի ախճիզ ա լուզում.
Պտի տանենք, էտի էտ ախճիզն ուտա,
Իրան տա ուտելու խեռ,—ասում,—
Նոր, թողա, մեզի ջուր գա։
Կնրավ, պրծավ,—ասում,—չրի դեմ կտրում,
Էլ չի թողում ջուր գա։
Ասում ա.—Էտ դևը զառնաց ա մայդի ուտում, թե՞
մտնենում։
— Չէ՛, մուտկանց ա կանում, փչացնում։
— Լա՛վ,—ասում,—ես լուսավոտ կէթամ։

8. .Յաւուրս Սանդամաթ .յլլնում,
Մէ հատ ախճդա լալով, քրտընքաշ տանում են,
Լալում, մախկրտում, տանում, ուտա.
Քառասուն խոկի էլ դնում են խետ։
Էթում, ասում ա.—Դու նատէք ըստե,—ասում,—ես կէթամ։
Ախճդան ասում.—Դու տեղ չէթաս,
Դու նստէք ըստեղ,—ասում,—ես կէթամ,
Որ իմ հավարին էկել եք՝ գլխներդ կտրեմ,
Մի խատ հավարի չիգաք ընձմէ։
Էթում, դեր տենում՝ գալում, ասում.
— Շուտով խողովնի միս չեմ կերե,—ասում,—
Մի ուտեմ, քող ատամներըս նոր գա, դինջընա.
Էտի մե դան չեմ կանա ուտե,
Հըլը էրկու խետ,—ասում,—անջախ խըլըսեմ։
Սանդամաթ ասում.—Դէ՛, կե, նէր գոհացի։
Խասնում է՝ մե ձեռ թալում էս յան, մեկ՝ էն յան,
Քաշում, ճղում,
Մե կաշեր թալում էն յան,
Մե կաշեր թալում էն յան։
Դե վերչանո՞ւմ։
.Յըլնում գալում։
Գալում են ըդե,—ասում.—Դէ՛, թաքավո՛ր,—ասում,—
Էս խետ հո՛ էլ չունես, ախճիղդ տանում եմ։
— Չէ՛,—ասում,—տարե՛ր։
Ախճիգը վերցնում, գալում են։

Ըդեռ գալում են մե խելատ,
Ըդեռ էլի մե դորբա մարդ ա րլում, ասում.
— Էսի գա, պղնձե քազաքի թաքավորի ախճիդն տանում,
Էսքան կոտորում անում,—ասում.—
Ես պտի էտու խետ պատերազմեմ։
Ասում են.—Ախճի՛դ ջան,—թաքավորի ախճդան,—
Դու .յելի՛ բանձր տեղ՝ էս դրի վրեն նատի՛,
Մենք պատերազմենք.
Մենք հախտրվա՞նք՝
Էտ ա՝ գնա՛ քու խոր տուն, քո խոր քազաք,
Ջաթի ախտինք՝ քեզի կըտանինք։
Էթում են կռվում են, բոլորն էլ հախտում են,

Էրկու ախճիգ վերցնում են, տանում են։
Էթում են Սասուն, ապրում են մեկ ժուկ։

9. Գալում, ասում.—Ձեր վրեն խարջ ա դրած,
Պարսիկ Թաքավոր քու վրեն խարջ ա դրե՝ Մելիքը։
Ասում.—Ի՞նչ խարջ, ես Աբրան ի՞նչ խարջատուր եմ։
Ես,—ասում,—Աբրան խարջ չեմ տա.
Ի՞նչ խարջատուր, խարջ է՞լ տամ ընդուր։
Ես կվթամ, անհամ էտ ի՞նչ խարջատուր եմ։
Մանտասար էթում, տենում.
Որ էտ ա նստած կերուխում են անում.
Մտնում նեքա, բարև տալում.
Իշխում են՝ զախախորում են։
.Յրկնում, որ կալնի, էտի նստի, ասում.
— *Նստի՛, նստի՛, մի՛ .յեչնի։*
Ձեռ ճխտում չոքին՝ չոք կոտրում։
— *Բա՛,—ասում,—ախպե՛ր ջան, դու ընչի՞ ես էկել։*
Ասում.—էտ ի՞նչ խարջ ես դրե, քեզ ի՞նչ խարջ տամ.
Մենք քե տալի՞ք ենք, խարջ տանք։
— *Չէ՛,—ասում,—ի՞րն ա ասում խարջ,*
Քեզնից խարջ չեմ առնի։
Ախպե՛ր ջան, մենք ախպեր ենք, ի՞նչ խարջ։
— *Հա՛,—ասում,—բան՛նց ասա։*
Էրկօր մնում, Մելիք ասում.
— *Արի՛, պայման անենք։*
— *Ի՞նչ պայման անենք։*
Ասում.—Ես, դու պայման անենք, բլնենք ախպեր։
Ես մեռա՛՝ դու արի իմ տան-տեղի վրեն, էդի Թաքավոր,
Դու մեռար,—ասում,—ես գամ քո տեղ։
Ասում.—Հա՛։
Պայմանն են կապում, .յրկնում գալում։

10. Գալում, մեկ ժուկ մնում,
Էտ Պարսկի Թաքավոր Մելիք մեռնում ա՛։
— *Դե՛,—ասում,—ես պայմանն եմ արե,*
Պտի էթամ, Մելիքի Թախտ վրեն նստեմ։

Ասում ենք.—Չէ՛, մի՛ գնա։
Ասում.—Պայման կա, պայման որ կա՝ պտի էլ՝ ասում։
.Յրկնում Սանասար, գալում։
Գալում ա լդտան, նստում ա մեն օխտը տարի,
Բառ մեն խաստ տղա չա լսնում։
Մեն տղա լսնում ա՝ Սանասարից ու Մելիքի կնպաց։
Լսնում ա, մեն ժուկ .յրնգնում,
էտի դնում չորքեն խաղցնում, թացնում, ասում.
— *Կէքաս Սասուն, կանչա ատ ու Բալան,*
էրկաւր կնկաքիր բերևա՝ ուխտեր բառնան,
Պարճեր՝ էրկանք ազան։
Ասում.—Էտ ի՞նչ ես ասում։
Ասում.—Լա՛վ եմ ասում։
Ես էտու խրտա քեզի թոթռում է,
Որ քեզնից մեն հատ նամատլնա լսնի մեզի։
Դու,—ասում.—ուզում ես ինձ, մկա էլ գնա, ետ գնա։
Ասում.—Կէքա՛մ։
Ասում.—Գնա՛։

11. *Գալում տենում, որ էրան տուն, .յինք որ էկեր ա,*
Կնիգ բերի սև շոր քաշե,
.Յինք էլ ա սև շոր խաքե։
— *Կնի՛կ,—ասում,—էտ ի՞նչ...*
— *Դու իմ ախպերն ես,—ասում,—ի՞նչ կնիկ։*
Քեզ ներս չեմ առնի,
Դու գացեր ես ընդոր։
Ինչքան աճում, ասում.—Չէ՛։
Որ գամ էլ,—ասում,—քառասուն տարի լդի դու իմ բոլոր
չգաս,
Քառասուն տարի հետո նոր գաս։
.Յրկնում էքում՝ տներեր են բերում, վարդապետ են բերում,
Գալում, ախճդան համոզում են.
— *Բա՛ն չկա, գացե, քո մարդն ա։*
Տարին աճում են քառասուն օր,
Օրն էլ անում են քառասուն ժամ,
Ժամ էլ անում են քառասուն րոպի,
Բերում են անում են մարդ ու կնի՛կ։

Քնում են, էրազ են տենում, ասում.
— Ձնդ մե տղա կըլնի, անուն կըդնենք Դավիթ,
Է՛ն օր՝ էնի ծնվի,— ասում,—
Դու էրկուսով էլ էն օր կըմեռնիք։
Ասում.— Ը՛ռ կընի,— ասում,—
Ը՛ռ մեզ մե նդնամբնա ըլնի,
Մենք մախին ենք, մախը մերն է,— ասում։
Ին ամիս, ին ժամ, ին րոպեն ըմում,
Պատում բերում ա Դավթի՛ն։
Բերում՝ հեր, մեր մեռնում են։

Բ

Դ Ա Վ Ի Թ

12. — Է՛, իմա՞ էս երեխեն պահենք։
Ի՛նչ թագա ծնդգական կնանիք բերում ին,
Ի՛նչ անում են, չը նեթարկվում ըտենց,
Ըտենց ծիծ չ՝առնում ա։
Ասում են.— Բերե՛ք, իրան մերն ընդուն ա, Սանասարի կնիկ,
Օխտը տարի մնացել ընդուն.
Տարե՛ք, Ը՛ռ էնու ծիծ տա, պահա, մեծրնա,
Կէթանք բերենք, ընչի՞ փշանա։
— Լա՛վ,— ասում են։
Վերցնում են տանում են, տալում են բառուն,
Էտ էլ ուրախ-ուրախ վերցնում, ասում.
— Էս էլ ֆե էկավ, է՛լ մեր վրեն քշող չկա։
Լա՛վ պահում ա մե էրկու-իրեք ամի՛ս,
Թրփռոշանում, լավ իրան քցում։
Էս խետ, որ ծիծ տալում,
Էսենց որ գլխով անում՝
Մեր քամկի վրեն էթում, ընկնում ա։
Ասում.— Էսի չէլա՛վ,— ասում ա,—
Էլ չինք ծիծ չ՝ուտա,— ասում,—
Էսի կըփչանա։
— Ընչի՞ փչանա,— ասում են,—
Ասում մեղր էլ շատ կա, եղ էլ շատ կա.

Էքան մե տիկ,—ասում,—եղ բերեն,
Մե տիկ էլ մեղր բերեն, ըտու պախեն։
Զալփափախ Քամուն, Բաթմանա Բուլին ասում.
— Նէքա՛ք, կառնանք մե տիկ եղ, մե տիկ մեղր, գրկաք։
Էքում են, մե տիկ մեղր, մե տիկ եղ վերցնում են, բերում են,
Ըտով պախում ա, ջաջընում,
Բերում տալում ա .յուսումի՛։

13. *Մե առաձին տեղ տանում են .յուսում են տալում։*
Աց տանում ա, ուտում,
.Յուսուցիչ տանում, տալում ա,
Մըջից մե խատ օսկոն ա .յևնում։
Ասում.—Էս ի՞նչ ա, էս ի՞նչ ա,—ասում։
Թալում առած՝ առածը չրկորում։
— Էս ի՞նչ բան ա։
Վերցնում, ուժեղ շըպրտում ա,
Առնում պատ, ինչ որ դյուլի ծակում, .յընցնում էն յան։
Շողը գալում, ասում ա.
— Էս ի՞նչ դուշման ա,—ասում,—էկավ։
.Յընում փաթթում շողին,
.Յուսուցիչ գալում, ասում.
— Դավի՛թ ջան, էտ ի՞նչ ես անում։
Ասում ա.—Էսի դուշման ա էկե։
— Դուշման չէ,—ասում,—հըյա՛ աչքերդ խփա՛։
Խփում, լալլուղ գանում ա, ծակը բանում։
— Դե՛,—ասում,—.յո՞ւր ա, էլ չկա։
Լալլուղ բաշում, ասում.
— Տե՛, շող ա, գանե տան մեջ։
Ասում.—Որ շող ա,—ասում,—
Ախշար շող կա, մարդ կա,
Ընչի՞ ես ընձի բերե բատե, բանատարկե։
Ըտուց հանում են դո՛ւս։

14. *Հանում են դուս, գալում տենում,*
Որ ճժերն .յևլած ծառի վրեն, բոյին ընենց խազում են.

Ասում.—Ես՝ բանից չեմ խաղա՞։
Ասում.—Բա ի՞նչ։
Ասում.—Ծառի վրեն կրկնեն, խաղան։
Չեռ թալում, ահագին ծառը, հսկա ծառը կեռում, բերում,
Ասում.—Հրի՛ք վրեն, խաղցի՛ք։
.Յրկնում են վրեն, խաղում են մեծ ժամով։
Բա ասում.—.Յիջի՛ք, ինչ բըմբրավ։
Ասում ա.—Խաղում ենք, դո՞ր .յիջնենք,
Բանի՛, խաղանք։
Ասում.—.Յիջի՛ք։
Չեն .յիջնում՝ ծառը թողում ա։
Չեռ որ թողում ա,
Որ .յընդնում մեռնում, որ ինչ ա ջարդում ա,
Վրայից գալում են թափվում են ցած բիթուն։
Մեկիքն ասում ա.—Ըսենց բան չի բլնի,—ասում,—
Ըսուց մեզի վնաս կըդի՛,
Ըսու գլոխ պտի կտրեմ։
Մեկն ասում.—Ա՛յ բալա, էտ քո բյումագն ա էգի՛,
Էրեխա յա, բան չըխասկընում, էսենց բան կասե՞ն.
Դու բաենց բան մի՛ ասա։
Համոզում ա։

15. *Մե ժուկ մնում, Մեկիք էթում, հոլ ա խաղում։*
.Յինք էթում, հոլ խաղում, ասում.
— Դավի՛ք, չէթա՞ս էրեխեքին վնաս տաս։
Մեր չը թողում, չ'էթում։
— Մամա՛, —ասում ա, —.յինք էթում խաղալու,
Ընչի որ, թո՛ ինձ էլ տանե,
Ես էլ էթամ ընդեն թամաշեմ, խնտներ խաղամ։
Ընձի, —ասում, —բատե պահիր ես, չեք թողում .յրկնեմ դուս,
Ընդեղ էլ չեք տանում։
Ասում.—Թո՛ գա, քեզի կասեմ՝ թո՛ տանա։
.Յիրկուն գալում։
Ասում.—Բալա՛, խի՞ դու ախպեր չես տանում,
Թո՛ գա՝ բան սովրի, ասա-խոսա մեկի խետ,
Դու ը՞նչ ես բաենց անում։
— Համ, —ասում, —.յատավոտ կրտանեմ։

.Յառավոտ Բաթմանա Բուղին, Չալփափախին ասում.
— Տարե՛ք էն գրի վրա,
Ձեռ-ոտը կապե՛ք, ընդե քո՛ կայնի,
.Յիրկուն,—ասում,—կառնե՛ք, կըկապ։
Տանում են, կապում են,
Ըաննք հոլ են խաղում։
Կապում են ըդուն, ասում ա.
— Ո՞նչ եք ընձի կապե, հըլա՛ .յարձկեք,—ասում,—
Ընձի .յարձկեք, էհամ բան տենամ։
— Դո՞ր տենաս բան,—ասում,—
Մելիքին ասենք, մեր գլոխը տեղ՝ քո գլոխ վերու։
Քաշում էին կոտրում,
Բնրում բաննց գլխընկր զանում .յիրար, ասում.
— Ընձի ընչի՞ շեք .յարձկում։
— Ձեն մի՛ հանա,—ասում,—լուսուն բնկի կըտանենք։

Տանում, ասում.—Մամա՛,—ասում,—
Ընձի տարան, կապեցին ընդե,
Չը թողին բան տենենք,
Ընձի քո տաճեն,
Ես էլ գամ ընդոնց խնա, մե բան տավրիմ, տենամ։
Ասում.—Բալա՛ ջան, րու ախպերն ա, ա՛ռ գնա.
Տա՛ր,—ասում,—ընդե քո՛ .յուսումնասիրա։
— Մա՛,—ասում,—տանեմ, .յընդնի ոտի տակ՝ մեռնի՞։
Ասում.—Չեմ .յընդնի,
Ես երնխա՞ եմ, .յընդնեմ ոտի տակ,—ասում,—
Չեմ .յընդնի։
— Դե,—ասում,—արի՛։

Գալում, էհում են հոլ են խաղում,
Հոլ բննոց ա բալում, ասում.
— Քո՛ էհա տանի՝ միանգամից վերջանա,
Մերըս չը թողամ վերջացրննեմ։
Հոլը բալում, հոլը բռնում բննոց ա շըփրրտում,
էհում, պլխի վրավով .յընցընում։
Ասում.—Էս ո՞ն էս հոլը բալեց։
Ասեն.—Դավիթն ա։
— Օ՛,—ասավ,—էս Դավիթ ըր էս հոլ բալա,

Բոնն ընձի՝ ես կըմեռնիմ։
Էս,—ասավ,—տատապլըղի բան չէ։
Յերկուն գալում են.
— Դե՛,—ասում ա,—հոդն էկավ թալենց,
Որ տանը ընձի՝ ես կըմեռնիմ։
Ուզում պոխ կտրի,
Ասում.—Չէ՛, բալա՛ ջան, էրեխա յա,—ասում,—
Բա՞ն չկա, թաասվորվիմ, թալե, էրեխա յա։
Համոզում ա։

16. *էկում, տենում ա՝ էն նեքրեվ մե հատ գազանց ա պառում։*

էկում, տենում, որ իրան գյուղը վերցնում ա՝
Թալում, խըլշում, թալում, խըլշում։
Ասում ա.—էլ չեմ, կարա թալեմ՝ խըլշու,—ասում։
— էսի թալեմ, խըլշու է ասում.
Բդի՛ ըտաու պոխ կտրեմ, էսի էրեխա չէ՛,
Վերջ ըտաուց վնաս կըգա։
Մեկն ասում.—Բալա՛ ջանս, դու ախպերն ա,
Մի՛ կարա, բանից բան չըվնի։
— Չէ՛,—ասում,—ըտաուց վնաս կգա։
— Չէ՛,—ասում,—էրեխա յա, չըխասկընաս։
— Դե՛,—ասում,—որ էրեխա յա,
Բերեմ մե յան ոսկի լցնեմ,
Մե յան էլ,—ասում,—կրակ վառեմ.
Տենանք, էսի ոսկու յա՞ն կէթա, թե չէ կրակի յան։
Որ չըխասկընա՝ կէթա կրակի յան, կէրնցի,
Թե օր ոսկի վերցնց՝ ֆայմ վրեն ա, իմա՞ն անֆայմ ա։
Բերում, էտենց անում։
Ուզում էթա ոսկու յան՝
Ասում Հրամանով խրիշտակներ թեվ օլըրում են,
էթում, ճխտում կրակի մեջ։
Ասում.—Բա՛ որ ասում ինձ էրեխա յա՞,
Դու ասում իր՝ չէ՛, պոխ կտրիմ.
էրեխա յա, դատ չըխասկընաս։
— Դե՛,—ասում ա,—բանից ա, պոխս չեմ կտրի։

Մե ժուկ էլ մնում, մատծում մերն, ասում.

— Մև օր մբ՛ռանա կբռանա, պլոխ կբկրտա։
Դավի՛թ ջան,— ասում,— արի՛,
Քեզի ճամփենք՝ գնա՛ Սասուն,
Քո խորոխպըրատնք դորն են, գնա՛։
Ասում.— Ի՞նչ խորոխպեր։
— Բա՛,— ասում,— Սասուն՝ Մհերն բո բյանին ա՛,
Օհան էլ քո խորոխպերն ա՛։
Ասում.— Բա՛ որ բանից բան կա,— ասում ա,—
Ընչի՞ ընձի չուտ չես ճամպռտում։
Ասում.— Գնա՛։
— Դի՛, մամա՛ ջան,— ասում,—
Մև տաս չուխտ ոռնաման, մև տաս չուխտ գուլպա դու ընձի դզա՛,
Ես խաքնեմ, էքամ։
Դրում։ .Յառավո՛տ .լըլնում Մհլիք, ասում Բաթմանա Բուղին, Չալփափախ Քամուն,
— Տանևք էտ կարմրընջի վրեն,
Մեկըդ գընկնի .յառնչ, մեկըդ գընկնի ետ,
Կէքաք էտ կարմրընջի օրթըլաղ,
Կըվնըցնք,— ասում,— գլոխ կտրնք, քալնք ջուրն,
Շորերն էլ արնոտնք, բնրնք,
Տաք ընձի, իմ սիրտ հովի։
— Լա՛վ,— ասում նև։

17. .Յրլնում են էքում ճն։
.Յրնգնում ճամփեն էքում, նստում են խաց,
Ըտու չեն ասում՝ արի խաց կե։
Մև ուխ օր ճամպռտ են էքում,
Ուխ օր քըմում, վրա ինկե՝ մոռնենում են կարմրընջին։
— Դավի՛թ ջան,— ասում,— արի՛ խաց ուտենք։
Գալում.— Ի՞նչ անենք։
— Խաց ուտենք։
Ասում.— .Յրնչի՞ էսօր ուխ օր ճամպռտ ենք գալում,
Չնք ասում՝ Դավիթի ջան, արի խաց ուտենք։
Էս ի՞նչ բան ա ձնզի պատահե,
Որ դու ընձի ասում նը՝ արի խաց կե։
Ասում.— Չեմ ուտե,— ասում,—

Ընձի խաց կա, չեմ ուտե ձեր խաց։
Զըգալում։
.Յըլնում են, էս էլ, լիում են, խաանում են կարմընջին.
Ասում են.—Դավի՛թ ջան, արի՛, խաց կի։
Ասում ա.—.Յէսօր էրկու խան՝ էս ի՞նչ բան է պատահե,
Որ դու ընձի ասում եք՝ արի, խաց կի։
Ես,—ասում,—խաց չեմ ուտե, ընձի խաց կա։
Ընչի՞ ես,—ասում,—ընձի կանչում։
Ասում.—Ք՚ն կանչում ենք, որ դուս խամ տպա ես,
Կըվախեննաս, կարմընջից գընգնես,—ասում,—
Դեսո քի կըտանա։
Ախի՛, .յընդի մեր էրկրսի օրթըլաղ,
Որ իդի խեսա գաս,—ասում,—
Մենք քի բանենք, որ չընգնես,
Թե չէ՝ բանից գընգնես։
—Լա՛վ,—ասում,—.յընգնեմ ձեր օրթալաղ։
.Յընգնում օրթըլաղ, գալում կարմընջի վրեն,
.Յուղում են դառնան վրեն,
Էրգսին էլ բանում բերում, գաձում .յիրար,
Վերցնում, որ թալա ջուր.
— Վա՛յ,—ասում,—մենք ը խոր բաջեղն ենք,
Որ Մելիք էկավ խորդ Մարութա Մայր Աստվածածին բրդից,
կոտրեց, ջարդ-խուրդ արավ,
Մենք ը խոր բաջեղն ենք,—ասում,—
Դըբանք, էլի բեզի կըբնենք բաշ,
Մեզ մի՛ թալ ջուրը։
Ասում.—Էաճնց ասեք։
Առնում գալում։

18. Խորխակը էրազ ա տեսնում։ Ասում.
— Էրազում Մարա ճաթ բեննց էր .յընգե՛ Մելիքի,
Մեր,—ասում,—բեննց էր վառում, բան թալում էր երկինք։
Ասում.—Մեր Դավիթ գրքա։
— Վա՛յ ըու մամուն,—ասում,—Դավիթ որդո՞ց գրքա։
Մեկ էլ ա բնում՝ էրազ տեսնում,
Որ իրեքին էրազ տեսնում, .յըլնում, ուրախնում։
Էս բաջեր խեսա էկեն, գալում են։

Գալում, ասում են.—Բավլիին էկեք ա։
Գալում, տենում, որ էրկոզ քաջ օթաղ կանուկ ա։
Փաթիլում են .լքուր, քե՞ֆ, ուրախութի՞ն, ուտե՛լ, խմե՛լ։

Մե քանի ժուկ .լընկընում, ըսում.
— Ա՛յ ամի, ընձի մե գյոզե տո՛ւմ
Ես էլ էթամ աշխատանքի.
Մնում եմ ի՞նչ անեմ,—ասում։
— Ա՛յ բալա,—ասում,—կէթաս աշխատա՞նք անես։
— .Յընչի՞ չեմ անում, ընենք աշխատանք կանեմ։
— Բե՛,—ասում,—բնդի տանք գառնաբած։
— Տո՛ւր, ամի՛ ջան։
Բերում տանուման, բան ա խաբցընում,
Մե հատ պոզվան գավազան տալում ձեռ,
Գառներ վերցում ա տանում, առնում էթում։
Ասում.—Կբառնես, բնդի կարածցընես, բերես.
Ընդե .յախպուր կա՝ չինարի ծառի տակ,—ասում,—
Ընդե կբերնես, կբնատրցաս,
Տավին էլ կարածնի, .լիրկուն կառնես գաս։
— Հա՛,—ասում,—ամի՛ ջան։
.Յրլնում վերցում, էթում։
Էթում, վերցում արածցնում,
Բերում բդան, նստում են, .լինք բնում։
Քնում, գառներ .լրլնում են էթում են,
Տումն .լրնկնում։ Ասում.
—Գառներ ո՞ն տանես։
.Յրլնում գոզբոնց գնում ա, գառներն էլ ա գտնում,
Ինչքան ջուներ-ջանավար, էրուն-ծերուն կա,
Դոզբոում տալում դեմ, բերում, լցում դեղի մեջ։
Լցում դեղի մեջ, որ տենում են էգբան ջանավար լցնց,
Գառներ փակում են, մտնում են ներս։
Ասում.—Ա՛յ ուլաուներ, ա՛յ գառնատե՛ր,
Արի՛ր, ձեր գառներ տարե՛ր։
Վիր քան ա՝ բառուն եմ բերի,
.Յելի՛ր, ձեր գառ ու օխլար տարեք ներս։
Է՛, ո՞րը գիտես, ախու չեն .լրլնում։
— Տո՛ւր,—ասում,—էս ժոզովուրդ էլ ի՞նչ վազուց են բնում։
Գլոխ գնում մե բարի վրեն, բնում։

Քնում, է՛, էտ չուն-չանավար կըկայնի՞.
Փախնում-էքում են, մնում օխշար։
Լուս բացվում.
— Վա՛յ,— ասում ա,— ջոջեր գացած, մացած էս մանգրեր։
Խորխպեր գալում.— Տո՛,— ասում,— Դավի՛թ ջան,
Դու գացեր ես էրուն-Քուռներ ժողվեց ես, բերեր ես,
Գըբան մեզի չարդ-խուրդ կանեն, կուտեն,
Ընչի՞ ես բերեր ես,
Էլ,— ասում,— գառներ չեն տա դու տանես,
.Յըմեն թողըթավեր են.
Ասում ես՝ մե օր չուն-չանավար կըրերա, մեզի կուտեն։
Ըսում.— Հայրի՛կ, ընձի ուրիշ գործ գտի։

19. Էքում նախերն ա վերցնում։
Նախեր վերցնում, սկսում պահել։
Տանում մե օր, էրկօր արածցընում։
— Ձի՛,— ասում,— բնդ բան ա,— առնում գալում։
Մե օր էլ տանում ա արածցընում,, գալում էլի բնում ա,
.Յըլնում տենում՝ կովեր գացած։
.Յըլնում ա գոռգոռալով էս յան, էն յան էքում։
Էքում ընգնի՝ տավար պահող կա,
Ընդենց տավարն էլ ա խառնում խետ,
Իրա տավարն էլ ա բերում խառնում, ասում.
— Ես իմ տավար գրքա։
Ասում են.— Դավի՛թ ջան, էտի մերն ա ախբր, մեր գնդին։
— Չէ՛,— ասում,— ի՞նչ ձերն ա, ի՛մն ա։
Ասում են.— Դավի՛թ ջան, գլխիդ մեռնեմ,
Էնենց անոթի ենք, մենք չենք կանա էքանք.
Գնա՛,— ասում,— էսօր Աստվարածին ա, պատարաք ա,
Մե փշու խաց բե, ուտենք։
Ասում.— Էքա՛մ,— ասում.—
Իմ կովերն էր մե հատ մազ ա .յիրուր էկե,
Գըբամ, ձեր գլուխ կըկըտրեմ։
Ասում են.— Չէ՛, գնա՛։

.Յըլնում էքում, տենում ա՝ խարխանն պատավ գրե,

*Մև ջիջ, էս տան չափ խազան դրև վլենք**,
Էդ հարիանև խառնում։
Էթում ասում.—Վա՛յ, նանո՛ ջան, էննից անոթի եմ,
Մև բիչ խարխաս տո՛ւ, ուտեմ։
— Ա՛յ ուզա, խո՛ դու ծուռ չե՞ս,—ասում ա,—
Էսօր պատարաք ա՛,
Պատարաքից յըրևևն, տևրտևր գա, օշնա,—ասում,—
Նոր խաց ուտևնք.
Անօշնևլ իմա՞լ տամ։
Ասում.—Անոթի եմ։
Զըտալում։
Յըրևում հևրսոում,
Խազան կրակի վըրևնին վևրցում, դնում էդևն,
Փետ քցում, խազան շըկում։
Պատավ չօրին գանում, էթում հավար բցում.
— Քևկ՛,—ասում,—էկան, խազան տարան, խացնր
տարա՞ն։
Ասում.—Մևր Դավիթին ա, ին՛ տանա,
Ձեն մի՛ հանա, ին՛ տանա, ին՛ տանա։
Առնում, էթում։
Էթում տևննում՝ էտևնք նիսթ ևն, ասում.
— Խաց եմ բերև,—ասում,—
Ո՞նչ եք նիսթ, արև՛ք, կերի՛ք։
Ասում.—Ինչ ուտևնք,
Քառասուն խասա դև էկան, չոկևցին կովեր, տվին գևմևնք,
Քառասուն կով ատան գացին։
— Ո՞ր դիավ գացին, ընձի ասի՛ք։
Ասում.—Էսինց յըլան։
— Դև՛,—ասում,—դու խաց կերի՛ք, ես կէթամ։

Էթում խառնում,
Դևևր էտևնց գացած, մորթած,
Քառասուն էլ էցած մե ամևնի մեջ՝ խազևնի մեջ,
Դրած կրակի վրևն, էփում ևն։
Էթում, ասում.—Էս ի՞նչ եք էփում։
— Մես ևնք էփում։

* «Էն վախտ հարիսա ևնք գնում, յըմևն տարի գնում ևնք. Զըրհևնքին խարխաս ևնք գնում, շարաթ օրս։ Տաե. վիպասացի։

— Ուրեմ,— ասում,— կովեր բերեր ես, որ էփե՞ս։
20. Բառնց պլխներ կտրում,
.Յանդջևներն էլ կտրում, լցնում մե տեղ,
.Յրլնում ա էթում, մե դուռ բացում.
— Հըլա էթամ իշկեմ՝ ըտաոս մնչ ի՞նչ կա։
Բացում տենում, որ մե շենքի մեջ մկ յան լիք ոսկի յա։
Մե քանի մե բան ոսկի յա վերցում,
790 էտ կաշին էլ ա վերցում, բերում, ասում.
— Էս ա, ձեր կովեր բերեցի,— ասում,—
Էսի ձեր կաշի՞ն։
— Հա՛։
— Էս էլ ձեր կովերի գին,
Քառասուն կաշի, ութանասուն կով կանի։
Առնում են, էթում են։
.Յերկուն բերում, տալում, ասում.
— Ամի՛, մեզի ութ հատ շվալ դի՛,
Վե՛րց էթանք՝ ոսկի բերենք։
800 — Ա՛յ մարդ,— ասում,— էս քյոփօղու ծուռ...
Տո՛, ծո՛ւռ,— ասում,—
Հըլա ընդոնք բառնց անում ես, ասում ենք հա՛,
Դու ոսկին .յո՞ւտա ես բերում։
— Հը՛լ քե տե՛,— ասում,— ոսկի կա։
— Գրկամ,— ասում,— որ չէդավ՝ գլուխդ կըկտրեմ, հա՛,
Գրկամ՝ կտրեմ։
Ասում.— Հա՛։
.Յրլնում վերցնում մե ութ հոգի, ութ շվալ, էթում են.
Որ էդ ջանդրքներ տենում են՝ էդ դևերի,
810 վժում են, կորում են։
Ասում ա.— Մի՛ փախեք, պլխներ կտրեր եմ, ուռած, էդած
էդքան.
Աբի՛, էս էլ,— ասում,— բառնց .յանդրջևներ։
Գնում, որ տենում են՝ ճիշտ ա։
Էթում, ոսկին լցում,
Ջենով Օվանը գալում, բերում են։
Ասում.— Դավի՛թ ջան, էլ բեզ չեմ ֆռդի էթաս տավարը։
Քե մե հատ ձի կըտամ, խեծի,
Ըսեղբանք բեզի խրմար ավդուշ արա,
Ճնճուղ դան, ինչ դան, բեր, էփա, կեր, պատի.

Էլ չեմ ծողի էքսա։
— Լավ ես ասում,—ասում ա,—ամի՛ ջան։

21. Մե ձի տալում, էքում պատում։
Էքում բնկնում Պատվի կոթեկի մեջ.
Պատվի կոթեկ տրորում.
Պատավ գալում, ասում.—Դավի՛թ, Դավի՛թ ջան,—ասում,—
Մա՛րը քեզ տանա, գրո՛ղ քի տանա,
Դուռ էկար իմ ձմրավա իդարեն կտրիր,
Հը՛լ քի տե՛,—ասում,—
Մարթիկա մայր Աստվածածին բարբառեց ասավ, տակ-վիրև
ասավ, տարնց,
Խարջ ա կապե վըրնևրս,
Գնա՛, էնի նորոքա, քեզ տե՛ս...
Էքում խորխորդըն ասում,
Տանում, բաե նորոքում, գալում,
Էլի էքում մտնում կոթեկի մեջ,
Էլի գալում, անիծում, ասում.
— Մա՛րը քի տանա,
Էկած՝ ոսկին չափում ենք.
Խորխորդ վիզը ծռե,
Ընդոնք ոսկին չափում, խարջ են տանում։
Դուռ էլ էկեր ես բաե, կոթեկն ես ավիրում։
— Նանե՛,—ասում,—որտե՞ղ են չափում։
Ասում.—Հորխորդ տուն։

Էքում տենում, որ ոսկին դրած չափում են։
Ասում.—էս ի՞նչ եք չափում։
— Մենք խարջն ենք տանում։
— Ի՞նչ խարջ,—ասում,—ավե՛ր, ես չափեմ,
Ոսկու տեր ես չե՞մ։
Բռնում կոտը շուլում,
Ա՛խր, կոտ բոլ բան ա վերցում,
Կոտ շուլում, ձոխ վրա լցում, ասում.
— Բասով չափեմ, կտամ։
— Էս ի՞նչ ես անում,—ասում,—
Մենք ընտով ենք չափում։
Վերցում կոտ, գանում պլխներն վրեն, պլխներ ջարտում։

Ընկնոց արընթաղ լըլնում են, էթում են ընդեղ,
Մելիքին ասում են.
— Դաչինք,—ասում,—էսենց մեզի Սասունա ծռեր չարդում.
Էնի մարդ կա՝ մե-մե գնդան,
Ոչ երկյուղ կա, ոչ սիս կա,
Գնդան որ քալում են, խաբիր մարդ մեանգամից չոչում։
Տե՛ս,—ասում,—մեզի էս օր բյին։

22. Դավիթը էլի լըլնում ա, էլի էթում պատալու,
Պատալ ասում.—Յելի գնա, էկած, ձեզի կոտորեն,
Ձեր Մայր Աստվածածին բարբանդ անեն, տանեն,
Դու էկեր ես...
— Նանե՛,—ասում,—ինչո՞վ էթամ կռվիմ։
Էթում ա մե խառ հին թուր-մուր գիտում, բննոց էթում։
Ասում.—Բաննոց դո՞ր ես էթում.
Գնա՛,—ասում,—խորոխպորդ ասա,
Տո՛ւր իմ խոր ձիը,
Տո՛ւր իմ խոր Գդակը,
Տո՛ւր իմ խոր կնձակից Թուրը՝ ես էթամ։
Ասում.—Կատա ո՞ր։
Ասում.—Գնա՛, զոռով առ, իմա՞լ չիտաս։
Էթում ասում.—Տո՛, ամի,—ասում,—
Էս զորք որ էկե մեր վրեն,
Էկած են մեզի կոտորեն.
Տո՛ւ քնձի իմ խոր սաթը։
Ասում.—Բալա՛, սաթը չկա։
— Չէ՛,—ասում,—ամի՛, վիզդ կտրեմ,
Սաթը տո՛ւ, տանեմ։
Բերում, է՛, կանա՞ չտաս։
Բերում, տուլում։
Բերում ոսկեամանները որ խաբեի,
Մե փութ բամբակ ճխտում, ոսկեամանների մեջ՝ ներ ոտրուվ
ըլնում.
Մե փութ ճխտում գդակի մեջ՝ ներ գնում գլոխ.
Քյամար կապում իրեք-չորս փաթ՝
Ներ գալում ըլնում մեջդո՛վ.
Թուրն էլ էնենց։

23. Էքում ըզտեւ, գիշեր մնում ըզտեւ։
Էրազ ա գալում։ Ասում ես.
— Գըլնենս,— ասում, էրազով տենում ա,—
էտ շորեր կըխաքնենս, զոռով կըմտնի գլուխդ, ոտներդդ.
Քյամարը զոռով գըկա կապվի մեջկիդ։
Կըլնենս, դիրաքը ինուր գըգցես,
Թե որ գցեցիր, էտ էրկըմն դիրաք կտրե՛ց,
Ձաթի գնա՛, կ'ազատես.
Որ չըկտրեց,— ասում,—
Ո՛չ գնա, ո՛չ էլ, չես կանա ազատ։
Գալում, էտ դիրաք տենում,
.Յըլնում ա խաքնում, հանում էտ բամբըգներ լալում՝
Զոռով ա մտնում,
Գտակ զոռով ա մտնում գլուխ,
Ինուր զոռով ա կախում վըրեն,
Քյամար, բան կապում՝ զոռով։
Քըցում. որ քըցում՝ դիրաք տեղից .յիրար չի գալում։
Մե խելատ մնում, .յիրար չի գալում։
Ասում.— Թե՛վ, ինուհաս,— ասում,—
Թե՛վ, ինուհաս դու,
Էս ի՞նչ դըրբ ինալեցի, որ վրեն չերևաց։
Մե խելատ մնում.
Քամին, որ .յիրար գանում, տանում՝ դիրաքը .յրնգնում,
Շուռում մեկ էս յան, մեկ՝ էն յան։
Ասում.— Թե՛վ, կամանչես, կանանչես, թե՛վ,— ասում,—
Իմա՞լ եմ կորե, որ խաբար չէլա՝ շրուշավ։

24. Էս խեսը խնծնում ձեն, էքում։

Ասում.— Ո՛ր հիմաց ա՝ հիմաց մացի,
Ո՛ր քնուկ ա՝ .յելե՛ր խնծնե, ձի իմ բնկե՛ր,
Ձասե՛ք՝ Դավիթ էգավ, լոդ-լոդ գնաց։

Ինուրը քաշում, .յրնգնում մրջներ.
Կիսին կոտորում, մե խալխիներ ասում.
— Էս մեր .յըմնուն կըկոտորա։
.Յըլնում էքում, ասում.

— Թուրդ ամուր մնաք, կատար մնաք, Դավի՛թ ջան,
Մեզ,— ասում,— զոռով ա բերե,
Ո՛րը որ կա, կենդիքն թողած անտեր-անտիրական,
Էրեխեք թողած անտիրական, էկած ըստե.
Ջոան ա բերե,— ասում,—
Մեզի ընչի՞ ես կոտորում։
Կռիվ ունես՝ իրա խնաս
Ասում.— Յինք դոր ա։
Ասում.— Էտա՛ վրան,— ասում,—
Ծուխն որ գնկնի, էտ հո՛ ծուխ չի,— ասում,—
Ընտու բերնի զոլորշին ա .յրկնում։
— Հա՛,— ասում,— լա՛վ, էյամ։

25. Էյում, կայնում ըտե, տենում,
Մեկիք իրեք օր քեև, չորս օր պատ քնի,
Օխտ օր քնում՝ նոր .յիմնում ա։
Ըդ ճանջերն էլ քշում ենե։
Ասում.— Խանե՛ք վե, էտ ի՞նչ եք անում։
Ասում.— Քնուկ ա, պատ քնի օխտ օր։
Ասում.— Բո՛ղ յրկնի, քնենց քնցնեմ,
.Յավիտենական քնուկ մնա։
Բերում են շիշ, կարմրցնում են, դնում ծոի վրեն,
.Յրկնում ա նստում։
— Էս միրաք մոծակներ,— ասում,— էս ի՞նչ են անում,
Ընձի չեն թողում քնեմ։
Ասում են.— Ըստով չիմնա։
Բերում են խնփր, կարմրցնում են, դուքնի խոփ,
Դնում են ծոի վրեն.
— Ա՛յ,— ասում,— միրաք մոծակներ չեն թողում քնեմ։
Ասում.— .Յելի՛, ի՞նչ մոծակ,— ասում,—
Գրոշդ չունես՝ դրող եմ ես,
Մախս չունես՝ մախն եմ ես, .յելի՛։
.Յրկնում ա.— Որ փչեմ՝ բոլ քոնի էսի,
Էս ի՞նչ ա իմ դեմ։
Փչում է։
Է՛, փչե, Դավիթ .յիրո՛ւր որկա տեղից։
Ուժը պակասում։

Ասում.—Դավի՛թ ջան, լիչի՛ արի, պլխիդ մեռնեմ,
Ասենք, խոսանք, էլի կովենք,
Խոսանք մե՛շու,—ասում։
— Չէ՛,—ասում,—խոսալ-մոսալ չեմ խաակրնում։
Համոզում ա, վերջապես, գալում։
Բան քաոսուն գյազ խոր ա փորե,
Նստում ա էտ խաղու վրեն՝ էթում լրնգնում ա խորը.
Դավիթ լրնգնում խո՛րը։

Որ Դավիթ լրնգնում խո՛րը,
Հորթախաղեր էրազ ա տենում։
Ասում.—Կեր՛կ, մեր Դավիթ նեղն ա լրնգե.
Գիշեր էնի լրնգամ խոր։
— Ա՛, քու տուն շինվի,—ասում,—
Քնում ես՝ մտածում ես, էրազ ես տեսնում։
Ասում.—Չէ՛։
Քոռա՛, իրեք անգամ տենում, ասում.
— Է՛լ ձեն չ՚անես, պտի էթամ,
Էլ ձեն չ՚անես, նեղ ա լրնգիր ա։

Էթում տենում, որ ձին էլ լրնգեր ա սարկե՝ խրխնջում ա։
Ասավ.—Ի՞նչ անեմ։
Բերում ա էրդու գոմշի կաշի, փաթում ա մեշքը,
Լա՛վ կապում, ասում ա.—Որ բռատու չըպատռվեմ։
Բռատում ա։
Ձեն էթում, խորի մեջ լրնգնում Դավիթի լանգաջ։
— Վա՛յ,—ասում ա,—Հորթախաղես է էկե իմ հավարին։
Ներ բան գոռով, մե կեռպով դուս ա գալո՞ւմ։

Դուս գալուն,—Դե՛,—ասում Մելիքին.—
Քանն ա դար, քե՞ մին։
Ասում.—Չէ՛, դու օր էկեր ես իմ խորի մեջ, դարը քանն ա.
Իմը չէ,—ասում,—որ՛ս գնաս։
Էթում ա, գալում, մե դրրը գանում՝
Մո՛ւխ, մառախում բռնում։ Ասում.
— Արդեն Դավիթ գնաց։

Մև էրկօր մնում, ասում մը՛շու բացվել,
Ասում.—Դավի՛թ։
Ասում.—Սաղ եմ, մե՛կ էլ արի։
— Հա՛, —ասում, —մոտ տեղից էկա,
էթամ Հալապից գամ, գանեմ.
Մոտ տեղից էկա՝ բյար չարավ։
էթում, Հալապից ա գալում.
Մեկ էլ որ գանում ա՝
Մե՛ս-մտատխում բանում էրկօր, իրեք օր.
—Դավի՛թ։
Ասում.—Սաղ եմ, մե՛կ էլ արի։
Ասում.—էս ի՞նչ բան է, էս էրկսին սաղ մնաց.
Շա՛տ մտից եմ բռնե։
էթում էրկու բոու չափ հեռու տեղից,
Ըտուց գալում՝ գանում.
Իրեք օր, չորս օր մնում, թոզը բացվում՝
Դավիթ սաղ կայնուկ ա։
— Դե՛, —ասում ա, —դոդն էկավ ընձի։
Մեկն ասում ա.—Դավի՛թ ջան, գլխի՛դ մատաղ,
Ես քեզ օխտ տարի պահեր եմ, մեծրցրեր եմ, ջոջրցրեր եմ,
Բա՛ մե գարկ չե՞ս բախշում ընձի։
Ասում.—Մե՛ր, —բա, —մե գարկ բախշի քեզի։
Ասում.—Բա՛ երկնու կենթանի՛ ասասն, —ասում, —
Բա՛ մե գարկն էլ չե՞ս բախշում։
Ասում.—Է՛ս գարկն էլ բախշեցի քեզի։
Թուրն ասում ա.—Մե գարկն էլ բախշի՛ ընձի։
Ասում.—Բախշեմ՝ էլ ի՞նչ գանեմ.
Չէ՛, —ասում, —հերի՛ք է, քեզի չեմ բախշի։
էթում.—էս պտի գանեմ։
Բերում են բռուն, իջեցնում են խորը,
Քառասուն հատ ջաղլի թար բերում են, թալում են,
Քառասուն շոր կաշի էլ թալում են վրեն,
էլ Թուր բռուն չըկտրա։
էթում, գալում։
էթում, գալում, Դավիթ կանչում.
— Երկնի կենթանի ասուլա՛ծ, —
Կեծակից Թուրը բցում։

Հըա քցել՝ կտրում, էվում.
Ասում.—Մեջտեղից կտրես, որ քաշեմ՝ տարբեր չըլնի։
— Սա՛ղ եմ, գնա՛, մե՛կ էլ արի։
Ասում.—Հըլա տեղից .յիրուր արի, գնամ՝ մեկ էլ գամ։
Տեղից որ .յիրուր գալում՝
Մե կտո՛ր էն յան.յընգնում, մե կտո՛ր էն յան .յընգնում ա։
Նա՛ր, էս հետ ժողովրդին ազատում, ասում.—Գացե՛ք։
Նա՛ր է՛լ խարջ-խարաջ չըտալում,
Ըլնում ըզտեղի տեր-տիրական։

Ջոմ էս խետ ժամանակներ պրանք մեռնում են, էվում են.
Մնում են մեր պես ժողովուրդ։
Էս խետ էլ խաովան .յիրուր,
Կոտրում արին, .յիրուր ջարդ-փշուր արեցին...

28. Ասում են, քուրը, որ ասե.—Մորի՛, լոխկըցի,—
Էն Մելիքի ախճիկը, որ ասե «Քնեղ պահե, մեծացըրեր եմ»—
Ըզտե, ասում են, իրր Դավիթի մոտ միամիտ, լոզըցե,
Էնի հիսըվանց նիզակով գանե, ըսպանե։

ՑԱՆԿ
ՎԻՊԱՍԱՆՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Աբաջյան Սեդրակ Քերոբի, Զ պատում
Ավետիսյան Զոհրաբ Հովհաննեսի, ԺԳ պատում
Ավետիսյան Մկրտիչ Պարսամի, Ժ պատում
Գևորգյան Մելիք Գալուստի, ԺԱ պատում
Գրիգորյան Մարտիրոս Ավետիսի, Ե պատում
Դավթյան Գեղեոն Ավետիսի, ԺԳ պատում
Հակոբյան Հովհաննես Մարգարի, Թ պատում
Հունանյան Երվանդ Բաղդասարի, Է պատում
Մուրադյան Մարտիրոս Մելիքի, Ա պատում
Պետրոսյան Գևորգ Մարգարի, Ը պատում
Ջալոյան Ռաշո Մուրադի, Գ պատում
Պետրոսյան Գևորգ Մարգարի, Ը պատում
Սարգսյան Թորգոմ Աբգումանի, ԺԲ պատում
Փիրումյան Մարթա Մալխասի, Գ պատում

ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՑԱՆԿ[1]

1. Ա պատում, «Մասնա ծռեր», 1181 տող
2. Փոքր Վեդի—Արարատ>Նափանց-Մոկս
3. 1972
4. Հարությունյան Մարգիս, տղ., 44 տ., Մահակյան Արուսյակ, կին, 31 տ.
5. Մարտիրոս Մուրադյան, տղ., 96 տ.
6. —

1. Բ պատում, «Մասնա ծռեր», 562 տող
2. Մասիս>Տմիս—Մոկս
3. 1972
4. Հարությունյան Մարգիս, տղ., 44 տ., Մահակյան Արուսյակ, կին, 31 տ.
5. Թովմաս Մարգսյան, տղ., 82 տ.
6. —

---

[1] Պատումների հարացուցային ցանկը յուրաքանչյուր պատումի համար տալիս է.

1. թվահամարը, վերնագիրը, տողերի քանակը,
2. պրոմտան և ծագման վայրը,
3. պրոմտան ժամանակը,
4. պրոտողը,
5. վիպասացը,
6. տեղեկություն նախկինում տպագրված լինելու մասին։

1. Դ պատում, «Սասնա ծռեր», 1491 տող
2. Բագրատունն—Աբարատ>Հառուկի—Շատախ
3. 1972
4. Հարությունյան Մարգիս, տզ., 44 տ., Սահակյան Արուսյակ, կին, 31 տ.
5. Մարթա Փիլոմյան, կին, 80 տ.
6. —

1. Դ պատում, «Սասնա Տավթի խեթաթ», 693 տող
2. Շաղափ—Աբարատ>Կաճէտ—Շատախ
3. 1972
4. Հարությունյան Մարգիս, տզ., 44 տ., Սահակյան Արուսյակ, կին, 31 տ.
5. Թաշո Ջալյան, տզ., 100 տ.
6. «Սասնա ծռեր», Ա հատոր, Երևան, 1936 թ., էջ 753—784

1. Ե պատում, «Սասնա Դավթի հերթաթ», 1021 տող
2. Վերին Զեյվա—Էջմիածին>Գզակ—Մուշ
3. 1971
4. Հարությունյան Մարգիս, տզ., 43 տ., Սահակյան Արուսյակ, կին, 30 տ.
5. Մարտիրոս Գրիգորյան, տզ., 75 տ.
6. —

1. Զ պատում, «Սասնա ծռեր», 2119 տող
2. Խանջիկ—Անի>Խաստուր—Ալաշկերտ
3. 1971
4. Հարությունյան Մարգիս, տզ., 43 տ., Սահակյան Արուսյակ, կին, 30 տ.
5. Սեդրակ Աբաջյան, տզ., 82 տ.
6. «Բանբեր Հասարակական գիտությունների», № 7 և 8, 1973 թ.

1. Է պատում, «Սասնա ծռեր», 1670 տող
2. Արաքի—Ագարան>Ալաշկերտ
3. 1972
4. Հարությունյան Մարգիս, տզ., 44 տ., Սահակյան Արուսյակ, կին, 31 տ.
5. Երվանդ Հունանյան, տզ., 74 տ.
6. —

1. Ը պատում, «Դավթի հերթաթ», 1611 տող
2. Արագած—Ագարան>Ալաշկերտ
3. 1972
4. Հարությունյան Մարգիս, տզ., 44 տ., Սահակյան Արուսյակ, կին, 31 տ.
5. Գևորգ Գնարեսյան, տզ., 74 տ.
6. «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, 1973 թ., «Սասունցի Դավիթ», նոր պատումներ, համալսիրն և հրատարակության պատրաստեցին Գրիգոր և Վահագն Գրիգորյանները, Երևան, 1977 թ., էջ 187—250

1. Բ պատում, «Սասնա ծռեր», 1852 տող
2. Աստղաձոր—Մարտունի>Բայազետ
3. 1973
4. Հարությունյան Սարգիս, տղ., 45 տ.
5. Հովհաննես Հակոբյան, տղ., 68 տ.
6. «Սասնա Ծռեր», աշխատությամբ Սարգիս Հարությունյանի, Երևան, 1977 թ., էջ 249—310

1. Ժ պատում, «Սասնա ծռեր», 1357 տող
2. Վաղաշեն—Մարտունի>Ալաշկերտ
3. 1973
4. Հարությունյան Սարգիս, տղ., 45 տ.
5. Մկրտիչ Ավետիսյան, տղ., 75 տ.
6. —

1. ԺԱ պատում, «Բաղդասար և Սանասարբ», 366 տող
2. Արծվանիստ—Մարտունի>Բայազետ
3. 1973
4. Հարությունյան Սարգիս, տղ., 45 տ.
5. Մելիք Գևորգյան, տղ., 66 տ.
6. —

1. ԺԲ պատում, «Սասնա ծռեր», 1945 տող
2. Վերին Նեղրլու—Մասիս>Բայազետ
3. 1972
4. Հարությունյան Սարգիս, տղ., 44 տ., Սահակյան Արուսյակ, կին, 31 տ.
5. Բորգոմ Սարգսյան, տղ., 65 տ.
6. —

1. ԺԳ պատում, «Սասնա ծռեր», 989 տող
2. Լանջազբյուր—Կամո>Բայազետ
3. 1973
4. Հարությունյան Սարգիս, տղ., 45 տ.
5. Գեղամ Դավթյան, տղ., 76 տ.
6. —

1. ԺԴ պատում, «Սասնա ծռեր», 1046 տող
2. Քյուլիջա—Արովյան>Բայազետ
3. 1972
4. Հարությունյան Սարգիս, տղ., 44 տ., Սահակյան Արուսյակ, կին, 31 տ.
5. Զոհրաբ Ավետիսյան, տղ., 81 տ.
6. —

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրատարների և հրատարակության պատասխանատուների կողմից . . . 5

Նախաբան 7

Ա. Սահակ Ծոներ, պատմեց՝ մակացի Մարտիրոս Մուրադյան . . . 23

Բ. Սահակ Ծոներ, պատմեց՝ մակացի Թավմաս Սարգսյան 61

Գ. Սահակ Ծոներ, պատմեց՝ շատախցի Մարթա Փիրումյան . . . 81

Դ. Սահակ Տավթի խերթք, պատմեց՝ շատախցի Ռաշո Ջալյան . . 127

Ե. Սահակ Դավթի հնթիաթ, պատմեց՝ մշեցի Մարտիրոս Գրիգորյան . 151

Զ. Սահակ Ծոներ, պատմեց՝ ալաշկերտցի Սեդրակ Աբաչյան . . . 183

Է. Սահակ Ծոներ, պատմեց՝ ապարանցի Երվանդ Հասնանյան . . . 247

Ը. Դավթի հնթիաթ, պատմեց՝ ապարանցի Գևորգ Գնտրոսյան . . 297

Թ. Սահակ Ծոներ, պատմեց՝ մարտունեցի Հավհաննես Հակոբյան . . 345

Ժ. Սահակ Ծոներ, պատմեց՝ մարտունեցի Մկրտիչ Ավետիսյան . . . 401

ԺԱ. Բաղդասար և Սահսապար, պատմեց՝ մարտունեցի Մելիք Գևորգյան . 443

ԺԲ. Սահակ Ծոներ, պատմեց՝ նորբայազետցի Թորգոմ Սարգսյան . . 457

ԺԳ. Սահակ Ծոներ, պատմեց՝ նորբայազետցի Գեղեռն Դավթյան . . 515

ԺԴ. Սահակ Ծոներ, պատմեց՝ նորբայազետցի Զաճրար Ավետիսյան . . 547

Ցանկեր 580

Վիպասացների այբբենական ցանկ 580

Պատումների հարացուցային ցանկ 581

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ГОД. ИНСТИТУТ
ИНОСТРАННЫХ
ЯЗЫКОВ
Арм. ССР

ՄԱՍՆԱ ԾՌԵՐ

Դրառեցին և նրատարակության պատրաստեցին
ՍԱՐԳԻՍ ԲԱՐԹՈՒՂՄԵՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՈՒՍՅԱԿ ՇԱՏԵՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
նճագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Սուպեր շապիկը, կազմը և ֆորզացը
ՀԱԿՈՐ ԿՈՋՈՅԱՆԻ
Նկարիչ
Լ. Ա. ՍԱՂՈՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐՇԱԿԱՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ
Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՖ 01412 Պատվեր 518 Հրատ. 4309 Տպաքանակ 7000

Հանձնված է շարվածքի 1.07.1976 թ.։ Մատրագրված է տպագրության 22.12.1978 թ.։ Տպագրական 36,5 մամուլ+9 նկարներ, պայման. 54,08 մամուլ, հրատ. 31,27 մամուլ։ Թուղթ № 1, 70×108 1/16։ Գինը 3 ռ. 35 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության, Երևան 19, Բարեկամության, 24 գ.
Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էլմիածնի տպարան

16723

Նկատված վրիպակներ

Էջ	Տող	Տպագրված է	Պետք է կարդալ
18	22 վ.	«հանդը, գուրգը լըշապդեն գախուգ»	«հանդը, գուրգը, լը շապդեն գախուգ»
380	14 վ.	Պետրոյան Գևորգ Մարգարի, Ը պատմ	Մարգոյան Թամմաս Ավետի, Բ պատմ

2013



